
ՅՐԲԱԶԱՆ
ՊԵՐՃԱՆ
ԵՄՈՒԹԻՒՆ

308
Ա 177
281(2)
Հ 85

ՍՐԲՈՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Ո Ս Կ Ե Ր Ե Ր Ա Ն Ի

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՏԸՆՏԻՐ ԳԻՐՔ ԵՒ ՁԱՌԸ ԵՒ ՆԵՐԲՈՂԵԱՆՔ

Ա[illegible]
Ա[illegible]

Թարգմանեալ ՚ի յոյն բնագրէն երկասիրութիւն
ՏՆ Ն. Աղիայ վէրպոի Թումմաճանեան
կոստանդնուպոլսեցւոյ, ՚ի Պիսիթաբեան
վարժանոցն Թեղնի։

Տպագրեալ արդեամբք Ը.ծատր Մանուկ Աղայի
կարնեցւոյ Մահտէսի Ը.ծատրեան։

348
3008
Ա 177

Հրամանաւ ՏՆ ՏՆ Ստեփանոսի Վէրպոի Ագոնց, Արքեպիսկոպոսի
և Ընդհանրական Աբբայի Մխիթարեան Ոհմին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՏՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ
ՁՈՒԿՈՎԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԳԱՐԱՆ
Ա[illegible]Ա[illegible]Ի

Ի ՎԻՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ
ՌՄԿԷ. 1818

3384

1714

ՈՒՂԵՐՁ

ԱՒ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԱՄԻՐԱՑ

ՄԵԾԱՓԱՌ ՄԱՆՈՒԿ ԱՂԱՑ

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

Ա՛Թէ ընտրողութիւն ուղղատես յղեալիս
և յիմանալիս՝ չափ և սահման դատեցաւ
գեղեցիկ խելամտութիւնէ, ապա զքո՛յդ իրաւա-
պէս լինի գովել, ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԱՄԻՐԱՑ,
զքաջութիւն խորհրդոց • որ՝ի մանկունդ յայդմիկ
ո՛չ Թեթատես, այլ ճայրալո՛ր, ընտրողակա-
նին փայլեցար լուսով, աշխարհի յերևան ըզ-
քո՛յդ ածեալ անձին ընտրականութիւն • որպէս
զի և՝ի խորազգայիցն ոմն, * զինչ ընտրե-
ցեր, ասէր, ասա՛ ինձ • և ասացից քեզ, եթէ
զինչ ես ‖։

Վրանզի բոլորիցն բարձերկեայ կշռադատու-
թիւ գոյից, զճայրալո՛րն անեղծութիւն, ան-
խառնութիւն, և անապականութիւն ընտրեցեր

զ Աակի բերան. զի Թէպէտ և անբաւք ի-
ցեն գեղեցիկքն ի նիւթոցս, ըստ որում ար-
ծաթ՝ և այլքն, Թէպէտ և գեղանիք, մաք-
րափայլք, և արդեզք, ի վերայ այսր՝ և օտա-
րին բնաւորեալ խառնուածք՝ եղծականին և
ապականացուն վիճակեցան կրկից. նա՝ Թէ-
պէտ և ակունք արփիափայլք, Թէպէտ և
գոհարք հրաշագեղք, չէն անբաժք կայլա-
կեալ կրկից, և հուսկ ուրեմն գնացեալ և
նոքա ընդ ապականացուին փակեցան սահ-
մանաւ:

Այլ ոք յուղղատեսիցն ասպա ոչ կարասցէ
անհաղորդ քննդ լինել ընտրութեանն, որ անա-
պականիս սատարեցեր հոգւոյ զանապականս
զայս պատրաստել դարման. և զանապականն՝
ըստ հոգևոր երգողին՝ ՐԱՆՒՆ ՔԱՐՈԶ ԲԵՐԱՆՆ
ՈՍԿՒ, որում զուգակշիռ ոչ ոք ի մատենա-
գիրս ոգեշարժս և պերճաբանս արևելից և
արևմտից, մերովս եառաւ ինձ տառիւք մե-
ծութեան տալ բարբառել ժողովրդեան:

Այս արդեօք ցնծասցէ սա յաղքատութենէ
իւրմէ, հարստութենս անբաւս հեշտին ա-
ռեալ յանձն ի յոսկւոյ աստի: Հեշտին ա-
սեմ, քանզի և անշուշտ այնչափ գիտացի
զըօրութենէ ոսկւոյս այսորիկ, մինչև ոչ զգան-
ձելիսն միայն՝ ըստ զգալի ոսկւոյս օրինակի,
այլ և զօշափելիսն անգամ զիւր՝ յաղքատու-
թենն տառապանաց դիւրեաց և ընչաւէտս
դործեաց:

Ա՛ջ ոք ընթերցաւ զԱսկեբերանն, և ո՛չ հրահանգեցաւ միանգամայն իսկ յաւետեան մատնեսցի. եթէ գլխովին տգէտ էր յաստուածայինն, կատարեալհատակ երևեցաւ հոգւով. եթէ հոգին աննիւթ ընկալեալ այլայլեցաւ յաւետեանն՝ որ ինչ ո՛չ Աստուած կամ հոգի, վերծանեաց զԱսկեբերանն, և զըստեալ մաքրեցաւ և լի՛ և զեղծն ճաճանչին առատացաւ սիրով. եթէ այլ երկրաքարշ պատրեալ՝ի գեղեցիկն՝ի պէտս աղցատուց յաւետեսիս, յանկն արկ զԱսկեբերանն, և իբրու զհրաշակերտն Պեգասոս խորհրդատես՝ թէպետ և յերկրաւորաց աստի քաւտանեաց, թևաձեալ ճախրեաց թեթև ընդօդս, թռեա՛ւ՝ի վեր, և երկրաւորն գոտաւ երկնաւոր: Ա՛յո՛ և՝ի մարդկայինս, եթէ ոք անաւադ և անկած վիճակեցաւ բարոյից, ընթերցաւ զսա և՝ի շուք ոսկւոյս այսորիկ զարդարեալ շքեղ երևեցաւ և վսեմ. եթէ և անխօս ոք և անատուն աւ կենցաղակից մարդիկդ, հրահանգեցաւ յԱսկեբերանն և առ զնմատուն, քաղեաց և ատաց զաքանչելսհրաշան, և անբանն տեսաւ բանաւոր: Դանդի ո՛չ միայն ճաճարեալ և ճաճանչեալ առադրէ սա զմարդ, այլ և՝ բանաւոր կենցաղակից, և քաղաքական խմատանախոհ, և տնօրէն կառավար: Ա՛յսչափ է զօրուն ոսկւոյս այսորիկ, այնչափ է ճաճատուր զուարթատուրն հրահանգիչ հոգւոյ Ասկեբերանին

յաճախինս և ի մարդկայինս. վասն այնորիկ ասացի՝ եթէ միանգամայն իսկ յամենայն մասունս վարժասցես վհատիցին ի Յակոբեանս:

Սէրք և վիճակք բազմադիմք տարբերեցան ի մարդիկ, սա այս բերան ոսկի բոլորիլին միանգամայն լիապարտև հանդերձեցաւ գանձասցես. ոչ խոսէ, իւր են աղքատք ամենայն, և ոչ աղքատք միայն՝ այլ և ճոխքն չափաւորք. սիրեաց և ետ աղքատաց, և ճոխութիւն նորա անսպառ կայ: Աստի և ըստ բազմապատիկ դիմաց վիճակացն՝ որ ի մարդիկ տարբերեալ, այնպէս հատընտիր և ես յերիւրեալ զոմն հանդերձեալ գանձասցես ի նմին իւր ի հելլեն տաւիղն. որպէս զի եթէ և աղքատ ոք ի վշտմբեր յաւիտենից այսորիկ՝ Թարթափեաղն ի սա, ձշգրիտ հատեալ միխթարեսցի սովաւ և սիրեսցի. եթէ իշխանապանծ ոք և ընչեղ, քաջիկ հրամանգեալ Յակեբեանն՝ սիրտ խոնարհ ստասցի և աղքատասէր՝ ոչինչ յուսացեալ ի մեծուէ անտի. եթէ տանուտէր՝ անըստգիւտ կայցէ ի կառավարութիւնէ իւրում. եթէ ճնող որդւովք բերկրեալ՝ մի պատասան գոյի որդւոց զաւակաց իւրոց. եթէ կուսան մնացեալ յաշխարհի, անքակտելի կացցէ յառ ած միաւորութենն. եթէ օրիորդ գրգռասէր և փափկասուն, լուեալ զբիւրոցդոյն՝ արիասցի գեղեցիկ քաջութիւնք ընդդէմ տկարութեանն. եթէ յաճախողին մատու-

ցեալ սրբանուէր քահանայ , ծանուցեալ զանմատոյց զնոր սրբութիւնն՝ իբրև զբնութեղ ջինջ և յատակ անարատութիւնն վայելեալ առաջի ժողովրդեանն • եհաց և վարդապետ բեմնատաց , նախ զեղեցիկ արդեամբքն և անբամբաս վարուքն լեալ քարոզ , և ապա բանիւն • և զոր ի ըստ միոջէն ։

Ի վերայ այսը՝ և պլովք մատամբք լի և սա և բազմաբեղուն , քանզի ընդ ոսկւոյ առնապական ճաճային բանին՝ մարգարտացեալ և անզուգակշիռ լինի արուեստիւ Հարտարապետութեան , նաև ի բազմադիմ հեռաքնին հմտութեաց • որպէս զի և տիպ և գաղափար հրաշակերտ և նեղկուռ լեալ Սակեբեան հռետորաց վարժարանին , և բանասիրաց զեղեցիկ դպրութեանցն ։

Սա ան այսոցիկ և պլոց և ս անբաւից՝ ի բաւականս ապա զբնդդ գովեցի ընտրողութեամբ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԱՄԻՐԱՅ։ Արդ ած ընկալ և ընդ քեզ ազգս , զոսկիս անապական՝ զոր ընտրեցեր • և զմայլեալ բերկրեսջիք այնչափ՝ մինչև՝ լինի Թուի՝ և պլոցն Հարաւել չնաշխարհիկ տաւիղ սորին Սակեբեան մատենագրի ։

Ի պանալան պատգրուելեանց գործոց սրբոյ Մխիթարեանին՝ բնաւ գէր ըրը ընթերցուած՝ ի լարգմանուելեան՝ երբեմն ընթերցփոյն, և Յ՝ծնգ՝օ՝ծնեանն յոյն և լատին՝ յերէ՝պատան հատուր մեծաւ, 1734 ի վենետիկ. ըստ որոյ և զիրենսամար երբատանչիւր ձառիկ նշանակելով եմ գանգծիւ ի վերջ նախադրութեանցս, ի դիւրութիւն գտանողաց ոտին։

Ո՞քանս սուրբ գրոց յիշատակելս Մխիթարեանք՝ եղած ըստ նորա յառաջերութեան, և ո՛չ ըստ մերոյ բնագրի, որ ուրեք ուրեք այլաբանած ի մէջեանց են, որպէս լուի գամ առ օրինակացն պէտութեան, և գամ զի ինձնին սուրբ Աբրտալեան, որպէս և ոմանց նախնեաց է սովորութիւն, ակրտել ի բանան՝ երբեմն երբ ի բերանոյ յառաջ բերեր՝ առանց ի բնագիրն հայելոյ։

Ո՞անօրութիւնս հմտանիանս գամ մէջնանիանս չգտանեցած յառաջել, առաւած ևս զարտացել՝ ուր հարկ համարեցած առ բացայայտ իմացուն բանին։ Ո՞ս այս ո՛չ առիս նպատակացն և իւրանչիւր չիւր նախադրութեանց՝ որոյ պաշտպանութիւն յանձն առնուցուն յառաջագոյն ընթերցուոյ ընդունի։

Ո՞ստոյգ է անուանդ Պօղոս եղած ըստ հին և հաբատաց գրութեանն Պաւղոս, պէտ յանձնին էդրատութիւն լուղել ի գամ ապագային սովորութեանն։

* Ու անապական բանին քարոզ կոչեցար ԲՆԵՐԸՆ ՈՍԿԻ· յորմէ աղբիւր կենաց հոսեալ, արբուցանելով քառասնակ բղխմամբ զընդհանուր տիեզերս ։ Շ ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՐԿԻՆ ԳՐՈՑԻ

Այս Թէոդորոս Երէէլին համառօտեալ Եպիսկոպոս ՚ի Կիլիկիա, ՚ի միաբան ընդ մաքսիմոսի եպիսկոպոսին սեվկիոյ յիսաւրիա, էր նախ աշակերտակից մեծի Պակեբեբրանին ՚ի Ճեմարանի լիբանոսի սոփեստէսին անտիոքայ: Սա ինքն Թէոդորոս լքեալ զառաջադրութիւն կենացն՝ որուհետ նուիրեցաւ ՚ի սկզբանն ՚ի միաբանութիւնէ եղբարց սրբոց, գարձաւ յաշխարհ:

Յոր ծանուցեալ աշակերտակցին իւրոյ Պակեբեբրանի, և վառեալ սիրով ուղղութիւնէ սիրելոյն՝ հրաշալի գրչաւ առեալ գրէ առ նա կրկին Գիրս Յորդորականս երկայնաձիգս բազմահնար խմաստիւք՝ դառնալ յառաջինն. յորժամ տակաւին էր ինքն պատանի ՚ի հասակի իբրև իննամեայ, և Թէոդորոս չէ էր հասեալ ՚ի քսանն:

Յառաջինն գիրս սաստկագոյնս ուրեք յարձակի Պակեբեբրան ՚ի Թէոդորոս, այլ միշտ հոգեշարժ ոճով՝ յամենայնի ճշմարիտ ինն առ լցեալ հոգւով. իսկ ապա իրազգած եղեալ վիճակի նորա, եթէ ՚ի պատճառս հայրենի գոյիցն անհաստութիւնէ՝ գարձաւ յաշխարհ, և զի զհերմիոն ունի կոյս սիրէր նա, միայն զի կամէր ինքեան հարմնացուցանել, մեզմէ ըզբանան առ նա յերկրորդ գիրսն:

Յոյժ գերապանծ գասին այս տուաք՝ ոչ միայն ՚ի սղոմենոսէ, այլև ՚ի վերջնոց ասաի հմատուխից. և մի ՚ի կարի գեղեցիկ ծնունդս մատց Պակեբեբրանի:

Այս տուաք գրեթէ առաջինք են ժամանակաւ ՚ի մատենագրութիւս նորա: Յարուեսան հանուորութիւնէ բազմահմայական և հանդէսն. յորում ձգնի համղել՚ի մին, և տարհամղել ՚ի միւսմէն. և անդէն ՚ի տիս պատճեկութիւնէ առնու զիտառաւոր մրցանակն առաջին՝ իբրոյ ճարտասանութեան, տալով Թէոդորոսի կրկին հրաժարել ՚ի կենցաղականս զբաղմանց, և ճծայնոցն պատկառ կալ քննութեանց ՚ի միաբանութէ սրբոց: Եւ արդեօք ոչ ոք յանկէլոցն՝ եթէ կամակար մտօք ընթերցցի զայս ճծային տառս Պակեբեբրանի, կարասցէ երբեք ոչ տալ տեղի բանիցս և գառնալ առ ճծ:

Տեղի գրուճն, որպէս յայտնի երևի, է անտիոք: Ժամնակն՝ ամ ճն իբրև 369. յաշխարհական վիճակի յառալ քան զմիայնանալ Պակեբերանի յանապատի: (Տպ. Մծնփօք. Հտ. Ա. երես 1. որ բաղդատեալ էր ընդ ուրիշ ձեռ. Յն:)



Ս· ՅՈՎՀԱՆՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՈՍԿԵՐԵՐԱՆ

ԿՐԿԻՆ ԳԻՐՔ ՅԱՐԴՈՐԱԿԱՆՔ

ԱՒ ԹԵՈՊՈՐՈՍ ԱՆԿԵԱՒ

ԳԻՐՔ ԱՒԱՋԻՆ

ԱՒ ԸՆԿԱՒԱՆ ԹԼՓՈՊՈՐՈՍ

Ո՛տայր զգլուխս իմ ջուր, և զաչս իմ աղբիւր արտուսուաց ։ Երեմ. ԹԻ. 1 ։ Ցամք բարեպատեհ և ինձ ասել այժմ, առաւել քաջագէպս՝ քան յայնժամ մնարգարէին այնմիկ ։ Վասնզի Թէպէտ և իմ ոչ զքաւ զաքս բազումն և ոչ զազգս ողջոյն ողբալ հանդերձեալ իցէ, սակայն զհոգւին ի լալ մատուցեալ եմ, որ հանապատիւ է բազմահեծ ազգաց, նա և առաւել ևս պատուականագոյն ։ Օվ եթէ ինձ՝ որ առնէ զկամն նոյ, լաւ է քան զբիւր ամբարիշտս, ապա յառաջն դու լաւագոյն կիր քան զբիւրաւորս եբրայեցւոց ։ Որպէս ցի և ոչ ոք իցէ արդեօք, որ զկնի բամբասիցէ, եթէ երբեք ողբս առիւ ես մեծամեծս, և կոծս կոծեցայց սաս

տիկ ևս՝ քան որչափ ինչ մարդարէն այն արձանագրեաց։ Վասնզի ոչ էթէ զքանդել քաղաքին ողբամ, և ոչ դարձեալ զգերութէն անօրէնն մարդկանն, այլ զամայութէն սրբասնեալ հոգւոյն, և զբեկումն և զքանդումն քաջակիր տաճարին։ Վասնզի եթէ ոք քաջութէ՛ի վերայ հասցէ զարդու մտաց քոց՝ յորժամ փայլատակէրն, զոր այժմ՛ի հուր կիզեաց բանսարկուն, զիարդ ոչ յոգւոց հանեալ ողբս առցէ զմարգարէին. այն ինչ լուեալ, եթէ ձեռք խուժադուժք զսրբութիս պղծեցին զսրբութեցն. և հուր հարեալ այրեցին զամենայնն, զբերովբէնն, զտապանակն, զքաւութէին, զտախտակն քարեղէնս, զաւազանն ոսկի։ Վասնզի այս ամէն՝ այս դառնագոյն ևս է քան զայն, որքան զի և կարի պատուականագոյն քան զայնոսիկ՛ի քումդ անձին հանգուցեալ էին նշանակք։ Այս տաճար սրբագոյն ևս էր քան զայն, քանզի ոչ յոսկի և յարծաթ՝ այլ՛ի ընտրս ձանձանչէր հոգւոյն, և փոխանակ տապանակին և քերովբէիցն զքո և զՀայր նորա և զխնկեթարիչն օթագայեալ ունէր յինքեան։

Այլ ոչ նոյնպէս և այժմ. այլ անապատ է և մերկ կողոպուտ՛ի գեղջ անտի և՛ի վայելչութենէ իւրմէ, խրթնացեալ յածային և յանձառելի զարգուհեն, լքեալ թողեալ և յամենայն զգուշութէ և՛ի պահպանութէ, և ոչ գուռն և ոչ նիգ են նորա, այլ առ հասարակ ամենայն ապականչաց հոգւոյն բաց է, և զաղիր խորհրդոց։ Վնպէտ և ոգի ամբարտաւանութէ, թէպէտ և պոռնկութէ, թէպէտ և ագահութէ, թէպէտ և քան զայդոսիկ վատթարագոյնք ոմանք խնդրեսցեն մտանել՛ի ներքս, չէք ոք որ արգելուցու զնոսա։ Իսկ յաւուրջ ժամանակաւ՝ զոր օրինակ երկինք անմատոյցք են ամենայնի այսոցիկ, նոյնպէս էր և մեքրութէի մտաց քոց։ Այլ թերևս զանհաւատալիս ինձ երևեցայց ասել նոցա՝ որք միանգամ այժմ զքո զայդ ամայութէիդ և զկործանումն յարկին արկանիցեն, քանզի վասն այնորիկ ինձ ցաւ է և աշխար ողբալի. և ես ոչինչ հանգեայց՛ի կրից աստի, մինչև դարձեալ՛ի նախնին անդ պայծառութէն տեսից զքեզ։ Վասնզի թէպէտ և այդ ապստամբ երևի առ՛ի հնարից մարդկան, այլ՝՝ յամենայն ինչ հնարաւոր է. քանզի ինքն է * որ յարուցանէ զաղքատն յերկ-

րէ , և բարձր առնէ զտառապեալն յաղբեւացդ , նստուցանել զնա ընդ իշխանս , ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ . նա ինքն է որ նստուցանէ զամուսնն ի տան , մայր որդւովք բերկրեալ ‖ . աղ . ճՃԲ . 7 :

Վպա մի երթիք դու յուսահատ լինլիս փոխել ի լաւագոյն անդր : Վանզի եթէ այնչափ ինչ զօրեաց քան սաքկուն , որպէս զի և ի ծայրից անտի և ի բարձրութեց առաքինութենէն ի վերջինն անդր յարուճ ընկեց զքեզ , բազում ևս առաւելութիւք զօրեսցէ ձեզ յառաջինն անդրէնն վերահոչել զքեզ յաղատութիւն . և ոչ այնպիսի միայն , այլ և կարի երանագոյն ևս յարդարել զքեզ քան զառաջինն : Վխայն դու մի լքեալ վհատեսցիս , և մի զգեղեցիկ յոյսդ կորեսցես , և մի զամպարշտացն զկիրս կրեսցես : Օի ոչ եթէ մեղայն բազմութի ի յաւսահատութիւն անդր բնաւորեցաւ ձգել , այլ ամբարշտութիւն հոգւոյն :

Վսան այսորիկ և սողոմոն ոչ պարզաբար ասաց , եթէ ամենայն որ հասանէ ի խորս չարեաց՝ արհամարհէ , այլ ամբարիշտն միայն . առաք . ծԸ . 3 . քանզի նոցունն միայն են այս կիրքք , յորժամ հասանեն ի խորս չարեաց , և դլխովին այս է՝ որ ոչ թողու նոցա հայել միանգամ յետս , և դառնալ անդրէնն՝ ուստի անկանին : Վանզի այդ խորհուրդ վրիպակ՝ իբրև անուր անկեալ բռնութեամբ ի վերայ պարանոցի հոգւոյն՝ ձնշէ զնա ակնկոբել , և արդելու դառնալ հայել առ տէրն իւր : Վյլ սակայն գործ է քաջի և սքանչելի առն՝ խորտակել զանուրդ զայդ , և զնա ինքնին՝ որ զդ՝ին կապանագ ի վերայ արկ՝ ի բաց թօթափեալ , զմարգարիտն զայնորիկ բարբառել . եթէ քանզի * Վրպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ , այնպէս են աչք մեր առ տէր ձեր մեր , մինչև ողորմեսցի ի վերայ մեր . ո ղորմեաց մեզ տէր , ողորմեա մեզ , զի բազում լցաք արհամարհանաք ‖ . աղ . ճՃԲ . 2 :

Վյս են տիրապէս դաստիարակութիք ձեր , և երկնաւորին հրահանգք խնամատարութե : Վրհամարհանաք ասէ լցաք , և ի բիւրուց դժոգոհացն վտանգեցաք . այլ սակայն և ոչինչ կասեսցուք յառ ձեր հայելոյն , և մինչև առեալ զինդիրն՝ ոչինչ դադարեսցուք յաղաչել զնա : Վյս է արիական հոգւոյն , մի անկեալ վհա-

տիլ, և մի առ բազմութեն վշտին հասեալց կալելոյ՝ ի նմանէ ուծանալ. և մի դարձեալ ի բազում անգամ խնդրելն և յոչ հանդիպելն՝ ի բաց գնալ. այլ կալ ժտիլ, մինչև ողորմեսցի մեզ. ըստ որում և երանելին ասաց դաւիթ ։

Ը. Վանզի վասն այսորիկ ի խորհուրդս խորհրդա կորոյսս արկանէ զմեզ բանսարկուն, որպէս զի հատցէ զայսն որ առ ՚ած է, զհարիսխն ասէմ ամրութեան, զհաստատութեն մերոցս կենաց, զդաստիարակն առ ի յերկինս ձանապարհին, զիրկութեն կորուսեալցն անձանց. քանզի * Յուսով ասէ պարեցաք ‖ ՟ա. Ը. 24 ։ Վանզի սա այս իրրև շղթայ անխորտակելի կախեալ ի յերկինէ՝ ի վեր ունի զՀոգիս մեր. և զորս միանգամ ուժգինս ունին գնանել, տակաւ տակաւ ի բարձրութեն անդր առեալ ձգէ. և զմեզ յալեաց աստի կենցաղականս չարեաց յաւիտեանական ապրեցուցանէ ։ Զդէթ եթէ ոք թուլացեալ՝ թողցէ զկարիսխս զայս սրբուէ, անդէն և անդ անկցի և հեղձամահ եղիցի՝ սուզեալ յանդունդս չարութեան ։

Զայս գիտակ գոլով չարին այնմիկ, յորժամ ծանրաբեռնիս տեսանէ զմեզ խղճիւ գործոցն չարեաց, չարձակեալ և ինքն ի վերայ՝ ի ներքոս արկանէ զդաւսայհատուքեն խորհուրդ՝ ծանրագոյն և քան զկապար. և եթէ ընկալցուք մեք զնա ի ներքոս, հարկ ի վերայ կայ այնուհետև՝ զի ի ծանրութէ անտի յայնմանէ վաղվաղակի ձգեալք և ի շղթային զերծեալք՝ եկեալ հասցուք ի խորս չարեացն, ուրանօր և դու ինքն տառապիս այժմիկ. փոխանակ զի թողեալ քո զնոն պատուիրանս զհերզին և զնոնարհին, և զանագորոյն բռնաւորին զայնորիկ և զանողոքելի թշնամոյն փրկութէ մերոյ զհրամանան զամենայն կատարես. զլուծն խորտակեալ զքաղցրն, և զփոքրոյկի զբեռնն սասանեցուցեալ, աղիւիք երկաթեօք չուրջանակի պնդեցար. առ այս՝ և երկայն իշոյ զպարանոցդ քաշմիկ կախեցեր ։

Այլ արդ՝ ուրանօր քո օթագայեալ իցէ այժմ, յորմէ հետ զՀոգիդ հիգացեալ անդնդասոյզ արարեր. և զգոյն հարկ ի վերայ քո կապեցեր, զի միշտ ի վայր ի վայր ձգտեսցիս դու ։ Զդ՝ որ զնին զայն դրանին եգիտ կնին, զդրացիսն կոչեր հաղորդս իւրում ցնծութէն՝ ա-

սեալով, * Աւրհնեալ լերուք ընդ էս ‖ ղոհ. ֆԷ. 8։ Իսկ եւս զբարեկամն առ հասարակ ցնծան և զքոյս՝ ի հակառակն հրաւիրեցից այժմ, ոչ ասելով՝ եթէ ուրախ լերուք ընդ իս, այլ եթէ կոծ կոծեցէք ընդ մեզ, և ողբս զնոյն առէք և դուք, և լալով գուժացէք ընդ մեզ։ Վանգն տուգանս իմն վերջինս տուգանեցաք մեք. ոչ եթէ այս չափ ինչ և այնչափ քանքարք ոսկւոյ ի բաց անկան ի մերոց ձեռաց, և ոչ դարձեալ բազում գումարտակ ահկանց պատուականաց, այլ զի որ քան զայսոսիկ ամենայն պատուականագոյն եւս էր, որ ի միասին յայս ծով մեծ և անդորը ընդ մեզ նաւարկէր, ոչ գիտեմ զնարգասատնեցաւ նա, և ի խորս անդր կորստեան անկաւ։

Ձ. Վայ եթէ իցեն ոմանք, որ յողբոց սոսկ ինդրեսցեն ի բաց մեկնել զիս, զմարգարէին բարբառեցայց առ նոսա, ասելով. * Ասյլ տուք ինձ, լայից դառնապէս, մի բռնադատէք միսիթարել զիս ‖ Ես. ԼԲ. 4։ Վանգն և ոչ այնպիսի ինչ արդեօք ողբս առեալ է իմ այժմ, զի և ընդ բամբասանօք արկցէ ոք զմեզ չարագործ անշափութեն լալեացն, այլ յոյր սակս թէպէտ և պատշաճ էր գլխովին, թէպէտ և պետրոս, ոչչինչ սմանթ համարեցին ձայն բառնալ և լալ՝ ի բաց եդեալ զամենայն միսիթարութեն։ Վանգն ողբ զհասարակաց զոյս մնայն կոծին, իբրեւ ամենք թերեւս ոք զնոսա իբրեւ կարի փոքրոգիս ոմանս կշտամբեսցէ. իսկ յորժամ փոխան մնրմնջոյն ինքնին հոգին դիակնացեալ անկեալ դիցի՝ բիւրուք հարուածեալ վիրօք, և ի նմին իսկ մեռեալ, թեանն իւրում նշանս իմն զառաջին իւրոյ զգեղեցիկ բուսոյ բարուցն ի դէմս բերցէ, և զքաջողջութեն և զգեղոյն շնջելոյ, ո՛ ոք այնպէս անագորոյն և անկարեկից անձն, որ փոխանակ ընդ հեծուեր և ընդ լալեացն՝ բանս իմն բարբառեսցի սփոփանաց. քանզի զոր օրինակ անդանօր ոչ սգալն, նոյնպէս և աստանօր սուգն իմաստասիրութիւն է։ Որ յերկինս ի վեր հասեալ ժամանակալ էր, որ զկենցաղոյս ունայնութեն ծիծաղէր, որ զմանրմնջոյ գեղն՝ իբրու այն լեռ զանդրիս ոմանս յակն արկանէր, որ զոսկին իբրև կաւ, և զանհնայն զգացանս իբրև տիղմ անգոհանէր, դա մեզ յանկարծակի ի տասն վերանգեալ անպատկանաւորս ցանկութեանն, միանգամայն և զքաջողջութիւնն և զկորովութիւնն և զգ-

գերդն սպասկանեալ՝ ծառայ երկու հեշտ ցանկութեանց ։

Այլ արդ զայնպիսին ոչի՞նչ արդեօք սրտաստուերացուք մեք, ասա՛ ինձ, և ո՛չ առաւել սգասցուք՝ մինչև այսքին կրկին շահեսցուք զնա. եթէ այդ իցէ Թերևս մարդասիրութեան մեր ։ Այո՛ զի զմարմնոյ մեռելութեն դարմանն չէք հնար դատանել յաստիս. և սակայն ո՛չինչ Թողացուցանէ այդ զոգաւորսն ի լալեայ իւրեանց. իսկ զհոգւոյն մեռելութենն աստէն միայն հնար է՝ ի բաց քառնալ. քանզի * ի դժոխս, ասէ, ո՛վ խոստովանեսցի առ քեզ ‖ . սղմ. ձ. 6 ։ Այլ արդ զևաթդ ո՛չ անքանութե՛ մեծ իցէ, եթէ որք միանգամ զմարմնոյ մահն կոծին՝ այնպէս լինի սաստիկս համակեսցին՝ ի նոյն, Թէպէտ և գիտեն՝ եթէ իւրեանց արտասուքն ո՛չինչ բաւական են յարուցանել զվախճանեալն. իսկ մեք ինքնին ո՛չինչ՝ ի դէմն բերցուք յայնպիսեացս անտի, որք՝ ի վերայ հասեալ եմք, եթէ բաղում անգամ գոյ յոյս անդրէն յառաջինն վերածել՝ ի կեանս զմեռեալ հոգին ։ Վանզի բաղումք և առ մեօք և առ մերովքն նախնեօք զարտուղեալ յուղիղ կարգացն և՝ ի բաց անկեալք՝ ի նեղ ճանապարհէն, այնպէս լինի վերստին յոտին կանգնեցան, որպէս զի և զառաջինան զայնոսիկ առագաստեալ ծածկեցեալ վերջին բարեխաւութիքն, և զերաքիոնն առնն, և զպսակն պսակեցան, և ընդ յաղթականսն քարոզեցան, և՝ ի պարս երց կարգեցան ։ Այլ սակայն ցորչափ ոք անկեալ կայ՝ ի հնոցին հեշտութեանց, Թէպէտ և բիւրս ինն առաջն ունիցի յօրինակաց աստ, յանհնար ըից նման գործն երևի. ապա եթէ խուն լինչ սկիզբն առցէ անտի ելանելոյ, միշտ յառաջադէմն նկրտելով, այնուհետև քան զՀուր առաւել և խուճապելով զինի իւր Թողցէ զնա. իսկ զորս կանն առաջն ընթացից նորա՝ շուշանօք լի և բաղում հեշտութե՛ տեսցէ զամենայնն. միայն մի՛ հատցուք զոյսն, և մի՛ ՝ի դարձէ անտի հեղգասցուք ։ Վանզի որ սովին վարակի կրիւք, Թէպէտ և սաստիկ յոյժ զօրութե՛ և քաջալերութիւն ստացեալ ունիցի, վայրապար է ստացուածն ։ Վանզի յորժամ միանգամ զդուռն ապաշխարութե՛ փակէ ընդդէմ անձինն, և խցեալ կուրացուցանէ զմուտան յաստպարէզ անդը, զիա՞րդ բաւական իցէ այնուհետև արտաքոյ ինալով՝ մեծ լինչ և կամ փոքր՝ ի ներքս բերել

'ի բարեաց մասին ։ Այլ վասն այնորիկ զամենայնն գըլխովին մեքենայէ առնեալսըն , զի զայդ խորհուրդդ 'ի մեզ ինքեանս արմատացուսցէ ։ զի այնուհետեւ և ո՛չ քրտանց ինչ պէտք իցեն նմա և ո՛չ վաստակոց՝ առ 'ի ղգեմ ունել մեր ։ Վասնզի զնաըդ այս , յորժամ նոքա անկեալք ոմանք իցեն և գլորեալք , և ո՛չ կամք ինչ կայեն նոցա ընդդէմ կալ նմա ։ Վասնզի որ միանգամ կառոյց իցէ 'ի կապանաց աստի Ճողոպրել զանձն , անդրէն ատասցի զիւրն զօրութիւն , միանգամայն և ո՛չինչ կասեցցի մինչ 'ի չունչն վերջին կռուել ընդ նմա ։ և Թէպետ և բիւրս ևս այլ անկմունս անկցի , դարձեալ յարիցէ , և զթշնամին խորտակեսցէ ։ իսկ եթէ ոք յաւահատուցեն պարանեալ իցէ խորհրդովք , և 'ի զօրութենէն իւրմէ անկեալ իցէ , զնաըդ բաւական իցէ յաղթական երթիք գտանիլ կամ բնաւ զդէմ ունել , յորժամ ինքն յառաջոյ նորա փախստական երթայ ։

Ճ ։ Ա՛ւաղ դու մի՛ ինձ ատտանօր զնակաւ յանցուցեալսն երթիք 'ի դէմն բերցես ։ այլ այդպէս համարեաց՝ եթէ ոք ամենայն ապիրատութիւն լցեալ իցէ , և բովանդակ զամենայն գործեալ՝ որ զնա գլխովին 'ի Թագաւորութենէն մերժեալ իցէ ։ և այն՝ անդատին յատաջագոյն ո՛չ յանհատուիցէ անտի , այլ 'ի հաւատացելոցն եղեալ իցէ և յածաղեցելոցն արանց ։ իսկ յետ այնորիկ ապա պոռնիկ լեալ իցէ , և շուն , խզացեալ , գող , արբեցող , արուագէտ , զրպարտիչ , և այլ ինչ որ 'ի սոցունն մնասին , քանզի և ո՛չ զայնպիսին գովեմ ինչ երթիք՝ եթէ 'ի խորհուրդս իւր յաւահատեսցի , Թէպետ և անթարգմանելի և անհնարին չարեաւքդ այդոքիւք մինչև ցծերութիւն պարարտութեան յեցեալ իցէ ։

Վասնզի եթէ ախտ ինն էր բարկութենն այ , գեղեցկիկս արդեօք յաւահատէր ոք , իբրու անբաւական ոմն 'ի շնջուցանել զոյն՝ որ այնչափ չարեաւքն բորբոքիցի ։ այլ քանզի անախտական է ճծայինն , և Թէպետ և տանջեսցէ , Թէպետ և վրէժս խնդրեսցէ , ո՛չ եթէ առ բարկութենէ ինչ գործէ զայն , այլ առ նախանձմանէն և մեծի մարդասիրութենէն ։ վասն այսորիկ մեծի քաջալերութենէ պէտք են և ապաւինութենէ 'ի զօրութենէ անդր ապաշխարութեան ։

Այլ քանզի զյանցուցեալսն յինքն՝ ո՛չ եթէ վասն իւր

ինչ քնաւորեցաւ պատուհասել, քանզի տոյժ և ոչ մի ինչ հասանէ ի քնութիւն յայն. այլ ի մեր օգուտն հայեցեալ գործէ. և զի մի յետս վատթարագոյնն շրջեսցի խեռուիս մեր, այն ինչ համարիցիմք մեք՝ եթէ նա յոչինչ դրեալ՝ զանց զնովիմն առնիցէ: Վասնզի զոր օրինակ որ զանձն անքաժ կացուցանէ ի լուսոյ, լուսոյն ջնասէ և ոչինչ, այլ անձին իւրում մեծապէս զեան գործէ՝ պաշարեալ ի խաւարի. նոյնպէս և որ զամենակարող զօրութիւն զայնուիկ սովորեցաւ արհամարհել, զնա ոչ ինչ ջնասէ, այլ զանձն իւր վերջին տուժ իւրն վարակէ: Այս վասն այսորիկ պատուհաս սպառնայ մեզ Աստ, և բազում անգամ և ի վերայ ածէ, ոչ որպէս թէ անձին ինչ վրէժխնդիր եղիցի, այլ զի զմեզ ինքեանս առ ինքն ձգեսցէ: Այս քանզի և բժիշկ ի թշնամանս խելացնորիցն ոչ ցաւի և ոչ զայրանայ. այլ և զամենայն հնարս հնարի և գործէ, զի զբանդագուշեալսն զայնսիկ բուժեսցէ, ոչ ևիւրն՝ այլ ի նոցուն հայեցեալ օգուտն. և Թէպէտ և խուն մի զգծուածէ և արձնուածիւն երևեցուսցեն նոքա յանձինս իւրեանց, ցնծայ և բերկրի, և առաւել ևս սաստիկ զդեղն ի վերայ ածէ, ոչ զի յաղագս առաջնոցն Թշնամանացն ի նոցանէն վրէժ խնդրեսցէ, այլ զի առաւել ևս օգտեսցէ զնոսա, և յանարատ առողջութիւնն ի վեր հանցէ զնոսա. զնոյն օրինակ և Աստ, յորժամ մեք գյետին մոլեգնութիւն մոլիմք, զամենայնն սակ և առնէ՝ ոչ ի վրէժխնդրութիւն ինչ առաջնոցն Աղեղց, այլ ի փարատումն ախտին մերոյ. և զդոյն զայդ ունի գիտել իւրաքանչիւր ոք աղջախոհ մտածութեամբ:

Ե. Այսպէս եթէ ոք յերկուասցի ի մեզ յաղագս դոյնիս հրաց, ունիմք մեք հաւատարմացուցանել զայդոսիկ և յաճախանոցն պատգամաց: Զի ոմն ոք թերևս, ածէ առ ասս, քան զբաբելացւոց աղքային գտաւ-տմնարիւտ, որ սխալափ ինչ գնորձ առեալ զնոյ զօրութիւն, մինչև երկիր պագանել մարգարէին նորա, և մնննա և խոնկս հրամայել մատուցանել նմա, դարձեալ վերստին յաւաղին ամբարտաւանութիւն ի վեր եղ, և զնոսա՝ որք ոչինչ նախասպատիւ քան զնա կամեցան ունել զնա, կասպանօք ընկէց ի հնոց անդր: Այլ սակայն և զայսչափ անագորոյնն և զամբարիշտն, և առաւել զգազանն

զայն քան թէ զմարդ ոք , յասպաւխարուէն կոչէ , և տայ
ընորհն նմա և այլ ինչ պատճառս սթափութեան . առա-
ջինն՝ զոքանչելիսն զայն հրաշագործեալ ՚ի մէջ հնոցին ,
և յետ այնորիկ ապա զտեսիլն՝ զոր ետես ինքնին Թա-
գաւորն , և մեհենաց դանիէլ , որ բաւական էր և ըզ-
վիմեղէն հոգին նուաձել . իսկ ապա յետ խրատուն՝ որ
յարգեանց անտի , և ինքն մարգարէն խորհրդական
լինէր նմա ասելով . * Վ ան այդորիկ ա՛ր քայ , խրատ
իմ հաճ՚ոյ թագաւոր քեզ , և զմեղս քո ողորմութիւք քա-
ւեսջիր , և զանօրէնութիւնս քո գթութիւք տնանկաց . թէ-
բևս երկայնամտութիւն լիցի ՚ի վերայ յանցանաց քոց ‖ .
դան . ը . 24 : Օ՛ ինչ ասես ա՛վ իմաստուն երանելի . իցէ՞
թէբևս յետ այսչափ կործանմանդ՝ վերստին դարձ , և
յետ այդչափ ախտից՝ առողջուն երթիք . և կամ զինչ
այդչափ մոլեգնութիւնն՝ կրկին զգոնութիւնն յայս . զամե-
նայն յայս ինքնին թագաւորն կանխեաց եհաս յինքեանէ .
նախ այն իսկ՝ զի անգիտացաւ զարարիչն իւր , և որ
յայնչափ պատիւն ած հան զնա . թէպէտ և կինքս իմն
բազմադէմն ունէր պատմել զնորա զօրութիւնն և զնա
խախտմունն՝ յուցեալ առ ինքն և առ իւրն նախնիս :
Իսկ յետ այսորիկ զարձեալ յորժամ և զիմաստութիւնն
և զնախագիտութիւնն առ ինքն նշանս անխաբս , և ըզ-
մտութիւնն գլխովին և զաստղագիտութիւն , և զամենայն
սատանայական կախարդութեան գյարկն ետես տապա-
լեալ , գժնդակագոյնս իմն քան զառաջինն ՚ի վերայ
բարդեր : Վ՚անգն զոր իմաստուն քաղդեայքն գազարա-
յիք ա՛չ կարացին յայտնութիք ՚ի ներքս բերել , այլ խոս-
տովան լինէին՝ եթէ ՚ի վեր է այդ քան զմարդկան բըն-
նութիս , զնոյն ՚ի ձեռն մանկան միոյ գերեզման յուցեալ
նմա ՚ոյ , այնչափ իմն էած ձգեաց զնա հրաշիւգդ այդ-
ուիկ , որպէս զի և ա՛չ միայն հաւատալ , այլ և վարդա-
պետութեամ այսմիկ քարոզ լինել և համեմատած վար-
դապետ ընդհանուր տիեզերաց . որ զի եթէ մինչև ե-
զեալ առ նա նշանիդ այդմիկ՝ աննեղելի ոք էր յաղագս
անգիտանալոյն զնած , առաւել ևս յետ սքանչելեացդ
այդորիկ և զկնի խոստովանութեանն իւրոյ և վարդապե-
տութեանն՝ զոր այլոցն վարդապետեաց : Վ՚անգի և ա՛չ
արդեօք , եթէ ա՛չ քաջ իսկ հաւատացեալ էր նորա՝ ե-
թէ նա միայն է ձշմարիտ ած , այնչափ իմն պատիւ ա-

առջի ընծայեցուցանէր ծառային նորա, և կամ յայդպիսեաց ինչ օրինադրէր այլոց։

Ա.ՅԼ սակայն յետ այնպիսի խոստովանութեան՝ ի կառապաշտութիւնն խարդաւանեցաւ. և այն՝ որ ի վերայ երեսացն անկանէր և երկիր պագանէր ծառային այ, յայնչափ մոլեգնութէ զակառեցաւ, զի և զծառայն այ՝ որ ոչն կամէին երկիր պագանել նմա, ի հնոցն ընկէց։ Աչս զինչ ապա. Թերևս եղև՞ ածէ վրէժխնդիր ուրացողին, ըստ որում և արժան իսկ էր պահանջել զվրէժն. նա աւանիկ մեծ ևս նշան զանկակից իւրոց զբութէն չնորհեաց նմա, և յետ այնչափ անմտութէն կրկին յառաջինն առ կացոյց զնա։ Աչս որ առաւել հրաշալին է, զի մի Թերևս դարձեալ անհաւատալի իրքն եղիցին յաղագս մեծութէ հրաշիցն, ոչ յայլ ինչ եցոյց զնշանն, այլ ի նոյն իսկ ի հնոց անդր, զոր ինքն բորբոքեաց ի վերայ մանկանցն՝ կապեալ և ձգեալ զնա ի ներքս։ Պաքէն եթէ և զոյն զայն շիջուցեալ էր, սքանչելի էր և նորանշան, սակայն մարդասէրն առ ի սաստիկ ևս ահարկանել, և մեծամեծ ևս արհաւիրս գործել, և գլխովին ի լուծանել զնորա կուրութիւն, մեծ ևս քան զայն գործեաց և առաւել նորանշան։ Պանգի իրրև թոյլ ետ բորբոքել զնա այնչափ, որչափ նայն կաս մեցաւ, և այնպէս ուրեմն ապա զընտանի զօրութէն իւր ի ներքս ընծայեցոյց. ոչ եթէ զմեքենաւոր հնարս եղծանելով ինչ զթշնամեացն, այլ զնոսին հաստատուն պահելով՝ անգործս իմն առադրեաց։ Աչս զի մի ոք զնա յաղթականս տեսանելով զոցոյն, առ աչօք ինչ զերծն կարծեսցէ, թոյլ ետ կիզուլ այրել զարկանողս նոցա. Այստ արտաբեալ՝ եթէ հուր էր Աչմարիտ երևեալն. ա պա թէ ոչ՝ զնաւթն գլխովին և զվուշն և զորթան և զայնչափ մարմինն ոչինչ Ձարակեալ ծախէր։ Պակայն քան զԵրամնոս նորա չէք ինչ զօրաւորագոյն, այլ բո լորիցս բնութէ հպատակ կայ այնմ՝ որ յաչնչէն ի գոյ եած զնա, ըստ որում և յայնժամ յայնմի եղև։ Պանզի զի առեալ բոցոյն յինքն զապականացու մարմինն, իբրև յանապականաց ոմանց տէղի ետ, և ոչք բովանդակ հատոյց զաւանդն, և այն՝ բաղում շքով։

Պանզի զօրօրինակ յարքունեացն Թագաւորք, նոյն պէս ի հնոցին այնուհետև ի դուրս ելեալ գային մանև

կունքն. և անգ ապա ոչ ոք յանձն առնոյր հայել ՚ի թագաւորն, այլ առ հասարակ ամենեքեան թողեալ զնա՝ ՚ի նորանշան տեսիլն զարձուցանէին զաչս. և ոչ դարձեալ թագն և կամ ծիրանին, և կամ այլ ինչ ՚ի փառացն արքունի այնպէս լինի շարժեաց յանկոյց յինքն ըզջոկս անհաւատիցն, որպէս տեսուեցի հաւատացելոցն այնոցիկ, որ ժամն ձիգս դեգերեալ ՚ի մէջ հրոյն, այնպէս ելին անտի, իբրու այն թէ յերազի ուրեմն զնոյն կրեալ էր նոցա։ Այլ քանզի որ ՚ի մեզ դիւրախզելն է քան զամենայն՝ հերացդ ասեմ բնութեի, նա յայնժամ բռնադատն ևս քան զադամանդ յաղեցաց ամենածախս բոցոյն։

Այս և ոչ այն միայն էր սքանչելին, զի ՚ի մէջ անդր ընկեցեալք՝ կրեին և ոչինչ, այլ զի և ոչ բարբառելովք երբէք. իբրև զի այս քաջայայտ կայ ամենեցուն՝ եթէ որք միանգամ ՚ի հուրն անկանին, ցորչափ փակեալ պահեսցեն զշրթունսն, թէպէտ և ընդ սուղ ժամս նակ՝ ունին նոքա ընդդէմ կալ հրդեհին այնմիկ. ապա եթէ դէպ լինի նոցա երբէք բանալ զբերանս իւրեանց, անդէն վաղվաղակի և հոգին թռուցեալ գնայ ՚ի մարմնոյն։

Այլ սակայն՝ յորժամ այդչափ սքանչելիքդ հրաշացան, և յափշտակեն կրթեցան առ հասարակ որ անդն կային և տեսանէին, և որք դարձեալ բացականք էին և զնոյն ՚ի գրոցն լուեալք՝ խելամուտ եղեն, թագաւորն՝ որ այլոցն վարդապետ լեալ էր, ինքն ապաշխարեալ՝ միաբանգամ յառաջինն իւր դարձաւ ՚ի չարիս։ Սակայն և ոչ այնպէս պատուհասեաց զնա, այլ դարձեալ երկայնամտեալ, և ՚ի ձեռն երազոց և ՚ի ձեռն մարգարէին խորհրդակից բարեաց եղև նմա։ Իսկ յորժամ ոչինչ այսոքիւք ՚ի լուսագոյնն փոխեցաւ նա, յայնժամ ապա զպատուհասն ՚ի վերայ ած, ոչ եթէ յաղագս գործեցելոցն վրէժս պահանջելով, այլ զհան դերձեալ չարիսն կարձելով ՚ի նմանէ, և զի զյառաջագոյնս խաղալ ամբարշտութեն սանձակոծեցի. սակայն և ոչ այս միայն էսպառ, այլ յամն սակաւս խրատեալ զնա՝ գարձեալ ՚ի պատիւն առաջին առեալ եհան զնա, ոչինչ տուժեալ ՚ի պատուհասէ անտի յայնմանէ, այլ և շահեալ ևս զվէհագոյն քնաւից բարեացս, հաստատու-

թէ պնդիլ ՚ի հաւատս ՚այ , և ապաշաւել յաղագս յառաջագոյն մեղացն գործեցելոց ։

Ը· ՚Վանզի այսպիսի ինչ է մարդասիրութիւնն ՚այ , ո՛չ խոտե երբեք զապաշխարուին՝ որ անկեղծութիւն լինիցի · այլ թէպէտ և մինչև ՚ի ծագս չարութիւն ոք հասեալ իցէ , և անտի միւսանգամ ընարեսցէ դառնալ ՚ի Հանապարհն առաքինութեան , ընդունի զնա և դիրկս ածէ նմա · և զամենայնն հնարի՝ որպէս զի յառաջինն կարգն ածեալ կացուսցէ զնա · և որ մարդասիրագոյն ևս է քան զայս , թէպէտ և ո՛չ բովանդակ զապաշխարութիւնն յանձին բերցէ ոք , նաև ո՛չ զհամառօտեալն զայն և զդուշնաքեայն երբեք անգոսնէ , այլ և վարձս բազումս և սմա կշռէ · և քաջայայտ է այս՝ յորոց միանգամ մարգարէն Եսայիաս խօսի զայս օրինակ յաղագս հրէական ժողովրդեանն · * ՚Ի ման մեղայ առ սակաւ մի տրտմեցուցի զնա , հարի զնա և դարձուցի զերեսս իմ ՚ի նմանէ , և տրտմեցաւ և գնաց թախծեալ , և բժշկեցի զնա և միխթարեցի զնա ‖ · ԵՒ · ԾԷ · 17 ։ ՚Ի կայ մեզ կացեղ և յոյժ ամբարիշտն այն թագաւոր , որ ՚ի հնոջէն իւրմէ ՚ի ձեռս մատնեցաւ մեղացն · իսկ իբրև միայն արտասուեաց և քուրձ զգեցաւ և դառապարտեաց զանօրէնութիւնս իւր , այնպէս լինի ձգեաց յինքն զողորմութիւնն ՚այ , մինչև և յամենայն մեծալուտ չարեացն ապրեցոյց զանձն ։ ՚Վանզի ասէ ՚ած ցեղիս · * Տեսէ՞ր զի ստրջացաւ աքսաքէ յերեսաց իմոց · փոխանակ զի ահնկորեաց յերեսաց իմոց , ո՛չ ածից չարիս յաւուրս նորա ‖ · Գ · Ռգ · Ի՞ · 29 ։ ՚Ա՛ւ լեա սորա դարձեալ մանասէ , որ մոլեգնութիւնն ՚ի վերոյ անց քան զամենեսեան , և իբրև բռնաւոր՝ զօրինացն պաշտօն հինն ՚ի վեր տապալեաց , և զտաճարն փակեաց , և զմոլութիւն կռոցն յաձախեաց , և քան զամենեսեան ոքք յառաջքան զնա առաւել ամբաստեցաւ · իսկ ապա յորժամ ապաշաւեաց , ընդ բարեկամն ՚այ կարգեցաւ · Ը · ԻԳ · 13 ։ ՚Ա՛պա եթէ միանգամ ՚ի մեծութիւն անօրէնութեանն իւրոց հայեցեալ , յուսահատ լեալ էր ՚ի դարձն իւրմէ և ՚ի փոփոխութենէն , յամենայնէն արդեօք սմա կեալ վրիպեր , զոր միանգամ յետոյ զգեաւմբ ած ։ Իսկ նա թողեալ զառաւելութիւն իւրոցն յանցանաց՝ դէտ աչն կալաւ յանսահման գութն ՚այ , և զկապանսն

խզեաց զանապարկուին, յարեաւ և զմնրան մղեաց, և զգեղեցիկ ընթացսն կատարեաց։

Ոչ ոչ միայն յեղելոց ասաի առ սուսա, այլ և ի քա նից անտի՝ զոր մարգարէին խօսեցաւ, Հատ կտրեաց ոճծ բովանդակ զյուսահատութէ խորհուրդս. քանզի ասէ ուրեմն այսպէս. * Ա՛յսօր եթէ ձայնի նորա լսէ ցէք, մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ի դառնու թեան ‖. պղ. ղբ. 8։ Ոչ զայսօրդ զայդ ընդ բովանդակ կեանս ընդ այս մարթէ ասել. իսկ եթէ ումեք կամք իցեն՝ մինչև ցծերութէ. քանզի ոչ ի ժամանակս յերկարութէ չափի ապաշխարութէն, այլ ի հոգւոյն հան դերձանացն։ Այս քանզի նէոուէացւոցն ոչ բաղմաց ինչ աւուրց պէտք եղեն ի քաւել զմեղս իւրեանց, այլ դոյզն ժամանակ միոյ աւուրն բաւական եղև ի ջնջել զամենայն անօրէնութէնս նոցա. և աւազակին ինքնին ոչ երկարաձիգ ինչ ժամանակաւ հանդիպեցաւ մահից դըրախտին, այլ որչափ ինչ պահս ծախեաց որ ի բարբա ռէն բան մի, չայնչափ վայրկենի լուացեալ զամենայն մեղս ողջոյն կենաց իւրոց, և նախ քան զառաքեալսն ի բուռն ձգեաց զըրարիոնն ընտրութէ։

Ոչ զմարտիրոսսն գլխովին տեսանեմք, զի ոչ ընդ ամն բաղումն, այլ ընդ աւուրս սակաւս, նա բազում անգամ և ի միում աւուր առին զչքեղաշուքն պսակ։ Է. Ոչ սոյն որոյ զուարթութէ մեզ պէտք էն ամենայն ուրեք, և բազում պատրաստութէ սրտի. և եթէ այն պէս իմն հանդերձեսցուք զնիզ մնաց մերոց, և այն չափ սաստիկս ատեսցուք զառաջին չարութէնս մեր, և զհակառակէն բուռն հարցուք ձանապարհն, որչափ ինչ կամի և պահանջէ ոճծ, ոչինչ արդեօք չայզագս ժա մանակին կարճութէնն նուազեսցուք մեք չարգասեաց անտի. քանզի և բազումք ի չեռնոյն չառաջեցին քան զառաջինսն։ Օ չի ոչ եթէ անկանիլն դժնդակ ինչ է, այլ անկեալ մնալ, ոչ և վերստին չառնել, և զհարու թէն առաջադրուէն՝ զկամս պղերգացեալն և զլատն՝ ծածկել չուսահատութեանն խորհրդով։ Ա՛ս որս և մարգարէն իբրև չերկուացեալ ինն ասէր. * Ո՞եթէ որ գլորին ոչ չառնիցէ, կամ որ խոտորին ոչ ևս դառնայ ցէ ‖. երեմ. ը. 4։ Ոչ եթէ խնդրեսցէս ի մէնջ գնոսա՝ ըզքչեա հաւատոյն դարձեալ գլորեցան, աւազիկ այդ

քանքդ դլխովին վասն այնպիսեաց ոմանց ասացեալ էն. քանզի որ գլորեցաւն, արգելաք ի յառաջագոյն կացեալց անտի էր, և ոչ յանկեալոյն. զի որ անկեաւն է, զիարդ գլորեսցի:

Այ ես մեզ ասել և այլ ինչ ևս, որ յառաւակացն, որ յանկաւաւոր գործոցն, և որ գարձեալ ի քանից անտի. և քանզի ոչխարն այն՝ որ զատաւ յինուսուն և ինուցնն, և ապա ածաւ անդրէն, ոչ զայլ ինչ մեզ ի դէմն ածէ, քան թէ զգլորել հաւատացելոցն և զղաւնալ: Վասն զի և այս ոչխար էր յօտար ինչ հօտէ, այլ ի թուոյ անտի մնացեալոցն, և ի նմին հովուէն յառաջագոյն հովուեալ. և մոլորեցաւ ոչ զդուշնաքեայն մոլորութիւն, այլ ընդ լերինս և ընդ առապարս. այս է՝ ընդ ձանձապարհ տարագէմ, և որ յուղղութէ անտի բայագոյնս խոտորեալ էցէ: Այս արդ անտեսս արար զմոլորեալն. մի լեցի. այլ ածէ անդրէն, ոչ վարելով և կամ գանձկոծ առնելով, այլ ի վերայ դնելով ուսոյն: Վասնզի ղոր օրինակ քաջքն ի բժշկաց զախտացեալսն զախտ բազմաժամանակեայ՝ մեծապէս դարմանումն յառողջուԹէն դարձուցանեն, ոչ միայն ըստ օրինաց բժշկուԹեն՝ նոցա սպաս հարկանելով, այլ է ուրեք զի և զկջանկն խոնարհին առ նոսա. նոյնպէս և ես ածէ զոյժ ապակա նեալսն ոչ բաղում ինչ բռնուԹէ ածէ յառաքինուԹէ անդր, այլ յոչխիկ և տակաւ տակաւ բառնալով բերելով ամենայն ուրեք, որպէս զի մի չար ևս պատառումն եղիցի, և կամ առաւել տարագէմ մոլորուԹէին:

Այս ոչ այս առակ միայն զդոյն ի նեղքս ածէ, այլ և որ անառակին է որդւոյ: Այս քանզի և սա ոչ օտարոտի ոք էր, այլ որդի և եղբայր սիրատնունդ զաւակին, և ի վատթարուԹիւն փոխեցաւ ոչ ԹեԹև, այլ և ի ծայրն՝ որպէս ումեք կամք էցեն ասել՝ չարեաց: Ի՛ե ծատուկն և ազատն և քաջագոյնն առաւել ևս հիգացեալ գտաւ քան զսպասաւորս, քան զօտարս ոմանս, և քան զվարձկանս: Այլ սակայն վերստին դարձաւ յայն ինչ՝ որ ինչ անդստին ի սկզբանէ. և զփառսն առաւ ջին կրկին ստացաւ: Այսպա եԹէ ինքն յուսահատ լեալ էր ի կենաց իւրոց, և ի պատճառս վշտին հասեալց լքեալ վհատեալ կայր մնայր յօտարուԹէ անդ, ոչինչ ապաքէն ի բուռն արկանէր՝ յորոց միանգամ ասա ի

ձեռս եբեր , այլ սովալլուկ եղեալ չուառական ևս քան զամենեսեան մնհու վախճաներ ։

Ա.յլ քանզի ՚ի միոս եկն և ո՛չ յուսահատեցաւ , զկնի այնչափ ապականութեն՝ դարձեալ ՚ի նոյն պայծառութիւն գայ , և զգեղեցիկ պատմուճանն ագանի . և ՚ի մեծամեծս ևս վայելէ քան զանցանց հարազատն . * Ա.նգղի այս քանի՛ ամք են ասէ , զի ծառայեմ քեզ , և երբեք զպատուիրանաւ քով ո՛չ անցի . ուր մի երբեք ո՛չ ետուր , զի ուրախ եղէց ընդ բարեկամն իմ . իսկ իբրև եկն որդիդ քո այդ , որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս , զնեռ դմա զեղն պարարակ ‖ . ղ՚ . ժե՚ . 29 ։ Ա.յսչա՛փ է ապաշխարութեն զօրութի՛ն ։

Ը՚ . Ա.ւ արդ օրինակս այսչափ ունելով առաջի , մի՛ կացցուք յամեացուք ՚ի չարիսն , և մի՛ յուսահատ լինցուք ՚ի գարձէ անտի . այլ և մեք ինքնին ասացուք . * Վ.նաց ցից առ Տէր իմ ‖ . ղ՚ . ժե՚ . 18 . և մերձեցուք առ նո՛ա ։ Վ.անգի նա երբեք ո՛չ խոտորի առ ՚ի մէնջ , այլ մեք անձամբ զանձինս հեռացուցանեմք ՚ի նմանէ ։ Վ.անգի * նո՛ա մերձաւոր եմ ես , ասէ . և ո՛չ նո՛ա հեռաւոր ‖ . եր՚ . է՚ . 23 ։ Ա.յլ ՚ի ձեռն մարգարէին գարձեալ ամբաստանէ զնոցանէ ասելով . * Ո՛չ մեղք ձեր որոշեն ՚ի մէջ ձեր և ՚ի մէջ իմ ‖ . ես՚ . ե՚ . 2 ։ Ա.յլ արդ քանզի այս է , որ հեռիս առնէ զմեզ յա՛յ , զդժնդակ զայդ կրձիտն և զնախանձարարդ մերձաւորութեան հատցո՛ւք բարձցո՛ւք ՚ի միջոյ ։

Ա.յլ լո՛ւր դու և որ ՚ի գործոց անտի էն հաւաստիքն ։ Ա.ռ կորնթացիսն այր ոմն ականաւոր՝ մեղս մեղաւ այնպիսի , որպէս և ո՛չ առ հեթանոսս անգամ յիշատակեցաւ ։ Ա.յլ էր սա ՚ի հաւատացելոց անտի և յընտանեացն քրի՛ստ . իսկ ոմանք՝ և յերիսցանց անտի ասեն զնա լինել ։ Ա.յլ զինչ ապա , թերևս ՚ի բաժնէ փրկելոցն հաճո կարեաց զնա պաւղոս . քա՛ւ լիցի ։ Վ.անգի նա ինքն է՝ որ բիւրս ինչ ՚ի վեր և ՚ի վայր կշտամբէ զկորնթացիսն , զի ո՛չ յապաշխարութի՛ն անդր փոխեցին զնա ։ Այսք կամեցեալ նորա մեզ զայն ինչ յայտ առնել , եթէ ՚ի մեղաց չի՛ք ինչ՝ զոր ո՛չ մնրթի իցէ ապաքինել , դարձեալ այսպէս խօսի վասն նորա՝ որ սաստիկ ևս քան զՀեթանոսացն յանցուցեալ էր յանցանս . * Ա՛ատեցէ՛ք զայն պիսին սատանայի ՚ի սատակումն մարմնոյ , զի հոգին



ասլբեսցի յաւուրն տեառն մերոյ յեղիքեի ՚։ ա. կոր. է. 5։

Ա.ՀԼ այս նախ քան զապաշխարութեանն. իսկ իթրև ձեռափեցաւն, * Ո՞ատ է ասէ այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ՚ի բազմաց՝ անտի է ՚։ է. կոր. է. 6. և առաք քեաց ևս դարձեալ մխիթարել զնա, և ընդունել զաշխարութիւն նորա. զի մի թերևս զրկեսցի ինչ ՚ի սատանայէ։

Դարձեալ և ողջոյն զազգն գաղատացւոց յետ հաւատոյն, և զկնի նշանոյն հրաշագործութեե, և յետ մատնելոյ ՚ի բազմադէմ փորձութիւնս յաղագս հաւատոյն քոյ, իթրև գլորեցան նոքա, միւսանգամ կանգնեաց։ Այս զի սքանչելիս ևս գործեալ էին, յայտ արար ասելով. * Լոկ արդ՝ որ բաշխեաց ՚ի ձեզ զՀոգին, և յաշողեաց ՚ի ձեզ զզօրութիս ՚։ գղտ. գ. 5։ Լոկ թէ և բազում ինչ ՚ի պատճառս հաւատոյն մղեցին պատերազմունս, և զայն դարձեալ յայտ արար՝ ասելով, * Այս այնչափ անգք անցին ընդ ձեզ զուր, եթէ իսկ զուր ՚։ գղտ. գ. 4։ Ա.ՀԼ սակայն յետ այնչափ բարգաւաձելոյն, մեղս իմն մեղան՝ որ բաւական էր օտարացուցանել զնոսա ՚ի քեէ, այր աղաւաւ ինքն վճիռ ՚ի վերայ ածէ ասելով. * Ա.հաւասիկ ես պաւղոս ասեմ ձեզ. զի եթէ թլփատիք, քո ինչ ձեզ ոչ օգնէ ՚։ է. 2. և դարձեալ. * Ամր օրինօքն արդարանայք, անկեալ եք ՚ի շնորհայ անտի ՚։ է. 4. և սակայն յետ այնչափ գլորմանն, ժողովէ զնոսա ասելով. * Ամրեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկարեսցի քո ՚ի ձեզ ՚։ ՟ք. 19. յայտ արարեալ, եթէ և զկնի վերջին ապականուԹեն՝ դարձեալ հնարաւոր է յիմծուստ անտի նկարիլ քոի ՚ի մեզ։ * Ո՞վ ոչ կամի զմեհ մեղաւորին, որպէս զդաւնեալ նորա և զկեաէն ՚։ եղեկ. լՁ. 11։

ԼՁ. Դարձցուք ապա ոչ սիրեցեալք գլուխ, և ըզկամն ՚ոյ ՚ի գլուխ տարցուք։ Վանզի վասն այնորիկ արար և ՚ի գոյ ած զմեզ, զի յաւիտենից բարեացն հաղորդս արասցէ զմեզ, զի զերկնից արքայութիւն պարգևեսցէ մեզ. և ոչ զի ՚ի դեհեան անդր արկցէ և հրոյն մատնեսցէ զմեզ։ Վանզի այդ ոչ վասն մեր ինչ, այլ վասն սատանային հանդերձեցաւ. իսկ արքայութիւնն անդստին ՚ի սկզբանէ ՚ի մեր սակս կազմեցաւ և պատրաստեցաւ։ Այս զերկոսին զայսոսիկ ՚ի դէմս ածէ ա

սէլով առ աջակողմեանն . * Այսպէս օրհնեալք հօր իմոյ , ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի ‖ . Մտթ . է֊ . 34 : Իսկ առ ահեղ կինան , եթէ * Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական , որ պատրաստեալ է , ոչ ձեզ , այլ սատանայի և հրեշտակաց նորա ‖ . իսկ արքայութիւնն ի սկզբանէ անտի աշխարհի մեզ պատրաստեցաւ :

Այսպա մի անարժանս ոմանս յարդարեսցուք զանձինս մեր մտից առագաստին այնորիկ : Վանզի ցորչափ յաւատի կենցաղս դեգերիմք , թէպէտ և բիւրս ինչ յանցանս նիցեմք , դիւրին է զամենայնին միանգամայն ջնջել՝ ոլոց միանգամ զապաշխարութիւնէ մեղացն յանձն առնուցուն : Իսկ յորժամ անդր չուեսցուք , թէպէտ և կարի սաստիկ ապաշխարութիւն յանձին բերիցեմք ոք , այնուհետև օգտեսցուք և ոչինչ : Այլ թէպէտ և զատամունս կրճտեսցուք , թէպէտ և հեծեծեսցուք , թէպէտ և բիւր անգամ կողկողեսցուք , և ոչ ծագիւս մատին ոք կաթեցուսցէ մեզ տապացելոցս : Այլ լուիցուք զայն ինչ՝ զոր միանգամ և մեծատունն այն յայնժամ , եթէ * վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ ‖ . Ղկ . ժզ . 26 :

Այսպա աստէն սկսափեսցուք աղաչէմ , և զմեր տէրս ծանիցուք , ըստ որում ճանաչել արժան է : Վանզի յայնժամ միայն արդեօք պարտ իցէ հատանիլ ի յուսոյ ապաշխարութենն , յորժամ ի դժոխսն իցեմք : Վանզի անդամօր միայն տկարացեալ է այս դեղ և անպիտան . իսկ մինչդեռ տակաւին աստէն թարթափիմք , թէպէտ և ի ժամանակի անդ ծերութեան դիպի ի վերայ , մեծամեծ զօրութիւնս երևեցուսցէ : Ձաղագս որոյ և սատանայ զամենայն խորամանկէ , զի միանգամ զյուսալ հատուածն ի մեզ արմատացուսցէ զնորհուրդ . քանզի գիտակ իսկ է , եթէ թէպէտ և խուն մի սարքաւցուք , ոչ անվարձս ելցուք վասն այնորիկ : Այլ զոր օրինակ որ բաժակ մի մատուսցէ ջուր ցուրտ , ունի իւր զպատրաստեալ տրիտուրն , այսպէս և որ ի վերայ մեղացն գործեցելոց ապաշաւեսցէ , թէպէտ և ոչ զարժանի ապաշխարութիւն մեղացն ի դէմն բերցէ , առցէ նա և զնորուն փոխարէնն : Վանզի և ոչինչ գլխովին ի բաց բեաց անտի , թէպէտ և դուշնաբեայ ինչ իցէ , խոտեալ երբեք յարդար դատաւորէն յայնմանէ : Օ՛ եթէ

մեղքն այնչափ ձնդիւ խուզին, որպէս զի և զբանիցն և զխորհրդոցն վրէժս լուծանել մեզ, քանիսո՞ն առաւել ուղղութիւքս մեր, թէպէտ և մեծամեծք, թէպէտ և փոքունք համարեսցին մեզ 'ի ժամանակին յայնմիկ։ Ո՛ինչ զի թէպէտ և ո՛չինչ բաւական իցես դու ձնդրտիւ դառնալ անդրէն յառաջինն, սակայն զնարդ և իցէ՝ յառաջիկայ ախտեդ և 'ի ցանկութիւդ փրկեա զանձն քո, և ո՛չ այդ գլխովին յանօգուտս ինչ եղիցի քեզ։ Ո՛իայն քուռն հար զգործոցն, և բաց քեզ զնուաստն յաս պարեզ անդր. զի ցորչափ արտաքոյ դեգերիս դու, և բաւամբք արդեօք տաժանալից երևի քեզ այդ և անհոգս։ Վ՛անզի մինչեւ մնատուցեալ 'ի փորձ անդր, թէպէտ և կարի դուշնաքեայ իցեն իրքն և հեշտինք, դրժուարութիւն բազում քնաւորեցան ցուցանել մեզ. իսկ յորժամ 'ի փորձ իրացն մատչիցիմք յանդգնեալք, բաւ զուտ ինչ 'ի ձգանց անտի 'ի բաց սրանայ, և փոխանակ ընդ դողութեն և յուսահատութեն՝ քաջալերութի 'ի ներքոյ մտեալ, նուազէ զահն, աձեցուցանէ զդիւրութեն, և զքաջիկ զյոյսն զօրաւորագոյնս գործէ։ Վ՛ասն այնորիկ և զյուզաս ինքնին ամենաչարն 'ի յայս կենացս զրկեաց, զի մի թերևս սկիզբն արարեալ սեթաւ փելոյ իւրոյ, 'ի ձեռն ապաշխարուքեն դարձցի անդրէն՝ ուստի անկաւն։ Վ՛անզի թէպէտ և նորանշանս ինչ բարբառեցայց ես, և ո՛չ զնոյն իսկ զմեղսն առաւել մեծ համարիմ՝ քան զօժանդակութիւն նաւթձեալ մեզ յաւ պաշխարութենէ անտի։

Յաղագս որոյ աղաչեմ և խնդրեմ 'ի քաց թօթաւ փել քեզ 'ի հոգւոյ քումմէ զամենայն սատանայական զխորհուրդն, և դառնալ գալ 'ի փրկութիւդ յայդ։ Օ՛ի թէ արդարև հրամայեալ էր իմ քեզ՝ արագ արագ, և միանգամայն 'ի գագաթդ յայդ միւսանգամ 'ի վեր ելանել, յիրաւի ապա դժկամակն լինէիր՝ իբրև ընդ բազմաքիրան գործ։ Վ՛ապա եթէ այնչափ ինչ միայն խնդրեմ ես այժմ 'ի քէն, զի մի ինչ յաւելցես դու 'ի չարիսդ յայդոսիկ, այլ անտի 'ի վեր յարուցեալ՝ 'ի հակառակն կոյս միւսանգամ դարձուսցես զքեզ, հիմ վատացեալ է քո. ընդէր խորշիս, զի առ 'ի յետոյն ձգես քարշես զանձն քո։ Վ՛իթէ ո՞չ իսկ տեսեր դու զնոսա, որք 'ի մեջ գրգանաց և գինեհարուքեց և խաղուց և այլոց

և ս խեղկատակութեէց կենցաղոյս՝ այսպէս զրաւեցան ի կենաց իւրեանց։

Զրդ մեր իցէն նոքա՝ որ փքացեալք ամբարտաւանութեէ, և բազմոց ուղեկցութեէ այսպէս գնային ընդ հրապարակս։ Որք մեռաքեայս զգեցեալք, և իւղով օծեալք, և պատառաքոյծս մնուցեալք՝ այսպէս բևեռեալք էին միշտ ի խորանի։ Մեր արդ իցէն պարծանք շքոյ դոցա։ Տեղի ետ, ի բաց գնաց բազմահանդերձ կոչունք, երաժշտականացն խումբք, մարդահաճոյիցն սպասահարկութէ, ծաղրն բազմապատիկ, լկտութիւն հոգւոյն, շռայլութէ մտացն, կեանքն գրգալից՝ դա տարկաստուն և ցոփագնաց։ Մեր արդեօք այժմ սրացաւ այդ ամենայն։ Օ՛ի արդեօք եղև մտրճոյն այնմիկ՝ որ յայնչափ սպասահարկութիս պաշտեր և յայնչափ մաքրուիս։ Չնպա գու երթ գնա՛ ի շիրիմ անդր, հայեաց ի փոշին, ի մխիթն, յորդունսն, հայեաց գու յանաքադանս տեղւոյն այնորիկ, և դառնապէս յոգւոյ հանջիր։ Զ՛ալ երանի թէ և մինչև ի մխիթն եկն տուգանքն. իսկ գու այժմ ի տապանէ այսր և յորդանցդ յայդոցիկ՝ անդր յանմահ յորդն յայն փոխեա զնորոգդ քո, ի հուրն անչէջ, ի կրճտել ատամանց, յարտաքին խաւարն, ի վիշտն և յանձկութիւնն յայն, յառակ զաղտրուն և մեծատանն՝ որ ի մէթերս ընչից յօրացեալ, և ծիրանեաւն պատեալ, և ոչ կաթի միոյ ջրոյ զիշեանուէթիւնն կալաւ, թէպէտ և յանչափ աղէտս հարկին ըմբռնեցաւ։

Մինչ լաւագոյն էն աստիքս քան զերազս գլխովին. քանզի զորօրինակ որք ի մեռաղն տաժանին, և կամ որք միանգամ դժնդակ և ս քան զդոյն պատուհասակոծ լինին, եթէ երբէք խոնջեալք ի տարժանակիր վաստակոց և ի դառնագոյն կենացն, և ի քուն մտեալք՝ յերազի տեսանիցեն զանձինս ի գրգանս և ի ձոխս թէս, և յետ այնորիկ տալա լրջացեալք ի քնոյն, ոչինչ չնորհս կալցեն անրջոյն այնոցիկ, զնոյն օրինակ և մեծատունն այն յաստի կենցաղս իբրև յերազի ուրեմն հարստացեալ լինէս, յորժամ աստի ի բաց մեկնեցաւ՝ զնոյն դառն տանջանսն չարչարէր։ Օ՛դոյն ածմամբ քով, և զՀուրն զայն ի կշիռ ձգեալ ընդ հրդեհին ցանկութէդ՝ որ այժմդ ունի զքեզ, ի բաց զերծիր դու

'ի հնոցին յայնմանէ ։ Այնպէս որ միանգամ զայս հուրս առնուն գեղեցկապէս շինօսցեն , զայնորիկ զփորձն երբեք ոչ առցե . ապա թէ որ զսա նկուն չարասցե , սաստ կագոյն եւս՝ յորժամ ասսի անդր գնասցէ՝ տանջեսցի յայնժամ նուաւս ։

Այնպէս ժամնակս արդեօք կամք իցեն քեզ , եթէ ձգեսցին երկայնեսցին վայելք կենացդ այդոցիկ . քանզի եթ այնպէս համարիմ՝ եթէ և ոչ աւելի քան զնիւթն ամն ինան քեզ՝ առ 'ի հասանել ժամնել քեզ մինչև ցվերջին ծերութիդ . նա մանաւանդ՝ և ոչ այդ գլխովին յայտնի ինչ է մեզ . զի եթէ և ոչ ցերեկոյն անգամ վատահ ինչ եմք 'ի վերայ կենաց մերոց , զնմանէ ապա չաղագս այդչափ ամաց կարասցուք ինչ հասատ տել ։ Այլ ոչ այդ ևեթ անյայտ է մեզ , այլ և գլխովին իրացդ փոփոխութիւն ։ Այնպէս բազում անգամ թէպէտ և ընդ ժամնակս ձիգս երկայնեսցին կեանքս , սակայն ոչ 'ի նմին ակաստանի ինան հեշտութիւք , այլ միանգամայն ընդ մերձենալն և 'ի բաց սրասցին ։ Վակայն 'ի վերայ այսր՝ եթէ քեզ կամք իցեն , կալ դու ըստ խմնման քանի , եթէ այդչափ ամն հասանել քեզ կեալ , միանգամայն և ոչ փոփոխութիւն ինչ երբեք պատահեսցեն 'ի քոյն . զինչ իցէ այդ առ անսահման յաւիտենից , զինչ դարձեալ և առ դառն և դժոխքմբեր տանջանօքն պնոքիւք ։ Այնպէս աստանօր առհասարակ եթէ քաղցունք իցեն և եթէ դառնիք՝ ունին զվախձան , և այն 'ի կարճոյ . իսկ անդանօր երկաքանչիւրն միանգամայն զուգաչափ են անմահ յաւիտենիցն . և այնչափ ինչ տարբերեալք են յաստեացս , որչափ և ոչ հնար է ասել ։

Ճ . Այլ մի դու յորժամ հուր լսես , այսպիսի հուր համարեսցիս զնա լինել . քանզի այս հուրս , զոր ինչ ըմբռնէ , կիզու և ծախէ . իսկ այն՝ զորս միանգամ 'ի բուռն արկանէ՝ հանապազ այրէ , և դադարէ ոչ երբեք . յոյր սակս և անշիջանելի ասի ։ Այնպէս և մեզաւորացն պարտ է զգենուլ զանապականութիւնն՝ ոչ 'ի պատիւ , այլ զի 'ի միանջենաւորս ունիցին զթոշակ տանջանացն այնոցիկ ։ Իսկ թէ այն քանի դժնդակ իցէ , և ոչ բան ինչ արդեօք բաւական իցէ երբեք 'ի դէմն բերել . այլ 'ի դուշնաքէիցս փորձոյ մարթ իցէ թերևս սուղ ինչ զմեծամեծացն զայնոցիկ առնուլ զձաշակ ։

Այնժամ երբեք լսեի քեզ մտանել ՚ի բաղանիս՝ որ ՚ի սաստիկ յեռանդն հարեալ լեր, յայնժամ դու զգեհենոյն ինձ ածէ զմտաւ պէտուրն. և եթէ դարձեալ ՚ի ջերմն դժնդակ տապասցիս դու, յայն բոցն դարձեալ զմիտս քո, և յայնժամ կարող լեիս որոշել քաջութիւն։ Օ ի եթէ բաղանիք և ախտ ջերմանն այդպէս ինձ տառապեցուցանեն զմեզ և տագնապեն, յորժամ ՚ի հրոյն այնորիկ անկանիցիմք ՚ի գետն՝ որ յառաջոյ հոսէ սոսկալի բեմին այնորիկ, զիա՞րդ հանդուրժեսցուք երբեք։ Արդեօք զատամնանս կրձտեսցուք լսկեալք ՚ի կրիցն, և յանըմբերելի խոշտանգանացն. և օգնականաւ ոչ ուստեք. այլ կոծեսցուք մեծամեծս, յորժամ սաստիկ բռնութիւք զմեզ անկեալ պատեսցէ բոցն։ Ոչ զոք անդանօր յակն արկցուք, բայց զորս ընդ մեզն չարչարիցին, և զահաւոր միայնութիւնն։

Ո՛ պատմեսցէ զարհաւրացն՝ որ ՚ի խաւարէ անտի պաշարեսցեն զմեր հոգիսն։ Վ՚անզի որպէս չէ ծախիչ հուրն այն, այսպէս և ոչ լուսաւոր, ապա թէ ոչ՝ խաւար ոչ եր։ Ա՚պա զտագնապն որ ՚ի վերայ մեր գալոց է յայնժամ, և զդողութիւն և զլռութիւն և զլազուծ ափշութիւնն, ժամանակն այն ևեթ բաւական իցէ յայտնութիւք ցուցանել։ Վ՚անզի բազում և բազմադէմ են՝ որ անդանօր չարչարանք. և ձիւնաքեր տանջանացն ամենայն ուստեք տեղացցի ՚ի հոգին։

Ա՚պա եթէ ասացցէ ոք. իսկ զիա՞րդ զօրեսցէ հոգին քերել զայնչափ բռնութիւն կատանացն, և յանսահման յաւիտեանսն տոկալ ՚ի տանջանսն. զմտաւ ածցէ նա՝ որ աստանօր դէպք. բազումք բազում անգամ զիա՞րդ տարան բազմաժամնակեայ և դժնդակ ախտին. ապա եթէ և մահու վախճանեցան, ոչ զի ծախեցաւ ինչ հոգին, այլ զի մաշեցաւ մարմինն. որպէս զի եթէ նա տեղի ոչ տայր, հոգին ոչ երբեք արդեօք դադարէր ՚ի չարչարանացն։ Ա՚պա յորժամ անապական զգեցցի ըզնոյն և անլուծանելի, չի՞ք ինչ այնուհետև որ արգելուլ կարիցէ, զի մի ՚ի յաւիտեանս անդր ձգեսցին տանջանքն։ Ա՚պաքէն աստէն չի՞ք հնար՝ միաբանել զերկուս զայսոսիկ, զասատկութիւն տեառն զտանջանացն և զեւս զակառուածն, այլ մին ընդ միւսումն մնքառի ՚ի պատճառս ապականացու բնութեանն մարմնոյս՝ որ զերկուցն

զայնոցիկ լծակցութիւն բերել ոչ ունի. իսկ ապա ՚ի յա-
ջորդել անապականութեն, այնուհետեւ լուծուին լինի
մարտին, և մեծապէս զօրութիւք երկաքանչիւր չարիք
՚ի յաւիտեանս լկեսցեն զմէզ։

Այսպա մի այդպէս կարծեսցուք այժմ, եթէ յառաւե-
լութենէ անտի չարչարանացն ծախուձի լինչ հասանիցի
հոգւոյս մերում. քանզի և ոչ մարմինս մեր այս կրեսցէ
զայդ ՚ի ժամանակին յայնմիկ, այլ ՚ի տանջանս անդ
կացցէ միասցի ընդ հոգւոյն ՚ի յաւիտեան, և վախճան
և ոչ ի լինչ եղիցի։

Այս արդ՝ քանիսպատիկ գրգռանս, և քանի՛ ժամանակս
կամիցիս դու ՚ի կշիռ ձգել ընդ տանջանացն այնոցիկ
և ընդ կտտանացն։ Այլ երևիս ժամանակ իմն ամաց հա-
րիւրոց, և կամ հրկիզն և այ քան գդոյն. իսկ զինչ այն ի-
ցէ առ անեղրական յաւիտենիւքն. քանզի որչափ լինչ
ե երազ միոյ աւուր առ բովանդակ կեանս, այնչափ են
աստեաց վայելք առ հանդերձելոցն վիճակ։ Այս արդ
իցէ՞ զի արդեօք, որ սակս երազանալոյ զախորժական
անուրջն՝ ընտրեսցէ զհանապազորեայ տանջանսն։ Իսկ
ո՞ զի այնպէս անմիտ՝ որ զայդպիսի տրիտուրդ յանձն
երթիք առցէ։ Այլ զանզի տակաւին ոչինչ դատափետեմ
զգրգռանն, և ոչ զի նման զտարբրացեալ դառնութիւնն
արդ յերևան քեզ ածեմ։ Օ՛ի և ոչ այս ժամանակ ե
բանիցս այսոցիկ, այլ յորժամ բաւական դատանիցիս դու
փրկել զանձն քո ՚ի նոցանէ։ Այլ զանզի արդ ըմբռնեալ
քո յախտիդ յայդմանէ, չազդիազդիս ոմանս թերևս կար-
ծեսցես զմէզ, եթէ դառն կոչեսցուք զհեշտութիւնն.
իսկ յորժամ ազատեսցիս յախտէն շնորհօքն Ա՛ստուծոյ,
յայնժամ և քաջապէս ՚ի վերայ կացցես չարութենէ դորա։

Վասն որոյ յայլ ժամանակ ամփոփեալ զբանիս զայ-
նոսիկ, զայս լինչ ասասցուք այժմ։ Այղիցի այդպէս, ե-
թէ դրգռանքն՝ դրգռանք իցեն, և հեշտութիւնն՝ հեշտու-
թիւն, և ոչինչ ունիցի ՚ի տրտմականաց անտի և կամ
յայպանելեացն. զինչ ասասցուք յաղագս պատրաստե-
լոյն տանջանաց։ Օ՛ինչ յայնժամ արասցուք մեք, որ
արդ իբրև ՚ի ստուերի և իբրև ՚ի պատկերի հեշտացաք
յայսոսիկ. իսկ անդանօր զանեզրական տանջանսն տան-
ջեսցուք արդեամբք և ճշմարտութեբ. և այն զի մարթ
էր ՚ի սուղ ժամանակի ապրիլ ՚ի կտտանաց անտի և

վայելել՝ի պատրաստեալ բարիսն։ Եւ այն զի և այս պարծ է մարդասիրութեանն այ՝ զի մի ընդ երկար ինչ ձգեսցին երկայնեսցին մեզ մարտքս, այլ ընդ սուղ ժամանակ և ընդ դուզնաքեայ և ընդ թարթափ ական (քանզի այսպիսի ինչ է աստի կենցաղս առ Հանդերձելոյն) պատերազմեալք, ընդ անվախձան յաւիտեանսն պսակիցիմք։ Եւ այս իսկ գլխովին չարչարեսցէ յայնժամ զՀոգիս պատժաւորացն այնոցիկ. յորժամ միանգամ զմտաւ ածցեն, եթէ գոյր նոցա ընդ սակաւ աւուրս ուղղել զամենայնն, և նոքա անփոյթ արարեալք՝ անմահական չարեացն մատնեցին զանձինս իւրեանց։

Այսպէս զի մի կրեսցուք ինչ յայնպիսեաց անտի, այլ զարթիցուք՝ի վեր, մինչդեռ ժամանակ է ընդունելի, մինչդեռ օր կայ փրկութեան, մինչդեռ մեծ է զօրութիւն ապաշխարութեանն։ Այլ և այն նախաձառեալ չարիքդ միայն ըմբռնեսցեն զՀեղգութիս մեր, այլ՝ և այլ ինչ՝ որ կարի դժնդակք եւս են քան զայնոսիկ. իբրու զի և որ ինչ միանգամ՝ի գեհենի անդ է, զառնադոյն եւս է քան զայսոսիկ. վրիպեալն գլխովին՝ի բարեաց անտի՝ այնչափ ինն ցաւս կինքն բարձեալ բերիցէ, այնչափ վիշտս և անձկութիս, մինչ զի թէպէտ և տանջանք և այլ ի պատրաստեալ էր անդ մեղաւորաց, այս միայն առանձինն բաւական էր չարաչար եւս քան զկատանս գեհենոյն՝ պատուհասել և տագնապել զՀոգիս մեր։

Ժա. Այլ դու այծ ինձ զմտաւ զվիճակ կենացն այնոցիկ, որչափ ինչ միանգամ կարող իցես՝ի խորհել։ Այնպէս յաղագս մեծավայելչութեանն իւրոյ՝ այնչափ քան բաւական է մեզ, այլ յորոց միանգամ լուսոքն օրինակօք ոմանքք, ի նոցունց առցուք ընդ աղօտ զպատկեր նորա։ * Արժեալ է ասել ցաւ և տրտմութիւն և հեծութիւն ‖։ Օ՜ ինչ ապա երջանիկ եւս կացցէ քան զկեանսն զայն։ Այնպէս չի՛ք երկիւղ յաղքատութենէ և՛ի խօթութենէ. չի՛ք՝ որ զրկէ, և այ՛ն՝ որ զրկէ. չի՛ք՝ որ զայրացուցանէ, և այ՛ն՝ որ զայրանայ, չի՛ք՝ որ բարկանայ, չի՛ որ նախանձի. չի՛ք զ՝ որ տարաձիգ ցանկութեն բորբոքեսցի. այ՛ն զ՝ է՝ որ սակս կարևորացն պաշարոյ տառապեսցի. չի՛ք՝ որ՝ի պատճառս իշխանութեան և նախարարութիւն ցաւս կրեսցէ։ Այնպէս ամենայն մրրիկ որ՝ի մէջն կրեալ՝ հիջեալ հանդարտէ. և առ

հասարակ ամենայնն՝ ի խաղաղութենէ և՝ ի լռութենէ և յուրախութենէ. ամենայնն անզորը և անգիւտ. ամենայն տիւ և պայծառութիւն և լոյս, ո՛չ որկանս, այլ այլ ինն այնչափ պայծառագոյն քան զսա, որչափ լուսատուագոյն է այս քան զձրագին։ Վասնզի անդաւոր գիշեր ո՛չ է, և ո՛չ այն լոյսն՝ ի գումարել ամպոցն ծածկի, ո՛չ վառի և ո՛չ կիզու զմարմինս։ Ոչիք գիշեր, էիք անդ երեկոյ, ո՛չ ցուրտ, ո՛չ ջեր, և ո՛չ այլ ինչ յեղյուսակացն փոփոխութենէց։ Այլ օտար իմն է վիճակն այն, զոր նմին արժանացեալքն միայն ձանաչեն։ Անդաւոր էիք ծերութիւն, և ո՛չ դարձեալ վիշտք ծերութենն, այլ՝ ի միջոյ բարձեալ են ամենայն տպականութեան կիրք. քանզի անսպական փառք ամենայն ուրեք թագաւորեալ են։ Ասէ որ բնաւից վեհագոյն, լինդ քոյ կենակցութենն վայելեացեն միշտ, ընդ հրեշտակացն, ընդ հրեշտակապետացն, ընդ վերինն զօրութեանցն։

Այլ այժմ հայեաց դու յերկինս, և ա՛նց դու խորհըրդով՝ զորովք՝ ի վերոյ են քան զերկինս. այծ զմտաւ քով զկերպարանափոխութիւն համաբոլոր արարածոյն. քանզի ո՛չ որպես և էն՝ այնպես կացցէ ճնաւցէ, այլ կարի չքնաղ և գեղափայլ, և որչափ ինչ խաւիր է ընդ կապարն և ընդ ոսկին ձաձանչեղ, այնչափ պատուականագոյն է՝ որ յայնժամ արարածն՝ քան զոր այժմ էն. ըստ որում և երանելին պաւղոս ասէ. * զի և ինքեանք իսկ արարածքն ազատեսցին՝ ի ծառայութենէ ապականութենէ. ‖ հռ. ը. 21։ Վասնզի արդ իբրու ապականութենէ հաղորդ, բազում ինչ կրէ յայնպիսեաց ան՝ որ զոր՝ ի դէպ է կրել մարմնոյն. իսկ յայնժամ մերկացեալ յամենայնէ այսոցիկ, զանապական զնւր գեղն մեզ՝ ի դէմս ընծայեցուսցէ։ Վասնզի որովհետև զանապականն զմարմինս առնուլ հանդերձեալ է բնութիւնս, և ինքն իսկ այնուհետև՝ ի լուսապոյն անդր կերպարանափոխ եղիցի։ Այնժամ ո՛րչինչ եղիցի կապ և մարտ, քանզի մեծասիտս լեր միաբանութիւնն՝ ի պարս անդ աբեղն. որպես զի և ամենեքեան ստ հասարակ միշտ համախոհք են ընդ միմեանս։ Ոչիք անդ երկնչել՝ ի սատանայէ, և կամ՝ ի դիւացն դարանակալութենէ, գեհենոյն չիք սպառնալիք, ո՛չ մահ, և ո՛չ ինչ՝ ի կենցաղալքանաց ասել, և կամ ևս դժնդակագոյն ինչ քան զայ-

ասսիկ, այլ ամենայն երկիւղ այսպիսի՝ լուծեալ է անդ
պանօր։

Եւ զորօրինակ մանուկ արքային՝ զառաջինն դիւրա-
գին հանդերձանօքն մնանիցի, և ահիւ և սպառնա-
լեօքն սանձակոծեսցի, զի մի թերևս ներողութէն՝ ի
յոռութէ շրջեսցի, և անարժան զանձն կացուսցէ հայ-
լենի ժառանգութենն. իսկ յորժամ զարքայական պա-
տիւն զայն զանձամբ առնուցու, անդէն և անդ զայն
ամենայն յանձնէն՝ ի բաց թօթափեալ՝ ծիրանազգեաց
եղեալ և պսակազգեաց անձնապահացն գնդաւ՝ անցեալ
բազմի բազում համարձակութէ՝ զկիրսն զայն խոնարհ
և զնկուն՝ ի բաց՝ ի հոգւոյն մերժեալ, և փոխանակ
նոցուն այլովք ոմամբք պերձայեալ, զսոյն օրինակ և
յայնժամ պատահեսցէ եթէ ամենեցուն։ Եւ զի մի
բոմբիւնս իմն լեզուի կարծիցես զբանս, հապա մեք ել-
ցուք խորհրդով՝ ի վեր՝ ի լեառն՝ ուրանօր այլակերպե-
ցաւ քն, տեսցուք զլուսաւորութիւնն զայն՝ զոր լուսաւորե-
ցաւ նա, թէպէտ և ոչ բովանդակ զամենայն պայծա-
ռութէնն հանդերձելոցն յաւիտենից երևեցոյց նա մեզ։
Ո՞ի թէ խնայեալով էր տեսիլն այն, և ոչ ձշգրիտ յան-
դիմանութէ էրացն, այն յայտ իսկ է՝ ի նոցուն իսկ բա-
նից աւետարանչին. իսկ զի՞նչ էցէ՝ զոր ասէն. * լուսա-
ւորեցաւ երեսք նորա զարեգական ‖. Մտթ. ԺԷ. 2։ Իսկ արդ՝
անատական մարմնոյն փառք ոչ երբեւ զասլականացու
մարմնոյս արձակէ զլոյս. և ոչ դարձեալ այնպիսի՛ ինչ,
զի մահկանացու տեսանելիք երբէք բաւական էցեն
հանդուրտել այնմիկ, այլ անապական և անմահ աչաց
սէրք են՝ ի տեսանել գնա։ Իսկ յայնժամ՝ ի լեառն
անդ այնչափ ինչ մերկացաւ նոցա, որչափ կարող էին
տեսանել՝ անշնաս պահելով զտեսողացն զաչս, սակայն
և ոչ այնպէս հանդարտեցին, այլ անկան՝ ի վերայ ե-
րեսաց իւրեանց։

Այլ ասէ՝ ասա զու ցիս, եթէ ածէր ոք զքեզ՝ ի
ներքս՝ ի վայրն լուսափայլ, ուր առ հասարակ ամենե-
քեան բազմեալ էցեն պատմուճանս արկեալ զանձամբք
ոսկեձամուխս, և՝ ի միջի անդ ակմբին ցուցանէր զայլ
ոք, որ յակունց պատուականաց համակ ունիցի ընդե-
լեալ զհանդերձման և զպսակն՝ ի վերայ գլխոյն, և ապա
և քեզ ինքնին խոստանայր դասել զքեզ յայն հրապա

բակ, Թերևս ոչ զամենայն հնարս հնարելիր հանդիպել խոստմանն այնմիկ։ Այլ այժմ դու բայց զայս խորհրդոց քոց, և հայեաց՝ ի բազմաժողով յայն տեսարանն՝ ոչ յայսպիսեաց ինչ արանց, այլ որ պատուականագոյն և ի գեն քան զոսկի և քան զականս պատուականս և քան զձառագայթս արեգակնայինս, և քան զամենայն երևելի պայծառութիւնս. ոչ՝ ի մարգկանէ միայն, այլ և որք միանգամ կարի արժանապատիւք և ն են քան զոսոսս՝ ի հրեշտակացն և՝ ի հրեշտակապետից, յաթոռոյն և՝ ի տերութեցն, յիշխանութեց, ՝ի զօրութեցն։ Վասնզի յաղագս արքային, և ոչ ասել անգամ կարող ինչ եմք, եթէ ոչ զսկիսի ինչ իցէ. այնպէս քան զամենայն բանս և զնորհուրդս՝ ի վերոյ անցեալ փախչի նորա գեղ, կերպարանն, շուքն, փառքն, մեծվայելչութիւնն, մեծաց գործութիւնն։

Այլ արդ՝ յայսչափ բարեացս վրիպ արդեօք կացուցցուք զանձինս մեր, զի մի Թերևս սուղ ինչ ժամանակ չարակրութեք անցուսցուք։ Օ՜ի թէ բիւր անգամ աւուր աւուր պարտ էր մահուընս կրել, եթէ զգեհենին գլխովին պարտ էր զանձամբ առնուլ, առ՝ի զքէն ինքն նեին տեսանել եկեալ՝ի փառս իւր, և՝ի սրբոցն դասիլ՝ի պարս, ոչ զայդ ամենայն արժան էր առնուլ յանձն։ Այլ զինչ ասէ երանելին պետրոս. * բարւոք է մեզ աստ լինել ‖. Տպր. ՟Բ. ՟Ա. իսկ եթէ նա ընդ աղօտ ինչ տեսեալ զհանդերձելոյն զպատկեր, վաղվաղակի զամենայն յանձնէն՝ ի բաց թօթափեաց յաղագս հեշտութեն՝ որ՝ ի տեսութէ անտի տպացաւ՝ ի հոգի նորա, զինչ արդեօք ասասցի ոք, յորժամ նոյն ինքն իրացն ճշմարտութի մերձ իցէ, յորժամ՝ ի բանալ արքունեացն՝ զնա ինքն նկատիցեմք զարքայն, ոչ և օրինակաւ, և ոչ ընդ հայելի, այլ դէմ յանդիման. ոչ և հաւատովք, այլ տեսլեամբ։

Ժ՟Ը. Պաքէն բաղումք իցեն՝ ի խօթամիտ մարդկանէդ՝ որ խնդրեսցեն՝ ի գեհենոյն միայն ապրիլ. իսկ ես կարի դժնդակագոյն և ահաբեկ հոգւոյ զայն՝ եթէ ոչ հանդիպեսցի փառացն այնմիկ, և անկցի՝ ի նմանէ. և որպէս հաւանեալս եմ՝ ոչ այնպէս արժան է սուգ առնուլ յաղագս դժոխոցն կրից, որպէս վասն յերկնիցն անկանելոյ. քանզի այս միայն առաւել քան

զամենայն դժոխըմբեր է ՚ի կարգի տանջանացն : Իսկ արդ և բազում անգամ յորժամ տեսանեմք զարքայն բազում անձնասպահօք մնանել յարքունիսն , երանիս տամք նոցա՝ որք մերձն կան առ նմա , և կցորդք են բանից և խորհրդոց նորա , և հաղորդք ամենայն փա- ւաց նորա . իսկ անձանց մերոց աւաղս կարդամք՝ Թէ- պէտ և բիւրուք բարեօք ձոխացեալ լեմք , յորժամ նկատեմք զփառս նորա , և ոչնչ իմանամք վնասոյցն . Թէպէտ և ՚ի վերայ հասեալ գիտեմք , եթէ այդ շուքդ սիալակ է , և ոչ հաստատուն , եթէ ՚ի պատճառս մոլ- ուից պատերազմացն , եթէ դարանակալութեանց , եթէ մոխանաց , և եթէ՝ Թէպէտ և այսքիկ մերձ ոչ էին , քնքուշ առանձինն յոչնչէ է գրելի . իսկ յորժամ յաղագս ամենեցուն Թագաւորին բանք էին , այն՝ որ ոչ ըզ- մնան , այլ ողջոյն զոլորտս երկրի ստացեալ ունի , մա- նաւանդ եթէ բովանդակ վնա ՚ի բուն իւրում պարա- գրի , և զերկինս գլխովին յափն իւր , որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ , որում ամենայն հնազանդ իրրև ոչնչէ և իրրև շինի ՚ի բերանոյ համարեցան , Թե- և այս յորժամ ոչ տանջանս ինն վերջին համարիցիմք մեք , եթէ վրէպ գացուք ՚ի դասակցութենէ պարուն այնմիկ՝ որ զնովաւն պատի . և շատ իսկ համարիցիմք մեզ՝ եթէ երբեք ՚ի գնհենոյն միայն ապատեսցուք . իսկ զինչ հիգապոյն եւս կայցէ քան զայսպիսի հոգին :

Վանզի այս արքայ ոչ ՚ի լուծս բարձեալ ջորւոց սպի- տակաց , և ոչ ՚ի կառս ոսկի , ոչ ծիրանեօք և ոչ զարձեալ Թագիւ պճնեալ , այնպէս եկեսցէ դատել զերկիր . այլ զիարդ . լսեր մարգարէին՝ որք գոչեն և ասեն , որչափ ինչ միանգամ մարթի է ասել մարդկան . քանզի ասէ ոմն այսպէս . * ահա յայտնապէս եկեսցէ և ահա մեր մի դա- դարեսցէ , հուր առաջի նորա բորբոքեսցի , և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ . կոչեսցէ զերկինս ՚ի վերուստ , և զերկիր ՚ի դատել ժողովուրդ իւր ‖ . աղ . կե . 3 : Իսկ եսայիաս և զտանջանսն մեզ ՚ի գէմն բերել ասելով այսպէս . * Օ՛ ի աշաւասիկ օր ահա հասեալ է . անհնա- բին լի բարկութիւ , սխակալութիւ , սրտմտութիւ , աո- նել զաւերեալս անապատ . և զմեղաւորս ոտնակել ՚ի նմանէ : Օ՛ ի ասեղք երկնից հայկիւն հանդերձ , և ամենայն զարդուն երկնից լցս մի տացեն . և խաւա-

բեսցի արեգակն ՚ի ծագել իւրում, և լուսին մի տացէ
ղայս իւր։ Եւ հրամայն տայ ընդ ամենայն տիեզերս
ղալրիս, և ամպարշտաց ղմեղս իւրեանց, և կորուսից
ղՀպարտութեն ղանօրինաց, և ղբարկութեն ամբարտա-
ւանից խոնարհեցուցից։ Եւ եղիցին մնացեալքն պա-
տուականք քան զոսկի անհուր, և մարդն պատուական
եղիցի քան զականս սովփերայ։ * Օ ի երկինք ղպրաս-
ցին, և երկիր սասանեսցի ՚ի հիմանց իւրոց, վասն
սրտմտութե բարկութե նոր զօրութեց, յաւուր յորում
հասեալ իցէ սրտմտութն նորա ॥ Ես. ԺԳ. 9։ Եւ գարձեալ
* Օ ի պատուհանք բացան յերկինից, շարժեսցին հիմունք
երկրի։ Կտրտելութե խռովեսցի երկիր, և տարակուսե-
լով տարակուսեսցի երկիր։ Շ արժելով շարժեսցի եր-
կիր, իբրև զտաղաւար մի գտապահոյ, իբրև զարբեալն
և զխմալակ, գլորեսցի և մի կարասցէ կանգնել զի
սաստկացաւ ՚ի վերայ նորա անօրէնութե։ Եւ եղիցի
յաւուր յայնմիկ՝ ածցէ Տէր ՚ի վերայ զարդուն երկնից
զձեռն իւր, և ՚ի վերայ թագաւորաց երկրի՝ որ ՚ի վե-
րայ երկրի, և ժողովեսցին զժողովս նորա ՚ի կապանս,
և պաշարեսցին յամուրս ॥ Ես. ԻԴ. 18։

Գարձեալ և մնաքիաս զուգաձայնս ինն այսոցիկ
բարբառի և ասէ։ * Ո՛հաւասիկ գայ ասէ տէր ամենա-
կալ. և ո՛վ ժուժկալեսցէ աւուր մտի նորա, և կամ
ո՛վ հանդարտեսցէ յայնմ աւուրն նորա. զի նա մտցէ իբ-
րև զբոց հալոցի, և իբրև զաՀռա լուալեաց։ Եւ նստցի
սրբել և ձուլել իբրև զարծաթ և զոսկի ॥ Մաղ. Գ. 2։ Եւ
գարձեալ. * Օ ի ահա եկեսցէ օր ՚ն բորբոքեալ իբրև
զՀնոց. և այրեսցէ զնոսա, և եղիցին ամենայն այլազ-
գիք, և ամենայն որ գործեն զանօրէնութի՝ եղեգն,
և վառեսցի զնոքօք օրն՝ որ գալոց իցէ, ասէ տէր ամե-
նակալ, և մի մնասցէ նոցա արմատ և մի ուռ ॥ Ե. 1։
Լսկ այրն այն ցանկալի, * Ցեսանէի ասէ, մինչև ա-
Թոռք անկանէին, և հին աւուրցն նստեր. հանգերձ
նորա սպիտակ իբրև զձիւն, և հեր գլխոյ նորա իբրև
զասր Ձե. աԹոռ նորա իբրև զբոց հրոյ, անիւք նորա
իբրև զՀուր բորբոքեալ. գետ հրոյ յորդեալ ելանէր
առաջի նորա. Հազարք Հազարաց պաշտէին զնա, և
բիւրք բիւրուց կային առաջի նորա. ատեան նստաւ, և
դպրութիք բացան ॥։ Եւ ապա զինի սակաւուց. * Ցե-

սանկէ ասէ՝ ’ի տեսլեան գիշերոյ , և ահա ընդ ամպս երկնից էբրև որդի մարդոյ գայր՝ և հասանէր մինչև ’ի հին աւուրցն , և մատուցաւ առաջի նորա : Եւ նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքայութիւն , և ամենայն ազգք և ազինք և լեզուք նմա ծառայեսցեն . և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական՝ որ ոչ անցանէ , և թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի : Ասացաւ մարմին իմ յանձին իմում : Ես դանիէլ՝ և տեսիլ գլխոյ իմոյ խռովեցոյց զիս ‖ . դան . է . 9 . 15 :

Յայնժամ բացցին գրունք ամենայն կամարաց երկնից . մննաւանդ եթէ և նոյն իսկ երկինք բարձցին ’ի միջոյ անտի . * Վանզի գալարեսցին ասէ երկինք էբրև զմագաղաթ ‖ . էս . լբ . 4 . զորօրինակ յորժամ փոկք և առագաստք խորանին ’ի միջոյ անտի ’ի բաց բառնին , զի ’ի լաւագոյնս ևս փոփոխեսցին : Յայնժամ աւա հասաբակ ամենայնն լցցի ափշութիւ և արհաւրօք և դողութիւ : Յայնժամ ահ սաստիկ կալցի և զնոսին զհրեշտակսն , և ոչ զհրեշտակս միայն , այլ և զհրեշտակապետս , և զաթոռս , և զտէրութիւնս , և զպետութիւնս , և զիշխանութիւնս . զի * զօրութիւնք ասէ երկնից շարժեսցին ‖ . մաթ . իբ . 29 . քանզի նոցա ծառայակիցքն համարս հանդերձին տալ յաղագս աստանօր կենացս :

Օ՛ն եթէ յորժամ վասն միոյ քաղաքի ատեան կարգի յիշխանաց աստի , աւ հասարակ ամենեքեան սոսկան յանձինս՝ նաև որք արտաքոյ լցեն վտանգին . իսկ յորժամ տիեզերք ամենայն դատին յայնպիսի դատաւորէ , որուսմ ոչ վկայից լինչ պէտք են և ոչ յանդիմանութեց , այլ առանց ամենայնի այսորիկ նա լինչն մերկանայ միանդամայն և զգործս և զբանս և զխորհուրդս , և էբրև ’ի պատկերի իւիք զամենայնն յանդիմանն հարկանէ այնմ՝ որ յանցեաւն յայնոսիկ և անգիտացաւ , զիարդ ոչ ամենայն զօրութիւն զդողանի հարցի և սասանեսցի : Օ՛ն թէպէտ և հրոյն ոչ յորդեսցէ դեռ , և ոչ հրեշտակք մերձ կացցեն ահագինք , այն միայն՝ զի մարդիկ ’ի մի վայր կոչեալք՝ կէսք ’ի նոցանէ գովաբանին և աքանչանան , և կէսք դարձեալ անարգաբար ’ի բաց արձակին՝ զի մի տեսցին զփառս նոյ . քանզի բարձի ասէ ամէնբիշան , զի մի տեսցէ զփառսն նոյն . և եթէ այս միայն էին տանջանքն , ոչ ահա դառնագոյն ևս քան զամենայն զե-

հեան՝ անկանել՝ի բարեաց առաւ յայսցանէ կատեսցէ զՀոգիս անարդելոյն : Որ զի յանհնարիցն է այժմ բանիւ երբէք մերկանալ, եթէ քանիօն իցէն չարիքս այս . իսկ յայնժամ չարդեանց անտի քաջասէս՝ի վերայ կացցուք իրացն : Իսկ դու այժմ չաւէլ ինձ յայսոսիկ և ըզանաջանան գլխովին , զի ո՛չ միայն ամենի ծածկեսցէ ըզնոսա , և ո՛չ միայն ձորձ զգլխոյին արկանիցէն , և համ ակնկարեալք խորհեսցին , այլ և վարեալք քաշեսցին ընդ ձանապարհն ընդ այն՝ որ՝ի հուրն հանէ , և ձգեսցին՝ի չարչարանսն և մնանեսցին անագորոյն զօրու թեցն . և կրեսցեն զայսոսիկ՝ի ժամանակի անդ յայնմիկ՝ յորում՝ որք միանգամ բարիս գործեցին՝ արժանիս յաւիտենից կենաց , պատկեալք և բարեհամբաւեալք առաջի անցեալ կան արքունական գահին :

Ժէ· Այս այսոքիկ արդեօք յաւուրն յայնմիկ . իսկ որ ինչ յետ այնորիկ , որ բան մեզ՝ի դէմս ածցէ . զՀետաւուքիւնն՝ որ յընդ քեզ կենակցութեանէն , զօգուտն , զցնծութիւն : Այնպէս յիւր բնականաւոր աշխուժականութենն դարձեալ հոգւոյն , որ կարողն է այնուհետեւ համարձակութիւն՝ հայել՝ի տէրն իւր , չէք Հնար ասել , եթէ քանիօն հեշտութիւն կթեսցէ առ՝ի նմանէն , քանի՞ շահս օգուտ . և ցնծայ նա ո՛չ միայն յառաջեռն բարիսն , այլ զի հաստատեալ է այնուհետեւ՝ զի վախձան երբէք չառնուն գեղեցկիքն այնոքիկ : Այս արդ բովանդակ ցնծութիւնն զայն ո՛չ բանիւ կարող ինչ եմք յանդիման առնել , և ո՛չ մտօք ըմբռնել , այլ սակայն ընդ աղօտ և որչափ ինչ ոք՝ի փոքունսն մերկասցի զմեծամեծսն , փորձ իմն փորձեցից և ես յայտնել զբանն :

Այեացուք մեք քննութիւն՝ որ՝ի կենցաղս՝ի յայս վայելչին՝ի գեղեցիկս յաւիտենիս այսորիկ , յընչաւէտութենս ասեմ՝ , ՝ի պետութիւնս և՝ի փառս . զի՞նդ յաշխարհս բարեբաստիկ կենացն փքացեալք , և ո՛չ գետնոյս այսորիկ բնակիչս համարիմն զանձինս , թէպէտ և յայնպիսի ինչ իրս վայելչին դոքա՝ որ և ո՛չ՝ի բարեաց սակի են , և ո՛չ դարձեալ միացականք ինչ առ նոսա , այլ և քան զանուրջս արագաթռիչք են . իսկ եթէ երբէք և առ ժամանակ մի կացցեն միասցեն , միայն՝ի դարման սպասաւորեն առաջակայ կենացդ , և ո՛չ անդրադոյն ևս զօրեն խաղալ՝ի միասին : Իսկ արդ՝ եթէ

այդոքիկ յայնչափ ցնծութիւն ՚ի վեր առնուն զունողս իւրեանց. զինչ արդեօք համարիցիս յաղագս հոգւոցն այնոցիկ, որք հրաւիրեցան ՚ի բիւր բարիսն երկնից, այն՝ որ միշտ հաստատունք են և անսասանելիք։ Այլ ոչ այս միայն, այլ և մեծութիւնն և լաւութիւնն այնչափ վեհագոյն են քան զմարձակայսս, մինչ զի և ոչ ՚ի սկզբ մարդոյ անկցի երբէք։

Վասնզի արդ զորօրինակ տղոյն յարգանդի, նոյնպէս և մեք յաշխարհիս յայսմիկ, յանձկութիւս պաշարեալ նստիմք, և զհանդերձելոցն յաւիտենից զպայծառութիւնն և զազատութիւնն ոչինչ կարեմք նկատել. իսկ յորժամ ժամանակ հասցէ երկանցն, և զմարդիկ առ հասարակ՝ զոր լինքն ընկալաւ ՚ի կենցաղումս յայսմիկ, ածեալ կացուսցէ յօրն յայն դատաստանի, անցուցեալքն՝ ՚ի խաւարէն գնասցեն մնացեն ՚ի խաւարն, և յանձկուէն իւրեանց ՚ի դժոխըմբեր ևս անձկութիւն. իսկ քաջամարմինքն և որք զարքայական պատկերին պահեցին յանձինս զինիք՝ մերձ կացցեն թագաւորին, և զնոյն սպաս պաշտամանն հարցեն, զոր հասարակաց ՚ենն պաշտեն հրեշտակք և հրեշտակապետք։

Այլ մի դու ոմ բարեկամ իսպառ զդոյն կինքդ ջընջեսցես ՚ի քէն. այլ փութասպէս նորաստեղծեալ ՚ի դեղեցիկ ևս տիպն ձնգրտեսցես դու զդա։ Վասնզի ըզմարմնոյ գեղեցկութիւնն ընդ սահմանօք բնութեանս փակեաց ՚ած. իսկ հոգւոյն գեղն անդանօր ազատացեալ է ՚ի հարկէ ծառայութեանն, իբրու զի և կարի վեհագոյն է քան զմարմնոյն կայտառութիւն, և համբուն ՚ի մեզ լինքեանս հաստատեալ և յակնարկութիւն ՚ած։ Այլ քանզի մարդասէր է տէրս մեր, դովիցի այդուիկ մեծապէս լիմն պատուասիրեաց զմեր ազն. զի որ փոքունքն են և ոչ մեծ ինչ ՚ի ներքս բերին մեզ, և ոչինչ դարձեալ մեղանչեն՝ եթէ երբէք ՚ի բաց անկցին, զայնոսիկ ՚ի հարկ բնութեդ կապեաց. իսկ ձնմարտիցն բարեաց զմեզ լինքեանս կացոյց գործունեայս։ Օ՛ի եթէ և մարմնոյն գեղեցկութիւնն տեարս զմեզ կարգեալ էր նորա, հոգ լիմն արդեօք առաւել զանց յանձին կալեալ էր մեր, և յանշահս ոմանս վատնեալ զամենայն ժամանակն՝ և զհոգւոյն գլխովին անփոյթ արարեալ։ Վասնզի եթէ այժմ չունեալով առ մեզ զիշխանութիւնդ

զայդ , զամենայնն գործեմք , զամենայնն հնարիմք · և իբրև վրկպ գտանիմք ՚ի ձեմարտուԹէ գեղոյն , ստուեֆագրուԹիք ոմանք զնոյն ՚ի մեզ յանկուցանեմք , և ՚ի գոյնս , և ՚ի մգագրս , և ՚ի հիւսս վարսից և յագաՆելլիս հանդերձից , և ՚ի պագշոտուԹիս աչաց , և յայլ բազմադէմ մեքենայս զայնպիսի գեղեցկուԹիւնն արուեստակեմք · զո՞ր ջանս վաստակոց հոգւոյն ՚ի ներքս քերէաք մեք , և զձարտարաց ոմանց , եԹէ արդեօք ՚ի ձեռս եր մեր գլխովին ՚ի չքնաղագեղն փոխարկել ըզմարմինս : Ա՛նգլի յայնժամ յո՛չինչ յայլ գործս եր մեզ պարապել , եԹէ բանդ այդ ՚ի ձեռս մեր եր , այլ ողջոյն զժամաննակն ծախեաք ՚ի գեղանի յարդարել զաղախինն բիւրուք սպասուք , արձակելով զնորա տիկինն երԹալ նստել միշտ յանգեղուԹէ անդ և ՚ի վատԹաբուԹէ՝ անարգ ևս քան զամենայն ստրուկ :

Յաղագս որոյ զվրէպակ ջանսն ՚ի բաց ՚ի մէնջ առեալ՝ զլաւագունին արհեստս տպաւորեաց ՚ի մեզ· զի որ անկարանայ ՚ի մեզ յանգեղեայ կերպարանին գեղաւոր առնել զմարմինն , նոյն կարող լիցի ՚ի նոյն իսկ ՚ի ծայրն գեղեցկուԹէ վերաբերել զՀոգին , Թէպէտ և ՚ի վերջին տգեղուԹին անկեալ լիցէ · և այնպիսի ինն սիրելի յարդարել և ցանկալի , մինչև ո՛չ միայն արանց լաւաց ՚ի ցանկուԹէ գալ նորա , այլ և նորուն իսկ արքային բոլորից և ՚ինն · ըստ ոյրւմ և սաղմոսանուագն վասն գեղոյս այսորիկ խօսի՝ ասելով : * Լա՛ ցանկասցի Թագաւոր գեղոյ քո ‖ · սղ· խե· 12 :

Ա՛վերևս ո՛չ տեսանես դու և ՚ի բոզանոցս կանանց , զի զանգեղեայս ՚ի նոցանէ և զանսամԹս և ո՛չ ելուզակք անգամ և փախստականք և գազանամարտիկք երբէք ընդունին · իսկ եԹէ ոք ՚ի նոսա գեղաւոր լիցէ և քաջազգի և ամենախած՝ որ ըստ դիպաց յայդպիսի հարկդ ըմբռնեալ լիցէ , զնորա և ո՛չ ոք արդեօք ՚ի կարի պերճ և ՚ի մեծամեծ արանց ամենի երբէք համարեսցի զՀոգսանիսն : Ա՛պա եԹէ առ մարդիկ այնչափ է ողորմուԹիւն , և այսչափ արհամարհուԹիւն փառացն , մինչ զի ոք բազում անգամ ՚ի պանդոկսն յայնոսիկ լցան անարգուԹիք , ազատել փրկել զնոսա ՚ի ծառայուԹէ անտի , և ՚ի կանանց կարգի հաստատել· քանիո՞ն ևս առաւել այս առ ոճ՝ յորժամ Հոգիքն անդ ստին յիւրեանց

ապնուականութիւնն՝ սատանայիւն բռնութեամբ ածեալ ձգեցան ի բոզանոց կենացս այսոցիկ։

Այլ առ այսոսիկ գոցես դու օրինակս յաձախեալս առ մարգարէս, յորժամ խօսին ընդ երուսաղէմ, որ անկեալ ևս էր ի պոռնկութեն, և պոռնկութեն նոր և օտար, ըստ որում ասէ եզեկիէլ. * Մինայն պոռնիկք կապիկնս առնուն անձանց իւրեանց, և դու տայիր վարձս սիդեխայ քոց, և եղիր քեզ ի խոտորնակի քան զամենայն կանանց ի պոռնկութեն քում‖. եզեկ. ԺԶ. 33։ Այլ դարձեալ միւս ոմն. * Ասաւր դու նոցա իբրև ագռաւ միայնացեալ թափուր‖. երեմ. Բ. 2։ Այլ արդ զայդպիսի սի պոռնկացեալն միւսանգամ կոչէ ածե։

Վանգի և գերութեն այն ինքնին ոչ այնչափ պատուհաս էր, որչափ դարձ և ուղղութիւն։ Օ՛ի եթէ վրէժս ինչ միանգամայն կամէր առնուլ ի նոցանէ ածե, ոչ արդեօք կրկին դարձուցանէր զնոսա ի տուն անդր, և ոչ դարձեալ մեծ և շքեղ ևս հանդերձէր նոցա ըզքաղաքն և զտաճարն։ * Օ՛ի մեծ եղեւկին ասէ, փառք տանդ այդորիկ վերջինդ՝ քան զառաջինն‖. անգ. Բ. 10։ Նակ եթէ որ բազում անգամ անառակեցաւ ի պոռնկութենն, յապաշխարուէ անտի ոչ մերժեաց զնա ածե, կարի ևս առաւել գիրկս ածցէ հոգւոյդ քում, որ զառաջինս զայս անկաւ անկումն։ Վանգի չիք ոք՝ չիք ուրեք ի հոմանեաց մարմնով, թէպէտ և կարի մոլեալ իցէ, որ այնպէս ցանկութենէն վառեսցի սիրուհւոյն իւրոյ, որպէս տարփայ ածե փրկութեն հոգւոյ մերոյ. և է մեզ տեսանել զայդ՝ եթէ յորոց լինին զօր առնեայն, և եթէ յածայնոցն տառից։

Նայեա՛ց դու ի սկիզբն անդր բանից երեմիայ, և բազում ուրեք և այլոցն մարգարէից, զի որ արհամարհին և որ անգոհանին՝ դարձեալ ընթանալ և խնդրել զբարեկամութեն նոցա՝ որք ուծացանն ի նմանէ. զոր և ինքն իսկ յաւետարանն անդ յայտնէ ասելով. * Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս, և քարկոծ առնէիր զառաքեալս առ քեզ, քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, զորօրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թևովք իւրովք, և ոչ կամեցարուք‖. մատ. ԻԳ. 37։ Այլ պաւղոս գրելով առ կորնթացիսն ասէր. * Այլ քանզի ածե էր քոխ զաշխարհս հաշտեցու-

ցանել ընդ իւր, և չհամնրել նոցա զմեղս իւրեանց, և եդ ի մեզ զբանն հաշտութեան։ Արդ՝ վասն քրիստոսի պատգամաւորիմք, որպէս և ՚ի բարեխօսութիւն մեր. աղաչեմք վասն քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ ։ Բ. Կոր. Ե. 19։

Զդոյն և առ մեզ գլխովին համարեաց դուս այժմ ասացեալ. զի ոչ անհաւատութենէն միայն, այլ և կեանք անմաքուր՝ զթշնամութիւնդ զայդ նզովեալ, բաւական է շարժել։ * Զի խորհուրդ ասէ մարմնոյ թշնամութիւն է յաստ ։ Հռ. Ը. 7։ Նմանապէս մեք քակեսցուք զցանդդ զայդ, և թողցուք ՚ի բաց զմեռեալն, զի երանելւոյն այնմիկ հանդիսակեսցուք հաշտութենն, զի միաբանդամ սիրելիք Աստուծոյ և ցանկալիք։

Ժէ. Ի վերայ հասեալ եմ, եթէ արդ ընդ Հերմիոնէ նեայ գեղն աքանչացեալ է քո, և ոչինչ զուգահաւասար նորա գեղեցկութենն կարծես դուս լինել՝ ի վերայ երկրի։ Այլ եթէ քեզ կամք իցեն ոմն բարեկամ, այնչափ լինն չքեղ և չքնաղ եղիցիս դուս քան զնա, որչափ ոսկի անդրիկք լաւագոյն իցեն քան զկաւելիցս։ Զի եթէ որ ՚ի մարմնի է գեղն, այնպէս զբազմաց հոգիսն հարկանէ և գրգռէ. իսկ եթէ երբեք ՚ի հոգին անդ փայլատակեացէ այն, զինչ լինչ հաւասար գեղոյն այնմիկ, և կայտառութենն եղիցի երբեք։ Վանդի գոյութիւն գեղոյդ պղտորիկ ոչ այլ ինչ է, քան եթէ մաղաս և աբիւն, և խոնաւութիւնն և մաղձ և կերեակ կերակրոյն հիւթ։ Վանդի այսոքիւք ոռոգանին աչք և այտք և առենայն անդամքն. ապա եթէ զոռոգումնդ զայդ աւուր աւուր մաստակարարութիւն ոչ ընկալցին յորովայնէ անտի և ՚ի լերդէն, անշքութիւն ինն խորշոմի մորթն, խոնարհին անկանին աչք, և անդէն վաղվաղակի գեղ դիմացն ողջոյն տեղի տայ. մինչ զի եթէ միանգամ զմնաս ածցես դուս, եթէ զինչ այն գեղ իցէ՝ որ յաչսն ՚ի ներքս հանգուցեալ իցէ, և զինչ գեղ ունգացն քաջ խոպուտութիւն, և զինչ դարձեալ բերանոյն և այտիցն, արդեօք ոչինչ այլ՝ քայլ եթէ գերեզմանն բռնեալ ասասցես դուս զգեղեցկութիւն մարմնոյն. այնչափ լինն անմաքրութիւն լցեալ է նա ՚ի ներքս անդ։ Ի վերայ այսր՝ եթէ կապերտ ինչ տեսանիցէր դուս լցեալ յայսպիսեացս աստի, օրինակ լինն ՚ի մաղասոյ և ՚ի լորձանց, և ոչ ծայրիւ մատին յանձն առնուիր հպիլ ՚ի նա, նա՝ և ոչ

հայել անգամ հանդարտելիք ՚ի նա. իսկ արդ ընդ շահ մարանս սոցա և ընդ ամբարանոցս յապուշ հարեալ է քո։

Ա. Յայլ սակայն քո գեղգ ո՛չ այսպիսի ինչ էր, այլ որչափ ինչ երկինք նախատպատիւ են քան զերկիր. նա՛ մանաւանդ քան զերկինս կարի շքեղ և պատուական։ Վասնզի զհոգի մերկացեալ ՚ի մարմնոյ՝ ո՛չ ոք ուրեք և տես երբէք. սակայն և այնպէս այլ ուստեք հանդերձեցայց քեզ ՚ի գիմս ածել զգեղն նորա՝ ՚ի վերհագուն[ի]ցն զօրութեանց։

Յ. Արդ լուր դու, զինարդ գեղն նոցա յափշտութիւն կրթեաց զայրն ցանկալի. քանզի իբրև կամեցաւ նա յանդիման առնել զնոցա գեղեցկութիւնն, և իբրև ո՛չ կարաց նմանօրինակ նոցուն գտանել մարմին, ՚ի նիւթս անդր մեռաւոյց գնացեալ ապաստանեցաւ նա. և ո՛չ յայսոսիկ միայն շատացեալ, այլ և զփայլատականն լուսաւորութեն առ օրինակիւ ՚ի մէջ մատոյց։ Յե թէպէտ և նոքա ո՛չ յատակ և մերկ զգնութիւնս իւրեանց յանդիման ցուցին, այլ կարի խիճ ընդ աղօտ և ստուերաբար, այլ սակայն և այնպէս փայլատակեցան, ըստ որում մարթի էր տեսանել զնոսա գլխովին անքողաձիգ յանդիմանութեամբ։

Ա. Յապիսի ինչ և յաղագս գեղոյ հոգւոյն ՚ի դիպ է ածել զմեզ։ * Օ ի եղիցին ասէ իբրև զչրեշտակս ‖. ղկ. ե. 36։ Ա. Յե առ մարմնովքս՝ որք միանգամ թեթևագոյնքն են և անօսրագոյնք, և ընդ հեռս իմն ՚ի վեր գնան՝ որ առ անմարմինսն անդր հանէ, կարի առաւելութ քան զայլսն պատուականք են և աբանելիք։

Յ. Արդ երկինք քան զերկիր, և հուր քան զօդս, և աստեղք քան զկանս՝ առաւել գեղանիք են. և ընդ ծիածանն յոյժ առաւել հրաշագեալ էիք քան ընդ մանուշակս ոմանս, քան ընդ վարդս, և քան ընդ ծաղիկս ամենայն՝ որ ՚ի վերայ երկրի. և գլխովին իսկ եթէ էր քեզ կարելի մարմնոյ աչօքդ զհոգւոյն գեղն տեսանել, արդեօք զմարմնաւորս օրինակօքդ այդոքիւք ծիծաղեալ էր քո, զի այդչափ տկարութիւք մերձ յանդիման հարկանեն զչքնաղութիւն հոգւոյն։

Ա. պա ծն առեալ մի զայդպիսի ժառանգութիւնդ և զայդչափ երանութիւնդ անփոյթ սրասցուք մեք. մանա-

*ամագ զի հեշտին ևս եղիցի մեզ մուտն ՚ի գեղդ յայդ հանդերձելոցն յուսով : * Օ ի առաժամայն յաձախութեի տակ թեթև նեղութեես մերում, ՚ի յաւիտենականն առաւելութեի զմեծութեի փառացն գործէ ՚ի մեզ : Ոչանզի զի ո՛չ գիտեմք զերևելիսս , այլ զաներևոյթսն . զի երևելիքս առ ժամանակ մի են , և աներևոյթքն յաւիտենականք ‖ . Բ . Կոր . Դ . 17 : Ոչակ եթէ զնեղութեիսն՝ ըստ որում և տեսեր իսկ՝ թեթև և դուզնաքեայս կոչեաց երանելին պաւղոս՝ վասն ո՛չ գիտելոյ զերևելիսս , բազմաք և առաւել թեթևաբեռն եղիցի շնջուցանել զառաքեանն : Ոչանզի և ո՛չ իակ արդ ՚ի վանգսն յայնոսիկ կոչեմք զքեզ , և ո՛չ ՚ի հանապազորդեան մեր հունս , ո՛չ ՚ի վերս յաձախեալս , ՚ի գանս , ՚ի կապանս , ՚ի խեղեն տիեզերաց , յաւելութեին ընտանեաց , ՚ի հակ մունս անդադարս , ՚ի պանդխտութեիս տարագէմն , ՚ի նաւաբեկութեիս , ՚ի հրոսս աւազակաց , ՚ի դարանակալութեիս մերձաւորաց , ՚ի ցաւս ՚ի վերոյ բարեկամաց , ՚ի սով , ՚ի ցուրտ , ՚ի մերկութեի , ՚ի տապ , ՚ի տրտմութեի վասն քոյոդ , և որ չէնն քոյ : Ոչինչ յայսպիսեացմէք այժմ ո՛չ խնդրեմք ՚ի քէն , այլ այնչափ ինչ միայն աղաչեմք , զի ՚ի նզովեալ ծառայութեդ այսի ՚ի բաց կացցես , և յառաջին ազատութեդդ անդրէն դարձցիս , ածեալ զմուտս քով միանգամայն և զտափանացն զպատուհան , և զնախկին վարուց քոց զղատիւն : Օ ի թէ անհատաք ոմանք վատութեք բերցին ՚ի բան յարուէն , և ո՛չինչ ահիւ տագնապեսցին վասն այնորիկ , չէն ինչ զարմանք . իակ եթէ մեք՝ որք զհանդերձեալն առաւել պ իտեմք քան զաստիս , այդչափ հիգութեք վարեսցուք զկեանս և թշուառութեք , և կիրս և ո՛չ ի կրեսցուք ՚ի նոցունց յիշատակէն , այլ և վերջին անզգայութեքն վատասցուք . այս ասացեալ լի՛ է անմտութեամբ բազմիս : Ոչանզի յորժամ հաւատացեալքս զանհատութիցն դուռ ծեսցուք , մանաւանդ եթէ առաւել ևս հիգութեք վարեսցուք քան զնոսա . քանզի են են և ՚ի նոսա՝ որք փայլեցին առաքինութեք կենացս այսոցիկ , ո՛ր մխիթարութեի կացցէ մեզ այնուհետև , և կամ ո՛ր թողութեի երբեք :

Ոչպաքէն բազումք ՚ի վաճառականաց անտի ՚ի նաւաբեկութեի վտանգեալք , ո՛չինչ անկեալ թուլացան . այլ

և վերստին անցեալ կացին ՚ի վերայ նորուն Ձանապարհի. և այն զի ո՛չ ՚ի նոցունց ինչ վատութենէ այն տուգանք դիպեցան նոցա, այլ ՚ի հոգմոյն բռնութէ. իսկ մեք գլխովին՝ որ յաղագս վախճանիս մերոյ քաջալերութիւն զգեցեալ եմք, և ձչգրիտ ՚ի վերայ հասեալ գիտեմք՝ եթէ յոչ կամելն մեր՝ ո՛չ նաւաբեկութէ ինչ լեզուակարծուն ՚ի վերայ հասանէ մեր, և ո՛չ դարձեալ ինչ մի ՚ի առգանաց, թերևս ո՛չ զնոցուն իրացն դարձեալ բուռն հարցուք և վաճառաշահ եղիցուք իբրու զառաջինն, այլ այնպէս յորսայս անկեալ կացցուք, և զեռս ՚ի մեզ ինքեանս կեսցուք։ Այլ երանի՛ թէ ՚ի մեզ ինքեանս միայն, և ո՛չ ընդդէմ մեր. այն՝ որ մոլեգնութիւն է յայտնի։

Այլ քանզի եթէ ՚ի գօտեմարտիցն ոք թողեալ զայսոցեանն՝ յիւրական գլուխն դարձուսցէ զեռան, և ինքն զիւրական դէմն կեզեքեսցէ, թերևս ո՛չ ՚ի կարգի մոլեգնելոցն հաստատեսցուք մեք զնա։ Վասնեցայդ զմեզ բանասարկուն, և յերկիր կործանեաց, ո՛չ ահա յառնել արժան իցէ, և ՚ի ներքուստ անտի զերծանել միւսանգամ, և մի գահավիժ արկանել զմեզ ինքեանս, և մի դարձեալ ՚ի վերս նորա առ ՚ի մէնջ յաւելուլ վերս։ Այլ քանզի և երանելին դաւիթ զդոյն անկումին անկաւ, զոր և դու ինքն այժմ. և ո՛չ զայդ ևեթ՝ այլ և այլ ինչ ևս ՚ի վերայ բարդեաց, զմարդասպանութիւնն ասեմ. և զինչ ասես, թերևս որ անկաւն՝ այնպէս ինաց. իսկ ո՛չ արդեօք միւսանգամ ՚ի վեր կանգնեցաւ զօրութէ, և ձակատեցաւ ընդդէմ թշնամւոյն. նա՝ և այնպէս իսկ քաջաբար վանեալ խորտակեաց զնա, որպէս զի և ՚ի մահուն իւրում հոգւոյն եղև զարմին իւրոյ։

Վանզի իբրև յանօրէնութիւնն յայն մեծ յանդգնեցաւ սողոմոնի, և մեռուցանս բիւրս կրել արժանի գտաւ, վասն դաւթի զթագաւորութէն ողջ եթող նմա ՅՃ, ասելով այսպէս. * պատառեալ պատառեցից զթագաւորութիւնդ ՚ի ձեռանէ քումմէ, և տայ զդա ծառայի քում, բայց ՚ի քո աւուրս ո՛չ արարից զայն ‖ Գ. ԹԳ. ՃԲ. 11. ՚ի՛ր աղագաւ, վասն դաւթի հօր քոյ. այլ ՚ի ձեռանէ որդւոյ քոյ առից զդա։

Այլ և եզեկիա յորժամ հանդերձեալ էր նա ըզվերջինսն վտանգիլ, թէպէտ և ինքն արդար էր, դար-

ձեալ ՚ի պատճառս երանելոյն այնմիկ օգնութիւն գտա-
նէ առ յոյժ։ * Վասնզի վերակացու եղեց ասէ քաղաքիդ
այդմիկ փրկել զդա վասն իմ և վասն գաւթի ծառայի
իմոյ ‖ . ՟Ր . ՃԿ . ԺԲ . 34 ։ Ուսուցիչ և ապաշխարութեան
ջօրութիւն ։

Ապա եթէ զայդ խորհուրդ խորհեր նա , զոր և դու
ինքն այժմ, իբրու այն թէ յանհնարիցն իցէ այնուհետև
հաշտեցուցանել զնա . և եթէ երբեք ասէր ՚ի միտս
իւր , ՚ի պատիւ մեծ պատուեաց զիս նա , և ընդ մար-
գարէսն դասեաց , և գիշխանութիւն հոմայեցոյն ետ
յիմ ձեռս , և ՚ի բիւրուց վտանգաց փրկեաց զիս , արդ
որ յետ այսքանեաց բարերարութեանցն անկայ և զվեր-
ջինս յանդգնեցայ , զիարդ արդեօք բաւական եղէց
միաւանգամ քաւիչ ինձ յարդարել զնա . եթէ յայսպի-
սեաց ինչ ածէր նա զմտաս , ոչ միայն ոչինչ գործեալ
էր նորա՝ զոր ինչ միանգամ յետ այնորիկ առաքինա-
ցաւ , այլ և զառաջինսն արդեօք յաւար հարեալ էր ։

ԺԵ . Վասնզի ոչ միայն որ ՚ի մարմինն վերք , այլ և
որ հոգւոյն են , մահածինք են ։ Այս սակայն այնչափ
ինձ անմտութիւնք անկղնտանամք մեք , մինչ զի զնոցայսոյն
մեծապէս հոգամք , իսկ զսորայսոյն անփոյթ առնեմք ։
Պարտ և ՚ի մարմնի անդ բազում անգամ բազում
ինչ անբժշկելիք հանդիպեսցեն , սակայն և ոչինչ յա-
ռահատ լինիմք . այլ թէպէտ և լսիցեմք ասել բժշկաց
ատելի ստելի , չիք հնար ախտիդ այդորիկ ապաքինիլ
՚ի դեղոց ասեն , ՚ի վերայ այսր պնդիմք ժտիմք , զի գէթ
դոյզն միսիթարութիւն հնարեսցեն մեզ ։ Իսկ ՚ի հոգիս
չիք ինչ յախտից՝ որ ասէին անբուժելի իցէ , քանզի և
չէն իսկ ընդ հարկաւ բնութեան . իսկ մեք իբրև թէ
օտարաց ոմանց իցէն ախտքն , այնպէս անփոյթ առ-
նեմք և յուսահատ լինիմք ։ Այլ յորժամ բնուն ախտիցդ
զգիզ ՚ի յուսահատութիւն առեալ ձգէ , մեք յայնժամ
իբրև բազմայոյս իմն գոլով վասն առողջութե՝ դար-
մանն տանիմք . իսկ յորժամ չիք ինչ յուսահատութենն
պատճառք , յայնժամ իբրև զյուսահատս ոմանս վհա-
տիմք յանձինս , և ՚ի դարմանեցոյն հրաժարեմք . այսչափ
առաւելութիւն պատկառ կամք մարմնոյն , քան եթէ
հոգւոյն ։ Յաղագս որոյ և ոչ զմարմինն ապրեցուցա-
նել կարող ինչ եմք . քանզի որ զնախապատիւն անփոյթ

սունէ , և առ փոքումիք բովանդակ զջանսն ի նեղքս բերէ , նա՝ և զերկաքանչիւրն խանդարէ և կորուսանէ . իսկ որ միանգամ զկարգն պահէ , և զերազունեին դարմանն տանի և սպաս հարկանէ , Թէպէտ և երկրորդին խնամ ոչ տարցի , առաջնոյն փրկութէն և զսա փրկեալ ապրեցուցանէ ։

Օսոյն և ինքնին քո մեզ յայտնաբանեալ ասելով ։ * Ի երկնից եկի յայնպէս որպ սպասանեն զմարմին , և զհոգին ոչ կարեն սպանանել , այլ երկերնք դուք առաւել յայնմանէ՝ որ կարօղ է զոգի և զմարմին կորուսանել ի գեհենի ‖ . Մրկ . ֆ . 28 ։

Զրդեաք բաւական ինչ եղեալ մեք հաւանեցուցանել զքեզ , եթէ չէ պարտ երբեք յոյսահատ լինել վասն սխալից հոգւոյն իբրև անբուժելեաց ոմանց , եթէ և այլ ինչ դարձեալ փառաս շարժել ածել արժան իցէ ։ Զանազի Թէպէտ և դու բիւր անգամ յուսահատ լեցիս յանձն քո , մեք ոչինչ յուսահատ լեցուք զքեզն , և ոչ զոր ինչ միանգամ յայլս բամբասեմք , մեք ի մեզ ընկալցուք ըզնոյն երբեք . Թէպէտ և ոչ նման ինչ իցէ , եթէ ոք զանձնէ իւրմէ յուսահատ լինիցի , և կամ այլ ոք զնոցանէ ։ Զանազի որ ի վերայ օտարին զդոյն կարծիսդ ունիցի , վաղվաղակի հասանէ Թողութեան . իսկ որ ի վերայ անձին իւրոյ , ոչ ևս ։ Իսկ ընդհ՚ր արդեօք . քանզի նորա ջանիցն և ապաշխարութեանն չէ նա իշխան , այլ ինքն միայն ունի զիշխանութէն անձին իւրոյ ։ Ապա կայն ի վերայ այսր և ոչ այնպէս յուսահատ ինչ լեցուք մեք զքէն , Թէպէտ և դու բիւր անգամ զդոյն կրեսցես ։ Զանազի Թերևս արդեօք՝ Թերևս գուցէ ինչ միւսանգամ զարձ յառաքինուէն անդր , և նորաստեղծ ցին առաջին կեանք ։

Զյլ ևս դու և զոր զինիս . լուսն նինուէացիք մարգարէին այնմիկ՝ որ այնքեալ կայր և ակն յայտնի սպառնայր , եթէ այլ ևս երեք աւուրք , և նինուէ կործանեսցի . և ոչինչ այնպէս անկեալ վհատեցան . այլ Թէպէտ և վստահութէն չէր ինչ ի միջի առ ի հաշտեցուցանել զնա , նա մանաւանդ և զհակառակն ունէին նորա հաստատեալ ի միտս վասն պատգամին . քանզի ոչ եթէ պայմանաւոր ինչ էր բանն , այլ սոսկ և յստակ էր վճիռն . սակայն և այնպէս զղջալ ի դմա

ընծայեցուցին առելով.* ||՛ գիտէ ապաշաւեսցէ՝ ոճ, և դարձցի ՚ի բարկութիւնէ սրտմտութենէ իւրոյ, և մի կորիցուք։ |՚ւ ետես ոճ զգործս նոցա, զի դարձան իւրաքանչիւր ՚ի ճանապարհէ իւրեանց չարաց, և զղջացաւ ոճ ՚ի վերայ չարեացն զոր խօսեցաւ առնել նոցա, և ոչ արար ‖. յոն. Ը. 9։ |՚սկ եթէ մարդիկ խուժադուժք և անիմաստք այնչափ ինչ բաւեցին լինել խելամուտ, կարի ևս առաւել զնոյն գործել արժան է մեզ, որ յոճայնոցն դաստիարակեցաք պատգամաց, և քան զամենայն ինչ յոյժ օրինակս այսպիսեաց տեսաք եթէ ՚ի բանս, և եթէ ՚ի գործս։* Օ ի ոչ են ասէ խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր, և ոչ ճանապարհք իմ իբրև զճանապարհս ձեր, ասէ տէր, այլ որպէս հեռի են երկինք յերկրէ, այսպէս հեռի են ճանապարհք իմ ՚ի ճանապարհաց ձերոց, և խորհուրդք իմ ՚ի խորհրդոց ձերոց ‖. Եսա. ԾԵ. 8։

|՚ւ եթէ մեք ինքնին զմեր սպասաւորսն՝ որք բազում անգամ յանցուցեալք էգեն և խոստանան ուղղել զանձինս՝ ընդունիմք, և դարձեալ յառաջինն ՚ի վեր տանիմք ՚ի պատիւն. և է բազում անգամ զի և առաւել ևս վստահութիւն վստահանամք ՚ի նոսա, կարի ևս առաւել նա։ Օ ի թէ արդարև յայն սակս արարեալ էր նորա զմեզ՝ զի տանջանաց մատնեսցէ, գեղեցիկս արդեօք և քո յուսահատեալ էր և յերկուացեալ ՚ի փըրկութենէ անձինդ քո. ապա եթէ ոչ յայլ ինչ իրաց՝ քան թէ յիւրմէ բարութենէ յորդորեալ արարչագործեաց ըզմեզ. և զի ժառանգորդք յաւիտենից լիցուք բարեաց, և դորին վասն գործէ և առնէ զամենայնն անդասին յառաջին օրէն մինչև ցայսօր, զինչ այն իցէ՝ որ երկնիս երբեք զմեզ արասցէ։ ||՚Եճապէս զայրացուցաք մեք զնա, և որպէս ոչ ոք այլ ՚ի մարդկանէ։ |՚պա վասն այնորիկ և մեծապէս պարտ է մեզ ՚ի բաց կալ յառաջիկայիցս, և ապաշաւել ՚ի վերայ գործեցեալցն, և զգեղեցիկ ևս փոփոխութիւնն ՚ի մեզ երևեցուցանել։

Վ՚անգի և ոչ իսկ յոր ինչ միանգամ յանդգնեցաք մեք, այնպէս իմն բաւական են ՚ի սրտմտութենէ շարժել զնա ՚ի մեր վերայ, որպէս ոչ կամիլս մեր սեթափիլ յետ այսորիկ։ Վ՚անգի մեղանչէն մարդկան է. իսկ կալ և

ամաւ՝ի նոյն, այն ոչ մարդկային ինչ է, այլ գլխովին դիւական։

Այլ արդ հայեաց դու, եթէ զիարդ զդոյն առաւել լապէս բամբասէ ՚ած՝ի ձեռն մարգարէին այնորիկ։ * Այլ ասացի ասէ, լեռ այնչափ պոռնկութեանէ նորա, զարձ առ իս, և ոչ դարձաւ ‖ . ԵԶԿ . Ճ . 7 ։ Այլ այլուր զարձեալ՝ կամեցեալ յուցանել զմիածապէս յօժարութիւն առ մերն փրկութիւն, յորժամ զկնի բազմադէմ անօրէնութեանն խոստանային զուղիղն գնալ Ճանապարհ, լուեալ զնոյն՝ ասէ . * Ո՛ տացէ լինել այնպէս սրտից նոցա՝ի նոսա՝ երկնչել յինէն, և պահել զպատուիրանս իմ զամենայն աւուրս, զի բարի լինիցի նոցա և որդւոց նոցա յաւիտեան ‖ . Ը . օրէն . Ե . 29 ։ Այլ մնալեսս բարբառեալ առ նոսա՝ ասէր . * Այլ արդ խորհեալ զինչ խնդրէ՝ի քէն տէր Ած քո, այլ երկնչել՝ի Տեառն՝ Աստուծոյ քումմէ, և գնալ յամենայն Ճանապարհս նորա, և սիրել զնա ‖ . Ը . օր . Ճ . 12 ։ Այսպա ուրեմն որ զՀետ մտեալ խնդրէ զսէր առ՝ի միոջէ, և սորին վասն գործէ զամենայնն, և որ՝ և ոչ՝ի միածինն անգամ խնայեաց ասէ սիրոյ մերոյ, և որում սիրելին է միշտ հաշտելս մեր ընդ նմա, զիարդ յօրժամ ապաշխարեմք՝ ոչ ընկալցի զմեզ և սիրեսցէ ։ Լուր զինչ և մարգարէիսն ասէ . * Այսա դու նախ զա նօրէնութիւնս քո, զի արդարասցիս ‖ . Ես . Խ . 26 ։ Այլ և զայն ևս խնդրէ՝ի միոջէ, զի սաստիկ իցէ սէրս մեր առ նա . քանզի յօրժամ սիրոյն բազում ինչ թշնամանեալ՝ի սիրելեացն՝ ոչինչ այնպէս չիջուցանէ զսէրն, ոչ յաղագս այլ ինչ երից խնդրէ յանդիմանել զթշնամանսն, բայց զի զասաստկութիւն սիրոյն իւրոյ՝ի դէմս ածեալ, յառաւելն և՝ի սաստիկ ևս սէրն ձգեսցէ զմեզ ։

Այսպէս եթէ խոստովանութիւն մեղացն այսչափ ունի միսիթարութիւն, քանիսո՞ն ևս առաւել լուացումն նոցա՝ի ձեռն գործոց ։ Օ՛ եթէ չէր այսպէս, այլ որք միանգամ վրիպեցան յուղիղ Ճանապարհէն՝ այնուհետեւ խաչ վառնեալ էր նոցա միւսանգամ դառնալ յառաջինն անդր, ոչ ոք ապաքէն՝ բայց նուաղունք ոմանք և յոյժ սակաւաթիւք մնանէին յարքայութէն երկնից ։ Այսպէս այժմ մեք՝ի կարգէ անտի անկելոցն գտանեմք զայնոսիկ՝ որք առաւելն փայլեցեալ ։ Վ՛անզի որք մեծապէս առաւելութեն յուցին՝ի գործս չարութեանէ, զնոյն և՝ի բարիսն

ցուցցեն յանձինս իւրեանց յետ այնորիկ, գիտելով չափ եթէ քանի՛ պարտեաց պարտապանս կացուցին զանձինս, ղոր և քո՛ ինքնին յայտնեաց, յորժամ վանն կնոջն այնմիկ խօսեր ընդ սիմոնի։ * Տեսանե՞ս ասէ զայս կինս. մո՛ի՛ տուն քո, ջուր ոտից իմոց ո՛չ ետուր, իսկ սա արտասուօք եթաց զոտս իմ, և հերովք իւրովք ջնջեաց. համբոյր մի դու ո՛չ ետուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ ո՛չ դադարեաց ՚ի համբուրելոյ զոտս իմ. իւղով գլուխ իմ ո՛չ օծեր, սա իւղով անուշիւ օծ։ Վասն որոյ ասեմ քեզ, թողեալ լինին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց. զի որում սակաւ թողուցու, սակաւ սիրէ. և ասէ ցնա, թողեալ լինին քեզ մեղք քո ‖. ղխ. է. 44։

Ժէ. Յաղագս որոյ և բանսարկուն ինքնին գիտելով, եթէ որք միանգամ մեծամեծս յանցեան չարիս, յորժամ ապաշխարութեան սկիզբն արասցեն, մեծապէս ձգտամբ հանդերձին նոքա զնոյն գործել՝ իբրու անձամբ անձին վկայք իւրեանց յանցանացն, երկնչէ և դողայ, զի մի թերևս սկիզբն արասցեն գործոյն։ Վանգի յետ միանգամ սկսելոյն՝ անսանձելիք են այնուհետև, և ա պաշխարութիւ՝ իբրու հրով ինն բորբոքեալք, մանրա գոյն ևս քան զոսկի մաքուր ձուլեն զհոգիսն, իբրու ուժգնակի հողմով ոմամբ՝ մեռցեն խղճիւ և յիշատակաւ առաջնոց մեղացն՝ վարեալք ՚ի նաւահանգիստն առաքինութեան։ Այս ՚ի գմին յայդմիկ առաւել ևս գերազանց ելեն քան զայնոսիկ՝ որք ո՛չն անկան երբէք, քանզի սաստիկ ևս զուարթութիւն ՚ի վար արկանեն, միայն թէ՝ ըստ որում ասացիս՝ միանգամ բռնեն հարցեն զգործոյն։ Վանզի որ գժուարաբերեն է և տագնապողական, այն իսկ է. զի միանգամ բաւական գտանիցին մխիթ՚ի մեռտան անդր և զնախադրութեան կոխել զապաշխարութեն, և զիշխանին՝ որ անդանօր հնչէ փոթորիկ և բուռնեալ կայ՝ վանել և տապաստ արկանել։ Այսկ յետ այնոքիկ, նա՝ քանզի միանգամ պարտեցաւ և յանկուռելին իւրոց կայիցն դրդուեցաւ, ո՛չինչ բաւեցոյ այնչափ կատաղութիւ մղիլ. իսկ մեք մեծ ևս առեալք յանձինս քաջալերութիւ, մեծապէս հեշտութեամբ ընթացցուք զգեղեցիկ զայն ասպարէզ։

Ի՛զ այսուհետև բռնեն հարցուք զդարձին, և

անդրէն ի քաղաքն երկնաւոր հորդեսցուք Աննապարհ՝ յոր գրեցաք, և յորում հրամայեցաքս բնականալ։ Օ ի յուսահատութիւնս մեր այս՝ ոչ զայն չարիս ևեթ ի ներքս ածէ, զի զգրուանս քաղաքին այնորիկ ընդդէմ մեր փակէ, և զի չառաւել ևս հեզգուիւն և յարհամարհութիւն ածէ ձգէ զմեզ, այլ զի և ի դիւականն մեզ լեզնութիւնն առեալ արկանէ։ Այլ քանզի սատանայն ինքնին ոչ չայլինչ պատճառս եզև այնպիսի, բայց զի անդստին ի սկզբանէն յուսահատ եղև, իսկ չետ այնորիկ ապա ի յուսահատութէնն անկաւ ի մոլեգնութէն։ Այանզի չորժամ միանգամ յուսահատ լինի հոգին ի փրկութէ անձինն, և ոչ իսկ այնուհետև իմանայ ինչ՝ եթէ զիարդ գահավիժ ձգի, այլ միւն նա ասել զամենայնն, գործել զամենայնն ընդդէմ փրկութէ անձին։

Այս զորօրինակ մոլեգինք ոմանք՝ յորժամ միանգամ չառողջութէ մտաց իւրեանց անկանիցին, ոչինչ զանդիտեն այնուհետև, և ոչինչ ամաչեն, այլ աներկիւղ չանդգնին չամենայնն, թէպէտ և ի հուր հասանիցէ անկանել, թէպէտ և չանդունդս, թէպէտ և ի վախս, այսպէս և որք չանգ այսութէ յուսահատութէնն ըմբռնեալք իցեն, գժոխըմբերք են այնուհետև. ամենայն ուրեք ընթանան ի չարիս, և եթէ ոչ մինչն ինքնին ի վերայ եկեալ՝ ի մոլութէ անտի և ի թափոյն կարձեսցէ զնոսա, նոքա բիւրս ինչ ի գժնդակացն գործեացեն անձանց իւրեանց։

Այան որոյ աղաչեմ, մինչեւ ի խորս անդր ընկլուզեալ քո ի գինհարութէդ այտի, արի դու ի վեր և զուարթութեն լեր, և զսատանայական զթմբրութէդ ի բաց թօթափեա. և եթէ ոչ անդէն վաղվաղակի բաւական իցես այդմ, սակայն յուշիկ և տակաւ տակաւ։ Այանզի ինձ ապաքէն դիւրին ևս երևի գործս, զի միանգամայն չամենայն տոհմացն զերծուցեալ զքեզ՝ որ զքեզ պատեցան, այնպէս առեալ զանձն քո փոխեացես ի Հեմսորան անդր ապաշխարութէ։ Այպա եթէ քեզ բանդ այդ գժուարին կարծեսցի, կամակարութէք կոխել քեզ զնանապարհն՝ որ ի լուսոյն տանի հաստ զքեզ, միայն դու բնաւն հար, և ընկալցիս զկեանն յաւիտենական։

Այո՛ աղաչեմ և աղերս արկանեմ ի ձեռն նախնի

քաջալաւութիւդ և ՚ի ձեռն վստահութեանդ այդմիկ. դարձեալ այնպես ՚ի զագաթդ յայդ և յերկայնմտութիւդ յայդ տեսցուք մեք զքեզ։ Խնայեա դու ՚ի նոսա՝ որ ՚ի պատճառս գլխոյդ գայթակղեցան, որք անկան, որք հեղգագոյնս գտան, և որք յաղագս ձանձրացուցիչն առաքինութեանդ յուսահատք եղեն։ Վասնզի այժմ տիրութիւն պատեալ պաշարէ զսիրտս եղբարցն, և բերկրութիւն և խնդութիւնք զջոկս անհաւատիցն և զդատարկասուն պատանեացն։ Իսկ եթէ վերստին դարձցիս դու ՚ի ձշդրտութիւն առաջին վարուց քոց, հակառակն յաջողեսցի մեզ, և ամենեքումեր այս բռնադատ փոխեսցի ՚ի նոսա. իսկ մեք բազում համարձակութիւնք յարդարեսցուք յանձինս մեր, յորժամ միւսանգամ տեսցուք զքեզ առաւելագունին շքով պսակեալ և բարեհամբաւեալ. քանզի յաղթութիւնք այսպիսիք գերագունին բնաւորեցան ծնող լինել փառաց և հեշտութեան։ Վասնզի ո՛չ միայն զգեղեցիկ հանդիսիցդ քոց առցես զարիտուրն, այլ և զայլոցն քաջալերութիւնք և միխիթարութիւնք, գոլով քո նոցունն յօրինակ սքանչելի. որ զի՝ եթէ սք երբեք ՚ի գոյն չարիս անկեալ էիցէ, միւսանգամ յարիցէ և նոր բաստեղծիցէ զանձն իւր։

ՀԱՍԱ՝ դու մի՛ ընդ վայր հարկաներ զդոյն շահ օգտի, և մի՛ որտմութիւք զհոգիս մեր լքուցաներ ՚ի դըժոխոս. այլ տուր մեզ ոգի առնուլ, և զմեզս թաղծութիւն՝ որ ՚ի քո պատճառս ունի զմեզ՝ ՚ի բաց փարատել։ Վասնզի այժմ մեք զմերովքս անփոյթ արարեալ չարեօք, զքո աղետս լալով ողբամք։ Այլ եթէ կամեսցիս դու անդրէն սթափիլ և բանալ զաչս, և զհրեշտակայ կանն անդրէն զանձամբ առնուլ զվինուորութիւն, միանդամայն յողբոց աստի փրկեսցես զմեզ, և զմեծ մահն զմերոց մեղանացն ջնջեսցես։ Վասնզի զայն ինչ՝ եթէ որք միանգամ ՚ի ձեռն ապաշխարուն անդրէն կանգնեցան՝ մեծապէս խիճ փայլեցան և զուարթացան, և այն՝ բազում անգամ առաւել քան զայնոսիկ՝ որ ո՛չն անկան երբէք, զայն մեք յիմծայնոցն յայտնութեամբ ՚ի դէմն բերաք ՚ի դրոց։ Այսու որում և զայս օրինակ մեք սաւորք և պոռնիկք զարքայութիւնն երկնից ունին ժառանգել. սակս և բազումք ՚ի յետնոց կառաջոց դասին քան զառաջինան։

ԺԶ. Պատմեցից քեզ և որք առ մերովքս եղեն ժա-
մանակօք, որոց և դու բաւական ես լինել՝ ի վկայ։
Դու ինքնին ձանաչես զպատանին զայն զմանուկն ուր-
բանոսի զփիլնիկեցին, որ տարաժամ թողեալ յորբու-
թէ, տէր էր բազում ստացուածոց և ծառայից և ան-
դոց։ Ա՛ռ զառաջինն գլխովին հրաժարական ողջոյն
տուեալ հրահանգաց վարժարանին, և շքեղ զայն ըզ-
պատմուճանն յանձնէն՝ ի բաց մերկացեալ, և բովան-
դակ զամենայն շուք կենցաղական, յանկարծակի հան-
դերձ լինի անարգ արկաւ զիւրեաւ, և յամայեաւ անդր
լերանցն տարագիմ գնացեալ՝ զգեղեցիկ իմնաստասիրու-
թէ յանձին եբեր, ո՛չ ըստ տիոց հասակին միայն, այլ
սրչափ ինչ ոք՝ ի մեծաց և՝ ի հրաշալեացն արանց։ Ա՛նդ
յետ այսորիկ ապա և կատարման սրբութէ խորհրդոյն
արժանաւորեալ, քաջաբայլս յառաջադէմն գնաց յառա-
քինութիւն անդր, որպէս զի և առ հասարակ ամենե-
ցուն ուրախ լինել և փառաւորել զԱ՛ծ, զի այնպիսի
մնեալն յընչաւէտութէ՝ և ծնունդ գոլով քաջափառու-
թէ նահնեացն, դարձեալ և տիօքն կարի մանկագոյն,
վաղվաղակի զկենցաղոյս փառս առ ոտն կոխեաց, և
յանխաթ բարձրութիւնն՝ ի վեր եւ։ Ա՛յրև նա յայն
կեանսն նահատակեր՝ աքանչելի առ ամենեսեան, ապա
կանիչք ոմանք արք՝ որք ըստ օրինաց ազգականութէն
խնամակալութ էին նորա, դարձեալ յառաջին ալիս անդր
առեալ ձգեցին զնա։ Ա՛պա զայն ամենայն յայնժամ
թողեալ նորա, ի լերանց անտի վաղվաղակի ի մէջ
անդր էջ հրապարակին, և յերիվար աշտանակեալ՝ հե-
տևակս իւր ունելով բազում, այնպէս շուրջ յածէր
ողջոյն ընդ քաղաքն, և չկամէր այնուհետև զգօնութէ
յանձն առնուլ։ Վ՛անգի բազում փափկութէ վառեալ՝
հարկաւորեցաւ անկանել՝ ի տափանս անտեղիս. և որք
միանգամ՝ զհրապարակաւն զայնուիկ գային՝ ամենեքեան
աւաղէին զնորա փրկութէն. այնչափ ջոկ մարդահա-
ճոյիցն խռներ զնովաւ. առ այսոքիւք եր և որբութէին
և մանկութէ տիոցն և ընչիցն բազմութէւն։ Ա՛սկ որք
միանգամ բնաւորեալքն են դիւրաբամբասել զամե-
նայնն, մեղադիր լինէին նոցա՝ որ՝ ի սկզբան անդ կայն
վիճակ առեալ կացուցին զնա, և ասէին՝ եթէ դա
այժմ միանգամայն և՝ ի հոգևորականաց անտի վրիպե-

ցաւ, և ա՛յ դարձեալ իւրոց գործոցն պիտանացու լինչ իցէ այսուհետև, փոխանակ զի յառաջ քան զժամանակն ի բաց սպրտեաւ ի ջանից ուսմանն, և ոչինչ բաւական եղև կթել զպտուղն առ ի նմանե։ Իսկ իբրև զայսոսիկ բարբառեալ խօսէին նոքա, և մեծ էր՝ որ անտի ամենեն, զբաք ոմանք՝ որք բազում անգամ հանդիպեալ էին այսպիսեաց ոմանց, և ի փորձոյ անտի իրացն ի վերայ հասեալ էին քաջութիք, եթէ և ա՛յ ի վերայ այսպիսեաց ոմանց յուսահատ լինել պարտ է այնոցիկ՝ որ միանգամ առ ՚ած յուսոյն զինուորեալքն իցեն, սակաւ ստէպ լրտեսէին զնա. և եթէ երբեք ի հրապարակի անդ որսային զնա, ժամուցեալ առ նա՝ ՚ղջոյն տային նմա։ Այլ նա ի սկզբան անդ ի բարձր երիվարէ անտի՝ ի կողմն մի եղեալ այնպէս խօսակից լինէր՝ որոց զհետն երթային նմա. այնչափ լոյն լրբութիք զգածեալ էր այրն՝ զառաջինն։

Իսկ գործադրութիքն այնքիկ և որդեսիրքն ա՛յ փոյթ լինչ տարեալ այսմ, յայն միայն ակնկառոյց լինէին, զի ի գայլոց անտի թափեսցեն զգառն, զոր և համբերութիք հանին ի գլուխս։ Վանզի հուսկ ուրեմն իբրու յափշտակեալ խոնարհեալ ի միտս իւր եղեալ նորա, և յանդուգն քաջնից անտի նոցա զամենի հարեալ, յորժամ երթիք ի հեռաստանէ տեսանիր զնոսա մերձ գալ, անդէն վազվաղակի ի բաց ի ձիոյն ոստուցեալ, և ի խոնարհ ուշնեալով զգէմն, այնպէս լռիկ ականկն դնէր սասցելոցն առ ի նոցանէ. և յառաջ ևս անցեալ՝ առաւելագոյն ևս չուք և մեծարանս դնէր նոցա։ Այլ զայս օրինակ ապա առ սակաւ սակաւ չնորհքն ՚ած ի բաց թափեալ զնա ողջոյն ի վարմից անտի, դարձեալ նախկին միանձնուէն և խնաստասիրութէն ընծայեցին զնա։ Իսկ ապա այժմ այնչափ լոյն փայլեցաւ, մինչև առաջին նորա կեանքն իբրև յոչինչ արդեօք համարեսցի, եթէ ոք զնա ի կրնա ձգեսցէ ընդ վերջնոյն ընդ այնմիկ՝ որ զկնի անկմանն։ Վանզի յարդեանց անտի այնուհետև գեղեցկապէս ի վերայ հասեալ հաղթեցին, ծախեալ զամենայն մեծութէն ի կարօտեալսն անդր, և ի հոգոյ աստի ազատեալ զանձն, հա՛ս կտրեաց զամենայն պատճառս իւրոց դարանակալ լացն. և այժմ երկնընթաց ձանապարհին գոլով ուղևոր, ի կատար անդր առաքինութէն հասեալ ժամանեաց։

Լ՚ԱՀ սա մանուկ զոլով հասակաւ , անկաւ և յարեաւ . իսկ այլ ոմն յետ բազմադէմ քրտանցն՝ զոր քրտնեցաւ անապատասուն կենօքն , ի միայն ունելով կենակից իւր , և զՀրեշտակականն յանձին բերելով զկեանս , և ՚ի ծերութի՛ յեցեալ այնուհետև , ո՛չ գիտեմ զիա՞րդ ՚ի դիւական խաբանացն , և ՚ի քնեաց թմրութի՛ն տակաւ տակաւ մնացս տուեալ ամենայնիւրին , անկաւ ՚ի ցանկութի՛ն վարելոյ ընդ կանայս , այն՝ որ և ո՛չ կին երբեք տեսեալ էր յորմէ հետէ միանձնական կենացն նուիրեալ էր զանձն : Այլ սա զառաջինն աղաչէր զբնակակիցն իւր՝ միս և գինի պաշտել նմա . և սպառնայր ևս՝ զի եթէ չառցէ զինդրելին , ինքնին իմոցի՛ ՚ի հրապարակ անդը : Այլ ասէր նա զայս , ո՛չ որպէս թէ մնոյ ինչ ցանկացեալ էր , այլ զի պատճառս իմն և առիթ ինդրէր նա իմանել՚ի քաղաք անդը : Այլ առ այս վարանեալ և տագնապեալ ընկերին , զի մի՛ եթէ երբեք զլասցի նմա զայն , ՚ի մեծ չարիս առեալ ձգեսցէ զնա , ետ նմա ընտրել զցանկութիւնն : Իսկ իբրև հասս նա՝ եթէ այս հնարիմացուն նորա ՚ի գերևս էլ , այնուհետև յայտնի անամօթացեալ՝ մերկացաւ զկեղծաւորութի՛ն , և ասէր եթէ ամենևին իսկ հարկ իցէ նմա իմանել՚ի քաղաք անդը : Այլ իբրև նա ո՛չինչ կարաց արգելուլ զնա , հուսկ ապա արձակեաց զնա . և ՚ի բացուստ անտի ըզհետ երթեալ նորա՝ դէտակն ունէր , եթէ ի՞նչ արգեօք յանդիսացին նմա այն էջք : Իսկ իբրև հասս՝ եթէ երթեալ եմուտ նա ՚ի բազանոց անդր , և գիտաց զի ընդ հնոջ պառնկի եղև , եկաց ինաց անդէն՝ մինչև նա յադեցաւ տարադէպ ցանկութէ՛ն : Այլ ելեալ արտաքս՝ բազկատարած ընկալաւ զնա , և գիրկս ածեալ և անձկանօք համբուրեաց զնա . և ո՛չինչ յաղագս գործեցելոյն երբեք յանդիմանեալ զնա , աղաչէր միայն՝ զի յետ միանգամ լցուցանելոյ զցանկութի՛ն անձինն՝ միւսանգամ դարձցի ՚ի բնակութի՛ն անապատին :

Իսկ նա յայնչափ գթութենէ անտի նորա զամենի հարեալ , և անդէն հարեալ ՚ի հոգի իւր և զղջացեալ յաղագս անառակութէն , զհետ չոգաւ նորա ՚ի լեառն անդը : Այլ ելեալ անդ՝ աղաչէր զայրն , զի յայլ իրը ձիթ առանձինն փակեսցէ զնա , և հնքեալ զմուտս խրցկանն՝ հաց և ջուր ըստ աւուրցն պաշտեսցէ նմա . և

որք հարցանիցեն զնմանէ, ասասցի՝ եթէ ննջեաց։ Եւ զայսոսիկ խնդրեալ նորա, և հաւանեալ այնմ, փակէ զնա. և ելն նա անդ, և զօրհնասպազ պահօք և խնդրուածովք և արտասուօք զաղտ մեղացն ընդէր ի հոգւոյն։ Իսկ յետ այնորիկ յանցանել ոչ բազում ինչ ժամանակաց, իբրև երաշտութիւն հարեալ վտանգարէր զմեծաւոր սահմանն, և ի տրտմութենէ էին ամենայն գաւառականքն, հրամանն ընկալաւ մի ոմն ի քահանայ եւ գնալ՝ գնալ և աղաչել զայրն զայն զփակեալ, որպէս զի յաղօթս կացցէ և լուծցէ զերաշտութիւնն։ Իբրև գնաց նա՝ առեալ և զայլս ընդ իւր, նախ զնորա ընկերն միայն գտին անդանօր, և հարցեալք զնմանէ՝ ի վերոյ հասին՝ եթէ վախճանեալ է։ Համարեցան զանձինս խաբեալս, և ի նոյն խնդրուածս դարձան վերստին, և ի նմին տեղեան միւսանգամ լուան զառաջինն յանոն. և յայնժամ ասպա ի վերոյ կացեալ առն՝ որ ձնմարտութեամբ խաբէր զնոսա, աղաչէին զնա ցուցանել նոցա զայրն. քանզի ասէին՝ եթէ նա չէ մեռեալ, այլ կենդանի է։ Ոչ այս լուեալ նորա, և տեսեալ եթէ յանդիմանեցան դաշինքն, առեալ ածէ զնոսա առ ձեր. և հատեալ զորմն, քանզի զամենայն մեւս գտին խցեալ, և ի ներքս մնեալ առ հասարակ՝ անկան առ ոտս, և զղջալոյ իրացն պատմեալ նմա, աղաչէին զնա ի բաց վանել զսոսին առ ի նոցանէ։ Ելա զառաջինն ընդդէմ դարձաւ, և օտարացուցանէր զանձն իւր յայնպիսի հաւմարձակուէ. իբրև զի զմեղն իւր այնպէս ունէր միշտ առաջի աչաց, որպէս եթէ այն ինչ գործեալ իցէ։ Եւ յորժամ ողջոյն զաղեաս իւրեանց յոշ արարին նմա, յայնժամ ուրեմն հաւանեցուցին յաղօթս կալ, և իբրև աղօթեաց, ելոյծ զսոսին։

Իսկ որ ինչ վասն պատանւոյն այնմիկ, որ նախ աշակերտ լեալ էր յովհաննու զբեթեայ, իսկ ապա ընդ բազում ժամանակս աւազակապետ եղեալ, և դարձեալ միւսանգամ ընդ ձեռամբք սրբութեան որացեալ երանելոյն այնորիկ, յորջոց անտի աւազակացն և յանձաւայ դարձաւ երկն յաւուրինութիւնն, զոր ինքնին չէս ինչ անտեղեակ, այլ սկզբնէ պակաս քան զմեզ քաջ իսկ գիտես զամենայնն. նա՝ և բազում անգամ լուայ զրանալ քեզ ընդ բազում հեզութեն երանելոյն, զի որ

երբեմն մարդախանձ՝ աջոյն համբոյր տայր, յորժամ դիրկս արկանէր պատանւոյն, և այնպէս զնա յառաջինն առեալ մատուցանէր։

ԺԲ. Լակ և երանելին պաւղոս զնեսիմոն, զանպիւ տանն, զփախստականն, զգողն, ոչ միայն սիրէ ինքն՝ փարելով զնովաւ, յորժամ փոխեցաւն, այլ և զաչերն նորա աղաչէ, զի լիտ ապաշաւելոյն՝ զնա հանդիտապաւիւ կալցի իւրում վարդապետին, ասելով այսպէս։ * Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ զոր ծնայ ի կապանս իմ՝ զնեսիմոն, որ երբեմն անպիտան էր քեզ, բայց արդ քեզ և ինձ պիտանի, զոր յղեցի առ քեզ. և դու զնա ընկալջիր, այս ինքն է՝ զիմ աղիս։ Որ կամէի առ իս արգելուլ, զի ընդ քո ուսիցի ինձ սպաս ի կապանս աւետարանին. բայց առանց քո կամաց ոչինչ կամեցայ առնել, զի մի բարիքդ քո ի հարկէ լինիցին, այլ կամաւ։ Գուցէ թերեւս վասն այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա, մի և իբրև զծառայ, այլ ի վեր քան զծառայ, իբրև ղեղայր սիրելի. եթէ ինձ այսպէս, արդեօք և առաւել քեզ մանաւանդ և տերամբ. եթէ զնա հաղորդ համարիս ցիս, ընկալ զդա իբրև զիս ‖. Փիլիմ. 10։

Գուցէ առ կորնթացիս գրելով ինքն ասէր. * Գուցէ դարձեալ յորժամ գայցեմ, սուգ առնուցում ի բազմաց յառաջագոյն մեղուցելոց և ոչ ապաշխարելոց ‖. Բ. Կոր. ԺԲ. 21։ Գուցէ դարձեալ. * Զառաջ ասացի, և դարձեալ կանխաւ ասեմ, զի եթէ եկից դարձեալ՝ ոչ խնայեցից ‖. ԺԳ. 2։ Տեսանեմ, եթէ այլ ազագաւ սուգ առնու, և յարս ոչ խնայէ, ոչ որք մեղանն, այլ որք ոչն ապաշխարեցին, և ոչ պարզաբար՝ որք ոչն ապաշխարեցին, այլ որ միանգամ և երկիցս ի նոյն յորդորեցան, և ոչ կամեցան անսալ։ Վասզի որ առն՝ եթէ յառաջ ասացի և կանխաւ ասեմ, յանդիման երկիցս անգամ և այժմ ի բացուստ գրեմ, ոչ այլ ինչ՝ քան եթէ զայն ինչ ի դէմն ածէ, եթէ երկնչել պարտ է՝ զի մի և առ մեօք այժմ կատարեսցի այն. քանզի թէ պէտ և ինքնին պաւղոս աստ մերձ ոչ է, որ յայնժամ կորնթացւոցն սպառնայր, այլ մերձ է ինքն քո՝ որ յայնժամ խօսէր նովաւ։ Գուցէ եթէ ի յամառութեան անդ կացցուք մնասցուք, ոչինչ խնայեսցէ ի մեզ, այլ

զՀարուած մեծ Հարցէ զմեզ և աստ և ՚ի Հանդերձեալսն ։

Ա.պա կանխեսցո՛ւք առաջի երեսաց Նորա խոստովանութե՛ամբ, Հեղցո՛ւք առաջի Նորա զսիրտս մեր. քանզի մեզաւ ասէ, մի՛ ևս յաւելուր, և վասն առաջնոցն քոց աղաչեա՛. և դարձեալ՝ արդարն անձին իւրում չարաչ խօսէ ՚ի սկզբան բանից իւրոց ։ Այլ արդ՝ մի՛ ակն կալցուք ամբաստանողին, այլ զկարգ Նորա նախագրաւ յափշտակեսցուք, և այնպէս ասպա գթութե՛ն հեղագոյնս յարդարեսցուք զդատաւորն ։ Վասն իսկ գիտեմ, եթէ դու ինքնին խոստովանիս զմեզս քո, և Հեգ և թշուառական անչափ համարիս զանձն քո ։ Ա.յլ ես ո՛չ զայդ միայն խնդրեմ, այլ և ցանկամ այնպէս Հաւատալ քեզ, եթէ բանդ այդ կարող է և արդարացուցանել զքեզ ։ Վասնզի ցորչափ յանօգուտս արասցես զխոստովանութիդ զայդ, թէպէտ և ամբաստան լիցիս զանձնէ քումմէ, ո՛չինչ զօրեսցես առ յապային ՚ի բաց կալ ՚ի մեղաց այսր ։ Վասնզի ո՛չ ոք արդեօք կարող լիցի երբէք զուարթութե՛ն և գեղեցիկ կարգաւ գործել ինչ, եթէ ո՛չ յառաջագոյն վստահ լիցի յանձն իւր, եթէ օգտակար նմա եղիցին իրքն ։ Այս քանզի որ սերմանէն, յետ ցանելոյ զսերմանսն, եթէ ո՛չ հնձոյն ակն ունիցի, ո՛չ երբէք հնձեսցի ։ Վասնզի ո՞ ոք ընտրեսցի երբէք վայրապար քիրտն յանձն առնուլ, եթէ ո՛չինչ արգասիս ՚ի վաստակոց անտի ունիցի կրե՛լ ։ Ա.յսպէս ասպա և որ ըզբանս սերմանէ և զարտասուս և զխոստովանութի՛ն, եթէ ո՛չ գեղեցիկ յուսոյն գործեսցէ զայն, ո՛չինչ կարող լիցի փրկիլ ՚ի մեղացն, իբրու ըմբռնեալ ոմն ՚ի կրից յուսահատութե՛ն ։

Ա.յլ զորօրինակ երկրագործ՝ որ ՚ի բերոց պտղոյն յուսահատ լեալ լիցի, ո՛չինչ այնուհետեւ փոյթ կալցի արգելուլ զինասակարս սերմանեացն, այսպէս և որ արտասուօքն սերմանեսցէ զխոստովանութի՛ն, և օգտի ինչ առ ՚ի նմանէն ակն ո՛չ ունիցի, ո՛չինչ բաւական լիցի այնուհետեւ ՚ի բաց վանել զապականիչս ապաշխարութե՛ան ։

Այս խանգարէ աղարտէ զապաշխարութի՛ն կալ ինալ դարձեալ ՚ի նոյն չարիսն ։ Վինչ շինէ և միւսն քակէ, զինչ օգուտ գործէն, բայց աշխատութի՛ն. որ մկրտի ՚ի

մեռեալսուց, և դարձեալ՝ ի նոյն մերձենայ, զինչ օգուտ
իցէ լուացումն նորա։ Ոչ յոսկիս մարդ՝ որ պահէ՝ ի մե-
ղայ իւրոց, և դարձեալ յառաջ անցեալ զնոյնս գործէ.
ո՞ւր լուիցէ աղօթից նորա. և դարձեալ. Ուր դառնայ
սակ, յարդարութիւն՝ ի մեղս, զնա տէր պատրաստ՝ ի
սուբ։ * Ոչ որպէս շուն յորժամ դառնայ՝ ի փսխած
իւր և ատելի լինի. նոյնպէս անզգամն իւրովք չարեօք
յորժամ դառնայցէ անդրէն՝ ի մեղս իւր ‖. ա՟. Է՟. ։։

ԺԵ. Ոչպա մի՛ իբրև չարախօս միայն անձին քումմ
հրապարակեսցես զմեղս քո, այլ և իբրու այն եթէ՝ ի
ձեռն ձանապարհիդ ապաշխարութեան պարտ իցէ քեզ
արդարանալ. քանզի այսպէս բաւական իցես և զնոս
տովանող հոգիդ զամենի հարկանել, զի մի՛ ևս առ՝ ի
նոյն չարեսցի։ Ոչպաքէն և սաստիկ ինն դատափետս առ-
նել զանձն և մեղաւոր կոչել, այս՝ որպէս բանիս կարգ
է ասել, հասարակաց է և անհաւատից։ Ոչանգի բա-
զումք և՝ ի թատերականաց անտի առ հասարակ արք
և կանայք, որք միանգամ առաւել ինն դառնան հայհոյ
՝ի պղծութենէ իւրեանց, հեգ և թշուառական կարգան
զանձինս. այլ սակայն և ո՛չ երբեք՝ ի նպատակ անգր
ուղերձին։ Ոչ ասն այսորիկ և ո՛չ զայն ես կոչեցից խոս
տովանութիւն երբեք. քանզի ո՛չ զղջմամբ հոգւոյն, և
ո՛չ դառնապէս արտասուօքն, և ո՛չ փոփոխութիւն կենացն
պատմեն զմեղս իւրեանց, այլ են՝ որք փառս ինն խընդ-
րեն որսալ՝ ի լսողացն՝ ի ձեռն կազմեալ բանիցն. քան-
զի ո՛չ հաւասար երևի գժնդակութեն մեղացն, յորժամ
այլ ոք պատմէ զնոցանէ, և յորժամ ինքնին իսկ մեղա-
յեալն։ Ոչ են դարձեալ՝ որք առ սաստիկ յուսահա-
տութենն յանցաւորութեն հարեալք, և զփառս մարդկան
առ ոտն կոխեալք՝ այնուհետև բազում լքբութիւք իբրև
զօտարաց ոմանց՝ զմեղս իւրեանց հրապարակեն ամե-
նեցուն։

ՈչԼՈ՛չ կամիմ զքեզ լինել յայսպիսեայ աստի, և
ո՛չ դարձեալ առ յուսահատութենն բերիլ քեզ՝ ի խոս
տովանութեն, այլ զեղեցկապէս յուսոյին, և մեծ կարե-
լով զարմանալ յուսահատուէնն՝ այնպէս զՀակառակ Ջանն
՝ի ներքս բերել։ Ոչսկ յուսահատութենն ո՞ր իցէ արմատ
և մայր։ Հեղգութիւնն, մանաւանդ եթէ ո՛չ արմատ
միայն կոչեսցէ ոք զնա, այլ և դայեակ և մայր։ Ոչան-

զի զըօրինակ յասուիս ապականութիւն ծնանի զցեցս, և ապա ի նոցանէն և եւս ձարակի, նոյնպէս և աստա նօր՝ հեղգութիւն ծնող է յուսահատուե. և ապա դարձեալ յուսահատութիւն ինքն բուծանի, և փափուխ միմեանց զնզովեալն զայն ընծայեն զըօրութիւն, և բազում ինչ յառաջ անցեալ ձարակ գտանեն։ Այլ եթէ ոք զինն ի նոցանէ հատցէ և կարեսցէ, դիւրաւ կարող լինիցի և միւսումն յաղթել։ Այանգի որ ոչն հեղգանայ՝ երբէք ի յուսահատութիւն ոչ անկանի, դարձեալ և որ դեղեցիկ յուսոյն մնեալ՝ ոչ վհատեսցի յանձն իւր, երբեք ի հեղգութիւն ոչ անկանիցի։

Այդ դու ինձ զամենզդ զպդոսիկ քակեա՛, և զլուծդ խորտակեա՛, զխորհուրդդ ասեմ զբազմօրինակն և զըծանրն, քանզի ոչ միագիմի է՝ որ զպդոսիկ լինքն առեալ պարուրէ, այլ բազմագիմ և ամենակերպարան. իսկ զինչ այն իցէ. դէպ լինի՝ զի յապաշխարելոց ոք բազում ինչ և մեծամեծ ուղղութիւս առաքինասցի, և առ նոքօք դարձեալ մեղս իմն մեղիցէ զուգակշիռ բարեացն այնոցիկ, և այս մեծապէս զօրէ ի յուսահատութիւն արկանել, իբրու այն թէ՝ քակեցան քանդեցան չինեալքն, և ամենայն աշխատութիւնքն նմա ի զուր և ի նանիր ծախեցան։ Այս արդ՝ պարտ և արժան է ի տեղւոյս քաջանալ ի միտս, և զխորհուրդն զայն ի բաց վանել. և զի՝ եթէ ոչ կանխեալ ամբարեալ ուսիցիմք զչափ առաքինի գործոյն զուգակշիռ մեղացն՝ որ յետ այնօրիկ գործեցան, ոչինչ այնուհետեւ արգելուցու ըզմեզ՝ իսպառ և գլխովին իսկ նկուն լինել. նա՛ և իբրեւ զրահ իմն են զօրաւոր՝ առաքինի գործք, որ ոչինչ թոյլացուցանէ սպրատուր և դժնդակ նետին զիւրն ներգործել, այլ լինքն առեալ զհարուածն՝ ի բազում վըտանգէն փրկէ զմնըմինն։ Այանգի որ հանդերձ բազում գործովք բարեաց և չարեաց գնայ անդր, ուսի արդեօք սփոփանս իմն ի տանջանս և ի չարչարանսն յայնոսիկ. իսկ որ անբաժ գոլով ի բարեացն, զչորիսն միայն ընդ նըմ առեալ տանիցի, յանհնարինն է ասել, եթէ քանիսն արդեօք չարչարեսցի նա՝ յորժամ յանմահ տանջանսն յուղարկեսցի։ Այս քանզի անդանօր ի կշիռ ձգեսցին գործք չարք ընդ բարեացն, և եթէ վերընկնքս ծանրասցին ի նժարն, ոչ փոքր ինչ փրկուե

հանդերձեսցեն գործողքն իւրեանց, և ոչ գարձեալ տուգանք գործոցն չարուշ ուժեսցեն երբեք դրդուել ցուցանել զնա յառաջին կայից իւրոց։ Այսպս եթէ չարիքն յաղթահարեսցեն, ի հուր գեհենացն տարտարոս առաքեն, քանզի ոչ գտաւ այնչափ թիւ գործոցն բարեաց՝ որպէս զի և կարող լինէ ցգեմ ունել բըռնաբեռան ձկտելոյն։

Այլ զայսոսիկ ոչ բանս մեր միայն՝ ի նեբքս արկանէ մեզ, այլ և ճշմարիտն պատգամք. քանզի նա ասէ.* հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց ‖. հռ. ը. 6։ Այս ոչ՝ ի գեհենին միայն, այլ և յարքայութենէ անդ բազումն արդեօք գտցեն ոք խոչըս. քանզի * ի տան հօր իմոյ օթեվանք բազում են ‖. յովհ. ժդ. 2. և՝ * այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի ‖. ա. կոր. ժե. 41։ Այս զինչ զարմանք իցեն, եթէ յայսվայր ճշգրտաբանեաց, ուր և զաստղ յաստեղէ տարբերեալ ասաց նա անդանօր։

Այսպս գիտելով զայս ամենայն, մի երբեք տեղի տայցուք՝ ի գործոց բարեաց, և մի երբեք լքցուք՝ ի վաստակոց, և մի գարձեալ, եթէ չիցեմք բաւական՝ ի չափ գալ արեգական և կամ լուսնի, զաստեղացն արհամարհեսցուք։ Օ՜ի եթէ գոնեա այնչափ առաքինասէր յանձինս մեր բերիցեմք, կարող իցեմք լինել յերկինս։ Այս Թէպէտ և ոսկի, Թէպէտ և ակն պատուական ոչ լինիցիմք, գէթ զչափ արծաթոյն ունելով՝ ի մեզ՝ ինասցուք՝ ի հիմունսն անդր։ Այլ Թէ մի՝ ի նիւթ այնպիսի փոփոխեսցուք, զոր դիւրաւ ձարակէ հուրն. և մի յոր ժամ մեծամեծ ուղղութենէն բաւական ոչ իցեմք, ի փոքունցն երբեք հրաժարեսցուք, քանզի յետին անմտութենէ է գործս, զոր քաջ մեք մի արասցուք։ Այլ զանգի զորօրինակ մարմնական մեծութիւնք առնուն աճումն, յորժամ ընչաքաղցն ոչինչ անփոյթ արասցեն և գիակ իւր դուշնաբեայ շահիցն, նոյնպէս և հոգևորքն։ Այ սան գի գժպատեհ է մեզ անփոյթ առնել զփոքուսիքն, Թէպէտ և ոչինչ առաքինասցուք՝ ի կարի մեծամեծ առաքինութենէն, ուր դատաւորն ինքնին և ոչ զցուրտ բաժակին անտես առնէ զվարձն։ Այանգի որ զդուշնաբ քէիւքն ոչ արհամարհէ, առ մեծամեծսն բազում քանս՝ ի վար արկցէ. իսկ որ միանգամ զսոքիմքն անտես առ-

նէ, և ՚ի նոցունցն հրաժարեսցէ արդեօք. և զի մի՛ ելցի այսպէս՝ վարձս մեծամեծս և վասն այսոցիկ սահմանեաց քո։ Վասնզի զինչ դիւրագոյն ևս կայցէ քան զտեսանել զՀիւսանդասցեալս, այլ սակայն և այսմ՝ տրիտուր մեծ հատոյց։

Այսպա դու բա՛ւական հար զկենացն յաւիտենականաց, բերկրեա՛ց ՚ի տէր, և պաղատեա՛ առ նա. միւսանգամ՝ ընկալ զլուծն քաղցր, մա՛ւտ ընդ փոքրոյդ բեռամբն, յաւե՛լ ՚ի վերայ զվախճանին արժանի սկզբանն, մի՛ թո՛ղուր վատնել այդչափ հարստուԹի՛ն. զի եԹէ այնպէսալ է քո տակաւի՛ն ՚ի սրտմտուԹիւն բրդել զնո՛ւճ գործովք քովք՝ կորուսցես զանձն քո, ապա եԹէ մինչեւ՛ տուդանեալ քո զմեծապէս տուգանն, և մինչեւ՛ ողորեալ ամենայն մեղկուԹենդ, խցցես զջրադարձն չարուԹե՛ն, կարող իցես դարձեալ ստանալ զպակասեալսն. և ո՛չ դուշնաքեայ ինչ յաւելուած յաւելցես ՚ի նոսա։ Այս ամենայն զմտաւ ածեալ, ԹօԹափեա՛ զփոշին, արի՛ ՚ի հողջ, և ահաւոր եղիցիս հակառակորդին քումմ՝։ Վասն զի նա կործանեալ զքեզ, իբրու այն եԹէ ո՛չինչ ունիցես դու յառնել վերստին. և եԹէ երբեք յակն արկցէ զքեզ միւսանգամ ընդդէմ ամբարձեալ բազկաւ, ՚ի խոր խոցեալ անկարծելին տեսլեամբ, վատասցի այնուհետեւ ՚ի գլորել զքեզ. իսկ դու հաստատուն ևս կայցես, զի մի՛ դարձեալ զդոյն վերդ առցես ՚ի քեզ։ Օ՛ի եԹէ օտարին աղէտքն բաւական են ՚ի հրահանգել զմեզ, ո՞րչափ ևս առաւել զոր մեք անձամբ յանձինս կրեցաք։ Օ՛որ և ՚ի վերայ քումմէ գլխոյ հուսկ ընդ հուսկ ակն ունիմ տեսանել, և դարձեալ զքեզ պայծառապոյն ևս յարդարեալ ՚ի հրամանէն ՚ի՞ն, և այնչափ ինձ առաքինուԹե՛ փայլեալ՝ մինչ զի և այլոց ոմանց բաւեսցես վերակացու լինել այդր. միայն դու մի՛ լինիր յուսահատ, և մի՛ վհատիր յանձն քո. քանզի զայս քեզ ո՛չինչ դադարեցայց ես միւսանգամ առնուլ և ասել և յամենայն բանս, և ուրանօր և տեսից զքեզ, դարձեալ և ՚ի ձեռն այլոց. որում եԹէ ունկն մատուսցես, այլոց դեղոց քեզ ո՛չինչ պէտք իցեն այնուհետեւ։

ՆՈՐԻՆ ԸՍ ՆՈՅՆ ԹԼՓԱԴՈՐՈՍ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Ա ԹԷ զարտասուս և զՀեծուԹիս մարԹ էր՛ի ձեռն գրոց՛ի գԷմն բերել, ես զԹուղԹս զայս լցեալ նոքօք առաքի՛ւ առ քեզ։ Չեղուա՛մ ես արտօսր՝ ո՛չ զի զՀայրենականացդ գոյից զՀոգն յանձն առեալ է քո, այլ զի յերջաբոյն միաբանուԹ տարագիր հաներ զքեզ. զի զգաշնո՝ զոր ընդ քեզ կռեցեր, առ ոտն կոխեցեր։ Ա՛ռ այսօրիկ զաՀի հարեալ եմ ես, վասն այգոյիկ յոգւոց հանեմ. գոբին աղագա՛ւ երկնչիմ և գողամ։ (*) Վ՛Ասդի զսոսկականն ո՛չ ոք Թերեւս բամբասեսցէ իբրև ո՛չ գրեալ՛ի զՀնուորուԹէ. ապա ԵԹէ ոք միանգամ՛ի զՀնուորացն անցեալ՛ի կարգ՝ ըմբռնեսցի իբրև դասալիք, նա զվերջինն վտանգեսցի վտանգ։ Չի ինչ գԺնդակ, ո՛վ գու սիրեցեալդ Թէոդորէ, ԵԹէ անկցի մարտիկն, այլ ԵԹէ՛ի նմին անկմանն կացցէ Ճեսցէ. չէ ինչ տագնապ՝ ԵԹէ վերս ընկալցի զՀնաւորն, այլ ԵԹէ յետ Հարուածոյն յուսահատ լիցի, և զվիրացն անփոյԹ արասցէ։

Ո՛չ ոք՛ի վաՃառականաց միանգամ՛ի նաւաբեկուԹ

(*) Յետ այսց բանից գոյ Հատուած ինչ բանի փակեալ՛ի մէջ եղիգնաձև նշանաց՛ի տպ. Մ՛օնՓոքօնի առեալ՛ի Ասիլէան տպագրուԹէ։ Ա՛յս Հատուած բաս նորուն իսկ Մ՛օնՓոքօնի է՛ի տպ. Մ՛առէլեան, այլ և յամենայն ձեռագիրս յուՀնակնս։ Հատուածս գեղեցիկ կապէ բան ասելոյ նոքա զնաՀրնիմաց բանն Ասկեբերանին ընդ Հետևորդաց, սակայն մէք և առանց այնր տեսանելիք զկապ բանիցն. ուստի և չէ դաք՛ի ներքս՛ի բանան՝ իբրև անՀարազատս Համարեալ Ասկեբերանի. որովՀետև չէք առ Հասարակ յամենայն ձեռագիրս, որպէս և՛ի տպ. Մ՛առէլ։ Եւ է Հատուածս այսպիսի ինչ, յետ բառից բնագրին՝ երկնչեմ և գողամ։ Քանզի՛ի վերայ Հասեալ եմ, զի արՀամարՀուԹիւն այգոյիկ գառասան մեծ՛ի վերայ ածէ այնոցիկ՝ որք միանգամ՛ի դոյն գեղեցիկ զՀնուորուԹէն գրեցին զանձինս, և յետ այնորիկ ապա Հեղգացեալք՝ Թողին զառաջին կարգն իւրեանց։ Իսկ ԵԹէ այսպիսեաց ոմանց տանջանք անՀնարինք պատրաստեալ իցեն, յայտ անտի է, քանզի ևն ||։

անկեալ և զվաճառան կորուսեալ, տեղի երբէք եւս ՚ի նաւելոյ, այլ միւսանգամ հատանէ զծուխն, և զալիսն և զահագին անդունդսն, և զառաջին մեծութիւնն կրկին ՚ի ձեռս բերէ: Տեսանեմք և զօտէկուխան, զի յետ բազմապատիկ անկմանցն լինին պատկազգեացք. նա և զինաւոր բազում անգամ Թիկունս դարձուցեալ՝ յետ այնորիկ ապա գոռ եղև ՚ի պատերազմի, և եհար ըզԹշնամին: Ա՛յս աւանիկ և բազումք ՚ի նոցանէ՝ որ զքե ուրացան ՚ի բռնութենէ տանջանացն, միւսանգամ մղեցին զմարտն, և զպատկն մարտիրոսութենե կրկին առեալք՝ մեկնեցան աստ: Այր զի՝ եթէ այր այր ՚ի սոցանէ յուսահատ լեալ էր յաղագս առաջին վիրացն, ոչ արդեօք վայելեալ էր նոցա յերկրորդ բարիւն:

Օ նոյն օրինակ և այժմ, ով սիրեցեալդ Թէոդորէ, եթէ՝ ՚ի կայից քոց փոքր ինչ սասանեցոյց զքեզ Թշնամին, մի և դու առեալ ՚ի վհտ անդր խարդաւանեացես զքեզ. այլ կաց ՚ինա քաջութենէ, և վաղվաղակի դարձիր ուստի եկեր: Այս մի դարձեալ նախատինս անձին քում համարեսցիս զդոյն յետ վիրիդ այդորիկ. քանզի և ոչ ՚ի զինուորացդ զոք արդեօք Թշնամանեացես դու երբէք՝ յորժամ վերս ընկալեալ ՚ի պատերազմէն դարձցի: Այանզի նախատինք այն էն՝ եթէ զինքնակէց լինիցի, և ՚ի բացեայ ՚ի Թշնամեացն կացցէ. իսկ յորվայր պընդեալ ՚ի մարտին, Թէպէտ և խոցեսցի, Թէպէտ և առ վայր մի տեղի տացէ, չէ՛ք ոք այնպէս ապստամ, չէ՛ք ոք այնչափ զինուորական հրահանգացն անփորձ՝ որ զնա երբէք դատապարտ արասցէ: Ա՛յ ՚ի ձեռս է պատերազմողացն՝ չընդունել վերս. իսկ ոչք միանգամ գեղեցիկ արուեստ յարձակին ՚ի Թշնամիս անդր՝ և վերս առնուն և անկանին ևս. զորօրինակ և ՚ի քեզ կատարեցաւ այժմ, քանզի զհետ մտեր անդէն վաղվաղակի սատակել զօձն, և եհար զքեզ:

Ա՛յլ քաջալերեաց դու. փոքու լիմն հակոտնեայ պէտք են քեզ, և ոչ սակն երևեսցի վիրիդ այդորիկ. մանաւանդ Թէ ընտրօքն ոյ և զգեստն ջաղխեացես զբարին զայնորիկ: Այս մի այն ինչ դարձեալ խոտորեցոյցէ զքեզ, եթէ վաղվաղակի և ՚ի սկզբան անդ ոտնակոխեաց զքեզ: Այանզի անդէն եռեա և ՚ի վերոյ եհաս չարն առաքինութենէ անձինդ. և զի ՚ի բազմա-

պատիկ նշանացն ծանեաւ՝ եթէ ախոյեան սրի օր ըստ օրէ քաջասցի ընդդէմ նորա։ Վասնզի եդ՚ի մտի՝ եթէ որ այնպէս անդէն և անդ յայնչափ և յայնպիսի չիւղն նահատակեցաւ ընդդէմ իւր, զիւրաւ այնուհետև յաղթեսցէ հարեալ վանեսցէ նա զինքն, եթէ երբէք առ՚ի նոյն յաւերժացայն։ Վասն այսորիկ փութացաւ ձեռնադէտ, հակեաց, և զլինուլին ընդդէմ քո՝ մանաւանդ եթէ ընդդէմ իւրումն զլխոյ յարեաւ կանդնեցաւ, միայն եթէ քեզ կամք էցեն զտեղի ունել քաջութիւն։

Վասնզի ո՛ր որ ո՛չ զարմացաւ ընդ քո արագ արագ և անկեղծ և ընդ բոլորգրեալ առ՚ի բարիսդ փոփոխուն։ Վասնզի յանկարծ արհամարհեցան հեշտալից զրպանք, հանդերձիցն խոտեցան խնեղութիւնք, ամբարտաւանութիւն ամենայն առաքուր կոխեցաւ. բովանդակ իսկ ջանք արտաքնոցն իմաստութիւն՝ յաճախինան ողջոյն փոխեցան պատգամն. ժամք տուրընջենայինք համբուն լինն թերցմունս, և ողջոյն գիշերիք ծախէին յաղօթս, ջոյր յիշատակ հայրենի պատուոյն, և մեծութիւն չանկանէր՚ի միտս. իսկ զեղբարցն փարել զծնկունքն և առ ոտս անկանել նոցա, վերհապոյն էր առ քեզ քան զամենայն աղնուականութիւն։

Ոյսոքիկ տանջանս նիւթէին չարին, այսոքիկ՚ի մարտ սաստիկ զրգռեցին զնա. այլ սակայն չետ զօրհասական զվէրն։ Ո՛չ եթէ յետ բազմաժամանակեայ աւուրց և անդուլ պահոցն և զետնախշտի լինելոյն և այլոց ևս նահատակութեանցն կործանեալ էր զքեզ, և ո՛չ յայնժամ պարտ էր յուսահատ լինել, թէպէտ և զեան բազում համարեսցի ոք արդեօք՝ եթէ այնպէս զկնի բազմադէմ քրտանցն և աշխատութեանցն և յաղթութեանցն՚ի կոր կործանեսցի։ Ոայց քանզի անդէն՚ի սկզբան մտեալ զմիջս առ՚ի մարտ՝ զթեսցոյց զքեզ, այնչափ ինչ գործեաց եւեթ, զի առաւել ևս քաջութիւն յարդարեսցէ զքեզ ընդդէմ իւր՚ի մարտ պատերազմի։

Վասնզի արդ այն ինչ ելեալ քո՚ի նաւել, ո՛չ՚ի վաչառաշահութիւն ինչ դարձեալ քո, և ո՛չ բեռամբք լի առնել զնաւդ, ՚ի վերայ քո վազեաց հէնն զժնդակ։ Այլ զորօրինակ ոք զհետ մտեալ սպանանել զառիւծ կորովի, և ապա զմորթ նորա միայն զերծուցու, նմա ո՛չինչ ինաեսցէ, այլ ընդդէմ իւր առաւել զրգռեսցէ զնա,

և յաւէտ իմն աներկեան և զժուարըմբռնելի այնու հետև գործեսցէ զնա. այսպէս և հասարակաց թշնամին գուն գործեալ ի խոր մնդը զվէրն տալ, վրիպեաց յայնմանէ, և առաւել ևս հանդերձեաց կազմեաց ըզքեզ ի հակմունս և ի պահս։

Ը. Վանդի անկայուն է քնութիւն մարդոյ, արագ ա րագ պատրի, և արագ դարձեալ լըջանայ ի խաբանացն. և զորօրինակ վաղվաղ անկանի, նոյնպէս և վաղվաղակի յառնէ։ Այլ քանզի և երանելին այն այր, ըզդաւիթն ասեմ զընտրեալն ի Թագաւոր և ի մարգարէ, յորժամ բաղում ինչ ուղղութիւնս առաքինացաւ, ո՛չինչ կարաց ծածկել եթէ մարդ է, այլ հարաւ ի սէր կնոջ օտարի. և ո՛չ յայնվայր եկաց մինչ, այլ վասն ցանկութեանն գործեաց չնուի, և վասն չնութեանն արար սպանութիւն. այլ զի ի խոր խոցեցաւ կրկնակի վիրօքն, ո՛չ անգէն և վերըսորդն ժպրհեցաւ ինչ յաւելուլ յանձն իւր. այլ վաղվաղակի դիմեաց առ քժիշկն, և ած ի վերայ դեղս, զպահս, զարտասուս, զսուգ, զաղօթս անդադարս, զյաճախս խոստովանութեի միջացն. և այնպէս սպա ողջմած յարդարեաց զնա, մինչև յառաջին պատիւն ի վեր եղ, մինչև յետ չնութեանն և սպանութեն՝ դարձեալ բաւական եղև հօրն յիշատակ ծածկել զկատարածութիւն որդւոյն։ Վանզի նորա որդին սոզղոմոն անուն ի նոյն ըմբռնեցաւ ի վարմն, ըստ ո րում և հայրն, և ի չնորհս կանանցն հեռի եղև ի հայրենի նզն։

Տեսանես եթէ քանի՛ աղէտք լցեն ո՛չ նկուն առնել զՀեշտութեին, և հինն ի վեր տապալել զիշխանութեի քնութեանն, և այր գոլով՝ կանանցն լինել ի ծառայ։ Լըմ սողոմոնիս այսմիկ, այն՝ որ արդար էր զառաջինն և խնաստուն, և ի մեղացն պատճառս ի վտանգի կայր կորուսանել ողջոյն զթագաւորութիւնն, ի մեծարանս երեսաց հօրն՝ եթող նմա ած ունել զվէցերորդ մասն իշխանութեանն։

Այս արդ՝ եթէ քո ջանք յաղագս արտաքնոցն էին բանից, և քո ապեխտ արարեալ էր զնոքօք, ես ինքնին ի յուշ ածեալ քո զատեանն և զբեմն, և զորս ի նմա նէն զպատկան և զգեղեցիկ համարձակութեին, Հեպէի յորդորելի զքեզ զարձեալ զնոցուն վաստակոցն բուռն

հարկանել. այլ քանզի վասն երկնաւորացն այնոցիկ ընթանամք, և զերկրաւորսն գլխովին առ ոչինչ համարեալ եմք, ես քեզ այլ ատեան և բեմ հաւատոյ և սոսկալի՝ ի յիշատակ բերեմ. * քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին քրի ‖ Ա. Կոր. Ե. 10։ Այս նա ինքն նատցի դատաւորդ, որ արդ՝ ի քէն անպատուի։ Ո՞ւինչ ասես ասասցուք մեք յայնժամ, ասա ինձ, զինչ պատասխանի երթեք տացուք, եթէ՝ ի նոյն յանցանսն կացցուք մնասցուք։ Կ՚զգե մեք զինչ արդեօք ասասցուք, թէ երևս զգործառնութեանցն պատճառեացուք զՀոգս. այլ նա ինքն յառաջագոյն կանխեաց և ասաց. * Ո՞ւինչ օգտիցի մարդ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցի ‖ Մատ. ԺԶ. 26։ Կ՚ասէ թէ երևս զառ՝ի յայլոց զնաքանչան. բայց սակայն և ոչ աղամանդ՝ի ջատագովութիւն ինչ օգնեաց ամբաստանուածին զինոջին՝ ասելով, եթէ * կինս զոր եառուր ցիս, սա խաբեաց զիս ‖ Ծն. Գ. 12. ըստ որում և ոչ կնոջն, յորժամ պատճառէր զօձն։

Կ՚հաւոր է ատեանն այն՝ ոմ սիրեցեալդ Թէոդորէ, որում ոչ դատախազից նման պիտոյ ինչ են, և ոչ դարձեալ վկայից ոմանց սպասեալ ինայ, քանզի ամենայն ինչ մերկապարանոց և բաց է դատողին այնմիկ. և ոչ զգործոյն միայն զՀամարս, այլև գլխովին զխորհրդոյն հարկ է տալ յանդիման. քանզի սրտին շարժմանց և խորհրդոց խուզարկու է այս դատաւոր։ Կ՚ասէ թէ երևս զտկարութիւնն բնութեես՝ի դէմն ածիցես, եթէ անբաւական էի բառնալ զլուծն. բայց զինչ ելցե այս պատասխանի, ոչ զօրեալ բառնալ զլուծն քաղցր, և ոչ կալ լեալ տանել զբեռն փոքրոգի։ Կ՚եթէ արդեօք ծանր և ժաւարաբառնալի՞ իցէն առ՝ի յաշխատութենէն սիրտ փանք. քանզի՝ ի սոյն յայս կոչէ զմեզ քս ասելով. * Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ՝ի ձեզ, և ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի ‖ Մատ. ԺԱ. 28։ Կ՚անզի զինչ ևս փոքրոգի, ասա ինձ, քան զաշխատութենէն՝ի հոգոց, ի զբաղմանց, յերկիւղէ և յաշխատութենէ. և զայսական լինել՝ի կենցաղոյս այսորիկ յաւելաց, և բնականալ յանդորը նաւահանգստի։

Ը. Օ ինչ ինչ արդեօք առաւել երջանիկ և առաւել բաղձալի կարծեացես դու լինել յաշխարհիս յայսմիկ. Թերևս անդէն զնիշխանութիւնն ասասցես դու ինձ և զընչաւէտութիւն, և զառ մարդիկ զքաջ համբաւն. այլ զինչ և ես հիպատոյն քան զայդոսիկ երբէք, յորժամ ընդ քրիստոնէից ազատութիւնէ՛ ի կշիռ առեալ ձգեացես: Վասնզի իշխանն՝ ի ներքոյ անկեալ է սրամտութեան ոամկին, և անբան յարձակմանց խառնիճաղանջին, և երկիւղ վհատունէից իշխանաց, և հոգոց վարանաց՝ ի պատճառս իշխեցելոցն. և որ երկիւղ իշխան, այսօր սոսկական. քանզի այս կենցաղ ոչինչ ընդհատ է՛ ի թառերաց անտի, այլ զորօրինակ անդանօր ումն զթագաւորին, և ումն զզօրավարին, և միւս ումն զգինաւորին ընու զտեղին. իսկ՝ ի հատանել երեկոյին, ոչ թագաւորն է թագաւոր, և ոչ իշխանն՝ իշխան, և ոչ զօրավարն՝ զօրավար, նոյնպէս և յաւուրն յայնմիկ, ոչ՝ ի դիմաց ինչ անձինն, այլ՝ ի գործոց անտի իւրաքանչիւր առնէ զարժանի գնահատն:

Այլ Թերևս փառքն իցէ պատուական, որ ԹօԹափի իբրև զծաղիկ խոտոյ. այլ Թերևս մեծութիւնն, ո՞ր ոչ ստացօղքն իւր հեգ ասին և Թշուառականք. քանզի * վայ ձեզ ասէ մեծատանց ‖. ղկ. ՚ը. 24. և դարձեալ. * վայ ոչք յուսան՝ ի զօրութիւն իւրեանց. և՝ ի բազմութիւն մեծութեանց պարծեացին ‖. սղմ. խը. 7: Այրիս տունեայն յիշխանէ էլինի երբէք սոսկական, և ոչ՝ ի մեծատանէ՝ ազքատ, և ոչ անփառունակ՝ ի փառաւորէ. այլ և՝ ի մերանալ իւրում՝ մնայ մեծատուն, և՝ ի խնդրել զանձն խոնարհեցուցանել՝ բարձրանայ. և զիշխանութիւնն, որով իշխէ՝ ոչ մարդկան, այլ իշխանաց իշխանութիւնէ աշխարհակալին խաւարի, ոչ ոք բաւական է հանել՝ ի նմանէ:

Արդար է ամենանուին, խոստովանիմ և ես. քանզի * պատուական է ասէ ամենակալութիւն ամենևին և՝ զոք անկոխելինք. բայց զընտիս և զպատուականս դասուն ասէ ‖. եէդ. ՚ձ. 4: Այլ քեզ ոչ ևս է մարթ պահել զիրաւունս ամենանուութեն. քանզի որ միանգամ ընդ երկնաւորին զուգեցաւ վիճայինն, եթէ զսա թողցէ և երթեալ ընդ կնոջ զուգեսցի, չնութիւն է գործն, թէպէտ և դու բնաւ անգամ ամենանութիւն կոչեացես զնա. մանաւանդ եթէ

այս այնչափ լինի դժնդակ է քան զընութիւն, որչափ պատուականագոյն է ած քան զմարդ: Եւ ի՞ ոչ դարձեալ խաբեսցէ զքեզ, ասելով. եթէ զամուանութենէն երբեք ոչ արդելուս ած. զայդ և ես գիտեմ, զամուանութենէն նա ոչ արդել, այլ արդել զընութենէն, զոր դու կամիս գործել, որ քա՛ւ ի քէն, եթէ երբէք ամուանութիւն կատեսցես զքեզ:

Եւ զի՞ պատմացեալ է քո, եթէ ամուանութիւն իբրև ընութիւն լինի համարեսցի, յորժամ արհամարհի ած: Պատուիրեն համարեցաւ յարդարութիւն, և մարդասիրութիւնն առաւել գատապարտեցաւ քան զսպանութիւն. քանզի մին ըստ կամացն այ վճարեցաւ, և միւսն՝ հակառակ հրամանին այ: Պետքէն վենհէսի յարդարուն համարեցաւ, զի զպոռնկեալ զկինն ի միասին խոցեաց ընդ առն ընաբարոյն. իսկ զսաւուղ՝ որն այն այ սամուէլ՝ ողջոյն զգիշերս արտասուս հեղեալ, և տուգ առեալ, և պաղատանս արկեալ՝ ոչինչ բաւեաց փրկել ի գատակնքոյն՝ զոր ընդդէմ նորա տուեալ էր այ. քանզի զի զթասաւորն այլազգեաց՝ զոր սպանանել արժան էր, ապրեցոյց հակառակ հրամանին այ: Իսկ արդ՝ եթէ մարդասիրութենէն առաւել գատապարտի քան զսպանութենէն, յայտ առ ած անհնազանդութենէն, զինչ զարմանք կայցէ՝ եթէ ամուանութիւն առաւել և գատապարտութիւն կրեսցէ քան զընութի՛ ի պատճառս անպատուհաս առնելոյն զքա՛: Քանզի որպէս յառաջն ասացի, եթէ ի սոսկականացս ոք էր, ոչ ոք արդեօք զքէն ամբաստան լինէր իբրև զդասալիք զինուորի: Իսկ այժմ դու չես տէր անձին քումմ, որ այնպիսումն զինուորեցար արքայի: Ո՛ի եթէ * կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն ‖ . ա . կոր . է . 4 . քանի՛ և առաւել՝ որք կեանն ի քա՛՝ չկոչեն առարք մարմնոյ իւրեանց: Որ այժմ անարգի, նոյն եղիցի յայնժամ գատաւորն:

Ո՛ սոյն զայս դու հանապազ ած զմտաւ քով. նաև զքեզն զայն հրեղէն. քանզի՝ * գետ հրոյ առ յարգեալ է անդր առաջի նորա ‖ . դան . է . 10 . քանզի զոր միանգամ մահանդ նա հրոյն այնմիկ, այնպիսուցն չի՛ք երբէք ակնկալութիւն վախճանի տանջանացն: Իսկ հեշտութիւնք առարատիպք կենցաղոյս այսորիկ ոչինչ ընդհատ են ի տառապեալ և յանդրջոյ. քանզի մինչդեռ ի կատարած ե-

կեալ մեղայն, չիջանին քաղցրութիք հեշտութին. իսկ ման նոցա տանջանքն՝ վախճան ոչ ունին: Ա. ու ժամ մայն է քաղցրութին, և յաւիտենական է անձկութին:

Ա. ղե դու ասա ինձ. զինչ հաստատուն կայցէ աշխարհի. թերևս մեծութիւնն, այն՝ որ բազում անգամ և ցերեկոյն չինայ. այլ թերևս փառքն. բայց դու լուր արդարոյ ումեմն՝ որ ասէ. * Ա. յլ իմ կեանք թեթևա պոյնք են քան զսուրհանդակ ‖. յոբ. ը. 25. քանզի նոքա մինչեւ կացեալ՝ սրանան, այսպէս և սոքա մինչեւ մերձ եկեալ՝ փախչին՝ ի բաց:

Վ. ան զհոգին չիք ինչ պատուականագոյն. և ոչ նոքին դարձեալ՝ որք զլեառին անմտութիւնն անմտացան՝ զայս անպիտացան երբեք. քանզի հոգւոյն չէ ինչ ըստ հաւասար, ասաց ոմն յարատաչնոց անտի քերթողացն: Վ. աղ իակ՝ ի վերայ հասեալ եմ, եթէ կարի տկարացեալ է քո առ՝ ի մարտ ընդդէմ չարին, ոչինչ անգէտ եմ՝ եթէ՝ ի մէջ անդր գեգերիս դու բոցոյ հեշտուեց: Ա. յլ եթէ երբեք ասասցես առ թշնամին, մեք զքոյին հեշտութիւդ պաշտեմք ոչ, և արմատոյ բոլորից չարեաց քոց երկիր ոչ պագանեմք. եթէ երբեք ամբարձցես՝ ի վեր զաչս քոյ, ՝ի բաց թօթափեսցի և արդ փրկիչն զբոյդ առ՝ ի քէն. և զորս՝ ի հուր անդր արկին զքեզ, այրեսցե. իսկ քեզ գլխովին՝ ի մէջ հնոցիդ առաքեսցէ ամպ և ցօղ, և փչումն հողմոյ, որպէս զի և ոչ՝ ի խորհուրդս քո անգամ և ոչ՝ ի գիտակցութիւն մնայ քոց մերձեսցի հուրն, միայն եթէ ոչ դու անձամբ զանձնդ այրեսցես:

Վ. անզի զքաղաքս ամրացեալս բազում անգամ զինք և մինչեւնայք արտաքոյ պաշարողացն ոչինչ զօրեցին ըմբռնել. իսկ մանաւանդ միոյ և կամ երկուց ումանոց՝ ի ներքս անդ բնակացն քաղաքացեաց՝ անաշխատ եւտուն՝ ի ձեռս թշնամեացն: Ա. այժմ եթէ ոչինչ՝ ի ներքնոցն քոց խորհրդոց զքեզ մատնեսցէ, թէպէտ և քիւրս ինչ արտաքոյ մինչեւնայս զքեզ կանգնեսցէ, չարն, ՝ի զուր լարեսցէ:

Ե. Վազումն քեզ ունիս ընտրհաւքն ով ախտակիցս և մեծամեծս, որ և զքեզն քաջալերին, որք և վասն հոգւոյդ քոյ զդողանի հարեալ էն, զորն ասեմ ով զվարճիս, և զնորուն առնելին հանդուգնատիպ զեղծարին

զիլորենտիոս . և զքեզ իմաստութիւնն իմաստնացեալն պորփիւրիոս , և զայլս ևս բազումս : Արդ ամենեքեան հանապազօր կանխեալք ՚ի սուգ , անդուլ են յաղօթից իւրեանց , և արդեօք ՚ի վաղուց հետէ հանդիպեալ էր նոցա իւրեանց խնդրոյն , եթէ գէթ վայրիկ մի քո մեկնեալ էր զերծանել զքեզ ՚ի ձեռաց թշնամւոյն :

Այլ արդ զիա՞րդ տարադէպ ա՛չ էցէ , եթէ այլք ոմանք և ա՛չ այժմ յուսահատ եղեալք ՚ի քումդ փրկութիւն , հանապազօր կանխեն յաղօթս , զի զիւրեանց անդամն ժողովեսցեն լինքեանս . իսկ դու միանգամ անկեալ՝ ա՛լևս կամեսցիս յառնել ՚ի վեր , այլ անկեալ մնալ , և զոգեաս զայս օրինակ խրախոյս բառնալ առ թշնամին , եթէ՝ սպան , հար . մի՛ խնայեր : * Այ՝եթէ ոք գլորին ո՞չ յառնիցէ ‖ . ԵԲՆ . Ը . 4 . ածայինն կնքէ պատգամ . իսկ դու ընդդէմ մնալա յարդարես այսմ , և զհաւատն բարբառիս : Վասն՚զի յուսահատութիւն անկեալն ա՛չ զայլ ինչ ասէ , քան եթէ՝ ոք գլորին ա՛չ յարիցէ . մի՛ աղաչեմ , մի՛ այդպէսի անիրաւիւր յանձն քո . և մի՛ մեզ այդպէսի յաւելուած ցուս : Այ՛ այժմ ինչ ասեմ , յորժամ չև ևս քանամակայ եղեալ է քո . այլ եթէպէտ և բազում էին ամք կենացդ քոց , և զամենայն գկեանս քո կեցեալ ՚ի քէ , և ՚ի ծերութիւնէ պարարտութիւնէ կրեալ ՚ի կրից ասեն , և ա՛չ յայնժամ իրաւացի ինչ էր յուսահատելդ քո . այլ յուշի պարտ էր ունել զաւազակին՝ որ ՚ի խաչին արդարացաւ , և զՀնչական գմեռտասանեւորդ ժամուն՝ որ զողջոյն առուին ընկալան գվարձն :

Այլ զորօրինակ ա՛չ բարւոք գործեն նոքա՝ որք ՚ի վերջինս կենացդ իւրեանց անկեալք՝ յուսահատ լինին յուղղութենէ անձանց , նոյնպէս և ա՛չ անեղկևան ինչ է ՚ի քոյ այսպիսի ապաստան լինել և ասել , եթէ աստէն ՚ի կեանս իմ գրգեցից զանձն ՚ի հեշտութիւնս կենցաղոյս , իսկ ապա խուն մի ժամանակ աշխատութիւն յանձն առեալ , զանվանգակ ժամանակին ժառանգեցից զվարձն : Այ՛ քանզի յիշեմ ես ասել քեզ բազում անգամ , յորժամ բազումք քեզ յորդոր լինէին յաձախել յուսումնարանս . իսկ զի՞նչ ապա , եթէ ՚ի կարճոյ վնաս լուցեմ չարեաք զկեանս . և զիա՞րդ ապա յանդիման եղեալ ասողին , * մի՛ յապաղիցես դառնալ առ տէր . և մի՛ յերկարեսցես օր յօրէ ‖ : Զդոյն խորհուրդ միւսանգամ

ստացիր դու, և կապեա զդողն. քանզի այսպէս ուրեմն կոչէ քո զերս մեր ի կենաց աստի, իբրև զի ի վերայ հասանէ այնոցիկ՝ որք ոչն գիտեն:

Օ մտաւ քո ած զվարանս հոգւոց կենացս այսոցիկ, որք անձին առանձին են, և որք դարձեալ հասարակաց ամենեցուն, զահ իշխանացն, զբարակնուքի քաղաքացեացն, զվտանգս՝ որ բազում անգամ յոգիս առնեն ապաստան, զվաստակս, զաղետս հիւանդութեանն, զմարդահաճութիս ծառայականս, որ և ստրկաց անգամ առաքինեաց անվայելչականք իցեն, զպտուղ աշխատութեանցն աստէն ապառել, քան զոր զինչ և այլ կայցէ երբեք առաւել դառնապոյն. իսկ բազումք այն են՝ որք և ոչ յաջողեցան վայելել ի պտուղ աշխատութեանցն, այլ ի քէրան և ի վտանգս ծախեալ զառաջինն հասակն, այնինչ ակն ունէին վայելել ի վարձան, մեկնեցան աստի՝ ոչինչ տարեալք ընդ իւրեանս: Օ ի եթէ ի թագաւորս յայս երկրաւոր, թէպէտ և ի բազում վտանգս որք վտանգեալ իցէ, թէպէտ և զբազում պատերազմունս մղեալ իցէ, հապճու իշխեացէ որք համարձակութիւն հայիլ ի նա, զիարդ ապա որք յերկնաւորն այն բաւական իցէ ամբառնալ զակն, որ զամենայն ժամանակն այլում եկաց և այլում զինուորեցաւ:

Կամիցի՞ թերևս զի և զառանին հոգւոցն խօսեցայց ընդ քեզ, զկնոջն, զմանկանցն, զծառայիցն: Կաժնդակ է յաղքատաց ածել կին, դժնդակ է և յընչեզաց անտի. քանզի մին ընտանեկար է գոյիցն, իսկ միւսն իշխանութիւն և ազատուճ առն: Տագնապ է ունել մանկունս, առաւել ևս տագնապ է ոչ ունելն. քանզի ի միւսմն ի դերևս ելանէ ամուսնութիւնն, իսկ միւսն ի ներքոյ պրաւի դառնապէս ծառայութիւն: Կխտացաւմանուկն, ոչ փոքր ինչ է ահն. գնաց մեկնեցաւ տաքաժամ, սուգ է անմխիթար. և ըստ իւրաքանչիւր հասակի նոցա զանազանեալ են հոգք վասն նոցա, և երկիւղն և վաստակքն: Օ ինչ պարտ իցէ ասել յաղագս ծառայիցն տմարդութիւնէ: Կու արդ միթէ այս հեաձնք ինչ իցեն, ոչ թէպէտ, յորժամ ոչ հոգին յայնքանս բաժանի, այնքանեաց ծառայ, այնքանեաց կեայ, իսկ իւրաքանչիւր անձին քնաւ ամենևին ոչ:

Կինչ յայտնեաց ստոյգ աստ առ մեզ ոչ ոք ոչ կարէ.

և զքեզ լինքն կոչեմ՝ ի վկայ։ Վասնզի յորժամ զսա
կաւն զայն ժամանակ՝ յորում՝ ի յալեաց աստէ կամե-
ցար՝ ի վեր ամբառնալ, գիտես իսկ դու եթէ՝ ի քանի՛
քերկրութենէ վայելչէր և՝ ի խնդութենէ։ Վասնզի ո՛չ ոք
է ապատ, բայց որ՝ ի քէ կեայ. այնպիսին՝ ի վեր է քան
զամենայն դժնդակս, և եթէ անձամբ յանձն չկամեա-
ցի անիրաւել, երբեք զնա ո՛չ ոք կարասցէ զրկել, այլ
անըմբռնելի կայ Ճնայ, և ո՛չ՝ ի տուգանս լինչ գոյից
ջարչարի. քանզի՝ ի վերայ հասեալ գիտէ, եթէ ո՛չինչ
բերաք յաշխարհս յայս, և ո՛չ տանել լինչ կարասցուք.
ո՛չ՝ ի ցանկութիւն լինչ ըմբռնի պատուասիրութենէ կամ
փառաց, քանզի գիտէ՝ եթէ քաղաքավարութիւն մեր
յերկինս է. ո՛չ՝ ի թշնամանս ոք զնա տրտմեցուցանէ,
և ո՛չ՝ ի հարուածս՝ ի սրտմտութի՛ շարժէ։ Ա՛ի միայն
է քրիստոնէին աղէտք, զայրացուցանել զնա՛ծ. իսկ զայլն
ամենայն, եթէ կորուստ իցէ ընչից, եթէ նժդեհումն
՝ի հայրենեացն, եթէ վերջինք՝ ի վտանգացն, և ո՛չ՝ ի
դժնդակաց լինչ մասին համարի զնոսա։ Յորմէ ամե-
նեքին զարհուրելք են, զեր սաեմ յաստեացս՝ ի
հանդերձեալն, այն նմա քաղցրագոյն և ս է քան ըզ-
կեանս։ Վասնզի զորօրինակ եթէ ոք՝ ի բարձրամուր
ժայռին ելեալ նստիցի տեսանել զծովն՝ և զոր՝ ի նմա
նաւարկեալք գնան, և ուրեք զի կէսք՝ ի կոհակաց ան-
ւո՛ր անդնդասոյզք լինիցին, և կէսք՝ ի վէմս ծածուկս
երթեալք ընդհարցին. իսկ կէսք դարձեալ՝ ուրեք դէմ
եդեալք և այլուր վարեալք իբրև զկապեալս ոմանս՝
բռնութի՛ հողմոյն, և բազումք այն էին, որ ընդ ա-
լեօքն ծածկէին. կէսք փոխանակ ընդ նաւուն և ընդ
զեկին զնուրեանց բազումն միայն՝ ի գործ արկեալք,
և բազումք՝ ի վերայ միոյ տախտակի կամ՝ ի բեկորս
ինչ նաւուն ածեալք բերէին. իսկ կէսք դարձեալ
դիակնացեալք՝ զերեսօք ջուրցն լուղէին, բազմօրինակ
և անբաւ տարակուսանաց են աղէտքն. այսպէս և որ
քան զինուորեալն է՝ ի կենցաղոյս խռովութենէն և յա-
լեացն անձնապուր եղեալ՝ յանդորրն և՝ ի քարձու վայ-
րէն անցեալ նստի։ Վասնզի զինչ և աւաւել աներկ-
կեան և վեհագոյն, քան զմի ունել հոգի,* որպէս պարտ
էցէ հաճոյ լինել Նմա ‖ . ա . ընե . է . 1։

Տեսեր թէոդորէ զնաւաբեկութի՝ որոց ընդ ծուխս

ընդ այս նաւարկեն ։ Ա ման որոյ ազաչեմ փախիր յանդն դոցա , տեղի տուր յալեայն . և կաղ քեզ վայր բարձրա գահ , ուստի ոչինչ ունիցին յափշտակել ունել զքեզ . յարուածէ գոյ , դատաստան գոյ , ատեան ահաւոր՝ յորժամ աստի ելանիցեմք՝ մեզ սպասեալ ինայ . * ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աստենին քրի ‖ . Ե . կոր . Ե . 10 ։ Ա՛ի զուր ինչ սպառնացաւ գեհեան , ոչ ընդ վայր այնչափ հանդերձեցան բարիք ։

Ա տուեր , և քան զտուեր ոչեք են կենցաղոյս իրք , բազում երկիւղիւ լի , բազմապատիկ վտանգօք , և վերջին ծառայութիւն ։ Նմպա դու մի երբեք տուժեսցիս յաստիսս և ՚ի յաւիտենականն , քանզի մարթ է քեզ և զերկաքանչիւրն զբռւամբ ածել՝ եթէ կամեսցիս ։ Ասէ թէ որք ՚ի քո կեան , նորա և զաստեացս ստացեալ ունին՝ ուսուցանէ քեզ պատգոս ասելով . * Ա.յլ ես խնայեցի ՚ի ձեզ ‖ . ա . կոր . Ե . 28 . և զարձեալ , * այլ զայս ինն ձերոյ օգտի ասեմ ‖ . ա . կոր . Ե . 35 ։ Ցեսանէս , զի որ զտեառն հոգայ , նա և յաշխարհի աստ ՚ի վեր է քան զամենայնայեսին ։ Ա՛ր աստի անդր գնայ , նմա ա պաշխարութիւն ոչ գոյ ։ Ա՛խոյեան չէք ուրեք՝ որ յաս պարիզ անտի ՚ի դուրս ելեալ՝ զբրեսցէ երբեք զմնարտ յարդարել , քանզի արձակեալ է տեսարանն ։

Օգոյն հանապազ խորհեաց դու . և զսուր սուսեր փշրեա՛ զբարին , որով սպան զբազումս , այս է յուսահատութիւն , որ ՚ի սրտէ անկեալոյն հատանէ կտրէ ցյոյսն . այս է թշնամւոյն զէնն զօրաւոր . և զորս միանգամ ըմբռնէ , ոչ այլով իւիք ունի , բայց սոյնիւն կաշկանդեալ կապանօք . և եթէ մեզ կամք իցեն , չնորհօքն ՚ոյ՝ վաղվաղակի կարող լիցուք խզել զնոսա ։

Վ.խտեմ և ես եթէ ըստ թզթոյ չափն արտաքս ելի . այլ ներեա՛ ինձ , քանզի ոչ կամաւ գործեցի զայդ , այլ ՚ի սիրոյն բռնութէ ձգեալ՝ միանգամայն և ՚ի ցաւոյն . որ և զթուղթս զայս՝ ստիպեաց զանձն իմ ՚ի գրել . թէ պէտ և բազումք այն էին՝ որ զնոսն խափանէին ասելով առ իս , Թո՛ղ անդր ՚ի բաց զնախավաստակ աքնութիդ , և զսերմանէդն ՚ի վէմն ։ Ասկ ես և ոչ ուժք ՚ի նոցանէ մնատուցի ունին . քանզի գոյ յոյս , ասէի ես յիմ միտս , եթէ կամքն ՚ոյ օգուտ ինչ գործեսցեն գրեալքն ։ Ասկ եթէ երբէք պատահեսցէ այն ինչ՝ զոր ոչն կամիմք ,

գ՚ել զայս ինչ շահեսցուք մեք , զի մի լռութիւնս մեր այս՝ մեզ ՚ի բամբասանս ինչ եղիցի . և ո՛չ վատթարա գոյնք ինչ գտանիցիմք քան զծուլսկնացան , որք յորժամ զնուբեանց համարուեսան յահն արկանիցեն , զի ՚ի հող մոյն բռնութենէ և ՚ի կոհակացն քակեալ նաւուն , ՚ի վերայ տախտակացն վարեալք բերիցին , զառագաստն ամիոփեն , և զնարխասն ձգեն . և ՚ի կուր անդր իջ ջեալ՝ զանծանօթ մարդիկն՝ զծանօթացեալսն միայն յայգէից անտի , գան գործեն ապրեցուցանել . իսկ եթէ երբէք նոքա ո՛չինչ կամեսցին , ո՛չ ոք արդեօք մեզ զադիր լնցի նոցա՝ զի ՚ի կորստեհնէ անտի զանացան փրկել զնոսա :

Այլ ինչ առ ՚ի մէնջ է՝ այսչափ է . այլ յոյս մի այն պիսի ունիմք , եթէ հնարհաքն ՚ոյ , և դու ինքնին որ չափ ինչ առ ՚ի քէն է՝ ՚ի գէմն ընծայեցուսցես մեզ . և դարձեալ տեսցուք զքեզ նագելի ՚ի հօտն քեզ , առողջացեալ ձէմարիա քաջողջութէն , և մերձ ընդ մերձ ժո ղովուսցուք մեք զքեզ ազօթիւք ՚որցն , ո՛վ սիրեցեալդ գլուխ : Այլ եթէ առ քեզ համարեսցիս ինչ զմեզ , և գլռովին ՚ի քումդ չիշատակէ ո՛չ մերժեսցես զմեզ , հա՛ ձեսցիս և դու փոխարէն գրել առ մեզ , քանզի դովին մեծապէս քեզ կերկրեցուսցես զմեզ :

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԿՈՒՍՈՒԹԵԱՆ

Ո՛չնչաբոխիկ և զգերահաչակ ընդ ամենայն մատեանս գիտնասէր բաց զԳիրս Կուսուածէ յանտիոք արձանագրեաց Ոսկեբերանն։ Վկայէ այսմ և ինքն ՚ի վերնագրի ժէ ճառին ՚ի Թղթ. ա. առ Կորնթ. ասելով՝ Եթէ * Ոչ ոք զայն իսկ գիրս պրեցաք մեք յայս տեղի ։ այսինքն, ՚ի բանն, բարւոք է մարդոյ ՚ի կին մարդ չմերձենալ, և այլն։ Եւ արդ՝ քանզի աներկբայաբար գիտեմք, զի մեկնութիւնդ այդ յանտիոք արձակ նագրեցաւ Ոսկեբերանէ, ապա և այս գիրք նորա յաղագս կուսուէ. Եւ եթէ այս այսպէս, ապա յոչնչ համարելի են կարծիքն Տիլլէմոնի տեայ՝ որ ՚ի ընչինս յեցեալ կարծէ՝ եթէ յեպիսկոպոսութենէ անդ իւրում ՚ի կոստանդնուպոլիս գրեաց զգիրս Ոսկեբերան։

Ապա կամ յանտիոք ՚ի քաղաքին արձանացոյց զայս ՚ի գիր, կամ Թերևս յանապատն անտիոքայ։ Իսկ Թէ արդեօք յորժամ քահանայ էր, և կամ սարկաւագ, և կամ յորժամ տակաւին ՚ի միայնութեան վարքեր կեանս, ոչինչ մարթ է ՚ի յանդիմանութենէ իրացս որսալ ինչ ՚ի բանից առի նորա. ուստի և ղժամանակ ամ՝ ոսկեղէն և ամենայն մասամբք կատարեալ գրոցս կուսութեան՝ ասել Ճչգրիտ ոչ ունիմք։ (Տպ. Մօնֆոք. Հա. Ա. երես 268. որ բաղդատեալ է ընդ միոյ ձեռագրի, և ընդ երկուց տպ. յոյն օրինակաց։)

ՍՐԲՈՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՕՍԿԵՐԵՐԱՆ

ՅԸՂԴՊՍ ԿՈՒՍՄՈՒԹԵՐՆ

Ա. Եվ փառաց կուսութեն՝ ի բաց գարշին հրեայք. և չեն ինչ զարմանք, որք և զնա ինքն զկուսածին քո անարգեցին։ Զարմանան հելլենացիք և յափշտակեն հարկանին. միայն եկեղեցի այդ նախանձաւոր է նմա։ Վասնզի հերետիկոսացն կուսանք՝ երբեք չասեմ ես՝ եթէ կոյսք իցեն. առաջինն՝ զի ոչ սուրբ են. քանզի չեն խօսեալ առն միւսմ, ըստ որում ինդրէ երանելին այն հարսնածուն քոյր, ասելով. * Յօսեցայ զձեզ առն միւսմ իբրև զկոյս ի սրբ յանգիման կացուցանել քոյր ‖ Բ. Կոր. Ժա. 2։ Վասնզի թէպէտ և յաղագս բովանդակ լսութեան եկեղեցւոյ ասացաւ այդ, այլ սակայն և զնոսա ես՝ ի ներքս առնու փակէ բանդ։ Յե արդ՝ որք միով արամբ չիցեն շատացեալք, և ՚ծ զսին այլ՝ որ ոչ է՝ առեալ՝ ի ներքս մուծանիցեն, զիա՞րդ երբեք նոքա սրբք իցեն. ապա առաջինն վասն քանիս այսորիկ կոյս ոչ են նոքա։

Յոկ երկրորդ՝ զի անարգելով զամուսնութեն, այն պէս ապա հրաժեշտ տան ՚ի հարսանեաց. և քանզի օրինադրեցին, եթէ չար է գործդ, նորին վասն և կանուխ կապտեցին յանձանց զմրցանակս կուսութեան։ Վասնզի որք միանգամ հրաժեշտ տան ՚ի վաթսար գործոց, զնոսա ոչ եթէ պսակել արժան ինչ իցէ, այլ միայն ոչ պատուհասել։ Յե է տեսանել զայս այսպէս օրինադրեալ ոչ ՚ի մեր օրէնս միայն, այլ և յարտաքնոցն։ Ալր սպանանէն, ասէ, սպանցի. այլ ոչ գարձեալ և ՚ի վերայ ածէ, եթէ՝ որ ոչն սպանանէ, պատուհաս

ցի ։ Ոչ գողանայն , պատժեսցի . այլ ոչ՝ և որ ոչ յափշտակէ զօտարինն , պարգևս երբեք տալ նմա հրամայեցին օրէնք . և որք մեհու մնտանեն զընացողն , երբեք պատուոյ արժանի ոչ համարեցան զնա՝ որ ոչ պղծեաց զայլոց անկողինս ։

Այլ կարի խակ քաջ . քանզի գովութիւնք և զարմանք նոցա են՝ որք ի բարիսն նահատակեցան , և ոչ որք ի չարեացն խոտորեցան . քանզի շատ խակ է նոցա պատիւդ այդ , զի ոչ անկանին ընդ պատուհասիւք ։ Յա զաս այսորիկ և տէրն մեր , այնմ՝ որ ի նանիր և տա բապարտուց բարկանայ եղբօր իւրում և մերս կոչէ , գեհենի սպառնացաւ . այլ ոչ գարձեալ և զարքայութիւնն երկնից երբեք խոստացաւ նոցա՝ որք ոչ բարկասցին տարապարտուց և ի բաց կացցեն ի թշնամանաց . այլ այլ ինն խնդրեաց առաւել քան զայդ և վեհագոյն , ա սելով . * Սիրեցէք զթշնամիս ձեր ‖ . Տղ . Է . 22 . 44 ։ Այս կամելով ցուցանել զայն , եթէ զիարդ կարի դուշ նաքեաց է և անարգ և ոչ մի ինչ պատուոյ արժանի՝ ոչ առնէն զեղբարս , և կարգեալ եդեալ զայն ինչ՝ որ յոյժ առաւել է քան զդոյն՝ սերտիւ սիրել զնոսա , նաև ոչ զայս գարձեալ բաւական ինչ ասաց մեզ ի ժառանգութիւն պատուոյ իմիք . քանզի զիարդ այս , յորժամ ոչինչ առելի ունիցիմք մեք գովաւ քան զհեթանոս գլխովին ։ Այս ուրեմն այլ ինն կարի վեհագոյն յաւելուածոյ պէտք են մեզ , եթէ զհետ մնեալ եմք ի խնդիր վարձուն ։

Վասնզի ոչ՝ որովհետև ոչ դատապարտեմ ասէ զքեզ ի գեհեան անդր , որ ի բաց կացեր ի թշնամանաց և ի բարկութիւն ընդդէմ եղբօրդ , վասն այնորիկ և պատ կաց ինչ արժանի համարեսցիս դու զքեզ ։ Վասնզի ոչ այդչափ միայն մարգասիրութեան չափ խնդրեմ ես ի քէն . այլ թէպէտ և ոչինչ թշնամանեսցես դու զնա , և ասասցես ևս սիրել զնա , տակաւին գտանաքարշ ես և ի մեքսաւորաց կարգ հաստատես զանձն քո ։ Այլ եթէ կամիս կատարեալ լինել և երկնից արժանաւոր , ոչ ցայդ վայր միայն զտեղի կալցես . այլ բարձրագոյն ևս ել ի վեր . և խորհուրդ ինն առ ընկալ դու զնոսա թէդ այդմիկ վեհագոյն . և է այս , սիրել զթշնամիան ։

Այս արդ՝ քանզի ամենայն ուսմունք միանգամայն խոս-

տովանեալ է մեզ բանս, դադարեսցէն հերետիկոսք ի վայրապար նեղելոյ զանձինս իւրեանց. քանզի ոչինչ առցեն երբէք վարձ. ոչ զի անիրաւ ինչ է տէր, ի քաց տար, այլ զի տգէտք են նոքա և վատթարք: Այս զիարդ. քանզի յայտնութիւ ի դէմս ածաք, եթէ միայն վանն ի վատթար գործոցն խոտորելոյ չիք ինչ պատրաստեալ պարգև. իսկ դոքա վատթար զամբանութիւնն կարծեալ՝ այնպէս հրաժարեցան ի նմանէ: Օ՛իարդ ապա վանն հրաժեշտ տալոյ ի վատթարացն երբէք զօրեացն դոքա պահանջել վարձս. քանզի որպէս մեք ի պատճառս ոչ չնալոյն՝ ոչ լինիմք արժանի պակաց, այսպէս և ոչ նոքա ի պատճառս ոչ ածելոյ կիցն:

Վանզի այսպէս խօսեսցի ընդ նոսա՝ որ յայնմ աւուր դատելոցն է զմեզ. ես պատիւս երբէք ոչ սահմանեցի վանն նոցա՝ որք ի չարեաց միայն խոտորեսցին. քանզի առ իս դուշաքեայ ինչ է այդ. այլ որք միանգամ առնային առաքինութեան գէտ կրթեալ իցեն, զնոսա ա ռեալ մուծանեմ յանծերանալի ժառանգութիւնն երկնից: Այրդ զիարդ դուք՝ որ պիղծ և անաւրէն կարծէք զամբանութիւն, վանն հրաժեշտ տալոյ յանսրբոցն՝ խնդրէք ձեզ մըցանակս՝ որ պատրաստեալ են բարեգործ նահատակացն: Վանզի վանն այսորիկ և զօդիսն յաջմէ կացուցանէ և գովաբանէ և յարքայութիւնն ժողովէ. ոչ զի ոչ յափշտակեցին զօտարինն, այլ զի և զիւրեանցն բաշխեցին այլոց. գովէ և զնա՝ որում գէնդ քանքարն հաւատացեալ էր, ոչ զի ոչ նուաղեցոյց, այլ զի յարգեաց զտուեալն, և կրկնապատիկ անդրէն դարձոյց զաւանդն:

Այսպա ցէ՞րբ իցէ այդ ձեզ ընդունայն ընթանալ, և ընդունայն վաստակել, և ի նանիր մըցիլ և գՀողմն կոծել. այլ երանի թէ և ի նանիր միայն. քանզի և ոչ դուշաքեայ ինչ իցեն տանջանքն, յորժամ որք միանգամ բազումն վաստակեցան, և մեծագունին և քան զվաստակն ակն կալան յաղթանակոց, ի ժամանակի տնդ պատուոյն ընդ անպատիւն դասեսցին:

Ը. Այս այժմ ոչ այս միայն է ի դժնդակայն, և ոչ ցայս վայր են տուգանք նոցա՝ զի չշահին ինչ երբէք. այլ և այլ ինչ կարի դժնդակագոյնք քան զայդ գՀետ

յաջորդեսցեն. հուրն անշէջ, որդն անմահ, խաւարն արտաքին, վիշտք, անձկութիւն։ Այլ ինչ ալ և բիւրուց մեզ պէտք իցեն բերանոց և զօրութեամբ հրեշտակաց, ալ բաւական իցեմք զարժանին շնորհակալութիւն յատուցանել՝ ոչ վասն առ մեզ խնամոցս այսոցիկ. նա՛ մանաւանդ և ոչ այնպէս բաւական ինչ իցեմք։ Ո՛չ քարդ. քանզի կուսութեն վաստակ մի է առ հասարակ մեզ և նոցա. այլ թերևս և նոցա կարի առաւել. իսկ պատուղ վաստակոցն ոչ մի. այլ նոցա կսպանք մնան և արտասուք և հեծութիւնք և անմահ տանջանք. իսկ մեզ՝ հրեշտակաց վիճակք և զամբարք լուսափայլք. և որ գլուխ է ամենայն բարեաց՝ կենդանիկ լինել փեսային։ Իսկ ընդհ՚որ բնաւ նոցուն վաստակոց հակառակք իցեն տրիտուրք. իբրև ալ ընտրեցին նոքա զկուսութիւնն՝ ալ օրհնս իմն սահմանեսցեն ծածկնոյն հակառակ օրհնաց. իսկ մեք պահեմք զայն՝ ալ զնորայն կատարեսցուք զկամս։

Վանալ զայն ինչ՝ եթէ կամ ՚ծ ալ ամենայն մարդիկ հրաժարեսցին յամուսնութէ, վկայէ նա՝ որ զքո ունէր յինքեան խօսող։ * Վանալ կամիմ, ասէ, եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս ‖. ա. կոր. է. 7. ՚ի ժուժկալութէ։ Վալ որ խնային ՚ի մեզ, և գիտէ եթէ հոգին յօժար է, բայց մարմինն տկար, ոչ ՚ի հարկ պատուիրանի առեալ կապեաց զանդ, այլ ընտրութէն նորա ՚ի մեզ ապաստան արար։ Վանալ եթէ պատուիրան ինչ էր և օրէնք, որք միանգամ զնոյն ուղղեցին, ոչինչ արգեօք վայելէին նոքա ՚ի պատիւն. այլ լսէին զայն ինչ, եթէ զոր պարտ էիքն առնել՝ արարէք. և ոչ դարձեալ՝ որք միանգամ անցանէին զնովաւ, թողուէ երբէք հանդիպէին. այլ զօրինազանցեցին տային ըզվրէժս։ Իսկ այժմ ասէլով, եթէ * որ կարողն է տանել, տարցէ ‖. մտթ. ժե. 12, զորս ոչ կարէին՝ ոչ դատապարտեաց. իսկ որք կարողն էին՝ զնոցայն մեծ և դժուարաբառնալի եղոյզ գոլ մըրցանս։ Վասն այսորիկ և պաւղոս զհետ ընթացեալ վարդապետին, ասէ. * Վալ վասն կուսանաց՝ հրաման ինչ ՚ի տեառնէ ոչ ունիմ, բայց խրատ տամ ‖. ա. կոր. է. 25։

ՃԻ. Բայց սակայն ոչ մարկիոնի և ոչ վաղենտինոս և

ոչ մանի՝ ոչ հանդարտեցին չափաւորութեդ այդմիկ. քանզի չունէին յանձինս զքո խօսող, այն՝ որ խնայեաց ի հօտն իւր և զանձն իւր եդ վասն նոցա. այլ զմաքդասականն զայն, զՀայրն ստուգեան։ Յաղագս որոյ և որք միանգամ հնազանդեալք անսային նոցա, կորուսին զնոսա ստ հասարակ. վաստակս իմն քրտանց անշահս և դժոխմբերս աստէն կապելով ի վերայ նոցա, և ան դանօր ապա ի հուրն գանձեալ նոցա՝ ի միասին ընդ իւրեանս քարշելով զնոսա։

Ե. Ա՛վ դուք և քան զՀելլենացիսն գլխովին՝ ևս թշուառականք։ Վասնզի հելլենացիք թէպէտ և զհէնոյն տանջանաց սպասեալք ինան, սակայն գէթ տանօր կթեն զՀեշտութէնն, վարեալ յամենատութիս և վայելելով յինչս և յայլ ևս բերկրանս յաւիտենից այսորիկ. իսկ ձեզ յերկաքանչիւրումն ևս տանջանք և վիշաք ինան. աստ կամայ, և անդ ակամայ։

Վասն պահոց և կուսութէ և ոչ մի ինչ վարձս հաւ տուսցէ ոք հելլենացւոյն, և ոչ դարձեալ տանջանս ի վերայ ածցէ. իսկ դուք որոց աղագաւ բիւրուց ակնկալ լեալ ինայք գովութէց, նոցին աղագաւ և զվէրջինն տայցէք զվրէժս. և լսիցէք ընդ այլոյն, եթէ * Լաւ թաչք լինէն ի հուրն յաւիտենական՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա ‖. Տե. է. 41. զի պահեցէք, զի կուսութէն յանձն առէք։ Վասնզի պահք և կուսութէն՝ սորա առանձինն ոչ բարիք ինչ էն և ոչ չարք. այլ յառաջադրութէնէ մնաց առնողացն զնոսա կատարին երկաքանչիւրքն։ Հելլենացւոյն անպատուղ է առաքինութիւն այդպիսի, քանզի վրիպեալք են ի վարձուց իւրեանց, զի ոչ ահիւն ոյ մերձին ի նա. իսկ դուք զի ածամնարտք գտանիք և բամբասանք զգործս նո րա, ոչ միայն ի վարձուցն ձերոյ անմասն ելանիցէք, այլ և տանջեսջիք։

Լթէ վասն վարդապետութէնն քան ինչ իցէ, ընդ նոսին հանդերձեալ է ձեր դասիլ. քանզի հաւասար ընդ նոսա զոր էնն ածծ ի բաց թողեալ, բազմաստուա ծութէ ի ներքս մուծիք. իսկ եթէ յաղագս քաղաքա վարութէ կենաց, նոքա լաւ ևս քան զձեզ յաջողեալք էն. քանզի նոցայն տուգանք ցայն վայր են՝ զի չառ-

նուն ինչ՝ ի բարեաց անտի. իսկ ձերն՝ կրել և՝ ի չարեացն. և նոցա մարթի եղև վայելել յամենայնն յաստի կենցաղս, իսկ դուք յերկաքանչիւրացն ևս վրխակեալ էք:

Արդեօք քան զպատուհասն զայն երբեք կայցէ՞ ինչ առաւել դժնդակ, ի վարձ վաստակոյն և քրտանցն աննուէր տանջանաց: Ո՞ նայողն և ընչաքաղցն և որ զօտարինն ուտէ, և զընկերինն յափշտակէ, ունին ինչ սիրափանն՝ Թէպէտ և ստակաժամանակեայ. ստակայն և ունին զայն ինչ՝ զի նոքիմբք տանջին, որովք աստանօր վայելեցին: Իսկ որ կամաւ աղքատութիւն յանձն առնու, զի անդանօր մեծասցի. և զկուսութեն վաստակն՝ զի անդանօր ընդ հրեշտակն պարեսցի, և ապա յանկարծակի և արտաքոյ ամենայն ակնկալութեն տանջանաց ընկալցի վասն այնոցիկ՝ որոց աղաղաւ՝ ի բիւր բարիս յուսայր վայելել, չէք և չէք հնար ասել՝ եթէ քանիսն արդեօք ցաւս ցաւեսցի նա՝ ի պատճառս անակնկալ տանջանացն: Արդեօք ես այնպէս համարիմ, եթէ զուգահաւասար որպէս՝ ի հրոյն յայնմանէ, և՝ ի մտացն խղձի խոշտանգեսցի այնպիսին, յորժամ երբեք զմտաւ ածցէ՝ եթէ որք զնոյն վաստակ վաստակեցին ընդ նմա, նոքա ընդ քեզ քաղաքավարին. իսկ ինքն՝ ի պատճառս այնոցիկ՝ որոց վասն նոքա յանթարգմանելի բարիսն վայելէն, նա զվերջին վրէժս լուծանէ. և որ՝ ի պարկեշտութեէ վարեայ կեանս՝ քան զանժուժկալսն և քան զցանկասէրսն առաւել ևս դժնդակ տանջեսցի:

Ե. Արդեօք ժուժկալութիւն հերետիկոսացդ վատթարագոյն ևս է քան զամենայն տուփանս: Արդեօք այս մինչև՝ ի մարդիկ ածէ հասուցանել զանիրաւութիւն. իսկ այն ընդդէմ՝ յարդարէ մարտ, և զանասհմանն ի մնաստութեէն զայն թէնամանէ:

Այսպիսի թակարթս իւրոցն պաշտօնէից լարեաց սատանայ. քանզի եթէ կուսութիւն հերետիկոսացդ ձշգրիտ նորուն չարարուեստ հնարիցն է գիւտ, ո՛չ ես ինչ ասեմ զայդ, այլ որ՝ ի վերայ հասեալ իսկ եր խորհրդոց նորա: Ո՞ ինչ ապա ասէ նա. * Արդ հոգին յաբ յայտնապէս ասէ, թէ՝ ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք՝ ի հաւատոցն. և հայեսցին յայս մոլորութէ, և՝ ի վարդապետութէիս դիւաց, կեղծաւորութէ

ստաքանք. խարեալք իւրեանց խղճիւն մնաց. որ աք-
գելուցուն յամուանանալոյ, և մեկնիցեն 'ի կերակրոց՝
զոր ած հաստատեաց 'ի վայելել ‖ ա. տիմ. դ. ւ: Զդգ
զնարդ կոյս երբեք եղիցի՝ որ 'ի հաւատոցն քակեսցի,
որ 'ի մոլորութիւն հայեսցի, որ դիւացն հնազանդես-
ցի, և որ զատութիւն պատուեսցէ: Իսկ զնարդ բնաւ
երբեք կոյս իցէ, որ խղճիւն մնաց խարեալ իցէ. քան-
զի կուսին ոչ մարմնոյ միայն մաքրութեան պէտք են,
այլ և հոգւոյ. որպէս զի և զքեզն զայն հանդերձեալ է
ընդունել փեսայ. իսկ հոգի այսքանեաք խարեալ՝ մա-
քուր զնարդ իցէ երբեք: Օ՛ի եթէ՝ և զամենայն զգ-
կենցաղականն 'ի բաց դնել պարտ է զհոգս 'ի հարս
նարանէ աստի, իբրև զի անմարթ իցէ նոքիմբք զար-
դարել հոգւոյն, զնարդ ապա՝ եթէ խորհուրդ ամբարշ-
աւութիւն 'ի ներքոյս անդ յածեսցի, երբեք բաւական իցէ
անգրժելի պահել զգեղ կուսութեն:

Ջ. Վանդի թէպէտ և մարմին նորա անշաղախ է-
ցէ, այլ սակայն պատուականագոյն մանկն ապականեալ
է, խորհուրդք հոգւոյն: Զդ՝ զինչ օգուտ իցէ, եթէ
'ի հիմնայատակ քակել տաճարին՝ կանգուն կացցեն
պատուարքն. կամ ո՞ր շահ իցէ՝ եթէ աղտեղութիւք
լցցէ աթոռն, և մաքուր կայցէ տեղի աթոռոյն. թէ-
պէտ և ոչ այնպէս ապատ ինչ է 'ի քծից անտի. քանզի
հայհոյութիւն և խօսք զազրութիւն յորժամ 'ի ներքոս անդ
յղանան, երբեք նոքա ոչ կան մնան 'ի ներքոս 'ի հոգի
անդը, այլ և զլեզուն գլխովին պղծեն 'ի ձեռն յա-
ռաջաբերութիւն բերանոյն. և զականջն պղծեն 'ի ձեռն
լսելութեն. և իբրև դեղս ինն թունաւորեցս անկեալ 'ի
հոգի անդը, քան զամենայն ցեց գժնդակ և կրծեն
զարմատն, և նոքաւ հանդերձ ապականեն այնուհետև
և ողջոյն զմարմինն: Այս ուրեմն եթէ կուսութեան
սահման այն է, զի իցէ՞ բե առ հասարակ հոգւով և
մարմնով. իսկ որ երկաքանչիւր և մասամբքն գարշ
իցէ և անմաքուր, զնարդ երբեք կարասցէ այնպիսին
կոյս լինել:

Այլ զպատկեր դիմացն ցուցանէ ինձ դեղնեալ, և
զանդամն հիւծեալ, և զպատմուճանն՝ անարգ, և զը-
հայեցուածն՝ հեզ: Այս բնաւ իսկ ամենևին զինչ այն

օգուտ իցէ ինձ, յորժամ առ՝ ի ներքս աչքն ժպիրհ լ-
ցէ. քանզի զինչ քան զՀայեցուածն զայն առաւել
ժպիրհ կայցէ երբէք, որ և զարտաքին աչսն հրապու-
րեալ հաւանեցուցանէ՝ իբրև՝ ի վտիճարս ոմանս հայ-
ել յարարածս ոչ։ * Ա՛մենայն փառք դատեր Թագաւո-
րի՝ ի ներքոյ ‖. սղմ. խբ. 14։ Այսպէս սա բովանդակ զբա-
նին կարգ վերը՝ ի վայր առնէ. արտաքոյ զփառան զգե-
նու, և՝ ի ներքոյ ամենայն անպատուութիւնքն վարակի։

Վանզի դժնդակ է այս, եթէ առ մարդիկ քաղցր
պարկեշտութիւն՝ ի դէմն իւր բարձեալ բերիցէ, և առ
Ած արարիչ իւր մոլեգնութիւն բազմաւ վարեսցի. և որ
հայել անգամ ոչ հանդարտեսցի յայր ոք, (սակայն ե-
թէ և իցեն՝ ի նոսա այսպիսիք ոմանք), նա առ մարդ-
կան աերն հայեսցի աչօք լըբութիւն, և զապիրատութիւն
՝ի բարձունս խօսեսցի։ Կոցա՝ ի գոյն տօսախի են ե-
րեսք, և հանգուցատիպ մեռելոյ։ Վանզի վասն այնո-
րիկ և արտասուաց և ողբոց բազմաց արժանիք են, զի
ոչ ընդունայն ինչ միայն, այլ և հակառակ և՝ ի կո-
րուստ գլխոյ իւրեանց յանձն առին զայդչափ թշուա-
ռութիւնդ։

Է. Գնարգ է պատմուճանն. այլ սակայն ոչ՝ ի հան-
դերձս ինչ է կուսութիւն, և ոչ յերանգս գունոց, այլ
՝ի մարմնի և՝ ի հոգւոյ։ Վանզի զնարդ չիցէ անտեղի,
եթէ զայր փիլիսոփայ ոչ՝ ի վարսից ինչ հերացն փոր-
ձեսցուք մեք և ոչ՝ ի ցոլոյն և ոչ՝ ի քաձկունէն, այլ՝ ի
վարուցն և՝ ի հոգւոյն. և զողբականն դարձեալ ոչ՝ ի
քղամդէն և կամ՝ ի կամարէն, այլ՝ ի կորովութենէն
և յարիութէն. իսկ ապա զկոյսն, այն՝ որ աքանչելին
է և ամենայն մարդկայնոցս վերագոյն, ՝ի պատճառս
խռուացելոց հերացն, և անկանելոց երեսացն և գորշ
հանդերձին, այնպէս վայրապար և վեր՝ ի վերոյ ընդ
առաքինիս ոմանս դասեսցուք. և ոչ բացեալ մերկա-
ցեալ զՀոգի նորա, ՝ի նմա ձիգ-ցուիս խուզեսցուք ըզ-
կեանս նորա։

Այլ սակայն որ զնահատակութեես այսորիկ սահմա-
նեաց զօրէնսն, զայդ երբէք չառնու յանձն. քանզի
զորս միանգամ յայդ մըցանս առեալ միեն զանձինս,
զնոսա ոչ՝ ի հանդերձին՝ այլ՝ ի վարդապետութենէն և

'ի հոգւոյն հրամայէ փորձել։ * Վասնզի ամենայն որ պատերազմի, ասէ, ամենայնի ժուժկալ լինի ‖ ա. կոր. թ. 25. ամենայնի՝ որ զբաջողջուԹիւն հոգւոյն խանգաղիցէ. և * ոչ ոք պսակի, եԹէ ոչ ըստ օրինին մարտիցի ‖ Բ. տիմ. Բ. 5։ Որ այն ապա իցէն օրինաւք նահատակուԹեանս այսորիկ, լաւր դարձեալ նմա՝ որ ասէ, մանաւանդ եԹէ՝ որ 'ի ձեռն նորա զմիջանս զայս յարդարեաց՝ քան։ * Նա կոյն՝ զի իցէ՞ որ հոգւով և մարմնով ‖ ա. կոր. Է. 34. և դարձեալ։ * Պատուական է ամենանուԹիւն, և որ անկողին ‖ եբր. ԺԳ. 4։

Ը. Եսկ առ իս զինչ այն իցէ, ասէ, որ բազում բաբեաւ ինալ ասացի ամենանուԹեանն։ Վասնզի դա այդ գործէ, հին և Թշուառական անձն, դա կորոյս գործէ, զի համարիս՝ եԹէ և ոչ մի ինչ հաղորդուԹիւն է քո ընդ վարդապետուԹեդ ընդ այդմիկ։ Նա վասն այնորիկ ծայրայեղ արհամարհուԹիւք գնացեալ քո 'ի բանիդ յայդմիկ, միանգամայն և ոչ խմաստուԹենն Թշնամանս եդեր, և զարաբածս ամենայն ընդ վայր հարեր։

Ը. Ի եԹէ անմաքուր ինչ է ամենանուԹիւնն, անմաքուրք ոմանք իցեն արդեօք և ամենայն կենդանիքդ ծնեալք 'ի նմանէ, անմաքուրք ապա և դուք լինքնին. քանզի լաւմ զմարդկային բնուԹենէս։ Ը. Իարդ ապա կայս իցէ, որ անմաքուրն իցէ. քանզի այս ձեզ երկրորդ՝ մանաւանդ եԹէ և երրորդ է յերկնական հնարիմաց պղծուԹիւնէ և անմաքրուԹիւն, և որք յամենանուԹիւն իբրև յանսրբոց խոյս ապաք, դովին իսկ խոսելովք ձերոյ՝ անսուրբք եք առաւել քան զամենեսեան. կուսուԹիւն իմն 'ի ներքս արկանելով՝ որ գործէլն և ս քան զպոռնկուԹիւն։

Արդ ուրանօր արդեօք զձեզ տարեալ դասեսցուք. ընդ հրէիցն, սակայն ոչ հանդարտեսցեն նորա. քանզի պատուէն զամենանուԹիւնն և զարմանան ընդ ձեռա կերան ոչ։ Այլ Թերևս ընդ մեզ. այլ ոչինչ կամեցաբուք դուք լսել քան՝ որ պատգամսիւն խօսեր. * Պատուական է ամենանուԹիւն և որ անկողին ‖։ Այսպա կայ ինայ, զի ընդ հելլենացւոցն երԹեալ կացջիք դուք այսու հետև. բայց սակայն և նորա դարձեալ իբրու առաւել ամբարիշատ ոմանս քան զանձինս՝ մերժեսցեն զձեզ։

վ|անզի պղատոն ասէ, եթէ՝ * բարի էր, որ հաստա-
տեաց զայս ամենայն ||. և թէ՝ * բարւոյն չիք նախան-
ձել ընդ ումեք վասն իրաց ինչ ||. ՚է փիդոն: Իսկ դու
չար կոչես զնա, և չարեաց գործոց արարչապետ:

Ա.յլ մի երկնչիր. ունիս վարդապետութեդ այդմիկ
բաժանորդս զսատանայ և զհրեշտակս նորա. մանա-
ւանդ եթէ և ոչ գնոսա. քանզի և մի երբեք գնաւ
կարծեացես դու, եթէ որք զքեզ հրապուրեցին մե-
լել զմելութեդ զայդ, նոքին գարձեալ և նովին զգա-
ծեալ լեցեն կրիւք: Վ|անզի թէ գիտեն նոքա, զի բա-
րի է ՚ած, լաւր աղաղակի նոցա. է զի գոչէն. * Վի-
տեմք զքեղ, ո՛վ ես սո՛ւրբդ ՚այ ||. մրկ. ա. 24: Այս է զի,
եթէ՝ * Ա.րքս այս ծառայք ՚այ բարձրելոյ են, որ պատ-
մեն ձեզ զճանապարհս փրկութե՛ ||. գործ. ժ. 17:

Ա.րդ տակաւին պարծիք ընդ կուսութեդ, և տակա-
ւին պատուասիրեա՛ք յիւրում չայդմիկ. և ո՞չ առաւել տե-
ղի տուեալ երթայք սուգ առնուք ՚ի վերայ անձանց
ձերոց և ողբայք զանմտութեդ ձեր, որով իբրև զգե-
րիս ոմանս կապեալ զձեզ սատանայ քարշէ ՚ի հուր
գեհենեայն: Ո՞չ զուգեցար ամուսնութեամբն. այլ այդ
գնաւ իսկ չէ կուսութե՛. քանզի որ իշխանն է ամուս-
նանալոյ, և ՚ի բաց հրաժարէ չայմանակ, ես զնա ասեմ
կոյս. իսկ յորժամ արդելեալ ասես դու զբանդ զայդ,
ո՛չ ևս ուղղութիւնդ այդ ընծայեացն խորհրդոյդ քոյ,
այլ հարկի օրինայն: Յաղագս այսորիկ և ընդ պար-
սիկս՝ որք միանգամ՝ ո՛չ կին ածեն զմարս՝ զարմանամք.
իսկ ընդ հռովմայեցիս՝ ո՛չ ևս: Վ|անզի առ սոսա առ
հասարակ միաբան ՚ի գարշելեացս սակի է բանդ այդ.
իսկ առ նոսա՝ անպատիժ արձակուրդ չանդգնելոյն առ
՚ի նոյն՝ գովանիս չարդարեաց զհրաժարեալսն ՚ի խառ-
նակութենէ ասեի:

Ա.սա նմին օրինակի պա՛րտ է և չաղագս ամուսնու-
թեանն զքննութենէն ՚ի ներքս բերել: Վ|անզի մեք՝ որ
զամուսնութեդ թոյլ տամք առ հասարակ մերայոյն,
չիրաւի արդեօք զարմանամք ընդ նոսա՝ որք ոչն ամուս-
նանան. իսկ դուք՝ որ մերժեալ ՚ի վատթարաց մասին
կարգեք զբանդ, ո՛չ ևս կարող լինիք ՚ի գործոյ այսի
գովութիւն ձգել չանձինս ձեր: Վ|անզի ՚ի բաց կալ
չարգելելոյն՝ գնաւ իսկ արիական և կորովի հոգւոյ

գործ չէ. քանզի կատարեալ առաքինութեանէ այն է՝ զի ոչ գործեսցուք զայն ինչ, զոր ի գործելն իբրև չա բագործք ոմանք յանդիմանիմք առ ամենեսեան. այլ զի պայծառասցուք կայն ինչ իբս, յորոց և ոչ հրաժա րեալքն՝ բամբասանս իմն կրեսցեն վասն այնորիկ. իսկ որք միանգամ գիրկս արկեալ վնոքօք ի գործ վարես ցեն, ոչ միայն ի կարծեաց չարաց ազատք լինիցին, այլ և ի կարգս բարեաց անցեալք դասեսցին։

Վասնզի զորօրինակ վնեբքինիսն ոչ ոք դովէ վասն բանի կուսութեանէ, զի ոչ ամուսնանան, այսպէս և ոչ զձեզ. քանզի որ ինչ նոցա հարկ է բնութեանէ, նոյն ձեզ նախաժամն առուին է վրիպակ խղճի մնաց. և զոր օրինակ վնեբքինիսն վրիպեցոյց Թերութիւն մնրմնոյն ի փառաց բանիս այսորիկ, այսպէս և զձեզ սատանայ, յորժամ անվթար է ձեզ բնութիւդ, հատեալ կտրեալ ի ձէնջ զողջախոհ խորհուրդս՝ և ընդ հարկաւ լծեալ զձեզ անկին կենաց, ընդ վաստակոց քրտամբք գրաւէ զձեզ, այլ ի փառացն վրէպ կացուցանէ։ Լուգելոյս զամուսնութենէն. վասն այնորիկ և զվարձս անկին կե նացն ոչ ձգեսցես յանձն քո. այլ մնասանդ զպատու հաս և զտանջանս։

Թ. Իսկ դու, ասէ, ո՞չ արգելուս։ — (Ո)ն անդր, մի երբեք մոլեցայց ընդ քեզ յայդոսիկ։ Լաւ զիաՀրդ ա պա, ասէ, յորդորես ոչ ամուսնանալ։ — Վասնզի հա ւանեալ եմ, զի յոյժ պատուականագոյն է կուսութիւն քան զամուսնութենէն. բայց ոչ վասն այնորիկ և ի վատ Թարս ինչ ունիմ զամուսնութենէն. այլ և կարի իսկ գո վեմ զայն. քանզի նաւաՀանգիստ է ժուժկալութեան՝ որոց միանգամ կամիցին գեղեցկապէս վարիլ դովաւ, և ոչ Թողու վայրենանալ բնութեանս։ Վասնզի իբրև Թումբս իմն յառաջոյ արձանացուցեալ զբրինաւոր զու գութիւն, և ի նմա առեալ զկոհակս ցանկութենէ, ի բազում անդորրու նստուցանէ զմեզ և պահպանէ։

Լայլ սակայն էն էն՝ և որոց չէն պէտք այսպիսի պահպանութենէ, այլ ընդ նորա՝ պահոց, տքնութենէց, գեռնախաշուրենէց, և այլոց ևս խստամեբութենէց՝ առ ի ընտելացուցանել զվայրագութիւն բնութենէն։ Լսպի սեաց ոմանց յորդորակս առաջի դնեմ՝ մի ամուսնանալ.

այլ չարգելում յամառնանալոյ . քանզի բազում ինչ
է խոհր ընդ այս և ընդ այն , որչափ ինչ կայ ընդ մէջ
հարկի և կամաց : Վասնզի որ խորհուրդ տայ , անձն
իշխան Թողու զունկնդիրն ի վերայ ընտրութեանն գոր-
ծոյն՝ յորոյ սակս տայ ղխորհուրդն . իսկ որ արգելուն՝
յառաջագոյն կապտէ ի նմանէ և զիշխանութենէն զայն :

Ը. Ու այս դարձեալ՝ ես որ յորդորեմ , ոչ խոտեմ
զբանդ . և ոչ դարձեալ՝ որ ոչն հաւանի , ամբաստա-
նեմ ինչ . իսկ դու՝ որ ընդ վայր հարկանես զդա և
վատթար ասես , և զկերպարանս օրինագրի և ոչ ըզ-
խորհրդականի ի քեզ յափշտակես , յիրաւի ապա զորս
չհաւանիսն քեզ , առեաս . բայց ոչ և ես . այլ աքան-
չանամ ընդ նոսա՝ որ յայդ մրցանս զինուորեցին զան-
ձինս իւրեանց . իսկ սրբ արտաքոյ ինայնին նահատակու-
թես այսորիկ՝ ոչինչ ամբաստան լինիմ զնոցանէ : Վաս-
զի ամբաստանութենէ յայնժամ է իրաւացի , յորժամ ոք
յայտնապէս չարին զՀետ ընթանայ . իսկ որ զնոսարհա-
դոյն բարին զբռամբ ածեալ՝ ոչ ժամանակ մեծագունին ,
ընդ մեծին գովել զնա և զարմանալ ընդ նա չէ ար-
ժան . սակայն և ոչ իրաւացի է բամբասել զնա : Օ՛ , թէ՛
այսպէս արգելում ես զամուսնութենին , որ ոչինչ բամբաս
սեմ զամուսնացեալսն :

Օ՛ պոռնկութենին արգելում և զընութիւնն . զամուս-
նութենին ոչ երբէք . և զորս յանդգնինն յայնոսիկ՝ պա-
տուհասեմ , և ի լռութէ եկեղեցւոյ ի բաց մերժեմ .
իսկ զորս մերձինն ի սա՝ միայն եթէ պարկեշտութէ ,
և գովեմ զորհնասացս : Վասնզի այսպէս կրկնակի է
շահն . մի՝ զի ոչ ընդ վայր հարկանեմք զգործն այ .
և երկրորդ՝ զի ոչ ի բաց կապտեմք զպատիւ կուսու-
թենէն , այլ և շքեղ ևս երևեցուցանեմք զնա :

Ձ . Վասնզի որ խոտէ զամուսնութենէն , նա խոտէ և
գխառս կուսութենէն . իսկ որ գովէ զնա , առաւել զզար-
մանս սորա ի վեր ածեցուցանէ , և շքեղ ևս յարդարէ
զսա : Վասնզի որ ինչ առ վատթարին հաւասնատութէ
երևի բարի , այն ապաքէն չէ յոյժ բարի . իսկ որ ինչ
միանգամ առ անշուշտ բարեաքն լաւագոյն է , այն է
չնաշխարհիկ բարի , յորոց կարգի գլխովին հաստատեմք
մեք զկուսութենիդ : Այս որպէս որ զամուսնութենէն

խոտե, ինասակար է գովութենէն սորա, այսպէս և որ ի բամբասանաց ազատ առնէ զինա, քան զինա առաւել զկուսութիւնն գովէ։ Վասնզի և առ մարմնովքն, ոչ զորս միանգամ քան զկնեզանգամն, այլ որ քան զանթերիան և քան զամբիծան լաւագոյնք ևս իցեն, զինոսա ասեմք գեղեցիկս։

Խարի է ամուսնութենէն. և վասն այնորիկ աքանչելի է կուսութիւնն, զի լաւագոյն ևս է քան զբարին. և այնչափ լաւագոյն, որչափ քան զնաւազն՝ զհակարն, և քան զգօրականն՝ զօրավարն։ Այլ զորօրինակ եթէ ի նաև անտի ի բայ բարձցես զիխաւարն, ընկղմեա ցես զմոգոյին. և եթէ ի պատերազմէ անտի ի բայ հեռացուսցես զզօրականն՝ կալեալ ի ձեռս թշնա մեայ մնանեսցես զզօրավարն, այսպէս և աստանօր՝ եթէ ի գերութեան աշխարհն իւրմէ ի վայր կործա նեսցես զամուսնութիւնն, մնան եղիցիս դու փառաց կուսութեն, և ի վերջին չարիս առեալ ձգեսցես զնա։

Խարի է կուսութիւն, ձայնակից եմ և ես. նաև քան զամուսնութիւնն լաւագոյն ևս է, խոստովանիմ և զայդ։ Այլ եթէ ձեղ կամք իցեն, ի վերայ յաւելից և զայն՝ եթէ որչափ ինչ լաւագոյն իցէ. որչափ ինչ քան զերբ կիրս՝ երկինք, և որչափ ինչ հրեշտակք՝ քան զմարդ զիկ, իսկ եթէ և բնութագոյն ինչ առել պարտ իցէ, և առաւել ևս։ Վասնզի հրեշտակք թէպէտ և ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին, սակայն ի մարմնոյ և յարե նէ չեն զանգեալ նոքա. քաղաքավարութիւն չունին ի վերայ երկրի, ոչ ի ծիսանաց ցանկութեանց ամբոխին երբեք, և ոչ կերակրոյ և ըմպելոյ պէտք ինչ են նո ցա, ոչ քաղցրութենէ նուագք բաւական ինչ են մեղկել զնոսա, և ոչ կերպարանք չքնաղք ձգել հրապուրել զնոսա. և ոչ այլ ինչ երբեք յայսպիսեաց առին. այլ զորօրինակ երկինք ի կշռաւոր միջօրէին՝ և ոչ միով ինչ ամբոխելով ամպով՝ անբիծ տեսանին, այսպէս և նո ցան քնութիւնք՝ քանզի անբաժ են ցխոտինն յամբոխից ցանկութեանն՝ ի հարկէ ապա միշտ փայլունք կան և լուսապայծառք։

Ժա. Իսկ մարդկանս ազգ ի ստորև կացեալ քնու[թ]է երանելեացն այնոցիկ, քուռն առնէ ընտանի իւրում

զօրութիւն. և ի նախանձ բերի ի ձիգն ջանից իւրոց հաւաստարել ընդ նոսա։ Օխերդ արդեօք։ Ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին հրեշտակք. այլ ոչ և կոյս։ Ուրախ կան նոքա հանապազ և պաշտեն զնոճ, զնոյն և կոյս։ Յաղագս որոյ և պաւղոս միանգամայն յամենայն հոգւոց ի բաց հրաժարէ զնոսա. զի անդուլք և ցեն յայնմ և անզբօսք։ Իսկ եթէ ոչ կարեն աստէն եւ լանել յերկինս իբրև զնոսա, իբրև զի մարմինն հակէ զնոսա, սակայն և աստանօր բաղում ունին միխիթարու թիւն՝ զտերն երկնից ընկալեալք յանձինս իւրեանց, եթէ արդեօք ևցեն սուրբք մարմնով և հոգւով։

Տէսանեն զպատիւ կուսութեանն. որք յերկրի աստ Թարթափին՝ զնոսա երկնաքնակացն քաղաքակիցս առնէ. որք մարմին զգեցեալ են, նոցա ոչինչ նեղէ խոնարհագոյն լինել քան զանմարմին զօրութիւն. և որք մարդիկ են գլխովին, ի նոյն նախանձ հրեշտակացն աճեալ բերէ զնոսա։

Այլ ձեր չիք մանն յիրիդ յայդմիկ, որ այնչափ ապականեք զանդ զայդ, և զտէրն ինքնին ընդ վայր հարկանեք և չար անուանեք. քանզի գանձեալ կան ձեզ տանջանք չարն ծառայի. իսկ կուսանք եկեղեցւոյ բաղում և մեծամեծ հանդիսիցն բարութեաց՝ որ ի վեր են միանգամայն քան զնոյն մարդկան՝ քան զունկն և քան զխորհուրդ։ Ոյան որոյ թողեալ մեր այժմ զնոսա, քանզի և բաւականութիւնք իսկ են ասացեալքդ առ դոսա, խօսեսցուք այսուհետև առ որդիս եկեղեցւոյ։

Ժէ. Այս արդ ուստի՞ արդեօք գեղեցիկ իցէ առնուլ սկիզբն բանին. ի նորուն իսկ տեառն բանից, զոր բարբառի ի ձեռն երանելւոյն պաւղոսի. քանզի պարտ է հաւատալ, եթէ յորդոր սորա՝ յորդոր է տեառն ինքնին գլխովին։ Այս քանզի յորժամ ասէ, * Այլ կանամբ եացն պատուիրեմ ոչ ես, այլ տէր ‖. և գարձեալ. * բայց այլոցն ես պատուիրեմ, ոչ եթէ տէր ‖. ա. կոր. է. 10. 12. ոչ որպէս թէ այլ իցէն իւրքն, և այլ՝ որ տեառն, վասն այնորիկ ասէ զայս։ Քանզի որ զբա ուն ներ յինքեան խօսող և ոչ խնդրեր կեալ, որպէս զի քո կեցցէ յանձին իւրում. և որ միանգամայն և զթագա-

ւորութիւն և զկեանս և զհրեշտակս և զզօրութիւս և զամենայն արարածս, և պարզաբար իսկ զամենայնն երկրորդ կարգեր սիրոյ նորա, զի՞րդ երբեք հանդարտեր յանձն իւր և յօրինագրեն զայսոսիկ՝ խօսել և կամ խորհել ինչ յայնպիսեաց անտի՝ որ ո՛չն էին հաձոյ քոյ։

Օ՛ինչ ասա իցե՝ զոր ասէն, էս, և ո՛չ էս։

Օ՛ օրինս և զվարդապետութիւնս կէս մի անձամբ անձին, և կէս մի՛ ի ձեռն առաքելոցն ետ մեզ քո։ Վասն զի այն՝ զի ո՛չ զամենայնն ինքն ինքնին կարգեաց եդ, լաւր զինչ ասէ։ * Դեռս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ո՛չ կարէք հանդարտել այժմիկ ‖։ յոհ։ ՃԶ։ 12։

Զրդ զայն ինչ, եթէ՝ կին յառնէն մի մեկնեսցի, յառաջագոյն կանխեաց ինքնին օրինագրեաց՝ մինչդեռ տակաւին էր մարմնով՛ի վերայ երկրի, և վասն այնորիկ ասէ։ այլ կանամբեաց պատուիրեմ ո՛չ ես, այլ տէր։ Նախ որ ինչ միանգամ անհատոյն՛ի դէպ պատշաձէր, ինքն այնձամբ ո՛չինչ ասաց մեզ վասն այնոցիկ։ այլ զՀոգին պաշտօնի շարժելով յայն՝ այնպէս օրինագրեր։ և վասն այնորիկ ասէ։ ո՛չ եթէ տէր, այլ ես։ ո՛չ եթէ զայն ինչ կամէր ցուցանել, եթէ մարդկային ինչ էր ասացեալն։ քանզի զնո՞րդ մարթ էր այդմ լինել։ այլ թէ զպատուիրանն զայն՝ յորժամ տակաւին յերկրի աստ էր՝ ինքն չէտ աշակերտացն, այլ այժմիկ յիւր ձեռն։ Նպա որպէս ասելդ այդ, եթէ՝ տէր և ո՛չ ես, չ՛ ձայն հակառակողի ուրուք հրամանին քոյ։ այսպէս և այս, եթէ ես, ո՛չ եթէ տէր, չ՛ մարդոյ՝ որ սեպհական ինչ յանձնէն իւրմէ՛ի նեղքս արկանիցէ արտաքոյ հաձոյին Ա՛ոյ։ այլ որ միայն զայն ինչ՛ի գէմն բերցէ՝ եթէ յիւր ձեռն այժմիկ տուեալ լինի պատուիրանդ այդ։

Եւ քանզի յաղագս այրուձն խօսելով՝ ասէ։ * Եայց երանելի ևս է, թէ այնպէս կայցէ ըստ իմում խրատու ‖։ ՚Ա։ կոր։ Է։ 40։ ապա զի մի զըստ իմումն խրատու լսելով, երբեք՛ի մարդկայնոցս ինչ խորհրդոց հա մարեսցիս զայդ, յաւելուածոյն՛ի բաց կարկ զկաւ կածն, ասելով։ * Եայսպէս համարիմ, եթէ և յիս իցէ Հոգի Ա՛ոյ ‖։ Նպա ուրեմն որպէս որ միանգամ զՀոգւոյն խօսեսցի և ասասցէ եթէ իւր է խրատն, ո՛չ վասն այնորիկ մարդկային ինչ ասեմք լինել զա-

տաստանն զայն, այսպէս և այժմ՝ յորժամ ասէ, ես պատուիրեմ, ոչ եթէ տէր, մի դու վասն այդորիկ պաշտօնի կարծեսցես լինել զանձն. քանզի խօսող ու ներ յինքեան ղքե՛ն. և ոչ արդեօք յանդգներ ինչ իբրև ՚ի ճշմարտէ ինն կարգել զայնպիսի վարդապետութիւնն, եթէ ոչ անդստին ՚ի նմանէ առեալ բերեր մեզ զօրէնսն։ Վասնզի այսպէս ուրեմն արդեօք ասէր ոք առ նա. ոչ. ինչ հանդարտեմ հաւատացեալս ես քնակել ընդ անհաւատին, և մաքուրս՝ ընդ պղծոյն, դու ինքնին կանխեալ ասացեր, եթէ՝ քո են պատուիրանքդ՝ այդ, և ոչ եթէ տեառն. արդ՝ ուստի՞ իցէ ինձ առհաւատչեայդ հաստատութե՛ն։ Վասն սակայն ասէր առ նա պաշտօնս. մի՛ դու երբէք խոնարհասցիս. քանզի վասն այսորիկ ասացի, եթէ՝ ղքե՛ն ունիմ խօսող յանձին իմում. և թէ՝ ես այսպէս համարիմ, եթէ և յիս իցէ հոգի Աստուծոյ. զի մի՛ թերևս իբրև մարդկային ինչ կապակծեսցես լինել զասացեալսս։ Վասնզի թէ չէր այնպիսի ոչինչ արդեօք այդչափ իշխանութիւն տայր իմոյս խորհրդոց. * Օ՛ի խորհուրդք մարդկան զանգիտո՛ք են, և զաղփաղփուն՛ք հնարագիտութի՛ք նոցա ‖. ԽՀասո. Ը. 14։

Վասն սակայն և առ հասարակ ամենայն սիեզերաց եկեղեցի յանդիման ցուցանէ զգօրութի՛ն օրինացն, քանզի Աշդիւ պահէ զնա. և արդեօք պահէր ոչ, եթէ ոչ Աշդրիւ ՚ի վերոյ հասեալ էր՝ զի քո՛վ ինքնին հրաման է բանդ այդ։

Այս արդ զինչ ասէ պաշտօնս ազդեալ ՚ի տեառնէ։ * Վասն վասն սրոյ գրեցե՛ք առ ինս, քալտոք է մարդոյ ՚ի կին մարդ չմերձենալ ‖. Ա. Կոր. Է. 1։ Գտալեացիք ոք արդեօք աստանօր զկօրնեթացիսն. զի խորհուրդ և ոչ մի ընկալեալք ՚ի վարդապետէն յաղագս կուսութե՛, նոքա ինքնին յառաջեալք հարցանեն ՚ի նմանէ։ Գտովին յայտ առնէ՝ եթէ ՚ի ընորհայ անտի յաւելուած եղեալ իսկ էր առ նոսա։ Վասնզի առ ՚ի հնոյն կտակարանէ ոչինչ կեղակարծելի էր բանն. զի ոչ միայն պղծութե՛ն ամենեցուն, այլ և զևտացիք և քահանայապետք և մեծ քահանայապետն ինքնին գլխովին բաղում չանս չա նային յաղագս ամուսնութեանն։

Ա՛ղ. Իսկ արդ՝ ուստի՞ արդեօք եկիցէ դոքա ՚ի խըն

դիրդ յայդ ։ Արհայեաց և դէղէցիկս տեսին նոքա զայն ինչ, եթէ որք միանգամ մեծագունին արժանս ցեալ էին պարգևին, մեծ ևս առաքինութիւնք պէտք են անձանց ։ Սակայն արժան է և զայն ՚ի քնին առնուլ. առ ինչ նա զնորհուրդդ զայդ երբեք ո՛չ ՚ի ներքս արկ նոցա. քանզի և ո՛չ արդեօք՝ եթէ յայսպիսեաց ինչ լուեալ էր նոցա, կրկին գրէին առ նա վասն նոցուն իրաց հարցանելով միսանգամ։

Վ՚անզի և աստանօր զնորս խմաստունն պաղտոսի է խմնալ. քանզի ո՛չ անխորհուրդ ինչ և վայրապար զանց արար գյորդորակաւ աքանչելի բանիդ այդորիկ. այլ համբեր՝ լուռ եկայ, զի նախ ինքնին նոքա եկեսցեն ՚ի ցանկութիդ յայդ, և գիտութիւն ինչ առցեն յանձինս զբանիդ զայդորիկ. զի արդէն իսկ յօժարամիտս ՚ի կուսուն անդր ունելով զհոգիս նոցա, կետ այնորիկ ապա առ օգուտ սերմանեսցէ զբանս վասն իրացս այսոցիկ. նա զի և լսելեացն պատրաստութիւն ՚ի բանդ յայդ՝ դիւրութիւն բազմապատիկ ընծայէ յընդունելութիւն յորդորանացն։ Այլ այլազգ ևս՝ զմեծութիւն բանիդ դովաբ ՚ի դէմն բերէ մեզ և զբազում բեռնն. զի թէ չէր այս պէս, ո՛չ կայր միայր նա արդեօք նոցուն ցանկութիւնն. այլ ինքնին կանխեալ ՚ի ներքս արկանէր զայն, թէ ո՛չ իբրև հրամանն և պատուիրան, սակայն իբրև յորդոր և իբրև խորհուրդ։ Վ՚ասլ արդ զի ո՛չ յօժարեցաւ կանխաց գոյն գործել զայդ, յայտնի կացոյց մեզ՝ եթէ բազում քրտանց պէտք են կուսութիւնք և մեծաց ձգանց։ Այս ՚ի բանիս յայսմիկ հասարակաց մեր տեառն նմանողք եղեալ՝ այնպէս արար. քանզի նա յայնժամ խօսեցաւ յաղագս կուսութեանն, յորժամ զայն ինչ ՚ի նմանէ հարցին աշակերտքն։ Վ՚անզի յորժամ ասացին. * Եթէ այդպէս ինչ միաս իցէ ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ ‖, յայնժամ ասաց. * Ոչն ներքինիք որք զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից ‖. Մտթ. ԺԹ. 10. 12։

Վ՚անզի ուրանօր մեծ է հանդէս առաքինութեանն՝ և վասն այնորիկ ո՛չինչ գրաւեալ ընդ հարկաւ պատուիրանին, անգամանօր պարտ է ակնկալեալ սպասել յօժարութեանն՝ որք միանգամ հանդերձեալ իցեն նա հատակել առ ՚ի նոյն. և այլով ինն անկասկածաւոր

յերզանակաւ զկամն և զշնորհս պատրաստել ՚ի նոսա. ըստ որում արար և քո գլխովին։ Այլ ոչ ՚ի ձառից անտի կուսութեանն ձգեաց զնոսա ՚ի ցանկութիւն կուսութեանն, այլ խոսեալ միայն վասն ամուսնութեանն և զծանրութիւն գործոյն ՚ի գէմն ածեալ, և մինչեւ ցայն վայր կացուցեալ զնոսան, որպէս զի և որք ոչինչ լուեալ էին վասն ոչ ամուսնանալոյ, ինքեանն ասացին, եթէ լաւ է չամուսնանալ։

Այլ վասն այնորիկ և պաւղոս նմանողն քոյ ասէ, այլ վասն որոյ գրեցիքն առ իս։ իբրու այն թէ՝ օրինակ զայս իրաւացուցանելով առ նոսա զանձն և ասելով. եթէ՝ ես ինքեանն ոչինչ կանդգնելի հանել զձեզ կայդ գագաթն բարձրութեանէ՝ յաղագս գժուարութեանէ բանիդ այդորիկ։ Այսուհետեւ գուք ինքեանն կանխեալ գրեցիք առ իս, այնուհետեւ վստահութեամբ զնորհուրդ։ Այանզի առ ինչ ապա՝ յորժամ վասն բազում իրաց գրեցին նոքա առ նա, այսպիսի ինչ երբեք ոչ յաւել ՚ի վերայ. ոչ յայլ ինչ պատճառս, բայց վասն այնորիկ՝ զոր այժմ ասացի. քանզի՝ զի ով որ թերևս գժկամակ եղիցի ընդ յորդորակն, յուշ ածէ զդիրսն՝ զոր գրեցին. սակայն և ոչ զառիթս զոյս ՚ի ձեռս բերեալ՝ սաստկութեամբ վարի յորդորակաւն, այլ կարի քաղցր. քոյ եղեալ նմանող և ՚ի մասինս յայսմիկ։ Այանզի փրկիչն իբրև կատարեաց զբանն յաղագս կուսութեանն, ՚ի վերայ եբեր.* Ով կարողն է տանել, տարցի ‖. Տե՛ս. ձե. 12։ Այդ զինչ ասէ.* Այլ վասն որոյ գրեցիքն առ իս, բարւոք է մարդոյ ՚ի կին մարդ չհրձեռնալ ‖։

ԺԴ. Այլ թերևս ասասցէ ոք. իսկ արդ եթէ բարւոք է ՚ի կին մարդ չհրձեռնալ, առ ինչ ամուսնութեանն եմուտ ՚ի կենցաղս յայս։ Իսկ ինչ իբրս ապա վարեցուք մեք զկին, եթէ ոչ յամուսնութեանն և ոչ ՚ի մանկարարութեանն երբեք իցէ մեզ պիտանացու։ Իսկ ապա զինչ արդեւցուս քնաջինջ լինել ազգի մարդկան, քանզի և մանչն զօրհնապաղ Ձարակի զդա և նուազ առնէ. և այդ բանդ ոչինչ թողու փոխանակել այլոց զվախճանելոցն տեղի։ Օ ՚ի եթէ բարւոդ այդմիկ ա մեղեքեան նախանձաւորք եղիցուք և ոչ մերձեսցուք ՚ի

կանայս, ամենայնն քանդեսցի առ հասարակ և քաղաքք և տունք և անդաստանք և արհեստք և կենդանիք և տունկք։ Վասնզի զորօրինակ յանկանել զօրավարին՝ հարկ է վարատել և ամենայն դասաւորութիւն զօրուն, այսպէս և՛ի ձեռն անկին կենացն՝ ի քառնալ մարդոյս՝ որ Թագաւոր է երկրայնոցս ամենայնի, ոչինչ այլ լիւրուամ ակաստանի երբէք ինասցէ և լիւրուամ կարգի. և այսպէս ասա խորհուրդդ այդ գեղեցիկ՝ բիւրուք չարեաք լցցէ զտիեզերս։

Վ.յլ արդ եթէ թշնամեաց ոմանց և անհաւատից միայն էին բանքս այսոքիկ, ես՛ի դուշնաքեաց ինչ արդեօք գրէի զիսօս նոցա. այլ քանզի և բազումք՛ի նոցանէ՝ որ երևելին հաղորդեալքդ եկեղեցւոյ՝ բարբառին զայդոսիկ, առ տկարութիւնէ մտացն տեղի տուեալք՛ի քրտանց կուսութենն. և թշնամանելով և յոյմպետս ցուցանելով զգործն՝ խնդրեն առագաստել զվատութիւն իւրեանց, զի այնպէս իմն երևեսցին՝ եթէ ոչ յուղիք ինչ, այլ ուղիղ գատաստանաւ բանին՝ի բաց կան՝ի մըցանաց աստի, ծն առեալ՝ի բաց Թողեալ մեր զքննա միան, * քանզի չնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Այ, զի յիմարութիւն է նմա ‖ ա. կոր. Բ. 14. որք միանգամ՝ կերպարանին լինել ընդ մեզ, զնոսին և հրահանգեաւ ցուք յերկաքանչիւրն միանգամայն. եթէ՝ ոչ յոյմպետս ինչ է գործդ, այլ և կարի պիտանացու է և հարկաւոր. և եթէ՝ ոչ անվնաս ինչ է դոցա բամբասանքդ այդ, այլ այնչափ ինչ վտանգ հասուցցէ նոցա, որչափ ինչ վարձ և գովութիւն պատրաստէ՝ որոց միանգամ նահա տակեսցին առ՛ի նոյն։

Վասնզի իբրև համարէն կազմեցաւ պատրաստեցաւ այս աշխարհ, և կարգեալ յօրինեցաւ ամենայնն՛ի հանգիստ և՛ի պետս մեր, ստեղծ ահռ զմարդն, այր ա դաւաւ և զաշխարհս զայս արարչագործեաց։ Նոյն իբրև հաստեցաւ նա, կայր մնայր՛ի դրախտի անդ, և ա մենանուիթ բան չէր ինչ՛ի միջի. պէտք էին նմա և օգնականի ուժք, եղև և նա. և ոչ այնպէս դարձեալ հարկաւոր ինչ Թուեցաւ լինել ամուսնութիւնդ։ Վ.յլ և ոչ երբէք ուրեք երևեցաւ նա. այլ կային մնային նոքա առանց նորա՝ ի դրախտի անդ քաղաքավարեալք իբրև յերկինս. և զրգեալք վայելէին նոքա՛ի կենակցութեն

ՀՀ։ Իսկ ցանկութեն զուգելոյ և յղութեն և երկունք և ծնունդ և ամենայն ազգ ապականութեն տեղի տուեալ էր յանձանց նոցա. և իբրև վտակ ականակիտ ՚ի յատակ աղբերէ յառաջ խաղացեալ, այսպէս կայնն նոքա ՚ի նմին վայրի զարդարեալք կուսութեբն։

Այլ անդ յայնժամ երկիր ամենայն Թափուր էր ՚ի մարդկանէ, յորմէ այժմ խիճան այդ խնամակալքդ տիեզերաց. և որք զայլոցն խնամով հոգան, զանձանցն և ո՛չ խորհէլ անգամ չառնուն յանձն. և որք վասն հաւ սարակաց ազգի մարդկանս զանգիտեն՝ զի մի Թերևս դադարեսցէ, զանձնէն իւրաքանչիւր իբրև զօտարաց ոմանց՝ այնպէս անփոյթ առնէ. ուր զի և հանդերձեալ իսկ են նոքա վասն այսորիկ ՀՀղբիտ տալ համարս և ՚ի պատճառս կարի դուժնաքէից քանից. իսկ յաղագս նը. ւազութեբ մարդկանդ՝ դոքա և ո՛չ խոն մի հատուսցեն բան։ Այլ յայնժամ քաղաքք, և ո՛չ արհեստք, և ո՛չ տունք. քանզի և յաղագս այսորիկ ո՛չ փոքր ինչ փոյթ է ձեր, սակայն չէին յայնժամ այդոքիկ. և միանգամ մայն երանելի կենացն այնմիկ և քան զայս կարի լաւա գունէին խափան չէր ինչ ՚ի միջի և ո՛չ ամբոխիչ։

Իսկ յորժամ անհնազանդք գտան ՀՀ, և եղեն հող և մոխիր, ընդ երանելի քաղաքավարութեբն ընդ այն միկ կորուսին նոքա և զգեղն կուսութեբ. և ՚ի միասին ընդ ՀՀ և սա լքեալ Թողեալ զնոսա՝ գնաց ՚ի բայ։ Վասզի յորչափ անբմբռնելիք էին ՚ի սատանայէ, և զանէրն իւրեանց պատուհէին, ՀՀայր առ նոսա և կուսութեբն զարդարեալ զնոսա՝ առաւել քան զԹագաւորսն Թագն և ոսկեհուռ հանդերձքն։ Այլ իբրև գերեալք կապտեցան ՚ի Թագաւորական պատմուճանէն յայնմանե, և վրկպ գտան յերկնաւոր զարդուէն, և ընկալան զսպականութեբն մահուն և զանէծս և զցաւ և զվաս տակաբեկ կեանս, յայնժամ սպրդեցաւ եմուտ ընդ սոսա ամենանութեբն, այս մահկանացու և ծառայական հանդերձ. քանզի * որ կանամբէն է, ասէ, հոգայ զաշխարհիս ՚ի. ա. կոր. է. 33։

Նեսանէս, ուստի կալաւ սկիզբն ամենանութեբն. ուստի հարկաւոր կարծեցաւ լինել. յանհնազանդութէ, յանէծից, ՚ի մահուանէ։ Վասզի ուր մահ է, անդանօր ամենանութ. իսկ իբրև սա էր ՚ի միջի, և ո՛չ այն զհետ գայ։

Ա.յլ ո՛չ կուսութեն զհետ գան այդոքիկ , այլ միշտ պիտանացու է , միշտ գեղեցիկ և երանելի՝ միանգամ մնայն և նախ քան զմահն և յետ մահուն , և յառաջ քան զամուսնութեին և յետ ամուսնութեին : Վասնզի ո՛ր ամուսնութիւն , ասա՛ ինձ , ծնաւ զաղամ. ո՛ր երկունք գեաց . ո՛չինչ ունիս ասել : Օ՛ ապա դու երկնչես ՚ի նանիր և դողաս՝ եթէ արդեօք ՚ի դադարել ամուսնութեն՝ դադարեսցէ և ազգդ մարդկան : Խուրջ բիւրուց հրեշտակաց պաշտեն զնա , և հազարք հազարաց հրեշտակապետաց կան առաջի նորա . և ո՛չ ոք ՚ի սոցանէ յառաջ եկն սերնդեամբ , և ո՛չ ծննդեամբ և երկամբք և յղութեամբ : Ա.պա ուրեմն առաւել ևս զմարդիկ առնէր նա առանց ամուսնութեան , ըստ որում և զառաջինսն զայնոսիկ արար , ուստի յառաջ եկին ամենայն մարդիկ :

ԺԵ . Ա.ւ այժմ ո՛չ զօրութեի՛ ամուսնութեն յանձին զազգս մեր , այլ բանն տեառն՝ զոր ՚ի սկզբանն ասաց . * Ա.ճեցէք և բազմացարո՛ւք և լցէք զերկիր ‖ . ՚Ն . ա . 28 : Վասնզի զինչ արդեօք ասա՛ ինձ , աբրահամու երբեք պիտանացու եղև ՚ի մանկարարուն քանդ այդ . Թերևս ո՛չ զայնչափ ամն վարեալ նովաւ , հուսկ ուրեմն առա զսոյն արձակեաց բարբառ . * Տէր , զինչ տացես ինձ , զի ես մեռանիմ անորդի ‖ . ՚Ն . ԺԵ . 2 : Ա.պա որպէս յայնժամ՚ի մեռեալ մարմնոց անտի՝ այնչափ բիւր բաւարացն պատձառս ետ ՚ն և արմատ , այսպէս և անդ ՚ի սկզբանն՝ եթէ հնազանդեալ էր պատուիրանի նորա աղամ և յաղթեալ հեշտութե՛ փայտին , ո՛չինչ արդեօք տառապէր ՚ի պատձառս յերզանակին՝ որով ա՛ն ձեռցի ազգդ մարդկան : Վասնզի և ո՛չ իսկ ամուսնութիւնդ՝ եթէ ՚ն չկամեսցի՝ բաւական ինչ է բազում առնել զմարդիկդ . և ո՛չ դարձեալ կուսութե՛ն՝ եթէ կամեսցի նա զբազմանալ դոցա՝ երբէք նուաղեցուսցէ զբազմութիւնն :

Ա.յլ սակայն այսպէս կամեցաւ ասէ : — Ա՛ն մեր և վանն խեռութե՛ս մերոյ . քանզի առիմ՞ ասա՝ ուրեք յառաջ քան զնաբանսն չերևեցաւ ամուսնութիւնն . ո՛չ աղագաւ ո՛չ զուգութե՛ն ՚ի դրախտին . ընդէ՞ր ո՛չ նախ քան զանէծսն՝ երկունք . իբրև զի աւելորդք կին այդո-

քիկ. իսկ ապա՝ ի պատճառս տկարութեանս մերոյ կա-
րևորը եղեն դոքա առ հասարակ և այլն ամենայն, քա-
ղաքք, արհեստք, ագանելիք հանդերձից, և բովան-
դակ այլ խուժան պիտոյիցն. քանզի զայս ամենայն ընդ-
իւր քարշեալ երթեր եմոյծ մահն։

Ապա մի երբէք դու՝ զայն ինչ որ թոյլ տուաւ քեզ
՝ի պատճառս տկարութեան քո, նախապատիւ դասեր
քան զկուսութիւնն. մանաւանդ եթէ և մի հաւասար
կարգեր։ Վանզի ըստ բանիդ ըստ այդմիկ յառաջ խա-
ղացեալ քո, նաև զկանայս երկուս ունել առաւել լաւ
ասացես դու արդեօք քան զչատանալն միով ևեթ. ո-
րովհետև և այդմ թոյլ լինէր յօրինսն մովսէսի. զսոյն
օրինակ ապա և զանծուխիւնն նախապատիւ արասցես
քան զկամաւոր աղքատութիւնն, և զգրգանսն՝ քան զը-
պարկեշտութիւն կենաց, և զվերիժինդրութիւնն՝ քան զը-
քաջութիւն համբերութեան անիրաւութեան։

ԺՂ. Իսկ դու թէնամանե՞ս՝ ասէ, զայդոսիկ։ — Այ՛ն
թէնամանեմ ամենևին. քանզի ահա ինքնին Թոյլ ետ
այդոցիկ. և ևիւն նոքա՝ի ժամանակին իւրեանց պի-
տանացուք. սակայն՝ի դուշնաքէից մասին դնեմ զնո-
սա. և տղայոց հանդէսք ուղղութեամբ առաւել քան եթէ
արանց։ Այլ վասն այնորիկ կամեցեալ քեզ կատարեալս
յարդարել զմեզ, հրամայեաց մերկանալ զնոսա իբրև
հանդերձս իւին տղայոց՝ որք ոչ բաւական իւրեն զգե-
ցուցանել զայր կատարեալ և ոչ զչափն զարդարել հա-
սակի կատարմանն քոյ. և արկանել զանձամբ հան-
դերձս՝ որ շքեղ ևս իւրեն քան զայնոսիկ և առաւել
կատարեալք. ոչ եթէ հակառակս ինչ անձին իւրում
կարդելով օրինս, այլ և կարի իսկ միաբան։ Ոչ թէ-
պէտ և վերհագոյն քան զայդոսիկ էին պատուիրանքդ
այդոքիկ, սակայն նորուն օրինադրի է խորհուրդդ այդ։
Այլ զի՞նչ ապա այն իւրն. հատանել կտրել զչարութեն
հոգւոց մերոց, և՝ի կատարեալ առաքինութիւն անդր
ածել բերել զնա։ Ապա ուրեմն եթէ երբէք յայն ինչ
թէևակոխեալ էր՝ ոչինչ՝ի վերհագուսիցն կարդել զնել
՝ի վերայ առաջնոցն, այլ՝ի նոյնս թողուլ հանապազ,
և երբէք ոչ վերացուցանել յանարգութիւն անտի նոցա,
այս էր գործ կարի իւին հակառակողն անձին իւրում։

Վասնզի որպէս եթէ ի սկզբանն յորժամ առաւել տղայաբարոյ էր ազգդ մարդկան՝ օրինադրեալ էր զձոյլ բիւր քաղաքավարութիւնդ զայդ , ոչինչ արդեօք ըզդեղեցիկ չափաւորութիւնն ընկալեալ էր մեր երբեք . այլ զլռութիւնն փրկութիւն կորուսեալ էր մեզ յանչափութիւնէ անտի յայնմանէ . այսպէս եթէ յետ բազում ժա մանակին այնորիկ՝ և զկնի գաստիարակութեանն յորմէ նաց անտի , յորժամ ժամանակն լինքնին յերկնաւորն զմեզ հրաւիրէր խմաստասիրութիւն , և նա Թողոյր լքա նէր միայ մեզ աստէն ի վերայ երկրի , ոչ մեծ ինչ արդեօք կիթեալ էր մեր ի ներողութիւնէ անտի . յորժամ կատարելութիւն լինքնին՝ յոյր սակս եղև ներողութիւնդ այդ՝ վրնպէր առ ի մէնջ :

ԺԷ . Իսկ այժմ մեզ հանգուցեալ ինչ ձագուց Թռչնոց պատահեցան դէպք : Այս քանզի յետ բուծա նելոյ զնոսա մօրն , առեալ հանէ արտաքս ի բունոյ անտի . սակայն եթէ տկարս գտցէ զնոսա և գայթոտս և տակաւին կարօտս դաստարելոյ ի ներքս անդ , դարձեալ Թողու զնոսա զաւուրս բազումս . ոչ զի հանապազ ի ներքս անդ առկայացեալ մնասցեն , այլ զի քաջ ևս կորովասցին նոցա Թևք . և բովանդակ զօրացեալք յանձինս՝ յետ այնորիկ ապա յանդգնեալ բերիցեն ի Թռիչս : Օ սոյն օրինակ և տէրն մեր անդստին ի սկզբանէն ձգէր զմեզ յերկինս , նաև զձանապարհն՝ որ անդր հանէր՝ ցուցանէր մեզ . ոչինչ անգիտացեալ՝ մանաւանդ եթէ և քաջ իսկ գիտէր՝ եթէ առ Թռիչսն առ այն անբաւականք ոմանք գտանելոց եմք . սակայն կամէր զայն ինչ մեզ յանդիմանն ցուցանել , եթէ ոչ ի կամաց ինչ նորա՝ այլ ի մերմէս տկարութէ եղելոյ մեզ կումն : Իսկ իբրև եցոյց զայն , ապա յետ այնորիկ ե Թող զմեզ իբրև ի բունի յաշխարհի աստ և յամուսնու Թէ անանիկ բազում ժամանակ . որպէս զի իբրու Թևք իմն բուսցին մեզ առաքինութէ զքաշմամժամանակեայ աւուրքն . և յայնժամ ապա յուշիկ և տակաւ տակաւ մերձեցեալ առ մեզ եհան ի դաշտաց անտի , և ուս սոյց Թռչել բարձրագոյնս :

Այդ կէսք տակաւին խօնարհեալք գոլով , և խոր ի քուն Թմբրեալք , դեռ սիրով սովորեալք են ի բոյն

անդր , բևեռեալք յիրս աշխարհի : Իսկ կէսք՝ գլխովին արիք ոմանք և լուսոյն տարփացողք , բաղում հեշտու-թիք ծողեալ զնա՝ յերեսս ի վեր սրանան . և բերա-նաբացեալք էն յերկինս՝ լքեալ զամենայնն աստէն ի վերայ երկրի , զամուսնութիւն , զինչս , զհոգս , և զայլն ամենայն՝ որ միանգամ բնաւորեցան քարշել զմեզ ընդ երկիր :

Ապա մի՛ ինչ կարծեսցուք՝ եթէ որ ի նախնումն թո-ղութիւն ամուսնութիւն , յետոյ ապա նոյնն դարձաւ ի հարկ՝ որ արգելուցու ի բաց կալ յամուսնութիւն . քան-զի եթէ կամի՝ զի լքցուք մեք զնա , լուր զինչ ասէ . * Որ կարողն է առնել , տարցի ‖ . Մտ . ԺԹ . 12 : Իսկ եթէ զայս ի սկզբանն ոչ կարգեաց եդ , մի՛ ինչ զար-մասցիս . քանզի և ոչ բժիշկն զամենայնն միանգամայն և ի նմին ժամանակի պատուիրէ խօթացելոյն . այլ յորժամ ի տապոյ ջերմանն ըմբռնեալք իցեն՝ ի հաս-տատուն կերակրոյ հրաժարեցուցանէ զնոսա . իսկ յոր-ժամ զհուրն զայն ի բաց դնեն նոքա և զակարութիւնն դլխովին՝ որ ի նմանէն ի վերայ եկն մարմնոյն , յայն-ժամ ապա ազատեալ զնոսա ի դժկամակն կերակրոց , բնակամուն քաղաքավարութիւնք կենացն առեալ ըն-ծայէ զնոսա : Այս զորօրինակ ի մարմինս տարերքդ կառուցեալք ընդ միմեանս առաւելութիւնքն կամ նուա-զութիւնն՝ գործեն զախտն , այսպէս և ի հոգին՝ անչա-փութիւնք կրից ապականիչ են քաջողջութիւն նորա . և պէտք են առաւելապէս ժամանակի և բարեպատեհ հրամանի ի վերայ առաջակայիցն կրից . ապա թէ ոչ՝ առանց երկոցունն սոցա՝ անբաւական գտանին օրէնք յուղղութիւն թիւրութիւնն՝ որ շարժեցաւ ի հոգին . որ-պէս և ոչ դեղոցդ բնութիւն ինքն առանձինն երբէք զօ-րէ բուժել զկեղն : Վասնզի զոր միանգամ գործեն դեղք ի վերայ վիրացն , զնոյն և օրէնք ի վերայ մե-ղացն : Իսկ արդ դու զբժիշկն՝ որ բաղում անգամ ըզ-նոյն վերսն է զի հատանէ , և է զի խարէ , և է զար-ձեալ զի և ոչ մի՛ ինչ յայսպիսեացս աստի ոչ գործէ , ոչ խուզարկու եղեալ քննես . և այն զի բաղում անգամ վրիպեալ է նա ի վախճանին . իսկ զոճ՝ մարդ գոլով քո՝ այն որ ոչ սխալէ երբէք , այլ զամենայնն ըստ ար-ժանի իւրում իմաստութեանն տնօրինէ , հետազօտե՞ս , և

Համարիս ինձ եւս պահանջեա՛ի նմանել զպատուիրանացն. եւ ո՛չ տեղի տաս անսահման խնամոտութեն. եւ զիարդ ապա ո՛չ վերջին անմոռութե՛ի իսկ բանդ։ Ասէ՝ աձեցո՛ւք եւ բազմացարո՛ւք։ Պանդի զայդ գլխովին պահանջեր ժամանակն, յորժամ եւ բնութիւնս մոլեալ էր, եւ ո՛չ թափոյ կրեցդ հանդարտել բաւական ինչ էր, եւ ո՛չ՝ ի մերկին յայնմիկ նաւահանգիստ այլ ունէր ապաստան լինել։

Այլ զինչ պարտ էր հրամայել. թերեւս զի՛ի ժուժկալութե՛ւ եւ՝ի կուսութե՛ւ քաղաքավարեսցեն զկեանս. սակայն չարաչար եւս գործեր անկումն. եւ առաւել ուժգին բորբոքեր բոց։ Այլ քանզի զկաթնածուծ սըզայն եթէ ոք՝ի բաց առեալ՝ի կերակրոյ անտի իւրեանց, զվայելչականն արանց ստիպեսցէ զնոսա առնուլ կերակուր, ո՛չինչ այնուհետեւ արգելուցու զնոսա՝ի վաղամեռիկն լինելոյ։ Այսչափ չար է տարաժամութիւնն։

Յաղագս այսորիկ ո՛չ՝ի սկզբանէն տուաւ կուսութի՛ւն. մնաւանդ եթէ՝ի սկզբանէ եւ նախ քան զամուսնութի՛ւն երեւեցաւ մեզ կուսութի՛ւդ. այլ վասն այնորիկ ապա՝ի ներքս եմուտ ամուսնութի՛ւն եւ՝ի կարեւոր գործոց համարեցաւ լինել. մինչ զի եւ ո՛չինչ այսմիկ պիտոյ էին ազամայ, եթէ կայր ինայր յիւրում հնազանդութե՛ն։

Այլ զիարդ ապա, ասէ, այսչափ բիւրաւորացդ լինելը արգելոք ծագուի։ Ասեմ ես միւսանգամ ինդրեալ հարցանեմ զքեզ, փոխանակ զի երկիւղդ այդ ինայ՝ի քեզ՝ կարի հոգած յարգարելով զքեզ։ Զիարդ ապագաւմ, եւ զի՞նչ ես ասեցեալ. յորժամ ո՛չ միջնորդ լինէ եւ զև ամուսնութի՛ւնդ։

Զի՞նչ ապա. այդպէս ուրեմն, ասէ, հանդերձեալ էին լինել և առնային մարդիկդ։ Այեթէ այդպէս, և եթէ այլազգ, ասել ո՛չ ունիմ. քանզի որ այժմ ինդիրս է, այն է, եթէ ամուսնութեան ինչ չէին պէտք նոյ՝ի բազմացուցանել զմարդիկ՝ի վերայ երկրի։

Ժէ. Ասէ թէ ո՛չ կուսութե՛ն նուազ առնէ զմարդկան ազգ, այլ մեզքն և տարագէպ խառնակութի՛ւնքն, ցուցանէ առ նոյիւն քննչինչ լինել առ հասարակ մարդկան և անառնոց և բոլոր իսկ չնչաւորաց՝ի վերայ երկրի։

Վասնզի եթէ տարագէպ ցանկութեանդ այդմիկ ընդդէմ կացեալ էին յայնժամ որդիքն ոչ և զկուսութիւնն պատուեալ, և չէին տեսեալ յայրատ աչօք ի դատերսն մարդկան, այդչափ սատակումնդ արդեօք երբեք ոչ ունէր գրաւէր զնոսա։

Այլ սակայն մի՛ ոք երբեք այնպէս համարեսցի, եթէ կորսեան նոցա պատճառս պատճառեմ ինչ ես զամուսնութիւդ. քանզի ոչ զայն ինչ ասեմ ես այժմ, այլ թէ կորուստ և ապականութիւնն ազգիս մերոյ՝ ոչ կուսութե՛ ինչ է գործ, այլ մեղացն։

ԺԳ. Այս արդ տուաւ ամուսնութի՛ և ի պատճառս մանկարարութե՛, և առաւել ևս ի շինուցանել զտասն բնութե՛ն։ Այս վկայէ պաւղոս, ասելով. * Ասայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր զկի՛ր կին կալցի ‖. ա. Կոր. է. 2. և ոչ վասն մանկածնութե՛ան. և դարձեալ՝ միաբանութի՛ հրամայէ, ոչ զի ծնողք եղիցին բազմիցդէք, այլ զի՛նչ. * զի մի՛ փորձեսցէ, ասէ, զձեզ սատանայ ‖. և յառաջ ևս անցեալ ոչ ասէ, թէ ցանկասցին զաւակաց. այլ զի՛նչ, * սպա թէ ոչ ունիցին ժողով, ամուսնասցին ‖։ Վասնզի ի սկզբանն՝ որպէս ասացի՝ կրկին ունէր պատճառս. այլ ապա ի լնուլ երկրի և ծովու և ամենայն տիեզերաց, մի միայն պատճառք ինաց նորա. անժուժկալութե՛ և տափանացն շինուածն։

Վասնզի որք միանգամ տակաւին և այժմ ի կիրս յայսոսիկ թաւալին, և ցանկան կեանս իմն վարել ըզխոզից, և ի բոզանոցս կորնչիլ, նոցա ոչ դուշնաքեայ ինչ օգուտ է ամուսնութե՛դ, զի ի պղծութե՛ անտի և ի հարկէ ապրեցուցեալ, ի սրբութե՛ և յողջախոհութե՛ան պահէ զնոսա։

Այլ սակայն ցկրբ լցէ այդ ոչ դադարել ձեր ի ատուերամարսն կրից աստի. քանզի և դուք ինքնին՝ որ զայդոսիկ բարբառիք՝ ոչինչ պակաս քան զմեզ ի վերայ հասեալ էք առաւելութե՛ փառաց կուսութե՛դ. և զոր միանգամ ասէք դուք՝ բովանդակ պատրաւակք են և բաղաձայք, և առաքաստք անժուժութե՛։

Ե. Այլ թէպէտ և անվտանգ մարթի էր ասել զայդոսիկ, սակայն և այնպէս պարտ էր դադարել ի բամ

բասանաց այտի ։ Վ՚անգի որ զփառաւորաց այլազգա-
դոյնս ինչ խորհեսցի , հանդերձ այլով վնասու՝ և վկայ-
ութիւն ինն ոչինչ դուշնաքեայ տայ առ ամենեսեան զիւ-
րոյ վատթարութիւնն , դատաստան ինն կարի ապակա-
նեալ և անիրաւ ։

Իսկ արդ՝ թէ և ոչ վասն այլոյ , սակայն վասն ոչ
դրգռելոյ զայդչափ վատթար կարծիսդ ՚ի վերայ ան-
ձանց , պարտ էր սանձահարել զլեզուն . զայն ինչ ածե-
լով զմտաւ՝ եթէ որ միանգամ աքանչանայ ընդ փառա-
ւորեալս ՚ի մեծամեծ նահատակութիւնս , թէպէտ և
ինքն անքաւական իցէ մերձիլ առ նոսա , սակայն և թո-
ղութեան հանդիպի յամենայն մարդկանէ ։ Իսկ որ ՚ի
գործ ոչ արկեալ զնոսա՝ նաև թշնամանեսցէ զարժա-
նաւորսն բազմոյ պակաց , յիրաւի արգելք ամենեքեան
առեսցեն վնա՝ իբրև թշնամի և ոսոխ առաքինութե ,
և որ հիգագոյն ևս իցէ քան զմոլեգինս ոմանս ։ Վ՚ան-
զի սոքա ոչ գիտեն՝ զինչ գործեն . և ոչ ինքնակամ
տանին՝ զոր կրեն , վասն որոյ և թշնամանեալ զիշխա-
նաւորսն՝ ոչ միայն չպատուհասին , այլ և որք թշնա-
մանինն՝ ողորմին նոցա ։ Վ՚պա եթէ ոք գիտութեամբ
յանդգնեսցի յայն ինչ՝ զոր նոքա անհանձարաբար գոր-
ծեն , իրաւամբք սյնուհետև ՚ի վճիռս ամենեցուն դա-
տապարտեսցի այնպիսին իբրև թշնամի բնուհես մերոյ ։

իա . Վ՚պա որպէս ասացի , թէպէտ և անվտանգ իցէ
բամբասանքդ այդ , այլ սակայն ՚ի պատճառս նախանձ-
ռելոյդ պարտ էր հրաժարել յայդմանէ ։ Իսկ այժմ և
վտանգ անհնարին է ՚ի բանիդ յայդմիկ . քանզի ոչ որ
նստի և ընդդէմ եղբօրն բարբառի և ընդդէմ որդւոյ
մերն դնէ զգայթակղութիւն , միայն պատժեսցի . ասղ .
եւ . 20 . այլև որ ժպրհի ընդ վայր հարկանել զգործս՝
որ գեղեցիկ են յաչս ՚ոյ ։

Այս արդ լուր դու՝ զինչ միւս մարգարէն ասէ ՚ի խո-
սելն վասն դոցին իրաց . * վայ որ ասէ զչարն բարի , և
զբարին՝ չար . որ դնէ զլոյս՝ խաւար , և զխաւարն՝ լոյս .
որ դնէ զքաղցրն՝ դառն , և զդառն՝ քաղցր ‖ . ես . է .
20 ։ Վ՚անգի զինչ քաղցրագոյն երբէք կայցէ քան զբ-
կուսութիւն . զինչ ևս լաւագոյն , զինչ առաւել լուսա-
ւոր . զի պայծառագոյն ևս քան զարեգակնայինն ձառա-

գայթն արձակէ Նաձանէս , և յամենայն կենցաղակա-
նացս որոշելով զմեզ՝ յատակահայեաց աչօք յարդարէ
հայել միշտ յարեգակն արդարութեան : Այլ արդեօք զայ-
սոսիկ վասն նոցա գուշէ եսայիաս՝ որ միանգամ ՚ի նոսա
դատաստանս ինն ունելին ապականեալս . իսկ դու լուր
զինչ միւս մարգարէն ասէ և վասն նոցա՝ որք և յայլ
ամենս առեալ սերմնանեացն զմնհառիթ խօսեն զայ-
նոսիկ , դարձեալ ՚ի նմին բացագանչութենէ առնելով
սկիզբն բանին . * Ա՛յ որ արբուցանէ ընկերին իւրում
հրապոյրս պղտորս ՝ ‖ . ամբ . ը . 15 : Այլ և վասն՝ ոչ լոկ
քառ , այլ որ սպառնալիս ինն անձառս և տանջանս ան-
ներելիս որոտացեալ մեզ : Վասն զմահաբեր զայս վա-
բեն գիրք ընդդէմ նոցա՝ որ ոչ ևս բաւական եղեն տե-
ղի տալ ՚ի հանդերձելոյն տանջանաց :

Այլ դարձեալ այլ մարգարէ ՚ի դէմն հարկանելով
հրեիցն , ասէ . * Ընբուցանէիք ուխտաւորացն գինի ‖ .
ամովս . ը . 12 : Իսկ արդ՝ եթէ որ նազովբեցւոյն գինի
արբուցանէ , այնչափ պատուհաս կրեսցէ , իսկ որ հրա-
պոյր պղտոր հեղոյ ՚ի հոգիս անդր անմեղայն , ւմ՛ ի-
միք տանջանաց նա չիցէ արժանի : Այթէ որ զմանր
փոքրիկ օրինականին այնմիկ կրթանաց հատանէ , անո-
ղքելի ունի զպատուհասն , իսկ ապա որ զսրբութիւնս
զայս ողջոյն խլէ , զինչ արդեօք ընկալցի դատաստան :
* Այթէ ոք , ասէ , գայթակղեցուսցէ զմի ՚ի փոքրկանցս
յայսցանէ , լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ ընդ
պարանոց նորա և ընկղմեսցի ՚ի ծով ‖ . մտթ . ժը . 6 :
Այսպա զինչ ասասցեն , որք բանիւքդ այդոքիւք ոչ զմի
ոք ՚ի փոքրկանց գայթակղեցուցանեն , այլ զբազումս :
Օ՛ի եթէ որ մորոս կոչէ զեղբայր իւր , ուղղակի առա-
քեր ՚ի հուր գեհենոյն . ապա որ զհրեշտակահանդէս
զայս քաղաքավարութիւն ընդ վայր հարկանէ , քանի՞
բարկութեն ձգեսցէ ՚ի գլուխ իւր : Ծիծաղեցաւ եր-
բեմն մարիամ զմովսէսիւ , ոչ այնպէս՝ որպէս դուք ինք-
նին այժմ զկուսութիւնդ , այլ կարի պակաս և պարկեշ-
տագոյնս . քանզի ոչ խոտեր զայրն , և ոչ խաղ առնէր
յայնժամ զառաքինութենէ զերանելոյն զայնորիկ , նաև
կարի իսկ աքանչացեալ էր . բայց այնչափ ինչ միայն ա-
սէր , եթէ և ինքն ՚ի նոսին վայելէ՝ յորս միանգամ
նա . այլ սակայն այնպէս ինն գրգռեաց զնոյ բարկութն

'ի վերայ անձին , որպէս զի և ո՛չ նա՝ որ Թշնամանեալն կարծէը՝ բազմապատիկ պաղատանօքն օգուտ ինչ գոր- ծեաց նմա . այլ և անդր ևս քան զկամն սրտի նորա ընդ երկարեաց պատուհասն նորա ։

իբ . Այլ զի՞նչ ասեմ զմարիամ , ուր և մինկտին այն՝ որ ելեալ խաղային 'ի բեթզէհէմ, և միայն ասա- յին առ եղիսէոս , էլ կնատակ , այնպէս իմն 'ի սրտմտու- թէ բզկտելին զնա՛ծ , որ և անդէն ընդ բանին ընդ այն միկ արջս արձակեաց 'ի բազմութէն նոցա . քանզի էին նոքա քառասուն և երկու . և առնէաքին նոքա առ հա- սարակ գիշատեցան յայնժամ 'ի գաղանաց անտի . և ո՛չ հասակ տիոցն , և ո՛չ երամ նոցա , և ո՛չ ընդ խա՛զ ա- սել օգնեաց ինչ մինկտուցն այնմիկ . և կարի իսկ քաջ ։

Վ՚անզի եթէ միանգամ՝ որք զայնչափ վաստակս յանձն առնուցուն , յառակ նշաւակի հանդերձեալ լեցե լինել նոցա՝ առ հասարակ առաջի մինկտնց և առաջի արանց , ո՞ոք այնուհետև 'ի տկարագունից անտի եր- բէք յօժարեսցի զանձամբ առնուել վաստակս իմն՝ որ ծաղր շարժեսցեն յայլս և կատականս . իսկ ո՞ոք ապա 'ի ռամկէն նախանձաւորս լինիցի առաքինութէն՝ յոր- ժամ այսպէս ծիծաղելի տեսցէ զնա ։ Ո՛չ եթէ այժմ՝ յորժամ առ հասարակ ամենայն ուրեք աքանչացեալ են ընդ նա , ո՛չ միայն որք պաշտեն զնա , այլ և որք վրէ- պէաքն են առ 'ի նմանել , 'ի վերայ այսր են ևս բա- ղումք՝ որ վատասրտին և զանդիտեն 'ի քրտունս յայտ- սէկ , ո՞ոք ապա հնշտեաւ խնդրեսցէ այնուհետև քուռն հարկանել զնմանել , եթէ արդեօք ո՛չ միայն 'ի զարմա- նացն վրէպ տեսցէ զնա , այլ և ընդ վայր հարեալ յա- մենայն մարդկանէ ։ Վ՚անզի որք զօրաւորագոյնքն են և որք աստ՛ն յերկինս 'ի վեր փոխեցան՝ նոցա չէն ինչ պակաք մխիթարութէան ռամկէն , այլ շատ իսկ է նոցա առ ամենայն յօժարութէն՝ գովութէն որ յոյ անտի է . իսկ որք առաւել տկարութէ զգածեալք իցեն , և այն ինչ ձեռնարկեալ 'ի գործգ յայդ , ո՛չ փոքր ինչ զօրու- թէան յաւելուած ընդունին նոքա 'ի կարծեաց անտի ռամկին . մինչև սպա դատաիարակեալք ամենայն ու- տեք՝ տակաւ տակաւ յարդարեսցեն զանձինս ո՛չինչ կա- րօտանալ առաջնորդութէանս այսմիկ ։ Իսկ այս ո՛չ 'ի

պատճառս նոցա միայն յաջողեալ է, այլ և՝ ի փրկութիւն նոցուն իսկ կատակողացն. զի մի՛ Թերևս անդրադարձ և ձգեսցին՝ ի չարութենէն՝ յորժամ ո՛չինչ տացեն նոքա վրէժս զառաջին յանդգնութեանցն։

Այլ արդ ինձ՝ որ ասեմն զայդոսիկ՝ ի յուշ գան և որ ինչ միանգամ առ եղիայիւն գործեցան։ Վասնզի զոր ինչ մինկտին այն կրեաց յարջոյց անտի՝ ի պատճառս եղևսէի, զնոյն՝ ի պատճառս նորուն վարդապետին երկու լիսուներն՝ ի միասին ընդ առաջնորդին իւրեանց կրեցին յերկնատեղւոյ հրոյն յայնմանէ։ Վասն զի որովհետև և նոքա բազում հեգնութիւք մատուցեալ կոչէին զարդարն և հրամայէին նմա իջանել առ նոսա, փոխանակ ընդ նորա հուր իջեալ զամենեսեան զնոսա առ հասարակ ծախեաց ո՛չինչ պակաս քան զդազանսն զայնոսիկ։

Վասն զայսոսիկ զմեռաւ ածեալ ձեր առ հասարակ որ թշնամիդ էք կուսութեանն, հուսկ ուրեմն դիք դուռն և նիգ բերանոց ձերոց. զի մի՛ Թերևս և դուք ինքնին սկսանիջիք ասել յաւուրն դատաստանի, յորժամ զկուսութիւն պայծառացեալսն անդանօր յայնի արկանիցէք. * Աղքա էին զորս երբեմն ծաղր առնէաք և յառակս նախատանաց. մեք անմիտք զվարս դոցա մոլորութիւն համարիաք, և զվախձան դոցա անարգութիւն. զիարդ համարեցան ընդ որդիս Ոյ, և ընդ Սբս վիճակ դոցա. ուրեմն մոլորեցաք՝ ի ձանապարհէ ձշմարտութենէն, և լոյսն արդարութեան ո՛չ լուսաւորեաց զմեզ ‖. ԽՀ. Է. 3։ Այլ զի՞նչ արդեօք շահ իցէ՝ ի բանից այսի, ուր ա պաշխարութենէն տկարացեալ է այնուհետև։

Եւ. Այլ Թերևս ասասցէ ոք՝ ի ձէնջ. միթէ ո՞չ ոք արդեօք յետ ժամանակացն այնոցիկ Թշնամանս էդ՝ ի վերայ արանց սբց։ — Ասեմք և բազում ուրեք ընդ տիեզերս։ Այլ զիա՞րդ ապա, ասեն, ո՛չ զնոյն վրէժս ետուն։ — Ասուն ապաքէն. և գիտեմք և զբազումն՝ ի նոցանէ։ Այլ եթէ եղեն և որք ապրեցանն, սակայն և ո՛չ մինչ իսպառ ապրեցին։

Վասնզի ըստ երանելւոյն պաւղոսի. * Այն մարդք, որոց մեղք յայտնի են՝ և յառաջագոյն հասեալ՝ ի դատաստան. և են՝ որոց զկնի երթան ‖. ա. տիմ. Է. 24։

Այլ ըղծօրինակ օրինադիրք զանիրաւացն պատուհասս
թողին արձանացեալ ի գրի , զնոյն օրինակ և տէրն
մեր յիս քս զմի ոք և զերկու ասէն պատժեալ ի մե-
ղուցելոց անտի , և իբրև ի պղնձի արձանի և ի գիրս
յանդիմանելով զնոցայն տանջանս , ի ձեռն նոցուն
պատահարացն՝ ամենեցուն ազդ առնէ ասելով . եթէ՝
Թէպէտ և ի ժամանակի ասա յայսմիկ ոչ զնոյն վրէժս
տացեն՝ որք միանգամ ի նոյն յանցանս պատժաւորացդ
յանդգնեցան , ի հանդերձեալ ժամանակին դժնդակա-
գոյն և սո տանջանօք պատժեսցին ։

Ինդ . Պատա ուրեմն յորժամ յանչափս մեղուցեալ՝ ոչ-
ինչ կրեսցուք չար , մի ինչ վստահ եղիցուք , այլ վասն
այնորիկ և առաւել և երկիցուք ։ Վասնզի Թէպէտ և
աստէն ոչինչ գատիցիմք յիմ , սակայն անդանօր ընդ
աչխարհի գատապարտեսցուք ։ Այլ այս դարձեալ ոչ
իմ ինչ է վճիռ , այլ քո՛ի գլխովին՝ որ ի պատգամն խօ-
սէր ։ Վասնզի ի խօսել նորա առ անարժանապէս հա-
ղորդեալսն խորհրդոց , այսպէս ասէ . * Վասն այնորիկ
իսկ են ի ձեզ բազումք հիւանդք և ախտաժէտք . և
շատ և սո են՝ որ և ննջեցեալ իսկ իցեն ։ Օ ի եթէ
զանձինս քննեաք , ապա ոչ գատապարտեաք . և եթէ
գատիմք , ի տեառնէ խրատիմք , զի մի ընդ աշխարհի
գատապարտեսցուք ‖ . ա . կոր . ժա . 30 ։ Վասնզի են՝ ո-
րոց ասէն խրատու պէտք են նոցա . յորժամ նոցա չա-
փաւորք իցեն մեզքն , և առեալք զպատուհասն՝ ոչ և սո
միւսանգամ դարձցին յառաջինսն անդր , իբրև չուն՝ որ
դառնայ ի փսխածն ։ Իսկ են դարձեալ՝ որ ի պատ
ճառս առաւելութեան չարութեն և ասէն լուծցեն
զվրէժս և անդ . իսկ կէսք դարձեալ՝ անդանօր միայն
գրաւեսցին ընդ տանջանօք . քանզի որովհետև դժնդա-
կագոյնս իմն գործեցին առաւել քան զառնեսեան ,
վասն այնորիկ ոչ արժանի ինչ համարին նոքա գանիլ
ընդ մարդկան . քանզի ասէ . * և ընդ մարդկան գա-
նեսցին ‖ . իբրու այն թէ պահեալք՝ զի ընդ դիւացն
տանջեսցին . * Վասնզի երթ՛այք , ասէ , յինէն ի խա-
րէն արտաքին՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշ-
տակաց նորա ‖ . մտթ . իե . 41 ։

Վազումք ընչիւք յափշտակեցին զքահանայութիւնն .

սակայն ո՛չ զոք ունէին կշտամբիչ, և ո՛չ գարձեալ լուան զայն ինչ՝ զոր սիմոնէ մոգն լուաւ յայնժամ՝ ի պետրոս սէ. այլ ո՛չ վասն այնորիկ և ապրեցան ինչ, այլ կարի և դժնդակագոյն քան զաստանօր զպատուն՝ առցեն յանձինս դատաստան. իբրու այն որ և ո՛չ յօրինակէ անտի զգօնացան: Խաղումք զկորխայն յանդգնեցան, այլ ո՛չ կրեցին զկորխայն. բայց սակայն կրեսցեն ապա առաւելագոյն և տուժիւք: Խաղումք նախանձաւորք եղեալ ամբարշտութեն փարաւոնի, ո՛չինչ անդնդաւոյզ կորեան իբրև զնա. սակայն գեհենոյն անդունդք մնան նոցա: Վանգէլ և ո՛չ որք մորոս կոչեն զեղբարսն, աստէն ետուն զվրէժս. սակայն անդանօր նոցա տանջանք գանձեալ կան:

Այ՛ երբէք ապա համարեսջիք դուք, եթէ բանք լոկ են վճիռքն այ. քանզի վասն այնորիկ և զկէս ի՛ ի նա ցանէն առեալ՝ ի գործ անդր ած ձգեաց. ըստ որում առ սափիրայիւն և առ նորուն արամբն, առ քարմեաւն, և առ ահարոնիսիւ, և առ այլովք բազմօք. որպէս զի որք միանգամ անհաւատք իցեն բանից նորա, ի հաւատոյ անտի արդեանցն պակուցեալք, դադարեսցեն այնուհետեւ ի խաբելոյ զանձինս՝ իբրու եթէ ո՛չ ունիյին տալ վրէժս. և խելամուտ եղեալ գիտասցեն՝ եթէ քաղցրութիւն այ այն է, տալ սահման ժամանակի մեղուցելոյն՝ և ո՛չ թէ ի սպառ ո՛չ տանջել զյաւերժա ցեալսն ի մեղս:

Այս արդ՝ մարթ էր ինձ և բազմագոյնս ևս խօսել և ի դէմն ածել՝ եթէ քանիսն հուր կուտեսցեն ի վերայ անձանց իւրեանց՝ որք միանգամ յումպէտս գրեն զփառս կուսութեանն. այլ սակայն ողջախոհիցն մտօք շատ են և այդոքիկ. իսկ որք ստամբաւք ոմանք իցեն և մոլեգինք, զնոսա և ո՛չ կարի ևս առաւելագոյնք քան զայդոսիկ երբէք բաւական իցեն նահանջել ի մոլեգնութենէ այտի: Այ՛ սան այսորիկ ի բաց թողեալք զայս մասն քանիդ, առ ողջախոհն մտօք բովանդակ փոխեսցուք զնա, միւսանգամ գարձեալք առ երանելին պաւղոս:

* Այ՛ վասն որոյ գրեցէք, ասէ, առ իս, բարւոք է մարդոյ ի կին մարդ չմերձենալ»: Այ՛ր յամենի լեցին առ հասարակ երկոքին կողմանքն, որք զամուսնութեին

թշնամանեն, և որք գարձեալ քան զարժանն առաւել բարձրացուցանեն զնա. քանզի զերկաքանչիւրսն միանգամայն ապ՝ի բերան առնէ երանելին պաւղոս՝ի ձեռն այսոցիկ, և որք ըստ նոցանէ կարգին բանք։

իե. Խարի է ամուսնութիւն. քանզի՝ի պարկեշտութեէ առեալ պահէ զայրն, և ոչ թոյլ տայ՝ի պոռնկութիւն թիւն թաւալիլ և կորնչիլ։ Այս մի երբէք ընդ վայր հարցես դու զնա. քանզի բազում ունի զշահ օգտին. ոչ ներէ եթէ անդամքն քո լինիցին անդամք պոռնկի. և տաճարն սրբութեան եղիցի պղծեալ և անմաքուր. ա. կոր. ե. 15։ Ա՝ան այնորիկ բարի է, քանզի որ հանդերձեալն է անկանել՝՝ի վեր առնու և կանգնէ։ Այլ զինչ այս առ այն՝ որ միանգամ կանգուն կայ, և որում էն ինչ պէտք առ՝ի նմանէ օգնականութեէ։ Վանզի աստանօր ոչ պիտանացու ինչ է քանդ և ոչ կարևոր. նա և խոչընդոտն է առաքինութեան, ոչ միայն զի բազումն առաջի արկանէ խոչս, այլ զի և զգուշութիւնն հատանէ կորէ առաւելապոյն մնասմբն։

իզ. Վանզի որ միանգամ զինս զգեցուցանէ մարդոյ, որ բաւական իցէ մերկ մարտնչել և յաղթել, ոչ միայն ոչինչ օգնէ նմա, այլ և զվերջինն անիրաւի զանիրաւութեէ. քանզի՝ի աքանչանաց անտի վրէպ կացուցանէ զնա և՝ի պայծառ պսակաց։ Վանզի ոչ ներէ, զի բովանդակ՝ի դէմն բերցի առաքինութեէն նահատակ կուէ նորա, և կարի խիճ աշխարհալուր լեցի մրցանակին նորա։ Ակ յամուսնութեան անդ առաւելապոյն է և գեանն. քանզի ոչ միայն՝ի գովութէ հասարակաց վրիպեցուցանէ, այլ և՝՝ի վարձուց անտի՝ որ պատրաստեալ կան վանն կուսանաց։ Ա՝ան այսոցիկ բարւոք է մարդոյ՝՝ի կին մարդ չմերձենալ։

Այս ինչ ապա թոյլ տաս մերձենալ։ Ա՝ան պոռնկութէ, ասէ։ Հրկնչիմ առնուլ՝՝ի վեր ածել զքեզ՝՝ի կատարն կուսութէ, զի մի թերևս գլորեալ անկանիս ցիս՝՝ի վիհն պոռնկութէ։ Ալև են քո թեթևացեալ թևք, զի չայդ գագաթն բարձրացուցից զքեզ։ Այլ սակայն նոքա չափշտակեցին կալան զմրցանն զայն, և՝՝ի փառս կուսութէն՝՝ի վեր վազեցին։ Ո՞ինչ ապա,

ոմ երանելիդ պաւղե , երկինչիս դու և դողաս ։ Լ՚Եթէ արդեօք , (Թերևս ասէր նա զայս) , անգիտ գոլով բա- նիդ այդմիկ՝ այնպէս ունիցին յանձինս զյօժարութիդ զայդ ։ սակայն փորձդ և տագնապդ մարթիդ այդորիկ դանդաղագոյնս գործեաց զիս՝ զկորհուրդ զայս տալ և այլոց ոմանց ։

*ԼԵ ։ Պ՚Ետացի զբռնութե՛ բանիդ այդորիկ ։ ՚ի վե- րայ հասի ձգանց մրցանացդ այդոցիկ ։ խելամուտ եղէ քրտանց պատերազմիդ այդորիկ ։ Պ՚ետք են անհնուաձե- լի և քաջազօր հոգւոյ , և որ անզգայացեալ ինի իցէ առ ՚ի ցանկութիւնս ։ Պ՚անգի ՚ի վերայ կայծականց պարտ է գնալ և ոչ այրել , ՚ի սուսերայ վերայ ընթա- նալ և ոչ խոցել ։ քանզի այնչափ է բռնութե՛ ցանկու- թե՛ , որչափ և հրոյ և երկաթոյ ։ և եթէ զայս օրինակ հոգին յարդարեալ ոչ իցէ , և եթէ ոչինչ գրգռեսցի ՚ի ցաւս յոյսոսիկ , վաղվաղակի կորուսանէ զանձն ։ Լ՚պա ուրեմն պէտք են մեզ ադամանդեայ մտաց , աննիւթհե- լի աչաց , բազմադէմ ժուժկալութե՛ , ամուր պատուա- րոյ , նախապարսպաց և նգաց , զուարթուն և արի պահպանութե՛ց ։ և նախ քան զայս ամենայն՝ երկնաւոր օժանդակութե՛ ։ Օ՚ի * թէ ոչ տէր պահէ զքաղաքն , ՚ի նմանիր տքնին պահապանք նորա ‖ ։ սղմ ։ ճիղ ։ 1 ։*

*Լ՚սկ սրդ զիաՀրդ ձգեսցուք ՚ի մեզ զօժանդակութե՛դ զայդ ։ Յորժամ զմերսն զամենայն ՚ի ներքս բերցուք ։ ողջամիտ խորհուրդս , բաղուխ ճիգն պահոց և տքնու- թե՛ , չչգրտութե՛ օրինաց , պահպանութե՛ պատուիրա- նաց , և զղլուխս ամենայնին՝ ոչ ապաւինել յանձինս մեր ։ զի թէպէտ և մեծամեծ ուղղութիս գործեալ լ- ցէ մեր , հարկ է միշտ զայն լինչ ասել ընդ մեզ ։ եթէ ոչ տէր շինէ զտունն , ՚ի նմանիր վաստակին շինողք նո- րա ։ Օ՚ի * ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնով և ընդ արեան , այլ ընդ իշխանութիս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս յաւիտենից այսորիկ , ընդ այս չարութե՛ որ ՚ի ներքոյ երկնից ‖ ։ եփ ։ ճ ։ 12 ։ Լ՚ու պարտ է՝ զի զխիզը զինուորեալ արձանասցին մեզ խորհուրդքս , և ահարկուք ոմանք լինիցին անա- մեծին ցանկութե՛ց ։ Լ՚ըրև զի եթէ վայրիկ մի թուլաս- ցին նոքա , ՚ի վերայ արձանացեալ կայ սատանայ հաւ-*

'ի ձեռին՝ առ 'ի յածել և բոյակիզել զտաճարն այդ։
Այսպա յամենայն կողմանց ամրութեամբ պիտոյ են մեզ քանզի մարտ մեզ առաջի կայ ընդ հարկի ընութեան, նախանձ ընդ հրեշտակացն քաղաքավարութեամբ, ընթացք ընդ անմարմին զօրութեանցն. հողն և մխիթարն երկնաքաղաքացեացն թևակոխել հաւասարել, և ապականութեամբ ընդ անապականութեամբ մերկել։ Այս ո՞ւր ապա, ասա ինձ, զամբանութեանն և զհեշտութեանն երբեք ժպրհեսցի 'ի կշիռ ձգել ընդ աբանչելի քանիդ այդմիկ. և զինքդ ո՛չ կարի ծանծաղմտութեամբ ես այդ։

Օ այս ամենայն պիտելով պաւղոս, ասէր. * Արբա քանչիւր ոք զինւր կին կալցի ‖ ա. կոր. է. 2։ Յաղագս այսորիկ խորշէր տեղի տայր, յաղագս այսորիկ ո՛չինչ համարձակէր 'ի սկզբանն վասն կուսութեամբ խօսել ընդ նոսա. այլ կայ և դեգերի 'ի բանս յաղագս ամուսնութեան, առ սակաւ սակաւ կամելով հրաժարեցուցանել զնոսա յամուսնութենէ. և յաղագս ժուժկալութեամբ տողս կարգելով դուզնաքեայս, առեալ խոտնէ զնոսա 'ի բազմագէմ բանն յայնոսիկ. և այսպէս ո՛չինչ Թողու լսելացն հարկանիլ 'ի խստութենէ յորդորակին այնորիկ։ Վասնզի որ խոպան և գլխովին 'ի խստամբերին հիւսէ զբանն, պատերազմող լինի լսելացն, միանգամայն և բռնադատէ բազում անգամ՝ զի տեղի տուեալ 'ի բաց վազեցէ հոգին ո՛չինչ հանդարտելով խոտուէ բանիցն։ Իսկ որ միանգամ բազմապատնակ գործէ զնա, և առաւել 'ի հեշտին բանիցն քան 'ի դժուարինն՝ կազմէ զլսելութեանն, միանգամայն և զխոտութիւն բանին գողանայ, և զունկնդիրն զբօսեցուցեալ՝ այնպէս առաւել իմն խելամտեցուցանէ զնա և յանկուցանէ. զոր և երանելին պաւղոս գործեաց։

Վասնզի իբրև ասաց, եթէ բարւոք է մարդոյ 'ի կին մարդ չմերձենալ, վաղվաղակի յամուսնութեան անդր ընթացաւ, ասելով. Իւրաքանչիւր ոք զինւր կին կալցի։ Այս զսոյն երանելի միայն կոչեաց և եթող. քանզի բարւոք է, ասէ, մարդոյ 'ի կին մարդ չմերձենալ. իսկ յաղագս ամուսնութենէն և խորհուրդ 'ի նմանէ արկանէ և պատուիրան. բերէ 'ի վերայ և զպատճառն. քանզի վասն պոռնկութենէ ասէ. Թուի իմն այնպէս՝ եթէ բամբասէ զներողութեանն ամուսնութենէն, այլ չչնարտութե՛

թաքնաբար ՚ի պատճառս անդ ամուսնութեանն քարձրացուցանել զովութիւն ժուժկալութեանն. ոչ յայտնապէս ՚ի դէմս ածելով քանիսն, այլ յունկնդրացն խիղճ մտաց ապաստան առնելով զնոսին։

Վասնզի եթէ ոք գիտասցէ զայն ինչ՝ եթէ յորդորիւն ինքն յամուսնանալ, ոչ զի առաւելագոյն իմն առաքինութիւն իցէ ամուսնութիւնն, այլ զի այնչափ իմն վաստակոտ համարի զնա պատգոս, մինչ զի և առանց ամուսնութիւնն անքաւական լինել նմա ՚ի բաց կալ ՚ի վաստակս յանկութիւնն անտի, այնպիսին արդեօք պատկառեալ և զամենի հարեալ՝ անգէն վաղվաղակի թևակոխեր առնուլ յանձն զկուսութիւնն, և զայն կարծիսն վատութիւն յանձնէն ՚ի բաց քերել։

լը. Ասէ զինչ ապա լեալ այսոցիկ ասէ.* Կնոջ՝ այր իւր զպարտսն հատուսցէ. նոյնպէս և կինն՝ առն իւրում ‖. ապա և մեկն և յայտնի ընծայելով զնոսին, ՚ի վերայ ածէ.* Ոչ ի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս և այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն ‖. ա. կոր. է. 3. 4։ Այս Թուի թէ վասն ամուսնութեանն ասէին այդոքիկ. այլ որ ձշմարիտն է՝ զայնոսիկ իբրև կարճ պատեալ սովորական խոյթիւն՝ այնպէս արկանէ ՚ի լսելիս աշակերտացն. և խնդրէ յաղագս ամուսնութեան քանիւքն՝ հրաժարեցուցանել զնոսա յամուսնութենէ։ Վասնզի որ միանգամ լսէ՝ եթէ յետ ամուսնանալոյն ոչ ևս է տէր անձին իւրում, այլ հնազանդեալ է այնուհետև ՚ի ներքոյ կամաց կնոջն, գուն գործէ վաղվաղակի ՚ի բաց զերծանիլ ՚ի դառնագոյն ծառայութենէ անտի. մանաւանդ եթէ և ոչ ՚ի սկզբանն մտանէ ընդ լծոյն ընդ այնուիկ. որովհետև որ միանգամ մտանէ, հարկ է այնուհետև ծառայել՝ ցորչափ կամք իցէն կնոջն իւրոյ։

Այս զի ոչ վայրապար ինչ կաղակարծս խօսիմ յաղագս իմաստիցն պատգոսի, դիւրին է մեզ յաշակերտսդ անտի ՚ի վերայ հասանել քանին։ Վասնզի և ոչ իսկ նոքա յառաջագոյն դժոխմբերք ինչ և դժուարաբերսն համարեցան զամուսնութիւնն, այլ յորժամ լուան ՚ի տեառնէ՝ զի յայնչափ հարկն ածեալ պաշաբէ զնոսա, յորում և զկորնթացիսն յայնժամ պատգոս։ Վասնզի այն՝ որ ասէ,

* որ արձակեսցէ զկին իւր , առանց բանի պոռնկութե՛ , նա տայ նմա հնար ‖ . Մտթ . Ե . 31 . և այն գարձեալ * այրն իւրում մարմնոյ ո՛չ իշխէ ‖ , այլովք բանիւք , այլ նովին առածան մնօք ։

Ա՛պա եթէ ոք ձգդիտ ևս խելամուտ եղիցի ասացեալոյն պաշտօնի , սա առաւել ևս ամեցուցանէ զբնաւորութիւնն , և առաւել ծանրաբեռն գործէ զծառայութիւնն ։ Վասնզի տէրն ո՛չ թոյլ տայ հանել զկինն արտաքս ՚ի տանէն ։ իսկ պաշտօս և զիւրական մարմնոյն իշխանութիւնն կապտեալ ՚ի նմանէն , զամենայն զնորա տէրութիւնն ՚ի կին անդր ասլատան առնէ , և առաւել իմն քան զարծաթատիւն ծառայ հնազանդեցուցանէ նմա ։ Վասնզի սմա մարթ է բաղում անգամ և զգերեա կատարն զբռամբ ածել զազատութիւն , եթէ երբէք բաւական իցէ հարստանալ արծաթով և հատուցանել տեառն իւրում զփրկանս անձին ։ իսկ այրն թէպէտ և կին ունիցի իւր՝ առաւել ժ՛ոխրմբեր քան զբնաւս , հարկաւորի բերել զծառայութիւն ։ և ո՛չ արձակուրդ կինչ և ո՛չ ելս կարող է գտանել ՚ի տէրութէ անտի ։

եթէ . Ա՛յդ երբեմն ասաց , կին մարմնոյ իւրում ո՛չ իշխէ , ՚ի վերայ բերէ ։ * մի՛ զրկէք զմիմեանս ։ բայց եթէ կինչ ՚ի միաբանութէ առ ժամանակ մի , զի ուխտիցին և պահոյն պարապիցէք ։ և դարձեալ ՚ի նոյն դարձջիք ‖ . ա ։ կոր ։ Է ։ 5 ։ Հաճարիմ այնպէս , եթէ աստանօր բազումք որք զկուսութէն գիրկս արկեալ իցեն , պատկառեսցին և զամօթի տարցին ընդ բաղում ներողութէն պաշտօսի ։ Ա՛յլ մի՛ երկնչիք դուք , և մի՛ դարձեալ անհանձարս կինչ կրեսջիք ։ Վասնզի թէպէտ և բանքդ այդոքիկ նորա իցեն՝ որ քաջ իսկ ներողութէն գնասցէ առ ամուսնացեալսն , սակայն եթէ ոք ձգդտիւ խուզեսցէ զնոսա , համախորհուրդ առաջնոյն գտցէ զկոզվին ։ ապա թէ ոչ՝ եթէ ոք վեր ՚ի վերոյ կամեսցի հայել ՚ի սոսա՝ փոխելով զնպատակ խնդրոյն , թուի իմն այնպէս՝ եթէ առաւել հարսնածուի իցեն բանքդ՝ քան եթէ առաքելոց ։ իսկ եթէ բովանդակ զնորհուրդն առեալ բացցէ պարզեսցէ , նաև զայս յորդոր բանի քաջալայելուչ գտցէ առաքելական պատուոյն ։

Վասնզի առ ինչ նա այնչափ երկայնապոյս ձգի ՚ի

բանիդ յայդմիկ . Թերևս ո՞չ շատ իսկ եր միևչև ցայն վայր գաղարեցուցանել զյորդորանին՝ յորժամ նոսա ձնռելովքդ զդոյն շքեղ ևս ի գէմս եբեր : Վանզի զինչ առաւել ինչ քան զայն , եթէ կնոջ՝ այր իւր ըզպարտուն հատուսցէ , և թէ՝ այրն իւրում մարմնոյ ո՛չ իշխէ , ունիցի արդեօք ասել այս , մի զրկէք զիմեանս , բայց եթէ ինչ ի միաբանութենէ առ ժամանակ մի . ո՛չ ինչ արդեօք առաւել , այլ զի զոր անդանօր վեր ի վերոյ ասացաք և ընդ աղօտ , ասա բազմագոյն բանիւքն լուսաւորագոյն ևս յարդարէ :

Նա գործէ զայս՝ նմանող եղեալ սամուէլի սրբոյն ոչ : Վանզի զորօրինակ նա կարի ձգդրատագոյնս զօրինս Թագաւորութենն ի թիւ արկանէ խաժամուժ ամբոխին , ո՛չ զի չխնձն առնուցուն , այլ զի ի բաց հրաժարեսցին . և Թուի արդեօք եթէ վարդապետութենէ իմն էր բանն . սակայն ձշմարտութենէ կասեցուցանէր զնոսա ի տարաժամ ցանկութենէ անտի նոցա . այսպէս և պատգոս ստէպ ստէպ և յայտնագոյնս առեալ յերկեղած զգուշաւորութենն ամուսնութենն , նովին բանիւքն կամելով նահանջել զնոսա ի նմանէ : Վանզի յորժամ ասաց , եթէ՝ կին մարմնոյ իւրում ո՛չ իշխէ , ածէ ի վերայ . մի զրկէք զիմեանս , բայց եթէ ինչ ի միաբանութենէ , զի ուխտին և պահոցն պարապիցէք : Տեսանեմ՝ զիարդ աներկևանութենէ իմն և հեշտաբար զորս յամուսնութենէ անդ կեցեալ էին՝ ի հրահանգս ժուժկալուն առեալ ածէ : Վանզի անդ ի սկզբանն սոսկ ի գովութիւն առ զբանն , ասելով . բարւոք է մարդոյ ի կնի մարդ չմերձենալ . իսկ ասա և յորդորակ ի վերայ կապէ ասելովն , մի զրկէք զիմեանս , բայց եթէ ինչ ի միաբանութենէ :

Իսկ առ իմ՞ արդեօք յորդորակաւ և ո՛չ հրամայական եղանակաւն ի նեբքս արկանէ զայն ինչ՝ զոր սահմանեցն կամէր . քանզի ո՛չ ասաց , զրկեցէք զիմեանս , սակայն միաբանութենէ . այլ զինչ . մի զրկէք զիմեանս , բայց եթէ ինչ ի միաբանութենէ : Վանզի այնպէս առաւել հեշտալուր եր բանն , այն որ զիմնաստ վարդապետին ի գէմս ածէ՝ ո՛չ իբրև խստութենէ ինչ պահանջող գործոյն . որ մանաւանդ բազում մարգասիրութենէ բնաւորեցաւ առնուլ զլրումն : Նա ո՛չ գարձեալ այ-

թուիկ միայն սփոփանս մատուցանէ լսելեացն , այլ և գիտասքերն ՚ի համառօտ բանս պարագրեալ , մինչեւ գաւս իմն ածեալ ՚ի վերայ ունկնդրին՝ դառնայ փոխի ՚ի հեշտալիս անդր , և առաւելապէս ՚ի նոսին դեգերեալ մնայ ։

Ը. Այլ սակայն արժանի քննուէ է և այն . ընդէր արդեօք , եթէ արդարև պատուական է ամուսնութիւն և ՚ոչ անկողին , ոչինչ նեղիչ նմա տեղի ունել ՚ի ժամանակի անդ պահոցն և աղօթից ։ Արդև գի կարի անտեղի իցէ , եթէ հրկայք ինքնին՝ որոց մտրմնականք ո մանք ամենայնիւն սահմանեցան նոցա , որոց և երկուս ունել կանայս եղև թոյլութիւն , և արձակել զնոսա և զայլս ամենս փոխանակ ածել , այնչափ խնամս ՚ի նեղբս բերցեն վասն բանիս այսորիկ , մինչ գի և յորժամ հանդերձեալ էին նոքա լսող լինել ածայնոցն բանից՝ ՚ի բաց մեկնիլ և յօրինաւոր մերձաւորութենէն . և այն՝ ոչ գի օր և աւեթ և ոչ գերկուս , այլ զբազումն . իսկ մեք՝ որ յայնչափ ընորհս վայելեցաք , որ զհոգին առաք , որ մեռաք և ընդ քեզ թաղեցաք , որ որդեգրութեն պատուեցաք , որ յայնչափ պատիւն ՚ի վեր ելաք , յետ այնչափ և այնպիսի բարեացն՝ և ոչ զնոյն ջանն յանձին կալցուք զտղայոցն զայնոցիկ ։

Ապա եթէ ոք դարձեալ այնդեսցի ՚ի խնդրել , եթէ ինքն մնալոյս առ ինչ արդեօք ՚ի մերձաւորութենէ անտի ՚ի բաց հրաժարեցոյց զերեսայն . զայն ինչ ասացից ես , եթէ՝ թէպէտ և պատուական է ամուսնութիւն , այլ ցայն վայր ևեթ հասանէ զօրութիւն դորա , ոչ պղծել գորս վարինն նոսաւ . իսկ սուրբս ոմանս յորդորել , այս ոչ նորա գօրութենէ է գործ , այլ կուսութենէն ։

Իսկ թէ ոչ մնայէս միայն և ոչ պատրոյս միայն հրամայեին զայս , լուր զինչ ասէ յովել . * Արբեցէք պահս , քարոզեցէ՛ք պաղատանս , ժողովեցէ՛ք զժողովուրդսդ , ընտրեցէ՛ք զծերս ‖ . յովել . Բ . 15 ։ Այլ թերևս խնդրես ցես դու զայն , ո՞ր ապա խորհուրդ տայ հրաժարել ՚ի կնոջէ . * Լուցի՛ ասէ , փեսայ ՚ի սենեկի իւրմէ , և հարսն յառաջաւտէ իւրմէ ‖ ։ Վասնզի այս վերհատոյն է քան զմեծախսական հրամանն . զի եթէ փեսայի և հարսին՝ զօրս բորբոքէ ցանկութիւն , զօրս մտրմնջեցուցանէ երկի-

տասարդութիւն, որոց անսանձ է տուիանքն, չէ պարտ մերձաւորիլ՝ի ժամանակի անդ պահոցն և աղօթիցն, քանի՛ և առաւել որոց և ո՛չ զհարկն զայն մերձաւորութեան ունիցին։

Վասնզի որ ըստ արժանին աղօթելն կամի և պահել, պէտք են նմա զամենայն զկենցաղականացս զսէրն՝ի բաց դնել, զամենայն զհոգս և զբօսանս. և ամենայն ուստեք գեղեցկապէս ժողովել զանձն, և այնպէս մերձենալ առ Յն. Վասն այսորիկ և բարի են պահք, զի հատեալ կտրեալ զամենայն հոգս հոգւոյն, և՛ի բաց վարեալ զվատութիւն՝ որ շուրջանակի յորդէ զմտաքն, բռնադակ լինեն առեալ դարձուցանէ զխորհուրդսն։ Օ՜սոյն և պաւղոս առաքել եդեալ նպատակ, հրաժարել ըեցուցանէ՛ի մերձաւորութենէն. և բանս ինն՝ի վար արկանէ կարի դիպաւորս։ Վասնզի ո՛չ ասէ, զի մի պղծեսջիք, այլ զի պատրաստիցէք պահոցն և աղօթից. իբրև զի մերձաւորութիդ առ կինն ո՛չ եթէ՛ի պղծութիւն ինչ առեալ ձգէ, այլ յանպարապութիւն։

ըե. Վասնզի եթէ այժմ յետ այնչափ անհրկեալ նուիրեն, տակաւին գուն գործէ սատանայ խափանել զմեզ՝ի ժամանակի աղօթիցն, իսկ ապա՝ եթէ գտցէ երբէք լքեալ անկեալ զհոգին, և՛ի կարեկից գթոյ անտի առ կինն մերձկեալ, զինչ ո՛չ գործեացէ յայսկոյս յայնկոյս յածելով շուրջանակի զայս մտացն։ Այս զի մի՛ ինչ կրեսցուք յայսպիսեայ աստի, և մի՛ դարձեալ՝ յորժամ առաւելապէս ջանս մեք՛ի ներքս արկանեմք բաւիչ մեզ յարդարել զնա՝ յայնժամ գրգռեսցուք զնա այնպիսի վայրապատին աղօթիւքն, հրամայէ յայնժամ՛ի բաց կալ՛ի մերձաւորութենէ անտի։

լբ. Օ՜ի եթէ որք միանգամ առ Թագաւորն մատչին, և զինչ ասեմ առ Թագաւորս, նա և առ վերջինսն յիշմանայց, և ծառայք՝ յորժամ խօսին ընդ տէրոջ իւրեանց, եթէ՛ի պատճառս անիրաւութենէն զոր անիրաւեցան, եթէ՛ի պատճառս պիտոյից երեսից տեայ ինչ առ՛ի նոցանէ, և եթէ՛ի պատճառս ինչ հանգարտելոյ զբարկութենէն գրգռեալ ընդդէմ նոցա, միանգամայն և զաչս և զմիտս դարձուցեալ առ նոսա՝

այնպէս մատուցանեն զաղերան . որ զի եթէ սակաւ մի
Թմբրեալ անզգայասցին , ո՛չ միայն ՚ի ձեռս չբերեն
զինդրելին , այլ և չարիս իմն կրեալք յանձինս՝ այն-
պէս մեկնեսցին ՚ի բաց : Այս արդ եթէ որ զմարդկան
սրտմտուի խնդրեն ցածուցանել , այնչափ ջանս յանձն
առնուն , զի՞նչ ապա մեզ անկ լեալ կրեալ հիւծացելոցս ,
որք այնչափ պղերգութեամբ մատչիմք առ ամենեցուն
տէրն . և այն զի կարի առաւելագունին մեք ՚ի ներքոյ
գրաւեալ եմք բարկութե : Այանզի ո՛չ ծառայ զաղը
խր , և ո՛չ իշխեցեալն զծագաւորն երբեք այնպէս ՚ի
բարկութի գրգռե , որպէս մեք զծծ զօր ամենայն : Այս
զայս ինչ յայտ արարեալ քո՝ զառ ընկերն զմեղսն հա-
բիւր դահեկան կոչեր , իսկ զառ ՚ծ զյանցանսն բիւր
քանքար . Տ՚Ր . ԺԸ . 34 :

Այպա քանզի մատչիմք յաղօթս առ ՚ի շինջուցանել
զայնչափ բարկութին , և ՚ի հաշտեցուցանել զնա՝ որում
զօրհանապազ Թշնամի ընդդէմ կքրիմք , յիրաւի արդեօք
արգելու զմեզ ՚ի հեշտութէ անտի . իբրև Թե ասելով .
յաղագս հոգւոյ են մեզ բանքս , ո՛վ սիրելիք . ՚ի վեր-
ջինսն է վտանգն . պարտ է զգուշանի հարկանիլ և
երկնչել և սարսել : Ո՛ատչիմք առ ահաւոր տէրն , որ
բազում Թշնամանեցաւ առ ՚ի մէնջ , որ վասն մեծա-
մեծաց ունի ընդ մեզ վարել դատ : Այ՛ս այս ժամանակ
է զրկախառնութեց , և ո՛չ հեշտութեց , այլ արտաս-
ուաց և դառնապէս հեծութեց , ընդ երկիր տարածե-
լոց , ձչգրիտ խոստովանութե , ուժգին պաղատանաց ,
բազմադիմ խնդրուածաց . իբրև զի սիրելի իսկ է մեզ
ձեռոցին և այնչափ ջանիցն յանձնառութե բաւել հան
դարտել զբարկութեին զայն . ո՛չ զի խիստ և անագորոյն
ոք է տէրն մեր , քանզի յոյժ հեզ է և մարդասէր . այլ
զի մեղանաց մերոց առաւելուն՝ և ո՛չ այնպիսի քաղցր
և հանդարտ և բազմաղորմ տեառն Թողու հեշտաւ
ներել մեզ . վասն այնորիկ ասէ , զի պահոյն և աղօթից
պատապիճէք :

Այս արդ զինչ և ևս դառնագոյն երբեք կայցէ քան
զայդ ծառայութե : Այամի յառաջադէմ լինել յառա-
քինութե անդր , յերկինս ՚ի վեր սլանալ , պահոց և ա-
ղօթից անդուլ պարապել և զաղտս հոգւոյն սրբել . ա-
պա եթէ նա ո՛չինչ կամեսցի միաբան լինել խորհրդ դս

այսմիկ, սակիսիմ ծառայել ցանկութե՛ն նորա։ Վանգի յաղագս այսորիկ կանխեալ ասէը. բարւոք է մարդ՝ ի կին մարդ չմերձենալ. յաղագս այսորիկ և աշա կերաքն ասէին առ տէր.* Եթէ այդպէս ինչ ինաս ի ցի ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ ‖. Գլ. ծ՛. 10. քանզի միանգամ զմտաւ ածեալք՝ եթէ հարկ է այնուհետեւ, զի՛ ի միում յերկուց կողմանց անտի ելցուին տուգանքն, տագնապեցան՝ ի խորհուրդս լեանց, և արձակեցին զձայնն զայն։

Լը. Յաղագս որոյ և պաշտօն սակս սակս վնասն յերկնելոյ, զի՛ ի նոյն խորհուրդ առեալ ձգեսցէ ըզկորնթացիան.* Ուրաքանչիւր ոք զիւր կին կալցի. կնոջ՝ այր իւր զպարտսն հատուսցէ. կին մարմնոյ իւրում ոչ իշխէ. այլ՝ այր. մի զրկէք զիմեանս. ի նոյն դարձջիք ‖։ Վանզի և ոչ երանելիքն այնոքիկ յայնժամ յառաջին ձայնէ անտի վազվազակի կրեցին զայս. այլ յորժամ կրկին լուան զայն, յայնժամ՝ ի վերայ հասին հարկի պատուիրանին։

Վանզի յորժամ նստաւ քո՛ ի լերին անդ և խօսեցաւ վասն բանիս այսորիկ, և յետ այնորիկ միւսանգամ այլ ինչ բազում, այնպէս ուրեմն առեալ ձգեաց վնասս՝ ի սէր ժուժկալութե՛ն։ Եւ այսպէս ապա՝ բանք յերկնելոյք՝ բազում ունին զօրութե՛ն։ Վասն որոյ և աստանօր վարդապետին նմանող եղեալ՝ աշակերտն՝ սակս վնասոցն իրացն բարբառի. և ոչ ձգեալ զներս զբեթին սուկ առաջի ընծայէ, այլ հանդերձ պատճառանաւն. վասն պոռնկութե՛ն ասէ, և վասն սատանայիկ փորձութե՛ցն և անխառնութե՛ն. և անդէն ապա անձնկալ ինն զկատարութե՛ն գովութիւն հիւսէ՝ ի ձառս ամուսնութեանն։

Լե. Վանզի եթէ զանգիտեաց նա ընդերկար հրաժարեցուցանել զնոսա՝ որք միանգամ յամուսնութեան անդ վարեին կեանս, զի մի թերևս մուտ ինչ գտցէ սատանայ, քանի՞ն պատկաց ապա արժանիք իցեն, որք և ոչ՝ ի սկզբան անդ կարօտք եղեն միխթարութեանս այսմիկ, և մինչ իսպառ անպարտաելիք կացին ինացին։

Եւ այն զի՝ և ոչ միօրինակ՝ ի վերայ երկաքանչիւ-

բոցն՝ սատանային շարժին մեքենայք։ Վասնզի՝ ի վե-
րայ նոցա որպէս կարծեմն՝ ոչ այնչափ ինչ ծանրանայ,
դիտելով չափ՝ եթէ մերձ առ իւրեանս է ապաստանա-
րանն. և թէպէտ և կարի բռնագոյն յարձակումն ըզ-
գասցեն յանձինս, մարթ է վաղվաղակի՝ ի նաւահան-
դիստ անգր երթալ ապաստան լինել. քանզի և ոչ հե-
ռագոյնս ինչ ներէ պաշտօն երանելին նաւարկել նոցա.
այլ իբրև վաստակին՝ պատուիրէ նոցա դարձ առնել,
և թոյլ տայ միւսանգամ դառնալ՝ ի նոյն։

Վասն որ կոյսն է՝ ստիպի ցանգ ծովագնաց լինել, և
ընդ աննաւահանգիստ անդունդս նաւել. և թէպէտ և
կարի գժնդակ յառնիցէ մրրիկ, և ոչ այնպէս օրէն է
նմա՝ ի նաւահանգիստ ուրեք ձգել զմակոյկն և հան-
գուցանել։

Այլ արդ որպէս որք գաւաճանքն են՝ ի ծովու՝ ուրա-
նօր միանգամ քաղաք կայցէ կամ՝ նաւատեղի կամ՝ նա-
ւահանգիստ, ոչ՝ ի վերայ վազեն նոքա նաւորդացն.
քանզի դովին յանդուգն՝ ի վտանգ մատնեն զանձինս.
ապա եթէ՝ ի խորս անդ անդնդոյն հասեալ ըմբռնեա-
ցեն զմակոյկն, զամենայն օգնականացն բորբոքիչ ու-
նելով յագգնութիւնն, զամենայնն շարժեն՝ զամենայնն
յուզեն, և ոչ հանդարտեալ կասին երբէք, մինչև կամ՝
զնաւարկեալսն խորասոյզ արասցեն, կամ՝ ինքեանք ըզ-
նոյն կրեսցեն կիրս։ Այսպէս և հինս այս վայրագ՝ բա-
զում մրրիկ՝ ի վերայ ածէ կուսին, և այս գժնդակ և
երեքալեանս գժախըմբերս, զամենայնն վեր՝ ի վայր
խառնէ, զի բռնութիւնն և թափումն շրջեալ միանգամ՝
կործանեսցէ զմակոյկն. քանզի լուաւ եթէ կուսին չէ
հնարհեալ դառնալ՝ ի նոյն. այլ հարկ է նմա միշտ մրրիկ,
ցանգ մաղտնչել ընդ այսս չարութեանն, մինչև ուրեմն
յանգրայթ նաւահանգիստն նաւեալ ժամնանեսցէ։

Վասնզի իբրև զօրական քաջ՝ արտաքոյ պարապացն
արգելեալ պաշտօն զկայսն, ոչինչ ներէ բանալ նմա
դգրուխն. Թէպէտ և կարի վայրենի իցէ Թշնամին
ընդդէմ նորա, Թէպէտ և քան զայս առաւել ևս սաս-
տիկ իցէ, որպէս զի և ոչինչ երբէք առնուցու հակա-
ռակորդն դուլ և դադար։

Այլ ոչ գարձեալ սատանայ միայն, այլ և ինքնին
լուսկիք ցանկութիւնն բռնագոյն ևս տագնապէ զամե-

րիան . և այս քաջայայտ է ամենեցուն : Վասզի զորոց միանգամ ունիմք զվայելուն , ոչինչ այնպէս հեշտեաւ ըմբռնիմք ՚ի ցանկութենէ նոցա . քանզի վստահութիւնն Թոյլ տայ վատանալ հոգւոյն : Օ՜սոյն և առաւել վկայէ մեզ , Թէպէտ և ասկային , սակայն յայժ ձշմարիտ . որ առ ձեռն պատրաստ է , ասէ , ոչինչ բռնանայ առ ՚ի ցանկութենէ : Ապա եթէ երբէք խափանեսցուք յայնցանէ՝ զոր յառաջն ընդ մերովս ունէաք իշխանութիւն , ընդ հակառակս յայնժամ ելանէ քանն . և որք միանգամ ՚ի պատճառս իշխանութենէն խոտեալք ումանք էին առ ՚ի մէնջ , նոքին յորժամ վերծուն ՚ի ձեռաց մերոց , սաստիկ և շարժեն ՚ի մեզ զցանկութենէն :

Ապա ուրեմն առաջին վասն քանիս այսորիկ առաւել մեծ է խաղաղութիւնն առ ամենայնացեալսն . իսկ երկրորդ՝ զի Թէ և երբէք բարձրագոյնս ՚ի վեր առաքսացեալ զայրասցի բոցն , անդէն առ նմին զուգաւորութենէն ՚ի վերայ հասեալ սանձահարեսցէ զնա : Իսկ կայսն ոչինչ ունելով յայսպիսեացս աստի՝ որով զՀուրն զայն շիջուսցէ , տեսեալ զի սաստկացեալ նա զայրագինս ՚ի վեր դիպանայ , և քանզի շիջուցանել զնա ոչ ունի , զայն միայն այնուհետեւ հնարի՝ զի մի կռուեսցի ընդ Հրոյն ընդ այնմիկ կիզցէ ՚ի նմանէ : Արդեօք էր ինչ քան զայդ առաւել նորանչան , ողջոյն զնաարոյկն ՚ի ներքս հուր բառնալ կրել , և ոչ այրել . ՚ի շեմարանս Հոգւոյն յայսկոյս յայնկոյս յածել ընթանալ բոցոյն , և անմատոյց պահել մնացն : Վասզի ոչ ոք նման Թոյլ տայ զկայծակունսն զայնոսիկ արտաքս վարել . այլ զոր միանգամ առակողն յանհնարիցն ասաց լինել ՚ի քնուԹէ մարմնոյս , զնոյն սա բռնադատի կրել ՚ի Հոգին : Իսկ զինչ ասէ նա . * Գնայցէ՛ ոք ՚ի վերայ կայծականց Հրոյ , և զոտս իւր ոչ խարշիցէ ‖ . սա . ը . 27 . այլ առանիկ գնայ սա , և ժուժայ չարչարանացն . * Կամ ծրաբրիցէ՞ Հուր ՚ի գոգ , և զհանդերձսն ոչ այրիցէ ‖ . այլ սա ոչ ՚ի հանդերձս լինչ , այլ ՚ի ներքս անդ ունելով զՀուրն վայրենի և ահագնաձայն , Համբերել և Թագուցանել զբոցն :

Վերեւս տակաւին ժպրհեցոյ՞ ոք , ասա՛ լինձ , ընդ առնանութե՞ ՚ի բաղդատուԹե՞ առնուլ զկուսութենէն , և կամ գլխովին ՚ի կշիռ ական ձգել : Վակայն ոչինչ նե-

ըէ այնմ երանելին պաւղոս , այն՝ որ կրձիճն բազում արկանէ ընդ մէջ երկաբանչիւրոցդ . քանզի մին ասէ հոգւոյ զտեառն , իսկ միւսն՝ զաշխարհին : Այս՝ ի մի վայր ժողովեալ առ հասարակ զամուսնացեալսն , և շուք եդեալ կուսին , լուր զիարդ դարձեալ խոտէ զնոսա . քանզի * ՚ի նոյն դարձջիք , ասէ , զի մի փորձեսցէ զձեզ սատանայ ‖ : Այս զայն ինչ կամելով ՚ի դէմս առ ծիւ , եթէ ոչ նորուն փորձութիւնէ է բովանդակն , այլ և մերումն վատութիւնէ բազմապոյն մասնն , զառաւելագոյն պատճառան ըստ նմանէ դնէ՝ ասելով . * վասն անխառնութիւնէ ձերոյ ‖ :

Այս արդ ո՞ր լսելով զայս՝ ոչ պատկառեսցի առ դեօք . ո՞ր ոչ ձեւակոխեսցէ ապրեցուցանել զանձն ՚ի նշաւակ համբաւոյ անտի անխառնութենն . քանզի և ոչ առ հասարակ ամենեցուն է յորդորակդ այդ , այլ կարի գետնաքարշիցն : Այնէ արդեօք ասէ այդչափ ծառայ ես դու հեշտութեդդ , եթէ այդչափ մեղմ որպէս զի և միշտ անձնատուր դու առ մերձաւորութիւնդ և բերա նաբացեալ , մնաս առ կինդ : Այպա ուրեմն չէ ներըն զութիս այս ոչ հաճողն անձին և ոչ գովողն , այլ կատակողն և խոտողն : Վասզի թէ ոչ կամեցեալ էր նա սատակապէս լինն շօշափել զհեշտասիրացն հոգիս , չէր արդեօք նորա զանխառնութենէ զձայնդ ՚ի մէջ արկեալ . ձայն՝ որ առաւել խիստ է և անարգանս բազումն յինքն բարձեալ բերէ : Վասզի առ ինչ ասպա ոչ ասաց , վասն տկարութենէ ձերոյ . զի այս առաւել ներողն անձին ձայն էր . իսկ անխառնութենդ բարբառ՝ զառաւելութենէ վատութենն ՚ի դէմս բերէ : Այպա ուրեմն անխառնութենէ է գլխովին , ոչ զօրել ՚ի բաց կալ ՚ի պոռնկութենէ՝ եթէ ոչ զօրհանապազ զկնաւն գայցէ ոք , և ՚ի մերձաւորութենէ անդր վայելեսցէ :

Օ ինչ ասպա արդեօք ասասցեն աստանօր , որք միան գամ զկուսութենն յումպետս դրեն . քանզի սա որչափ ձկգրտիւ պահի , այնչափ դերագունին հաղորդի գնա վութենէ . իսկ ամուսնութենն՝ յորժամ ոք առաւելագունց վարեսցի նովաւ , յայնժամ առաւել անբաժ է յամենայն գովութենէն : Վասզի զայս ասեմ , ասէ , ներելով և ոչ հրամանն տալով . իսկ ուրանօր ներողն է , գովութենն երբէք աեղի ոչ ունի :

Ա՛յլ սակայն և վասն կուսանացն խօսելով, ասէ. * Հրաման ինձ՝ ի տեառնէ ոչ ունիմ ‖: Այդ միթէ արդեօք հաւասարեսցէ՞նա զգործն՝ի բաց տար. քանզի վասն կուսին խրատ տայ. իսկ աստանօր՝ ներոցուցանէ: Սակայն և ոչ զմին պատուիրէ՝ յաղագս այլևայլ պատճառաց. աստանօր՝ զի մի՛ ոք թերևս որ կամեսցի յանխառնութիւնէ անտի զանձն՝ի վեր առնուլ, արգելցի իբրև կապեալ ընդ հարկաւ պատուիրանին. իսկ անդանօր, զի մի՛ ոք դարձեալ որ անբաւականն իցէ՝ի վեր ելանել առ կուսութիւնն, դատապարտեսցի իբրև անսաստ պատուիրանին:

Ոչ պատուիրեմ ասէ, կոյս լինել. քանզի զանգիտեմ՝ի դժուարուէ գործոյն: Ոչ պատուիրեմ ստէպ ստէպ մնանել առ կինն. քանզի ոչ կամիմ օրինադիր լինել անխառնութեանն: Ապացի՝՝ի նոյն գարձցուք, զի խափանեցից՝ի գահավէժ ցնդմանէն, ոչ զի սրգելոցս՝ի վերհագուսիցն ջանից: Ապա ուրեմն այն չէն նորա առաջին կամք, զի հանապազ վարեսցուք զկին. այլ հեղգագուսիցն անխառնութեանէ օրինադրեաց զայդ: Վասն զի եթէ զպաւղոսի կամն կալցիս դիտել, լուր՝ որ այն իցէ. * Կամիմ ասէ, եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս ‖ ի ժուժկալութեան: Իսկ արդ եթէ կամիս, զի ամենեքեան՝ի ժուժկալութէ կեցցեն, ապա ոչ կամիս՝ եթէ ոք յամուսնութէ կեցցէ: — Ոչ այդպէս, քանզի և ոչ վասն այդորիկ զորս կամինն՝ արգելուս, և կամ ամբաստանեմ ինչ. այլ փափաքեմ և ցանկամ եթէ ամենեքեան լինիցեն՝ որպէս եսս եմ. սակայն ներեմ և զայն վասն պատճառի. վասն այսորիկ և յառաջագոյն կանխեցի ասացի, բարւոք է մարդոյ՝ի կին մարդ չմերձենալ. քանզի դժին այդմիկ առաւել ցանկամ:

Լե. Ա՛յլ ոք աղաչաւ աստանօր զանձն՝ի յիշատակ ածէ՝ ասելով. * Կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս ‖. զի թէ զայս՝ի վերայ չէր բերեալ, ազատեալ էր նա՝ի խօսելոյ վասն անձին: Ա՛ւ ընդ ասելս՝ի վերայ ածէ, իբրև զիս: — Ոչ եթէ բարձրացուցանելով ինն զանձն իւր. քանզի սա այն է՝ որ գերազանցեալ գտաւ քան զառաքեալսն՝ի վաստակս քարոզութէն, և անարժան զանձն առաքելականին համարէր

կոչման ։ Վանդի իբրև ասաց , եթէ * ես իսկ եմ ոչ
բուպն առաքելոց ‖ . ա . կոր . ձէ . 9 . իբրու այն թէ ինչ
մի առաւել բարբառեցաւ քան զարժանն անձին , ան-
դէն վաղվաղակի գանէ զանձն ասելով . * որ չեմ իսկ
արժանի , թէ կոչեցայց առաքեալ ‖ : Ու ինչ ապա
աստանօր յորինակ խրատուն զանձն ինեղբօս արկանէ ։
Այլ վայրապար ինչ և ոչ անխորհուրդ . այլ քանզի գի-
տէր՝ եթէ աշակերտք գլխովին յայնժամ առաւելապէս
ի բարեացն նախանձ շարժին , յորժամ ի վարդապե-
տացն իւրեանց ունկնդիր զօրինական : Այս զորօրինակ
որ առանց ինչ արդեանց գործոյ մերկ բանիւքն խնա-
տասիրէ , ոչ մեծ ինչ օգտեցուցանէ զլսեղիսն . այս-
պէս և որ նախ առաջին ինքն նահատակեալ յարդիւնս
խորհրդոյն՝ այնպէս առաջի ընծայէ զնոսն , սովիմբ ա-
ռաւել քան զամենայն ինչ ածէ շարժէ զլսունկնդիրն ։

Այս և ի նախանձուէ և յամբարտաւանութենէ
սուրբ ցուցանէ զանձն իւր . իբրու այն որ զլեհագոյնդ
զայդ բան կամի աշակերտացն իւրոց հասարակաց լի-
նել . ոչինչ խնդրելով՝ եթէ առաւել ինչ ունիցի ինքն
քան զնոսա , այլ զի յամենայնի հաւասարեսցին նոքա
ընդ անձին իւրում ։

Այնիմ և զերրորդն ասել պատճառս : Այս զինչ այն
իցէ ։ Վաժուարին երևեր գործն . և ոչ հեշտին ինչ
բազմաց . ապա կամելով զայն ինչ իբրև դիւրին ի նեղբօս
բերել , զկատարիչ գործոյն ի մէջ արկանէ . զի մի կա-
րի քրտնավատակ համարեսցին զայն . այլ յառաջնորդ
անգր հայեցեալ՝ քաջալերեալք ընթասցին և նոքա
զնոյն պողոտայ ։

Օ այն և այլուր գործէ . քանզի յորժամ առ գաղա-
տացիսն խօսէր , և զահ օրինացն գուն գործէր փարա-
տել ի նոցանէ , որով նոքա առ նախնի սովորութիւնն
ածեալք բերկրին՝ բազում ինչ ի նորայոցն պահելով .
զինչ ասէ . * Այղերմ իբրև զիս , քանզի և ես իբրև
զձեզդ եմ ‖ . գաղ . դ . 12 : Այս զոր ասէն՝ այսպիսի ինչ
է ։ Այլինչ ունիցիք ասէ , ասել եթէ ի հեթանոսաց
անաւր սեռիւեալ իմ այժմ և օրինազանցութեան ահին
անգէտ գոլով , այնպէս հեշտաբար զայդ առնայն ի
մաստասիրեմ ձեզ . քանզի և ես ինքնին ասէ , իբրև
զձեզ զծառայութիւնդ զայդ ծառայեցի երբեմն , հնա-

ղանդեալ հրամանաց օրինացն, և պահեալ զպահպանութիւնս պատուիրանացն. այլ իբրև երևեցաւ ընորհն, ողջոյն զանձն իմ առեալ՝ ի նմանէն՝ ի սա փոխեցի։ Վասնզի և ոչ օրինազանցութեն ինչ է բանդ, եթէ և զեռաք մեք առն այլումն։ Արդէս զի և ոչ ոք թերևս ուրնիցի ինչ ասել, եթէ այլ ինչ գործեմ, և այլ ինչ խրատեմ. և կամ թէ վայր անքոյթ անձին իմում հանդերձեմ, և զձեզ գլխովին՝ ի վտանգ արկանեմ։ Օ՜ի եթէ արդարև վտանգ ինչ էր բանդ, ոչինչ արդեօք մատն լինէի անձին իմում, ոչինչ արդեօք անփոյթ լինէի զնմ մի փրկութենէ։

Վասպա զորօրինակ անդամօր զօրինակն յանձնէ իւրմէ առաջի ընծայելով՝ ելոյծ զերկիւղն, նոյնպէս և աստ զանձն՝ ի մէջ արկանելով՝ զտագնապ մարտին փարատէ։

ՀԵ.* Վասլ իւրաքանչիւր ոք, ասէ, զիւր ընորհս ունի յՅՍ. ոմն այսպէս, և ոմն այնպէս ‖։ Նոյնպէս ինձ ընդ հնից առաքելական խոնարհութենն, այն որ ուրեք եղբեալ ոչ եղծանի, այլ ամենայն ուրեք Աջդրնտ փայլէ։ Ո՞ ընորհս ոչ կոչէ զհանդէս նահատակութենն իւրոյ. և յորում բազում քիրսն քրտնեցաւ, զայն բոլորապատուղ առեալ տեառն ընծայէ։ Վա՜ զի՞նչ զարմանք եթէն, եթէ առ ժուժկալութէն արասցէ զայդ. որ և վասն քաջութենն Ձառ արկեալ, նովին վարի օրինակաւ. այլ աղագաւ բիւրս ինչ կրեցաց վաստակս, անդուլ վիշտս, անպատմելի տառապանս, հանապազօրեայ մահուընս։ Օ՞ինչ ասպա ասէ վասն այսորիկ.* Վառաւել քան զամենեսեան զնոսա վաստակեցի. ոչ ես, այլ ընորհքն ոչ՝ որ ընդ իս ‖. ա. կոր. ժե. 10։ Վչ մնասն մի անձին ասէ, և մնասն մի ոչ, այլ բոլորն՝ ոչ։ Վայս է երախտագիտ ծառային. ոչինչ անձին սեպհական համարել, այլ զամենայն՝ տեառն իւրում. ոչինչ վարկանել իւր, այլ ըզբովանդակն տեառն։ Օ՜սոյն և այլ ուրեք գործէ. քանզի յետ ասելոյ, եթէ* Վհնիմք մեք ընորհս ըստ ընորհացն՝ որ տուեալ են մեզ ազգս ազգս ‖. հռ. ժե. 6. յաւելեալ՝ ի բանի իւրում՝ միանգամայն և զվերակացութենն և զողորմութենն և զառատաձեռնութենն ընդ նոսին թուէ. և այն զի ամենեցուն քաջայայտ է՝ եթէ հանդէսք առաքինութեանն են այդոքիկ, և ոչ ընորհք։

Լսակ զայսոսիկ վասն այնորիկ ասացի, զի մի՛ թերևս յորժամ լսես ի նմանէ՝ զի ասէ, իւրաքանչիւր ոք զիւր հնորհս ունի յիւ, դժուացես դու, և ասասցես ի սրտի քումմ. իմոց ինչ ջանից չեն պէտք քանիդ այդորիկ. հնորհս զնա կոչեաց պաւղոս։ Վասնզի ի չափու ունեալ զանձն, և ո՛չ եթէ ի հնորհացդ կարգն հաստատել կամելով ինչ ասաց զայդ։ Այս ո՛չ դարձեալ հակառակ ինչ է անձին իւրում և քոյ. հակառակ չէ նա քոյի՝ որ ասէ. * Այն նեղքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին նեղքինիս վասն արքայութեանն երկնից ‖ և ի վերայ բերէ. * որ կարողն է տանել, տարցէ ‖ Մատ. ԺԹ. 12. և ո՛չ դարձեալ անձին իւրում, որ դատապարտէ զնոսա՝ որք միանգամ զայրութիւն զանձամբ առին, և ապա ո՛չինչ կամեցան կալ ինալ յառաջադրութենէ իւրեանց։

Վասնզի եթէ արդարև հնորհք է, հիմմ դու ապա սպառնալիս ի վերայ կապես դոցա, ասելով, եթէ՝ * Ո՛չ դատաստանաս ընդունին, զի զառաջինն հաւատոն արհամարհեցին ‖ Ա. Տիմ. Ե. 12։ Վասնզի զվերնականն ի հնորհաց երբեք ո՛չ պատուհասեաց քո. այլ ամենայն ուրեք զայնոսիկ՝ որք ո՛չ ուղիղ կեանս յանձինս ընծայեցուցին. քանզի զոր առաւել խնդրէ նա՝ այս է. քաղաքավարութիւն գեղեցիկ, և կեանք անսրատ։ Լսակ հնորհաց բաշխմանք ո՛չ յառաջին ցանկութենէ կայ, այլ ի կամս պարգևողին։ Հաղագս այսորիկ ո՛չ ուրեք երբեք զհրաշագործսն գովէ քո. նա և զաշակերտսն զլսովին՝ որ դարձին վասն մեծամեծս լինն խորհելին, ի բաց տանելի յայնպիսի խնդութենէնէն, ասելով. * Մի՛ խնդայք, թէ այսք հնազանդին ձեզ ‖ Ղկ. Ժ. 20։ Վասնզի և որք զբանիսն առին ամենայն ուրեք, են նոքա ողորմածքն, խոնարհքն, հեզքն, սուրբքն սրտիւք, խաղաղարարքն, որ զայս ամենայն գործեն՝ և որ ինչ յայսպիսեաց աստի։ Այսաւ ինքն պաւղոս զդեղեցիկ հանդիսս զիւրոյ անձին ի թիւս արկեալ, ի նոսին յիշատակէ և զժուժկալութիւն. քանզի յորժամ ասաց, եթէ * Համբերութիւք բազմաւ ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանտս, ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ի հսկմունս, ի պահս ‖ Բ. Կոր. Զ. 4. ի վերայ ած, ի սրբութիւնէ. և արդեօք զայդ առնէր ո՛չ, եթէ հնորհք էր բանն։

Լսակ զինչ ապա և կծանէ զայնոսիկ՝ որք չունիցին

զնա , անխառն կուէլով զնոսա . իսկ ընդէր և որ ո՛չ ա-
մուսնացուցանէ զկոյսն իւր , լաւ և առնէ . և որ աղա-
դաւ երանելի և ս այրին , թէ այնպէս կացցէ : Վասն
զի զոր այժմդ ասացի , ո՛չ հրաշիւն՝ այլ գործոյն են ե-
րանելքն . ըստ որում և տանջանքն : Իսկ զիարդ ասես
և դեգերի դա գարձեալ՝ի խրատեալ վասն նոցունն ի-
րաց , եթէ չէր՝ի մէզ բանդ այդ . և յետ այ օգնակա-
նութեն և՝ի միմեանց ջանս իմն խնդրէր : Վասնզի իբրև
ասաց , եթէ առնոյն մարդ լինելը իբրև զնս՝ի ժուժ-
կալութեան , դարձեալ առնու և ասէ . * Կայց ամու-
րեացն և այրեացն ասեմ: լաւ է նոցա՝ եթէ կացցեն
իբրև զնս ‖ . միւսանգամ զանձն առաջի արկանէ վասն
նորուն պատճառի : Վասնզի զօրինակն մերձաւոր ունե-
լով անձանց և ընտանի , յորդորաիւոս արդեօք միւսին
՝ի վատակս կուսութեն : Իսկ այն՝ զի վերապոյնդ ա-
սելով , * Կամիմ եթէ ամենեքեան լինէին իբրև զնս ‖ .
և աստ դարձեալ՝ * լաւ է նոցա՝ եթէ կացցեն իբրև
զնս ‖ , ո՛չ ուրեք յայտսիկ զպատճառան առընթեր դնէ ,
այլ՝ ինչ զարմանալոր . զի ո՛չ եթէ յանձնապաստանս իմն
գործէ զայդ . այլ զի շատ իսկ պատճառս համարեցաւ
զիւրական խրատն , որով լսուին տայր գործոյն :

ՀԷ . Ապա եթէ ոք և պատճառս իմն կամիցի լսել ,
առաջին նա զկարծիս ամենայն մարդ կանդ՝ի քնին առ-
ցէ . և ապա՝ և որ ինչ միանգամ դէպք իցեն՝ի բանիդ
յայդմիկ : Վասնզի Թէպետ և օրինադիրքդ ո՛չինչ պա-
տուհաս՝ի վերայ կապեն այսպիսի ամուսնութեց , նա
և Թոյլ տան և ներեն . սակայն՝ի բազմաց անտի բա-
զում ինչ առ տնին և՝ի հրապարակի արձակին՝ի նոսա
հինք բանից , բամբասանք , գարշանք , իբրև զի ո՛չինչ
պակաս , զի այսպէս ասացից , իբրև յերդմնահարաց ո-
մանց՝ յայսպիսեաց՝ի բաց խորշին ամենեքեան . ո՛չ բա-
րեկամն առնել վստահին ինչ , և ո՛չ դաշինս կռել ընդ
նոսա , և ո՛չ միմեանց հաւատալ ինչ : Վասնզի յորժամ՝
տեսանեն զնոսա՝ զի զայնչափ կենակցութե՛ն զիւրաքան-
չիւրն և զբարեկամութե՛ն և զընտանութե՛ն և զՀաղորդու-
թե՛ն՝ այնպէս հեշտեաւ՝ի բաց քերեցին՝ի հոգւոյ իւ-
րեանց , ապշուի իմն ունի ըմբռնել զնոսա՝ի խորհրդոյ
սատի յայսմանէ . և ո՛չ ևս զօրեն նոքա քաջապէս հա-

բաղատուԹԸ մերձիլ ՚ի նոսա իբրև ՚ի ծանծաղամիտս ումանս և ՚ի դիւրագարձս ։

Սակայն և ոչ ՚ի պատճառս այսոցիկ միայն խորշին ՚ի նոցանէ , այլ և վասն նորուն իսկ անհամուԹեան գործոյն ։ Վասնզի զինչ և առաւել անախորժ կայցէ , ասա՛ ինձ , քան եԹէ յորժամ յետ բաղում սգոյն , և յետ լալեացն և արտասուացն , յետ խռովացեալ հերացն և Թուխս հանդերձին , յանկարծակի յաջորդեսցեն կայԹք և առաջաստ հարսանեաց և ամենեւին աղաղակիւն՝ հասկառակք առաջնոյն . իբրու այն Թէ դերասանք ումանք խաղասցեն ՚ի տեսարանի , և մերթ զայս , և մերթ զայն ինչ յանդիման ընծայեցուսցեն ։ Այս քանզի անդանօր գու զնոյն այր՝ կ՚ զի իբրև Թագաւոր յակն արկանես , և կ՚ զի իբրև առաւել աղքատ քան զամենեսեան . և աստանօր գարձեալ՝ որ յառաջն ՚ի գերեզմանէն վերայ Թաւալէր , յանկարծակի երևիլ փեսայ . որ զՀերան խզէր , միւսանգամ ՚ի նոյն գլուխս բարձեալ բերէ զպսակ . որ գլխակոր էր և տխրագին , և բաղում ինչ բազում անգամ ընդ իւրոյն արտասուաց գովուԹիս զվախձանելոյն հիւսէր առ միԹարիչն և զկեանսն անկենդանական ասէր անձին իւրում , և որք յողբոյն իւրոց լուեցուցանէին զնա՝ յանոյր ընդ նոսա , նա բազմանգամ խառն ընդ նոսա վայելչանայ և զարդարի . և որ յառաջն արտասուագին աչք , նոքիմբք խնճզա գին հայի ՚ի նոսա . և որով բերանով վայրիկ մի յառաջ խոտեր զայս ամենայն , նովին քաղցրաբանէ և ողջունէ զամենեսեան ։

Լսակ որ քան զամենայն առաւել և ողբալի է , նոր պատերազմ է ուստերաց , ընտանի առիւծ մատակ՝ դատերաց . քանզի գլխովին այսպիսի ինչ է մեզուն ։ Յայսմանէ հակառակուԹէ հանապազօրեայ և մարտ . ՚ի սմանէ օտարն այն և նորանշան նախանձ յուղեալ ընդդէմ անպարտական կողակցին ։ Վասնզի կենդանիք ապաքէն և խանդան և խանդանս կրեն . իսկ ընդ վախձանելոյն և Թշնամիք անգամ հաշտին ։ Այլ ոչ և առաւօր . այլ նախանձ իմն կրէ փուշն և մխիթն . առեւլուԹիւն սաստիկ ընդդէմ Թաղելոյն , և Թշնամանք և նախատինք և բամբասանք ընդդէմ այնմ՝ որ ՚ի հող լուծեալ է . և ԹշնամուԹիւնք անհաշտք ընդ-

դէմ նորա՝ որ ոչինչ անիրաւութիւն գործեաց երբեք։

Օ՜ինչ ևս քան զանբանութիւնս զայս, զի՜նչ ևս քան զվայրագութիւնս զայս կայցէ երբէք վատթարագոյն։ Ոչինչ անիրաւեալ՝ի վախճանելոյ անտի կողակից, զի՜նչ սակաւ անիրաւեալ՝ի վաստակս նորուն վայելեալ և՝ի բարիս նորուն գրգեալ, ոչինչ գադարել՝ի ստուերամարսան լինելոյ ընդդէմ նորա. և զնա՝ որ ոչինչ զրկեաց զնա, բազում անգամ և ոչ տեսեալ երբէք, բիւրուք անիծիւք զօր սաստկացոյ հարկանէ. և՝ի ծնունդս նորա, նման՝ որ չև ևս է՝ի միջի, վրէժխնդիր լինի. և ուր ինքն տկարանայ՝ զայրն բազում անգամ վրնասուրէ ընդդէմ նոցա։ Այլ սակայն այս ամենայն իբրև հեշտանք և դիւրաբառնալիք երևեցան մարդկան, միայն զի մի զբռնաւորութեն ցանկութեն ստիպեսցին քերել։

Այլ ոչ և կայցէ՝ի ձակատամարտ աստի տապնալեալ սասանեցաւ. և ոչ՝ի մըցանաց աստի խոյս ինչ եւ, որ այնպէս դժոխըմքեր լինի թուեցաւ բազմաց. այլ քաջաբար գտեղի կալաւ և զբռնութեն մարտ յանձն իւր առ։ Օ՜րդ ասա զը ըստ արժանեաց նորա զարմասցի արդեօք ընդ նա. քանզի ուր այլք պետս ունին և երկրորդ ամուսնութեանց, զի մի ջերնուցուն, սա և ոչ՝ի միւս անդ մերձենալ՝ հանապազ սուրբ կայ և անդրժելի։

Յաղագս այսոցիկ ասա, և նաև քան զայսոսիկ՝ի պատճառս վարձուցն հատուցմանն որ դանձեալ կան այրութեն յերկինս, այն՝ որ զբռ ունէր յինքեան խոսօզ, ասէր. * լաւ է նոցա եթէ կայցեն իբրև զիս ‖։ Ոչինչ զօրեցեր՝ի բարձրագոյն դադաթն ելանել, զոնեա մի վրխպեսցիս զու՝ի վայրացն՝ որ մերձ կան առնա։ Այնչափ ինչ առ քեզ առաւելեալ իցէ կոյսն, որչափ ինչ զնա և ոչ առ անգամ մի պարտեաց ցանկութեն. իսկ զքեզ ինքնին յառաջագոյն նախուն արարեալ՝ ոչինչ զօրեաց յաւիտեան ունել ընդ ըծոյ. և զու յետ պարտութեդ և յաղթեցեր. իսկ նա գլխովին անպարտեալ տարաւ զյաղթութեն. և ընդ քեզ հաւասարեալ յերս վախճանին՝ միայն սկզբամբն՝ի վեր ես քան զքեզ։

ԼԸ. Այս արդ ամուսնացելոցն բազում ինչ ընծրհն նա սփոփանս. իբրև զի և ոչ՝ի կամել անդ միոյ՝ի նո-

յանէն՝ զրկէ զնոսա առ ՚ի միմեանց . և ո՛չ դարձեալ ընդ երկար ինչ ձգէ զղրկուհին՝ որ ՚ի միաբանութենէ անտի իցէ : Ո՛ւ այս դարձեալ և երկրորդ ամուսնութենն ներէ՝ եթէ կամեսցին , զի մի ջերմուցուն : Իսկ կուսանացն ո՛չինչ յայսպիսեաց աստի միութենէ ո՛չ զնորհէ . այլ զնոսա՝ որք այնչափ ինչ դուլ առին , դարձեալ ՚ի հանգիստ փոխէ . իսկ զսա՝ որ և ո՛չ վայրիկ մի ոգի առ՝ այլ անդուլ զմարտն մղէ , Թողու ցանգ կալ արձանանալ և հարկանիլ ՚ի ցանկութենէ անտի , և ո՛չ խոսն մի տայ նմա դադար առնուլ : Ո՛րպէս առ ինչ ապա ո՛չ և առ սա ասաց , ապա Թէ ո՛չ ունիցի ժոյժ , ամուսնասցի : Իբրև զի և ո՛չ առ ոք ՚ի նահատակաց անտի , յորժամ նա զհանդերձն յանձնէն ՚ի քաց եդեալ՝ օծաւ խղով և յասպարէզ անդր ելէն էջ , և զանձամբ փոչի ցանեաց , ասասցէ ոք արդեօք . Եթէ՝ ՚ի քաց կաց , տեղի տուր դու յախոյեանէդ քումմէ . այլ հարկ է այնուհետև միդ յերկուց աստի . կամ պսակիլ , կամ անկանիլ և զամենի հարկանիլ , և այնպէս խոյս տալ ՚ի վայրացն :

Ո՛րպէս ՚ի խաղս և ՚ի գօտեմարտութիս՝ ուր ուրեք ընդ ընտանեացն է հրահանգ վարժիցն , և ընդ բարեկամացն իբրև ընդ ախոյեանիկ ումանց բռնամարտիկն լինին , իշխան են նոքա ձգնիլ վաստակել ՚ի մրցմանն և կամ տեղի տալ : Իսկ յորժամ քարոզ կարգասցէ , և զտեսարանն ՚ի մի վայր խմբեսցէ , և հանդիսագիրն ա ռաջի կացցէ , և հանդիսականքն ՚ի շնիկն բազմեսցին , և ախոյեանն ՚ի ներքս անդ ընծայեսցի և յանդիման արձանասցի , յայնժամ օրինք մրցանացն զնշանութենն զայն կապտեն առ ՚ի նմանէ : Իսատ նմին օրինակի և կոյս յորժամ զառաջինն ՚ի խորհուրդ մնանէ , եթէ արդեօք ամուսնանալ նմա պարտ իցէ կամ ո՛չ , անվտանգ է նմա ամուսնութենն . իսկ ապա յորժամ ընտրեաց և ՚ի գիր անց , այնուհետև առեալ զանձն ետ յասպարէզ անդր : Երդ յորժամ ՚ի քարոզ դուռմարեցաւ տեսարանն , և հրեշտակք ՚ի բարձանց անտի ՚ի շնիկն կան , և քո՛ւ ինքնին հանդիսադիրը ՚ի միջն անցեալ կայ , մնլեալ հատաղի սատանայ , և զատամունսն կրճտէ , և գիրկ ընդխառն լինի ՚ի մրցումն , և զմիջոցն ունի , ո՞ որ այնուհետև յանդգնեսցի երբէք ՚ի մէջ անդր գալ և ա

սել. ա՛ղէ դու ՚ի բաց փախիր ՚ի թշնամւոյ այտի. կա՛ս ՚ի վաստակոցն. թո՛ղ անդր ՚ի բաց զըմբռնելդ. մի՛ ձգէր, մի՛ տապալեր զախոյեանդ, այլ տո՛ւր տեղի յաղթութեանն նորա։ Այս զի՞նչ ասեմ զկուսանացն. ուր և ա՛յ առ այրիս յանդգնեսցի ոք արդեօք զնոյն արձակել բարբառ. այլ փոխանակ ընդ այնորիկ զահաւորն զայն, եթէ * Յորժամ խայտան զքո՛ւթս, ամուսնանալ կամին. իսկ զդատաստանս ընդունին, զի զառաջինն հաւատան արհամարհեցին ॥. ա. պխ. է. 11։

լեր. Այլ նա աւանիկ ինքն ասէ. եթէ * Լմուրեացն և այրեացն ասեմ. լաւ է նոցա՝ եթէ կայցեն իբրև զիս. ապա թէ ո՛չ ունիցին ժոյժ, ամուսնասցին ॥. և դարձեալ. * Այս եթէ ննջիցէ այր նորա, ազատ է՝ ում կամիցի ամուսնանալ. այլ միայն տերամբ ॥։ Ո՛չ խնդդ ապա՝ զոր ազատ եթող, միւսանգամ առեալ պատուհասէ. և զամուսնութիւն՝ զոր տերամբ ասաց լինել, զնոյն դարձեալ իբրև զօրինազանց լինի դատապարտէ։ Այ՛ի տագնապիր. ո՛չ զնոյնն, այլ՝ զայլ։ Վանդի զոր օրինակ յասէն. * Եթէ ամուսնանայցէ կոյսն, ո՛չ մեղաւ ॥, ո՛չ զայնմ կուսէ ասէ՝ որ միանգամ հրաժեշտ ետ յամուսնութէ. քանզի այս քաջայայտ է ամենեցուն՝ եթէ մեղաւ այնպիսին, և մեղս իւր անբմբերելիս. այլ զնմանէ ասէ՝ որ անբաժ գոլով յամուսնութէ, չև ևս ընտրեաց ՚ի միտս իւր զայս ինչ և կամ զայն. այլ իբրև ՚ի միջավայրի կացեալ իցէ կրկնակի խորհրդոցս այսոցիկ. այսպէս և աստանօր վասն այրւոյն ասէ, որ միայն զայր ո՛չ ունիցի, և տակաւին չիցէ կապեալ ՚ի վճիռս կամայ իւրոց, այլ ազատ իցէ ընտրել զայս կամ զայն. իսկ անդանօր վասն նորա ասէ՝ որ ո՛չ ևս իշխանութէն ունիցի զուգիլ միւսանգամ ընդ այլում փեսայի, այլ զմշտնջենս ժուժ կալութեանն զանձամբ առեալ իցէ։ Վանդի և մարթ է, զի և այրի իցէ, և ո՛չինչ դարձեալ բաժանաւ կից լինիցի այրեացն պատուոյ, յորժամ չև ևս յանձն առեալ իցէ նա զդոյն։ Վ՛ասն որոյ և դարձեալ ասէ. * Այրի ընդ այրիս անուանեսցի, որ չիցէ պակաս ՚ի վաթսնամնկից, միոյ առն կին լեալ ॥. ա. պխ. է. 9։

Վանդի որ սոսկ այրի իցէ, նման թոյլ տայ ամուսնանալ, եթէ կամեսցի. իսկ որ միանգամ խոստացաւ

ՈՅ կալ մնալ հանապազ յայրուքեէ անդ, և լեռ այնո-
բիկ ապա ամուսնասցի, զնա սաստիկս գատապարտէ,
զի զառ ՈՅԾ ղգաչինան առ ոտն կոխեաց։ Ա՛պա ո՛չ առ
սոսա, այլ առ նոսա ասէ. * Ա՛պա՝ թէ ո՛չ ունիցին
ժոյժ, ամուսնասցին, զի լաւ է ամուսնանալ քան ըզ-
ջեռնուլ ||։

Տեսանէք, զի ո՛չ ուրեք երբեք ինքն առանձինն զար-
մանալի ինչ է ամուսնութիւդ. այլ վասն պոռնկութեէ,
վասն փորձութեացն, վասն անխառնուհին. քանզի զայս
ամենայն կարգեաց էդ վերագոյնդ. իսկ աստանօր իբ-
րու այն թէ կարի ինն զկծեցոյց զնոսա թշնամանօքն,
դարձեալ առաւել համբոյր բանիւք կոչէ զդործն զայն,
հրդէհ անուանելով զնա և ասպ։ Ո՛վ եպետ և ո՛չ աստա-
նօր հանդարտեաց ինչ զանց առնել և ո՛չ վերաւորել
զլսելիսն. զի ո՛չ ասաց. ապա եթէ բուռն ինչ իցէ նո-
ցա ՚ի ցանկութէ անտի, ապա եթէ խոտորեցուսցեն
զնոսա, ապա եթէ ո՛չինչ բաւական իցեն։ Այլ ինչ յայս
պիսեաց աստի ո՛չ ասաց, որ ՚ի դէպ գայցեն արդեօք
այնպիսեաց ոմանց որք կրեսցեն ինչ և արժանիք իցեն
թողութէ։ Ա՛յլ զի՞նչ. ապա թէ ո՛չ ունիցին ժոյժ.
որ ո՛չ կամեցողացն է վաստակիլ առ հեղգութեանն։
Վ՚անզի զայս ինչ ՚ի դէմն ածէ, եթէ ինքնատեարք
գոլով նոքա բանիդ այդորիկ, վասն ո՛չ կամելոյ քիրտն
յանձն առնուլ՝ ո՛չ հանեն զայն ՚ի գլուխ։

Ա՛յլ սակայն և ո՛չ այնպէս պատուհասէ զնոսա, և
ո՛չ տանջանաց պարտական առնէ զնոսա, այլ միայն ՚ի
գովութէեց անտի վրիպեցուցանէ զնոսա. միայն անար-
գանաց բանիւք չափ ՚ի վար արկանէ զսաստկութիւնն.
զմանկարարութէն ուրեք երբեք ո՛չ յիշատակէ, այն՝ որ
դիւրամոքելի և պարզերես պատճառք է ամուսնութէն.
այլ զջեռնուլ, և զանխառնութէ, և զպոռնկութէ, և
զսատանային փորձութէ. և Թոյլ տայ նեբէ գործոյն՝
զի մի Թերևս պատահեսցէ ինչ յայդպիսեաց այտի։

Այ զի՞նչ ասպա այս, ասէ. քանզի յորչափ ՚ի տանս
Քանաայն ազատ կացուցանէ զբանդ զայդ, մեք զամենայն
անարգանսն և զամենայն Թշնամանսն հեշտեաւ բեր-
ցուք. միայն զի յաջողեսցի մեզ գրգիլ և յաձախ վայե-
լել ՚ի ցանկութէ։ — Օ՛ի՞նչ ասպա, ո՛վ քաջդ, եթէ և
ո՛չ գրգանքդ այդ յաջողեսցի քեզ. Թերևս միայն զքէնաս-

մանան կթեւսցո՛ք մեք ։ Այլ զիա՞րդ , ասէ , ո՛չ յաջողեա ցին գրգանդ · ուր պատճառս ինքնին ասէ · ապա թէ ո՛չ ունիցին ժոյժ , ամուսնասցին ։ — Այլ այդ զո՞ւ լսեր և զոր զհետ այնորիկ գան · լուար՝ եթէ լաւ է ամուսնանալ քան զբեռնուլ , համարեալ ես ընդ հեշտալիդ ընդ այդ , գովես զթողուլթիւն , զարմանաս ընդ ներողուլթիւն առաքելոյն · այլ մի՛ դու կացցես ինասցես մինչև ցայդ վայր · ընկալ և զկնիան · քանզի նորուն ինքեան են երկաքանչիւր պատուիրանքդ ։ Ո՞ւրեք ասա ասէ յետ այսոցիկ · * Այլ կանամբեայն պատուիրեմ , ո՛չ ես , այլ տէր · կնոջ յառնէ մի՛ մեկնել · ապա եթէ մեկնեսցի , այսր ինասցէ , կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի · և առն զկին իւր մի՛ թողուլ ։ ա · կոր · է · 10 · 11 ։

Ե · Իսկ արդ՝ զի՞նչ , եթէ այրն հեզսհամբոյր էցէ , իսկ կինն ժանտ , թէնամանող , շատախօս , և որ հասատակաց է առնեցուն ախտ՝ շռայլ , և այլովք ևս բազմոգ այն չարեաք լի , զիա՞րդ այրն այն հիւսացեալ տարբոյն հանապազօրեայ դառնութեես այսմիկ , առաքարտաւանութեն , լքբութեն ։ Իսկ զի՞նչ արդեաք՝ եթէ հակառակ այնմ կինն պարկեշտ հանդիպեսցի լինել և հանդարտ , իսկ այրն սատմբակ , գոռոզ , բարկացայտ · կէս մի յրն չից անտի բարձրացեալ սիրտ նորա , և կէս մի յիշխանութենէն , առեալ զաղատանուտն զայն օրիորդ՝ ընդ աղախնեայց դասեսցէ , և ո՛չինչ ընդհատ քան ընդ սպասարկու կանայս վարեսցի ընդ նա · զիա՞րդ յայնժամ բերցէ նա այդչափ հարկի և այդչափ բռնութեեդ ։ Իսկ զի՞նչ ապա , եթէ և գլխովին օտարացեալ ՚ի նմանէ այրն՝ այնպէս կացցէ ինասցէ հանապազ ։ Ցա՛ր դու , ասէ , ամենայն ծառայութեեդ այդմիկ · քանզի յորժամ մեռանիցէ այրդ , յայնժամ միայն ազատ եղիցիս դու · իսկ ցորչափ կենդանի կացցէ , հարկ է մին յերկուց ասա՛ · կամ բազմոգեմ ջանիւք հրահանգել զնա և ՚ի լաւագոյնս փոխել , կամ եթէ այս յանհնարիցն էցէ , քաջութիւ՛ բերել դառնադառն պատերազմիս և անագո՛ր այն մարտիս այսմիկ ։

Վ Երագոյնդ ասէր · մի՛ զրկէք զմիմեանս , բայց եթէ ինչ ՚ի միաբանութենէ · իսկ աստանօր կնոջ՝ որ հանեալ էցէ , և յակամայ կամն հրամայէ նմա ժուժկալել այնու-

հետև. * Նայր մեռասցէ, ասէ, կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի ։ Տեսանե՞ս, զի տպչնասէ է նման ՚ի մէջ կրկին մարտից այսոցիկ. քանզի կամ բռնութե՛ ցանկութե՛ն պարտ է ժուժկալել, կամ եթէ զայդ ո՛չ կամեսցի, ողջախել պարտ է զամբարիշտն զայն այր, և զանձն իւր առաջի ընծայել նման՝ որ ինչ և միանգամ հաձոյ իցէ կամոյ նորա՝ եթէ վիրաւ հարուածել զինքն, եթէ նախատանաւք ընդել, եթէ յառակ նշաւակի ընդոծնայն կացուցանել զինքն, եթէ և այլ ինչ յայսպիսեաց առաի. քանզի բազմագիմ ձանապարհք հնարեցան յարանց, եթէ կամեսցին վրէժխնդիր լինել կանանց իւրեանց ։ Այլ եթէ ո՛չ հանդուրժեսցէ այդոցիկ, պարտ է այնուհետև ժուժկալութե՛ն ինն անպատուհ յանձն առնուլ. իսկ անպատուհ ասեմ, իբրև զի չունի ինչ ընդ իւր կապել խոսոտումն փոխարինոյ ։ Վասնզի ո՛չ եթէ ՚ի պատճառս սիրոյ սրբութե՛ն յանձն առեալ է, այլ սակս հակառակութե՛ ընդ առն. քանզի անայր մեռասցէ ասէ, կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի ։

Արդ զի՞նչ, եթէ երբեք ո՛չինչ կամեսցի հաշտիլ, ասէ ։ Ընդ հիս դու զերծորդ ապաստանարանդ և զղերծանելդ. և ո՞ր այն իցէ. կա՛ց մնա՛ մնահուսանն նորա ։ Վասն զի զորօրինակ չէ օրէն ամուսնանալ կուսին, իբրև զի միշտ կենդանի է և անմահ փեսայն նորա, այնպէս և արամբուսն յոյնժամ միայն յաջողեսցի, յորժամ ննջիցէ այր նորա ։

Օ՛ի թէ երբէք օրէն էր և առ կենդանութե՛ն նորա ՚ի նմանէ առ այլ ոք անցանել, և ՚ի սմանէ՝ դարձեալ առ այլ, զի՞նչ այնուհետև պէաք էին ամուսնութե՛ց, յորժամ անխտրաբար վարէին արք զկանայս միմեանց, և ընդ սմինեսեան առ հասարակ խոտնակիչին համարձակ ։ Իսկ զի՞արդ յոյնժամ ո՛չ եղծեալ ապականէր և խնամք սիրոյն առ կենակիցն. յորժամ այսօր սա, իսկ առ վաղիւն նա, և դարձեալ այլ ոք ընդ կանայս իւրեաց բնակակից լինէին ։ Յիրաւի ապա հնութե՛ կոչեաց զնա տէրն ։

Լո՛ւսկ ընդդէմ ապա հրէիցն Թոյլ եաւ զայս ։ — Օ՛ի մի՛ ընդ միմեանս մարտ եղեալ կռուեսցին. զի մի՛ առ բեռամբ ազգակցացն զտունս իւրեանց լցցեն ։ Վասնզի

զինչ լաւագոյն էր արդեօք, ասա՛ ինձ, զատեալին անձին արտաքս վարել, եթէ ի նեղըս անդ խողխողել. քանզի ապաքէն գործելին նոքա զայդ, եթէ չէր նոցա թոյլ հանել արտաքս։ Այսոյիսիկ ասէ. եթէ աւտեաս, արձակեա՛ ի բաց։ Իսկ յորժամ ընդ հեզս ոմանս խօսի, և որոց միանգամ և ոչ բարկանալ անգամ նեղի, ասէ. * Ապա եթէ մեկնեսցի, անայր ինասցէ ։ Տեսանե՞ս զհարկդ, զանհրաժեշտ ծառայութեդ, զկապանսն՝ որ զերկոսին միանգամայն առեալ կաշկանդէ։ Վանզի արդարև կապանք է ամուսնութիւն. ոչ ի պատճառս միայն ամբոխիչ հոգոցն, և ի պատճառս հանապազօրեայ անձկութեացն, այլ զի և գժնդակագոյն և քան զամենայն ծառայ ստիպէ զամուսնիսն հնազանդել միմեանց։ * Այրն տիրեսցէ, ասէ, կնոջն ։ ՚Ա Կ. է. 16։ Իսկ զի՞նչ արդեօք էցէ շահ տերութեան այսոցիկ. քանզի և զնա գարձեալ առնուս և ծառայ առնէ այնմ՝ որում տիրէ. նորանշան ինն և անլուր տրիտուր հնարել ծառայութեան այսոցիկ. և զոր օրինակ եթէ ըզփախստականացն զոմն՝ միանգամայն և առանձինն կալ պեսցեն, և գարձեալ ընդ միմեանս օղարկեսցեն փոքու շղթայիւ, յերկուց և կողմանց արգելեալք յոտնա կապս՝ ոչինչ արդեօք բաւական էցէ նոքա ազատօրէն ընթանալ, իբրև զի բռնադատեսցի այնուհետև ինն խոնարհել գնալ զհետ միւսոյն. ըստ նմին օրինակի և ամուսնացն հոգիք ունին զանձանց իւրեանց գհոգս, ունին և հարկ այլ՝ որ ի լծակցութէ անտի միմեանց էցէ. որ քան զամենայն շղթայ առաւել սնդագոյնս պրկէ զնոսա, և առ հասարակ զերկաքանչիւրոցն ազատութէն առնու բառնայ ի նոցանէ. իբրև զի ոչ միայն ողջոյն ի ձեռս տայ զիշխանութէն, այլ յերկոսին միանգամայն բաշխէ զտերութէն նորա։

Եւ արդ՝ ուրանօր էցեն նոքա, որք ի պատճառս սփոփանաց հեշտութէն պատրաստ են զամենայն դատապարտութէն յանձն առնուլ. քանզի ահա և ոչ դուզնաքեայ ինչ մնան հատանի կարի ի հեշտութէ անտի, յորժամ ի բարկութէս ընդդէմ միմեանց և ի հակառակութիւնս բազում անգամ կապեալ կան ինան ընդ ժամանակս ձիգս։ Եւս ծառայութէն այն գլխովին, յորում ժանտութէ միոյն հարկ է միւսոյն և յակամայս

տանել, բաւական է և ամենայն գրգռանաց փափկութեն ստուերածս ի վերայ ածել: Յաղագս այսորիկ երա-
նելին այն նախ խիստ բանիւքն նկուն արար զբերումն առ ցանկութենն, վասն որոնկութե ասելով և անխառ-
նութե և տապոյ: Իսկ իբրև ետես զի բազումք առ ոչինչ գրեին զբան գատապարտութենն այնորիկ, դար-
ձեալ որ ազդոզագոյն ևս էր յերկեցուցանել, առնու և զնե. յոյր սակս և աշակերտքն բռնադատեցան ասել,
* լաւ է չամուսնանալ ‖. Ղուկ. ծ. 10: Իսկ այն այսպէս
սի ինչ է, եթէ՝ ոչ ոք յամուսնացոյն իշխէ անձին իւրում:

Այլ զայս ոչ ևս իբրև յորդորակաւ կարգէ և իբրև խորհուրդ ի ներքս արկանէ, այլ հարկաւ հրամանի և պատուիրանի: Վանզի ամուսնանալ և ոչ ամուսնանալ
ի ձեռս մեր է. իսկ հետեւակք ամուսնութենն՝ ոչ ևս.
այլ եթէ կամայ և եթէ ակամայ պարտ է տանել ծա-
ռայութենն: Այլ զինչ ասաց, եթէ ոչ անգէտ ինչ գո-
լով զնմանէ՝ յանձն առնուցումք մեք զնա զառաջինն,
այլ նախ քաջալէս ի վերայ հասեալ իրաւանց նորա և
օրինացն՝ այսպէս ասա կամակար արկանիցեմք անձամբ
զանձինս ընդ լծով նորա:

Իսկ ասա յետ այսոցիկ առաքեալ Ճառ արկեալ յա-
ղագս այնոցիկ՝ որք ամուսնիս ունիցին յանհաւատից
անտի, և Ճշգրտիւ զամենայն օրէնս ամուսնութենն ի
քնին առեալ, և յաղագս ծառայիցն բանս ի մէջ ար-
կեալ և բաւականութե միխթարեալ զնոսա՝ եթէ ի
պատճառս ծառայութենն այնորիկ ոչինչ նուազի սպնուա-
կանութիւն նոցա հոգևոր, փոխի այնուհետև ի բանս
յաղագս կուսութե՝ զոր յառաջագոյն երկներ և գուն
գործեր սերմանել, իսկ այժմ ծնանի. թէպէտ և ոչ-
ինչ և ի Ճառս անդ ամուսնութենն հանդուրժեաց եր-
թեք նա լռութե անցանել զնովաւ: Վանզի թէև հա-
մառօտս իմն յայնժամ և վեր ի վերոյ անց բանիսն,
այլ սակայն և ի յորդորակին յայնմիկ հիւսեաց յարմա-
րեաց զսա. և կարի գեղեցիկ յերշանկաւս այսուիկ
հրահանգեալ զլսելիս մեր և ամրեալ զմիտս մեր, մնաւս
իմն քաջագէպս հանդերձել կայմն բանիցն իւրոց՝ յետ
առ ծառայն յորդորակին:

Վանզի * Կնոջ գնեցայք, ասէ, մի լինիք ծառայք
մարդկան ‖. զերբուանին մեզ ի յուշ բերեալ զերախ-

տիսն, և զամենեցուն զմիտսն ՚ի նոյն ուղերձեալ, և յերկինս ՚ի վեր տարեալ, այնպէս ուրեմն ասա յաղագս կուսութեանն ՚ի ներքս արկանել, ասելով այսպէս. * Այլ վասն կուսանաց հրաման ինչ ՚ի տեառնէ ոչ ունիմ. բայց խրատ տամ որպէս ողորմելոց ուրուք ՚ի տեառնէ՝ հաւատարիմ լինել ‖: Այլոց սակայն և վասն հաւատացելոցն լծակցելոց ընդ անհաւատից ոչինչ ունելով հրաման, բազում իշխանութիւն օրինադիր լինի՝ դրելով այսպէս. * Այլոց այլոց ես պատուիրեմ, ոչ ես եթէ տէր. եթէ ոք եղբայրը կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա, մի թողցէ զնա ‖: Այս արդ էր աղագաւ և վասն կուսանացն ոչ նոյնօրէն նակ սահմանաւ օրինադիր լինիս: Վասնզի վասն այդր բանի ինքնին քո յայտնապէս կարդացայ եդ, արգելեալ զի մի ընդ հարկաւ պատուիրանի սահմանեսցի այդ: Վասնզի ասելովն, եթէ՝ որ կարողն է տանել՝ տարցի, ՚ի կամն ունկնդրին ապաստան արար զնմանն:

Արդ վասն ժուժկալութեանէ խօսելով, ասէ. կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս ՚ի ժուժկալութենէ. և դարձեալ. * Այլ ամուրեացն և այրեացն ասեմ. լաւ է նոցա՝ եթէ կայցեն իբրև զիս ‖: Սակայն ՚ի ձառս կուսութեանն ոչ ուրեք զանձն առաջի ընծայէ. վասն այնորիկ և կարի իմն համեստագոյնս և բազմադիմ ըզգուշութեամբ բարբառի. իբրու այն՝ եթէ և ոչ նա ինքնին ուղղեալ ինչ իցէ զգործն. հրաման ինչ ոչ ունիմ ասէ: Ալա զաղաչանս կամացն դնէ, և զունկնդիրն բարեհամբոյր յարդարեալ, այնպէս ասա ՚ի վերոյ ածէ ըզխորհուրդն: Այս քանզի կուսութենէն անուն միանգամ հնչեալ՝ անդէն և վաստակս իմն բազումս ՚ի դէմս ածէ, վասն այնորիկ և ոչ ՚ի յորդորակ անդր փութացաւ վաղվաղակի, այլ նախ ցանկութեամբ սրտին ամբաւեալ զաշակերտն, և քաղցրահամբոյր և ձեռնընդել յարդարեալ զՀոգի նորա, այնպէս ապա զառաջարկութիւնն ՚ի ներքս ձգէ:

Լուար զկուսութենէն, անուն բազմապատիկ վաստակոց և քրտանց. մի երկնչիր. հրաման չէ գործն, և ոչ զհարկ ինչ պատուիրանի ՚ի ներքս ածէ. այլ զորս միանգամ կամակար և յօժարամիտս գիրկս ածէն նմա, նա իւրական բարեաւքն փոխարինի նոցա, շքեղ իմն և գե-

ղածաղիկ 'ի գլուխ նոցա բոլորելով պսակ. իսկ որք միանգամ տեղի տան 'ի նմանել և չառնուն յանձն կապիլ ընդ նմա, ոչինչ պատուհասք պնոսա, և ոչ յակամայս ինչ երբեք սաիպ գործել զայդ։

*Այս ոչ գարձեալ սովին միայն հեշտալուր գործեաց զբանն և քաղցը, այլ զի և զհնարս իբրս այսորիկ ոչ ասէ անձին ինչ լինել, այլ քեի։ Վասնզի ոչ ասէ, վասն կուսանաց ոչինչ հրամայեմ, այլ Թէ՝ հրաման ինչ ոչ ունիմ. իբրև Թէ ասէր. Եթէ 'ի մարդկային ինչ խորհրդոց շարժեալ՝ ես ինքնին յորդորեի 'ի դոյն, էր պարտ վստահ լինել. այլ քանզի ոչ գլխովին այնպես հաձոյ Թուեցաւ այդ, անխաբ է գրաւական աներկեաւ նուէն։ Վ բիպեալ է լինել իշխանուէ հրամայելոյ վասն այդպիսեաց իրաց. ապա Եթէ լսել կամիցիք իբրև ծառայակցի ումեք, * Իսրատ տամ ասէ, որպէս ողորմելոց ուրուք 'ի տեառնէ՝ հաւատարիմ լինել ||։*

Վ.ԱՀ աստանօր զարմանալ արժան է ընդ բազմահնար իմաստ և զգօնութեն երանելոյն, իբրև զի 'ի մէջ անկեալ կրկնակի իրաց՝ կարևորաց և ներհականաց, քանզի հարկաւորեր լիմն 'ի դէմս նոցա ընծայեցուցանել զանձն 'ի պատճառս քաջալաւութեե խորհրդոյն, դարձեալ և ոչինչ մեծամեծս կամէր խօսել վասն անձին՝ իբրու այն որ յառաքինութեե անտի անմասն իցէ, զերբ կաքանչիւրն ևս 'ի համառօտս առեալ բովանդակեաց։ Վանզի ասելոյին, որպէս ողորմելոց ուրուք, այնպէս զանձն առաջի ընծայեցոյց. իսկ զի ոչ առաւել լիմն շքեղ անուամբ արար զայդ, դովին գարձեալ խոնարհեցուցանել և նկուն առնել զանձն իւր։

խոե. Վանզի ոչ ասաց, իբրտ տամ, որպէս այն՝ որում հաւատացեալ իցէ աւետարանն, որպէս արժան նացեալ լինել քարոզ հեթանոսաց, որպէս յանձն իմ առեալ զձերն վերակացութիւն, որպէս վարդապետ և առաջնորդ. այլ զինչ. որպէս ողորմեալ ոք, ասէ։ Այս որ առաւել խոնարհադոյն է, 'ի վերայ բերէ. քանզի խոնարհադոյն ևս է լոկ հաւատացեալ լինել, քան Եթէ վարդապետ հաւատացելոց։ 'Ի վերայ այսր և այլ լիմն խոնարհութեե հնարի. իսկ զինչ այն իցէ. ոչ ասէ, որպէս հաւատարիմ եղեալ, այլ որպէս ողորմեալ ոք հա-

ատաբիմ լինել։ Վասնզի մի երբեք դուք համարեա ջիք, եթէ առաքելութիդ միայն և քարոզութիդ և վարդապետութիդ իցէ պարգեւ այ. քանզի և նոյն իսկ հատուածս յողորմութէ անտի նորա ընդհակառակ լինի. զի ոչ ասէ, եթէ՝ քանզի արժանի էի, վասն այնորիկ արժանաւոր գտայ հաւատոյն, այլ քանզի ողորմութիւն գտի միայն. իսկ ողորմութիւնն ընդհակ է, և ոչ արժանիք։ Այսպէս զի եթէ ոչ կարի ինն գթած լեալ էր այ, արդեօք ոչ միայն առաքեալ, այլ և ոչ հաւատացեալ բաւական էին լինել երբեք։

Յետանէս զսիրտ ծառային զերախտագէտն և զցածն. զիարդ ուղիղ առաւել քան զայլսն գրաւէ անձին իւրում. այլ և զայն ինչ՝ որ հասարակաց էր իւրում անձին և աշակերտացն, զհաւատսն ասեմ, ոչ ասէ անձին ինչ լինել, այլ ողորմութէ և ընդհայցն այ. զայն ինչ՝ի գէմն բերելով քանիւքս այսոքիւք, որպէս եթէ ասէր. մի ինչ անարժան համարեսջիք առնուլ յինէն խորհուրդ. քանզի և ոչ այծ ինքնին անարժան ինչ համարեցաւ զիս ողորմութէ իւրում. և այն զի խրատ ևս է բանին, չէ հրամանն. քանզի խորհուրդ տամ, օրինադիր ոչ լինիմ։ Այլ սակայն եթէ ուսմէք՝ի պիտանեաց ինչ՝ի միտս անկանիցի, ոչինչ օրինաք արգելուն զնա՝ի ներքս արկանել զայնոսիկ և առաջի ընծայել, մինաւանդ յորժամ և ունկնդիրք զղջոյն խնդրեսցեն. ըստ որում և առ ձեզ եղև բանդ։

*Ա.ԴՐ՝ * Համարիմ ասէ, թէ այնպէս լաւ իցէ ‖։ Յետսանէս դարձեալ զպարկեշտ բանսն, որ օտար է յամենայն իշխանութէ։ Այս այն զի մարթ էր նմա ասել զ բրնակ զայս։ Վասնզի տէրն ոչ պատուիրեաց զկուսութէնն, վասն այնորիկ և ոչ ես. սակայն խորհուրդ մի տամ ձեզ և յորդորեմ՝ի նահանձ նորա. և քանզի առաքեալ ձեր եմ, ըստ որում և՝ի վայր կոյս խօսի ընդ նոսա և ասէ. * Հպարտ և այլոց չիցեմ առաքեալ, այլ դէպ ձեզ եմ ‖. ա. կոր. ե. 2։ Ա.ՀԼ սակայն աստանօր ոչինչ բարբառի յայսպիսեաց ասի, այլ բաւական խնայութէ վարի՝ի բանսն. փոխանակ ասելոյ, խորհուրդ տամ, ասէ կարծիս ինն առաջի ընծայեմ (*)։*

(*) Զայն բառն γνώμη, որոյ փոխանակ եդեալ է՝ի մերում Թարգմանութէ յայս բան առաքելոյն Խրատ, Նշանակէ և կարծիս, և այլն։

իսկ փոխանակ ասելոյ՝ որպէս վարդապետ, ասէ՝ որպէս ողորմեալ ոք ՚ի տեառնէ հաւատարիմ լինել. և որպէս եթէ և ոչ այդոքիկ բաւական ինչ էին ՚ի խոնարհու թիւն բանին, սկիզբն արարեալ խորհրդոյն, դարձեալ կարէ ինչ ի յիշեանութիւն անտի. զի ոչ սոսկ այնպէս զբանն կարգէ դնէ, այլ և զպատճառսն առընթեր յարէ. քանզի համարիմ ասէ, թէ այնպէս լաւ իցէ վասն վտանգին՝ որ ՚ի վերայ կայ։ Այլ սակայն յորժամ վասն ժուժկալութեան խօսէր, ոչ համարիմ ինչ եդ, և ոչ դարձեալ պատճառս ինչ, այլ զբոյն միայն, եթէ՝ լաւ է նոցա, եթէ կայցեն իբրև զիս. իսկ աստանօր, հա մարիմ՝ թէ այնպէս լաւ իցէ։ Այլ առնէ զայս, ոչ եթէ իբրև յերկմիտս ինչ գոլով կիրացդ. ՚ի բաց տար. այլ զի կամէր ՚ի դատաստան անդր ուղիղ դրացն զամենայն առնել ապաստան. քանզի այսպիսի ինչ է խորհրդականն. զի ոչ եթէ ինքն զասացելոյն իւրոց վճիռ հատանիցէ, այլ զի զամենայն գլխովին թողուցու ընդ դատաստանաւ մնալ ուղիղ դրացն։

Խէ. Իսկ ո՞ր այն իցէ և վտանգն՝ զոր աստանօր ա սէ. արդեօք որ ՚ի բնութենէ՞ անտի իցէ. ոչ բնաւ։ Վասնզի նախ՝ եթէ զայս ասէր, զհակառակ արդեօք գործէր խորհրդոյ իւրոյ յիշատակութեանն նորա. քանզի որք միանգամ ամուսնանալն կամին, զայն վեր ՚ի վայր դարձուցանեն։ Իսկ երկրորդ՝ ոչինչ արդեօք զնա վե բակաց կոչէր. քանզի ոչ այժմ զառաջինն, այլ անդստին ՚ի սկզբանէ բնաւորեցաւ նա յաղգս մարդկան. և ՚ի նախնումն անդ դժնդակագոյն ևս էր, և անսանձելի. այլ ՚ի գալստեանն քոյ ՚ի բարգաւաճել առաքինութենն՝ դիւրասանձելի եղև։ Այլ ուրեմն ոչ զայսմանէ ինչ է բան նորա, այլ այլ իմն զեկուցանէ նա բազմայիեղանակ և բազմադիմի։ Ո՞ինչ ապա այն իցէ։ Փոփոխութիւն կենցաղականացս իրաց։ Վասնզի այնչափ է շփոթն, այնչափ բռնաւորութիւն հոգոյն, այնչափ է խուժան զբաղանացն որ շուրջ կան, մինչև յակամայս բազում ինչ բազում անգամ բռնադատի ամուսնացեալն սխա լել և յանցանել։

խե. Վասնզի ի նախնումն ոչ նոյնօրինակ չափ ա-
ռաքինութիւնք եղաւ մեր առաջի. այլ օրէն էր միանգա-
մայն և վըհժխնդիր լինել անիրաւին, և փոխարէն
թշնամանել զթշնամանադիրն, և հոգս ունել ընչից,
և երջանկ ուղղութիւն, և ակն հանել ընդ ական և ա-
տել զթշնամիս. և ոչ դարձեալ գրգանք և կամ բար-
կուի, և կամ հանել զկին և զայլ ի տեղին մատուցա-
նել՝ արգելեալ ինչ էին այսոքիկ։ Այլ ոչ այս միայն,
այլ և կրկին ունել կանայս ի միասին՝ Թոյլ տային օ-
րինք. և միանգամայն յայսոսիկ և յայլն ամենայն դիւ-
րութիւն բազում էր։

Այլ իբրև երևեցաւ քո, կարի անձկագոյն եղև ճա-
նապարհն. ոչ միայն անասելիդ այդ և բազում ազա-
տութիւն նախաձառաւելոցդ ամենայնի ի բաց զերծաւ
յիշխանութենէս մերմէ, այլ զի և զկինդ զայդ՝ որ բա-
զում անգամ յօժարեցուցանէ և բռնադատէ զմեզ և
յակամայ կամս մեր բազում ինչ յանցանել, պարտ է
հանապազ ունել ի ներքս ի տան. կամ եթէ հանել
ոք կամեսցի, պարտական լինել հնութեան։ Այս ոչ ի
պատճառս այսորիկ միայն դժուարութիւնք է մեզ առա-
քինութիւնն, այլ զի թէպէտ և համբոյր բարս ունիցի
կենակիցն, սակայն խուժան հոգոյն՝ որ վասն նորա
և վասն նորուն ծննդոցն հեղեալ զերդս գնովաւ, և ոչ
վայրիկ մի ներբ նմա հայել ի վեր ի յերկինս. քանզի
իբրև պատրաստ բռնութիւն յամենայն կողմանէ պատ-
զե զհոգիս մեր, և խորասոյզ առնէ։

Այս արդ դու հայեաց ինձ, աւանիկ խնդրե այլն
կեանս ինձ վարել զսոսկականի՝ զանվատանգն և զանըզ-
բաղն. այլ իբրև գառնայ հայի ի մանկունսն՝ որ շուրջ
կան գնովաւ, և ի կինն՝ որում բազմապատիկ ծախուց
պէտք են, յակամայ կամն առեալ զանձն արկանէ ի
ծուփս քաղաքական իրացդ։ Խոկ յորժամ անգը ան-
կանի նա, այնուհետև չիք հնար ասել՝ եթէ քանիսն
արգելք հարկ եղէ մեղանչել նմա, յորժամ բարկա-
նայ, յորժամ երդնու, յորժամ թշնամանի, յորժամ
վըհժխնդիր լինի, յորժամ կեղծաւորի, յորժամ բա-
զում ինչ առ ի հնարս և բազում ինչ դարձեալ առ ո
խակալութեէ գործէ։ Վասնզի զնաւրդ հնար եղէ այնմ

յաղտս բաղումն ոչ թաւալիլ մեղաց, որ յայնչափ մըրկին ծփայ և ի նմին խնդրէ փառս որսալ։

Այսպա եթէ ոք և զառանինսն նորա ի քնին առցէ, ի նոյն տագնապս կրից և առաւել քան զնոյն գոցէ զնա վարակեալ ի պատճառս կնոջն. քանզի բազում ինչ և վասն բազմաց իրաց նմա հարկ է հոգ ունել. ո. րոց և ոչ արդեօք պէտք ինչ լինիցին առն՝ եթէ առանձինն վարէր կեանս։ Այլ այսոքիկ յայնժամ յորժամ պարկեշտասուն հանդիպեսցի կինն և բարեհամբոյր. ապա եթէ խեռ իցէ և դժպհի և դժոխրմիթեր, ոչ ևս այնուհետև վասնկ միայն կռէսցուք մեք զբանդ, այլ և պատուհաս և տանջանք։

Օ խարդ ապա երբէք հնար իցէ յերկինս ի վեր առնել զուղին զոյն՝ որում արձակ և թեթևընթաց ո. տիւ պէտք են և քաջագօտի և կազմ հոգւոյ, յորժամ այդչափ բեռն հոգոյ ի վերայ կապեալ իցէ, յորժամ այդչափ ոտնակապօք պրկեալ իցէ. և ի պատճառս շղթայիդ այդորիկ, զվատթարուն ասեմ զկնոջն, ցանգ ի խոնարհ ատ ձգեալ բերիցէ։

Լսե. Այլ զինչ արդեօք առ մեզ իմաստուն բան իցէ ուսանիլն, յորժամ զայդ ամենայն նմա ի դէմս ածիցեմք։ Այսպա ուրեմն, ասէն, առաւելագունի արժանի է պսակ կաց, որ ի մէջ այդչափ վտանգիդ քաջապէս ուղեւոցդ զանձն։ — Այս ինչ, և վասն էր արդեօք, ոմ քաջգ։ Որով զի, ասէ, բազմագոյն քրտանց վաստակոց ի ներքոյ գրաւեցաւ նա ի պատճառս ամուսնութեն։ — Այս ո՞ոք ապա բռնագատեաց զնա՝ զայդչափ բեռնդ առնուլ զանձամբ իւր. զի եթէ արդարև ամուսնանալն լծումն ինչ էր պատուիրանին, և ոչ ամուսնանալն՝ օրէնս նաղանցութեն ինչ էր, հաւանական էր արդեօք բանդ։ Այսպա եթէ որ իշխանն էր ոչ գրաւիլ ընդ լծով ամուս. նութեանդ, և ինքնին ոչինչ բռնագատեալ յումեքէ, յայդչափ տագնապդ կամեցաւ առնուլ պաշարել զանձն իւր, որով և առաւել դժուարամարտ եղեն նմա մրցանք առաքինութեն, ոչինչ այս մեզ է հանդիսացրին, որ զայս միայն հրամայեաց մեզ՝ մարտ պատերազմի ընդ. դէմ յարդարել սատանայի, և ի վերայ ախոյեի նշան յաղթութեն կանգնել։ Այսպա եթէ ոք կամ ամուսնութ

և փափկութիւն և բազմապատիկ հոգւովք, կամ՝ ի հրաշանս կրթութիւն և վշտմբերութիւն, և բաց՝ ի սմանէն ոչինչ այլ հոգ տանելով՝ ի գլուխս հանցէ զայդ, նման սմա այնորիկ ոչինչ փոյթ է այնուհետև։ Իսկ զկեղծանակ յաղթութեանն և զնմանապարհն որ տանի՝ ի մըցանակ անդր, նա զայն ասէ՝ զի բովանդակ՝ ի բաց կացցէ՝ ի կենցաղականաց աստի։

Իսկ արդ՝ քանզի քոյ կամք այն էն, զի հանդերձ կանամբդ և մանկամբդ և որ սոցա զկետ գան զբաղանօքդ՝ միանգամայն ձակատեացիս և զմխրան մէնեսցես, որպէս այն թէ՝ ի գլուխս տանել յաջողեսցի քեզ զնմանօրինակն նոցա՝ որք միանգամ ոչինչ կապեցան յայսոսիկ ամենևին, և յաղագս այսորիկ առաւելագունին լիցիս արժանի զարմանաց, այժմ թէ երբեմն և իբրև մեծայոն սմբարտաւանս գատափետ արասցես զմեզ, յաւել մեր՝ եթէ չիք քեզ հնար յայն գագաթն նոցա հասանել ժամանել։ Իսկ սակայն վախճանն ինքնին և ժամանակ պսակացն յայնժամ գեղեցկիս խելամուտ արասցէ զքեզ, եթէ կարի վեհագոյն է աներկևանութէն քան զփառասիրութէն մնոտի, և առաւել լաւ է անսալ քեզ՝ քան ընդունայնութեանէ խորհրդոց անձին։ Վանզի և ոչ զհրաժարեալն յիւրոցն ամենայնէ շատ խակ առաքինութեն անդր ասաց լինել մեզ քո, եթէ արդեօք և ոչ զանձինս մեր գլխովին առեսցուք. իսկ դու շաղեալ յամենեսին՝ ի սոսա՝ ասես եթէ բաւական ես՝ ի յաղթել։ Իսկ որպէս ասացի, յայնժամ սիրասփես՝ ի վերայ կացցես՝ եթէ քանիսն խոչընդոտն առ առաքինութիւնն անդր իցէ կինդ այդ և զբաղանք կնոջդ։

Լսէ. Ո՞ իմոյդ ապա, ասէ, զկոչընդոտն օգնական կոչէ. քանզի * Պրասցուք ասէ, նման օգնական ըստ դմա ‖. Ծն. Բ. 18։ Իսկ և ես դարձեալ հարցանեմ զքեզ. զիո՞րդ արդեօք օգնական նա՝ որ յայնպիսի աներկևանութէնն առեալ զրկեաց զայրն, և՝ ի աքանչելի օձեվանէ անտի դրախտին արտաքս վարեալ, արկ ձգեաց զնա՝ ի չփոթս կենցաղոյս այսորիկ. քանզի այդպիսիկ ոչ միայն օգնականն չէին, այլ և դաւաճանի։ Վանզի * ի կնոջէ ասէ, սկիզբն մեղաց. և վասն նորա մեռանիմք ամենեքեան ‖. Ա Տիմ. Բ. 33. և երանելին պաւղոս. * Պդամ, ասէ, ոչ

պատրեցաւ. այլ կինն պատրեցաւ և յանցեաւ ‖. ա. պէտ. Բ. 12։

Օ՛հարդ ապա օգնական իցէ նա, որ ընդ մահու առեալ դրաւեաց զայրն։ Օ՛հարդ օգնական նա, յոյր ձեռն որդիքն այ, մանաւանդ եթէ ամենայն բնակիչք երկրի յայնժամ՝ի միասին ընդ դաղանս և ընդ թռչունս և ընդ այլ ամենայն կենդանիս ջրհեղեղաւ կորեան։ Վասն զի ոչ նա և փոքր միս ևս կորուսեալ էր զարդարն զովք, եթէ չէր նա քաջ արանց։ Եւ նա կորոյս զսամիսոնն. ոչ ապաքէն նա ինքն հանդերձեաց կազմեաց զբոլոր ազն եբրայեցւոց նուիրել բէլփեղովրայ և կոտորել յազգակցացն ձեռաց։ Իսկ ո՞ր առաւել ապիկս սատանային մատնեաց զաքսաբ. և նախ քան զնա՝ զսո զոմանն յետ այնչափ բազմինար իմաստութե՛ն նորա և փառացն։ Եւ ահա և մինչև յայսօր նոքա զարս իւրեանց խոնարհեն ձգեն բազում՝ինչ յանցանել ընդդէմ այ։ Եւ ապաքէն վասն այսորիկ ասէ իմաստունն այն այր. * Վնասեայ չարութիւն փոքր է առ չարութի՛ն կնոջ ‖. սէր. իէ. 26։

Օ՛հարդ ապա ասէ, ասաց ածէ վասն նորա, արասցուք նմա օգնական ըստ դմա. քանզի և ոչ ատէ ինչ ածէ։ Այս ոչ ես երբէք ասեմ զայդ. քա՛, մի՛ լիցի. այլ թէ՝ի սոյն հաստեցաւ նա և վասն այսորիկ. սակայն ոչինչ կամեցաւ դա կալ ինալ յիւրում պատուի, ըստ հրում և ոչ այլ նորա. զի և զնա արար ածէ ըստ պատկերի իւրում և ըստ նմանութեան. քանզի արասցուք, ասէ, մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութե՛ն. որպէս և ասաց, արասցուք նմա օգնական։ Այլ սա կայն որ ըստ երկաքանչիւրումն հաստեցաւ, առհասա րակ կորոյս վաղվաղակի. քանզի զնմանութե՛ն ոչ պահեաց, այն որ՝ի ձեռս տարադէպ ցանկութեանն եղև անձնատուր, և խաբանօքն ըմբռնեցաւ, և հեշտութե՛ն ոչ յաղթեաց. իսկ որ ինչ ըստ պատկերին այ էր՝ և յա կամայ կամն նորա առաւ կատեցաւ՝ի նմանէ այնու հետև. քանզի և ոչ դուշնաքեաց ինչ մանն յիշեանութե՛ն անտի նորա հատ կտրեաց՝ի նմանէ ածէ. յորժամ որ ամենեցուն ահարկուն էր իբրև տէր, զնա իբրև ծառայ ապաշնորհ՝ զնաւակաւ՝ի տէրն իւր՝ արհամարհե՛լի կացոյց իւրոցն ծառայակցաց։ Վանզի՝ի սկզբանն

և ամենայն գազանաց միանգամայն ահարկու էր նա. զի և զամենեսեան առ հասարակ ած առ նա ահ. և նո քա ոչինչ յանդգնեցան ընտրել նմա և դաւել զնա, քանզի զթագաւորական պատկերն տեսանէին փայլա տակեալ ի նմա։ Իսկ յորժամ զկնիքն զայնոսիկ ժան տացոյց նա մեղաքն, յայնժամ և յիշխանութենէ անտի նորա մերկացոյց զնա ահ։

Իսկ արդ զի ոչ ամենեցուն իշխէ նա որ ի վերայ երկրի, մնաւանդ եթէ և իցեն ոմանք՝ յորոց զդողալ նի հարկանի և զարհուրի, այս ոչ սուտ երբեք առնի զվճիռն այ՝ որ ասաց. եթէ * տիրեսցեն գազանաց երկրի ‖. ՃՆ. ա. 26. իբրև զի ոչ ի տուողին, այլ յառն զին յանցանացն ծայրատութեէ եղև իշխանութենն այնո րիկ։ Ա՛յսպէս և ոչ կանանցն դաւաճանութիւք լսրեալք ընդդէմ արանցն՝ վճռասկարք էնչ են բանին այնորիկ՝ որ ասէ, արասցուք նմա օգնական ըստ դմա. քանզի ի սոյն հաստատեցաւ նա, այլ ոչ ինաց ի նմին։

Ընդդերձ այսու՝ էր և զայն էնչ ասել, եթէ նա և առ վիճակ կենացս այսոցիկ և առ ծնունդս զաւակաց և առ բնակաւոր ցանկութենն զիւրն օգնականութէ յան դիմանն ընծայեցուցանէ։ Ա՛յլ քանզի ոչ էս ի այժմ ժամանակս ոչ կենացս այսոցիկ, ոչ մանկարարութէ և ոչ ցանկութէ, զի՞ դու ի նանիր յիշատակես էնձ առ տանօր զօգնականդ զայդ. քանզի կին՝ որ ի փոքունսն միայն բաւական էցէ պիտանացու լինել, եթէ ոք զնա առ մեծամեծան առցէ իւր գործակից, ոչ միայն ոչինչ օգտեցուսցէ զնա, այլ և խոչընդոտն եղիցի նմա ի պատձառս հոգոցն։

խէ. Ո՛վ էնչ ապա ասացուք ասէ, առ պաւղոս՝ որ ասէ. * Ո՛վ գիտէս կին դու, եթէ զայրն քո ապրեցուսցես ‖. և զօգնականութէ նորա կարևոր ցուցանէ և ի հոգևորսն անդր։ — Ա՛յս էս ինքնին խոստովանիմ զայդ. քանզի և ոչ իսպառ հատանեմ կտրեմ զնա առ ի հոգևորսն մնրտակցութէ. մի լիցի։ Ա՛յլ ասեմ, եթէ յայնժամ ի գլուխ տարցի դա զայդ, յորժամ ոչ եթէ զամուսնութենն գործեսցէ էնչ գործս, այլ ի կա նացի իւրում բնութենն կացեալ մնացեալ, այնպէս ա պա յառաքինուէ անդր Ձեպեսցի երանելեացն արանց։

Վանզի ոչ եթէ յօրինածովք զարդուն և կամ գրգռ նօքն և կամ զգրամոց հասս պահանջելովն յառնէն, և կամ վատնիչ գոլով և շռայլ՝ երբեք կարող ինչ իցէ ապրեցուցանել զնա. այլ յորժամ վեհագոյն եղեալ ամենայնի այսոցիկ, և զառաքելականն յանձին իւրում տպաւորեսցէ կեանս, բազում հանդարտութեի՛ ի գէմն բերցէ, բազում պարկեշտութեի՛, բազում արհամարհութեի՛ ընչից և չարակրութեի՛: Այլ յայնժամ կարող լինի՛ զի որսալ զնա, յորժամ ասացէ. * Ընկնիք կերակուր և հանդերձս, և այնու շատասցուք ‖ Ա. Տիմ. Ը. 8. յորժամ արդեամբք իմաստասիրեսցէ զայսոսիկ. և ըզմարմնաւոր մնհոս ծիծաղեալ՝ առ ոչինչ գրեսցէ զաստ կեանս. յորժամ զամենայն զփառս կենցաղոյս այսր բիկ ըստ մարգարէին իբրև զծաղիկ խոտոյ համարեսցի:

Այսպա ուրեմն ոչ եթէ կանանցօրէն կենակցութիւնն բաւական ինչ իցէ ապրեցուցանել զայն, այլ յորժամ զաւետարանական վկեանն յանձին իւրում բարձեալ բերիցէ. քանզի զայս և արտաքոյ ամուսնութեե գործել ցին բազում կանայք: Վանզի պրիսկիղա առեալ, ասէ, առ իւր զապեղէս՝ առ ամենայն Ճանապարհն Ճշմարտութեե դաստիարակեալ առաքնորդեաց նմա. գործ. ԺԸ. 26: Այսպա եթէ այժմիկ ոչ Թոյլ լինի այդմ, սա կայն առ կանայս մարթ է զնոյն ջանս՛ի ներքս բերել և զնոյն պատուհն կթել. քանզի զոր կանխեցի ասացի, ոչ եթէ նա՛ի պատճառս կին գոլոյն՝ զհետ իւր յօժա ըեցուցանէ զայրն. ապա Թէ ոչ՝ խափան ինչ չէր՛ի մէջ, զի և ամենայն այր՝ որ միանգամ կին ունիցի հա ւատացեալ, դարձեալ և ինքն և եղիցի հաւատացեալ. իբրև զի կենակցութիւդ այդ և քնաւ կցութիդ՛ի գլուխ տաներ արդեօք զգործդ զայդ: Այլց սակայն չէ և չէ այդպէս բանդ. այլ եթէ բազում խմաստասիրութեե և համբերուե յանձին իւրում ընծայեցուսցէ կինն, եթէ զզբաղանօք ամուսնութեեն արհամարհեսցէ, և զօրհա նապազ զգործ զայս ցուցցէ յանձն իւր, այս է որ ապրեցուցանէ զհոգի կենակցին իւրոյ: Այսպա եթէ այնպէս ցի նա խնդրել պահանջել զկանանցականսն, ոչ միայն ոչինչ օգնեսցէ նմա, այլ և վնասեսցէ իսկ: Այսկ եթէ և այնպէս յոյժ գժուարին իցէ բանդ այդ, լաւ զինչ ասէ. * զի՞ գիտես կին դու, եթէ զայրն քո ապրեցուս

ցես ‖ · քանզի զերանակ զայս հարցման յայն ինչ բնաւ սորեցաք մեք վարել՝ որ յանահնկալս ինչ պատահեսցեն ։

Ասէ ցնա Յիսուս այսոցիկ ասէ · * Կապեալ ես ՚ի կին , մի խնդրեր արձակիլ · արձակեալ ես ՚ի կնոջէ , մի խնդրեր կին ‖ ։ Ցեսանես , եթէ զհարդ անգուլ փոփոխումն ինն կազմեաց բանին , և բարեխառնութեան քաւզումարկաքանչիւր ևս յորդորակին փոքու խտրոցաւ ։ Վասնզի զորօրինակ ՚ի բանսն՝ որ յաղագս ամուսնութեանն՝ խառնեաց և զժուժկալութեն , և այնպէս ասէ զարթեայց զունկնդիրն , այսպէս և աստանօր բանս յաղագս ամուսնութեանն դարձեալ կարդեաց եդ , և այնպէս ետ նմա ոգի առնուլ ։

Ակիզբն արարեալ ՚ի կուսութենէն , և մինչև խօսեալ ինչ վասն նորա , վաղվաղակի ձեռն ՚ի ձառս ամուսնութենէ ։ Վասնզի ասելոյին , եթէ՝ հրաման ինչ ոչ ունիմ , քայլ տայ ամուսնութեանն և ՚ի ներքս մուծանէ զնա ։ Ասէ ասա իբրև եկեալ եհաս ՚ի կուսութենէ անդր , և ասաց , եթէ՝ * համարիմ՝ թէ այսպէս լաւ իցէ ‖ · և իբրև եառես՝ եթէ անուն կուսութեանդ ստէպ ստէպ հնչեալ , տադնապ բազում ՚ի վերայ ածէ փափկութենէ լսելեացն , ոչինչ յաձախ առնու և զնէ զնա · մանաւանդ եթէ և զբաւական պատճառանն ափոփիչ քրտանց կուսութեանն ՚ի վերայ բերեալ՝ այս է զմնալուստ վտանգն , և ոչ այնպէս դարձեալ համարձակեցաւ ինչ յիշատակել զկուսութենէնն · այլ զինչ · բարւոք է մարդոյ՝ թէ այսպէս իցէ ։ Այլ ոչ դարձեալ զբանն զայս երկայնէ ձգէ , այլ հատեալ զնա և կտրեալ , մինչև խիստ ինչ երևեալ բանին՝ միւսանգամ յաղագս ամուսնութենէ բանս ՚ի ներքս արկանէ , ասելով · * Կապեալ ես ՚ի կին , մի խնդրեր արձակիլ ‖ ։ Վասնզի թէ ոչ այս էր , և ոչ դարձեալ զայն սփոփանան խնդրեր պատրաստել աստանօր , ապա դժպատեհ ինն էր յաղագս ամուսնութենէ խնամատարել այնմ՝ որ յաղագս կուսութենէ առեալ էր խորհրդական լինել ։


Ապա դարձեալ ՚ի կուսութենէ անդր փոխի · սակայն և ոչ այժմ զնա տիրական անուամբն կոչէ · այլ զինչ · * արձակեալ ես ՚ի կնոջէ , մի խնդրեր կին ‖ ։ Այլ մի դու երկնչիր · ոչ վնաս ինչ հատանէ , և ոչ օրինադիր լինի ։ Վասնզի դարձեալ մերձ առընթեր կայ բանն

յաղագս ամուսնութեանն՝ որ զսկզբ զայդ ՚ի բաց փարատէ ասելով։ * զի եթէ ամուսնանայցես, ոչ մեղաս ‖։ Այլ սակայն և մի այժմ անկեալ լքանիր. քանզի դարձեալ զքեզ ՚ի կուսութեն անդր առեալ ձգէ։ Վասնզի զայս կամի նա՝ յորժամ ասէ, եթէ բազում նեղուն մարմնոյ ունիցին ամուսնացեալքն։

Վասնզի զորօրինակ բժիշկք քաջարուեստք և հանդարտք յորժամ զդառն դեղն կամ զհատուածին կամ զխարուածին կամ այլ ինչ յայսպիսեաց ՚ի ներքս թերել հանդերձեալ իցեն, ոչ անդէն վաղվաղակի զամենայնն ՚ի գործ վարեն, այլ տուեալք վայր մի ոգի առնուլ սխատացելոյն՝ այնպէս միշտ զայրն բռնադակ ՚ի վերայ ածեն. ըստ օրինակիդ ըստ այդմիկ և երանելին պաւղոս՝ ոչ անդուլ և համանգամայն և հեզհեզաւ հիւսեաց յարմարեաց զնորհուրդ կուսութեն, այլ յառաջս կարելով զնա ՚ի ձեռն ամուսնութեանն ձառին. և այնպէս զնաստուածն նորա գողջնալով ՚ի նմանէն, ամբք և հեշտընկալ յարդարեաց զբանն. յորմէ և եղև բազմադիմի բարեխառնութեիդ այդ բանից։

Վակայն արժան է և զնոյն իսկ զբանն այսուհետև զքննութեիդ բերել։ * Կապեալ ես ՚ի կին, ասէ, մի խնդրեր արձակիլ ‖։ Վասվին ոչ այնչափ խորհուրդ տայ, որչափ զդաստարակնձիռն և զանել եղը կապաստայն ՚ի դէմն բերէ։ Իսկ ընդէր ոչ ասաց, ունիս կին, մի թողուր զնա. կինակից ես ընդ նմա, մի մեկնիր. այլ կապանս կոչեաց զձակցութեին, որպէս զի զդժուարընթերութեի գործոյն ցուցցէ աստանօր։ Այս քանզի առ ամուսնութիւն անդր իբրև առ հեշտին ինչ ընթանան առ հասարակ ամենեքեան, յուցանէ՝ եթէ քան զկապեալսն ոչինչ աւելի են ամուսնացեալքն. քանզի և աստանօր յոր կոյս և ձգեսցէ մին, հարկ է միւսոյն ընդհետ գնալ. կամ եթէ հակառակուի յուզեսցէ, հարկ է և միւսոյն նմա մարտակից լինել։

Օ ինչ ասա, ասէ. յորժամ այրն գեանաքարշ իցէ, իսկ ես կամիցիմ ժուժկալ լինել։— Հարկ է քեզ զհետ երթալ նորա. քանզի և բերկրական շղթայ ամուսնութեիդ՝ որ պատէ զքեզ, ձգէ զքեզ գործել զայդ և յառաջս կամայ կամն քո. և խոնարհէ յօժարեցուցանէ զքեզ առ նա՝ որ ՚ի սկզբանն կապեցաւ ընդ քեզ։ Այլ եթէ



զդեմ կալցես և քակեսցես ՚ի նմանե, ո՛չ միայն ՚ի կա-
պանաց այսի ո՛չինչ զերծուսցես զանձն քո, այլ և ՚ի
վերջին տանջանս առեալ ձգեսցես։

խը. Պանդխտի կին, որ հակառակ կամաց առն ժուժ-
կալել, ո՛չ միայն ՚ի վարձուց անտի ժուժկալութեանն
վնէպ եղիցի, այլ և զշնութե՛ նորա ինքն տացէ զհա-
մարս և զվնասս առաւել քան զնա։ Այս առ ինչ ա-
պա. քանզի ինքն ՚ի վիհ անդը պղծութե՛ խարդաւան-
եաց զնա՝ զրկելով յօրինաւոր մերձաւորութե՛ն։ Օ՛ի
եթէ զայդ և ո՛չ առ վայր մի առնել օրէն է նմա ընդ-
դեմ կամաց առն, զո՛ր թողութե՛ ապա ունիցի նա՝ որ
զամենայն աւուրս վնէպ կացուսցէ զնա ՚ի մխիթարու-
թե՛նէ աստի։

Այս զի՞նչ ապա քան զհարկդ զայդ և քան զհիգուդ
դառնագոյն՝ ասէ, կայցէ երբէք։ — Օ՛դոյն և ես
ինքնին վկայեմ. ընդէ՞ր ընդ հարկաւդ ընդ այդուիկ
դրաւեաս զանձն քո. քանզի զնորհուրդդ զայդ ո՛չ եթէ
զկնի ամուսնութե՛դ, այլ նախ քան զամուսնութի՛նդ
պարտ էր քեզ ՚ի միտ առնուլ։ Այմին իրի և պատրաս
հուսկ ուրեմն առաջի արկեալ զհարկ կապանացդ այդո-
ցիկ, ապա խօսի յաղագս արձակմանն. քանզի իբրև ա-
սաց, կապեալ ես ՚ի կնի, մի՛ խնդրեր արձակիլ, ան-
դէն ՚ի վերայ եբեր, արձակեալ ես ՚ի կնոջէ, մի՛
խնդրեր կնի։ Ասէ գործէ զայդ՝ զի դու ինքնին յառա-
ջագոյն ձնգրտիւ զննեալ և ՚ի վերայ հասեալ բռնու-
թե՛ լծակցութե՛դ, հեշտագոյնս այնուհետև յաղագս
անամուսին կենացն ընկալցիս զգան։ * Օ՛ի եթէ ա-
մուսնանայցես, ասէ, ո՛չ մեղաւ. և եթէ ամուսնանայցէ
կոյսն, ո՛չ մեղաւ ։ Հաւասիկ զեղ ելք մեծափառ
հանդիսի ամուսնութե՛դ. ո՛չինչ եղեր բամբասելի, և
ո՛չ եթէ սքանչելի ինչ գտար դու. քանզի զայդ կուսու-
թիւնդ գործէ. իսկ որ միանգամ ամուսնացեալն էցէ՝
շատ իսկ համարեսցի լսել, եթէ ո՛չ մեղաւ։

Ա՛ռ ինչ ապա յորդորես, ասէ, մի՛ խնդրել կինս։ — Ի-
բրև զի՝ եթէ կապեսցի միանգամ ոք, արձակելոյ չի՛ք
հնար. իբրև զի և նեղութիւն բազում էցէ ՚ի բանիդ
յայդմիկ։ Օ՛այդ միայն թերևս, ածէ ասա՛ ինձ, շա-
հեսցուք մեք ՚ի կուսութե՛ն անտի. զի ՚ի նեղութենէ

ատեի ապրեսցուք. և ո՞ք ապա այնուհետեւ այդչափ վարձուք յանձն առնուցու ՚ի կուսութե՛ն կալ. իսկ ո՞ք արդեօք յօժարեսցի յայդչափ մըցումնդ իջանել, եթէ ընդ այդչափ քրտանցդ՝ զայդ տրիտուրդ միայն առնուլ հանդերձեալ լիցի։

խե՛. Ո՞ Քրիստոս ասես. յորժամ զիս ընդդէմ դիւացն գլխովին հրաւիրես յարդարել մարտ. * զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան ‖. եփես. ՚ճ. 12. յորժամ մեղեգնութե՛ն քնուես հրամայես ընդդէմ կալ, յորժամ մարմնով և արեամբ յորդորես զՀաւասարսն նահատակել զանմարմին զօրութե՛ն, ինձ զերկրաւորը բարիդ ՚ի յուշ արկանես, և թէ ոչինչ ունկիցիմք նեղութե՛ն որ յամենութե՛ն անտի լիցի։ Վասնզի ընդդէր այսպէս չասաց. և եթէ ամենանայցէ կոյսն, ոչ մեղաւ. սակայն ՚ի պահաց կուսութե՛ն վերկեցոյց զանձն իւր, ՚ի մեծամեծ և յանձառելի պարգեւացն յայնոցիկ։ Վասնզի ոչինչ յիշատակեաց զբարեացն՝ որ յետ մըցա նացն պատրաստեալ ինան նոցա. զիարդ ընդ առաջ ելցեն փեսային, զիարդ պայծառ ունկիցին զլապտերսն, զիարդ փառաք մեծաւ և համարձակութե՛ն ՚ի հարսնեքն մտցեն ընդ Թագաւորին, զիարդ առաւել քան զամենեսեան մերձաւոր փայլեսցին գահի նորա և արքայական առագաստացն։

Սակայն դոցա և ոչ դոյզն մի յիշատակ նա ոչ առնէ. այլ ՚ի վեր և ՚ի վայր զազատութե՛ն յերկեղած յառօրեայ վշտացս յայսոցիկ։ Համարիմ ասէ, թէ այնպէս լաւ իցէ. և տեղի առեալ ասել վասն հանդերձելոցն բարեաց, ասէ, վասն վտանգին որ ՚ի վերայ կայ։ Այս յետ այնորիկ դարձեալ իբրև ասէ, և եթէ ամենանայցէ կոյսն, ոչ մեղաւ, լուութե՛ն անցանէ զերկնաւորսն պարգեւսն՝ յորոց վերկեցոյց նա զանձն իւր, նեղուի ասէ մարմնոյ ունկիցին այնպիսիքն։ Այս ոչ ցայս վայր միայն, այլ և մինչ խոպառ զնոյն գործէ. և զանց արարեալ առ ՚ի հանդերձելոցն բարեաց բարձրացուցանել զանձն զայն, դարձեալ կրկին ՚ի նոյն պատճառսն երթայ լինի ապաստան. ժամնանակ կարձեալ է ասէ. և փոխանակ ասելոյ՝ կամիմ զձեզ փայլատակել ՚ի յերկինս, և քան զամենայնացեալսն առաւել լուսաձաձանչ երևեալ

ձեզ, դարձեալ ասեմն դեգերի և ասէ. կամիմ զձեզ անհոգս լինել։

Այլ ոչ դարձեալ աստանօր միայն զսոյն առնէ, այլ և յորժամ ձառ արկանէր յաղագս համբերուեն չարեացն, զնոյն շաւիղ խորհրդոյն ընթացաւ։ Վանդի իբրև ասաց, * եթէ քաղցեալ իցէ թշնամին քո, հաց տուր նմա. և եթէ ծարաւի, ջուր տուր նմա ‖ հռ. ժբ. 20. արդ յորժամ զբանդ զայդ զգժուարին պատուիրեաց և ընդդէմ հարկի բնութեանդ հրամայեաց բռնանալ, և ընդդէմ այնպիսի անհանդուրժելի հրոյդ ձակատ յարդարել, եկեալ ապա 'ի ձառս վարձուցն հատուցմանն՝ լուռ եկաց միանգամայն զերկնիցն և զերկնաւորացն, և միայն 'ի տուգանն անդ ջնաւսակարին սահմանել զորիւտուրն. քանզի * զայս արարեալ, ասէ, կայծակունս հրոյ կուտեացես 'ի գլուխ նորա ‖։

Այլ արդ ես՝ աղաչաւ զսոյն օրինակ միխթարութեանէ վարեն նա։ Այլ եթէ 'ի տգիտութենէ պատճառս և կամ անգէտ ինչ գոլով՝ եթէ գլուխդ ոք բաւական իցէ ամենքեալ և խելամտեցուցանել զունկնդիրն իւր. այլ քանզի քաջիկ ևս քան զամենայն մարդ 'ի վերայ հասեալ էր նա համոզական արուեստին։ Այլ ուստի այդ յայտ իցէ։ 'Ի նոցուն իսկ յասացելոցն նորա։ Օ՜խարդ և ո՜րով՞ օրինակաւ։

Այլ կորնթացիան խօսէր, (քանզի նախ 'ի վերայ կուռս եւ ձառին հատուածոյք զբանս), առ կորնթացիան՝ յորս էդ 'ի մտի ոչինչ գիտեալ, բայց միայն զյո քո, և զնոյն՝ 'ի խաչ ելեալ. ընդ որս ոչ կարէր խօսել իբրև ընդ հոգևորս, և քանզի դեռ մարմնաւորք էին՝ կանէն ջամբէր նոցա. և գրելով զայսոսիկ առ նոսա՝ 'ի դէմն հարկանէր նոցա՝ ասելով. * Այաւ ա՛րդ իսկ ոչ կարէք. քանզի դեռ մարմնաւոր էք, և ըստ մարդկան գնայք ‖։ ա. կոր. գ. 3։ Այ ման այսորիկ յերկրաւորաց աստի, յերևելեացս, 'ի զգալեացս՝ միանգամայն և 'ի կուսուէն յօժարեցուցանէ և յամուսնութէն 'ի բաց տանի. քանզի և քաջ իսկ գիտէր նա, եթէ նկուն եղեալքն և յորացայս անկեալքն և տակաւին գետնաքարշքն՝ առաւել ևս յերկրաւորաց աստի դրդին և 'ի յօժարութէն գան։

Վանդի էր աղաչաւ ապա, ասա՛ դու ցիս, բազումք 'ի վայրենագունիցն արանց և 'ի թանձրագունիցն՝ եթէ-

պէտ ՚ի փոքունս Թէպէտ ՚ի մեծամեծս աներկիւղ և երդնուն չոճ և երդմնահար լինին. իսկ ՚ի գլուխս մանկանց իւրեանց և ոչ առ անգամ մի յանձն առնուն երդնուլ. և այն զի եթէ երդմնահարութիւն այն և եթէ տանջանքն գլխովին կարի սաստիկ են քան զայս. այլ սակայն առաւել յերդմանէս յայսմանէ տեղի տուեալք հրաժարեն՝ քան եթէ յայնմանէ։

Ու այս և յոգնել աղքատաց ոչ այնպէս արքայութեն Ճառ զարթուցանէ զնոսա՝ Թէպէտ և յաձախ լսիցեն զնոյն, որպէս բարեաց ինչ ակնկալութիւն յաստի կեն ցաղս վանն մինակաց իւրեանց կամ վասն անձանց։ Աւսաի և յայնժամ առուել պատուասիրեն ՚ի խնամս օդնականութեն այսորիկ, յորժամ երբեք ՚ի բազմաժամ մինակեայ սխտեն ապաքինին, յորժամ ՚ի վտանգէն փրկին, յորժամ ոստիկանութեն խիք հանդիպին և իշխանութեն. և գլխովին իսկ այնպէս գոյ ոք, զի բազմապէսիք ՚ի մարգկանէ՝ որ ինչ առ ոտս կայցէ նոցա՝ նոքիմիք առաւելապէս յանկուցանին։ Վասն զի այդոքիկ առ հասարակ և ՚ի յաջողական ուժգինս բորբոքեն, և ՚ի ձախողն մեծապէս երկեցուցանեն. իբրև զի մերձ առ իւրեանս ունին զձաշակ գոյա։

Հաղագս որոյ և առ կորնթացիս զայս օրինակ խօսեցաւ նա. և զհուսմնայեցիսն յերևելեաց աստի ՚ի համերութեն չարեացն հրահանգեաց։ Վասն զի տակաւ և հարստահարեալ հոգի ոչ այնպէս հեշտեաւ ՚ի բաց դնէ զթոյն բարկութեն՝ յորժամ յաղագս արքայութեն լսէ բանս և ՚ի տարաձիգ յոյսն անկանի, որպէս յորժամ ՚ի ճշմասկարէն իւրմէ ակն ունի առնուլ զվճիռ։

Ուրդ կամեցեալ նորա զյիշաչարութեան զարմանն խլել, և առ տեղեաւն զբարկութեն ՚ի բաց պարուրել, որ ինչ միանգամ առաւել ազդու էր ՚ի սփոփանս անխրաւելոյն՝ զայն առաջի դնէ. ոչ եթէ ՚ի մշտնջենական պատրաստելոց հանդերձելոց յաւիտենին զնկելով ինչ գնա, այլ զի առ ժամն խնդրելը եթէ այսպէս և եթէ այնպէս ՚ի Ճանապարհն խնամատարութեն առնուլ մեծանալ գնա, և բանալ զդուռն հաշտութեան։ Վասն զի հանդիսի նահատակութեան սկիզբն առնել կարի դժուարին է. իսկ յետ մտից՝ այնուհետև քիրտն չէ այնպիսի։

Ա.յլ ո՛չ և տէրն մեր յիս քի առնէ զայդ. ո՛չ ՚ի Ճառս անդ կուսութեն, և ո՛չ ՚ի համբերութե՛ն չարեացն. այլ անպանօր զարքայութին երկնից դնէ առաջի. քանզի * են նեղքինիք, ասէ, որ զանձինս իւրեանց արարին նեղքինիս վասն արքայութե՛ն երկնից ‖. Մտթ. ԺԹ. 12։ Իսկ յորժամ վասն թշնամեացն յորդորէ աղօթս առնել, ո՛չ վասն տուգանաց ինչ ընտանեկարին խօսի, և ո՛չ զկայծականց հրոյ յիշատակ ինչ առնէ. այլ զայն ամենայն թողեալ ասէ առ փոքրոդիս ոմանս և առ հիպատեալս, ինքն ՚ի մեծամեծաց անտի կազմէ զյորդորակն։ Յորոց արդեօք. * Ո՛վ եղիջիք, ասէ, նման հօր ձերոյ, որ յերկինս է ‖. Մտթ. Ե. 45։ Տե՛ս քանիո՛ն իցէ յաղթանակն. քանզի պետրոս էր որ լսէր զայսոսիկ, և յակովբոս և յովհաննէս և այլ առաքելոցն պարո, վասն այնորիկ և ՚ի հոգևոր մրցանակացն ամենէ զնոսա։ Նայց արդ և պաւղոս ինքնին զնոյն գործէր արդեօք, եթէ ընդ այնպիսեաց ոմանց էր բան նորա։ Ա.յլ քանզի առ կորնթացիսն էր՝ որ առաւել անկատարութե՛ն ըզդաժեալք էին, ՚ի մօտոյ զպատուղ վաստակոցն տայ նոցա. որպէս զի յօժարագոյնս ևս եկեսցեն յարդիւնս առաքինութեան։

Յաղագս այսորիկ և ես ՚ի քաց եդեալ զարքայութե՛ն երկնից զնոսատուսն՝ զերկրաւորս զայսոսիկ հրէից պարգևեր բարիս. իսկ փոխարէն չարեաց գործոց նոցա ո՛չ զերհեան սպառնայր նոցա, այլ զաղէտս ինչ յաւիտենից այսորիկ, սրածութե՛ս, և սովս, և ախտս, և պատերազմունս, և գերութի՛ւն, և որ ինչ այլ յայսպիսեաց աստի. քանզի որ առաւել մարմնաւորքն են ՚ի մարդկանէ՝ յայցանէ զիւրաւ ևս ստանձակոծին և ՚ի տոչանէ առաւել զարհուրին. իսկ որ ինչ միանգամ աներևոյթքն իցեն և ո՛չ առ ձեռն՝ զնոցանէ փոյթ սակաւ տանին նոքա։ Ո՛ւստի այսորիկ և պաւղոս ՚ի տոսին առաւելապէս զերձանձրամտութե՛ն նոցա։

Ա.ռ այսոսիկ զարձեալ և զայն ինչ կամիմ ՚ի զէմս բերել, եթէ յառաքինութե՛ց կէսք բազմադէմ վաստակօք աստէն պաշարեն զմեզ. իսկ բովանդակ զպատուղն ՚ի հանդերձեալ ժամանակին ամբարեն մեզ։ Ա.յլ կուսութի՛ն ՚ի նոյն իսկ յարդիւնան իւր՝ ո՛չ զուզնաքեայս

ինչ մեզ հատուցանէ փոխարէնս, յայնչափ քրտանց և ի հոգոց ազատեալով զմեզ։

Հանդերձ այսոքիւք և զերծորդ ինն ի ներքս արկաք ներ։ Օ՜ն։ Օ՜ի մի Թերևս յանհնարինն ինն համարեսցի գործն, մանաւանդ եթէ և ի կարի հնարաւորացն։ Այլ յաջողի ի նոյն, յորժամ բազում առաւելութիւն յանդիման ցուցանէ՝ եթէ ասասիկ և ի գժուաբուելիդ որ յամուանութենէ անդ է. իբրու այն թէ ասէր առ ոմանս. վշտալից Թերևս երևեսցի քեզ լինել գործդ այդ և վաստակաբեկ. և արդ նորին աղագաւ և ես ասեմ քեզ՝ եթէ պարտ է զհետ ընթանալ բանիդ այդորիկ, իբրև զի այդպէս հեշտին է՝ զի և յոյժ պակաս քան զամուանութենիդ տաղտապանս մեզ ի վերայ ածէ։ Վասնզի որովհետև խնայեցի ասէ ի ձեզ, և ոչ կամիմ նեղութիւն ունել ձեզ, վասն այսորիկ ոչ կամիմ ամուանանալ ձեզ։

Այս զի՞ նեղութիւն, ասասցէ ոք Թերևս. նա աւանիկ գտանեմք մեք՝ զի և բերկրութիւն բազում և գրգանս ունի ամուանութենիդ։ Այս առաջին քան զամենայն, ա մենայն աներկևանութիւնք լսումն ցանկութենէն, և բռնութիւն և ոչ մի կրել զընութենիդ։ այս ոչ փոքր ինչ նպաստ տամուցոյց է առ դիւրութիւնն։ Իսկ ապա հանդերձ այսու և բամանդակ քաղաքավարութիւն կենացն ազատ է ի տխրութենէ և յանշքութենէ, և զուարթութիւնք լցեալ է և ծաղու և խնդութեամբ։ Վասնզի և բաղմախորհրդական սեղանով և փափուկ հանդերձիւք և փափկագոյն ևս անկողնով և հանապազօրեայ բաղանեօք և իւղովք, և գինեաւ՝ որ գլխովին ոչնչ պակաս իցէ քան զիւղն, և այլովք բազմօք և պէսպէս ծախու պաշտելով զմարմինն, գրգանս բազում յայսմանէ յարդարեն նմա։

Ե. Այլ նա աւանիկ և ոչ այդոցիկ Թոյլ ինչ է. իսկ ամուանութենիդ՝ միայն զԹոյլսուութենէն մերձաւորութենէն գիտեն ընդհարել մեզ, այլ ոչ եթէ և զգրգանսն. և վկայէ երանելին պաւղոս ասելով այսպէս. * Իսկ գիրգ այրին կենդանւոյն մեռեալ է ։ ա. տիմ. ե. 6։ Այս եթէ վասն այրեացն ասէ զայս, լուր զինչ և յաղագս ամուանացեալոցն ասէ. * Այլ նիւթս և կանայք ի զարգ խնամարհութենէ՝ ակնածութիւնք և զգաստութիւնք զարգարել զան-

ձինա. մի՛ ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ ի հանդերձս պաճուճեալս. այլ որպէս վայել է կանանց՝ զծածկաշտութիւն յանձն առեալց գործովք բարութիե ‖. առ. Ե. 9։

Եւ ոչ աստանօր միայն, այլ և այլուր տեսանեմք զինա բազում բանս ձառ արկեալ, եթէ այսպիսեաց ինչ առնելոյ է մեզ հնարն չէ պարտ մեզ խնամով՛ի խնդիր լինել։ Եւ զինչ առեմ զպատուիրս, որ՛ի ժամանակի անդ ծայրաւելիր խմաստասիրութիե, և յորժամ բազում էին ընծորդք հոգւոյն, առեր զայսոսիկ։ Վասնզի յորժամ և առ տղայ հրէայն խօսեր ամենից, առ որովք թոյլ տուեալ էին գրգռանքն և պաճուճանքն, և զի այսպէս ասացից՝ ամենայն աւելորդք, լուր զիարդ աստիկապէս ընդհարկանի՛ի նոսա՝ որ միանգամ գրգռանաց զկնի կրթեալ էին. * Վայ որ գայքդ յօր չարեաց, որ մերձենայքդ հասանել՛ի շքեղս ստուերից։ Վո՛ ննջէքդ՛ի գահոյս փղոսկրեայս, և փափկանայք յանկողինս ձեր. և ուտէք ուրս՛ի հօտից, և որթս գիեցիկս յանդուց։ Վո՛ կայեք հարկանէիք ընդդէմ սրնգաց. զորս իբրև հաստատուն համարեցայք, և ո՛չ անցաւորս. և ըմպէք պարզեալ գինի, և անոյշ իւղով օծանիք ‖. ամովս. Ջ. 3։

ծա. Վ՚պա ուրեմն որպէս կանխեցի ասացի, և ո՛չ գրգիլդ այդ օրէն լինէ։ Եւ թէպէտ և ոչինչ արգելեալ էր յայսպիսեաց աստի, այլ գլխովին ամենայնին թոյլ էր, սակայն ևն ևն և այլ զուգակշիռք նոցուն՝ տրտմութիե պատճառք և յաւոց, մանաւանդ եթէ և այնչափ բազմութիւք քան զայնոսիկ և առաւելեալք, մինչ զի և ո՛չ խուն ևս զնոցայն ներելն մեզ առնուլ զձակ. այլ միանգամայն ամենայն հեշտուն տեղի տուեալ մեկնի՛ի նոցանէ։

ծբ. Վ՚ր արդ այլ դու ասա ինձ, եթէ ոք երբէք նախանձուտ բնութիե վիճակեալ լիցի, կամ եթէ՛ի վերնապակ պատճառէ իմեւնէ ախտիւդ այդուիկ ըմբռնեալ լիցի, զինչ և աս քան զայնպիսի հոդին Քրիստոսդ՝ կայցէ երբէք։ Վթէ արդեօք՛ի մարտ ինչ պատերազմի և՛ի ծուխս մրրկի առակեացուք զայնպիսի տունն, Ջիպրոսիս բաւական լցեմք առնուլ՛ի մեզ զլատակեր և

բայդ . ամենայնին առ հասարակ լի և տրտմութիք , ամենայնին լի կասկածանօք և կռուով և խռովութիք :

Վասնզի որ միանգամ մոլեգնութիս այսուիկ հարեալ իցէ , նա ոչինչ ընդհատ է յախտէ այսահարացն և կաս տաղեացն : Ինպէս յաձախ ի դուրս վազէ և ի վեր ոստնու և ընդ ամենեսին դժուարի , և առ յանդիման նակացան վայրապար և տարապարտուց հեղու զբարկութին , թէպէտ և ծառայ իցէ , թէպէտ և որդի , թէպէտ և որ ոք միանգամ և իցէ : Ամենայն հեշտութիք միանգամայն տեղի տուեալ է . լի է ամենայնին տխրութիք և սգով և անհամութիք : Եթէպէտ և ի տան անդ կացցէ , թէպէտ և ի հրապարակ ելցէ , թէպէտ և ընդ նապարհորդ լինի , ամենայն ուրեք հարկանի յախտէն յայնմանէ , որ քան զամենայն խթան առաւել ևս դըժրնդակ խայթէ և տանջէ զհոգի նորա , և ոչ ներէ նմա երբեք հանդարտել . քանզի ոչ զտրտմութիս միայն բնաւորեցաւ ծնանել ախտս այս , այլ և կատաղութիս ի մեծ անհանդուրժելի :

Եւ այն զի մեզ ի դոյանէ առանձինն բաւական է կորուսանել զըմբռնեալն իւր . ապա երթ և միահամուռ միանգամայն տացեն զպատերազմին , և անդուլ հարեալ վատթարեացեն զնա , և ոչ վայրիկ մի ժամանակ թողցեն նմա ոգի առնուլ , քան զի՞ մինչ այն դժրնդակ տակաղն ոչ էիցէ : Վասնզի թէպէտ և վերջին իմն աղբատութիս ասիցես դու ինձ , թէպէտ և ախտ անբուժելի , թէպէտ և երկաթ , ոչինչ հաւասար ասիցես երբեք . միայն որ զիմոքն առին զայնորիկ՝ դիտեն զայդ տիրապէս . քանզի և չիք իսկ բան , որ զախտիդ զայդ բիկ զառաւելութին երբեք ի դէմս բերցէ :

Օ՛ երթ հարկաւորի նա ցանգ ի կասկածանս ունել զնա՝ զոր առաւել սիրէ քան զամենեսեան , և չգոյր վերայ կամակար յօժարութիք դնել և զանձն իւր , զի՞նչ ինչ ապա այլ այնուհետև երբէք կարող իցէ միխիթարել զնա : Վասնզի թէպէտ և ի մտիէ երթալ պարտ իցէ նմա , թէպէտ և հայց առնուլ և բմպելի , մնահաւիթ թոռնով առաւել համարեացի կազմեալ զանգանն զայն՝ քան երթ կերակրովք . իսկ ի մտիէ անդ և ոչ վայր մի ժամանակ հանգչել կարող իցէ , այլ որպէս երթ կայծակունք ամանք ի ներքոյ տարածեալ իցեն՝

այնպես ամբոխեալ յուզեսցի և թաւալեսցի. նաև ոչ կենակցութեի բարեկամանց և ոչ հոգք զբաղանաց և ոչ ահ վտանգաց և ոչ հեշտութիւն առաւելազանց և ոչ այլ ինչ երբեք կարասցէ ի ծփանաց անտի աղատել զնա. այլ քան զամենայն բերկրականս և քան զամենայն տրտմականս առաւել ևս բռնագոյն՝ այս մըրիկ հասեալ ըմբռնէ զհոգի նորա։ Այլ զայսոսիկ մինդր տեսեալ ինքնին սողոմոն՝ ասէր. * Ելից իբրև զգժոխս նա խանձ ‖. երփ. ը. 16. և դարձեալ. * Ի ե նախանձու սրտմտութե առն նորա. և ոչ խնայեսցէ յաւուր դատաստանի. ոչ փոխանակեսցէ և ոչ ընդ միոյ իրիք փրկա նաց զթշնամութե. և ոչ վշարիցի բազում կաշառօք ‖. առ. ը. 34։ Վասնզի այնչափ ե ախտիդ այդորիկ մե լեգնութիւն, զի և ոչ յետ վրէժխնդրութե ճեասակաբին՝ երբեք թողու զցաւն։ Ելա աւանիկ բազումք բազում անգամ բարձեալ ի կենաց զընացողն, զսրտմնութե և զարտմնութին ոչնչ զօրեցին ի բաց փարատել։ Այն և որք խողխողեալք զկանայս իւրեանց, ի նոյն տագ հրոյն կացին ծնացին, մանաւանդ եթե և տաստիկ ևս բռոցակիզեցան։ Արդ այրն յայս աղետս վարե զկեանս իւր, ևս և յորժամ և ոչ մի ինչ ձշմարտութիւն կայցե ի միջի։

Ասկ հեգ և թշուառական այն կինն կարի գժնդակ կագոյն կիրս կրե քան զայրն։ Վասնզի յորժամ որ միե թար ուներ լինել նմա յամենայն ի վիճակս, և յորմէ պաշտպանութե պարտ եր նմա ակն ունել, զնա ինքն գլխովին կատաղեալ և առաւել քան զամենեսեան ո խերիմ տեսանէ անձին իւրում. ուրանօր երբեք կարող իցէ դառնալ հայել այնուհետև. առ ո՞ք նա ապաստ տանեալ անկցի. ո՞ւստ ուստեք դա զառ ի չարեացն ա զատութե գտցէ, յորժամ նաւահանգիստն նմա ընդդեմ արգելեալ փակեալ կայցէ, և բիւրուք ժայռիւք լցեալ իցէ։

Յայնժամ և ծառայք և աղախնեայք առաւել քան զայրն թշնամանօք յարձակին ի նա. քանզի և արգէն իսկ կասկածաւոր և անչնորհակալու է այդ ազգդ մարդկան. իսկ յորժամ և համարձակութե առաւել ի ձեռս բերցեն, և երկպառակս ի միմեանց տեսցեն զտեարս իւրեանց, ոչ փոքր ինչ պատճառս անկակից վատթա

բուէն իւրեանց առնուն ՚ի մսրտէ անտի նոցա ։ Վասն զի մարթ իսկ է նոցա յայնժամ՝ ամենայն աներկեւս նուէթ յօդել և հնարել զոր ինչ և կամեսցին նոքա . և զկասկածանսն բանսարկուքք իւրեանց հաստատագոյն ևս յարդարել ։ Վասնզի հոգի՝ որ միանգամ զժուարին ախտիւդ այդուիկ վարակեալ իցէ , դիւրաւ հաւատայ ամենայնին . և անխտրաբար ամենեցուն բացեալ զանկնջս իւր , չառնու յանձն ընտրել զշրջպարտողսն և որք չիցեն այնպիսի . այլ և առաւել իմն ձշմարտախօսք կարծին նոքա՝ որք միանգամ զկասկածն զայն աճեցուցանեն , քան որք գուն գործեն բառնալ զայն ՚ի միջոյ ։ Այս այսպէս ապա հարկ է նմա երկնչել և դողալ ՚ի փախստականացն այնոցիկ ծառայից , և ՚ի նոցունն կանանց՝ ո՛չինչ պակաս քան ՚ի կենակիցն իւրմէ , և ըզվայելչականն անձին իւրում զաշխարհանն խոնարհել տալ նոցա , և ՚ի նոցա կարգն անցանել ։

Այս ապա երբ նա առանց արտասուաց կարող իցէ վարել կեանս . զո՞ր գիշեր , զո՞ր ախ , զո՞ր տօն , երբ առանց հեծումեծ և աշխարաց և ողոց ։ Սպառնալիք և թշնամանք և նախատինք զօրհանսպազ , որ յառնէն իւրմէ տարապարտուց խոցելոյ , որ ՚ի ծառայիցն այնոցիկ պղծոյ պահպանութիւք , պահակերութիւք , և ամենայնիւ միանգամայն ահիւ և դողութիւք լի ։ Վասնզի նոքա ո՛չ միայն մուտք և ելք հետախոյզ լինին , այլ և քանք և հայեցուածք և հառաչանք ՚ի քնին առեալ են բազում ձշդութիւք . և հարկ է նմա՝ քան զքարինս առաւել անշարժ լինել , և լռութիւք տանել ամենայնին , և ցանգ ՚ի սրսկապանի անդ իւրում կառեալ կալ մնալ ողորմելի և քան զկապեալս ոմանս ։ Այս եթէ երբեք կամք իցեն նորա խօսել և յոգւոց հանել և արտաքս ելանել՝ հարկ է զամենայնին ղհամարս և զպատճառս ասել խորհրդակորոյս դատաւորացն այնոցիկ՝ աղախնեայցն տեմ և խուժանի ծառայիցն ։

Այս արդ եթէ քեզ կամք իցեն՝ ՚ի միասին ընդ աղեխիցս ընդ այսոցիկ դիր գու ՚ի կշիռ՝ միանգամայն և զանազանհարուստ ձնխութիւնն , և զանազանխորտիկ սեղանն , և զծառայիցն ջոկս , զպերձութիւն տոհմին , զմեծութիւն իշխանութեանն , զփառս բազումս , զնախնեացն քաջափառութիւն , և զնոսա իսկ ինչ ի ամենևին զանց

մի արասցես յայնպիսեաց անտի՝ որ զկենցաղս զայս նաւ
խանձելի յօրինեսցեն. այլ Ձնդրիտ զամենայնն ՚ի մի
վայր հաւաքեալ՝ դիր ընդդէմ յաւդ այդորիկ. և յայն-
ժամ իբրև աներևակ իմն տեսցես դու զՀեշտութիւդ՝
որ ՚ի նոցանէ, և այնպէս իմն անհետացեալ՝ որպէս ե-
թէ յանդունդս ահագինս կայծ փոքրիկ անկեալ և շի-
ջանիցի։

Եւ այսքրիկ յայնժամ՝ յորժամ այրն նախանձուդ
այդուիկ զգածեալ իցէ։ Ապա եթէ այդ ախտ զկինն
վարակեսցէ, քանզի և ՚ի դուն ուրեք բնաւորեցաւ լի-
նել այդմ, յայնժամ առաւել քան զկինն՝ այրն դիւրաւ
յաջողեալ է ՚ի բանի իւրում. իսկ ցաւն դարձեալ ա-
ռաւելագոյն մասամբ գնայ անկանի ՚ի գլուխ հիւսուե-
լոյն այնորիկ կնոջ։ Վասնզի և ՚ի իսկ բաւական ինչ է
սա գնայն զինան ՚ի գործ վարել առ կասկածաւորն։
Օ ի՞ ոք հանդարտեսցի՝ եթէ կին հրամանն տացէ նմա
ցանգ առ անկն կալ ՚ինալ. իսկ ո՞ ոք դարձեալ ՚ի ծա-
ռայից անտի երբէք յանգգնեսցի խուզարկու լինել ՚ինն
իւրոյ, և ՚ի վազվզակի պատուհասեալ ՚ի վէրն վա-
րեալ ձգեսցի։ Ապա ուրեմն և ՚ի հնարս յայսոսիկ
կարող ինչ է նա մխիթարել զանձն իւր, և ՚ի դար-
ձեալ զբարկուէն արտաքս բերել քանիւքն. այլ թերևս
միանգամ և երկիցս համբերեսցէ այրն՝ եթէ կազեսցի
ընդ նմա կինն իւր. ապա եթէ պնդեսցի՝ յաձախ մե-
ղադիր լինել առն, վազվզակի ուսուսցէ նա զկինն,
եթէ լաւ ևս է լուսնթէ բերել զիրսն՝ քան եթէ հա-
շիւ և մնշիլ։

Եւ այս դարձեալ յորժամ կասկածանք իցեն իրգդ։
Ապա եթէ ձշմարտութիւն իցեն ապէրգդ, չիք ոք յայն
ժամ՝ որ ապրեցուսցէ զկինն ՚ի ձեռաց անիրաւելոյն.
այլ նոպատամնատոյց անձին իւրում ունելով և զօրինան,
զսիրելեալն իւր առաւել քան զամենեսեան՝ ածցէ ՚ի
դատաստան անդր և սպանցէ. իսկ այրն ՚ի պատուհաս
սէ անտի օրինացն ապրի, և պահեալ ինայ երկնաւորին
այնմիկ վճռոյ և ՚ածայնոյն։

Այլ սակայն չէ այս բաւական ՚ի մխիթար հիւսուե-
լոյ կնոջն, այլ հարկ է բազմաժամանակեայ ինն և ո
զղջմելի յանձին կրել մահ, որ ՚ի դիւթութենէ անտի,
որ ՚ի դեղատուէ, զոր պոռնիկ կանայքդ կազմեալ

հանդերձեսցեն. սակայն են՝ և որոց ոչինչ գաւաճառեցք ինչ պակաս եղեն առ զբկեալսն այնոսիկ, այլ նոքին իսկ կանայք կանխեցին և յառաջագոյն յաիշտակեցան ի կենացս իւրեանց առ քրնութեանն արժանանել։

Այսպա ուրեմն թէպէտ և սրք առհասարակ փութաւ ցեալք ձեռնհասցեն յամուսնութեանն, սակայն կանանց չէ պարտ ի խնդիր ելանել այնմ։ Կանգն և ոչ արդեօք ունին ինչ ասել նոքա՝ եթէ այնչափ ինչ է առ նոսա քրնաւորութեանն ցանկութեանդ. ի վերայ այսր՝ և զվշտաց բազիդ այդորիկ զառաւելագոյն մասնն նոքա կրեն, ըստ որում և յայսմանդիմանութեանն մերկացաւ մեզ բանս։

Այս զինչ ասա, ասէ. միթէ ինձ դէպքդ այդ առհասարակ յամենայն ամուսնութեանս։ Այլ սակայն և ոչ յամենայնէն անտի հեռի ինչ է. բայց յամենայն կուսութենէ տարադէմ կայ և ի բացեայ։ Իսկ արամբքին թէպէտ և յաղէտդ կայդ ոչ անկցի, սակայն ի խնթ չաւ բիդ այդորիկ անկանի. քանզի և չիք իսկ հնար այնմ՝ որում հասանէ կենտակից լինել առն, ընդ կենտակցութեդ ընդ այդմիկ ոչ և զամենայն աղէտս չարեացն ի միասին յածել ընդ միտս և խնթալ։ Իսկ կայն ոչ միայն յանձկութենէ անտի, այլ և ի կասկածանացն զլխովին ազատ է։

Սակայն չէ քանզ այդ առհասարակ յամենայն ամուսնութիս. քանզի և ոչ ես ինքնին զդոյն ասեմ երբէք. այլ թէպէտ և այդ մերձ ոչ իցէ, է է այլ ինչ բազում. և թէպէտ և խոյս տուեալ զերծցի ոք ի դոցանէ, առ հասարակ յամենայնէն զերծանելոյ չիք հնար։ Այլ զօրհնակ ի փուշս որ կռուեսցին ի հանդերձս յանցանելն ընդ ցանգս, եթէ ոք դարձցի հանել զմին, այլք բազմագոյնք ևս ըմբռնեսցեն զնա. այսպէս ի գործս անդ ամուսնութենէ, եթէ յայսմանէ զերծաւ ոք, այն ինչ դարձեալ մխասեսցէ զնա. և եթէ ի միոյն տեղի տուեալ փախեաւ, միւսն վտանգեսցէ զնա. և գըլխովին իսկ չիք գտանել ամուսնութիւն՝ որ յամենայն անձկութենէ զերծ իցէ։

ծ՟. Այլ եթէ կամիցիս, թողեալ արդ ի բաց ըզարտաքինական, զայն ինչ՝ որ յաւէտ ինն երջանիկ կարծի լինել ի գործդ յայդ, և զոր բազումք բազում ան-

գամ՝ մնասանդ եթէ և ամենեքեան ցանկան ի ձեռս քերել, ի մէջ ածեալ ի քնին առցուք այժմ։

Ասէ զինչ այն իցէ։ Յաղքատաց գոլով քո և յանարգաց և ի խոնարհաց, կէս ածել ի մեծաց և ի զօրաւորաց և ի բազմահարուստ ընչեղաց։ Այլ սակայն նախանձելիդ այդ քան, որպէս գտանեմք մեք, ոչինչ պակաս աղէտս վշտաց ընդ իւր բարձեալ բերէ քան զայն՝ որ արհամարհելին իցէ մարդկան։ Վասնզի և արդէն իսկ այս ազգ մարդկանդ մեծապէս գոռոզութ լցեալ է, և ի նոսա առաւել և աղգդ կանանց՝ ըստ չափու առաւելութե տկարութե իւրեանց. վասն այսր բիկ և առաւել իմն քնաւորեցան նոքա ըմբռնիլ ի կրից աստի։ Այսպա թէ և պատճառս իմն ունիցին բազումս գոռոզութե իւրեանց, չէք ինչ այնուհետև՝ որ սանձեա ցէ զնոսա։ Այլ իբրև զլոց հասեալ կալեալ զնիւթ ձարակին՝ այնպէս յանչափելին բարձրութի ի վեր վազեն, և զկարգն խանգարեն և վեր ի վայր գործեն։ Վասնզի յայնժամ ոչինչ թողու կինն առն իւրում կալ ուներ զտեղի գլխոյն, այլ հպարտութե և ամբարտաւանութե ձգեալ զնա յաշտիձանն յայնմանէ, և յիւր սեպհականն վարեալ զնա՝ ի հնազանդութի, ինքն կացեալ լինի գլուխ և առաջնորդ։ Այս ապա զինչ ևս վատթարագոյն քան զայդ անօրէնութի կայցէ երբէք. Թողում ասել զնախատանացն, զթշնամանացն, զժանտուէնն, որ քան զամենայն ինչ առաւել դժոխալիք են։

ծէ. Այսպա եթէ ասասցէ ոք, քանզի և ի բազմից անտի լուայ ես ինքնին՝ ոք ի լինել այսպիսեաց ինչ զրուցաց՝ ասէին. Թող միայն բազմահարուստ իցէ կինդ և ընչաւէտ, մեզ ոչինչ քիրան եղիցի սանձել և նուաճել զգոռոզութիւն նորա։ Այս արդ եթէ ոք ասասցէ զայդ, նախ այն իսկ՝ զի ոչինչ գիտաց այնպիսին երբէք, եթէ յոյժ դժուարին է բանդ. և ապա՝ եթէ թէպէտ և յաջողեսցի այդ, ոչ դուշնաքեայ ինչ տուգանք ի վերայ կան։ Վասնզի հարկաւ և աշիւ և քունութե նուաճել դորա ընդ ձեռամբ առն՝ առաւել ևս դժնդակ է, և առաւել դառն քան զկթամայելն նմա ամենայն իշխանութե։ Այս զիարդ արդեօք. իբրև զի քունութիդ այդ ի բաց քառնայ միանգամայն զամենայն բարեկա-

մութիւն և գէհենատանջութիւն։ Իսկ յորժամ բարեկամութիւն և սէր մերձ ոչ իցէ, այլ զտեղւոյն նորա փոխանակեսցեն ահ և հարկ, յինչ այնուհետեւ հատարեսցի ամենեցուն թիւնդ այդ։

ծԵ. Եւ այսոքիկ յայնժամ, յորժամ կինն ընչաւէտ իցէ։ Իսպա եթէ դեպ լինիցի կնոջն անինչ լինել, և առն՝ ընչաւէտ, այնուհետեւ փոխան ամենայնի՝ սպասաւոր եղիցի կինն, և ազատն եղիցի աղախին։ Եւ յարժանաւոր իւրն տիկնութիւնէ կողոպտեալ՝ ոչինչ ընդհատ իցէ յարծաթագին ստրկաց. այլ թէպէտ պագ չտեսցի այրն, թէպէտ և վայրենանալ կամեսցի, թէպէտ և զջուկս ընացելոց կանանց ածեալ բերցէ յանկողինն նորա, հարկ է ամենայնիւն տանել և հանդարտել, և կամ տեղի տալ՝ի տանէ անտի։ Եւ ոչ դարձեալ այս միայն է՝ի գժնդակացս. այլ քանզի զսոյն օրինակ վարի առնա այրն, վասն այսորիկ և ոչ ծառայիցն և ոչ աղախնեացն անգամ կարող լինէ իցէ նա այնուհետեւ աղաւտութիւնք հրամայել. այլ որպէս եթէ յօտարուէ կեցեալ և ոչ լիւրան վայելեալ, և ընդ ոտն ուժիք առաւել՝ քան եթէ ընդ առն կենդանւոյ եղեալ, այնպէս հարկաւորի գործել և կրել զամենայնն։

Իսկ եթէ ոք՝ կին հաւասարավիճակ կամեսցի ածել, դարձեալ և անդանօր զօրինն հնազանդութիւնք խանգաւրեսցէ հաւասարուիդ այդ. քանզի չափ գոյիցն խնդրէ պահանջէ հաւասարել նմա ընդ առն իւրում։ Օ՛րինչ ապա յետ այսորիկ գործեսցէ ոք, յորժամ առհասարակ ամենայն ուրեք այսչափ իցեն գժուարին կիրք։ Վասն զի մի՛ լինձ դու, եթէ ուրեք ամուսնութիւնք նուազունք յոյժ և սակաւաթիւք ապրեցան յայսպիսեաց ատի, զայնոսիկ՝ի դէմս ածցես. քանզի ոչ յանսովորից ինչ, այլ յորոց միշտն պատահեն, ինոցանէ արժան է կնքել զբանս։ Վասնզի՝ի կուսութեէ գժուարին է պատահել իրացդ այդոցիկ, մանաւանդ եթէ և յանհնարիցն է. իսկ յամենսնութեէս գժուարին է ոչ պատահել։

ծՀ. Իսկ արդ՝ եթէ՝ի կարծեալ քաղցունդ այսչափ դառնութիւնք և թղէտք՝ի վեր երևեցան, զինչ ոք ապա ասասցէ վնոցանէ՝ որ յայտնապէս դառինքն իցեն։

Վանդղ ոչ՝ իբրև թէ ինքն միայն մեռանել հանդիպած ձեալ իցէ, ՚ի միոյ մահուանէ միայն զարհուրեալ է նա. և ոչ դարձեալ՝ որպէս եթէ մի միայն ունելով հոգի՝ վասն միոյն այնորիկ հոգ յանձն առեալ է. այլ դողայ նա վասն առն, դողայ և վասն զաւակացն, դողայ և վասն նոցուն կողակցացն և որդւոց նոցա. և որչափ ինչ ՚ի ժամանակ բազմաստեղն բարուենակօք յօրանայ արբ մեռանն, այնչափ և հոգք դարմանոցն առաւելուն ՚ի նա: Այս առ իւրաքանչիւր ՚ի նոցանէ՝ եթէ տուգանք ընկից ՚ի վերայ հասանիցէն, եթէ խօթութիւն մարմնոյ, եթէ և այլ ինչ ՚ի դառնութեանց, հարկ է նմա հարկանիլ յոգի, և ողբս առնուլ ոչինչ ընդհատ ՚ի նոցա նէ՝ որ վնասն կրեսցեն յանձինս:

Իսկ եթէ առհասարակ ամենեքեան յառաջ վախճան նեսցին քան զինքն, անըմբռնելի է սուգն. ապա եթէ կէսք կենդանի մնասցեն, և կէսք տարաժամ մահուամբ փոխեսցին ասի, և ոչ այնպէս անխառն ինչ իցէ արդեօք միխթարութիւն նորա: Վանդղ ասէն՝ որ վասն կենդանեացն ցանգ յուզէ տագնապէ զհոգի նորա, ոչինչ պակաս է քան զցաւս վախճանելոցն. այլ եթէ և զարմանալի ինչ ասել պարտ իցէ, դժնդակ և սա է: Վանդղ զարտմանալ ննջեցելոցն նուազել ժամանակն. իսկ հոգք կենդանեացն՝ հարկ է զի կացցեն հանապազ, կամ թէ մահուամբ միայն դադարեսցեն:

Այս արդ՝ եթէ և ոչ անձանց մերոց չարչարանացն բաւական ինչ եմք, զի՞նչ այն կեանք իցեն ապա կեանքս մեր, յորժամ հարկ իցէ և զայլոցն ողբալ աղետս: Բազում դառնութիւք բազում անգամ ծնունդք քաջազգի ծնողաց և ՚ի բազում գրգռանս գգուեալք, ածան ՚ի կին մեծազօր արանց. և ապա չանկարծակի մինչեւ երջանկացեալք ՚ի նոսին, վիշտ ինն վասնզի իբրև այս և իբրև մրրիկ փոթորկեալ զնոսա, ընկղմեցան և նուքա, և կրից նաւաբեկութեանն բաժանորդք եղեն. և ողբ արտաքոյ ամնանութեանն ՚ի բիւր բարիս վայելելին, յետ ամնանութեն անկան ՚ի վերջին ագետս:

Այլ սակայն այդոքիկ՝ ասէ, ոչ ամենեցուն և ոչ միշտ բնաւորեցան պատահել: — Այոյ և ոչ չամենեցունց անտի հեռի կայ. քանզի և ես միւսանգամ չաւելից ՚ի նոյն չառակի իմում. այլ են՝ որք և ընդ փորձն անցին

բանիդ այդորիկ. և են գարձեալ՝ որք թէպէտ և՝ ի փորձոյ անտի ապրեցան, սակայն՝ ի խէթ երկիւղին տանջեցան նոքա. իսկ կոյսն միանգամայն և՛ քան զամենայն փորձ և՛ քան զամենայն երկիւղ վեհագոյն անցեալ բազմի։

ԾԷ. Բայց սակայն՝ եթէ այնպէս լաւ իցէ, թո՛ղեալ զայնոսիկ, զինեցարուք մեք՝ որ ինչ միանգամ անգամին՝ ի բնութենէ վիճակեցան ամուսնութե՛, և յորոց միանգամ ո՛չ որ՝ ո՛չ կամիլ և ո՛չ ակամիլ տեղի տալ և փախչել երբեք բաւական իցէ։ Իսկ զինչ այդոքիկ ի ցեղն։ Երկունք և ծնունդ և տղայք։ Այո՛ անաւանդ եթէ անդուստ՝ ի վերուստ սուցուք մեք զբանդ. և որ ինչ միանգամ յառաջընթաց է ամուսնութեանդ՝ ի վերայ հասեալ ծանիցուք ըստ կարի. քանզի Աշխարհ միայն նոքա գիտեն՝ որք զփորձն առնուն զերացդ։

Հասեալ է ժամանակ հարմարաւոտութեանն, և ահա անդէն տագնապք հոգոց անդադրեալք և բազմադիմք. զո՞ր այր արդեօք հանդերձեալ իցէ առնուլ ինքն. արդեօք զվատատահինին, արդեօք զվատահամբաւ ոք, արդեօք զխստասարանոցն, արդեօք զնենգատուրն, արդեօք զըմբխրխան, արդեօք զյանդուգնն, թերևս զնախանձոտն, թերևս զխղճահար ոք, արդեօք զխօթամիտն, արդեօք զվատաբարն, արդեօք զխիստն, արդեօք զանարին։ Վասնզի այսոցիկ ամենայնի չէ հարկ՝ եթէ պատահեսցեն ամենայն խօսեցեալքդ, սակայն հարկ է խիթաղ և տագնապել յամենայնէն. քանզի չէ ևս է յայտ՝ եթէ որմա՞ արդեօք վիճակեսցին նա. այլ տակաւին ընդ երկինս՝ ի վեր կախեալ կայ յոյս նորա, և անձն նորա բովանդակ յերկիւղի կայ և զգուշանի հարկանի. և չէք ինչ յայսցանէ՝ զոր նա ո՛չ յածեսցէ ընդ միտս իւր։

Այլ եթէ ասասցէ ոք, եթէ և հակառակքն ապաքէն կարող են բերկրեցուցանել զնա՝ որ յոտսով սպասեալ ինայ։ Օ՜այն քաջ իսկ գիտասցէ այնպիսին, եթէ ո՛չինչ այնպէս յոյս բարեացն գիտի, սիրելի զմեզ, որպէս ակնկալութի չարեացն տագնապ։ Վասնզի բազում ժամ անխաթ ունին զյոյսն և բերանց, յայնժամ միայն ծնող են հեշտութեան. իսկ չարիքն՝ թէպէտ և միայն ի խէթս կասկածութեան անկանիցին, վաղվաղ

կի ամբոխեն և խռովէն զՀոգին : Վասնզի զորօրինակ սորուկք ուչինչ ձգիբիտ գիտելով զտեարցն՝ որոց ի ձեռս ունին անկանել, յանդ ի ծուփս կան ի հոգիս իւրեանց. այսպէս և կուսանք. զանենայն ժամանակն յորմէ հետէ եղև հարմնախօսուԹիդ այդ՝ սիրտ նորա հանգոյն է ալեկոծ նաւու. յորժամ օրըստօրէ ծնողք նորա՝ էն զորս լաւ համարին և ունին, և են զորս ի բաց մերժեն. քանզի որ երեկ յաղթօղն էր ի տարփացողս, այսօր այլ ոք ի փառաւորագունիցն յաղԹէ նմա. և զսա դարձեալ այլ միւս ոմն հանէ ի բաց : Այ՛ կ դարձեալ՝ զի և առ դուրս անդր հասեալ ամուսնուԹեն՝ աչկակալեալ փեսայն դատարկաձեռն ելանէ ի տեղւոյն. և որ սկն երբէք ուչ ունէր՝ նմա զօրիորդն ի ձեռս տան ծնողքն :

Այս ուչ կանայք միայն, այլ և արք գլխովին ի գժդնակ հոգս տագնապին : Վասնզի զարս հետախուզել դիւրին է. իսկ զաղջիկն՝ որ ի ներքս անդ հանապազ արգելեալ փակեալ կայ՝ զիարդ աք խուզեսցէ ըստ բարուցն կամ ըստ կերպարանացն : Այս այսոքիկ ապա ի ժամանակի անդ հարմնախօսուԹեանն :

Իսկ յորժամ ամուսնուԹին առ դուրս հասեալ լիցէ, առաւել ևս աճէ տագնապն՝ և քան զՀետուԹին առաւել է երկիւղն, եԹէ գուցէ անդստին յերեկոյէ անտի իբրև անհամբոյր ինն երևեսցի և քան զանկալուԹին կարի խոնարհագոյն : Այս այնպէս ապա՝ որ ի սկզբան անդ բարեհաձոյն էր, յետ այնորիկ պարտ է նմա տալ արհամարհուԹին : Իսկ եԹէ անդստին (որպէս արգեօք ումեք կամք լիցեն ասել) ի գծէ անտի արշաւանայն (*) երևեսցի նա տաղտկալի, ԹՐք նա այնուհետև կարող լիցի լինել տարփալի : Այս գուա մի՛ ինձ զայն ինչ ի դէմս բերեր, եԹէ՝ զինչ ապա, եԹէ Թերևս նա չքնաղ հանդիպեսցի լինել : Վասնզի և ուչ այնպէս դարձեալ ի հոգւոյ ասսի ազատ է. նա աւանիկ բազում հարսունք առաւելահրաշք ի գեղն մնային՝ ուչինչ զօրեցին ըմբռնել զարս իւրեանց. այլ Թողեալք զնոսա

(*) ի գծէ արշաւանայն. ոՀ է բանից ձիընԹացիկ եղելոցն, որք ո. րոչէին զդիծ՝ յորմէ լինէր սկիզբն գիմամրցանակ խաղոցն. ուստի և առեալ լինի փոխանակ սկզբան :

արանցն, գնացեալք յարեցան յայնոսիկ՝ որ կարի խոնարհագոյնք էին քան զնոսա։

Իսկ իբրև և այս տագնապք հոգոց տեղի տան, այլ ինն դարձեալ դառնութիւն զկնի յաջորդէ՝ ի վճարս անգ ժոխին. քանզի աներն ոչ յօժարամիտս ինչ տայ, իբրուայն՝ որ ձրիաբաշխ իցէ. իսկ փեսայն՝ զամենայնն բռվանդակ գումն գործելով՝ ի ձեռս բերել, բռնադատի ակնածութիւնք ինն առնել զպահանջումնն. իսկ հարսնն ընդ յապաղումն վճարոյն զամթի հարկանի և շառաչ գումն յառնէն առաւել քան յամենայն վայրենատիպ պարտապանաց։ Այլ այժմիկ Թողում ես ասել զայս պիսեաց ասի։

Այլ արդ՝ ի տեղի տալ և հոգոցս այսոցիկ, անդէն վաղվաղակի և ամուսնութեանն երկիւղ՝ ի վերայ հասեալ ըմբռնէ զնա։ Ու այս դարձեալ և բազմանձնութեանն վարանք. և քանզի և ոչ միոյ յայսցանէ տակաւին յայտնի կայ, նա ընդ երկաքանչիւրն և՝ ի սկզբանէ ամբոխի՝ ի վարանս հոգոց։ Իսկ եթէ անդէն վաղվաղակի սաղմնառեալ գտանիցի, դարձեալ խնդուն խառն ընդ երկիւղն. քանզի չէք ինչ՝ ի բարեաց ամուսնութենէն՝ որ յերկիւղէ անբաժ իցէ. իսկ երկիւղ ասեմ, մի գուցէ վիժումն պատահեալ ապականեսցի սաղմն, և սաղմնառուն՝ ի վերջինսն վտանգեսցի։ Այս եթէ բազում ժամանակ՝ ի վերայ անցցէ, յայնժամ խորչի և թաքչի կինն, որպէս այն եթէ ինքն իցէ իշխան ծննդեանն։

Իսկ յորժամ ծննդեանն ժամանակ՝ ի վերայ հասեալ կայ, յայնժամ երկունք բռնութիւք քակեն փեռևկեն զարգանդն՝ որ արգէն իսկ երկայն ժամանակաւ տառապէր՝ ի վիշս. և այդ երկունքդ միայն բաւական են ստուերածս՝ ի վերայ բերել միանգամայն ամենայն հեշտալեացն ամուսնութեանն։ Այս և այլ վարանաց կիրք յետայնորիկ տագնապեն զնա. քանզի հիգ և վշտատես աղջկունն, թէպէտ և այսպէս կարի լեալ իցէ՝ ի չարչարանացն, երկնչի դարձեալ ոչինչ պակաս քան զայդոսիկ, եթէ մի արգեօք փոխանակ անվթար և քաջառողջ մին տղայոյ՝ ելցէ արտաքս խանդարեալն և խեղն. մի թերևս փոխանակ արուի՝ եգն. քանզի ոչինչ նուազ քան զերկուսեան և այս վարանք տագնապեն յայնժամ զկանայս. որք և ոչ միայն՝ ի պարտաւորութենէ ինչ յան-

ցանաց իւրեանց, այլ և յորս միանգամ անպարտականքն իցեն՝ նովին հաւատարումբ երկնչին նոքա յարանց իւրեանց. և ի միջ այնչափ մըրկին Յողեալ զանձանցն իւրեանց փրկումբ խնամն, քան ինչ վարանին տագնապին՝ զի ոչ արդեօք դժպիհն ինչ պատահեսցէ արանց իւրեանց։

Ւսկ յորժամ ի լոյս աշխարհիս այսորիկ ընծայի տըղայն և զաւաջնին զձայնն արձակէ, դարձեալ միւսանգամ այլ տագնապք հոգոց ղհետ յաջորդեն՝ վասն փըրկումբ նորա և վասն դաստիարակումբեն։ Ւրթէ բաբեմին վիճակեալ իցէ քնումբ և յաւաքինումբին դիպաւոր, դարձեալ յերկիւղն կան ծնողքն, եթէ գուցէ կրեսցէ ինչ կիրս ի դժնդակացն, գուցէ տարաժամ մահուամբ վախճանեսցի. թերեւս յախտ ինչ էարումբեն խոտորեսցի. քանզի ոչ միայն ի վատթարաց պիտանացուք լինին միայն, այլ և յառաքինեաց՝ ախտաւորք և չարք։ Որ զի՝ եթէ ինչ ի յատեղեացս յայսցանէ պատահեսցէ երբէք, սուգ որմանումբեն առաւել անհանդուրժելի է՝ քան եթէ անդ ի սկզբանն պատահել էր այդոցիկ։ Ւ.պա եթէ ամենայն քաջալաւումբիւնք հաստատումբ կացցեն մեսցեն ի տղայն, սակայն երկիւղ փոփոխումբեն ցանգ ի վերայ կայ ծնողացն, որ զնոցա հոգիսն տագնապէ և բազում մասամբ զհետումբեն կարձէ ի նոցանէ։ Ւ.յլ սակայն ոչ ամենայն ամանացոյ հասանէ ունել մանկունս։ Ւ.պա ուրեմն այլ իմն դարձեալ լինէ ի յուշ բերես դու տրտմումբեան պատճառս։

Ւյս արդ՝ եթէ միանգամայն եթէ՛ գուցեն զաւակք, և եթէ՛ ոչ, եթէ՛ պիտանացուք լինիցին և եթէ՛ վատթարք, այդչափ բազմադիմ ցաւովք և հոգովք լմբըռնեալ տանջին ծնողք, ուստի՞ ապա քաղցր երբէք կոչեսցուք մեք զկեանս ամենեսեան։ Ւ.ս այս՝ թէպէտ և ամենայնիք միախորհ կրթնիւք անցուսացն զկեանս, դարձեալ երկիւղ՝ մի թերեւս մնայն ի վերայ անկեալ հատցէ զհետումբեն. մանաւանդ եթէ ոչ երկիւղ միայն է այս, և ոչ միայն խելամտի է չարդ այդ, այլ և գլխովին հարկ է արդիւնանալ բանիդ այդոցիկ. քանզի և ոչ ոք կարաց երբէք ցուցանել՝ եթէ երկոքին նոքա միանգամ մնայն ի միում աւուր վախճանեսցին ի կենաց իւրեանց։

Իսկ եթէ այս ոչ պատահեսցէ, ապա այնուհետեւ հարկ է կեանս իմն վարել և քան զմահ առաւել և ժխդակ, եթէ երկայն և եթէ սուղ ժամանակաւ ընդ նմա կենակից լեալ իցէ։ Վասնզի առաջինն՝ որչափ ինչ միանգամ առաւել վայելեաց ի փորձ անդր, այնչափ և առաւել կրէ զցաւն. քանզի և բազմաժամանակեայ կենակցութիւնն անտանելի գործէ զանջատումնն զայն. իսկ վերջինդ՝ մինչեւ ձաշակեալ և յագեալ ի սիրոյն, յորժամ տակաւին եռանդուն է ցանկութիւնն, զրկեալ ի կենակիցէն, սաստիկ և ողբայ զնա. և ի ներհակն պատճառացդ ի հասասար վիշտս աղէտից ըմբռնին երկոքեին դոքա։ Իսկ զինչ պարտ իցէ ասել՝ որ յաւուրս կենաց նոցա պատահեն՝ զանջատմանցն, զերկարաժամանակեայ պանդխտութեցն, զանձկութեցն՝ որ լծորդք են ընդ այդոսիկ, զախտիցն հիւանդութեց։

Այս այդմ, ասէ, զինչ բան իցէ զլսովին ընդ ամուսնութեն։ — Այս կարի իսկ քաջ. և ի պատճառէ անտի նորա բազում կանայք բազում անգամ խօթացան։ Այս քանզի հարստահարեալք և դրգռեալք՝ է զի ի սրտմտութեն, և է զի ի տրտմութեն, բազում տեղիւք տապատացան։ Այս թէպէտ և ի մերձ լինել առն ոչինչ կրեսցեն յայսպիսեաց աստի, այլ ի դիւրութեան վայելեսցեն միշտ, սակայն ի տարաշխարհիկ պանդխտութենն դարձեալ նեղլին յաղէտից աստի։

Այլոց արդ զայդ ամենայն ի բաց անդր թողեալ և ոչինչ բամբասեսցուք մեք զամուսնութենէ. այլ սակայն և ոչ ի յանցանաց անտի նոյնպէս կարասցուք ինչ սրբել զնա։ Իսկ ո՞ր այն իցէ։ Երբև զի զբաջառաղջն առեալ լինքն՝ ոչինչ ընդհատ յարդարէ ի խօթացելոյն. այլ յաղէտս իմն ածեալ ձգէ զնա իբրու զայն՝ որ ի մահիճս անկեալ իցէ։

ԾԸ. Վասին և զայդոսիկ զլսովին թողցուք մեք, և զանհնարինն հնորհեալ բանիս՝ հաւանեսցուք եթէ առմուսնութենէդ կալցէ միանգամայն զամենայն զբարիսդ. երամն մանկանց, զաւակս բարեբաստութենէ, ընչաւետութենէ, կինն զդաստ՝ զեղեցիկ՝ զդօն՝ համամիտ, ծերութեն բազմաժամանակեայ. ի վերայ յաւելումն էս և զքաջառողջութենէ ազգին, և զմեծութենէ իշխանութենէն. և զի

մի դարձեալ հասարակաց այս աղէտք քննութես ամբո-
խեսցէ ինչ զնոսա՝ երկիւղ փոփոխութեէ իրացդ այդո-
ցիկ , այլ միանգամայն ամենայն առիթք տրտմութեան
տարագիր կացցեն և ամենայն պատճառք հոգւոց և վա-
րանաց . և ոչ դարձեալ այլ ինչ պատճառ և կամ տա-
րաժամ մահ քակեսցէ զմտաննութենն , այլ և ամենե-
քեան առհասարակ յաւուր միւմ առցեն զվախճան .
և կամ թէ՝ որ առաւել ևս երանաւէտ կարծի քան
զայդ , կացցեն մանկունքդ ժառանգք նոցա , և զերկո-
սին զծնողսն ՚ի միասին նոքա նախ յուշարկեսցեն ՚ի խո-
րին ծերութեան :

Այլ ապա զինչ իցէ վախճանն . զո՞ր չահ օգտի ՚ի բա-
զում հեշտութէ անտի կթեալք յանձինս՝ մեկնեալք
աստի գնասցեն անդր : Վասնզի մանկունս բազումն
Թողուլ զկնի իւրեանց , և վայելել ՚ի կին գեղեցիկ
հանդերձ գրգանօքդ և պլովք ամենեքումիք , զոր այն
ինչ ես քեզ ՚ի համար բերի , դարձեալ և յերկայն ծե-
րութէ հասանել ժամանել , այս ամենայն զինչ կարող
իցէ երբեք օգնել մեզ յատենին յայնմիկ , ՚ի յաւիտեան
կանուն յայնոսիկ և ՚ի ձգմարիտսն . ոչինչ արդեօք :

Վապա ուրեմն ստուերք են այդոքիկ և երազ , իբրև
զի և ոչինչ բաւական իցեմք ՚ի սոցանէ օգտիլ ինչ , և
կամ վասն սոցին ՚ի սփոփանս ինչ վայելել յանեզրական
յաւիտեանսն յայնոսիկ , որ յայնժամ ապա ընկալցին
զմեզ , և է յայնժամ տեսանել զայն՝ որ վայելեացն յայ-
սոսիկ , իբրև հասարակորդ ընդ նոսա՝ որ անմահն եղեն
՚ի սոցանէ :

Վանզի ապաքէն և ոչ որ յամն հազարս զմի գիշեր
միայն երազ ետես բարի , զնա մեք աւելի ինչ ասիցեմք
ունել քան զնա՝ որ ոչն վայելեաց յանուրջքն յայնոսիկ :
Այա մանաւանդ և ոչ որչափ ինչ կամիլ խոսեցայ ես .
քանզի և ոչ որչափ անուրջք օտար են ՚ի ձգմարտուէ ,
այնչափ և աստիքս որոշին ՚ի հանդերձելոցն , այլ ևս
առաւել : Այս ոչ դարձեալ որչափ ինչ մի գիշեր է առ
հազար ամն , այնչափ է յաւիտեանս այս՝ առ հանդեր-
ձեալն . այլ և աստանօր դարձեալ կարի առաւել է
խոհրն :

Այլ կուսութէ չէ ինչ այդպիսի . այլ հանդերձ բա-
զում շահսվաճառութէ գնացեալ մեկնի ՚ի կենաց աս-

տի : Սակայն անդուստ ՚ի վերուստ առեալ քննեսցուք մեք զբանն :

ՃԽ. Եկ նմա հարկ չիդիւ հետազօտել զփեսային . և ոչ դարձեալ երկնչի՝ եթէ ՚ի խաբեանս ինչ անկանիցի : Վասնզի շատ է և ոչ է մարդ . ասէր՝ և ոչ ծառայակից . այսչափ է խոհր փեսայիդդ : Արդ հայեաց դու , եթէ և ի՛ իւիք հարսնանան նոքա : Վասնզի ոչ ստրուկք , և ոչ չափք անդաստանաց , և ոչ այսչափ ինչ և այնչափ քանքարք ոսկւոյ , այլ երկինք և երկնաւոր բարիքն են վարձանք հարսինս այսոիկ : Զո այսոսիկ դարձեալ ա մուսինն դողայ ՚ի մնհուանէ՝ ոչ միայն ՚ի պատճառս այլ ինչ իրաց , այլ զի և ՚ի կենակցին իւրմէ անջատէ զնա : Լսակ կոյսն և մեռանել ցանկայ և ՚ի կենաց աստի ծանրանայ , քանզի Ձեզի փութայ երես առ երես տեսանել զփեսայն , և ՚ի փառս նորա վայելել :

Կ. Զոր ոչ դարձեալ որպէս յամուսնութէ անդ՝ աղքատին կեանք կարող ինչ են նենգել զնա . այլ մանաւանդ առաւել և ցանկալի առնէ զնա փեսային իւրում , եթէ մտադիւրագոյնս տարցի այդմ . և ոչ՝ եթէ յանարգաց ծնեալ իցէ , և ոչ՝ եթէ գեղով մնրմնոյն պայծառ ոչ իցէ , և ոչ այլ ինչ յայսպիսեաց աստի : Զայլ զինչ է ինձ խօսել զգոցանէ . քանզի Թէպէտ և ազատ ոչ իցէ , նաև այդ ոչինչ ինաւսակար երբեք գտանիցի հարսնախօսութեանն . այլ շատ է զհոգին գեղանի ՚ի գեմն ընծայեցուցանել , և ընդ նախապատիւն դասիլ : Զո տանօր չիք երկնչել ՚ի նախանձուէն , և ոչ յաւել ՚ի խանդալն ընդ այլսմ կնոջ՝ իբրև ընդ փառաւորագոյնն հարսնացելոյ փեսային : Վասնզի չիք նմանն նմա , և ոչ ոք է հաւասար նմա , այլ և ոչ սակաւ մի մերձաւոր նմա :

Լայց յամուսնութէ Թէպէտ և ՚ի կարի ընչաւէտացդ և ՚ի մեծազօր արանց կալցէ կինն յամուսնին իւր , այլ սակայն մնրթէ է գտանել և այլ կին՝ որ առաւել և այս վերհագուհին հարսնացեալ իցէ : Զո արդեօք գերազանց ցիկ և առաւելութէ վերհագունիցդ՝ ոչ խոսն ինչ նուազ զի զհեշտութէ մեծութէ խոնարհագունիցն : Լսակ բազում գրգանք ոսկւոյն և հանդերձիցն և սեղանոյն և

այլ ևս ձոխասէ, բաւականի՞ք իցեն Թակարթել զՀոգին և ըմբռնել։ Այլ քանիք ոմանք ի կանանց վայելեն յայդոսիկ. քանզի բազմադիմք ի մարդկանէ յաղքատութենէ անցուցանեն զկեանս և յաղետս վշտաց և ի վաստակս քրտանց։ Այլ եթէ իցեն ևս ոմանք՝ որ այդոցիկ հաղորդք գտանիցին, կարի սակաւք են և նուազունք. և այնոքիկ գարձեալ հակառակք հաձոյիցին նմ։ քանզի ոչ ումեք օրէն է գրգռել յայդոսիկ. ըստ ո՛ր ասեմ և քաջ իսկ ցուցին առաջինն բանս մեր։

Կի՛. Բայց սակայն ածէ մեզ դարձեալ հնորհեսցուք բանիս՝ ասել եթէ օրէն իցէ գրգռանդ այդ. և ոչ մարդարէն և ոչ պատգոս երբէք առեսցեն զայդ խնդիրս, թէ՛տ կանանց. զի՞նչ օգուտ կայցէ ի բազում ոսկւոյն. ոչինչ այլ, բայց մախանք և հոգք և երկիւղ բազում։ Այանզի ոչ միայն յորժամ յարկեզս անդ փակեսցեն զայդոսիկ, և ոչ միայն յորժամ գիշեր ի վերայ հասանիցէ, ի վարանս հոգոց տագնապին տեառքն, այլ և յորժամ զանձամբ արկանիցեն զդոսա. և յորժամ տիւ գլխովին իցէ, ի նոյն հոգս՝ մնանաւանդ եթէ և յառաւել գժնդակն վարանին նոքա։ Այանզի միանգամայն և՛ յեկեղեցիս մերձ կան կանայք ի դաւաճանել յայդպիսեաց լինէ. ի վերայ այսր և բազում անգամ ի բազմաւթէ անտի ամբոխին պնդեալք և ընդհարեալք ոչ կեբարձդ այդոքիկ, և ոչ զգան անգամ՝ եթէ յոսկւոյ անտի վերծգի լինէ ի նոցանէ ի գետին։ Այս պէս ապա բազում կանայք ոչ զայդոսիկ միայն, այլ և որ կաբի պատուականադոյն են քան զդոսա, քառամանեակս կորուսին նոքա ընդելուզեալս յականց պատուականաց. է զի այլք ի բաց կորզեցին, և է զի ինքնին ի բաց վերծան ի մարմնոց նոցա։

Կբ. Բայց սակայն տացուք մեզ ձեզ, եթէ և ոչինչ երկիւղ ի վերայ կայցէ, այլ գլխովին և այդ վարանդդ հոգոց չիցէ ի միջի։ Օ՞ի՞նչ ապա իցէ շահ օգտին։ Այհա եաես, ասէ, այն ոք, և զարմացաւ։ — Ոչ ընդ զարդարուհնան, այլ ընդ զարդն. իսկ զնա ի պատճառս այնոցիկ և թշնամանեաց բազում անգամ, իբրու այն՝ որ արտաքոյ արժանեաց նոքիմք զարդարեալ իցէ։

վ՚անզի եթէ արդարև չքնաղ իցէ, խանգարէ զդեղ քնութեն. քանզի բազմագիմ զարդդ այդ ոչինչ թողու նմա մերկ երևել, այլ առաւելագոյն մասամբն ծածկէ զնա. իսկ եթէ անգեղեայ և խոշորագիմ, դուրաւ առաւել և զաղիր ցուցանէ զնձն իւր. քանզի տգեղութիւն՝ ամենայն ուրեք յորժամ առանձինն երևի, որչափ ինչ միանգամ է՝ այնչափ երևի միայն. իսկ յորժամ նմա մերձ կայցէ ականջն շողշողել և այլոց ինչ նիւթոյդ գեղեցկութիւն, դառաւել և աձէ ՚ի խոշորութիւն: Վ՚անզի և զմարմնոյն սեռութիւն յաւէտ ինն սեագոյնս յարդարէ լոյս մարգարտին՝ որ ՚ի վերայ կացեալ իցէ նորա, և իբրու այն թէ ՚ի խաւարի ուրեք փայլատակեսցէ: Ծնոյն օրինակ և զկոպտատարագ կերպարանն ծաղկեցուցանէք հանդերձիցն կարի ինն անհետեթեթ երևեցուցանեն. քանզի ոչ թողուն տեսողացն՝ զիրիս դիտակին նորա առանձինն միայն զննել, այլ ՚ի միասին ընդ ձեռաց կերտին ընդ այնմիկ և ընդ վեհագունին զարդու. և ՚ի լինել այսմ այսպէս՝ այնուհետև առաւել և յանդիմանի անարգութիւն նորա: Վ՚անզի ոսկին յեռեալ ՚ի հանդերձս, և այլ բազմագիմ տարազք գործոյն և բազմադակ ամենայն զարդն, իբրև ըմբիշ ինն է քաջամարտին և կորովի՝ որ զբոսոտ զախոյեանն և զղաղիր և զվախ՚ յանձնէն ՚ի բաց մերժեսցէ. ըստ օրինակիդ ըստ այդմիկ և զարդդ այդ զփառս կերպարանացն ՚ի բաց կապտեալ ՚ի զարդարելոյն, և զտեսանելեացն զաչս առ ինքն դարձուցեալ, զնա կարի ծիծաղելի՝ և զինքն առաւելհրաշ գործէ:

ԿԴ. Այլ ոչ այսպիսի ինչ է և կուսութեն զարդ. քանզի ոչ զրկէ զզարդարեալն իւրև. իբրև զի ոչ մարմ նաւոր ինչ է, այլ ողջոյն հոգւոյն է: Այս վասն այնր րիկ եթէ երբէք խոշորագեղ իցէ, վաղվաղակի փոխէ զխոշորութիւն՝ զանձամբ արկեալ զանհամեմատ զգեղն. ապա եթէ կայտառ իցէ և զուարթ, պայծառագոյն և յարդարէ: Վ՚անզի ոչ ականք և ոսկի, ոչ հանդերձից պաճուճանք և ոչ երանգոց երփն երփն ծաղիկք բազմագինք և ոչ այլ ինչ յայսպիսեաց ապականացու նիւթոյս՝ զարդարեն զհոգիս. այլ փոխան այսոցիկ՝ պահք, սուրբ հսկմունք, հեզութիւն, պարկեշտութիւն,

աղքատութիւն, արիութիւն, խոնարհութիւն, համբերութիւն, և զլեռովին ամենայն կենցաղականացս այսոցիկ արհամարհութիւն։

Վասնզի և նորա այնպէս գեղեցիկ են աչք և զուարթագինք, որպէս զի և փոխանակ ընդ մարդկան զսեմ մարմին զօրութեան և զնոցուն տէրն ունի իւր սիրող. այնպէս յստակ և սրակն, մինչև փոխանակ մարմնաւոր բացս՝ անմարմին գեղոյն զօրէ լինել նկատող. այնպէս հեզահայեաց և անդորրաւետ, մինչդի և ոչ ընդդէմ զրկողացն և անդուլ տրտմեցուցչացն իւրոց երբեք վայրենանայ և խոժոռի, այլ և՝ ինոսա քաղցր և հանդարտ ակնարկէ։

Լսակ պարկեշտութիւն այնչափ ինն հանգուցեալ է՝ ի վերայ նորա, մինչև պապշոքն զամօթի հարկանին և շառագունին, և զընտանի իւրեանց զմեղեգնութիւնն՝ ի բաց դնեն, յորժամ միանգամ ձգիտիւ հայեցին՝ ինա։ Այս որպէս նաժիշտ սպասահարկու պարկեշտ տիկնոջ՝ հարկ է զի և ինքն այնպիսի իցի՝ թէպէտ և ոչ կամեցի, այսպէս և որ մարմին է այնպիսի իմաստասէր հոգւոյն, հարկ է նմա և զամենայն ընթացս իւր ըստ նորա ակնարկութեանցն ուղղել յարմարել։

Վասնզի նորա առհասարակ և աչք և լեզու և կեր պարան և գնացք և ամենայնին միանգամայն՝ տպաւորեալ են՝ ի տիպ ներքին բարեկարգութեանն նորա։ Այս զօրօրինակ իւղ ծանրագին՝ թէպէտ և յամանի փակեալ կայցէ, անոյշ բուրմամբն իւրով վարակէ զօդդ, և այն պէս ոչ զներքինն միայն և զներձաւորսն՝ այլ և զարտաքինսն առհասարակ լնու հեշտութեամբ. այսպէս և կուսական հոգւոյն անուշահոտութիւն շուրջ հեղեալ զդգայարանաւքն, զառ՝ ի ներքս հանգուցեալ զառաքինութիւն՝ ի դէմս բերէ։ Այս երասանակս ինն ոսկիս զպարկեշտութիւնն արկեալ յամենեսին՝ ի նոսա, զմին մի յերբեմն վարայն՝ ի բազում քաջադիպութիւնս ածեալ պահէ. և ոչինչ ներէ՝ ոչ լեզուին օտարաձայնս ինչ բարբառել և անհամբոյրս, ոչ աչացն՝ անամօթս անգամ ակնարկել ինչ և կասկածաւորս, ոչ ականջացն՝ տարադէպ ինչ ցուցս երբեք ընդունել։

Այսու ոտիցն նա պատկառ կայ, զի մի անկարգս ինչ քայլեսցէ և լցիս. այլ զի անկեղծք և առանց պչրա-

նաց իցեն ձեռք նորա : Այլ բնաւ իսկ հատեալ յամե-
նայն պէսպայարդար հանդերձիցն՝ անդուլ խրատէ և ըզ-
կերպարան երեսացն մի զերծուլ ծաղոյ , նա և ոչ թէ-
թեւ արձակել ծաղը . այլ զյօնսն հանապազ պատկառե-
լի ցուցանել և ծանր . և առ արտօսր միշտ կազմ և
պատրաստ , իսկ առ ծաղը՝ ոչ երբեք :

կէ . Իսկ արտասուս լսեալով քո , մի ինչ տխրական
կարծեսցես ի միտս քո . քանզի այնչափ հեշտութեի ու-
նին արտասուքդ այդոքիկ , որչափ և ոչ ծաղը աշխարհիս
այսորիկ : Ապա եթէ անհաւատասցիս բանիս , լուր ղու-
կասու՝ որ ասէ , եթէ գան հարեալք առաքելոցն՝ ինդա-
լով գնային յերեսաց ատենին : Այլ նա աւանիկ գա-
նիցդ բնութեի չէ այդպիսի ինչ . զի ոչ եթէ հեշտութեի
և ինդութեի բնաւորեցաւ գործել , այլ ցաւս և վաս-
տակս : Ասայ չէ այդ բնութեի գանիցդ . այլ այնպիսի
ինչ է քոյն հաւատքն , զի և բնութեի իրացդ տիրէ :

Իսկ արդ՝ եթէ գանք հեշտուի ծնանելոյն վասն քոյ ,
զինչ զարմանք իցեն՝ եթէ և արտասուք վասն նորա՝
զնոյն գործեսցեն : Զաղագս այսորիկ զոր նեղ և ան-
ձուկ կոչեաց Ձանապարհ , զնոյն դարձեալ և լուծ ա-
սաց քաղցր և բեռն փոքրոգի . քանզի ինքն բանդ այն-
պիսի է բնութեք , սակայն ի կամս և ի յոյս առաքե-
նութեք նահատակելոցն յոյժ թեթեւանայ : Զորին ա-
ղագաւ և քան զայնոսիկ՝ որ զընդարձակ Ձանապարհն
գնան և զհամարձակն՝ առաւել ևս յօժարամիտս տեսա-
նէ ոք զնոսա , որ զնեղն ընտրեցին անձանց և զանձուկն ,
ոչ զի ոչինչ վշտանան նոքա , այլ զի գեր ի վերոյ են
քան զվիշտս , և ոչինչ կրեն յայնպիսեացդ անտի՝ զոր
այլք բնաւորեցան կրել : Վասնզի և այս կեանք ունին
իւրեանց վիշտս . այլ եթէ միանգամ ընդ ամենունեն
վշտաց ի կշիռ առցես զայնոսիկ , և ոչ վիշտս արդեօք
զնոսա կոչել պարտ իցէ :

կե . Վասնզի զինչ , ա՛ղէ ասա , զամենայն աւուրս
կենաց իւրոց կրեսցէ երբեք կոյսն յայնպիսեաց ինչ ,
զոր ամի ամի՝ եթէ ասել պարտ իցէ՝ արամբիդ այդ եր-
կամբք և հեծուբք տանջի : Վասնզի այնչափ է բռնու-
թեի լկանացդ այդոցիկ , մինչ զի ձայնին զ երբ՝ յօժամ

ուրեք զգերուէին կամիցին նշանակել և զսուին և զբրա-
ծուելին և զանհանդուրժելիսն ՚ի չարեաց , երկուսս
կոչեն զամենեսին զնոսա ։ ՚Լևս՝ ասէ ինքնին զդոյն իբ-
րև պատուհաս և անկծս ած ՚ի վերայ կնոջն . ոչ զնաս
նեղն ասեմ, այլ զծնանելն այնպէս հանդերձ վշաւք և
երկամիք . քանզի * տրտմութիւն , ասէ , ծնցես որդի ‖ .
ծննդ . գ . 16 ։ Լսակ կոյսն երկանցս այսոցիկ և անխծից
վհատոյն անցեալ բազմի . քանզի որ ելոյծ զանէծս օ-
րինացն , նա ընդ նմին ելոյծ և զպղտոսիկ ։

կը. ՚Լյլ սակայն քերկրալի է արդեօք ՚ի վերայ ջո-
րեաց բարձեալ բերիլ ընդ հրապարակս ։ ՚Լյդ ամբար-
տուանութիւն մնոտի է միայն , իսկ յամենայն հեշտութիւ
անքաժ է . և որպէս ոչ խաւար քան զլոյս լաւագոյն
ինչ է , և ոչ՝ արգելեալն քան զարձակն , և ոչ՝ բազմաց
կարօտանալն՝ քան և ոչ միոյ խիք , այսպէս և ոչ նա՝
որ զիւրական ոտն ՚ի գործ ոչ վարիցէ , լաւագոյն ինչ
է ։ ՚Լանզի Թողում ասել զդառնութիւնն՝ որչափ ինչ
միանգամ հարկ է նմա կրել վասն այսորիկ ։ ՚Լանզի և
ոչ յորժամ կամք իցեն նմա՝ յաջողել նմա ելանել աք-
տաքս ՚ի տանէն . այլ բազում անգամ իբրև պէտք ինչ
կարեաց ստիպեսցեն արտաքս ելանել, նա հարկաւորի
արգելեալ ՚ինալ ՚ի տան անդ իբրև զմուրացիկս ոմանս
հաշմն ոտիւք՝ որք չունիցին յորս բարձեալ բերիցին ։

Լսակ եթէ այլն նորա յայլ ինչ գործս պարապեցու-
ցեալ իցէ զջորիսն , յայնժամ կարձմտութիւն և կապ և
լուծութիւն քննահան ։ ՚Լպա եթէ ինքն ոչինչ նախատես
գոլով հանդերձելոցն արասցէ զայդ , յայնժամ Թողեալ
նորա զայրն՝ ընդ անձին իւրում ոգորի սրտմտութեն , և
անդուլ կրծէ զանձն իւր ՚ի պատճառս Թշնամանացն ։
Լև քանիցն ապա լաւ և էր ՚ի գործ վարել զոտս իւր ,
քանզի վասն այսորիկ զսոսա հաստեաց մեզ ած , և ոչ-
ինչ կրեալ ՚ի դառնութեց աստի , քան եթէ ՚ի փափկու-
թէ անտի կթեալ այնչափ հարկ տրտմութէ և կարձմտու-
թէ ։ ՚Վանզի և ոչ այս միայն պատճառք արգելեալ
փակեն զնոսա ՚ի տան . այլ Թերեւս եթէ երկոցուն
միանգամայն ջորեացդ ցաւեսցին ոտք , և եթէ միոյ ՚ի
նոցանէ , նոյնն պատահէ . նաև յորժամ յարօտս արձա-
կեսցին նոքա . և քանզի զկապ լինի այսմ ամի ամի և ընդ

բազում աւուրս, դարձեալ հարկ է կնոջդ կալ ինալ ՚ի տան իւրում իբրև կապեալ, և ոչ ելանել ՚ի տանէն, Թէպէտ և պէտք կարևորք կոչեսցեն զնա արտաքս։

Ապա եթէ ասասցէ ոք, եթէ զերծ լինի նա այդ-ուիկ ՚ի բազմաբնոյս անցաւորաց անտի, և ոչինչ հարկա-ւորի առ մէն մի ՚ի ծանօթիցն իւրոց երևելի լինել և զամենի հարկանիլ, այնպիսին Թուի ինձ՝ եթէ յոյժ անպէտ իցէ եթէ զինչ ինչ արդեօք ՚ի կանայսն քնուէդ ՚ի բաց բառնայ զամենն և զգեցուցանէ. քանզի ոչ է Թէ երևելի լինելն, և ոչ դարձեալ ՚ի ծածուկ մնալն՝ գիտէ գործել զայդ, այլ բառնայ զամենն լրբութիւն՝ որ հասեալ կալեալ է ՚ի ներքոյ զՀոգի նորա. և բերէ ամենի զգաստութիւն նորա և ակնածութիւն։

Յաղագս այսորիկ և բազում կանայք զերծեալք ՚ի պահպանութենէդ այսի և ՚ի մէջ ամբոխին գնայեալք ընդ հրապարակս, ոչ միայն բամբասողս ոչ գրգռեցին անձանց իւրեանց, այլ և բազումս գտին զգաստութիւն իւրեանց հիացմամբ ակնակառոյցս. և ՚ի պատճառս կերպարանի անձինն, և գնացից ոտիցն, և չափաւորու-Թէ հանդերձիցն՝ նշոյլ ինն լուսաւէտ զներքինն պար-կեշտութիւն իւրեանց ՚ի դուրս արձակեցին։ Ոսկ ոչինչ նուազունք դարձեալ ՚ի ներքս բազմեալք, կարծիս ինն ձախողակս ձգեցին յանձինս իւրեանց։ Վանզի և մարթ է այնմ որ ՚ի ներքս անդ փակեալ իցէ՝ առաւել քան զերևեալսն՝ կամեցողացն ցուցանել զանձն բազում լրբութեամբ և անամօթութեամբ։

Կէ. Այլ Թերևս քաղցր լինէ իցէ բազմաւէ աղախ-նեայդ։ Ապաքէն չիք ինչ վատթարագոյն քան զայդ հեշտութիւն, այնչափ ունել հոգոց կիրս. քանզի առ իւրաքանչիւր ՚ի նոցանէ հիւանդութիւն և մահ՝ հարկ է խառնիլ և տրտմիլ։ Այլ Թերևս դիւրաբառնալիք ի-ցէն այդոքիկ, և որ ինչ գժնդակագոյն և ես են քան զայդոսիկ. օրինակ ինն՝ հանապազօրեայ տաղտապանք յընդոստուցանել զպղերգութիւն նոցա, ՚ի հատանել զարութիւն նոցա, ՚ի հանդարտել զկապ նոցա, և ՚ի դաստիարակել զայլ ամենայն ախտաւոր կիրս նոցա. սակայն այն սաստիկ և գժոխքմբեր կիրք են քան զա-մենայնն՝ որ առաւել ՚ի բազմութենէ աղախնեայդ այդո-

ցիկ քնաւորեցաւ պատահել, յորժամ ուրեք երբեք ի ջոկս դասս դիպեսցի կին կայտառ տեսլեամբ. քանզի և հարկ իսկ է գլխովին պատահել այդմ ի բազմութեանդ նոցա. իբրև զի և մեծատունքդ խնամով ի ինդիր էն ստանալ անձանց ոչ միայն աղախնեայս բազումս, այլ և գեղեցիկս:

Արդ եթէ դէպ լինիցի՝ զի մի ոմն ի նոսա պայծառացեալ գեղոյն ի սէր իւր յանկուցէ զտէրն իւր, կամ թէ աքանչելի միայն իցէ առաջի աչաց նորա, յայնժամ ցաւ է տիկնոջն՝ իբրու այն որ յաղթեալ իցէ յաղախնոյն իւրմէ, թէ ոչ սիրոյն՝ սակայն գեղով մարմնոյն և աքանչելի լինելոյն:

Իսկ արդ՝ եթէ որ ինչ միանգամ շքեղ կարծի առ նոսա և նախանձելի, այսչափ կիրք վշտաց գտանին յայնոսիկ, զի՞նչ ոք ապա ասասցէ յաղագս տրտմակաց նայն նոցա:

Կիր. Այլ ոչ և կայան կրէ ինչ յայսպիսեացդ աստի. մանաւանդ եթէ և յամենայն խառնուրդ ազատ է տուն նորա, և ամենայն աղաղակ մերժեալ ի միջոյ նորա. և որպէս եթէ ի նաւահանգստի ուրեք յանդորրու՝ լուռ թիւնն հասեալ ունի զամենայնն առ ի ներքս անդ. և քան զլուռթիւնն առաւել այլ ինն անխռովուէ զհոգին. իբրև զի ոչինչ ի մարդկայնոց աստի ունի զգաղանս, այլ ցանգ խօսակից ոչ է և անթարթ աչօք նկատէ զնա:

Այլ ապա ո՞ զ արդեօք բաւական իցէ չափել զհեշտութիւդ զայդ. ո՞ր բան ի դէմն բերցէ զբերկրութիւն հոգւոյս այսորիկ. և ոչինչ արդեօք. բայց որք միանգամ դմա գրգեալք իցեն հեշտութիւ ի տէր, նոքա միայն ի վերայ հասեալ են մեծութիւ գրգռանացս այսորիկ, եթէ զիարդ նա առաւելուիւ բազմաւ ի վերոյ անցեալ է քան զամենայն կշռութիւն:

Այլ սակայն արծաթ բազում փայլատակեալ առ նայն ուրեք՝ բազում ընծայիւ արդեօք բերկրութիւն տեսանելեացն: Իսկ քանի՞ պատուականագոյն ևս է հայել ընդ երկինս, և զառաւել ևս հեշտութիւնն կթել ի նմանէ: Վասնզի որչափ ինչ ոսկին քան զանագ և քան զկապար, այնչափ և երկինք շքեղ ևս են և առաւել պայծառ քան զոսկի և քան զարծաթ և քան զամենայն

նիւթս. նա զի և այս տեսութիւնն անմահն է՝ ի հոգւոյ, իսկ այն բազումն վարանի. որով և առաւել իմն առնայն ուրեք խանգարիչ է ցանկութեանն: Ա.Յլ ո՛չ կամիս հայել ընդ երկինս. և յաջողեալ է քեզ հայել ընդ սրճաթեն՝ որ կայ ի հրապարակի անդ: Ա.ո՛ւմեք ձեռն ասեմ ընդ երանելւոյն պաւղոսի, քանզի այնպէս իմն ապշեալ է ձեր ի սէր ընչից:

Ա.Յլ աստանօր չիք իմ բան՝ զոր խօսեցայց. քանզի բազում անձկութիւն անել հոսեալ կալաւ զիս, և ո՛չ բաւեմ տեսանել. առ ինչ զոգ ցես աւետնայն աղգ մարդկան՝ յորժամ հեշտեաւ և խաղաղութիւն յաջողէ նոցա դրկիլ ի բերկրութիւն, նոքա և ո՛չ ի հեշտուէ մտսին դնեն զայն. իսկ ի տագնապս հոգւոց և ի տաղտապանս և ի վարանս առաւելապէս իմն հեշտանան: Վանզի ընդհէր ապա զնոսա ո՛չ այնպէս բերկրեցուցանէ սրճաթեն հրապարակին՝ իբրու զառանձինն. թէպէտ և առաւել փորձ իցէ այն, և յամենայն վարանաց աղատ թուղցու զՀոգին: Վանզի ասէ, այն չէ իմ. իսկ այդ իմ է: Ա.պա ուրեմն ագահութիւնն է հեշտալի, և ո՛չ բնութիւնն արճաթոյդ. զի եթէ այդպէս էր, ապա նովքին հաւասարութիւն և յայնմանէ պարտ էր ի բերկրանս դալ:

Ա.պա եթէ ասիցես՝ եթէ ի պատճառս պիտոյից, լաւ ևս է քան զնա ապակին. և զայդ դոքին իսկ մեծատունքդ վկայեսցեն արդեօք, որք բազում անգամ ի նիւթոյ այսր կազմեն զբաժակս իւրեանց: Իսկ եթէ երբեք ի փառասիրութիւն պատճառս սահիկն նոքա և յարծաթոյ կերտել զայն, նախ ի ներքոյ դնեն զապակիկն, և այնպէս ապա արտաքոյ շուրջանակի ածեն զարճաթն. յայտ արարեալ՝ եթէ այդ ախորժ ևս է առ արքունին և քաջադէպ. իսկ այն՝ առ փառասիրութիւնն միայն և առ մնոտի պարծանս:

Այլ և ամենևին իսկ զինչ իցէ այդ իմ և ո՛չ իմ: Վանզի յորժամ ձգդրտիւ քննեմ ես զբառսդ զայդ սիկ, բառս իմն լոկ միայն գտանեմ զնոսա: Վանզի բազումք և ի կենդանութեանդ իւրեանց, յորժամ այն տեղի ետ ի տէրութիւնէ անտի նոցա՝ ո՛չինչ կարացին ունել զնա. և առ որս միանգամ միտքս իսպառ եկաց ինաց, ի ժամանակի անդ վախճանին՝ եթէ կամայ և եթէ ակամայ վրկել եղեն յիշխանութենէ անտի իւրեանց:

Այլ ոչ յարծաթն միայն և յոսկին, այլ և ի քաղաքն նման և ի դրախտն և յապարանսն՝ իմ և ոչ իմ, իբրև բառ լոկ միայն գտցէ ոք զայդ։ Վասնզի ամենեցուն հասարակաց են պէտք. իսկ որք այդոցիկ տեարք կարծին լինել, նաքա և ինչ ի աւելի ունին քան զնոսա՝ որք տեարք չեն, զհոգոց վարանն ասեմ՝ որ վասն նոցա։ Վասնզի վերջինքդ վայելեն միայն յայնոսիկ. իսկ առաջինքն բազմահնար ջանիւքն զբռամբ ածեն զայն ինչ, որ առանց ջանից է ի ձեռս նոցա։

կԹ. Ապա եթէ ոք ընդ բազմադէմ գրգռանսն ակն կառույց եղեալ հիասցի, օրինակ լինի՝ ընդ բազմակոյտ մսոյն յօշելոց, ընդ առաւելազանց ծախս գինւոյն, ընդ յոգնարուեստ հաւեմունսն, ընդ հնարս ձարտար բուէ սեղանապետացն և հայաբարացն, ընդ ակումբս պատառաքաղ ծխոյն և բազմականացն, քանզ իսկ գիտաց է այսպիսին՝ եթէ յայսոսիկ ոչինչ ընդհատ են մեծատունքդ ի խահարարացն։ Վասնզի զորօրինակ սոքա խիթան ի տեարց իւրեանց, նոյնպէս և նոքա ի կոչնականացն, մի արդեօք բազմեալք ստգտանիցեն ինչ մի յայնցանէ՝ որ այնչափ քրտամբք և ծախուք պատրաստեալք կազմեցան վասն նոցա։ Այլ ի մսոյնս յայսմիկ հաւասարին նոքա ընդ խահարարս իւրեանց. իսկ յայլում մսոյն և առաւելագոյն ևս քան զնոսա։ Վասնզի ոչ միայն ի բամբասողաց, այլ և ի նախանձոտաց զսնդիտեն նոքա. քանզի առ բազումս բազում անգամ ծնան մախանք յայսպիսեաց կոչնոց. և մինչև ոչ զվերջինն վտանգն հանին ընդ անձինս նոցա՝ ոչինչ կասեալ դադարեցին։

Այլ քաղցր է յոյժ բազում անգամ որովայնապարարն լինել։ Ո՞ն անդր ի բաց տար. քանզի միանգամայն և ծանրանալ գլխոյ և պարպատել որովայնի և խցանել ոգւոյն և ստուերածք և ցնորել աչաց և մառախուղք, և այլ ևս առաւել դժպատեհ կիրք քան զայդոսիկ՝ ի գրգռանց այսր ի վեր բուսանին։ Այլ երանի՛ թէ հաւնապազօրեայ ցաւովք չափ միայն էին կիրք զեղխուեդ այդորիկ և տուգանացդ. բայց արդ գոդեաս անբաւժեալքն յախտս յայսպիսեաց սեղանոց առին զծագումն. և քանզի ոտնաւորեցին և ախտ ծիւրական և վերնատու-

թէ և անդամալուծութէ և քաղցմ և այլ դժնդակա-
գոյնք և քան զդոսա՝ հասեալք և ըմբռնեալք զմար-
միին, և ոչ ոք պարզելոյ տագնապ՝ ի վերայ հասուցա-
նեն։ Այս արդ՝ զինչ արդեօք՝ ի հեշտութեցն ունիցի ոք
ասել զուգակշիռ չարեացս այսոցիկ. իսկ զոր խստամ
բերուն Թերևս ոչ առցէ ոք յանձն՝ ապրել՝ ի սոցանէ։

Ի. Այլ ոչ այսպիսի ինչ է և դիւրագին սեղան.
այլ՝ ի բայեայ կայ՝ ի դառնութենէ աստի, մայր գոլով
առաղջուէ և քաջողջութե։ Այսպա եթէ ոք և հեշտու-
թէ՝ ի խնդիր ելեալ լիցի, քան՝ ի գրգանան՝ ի սմա ա-
ռաւել գոցէ և զայն. և առաջինն՝ զի առողջ միայ մար-
միին և ոչինչ տառապի՝ ի չարեաց անտի, յորոց միշն մի
և առանձինն բաւական է՝ ի շինջուցանել և արմատաքո
խլել զհեշտութենէն։ Իսկ ապա և երկրորդ՝ ի նոցուն
իսկ՝ ի կերակրոյն։ Օ՞ր արդ. իբրև զի ախորժակին է
ծնօղ հեշտութեան. իսկ զախորժակն ոչ յապուրդն
գործէ և յղփութիւնն, այլ կարօտութիւնն և չքաւո-
րութիւնն։

Արդ այս ոչ եթէ՝ ի խրախճանս մեծատանցն մերձ
կայ, այլ ցանգ յաղքատացն. որ առաւել քան զանհնայն
սեղանապետ և քան զխահարար՝ բաղցմ մեղը կաթե-
ցուցանէ՝ ի կերակուրս նոցա։ Վասզի մեծատունքդ
չունելով քաղց՝ ուտեն. և անհնարն գոլով՝ ի ծարաւոյն՝
ըմպեն. և մինչչև ուժգին հարկ քնոյն՝ ի վերայ հա-
սեալ նոցա՝ գնան՝ ի ննջել. իսկ սոքա յառաջագոյն կա-
րօտեալք այսոցիկ՝ այնպէս ապա մերձին՝ ի նմա. որ և
առաւել ինն աձեցուցանէ զկիրս հեշտութենն։

Վասզի առ ինչ ապա, ասա՛ ինձ, և սաղմոսիմն քաղցը
կոչէ զքուն ծառային, ասելով այսպէս. * Վաղցը է
քուն ծառայի, եթէ շատ կերիցէ և եթէ սակաւ ‖.
ծաղ. Ե. 11։ Զի երևս՝ ի պատճառս փափուկ անկողնոյն.
այլ նոքա բազում անգամ գետնախշտի լինին և՝ ի խո-
տոց վերայ ննջեն։ Արդեօք՝ ի պատճառս ազատութե՞ն.
նա՛ և ոչ սուղ մի վայրկեան ժամանակի է յիշեանութե
նոցա։ Այլ Թերևս՝ ի պատճառս պարապորդութե՞ն.
սակայն նոքա անդուլ վաստակօքն տուայտին և տառա-
պին։ Օ՞ ինչ ապա իցէ՝ որ զքունն քաղցը գործեսցէ.
քայց թէ՝ նախ՝ ի պէտս ըմբռնիլ նորա, և այնպէս ա-

պա առնուլ զնա : Իսկ մեծատունքդ , եթէ արդեօք ո՛չ յարբեցուե անդ իւրեանց կալցէ զնոսա գիշերն , Հարկ է զի աքնեսցին և թաւալեսցին և տառապեսցին անդ կեալք ՚ի վերայ գերդ անկողնոցն :

Ո՞ . Իբր ինձ առ ձեռն և այլուստեք ՚ի դէմն ածել զանհամութեի գրգռանացդ փափկութե , և զտուգանսն և զպղծութեին , ՚ի մէջ բերեալով զկերս ախտիցն՝ կարի բազում և առաւել դժնդակ քան զնարինոյն՝ որով վաղակեն նոքա զՀոգին : Զանգի գերդս յարդարէ և անարիս և յանդգնութս և գոռոզս և ցանկասէրս և թըշնամանողս և անժուժկալս և ցասութս և անգութս և տմարդիս և ագահս և գծուծս , և միանգամայն ասել՝ առ կենցաղոցդ և առ կարեւորսն անպիտանս ոմանս : Իբր այն զի այսոցիկ ամենայնի զհակառակսն ՚ի ներքս բերէ չափաւորութիւնն :

Ա՛յլ այժմիկ յայլ կինչ զմիզ ձեպէ բանս . վասն որոյ և զայս միայն յաւելեալ մեր ՚ի բանս , միւսանգամ հարցուք բուռն զառաքելական բանիցն : Իբրև զի՝ եթէ որ նախանձելիքն կարծին , այսքանեաք լի են չարեաք , և այսչափ ախտից ձիւնաբերս ՚ի վերայ ածեն հոգւոյ և մարմնոյ , ուրանօր ապա երթեալ մեք դասեսցուք ըզդաւթեան . զահ ասեմ իշխանացն , զդրգիռ ժողովրդոցն , զդաբանս զրպարտողացն և զնախանձոտացն , որք առաւելապէս զմեծատամիքդ պատեալ պաշարեալ կան : Ա՛յս և զկանայս գլխովին սասպիկ և տագնապ՝ հարկ չարեացս այսոցիկ . իբրև զի ո՛չինչ արիւթիք բերեն դոքա զփոփոխութիւնդ զայդոսիկ :

Ո՞ . Ա՛ւ զինչ ասեմ զկանայս , քանզի և նոքին իսկ արդ հիգութիք ըմբռնին չայսոսիկ . քանզի որ չափաւորութիք վարե զկեանս իւր , ՚ի փոփոխութիէ ինչ նա ո՛չ խիթայ . իսկ որ ՚ի գրգռելից և ՚ի լոյծ կեանս անցուցանէ զաւուրս իւր , եթէ երբեք դէպ լինի ՚ի կիրս ինչ աղետից և հարկի՝ մտանիլ ՚ի ձեռս աղքատութե , նա մինչև տարեալ փոփոխութեդ այդմիկ՝ վախճանեալ ի կենցաղ իւրոց ՚ի պատճառս անփորձութեն և անկրթութե : Յաղագս այսորիկ ասաց երանելին պաւղոս . * բայց նեղուի մարմնոյ ունիցին այնպիսիքն , այլ

ես իմայեցի ՚ի ձեզ ‖ : Լսակ ապա լեր այսորիկ այսպէս ասէ . * ժամանակս կարձեալ է այսուհետև ‖ :

ՀԳ . Այլ զինչ ապա այդ առ ամուսնուին , Թերևս ասասցէ ոք : Այլ կարի խակ քաջ առ ամուսնուիդ հայի բանդ : Օ ի եթէ յայս կենցաղումն փակեցաւ նա , իսկ ՚ի հանդերձելումն ոչ կանայս առնիցէ և ոչ արանց լինիցի . և ժամանակս այս մեր ՚ի վախձան անդր դիմեալ գնայ , և յարուքին գլխովին առ դուրս հասեալ կայ . ապա ոչ ամուսնութիւն ինչ է ժամանակս և ոչ ստացուած ծոց , այլ կարօտութիւն և բովանդակ ամենայն խնամատարութիւն՝ որ մեզ անդանօր պիտանացու իցէ :

Վանգի զըօրինակ կայսն յորչափ ՚ի տան անդ կայ մնայ առ մօրն , բազում հոգս յանձին քերէ յաղագս ա մենայն տղայական իրացն . և զարկղն ՚ի չտեմարանին եգեալ հաստատեալ , որ ինչ միանգամ անդէն ամբա րեալ կան , և զփականան գլխովին ինքն ստացեալ ունի , և միանգամայն զամենայն իշխանութիւնն ինքն ժառան գէ . և այնչափ հոգս պահպանութեան յանձն առնու վասն մանուցին այնոցիկ և դուշնաքէիցն , որչափ որք մեծա մեծ գերդաստանացն ոստիկանք իցեն . իսկ յորժամ հարմարհասութիւնն ՚ի վերայ հասեալ իցէ , և ժամանակ ամուսնութեանն ստիպէ զնա թողուլ լքանել զտունն հայրենի , յայնժամ ՚ի մնոտեացն յայնցանէ զերծեալ և ՚ի նուաստիցն , հարկ է նմա փոյթ յանձին ունել յա ղագս վերակացութեան տան , և բազմութեան ընչիցն և ա զախնեայցն , և պաշտամանն առն , և այլ ինչ իրաց՝ որ առաւել ևս իցեն քան զայդոսիկ :

Օ ղնոյն օրինակ և մեզ պարտ և արժան է՝ որ ՚ի կա տարեալ և յայրական հասակն հասեալ ժամանեցուք , զերկրաւորս զամենայն թողուլ լքանել , որ ամենևին իսկ խաղալիկք են տղայոց , և խորհել զերկնից՝ և որ անդանօր շքեղ քաղաքավարութիւն և ամենայն փառք . քանզի և մեք ինքնին խօսեալ եմք փեսային , որ այնչափ ինն սէր պահանջէ առ ՚ի մեզ , մինչև ոչ յերկրաւորսդ աստի միայն և ՚ի մանուկսդ և յանարգացս , այլ և ՚ի կենացդ մերոց տեղի տալ , յորժամ պիտոյն իցէ :

Այլ արդ՝ քանզի այսուհետև անդ պարտ է չուել , մերժեսցուք յանձանց մերոց զհոգս անսրգս . քանզի և

ձէլինչ արդեօք՝ յորժամ մեր հանդերձեալ էր յանվինչ տանիլ փոխիլ՝ի թագաւորութենէ, յայնժամ փոյթ լինչ լինէր մեզ յաղագս խեցեաց և փայտից և կահուց կաթսայից և այլ ևս առանին պիտոյից կարօտութեան։ Ապա ուրեմն և ոչ այժմ զերկրաւորայ լինչ հոգայցուք մեք. քանզի արդ ժամանակն յերկինս՝ի վեր կոչէ զմեզ. ըստ որում և առ հռովմայեցիսն գրեալ առեր եւ րանելին պաւղոս. * Ո՛չ այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ քան յորժամ հաւատացաքն։ գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ ‖. հռ. ԺԳ. 11. և դարձեալ աստանօր. * ժամանակս կարճեալ է այսուհետև, զի որ ունիցին կանայս, որպէս թէ չունիցին ‖. ա. կոր. է. 29։ Ո՛չինչ ապա ամուսնութիւն պէտք էցէն նոցա՝ որոց ոչ հնարանէ վայելել յամուսնութենէն, այլ նմանօրինակ գտանիլ նոցա՝ որ միանգամ ոչն ունիցին. իսկ զինչ պէտք էցէն ընչից, զինչ կալուածոց, զինչ կենցաղականացս այսոցիկ, որոց վայելք տարաժամ է այսուհետև և տարաժամ։

Ո՛չ եթէ աւ մեզ՝ որք միանգամ հանդերձեալ էցեն առաջի կալ դատողական աթենին և համարս տալ գյանցանացն, յորժամ ատեան դատաստանին աւ դուրս հաւեալ էցէ՝ ոչ միայն զկնոջն հոգս՝ի բաց դնեն յանձանց իւրեանց, այլ և զկերակրոցն և զըմպելեացն և զամենայնիւն միանգամայն, և այնպէս՝ի պատասխանիս իւրեանց միայն պատրաստին. մեզ քանիւն ապա առաւել որոց առաջի կայ յանդիման լինել ոչ երկրաւորս աթենի, այլ երկնաւորին այնմիկ քեմի, և զբանից և զգործոց և զխորհրդոց համարս տալ, պարտ և արժան էցէ զամենայնն՝ի բաց թօթափել յանձանց մերոց զինդուլթիս և զտրտմութիս յաղագս ժամանակիցս այսոցիկ, և վասն ահաւորին այնորիկ աւուր միայն՝ի վարանս մտանել։ Վասնզի՝ * եթէ ոք գայ՝ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զքոյրս, նաև զանձն ևս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել ‖. ղկ. ԺԴ. 26։

Իսկ դու յուբանաս պարտապեալ՝ի ցանկութենս կնոջ և՝ի ծաղը և՝ի փափկութե և՝ի զբօսանս։ * Տէր մերձ է, մի ինչ հոգայք ‖. իսկ դու վասն ընչից վարանիս և հոգաս։ Նշմարեցաւ արքայութիւնն՝ի վերայ հասեալ կայ.

իսկ քո՛ի տուն և՛ի գրգանս և յայլ ինչ ևս հեշտուե՛ արկեալ է զակն։ * Կ՚նգեալ է վայելչութե՛ աշխարհիս այսորիկ ։ ա. կոր. է. 31. զի՞ դու տանջես զանձն քո յիրս աշխարհի՝ ո՛չ ի՛ միացականս, այլ ի՛ դիւթավախ ձանս, անփոյթ արարեալ զյաւերժութիւնն և զհաստատ նովքն։ Ո՛չ ևս այսուհետև ամուսնութի՛ւն, ո՛չ ևս երկունք, ո՛չ հեշտութե՛ և զուգաւորուե՛, ո՛չ ընչից ձո՛խութե՛, ո՛չ կալուածոյն խնամք, ո՛չ կերակուր, ո՛չ ա գանելիք, ո՛չ մշակութի՛ք և նաւարկութի՛ք. ո՛չ արուեստք և շինութե՛ք, ո՛չ քաղաքք և ո՛չ տունք. այլ այլ ի՛սն վի՛ճակ կենաց և քաղաքավարութի՛ւն. իսկ այդ ամենայն փոքր միւս ևս բարձեալ ի՛ միջոց։ Կ՚անգի այս է, * անցեալ է վայելչութե՛ աշխարհիս այսորիկ ։

Օ՛ր ապա մեք՝ իբրու այն թէ յամենայն յաւիտեանս աստէն ինալոյ իցեմք, այնպէս զամենայն ջանս ջանամք փոյթ յանձին ունելով վասն այնոցիկ՝ զոր բազում անգամ նախ քան զերեկոյն հարկ իցէ թողուլ մեզ։ Հնար զվաստակաբեկ կեանսն յանձն առնումք, յորժամ յանգըստեան կոչէ զմեզ քա՛. քանզի * կամիմ ասէ, զձեզ անհոգս լինել. զի որ անկինն է, հոգայ ըզնո ։ ա. կոր. է. 32։

Հդ. Այլ ապա զիա՞րդ դու կամիս զմեզ անհոգս լինել, որ դարձեալ յայլ ինի հոգս առեալ ձգես զմեզ։ Իբրև զի ո՛չ հոգ ինչ է այդ. որպէս և ո՛չ վասն քոյ չարչարանացն՝ չարչարանք ինչ է. ո՛չ զի իրացդ բնութե՛ փոխեցար, այլ ի՛ պատճառս յօժարամիտ կամացն՝ որոց միանգամ հեշտաբար կրեալք զպտուղսիկ՝ յաղթեն և բնութե՛ իրացդ։ Կ՚անգի որ հոգայ վասն այնոցիկ՝ յորս չունիցի վայելել ժամանակս երկայնս, մանաւանդ եթէ բազում անգամ և ո՛չ փոքր մի, յիրաւի արդեօք հոգս ինի կոչեսցուք մեք զայն. իսկ որ միանգամ մեծ ևս քան զհոգոյն քանս՝ հանդերձեալ իցէ կենել զպտուղս, զնա ամենայն ձշմարտութե՛ գլխովին ընդ անհոգս դասեսցուք մեք։

Այլ առ այսոսիկ դարձեալ՝ այնչափ է խաւերն ընդ երկաքանչիւր հոգսն, մինչ զի եթէ ընդ այնմիկ ի՛ կշռոյ առցես զսա՝ և ո՛չ հոգս ինի համարեսցի լինել. այնպէս ինի առաւել թեթև է քան զայն և յոյժ գիւրաբառնա-

լե ։ Այլ զայս ամենայն նախաձայն բանիւքդ յայտնուիք ցուցեալ է մեր ։

* Որ անկինն է , հոգայ զնոն . և որ կանամբէն է , հոգայ զաշխարհիս ։ Այլ սա անցանէ , և նա մնայ ։ Թէրևս ոչ այդ միայն բաւական էր ի ցուցանել զարժանիս կուսութեանդ . քանզի ըստ չափու անձրպետութեդ ընդ ամ և ընդ աշխարհ , այնչափ լաւագոյն է այս հոգքան զայն ։ Զի՞նչդ ասես նա թոյլ տայ ամուսնուիլն , և յայնպիսի հոգս պատեալ պաշարէ զմեզ , և ի հոգևոր անտի օտարացուցանէ զմեզ ։ Վանդի վասն այնորիկ ասէ ասացի . * Զի որ ունիցին կանայս , որպէս թէ չունիցին ։ որպէս զի որք արդէն կապեցանն և որք հանդերձեալք էցեն ի կապիլ , այլով ինչ լեզանաւ կաւ թուլագոյնս գործեսցեն զկապանսն ։ Այս քանզի որ կաշկանդեցարն ի նոյն՝ խզելոյ չիք հնար , գուշ հեշտագոյնս գործեա զդոյն ։ Վանդի և յաջողեալ իսկ է մեզ , եթէ միայն կամիցիմք զամենայն աւելորդսն հատանել կարել , և մի առաւելագոյն ինչ ևս քան զհոգս՝ զոր բանդ այդ և բնութեին բնաւորեցաւ բերել՝ ի վերայ կուտել մերովս վատութեբ ։

Հե . Այսպա եթէ ունիք կամք էցեն և քաջիկ ևս ի վերայ հասանել բանին , եթէ զինչ էցէ . * Որ ունիցէ կնին , որպէս թէ չունիցի ։ այնպիսին զմտաւ ածցէ՝ եթէ արդեօք որք ոչն ունիցին կանայս և որք ի խաչ եւ ելեալ էցեն , զիա՞րդ վարեսցեն նոքա զկեանս իւրեանց ։ Արդ՝ զիա՞րդ վարեն ։ Ոչ զաղախնեայցն ջոկս հարկաւորին ինչ գնել նոքա , ոչ ոսկիս և քառամանեակս , ոչ տունս հրաշակերտս և մեծամեծս , ոչ այսչափ ինչ և այնչափ չափս գետնոյ . այլ զայս ամենայն ի բաց թողեալ , հոգան վասն միոյ հանդերձի և իւրեանց պարեզնի . արդ և այնմ՝ որ կին ունիցի , յաջողեալ է յայդ կամաստահրութեի ածել քերել զանձն իւր ։ Վանդի զոր վերագոյդ ասաց . մի զրկեք զմիմեանս , վասն զուգաւորութեին ասաց ։ Վանդի ի սմա հրամայէ միմեանց հպատակ կալ . և ոչ ունիք ի նոցանէ երբեք թոյլ տայ իշխան լինել անձին իւրում ։ Ոսկ ուր պարտ էցէ յայլ իմաստասիրութիս հրահանգել զանձին , որ ըստ հանդերձիցն , որ ըստ քաղաքավարութե կենացն , որ ըստ

այլոցն ամենայնի, անդանօր ո՛չ եւս միւն հալատակ կայ միւսոյն. այլ արժան է արանցն՝ թէպէտ եւ ո՛չ կամեսցի կինն՝ կարձել զամենայն գրգանս եւ ցոդնահոյլ խուժան հոգոցն. դարձեալ եւ կնոջն փոփոխակի ո՛չնչէ հարկ ի վերայ կայ՝ եթէ չկամեսցի, պաճնիլ եւ մնափառիլ եւ զաւելորդացն հոգ ունելոյ։

Այլ կարի իսկ քաջ. քանզի բնաւորական ինչ է ցանկութիւդ այդ, եւ վասն այնորիկ բազում՝ հանդիպեցաւ նեղողաւն. եւ չէ մարթ միոյն զրկել զմիւսն՝ եթէ չկամեսցի. իսկ ցանկութիւն գրգանացդ եւ առաւելապանց պաշտամանդ եւ մնայմաստակ հոգոցդ ո՛չ ի բնութենէդ յառաջ խաղայ, այլ վատութենէ ծնունդ է դա եւ բազմ ապիրատութենէ։ Ա՛ն այսորիկ ո՛չնչէ հարկաւորէ զամուսինն եւ յայսոսիկ հալատակ կալ միմեանց, որպէս յայնոսիկ։

Ա՛պա այս ինչ է, որ ունիցի կին, որպէս թէ չունիցի, յորժամ զաւելորդ զհոգն ի պատճառս շպարելոյ եւ գրգանաց փափկութենէ կանանց՝ յանձն չառնուցուք. այլ այնպէս ինչ գործիցեմք զյաւելուած հոգոյն, որ չափ ինչ շատ իցէ վասն միոյ հոգւոյն՝ որ յաւելաւ ի մեզ, եւ որ դարձեալ կէտ առաջի իւր եդեալ իցէ խնամս տասիրութենէ եւ չափաւորութենէ վարել կեանս։ Վասնզի եթէ զայդ կամի նա, յայտ արար ի վերայ բերելովիս այսպէս, եթէ՝ * Այլ որ լայցեն՝ որպէս թէ ո՛չ լայցեն. եւ որ խնդանին ի ստացուածս՝ որպէս թէ չխնդայցեն ||. քանզի եւ ո՛չ արդեօք ոչք չխնդանին՝ նոքա հոգան ինչ վասն ստացուածոց. եւ ոչք ո՛չն լան՝ նոքա եւ ո՛չ յաղքատութենէ երբեք զանգիտեն եւ կամ ի չափաւորութենէն դարձին։ Այս է ունել կին եւ ո՛չ ունել. այս է վարել զաշխարհ, եւ ո՛չ վերծանիլ։

* Որ կանամբին է՝ հոգայ զաշխարհիս ||։ Այլ արդ՝ եթէ եւ աստանօր եւ անդանօր հոգալ պարտ իցէ. եւ աստանօր ի նմանէր եւ վայրապար՝ մանաւանդ եթէ եւ տրտմութենէ եւ նեղութենէ. քանզի նեղութիւն մարմնոյ, ասէ, ունիցին այնպիսիքն. իսկ անդանօր վասն անմարդմանէ նեղի բարեացն. աւա՛ր ինչ ապա մեք ո՛չ առաւել զայս հոգ յանձին կալցուք. ո՛չ զի այսչափ եւ այնպիսի են փոխարկնք վարձուց նորա, այլ զի եւ բնութենէն իսկ դիւրաբառնալի եւս է քան զայն։ Վասնզի զինչ հոգայ կոյն.

թերևս զընչիցն, զընտանեացն, զտնաեսացն, զանդոյն, և զայլոցն. արդեօք ի վերայ կայ խոհարարացն, և ոստայնանկացն և այլ բանվանդակ սպասաւորութեն։ Ի քաց սար. ոչինչ արդեօք յայսպիսեաց ասել և ի միտս անգամ նորա ոչ անկանի. այլ զայն միայն հոգայ նա, շինել զհոգի իւր, զարդարել զտաճարն զայն սըբըբութե՝ ոչ ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, և ոչ ի տպատանս և ոչ ի մգոյրս, և ոչ յայլ ինչ գժպհիս և ի վատթարս, այլ ի սրբութե՝ որ ըստ մարմնոյ և որ ըստ հոգւոյ։

Լսկ * առնակինն՝ ասէ, հոգայ, թէ արդեօք հաճոյ լիցի տէն իւրում ։ Կարի խնամատութիւ ոչ եմուտ ի քննութե նոցուն իսկ իրացդ. և ոչինչ ասաց յայնցանէ՝ որչափ ինչ միանգամ վասն հաճոյ լինելոյ արանց կրեն կանայքդ ի մարմին և ի հոգի. յորժամ ի չարչարանս մտանեն զմարմինս իւրեանց և փոշտեն և այլ ևս տանջանաք խոշտանգեն. իսկ զհոգիս ընուն անապատական կրիւքն, մարդահաճութիւ, կեղծաւորութիւ, կարձմտութիւ, սէլսրդ և մտավաստակ հոգովք ։ Ի այլ ի մի յայդ բան զայս առնայն նշանակեալ, եթող խղճի մտաց լսելեացն խելամուտ լինել այդոցիկ. և այնպէս ապա ըզկուսութեն առաւելութի ի դէմս բերեալ և յերկինս ի վեր առեալ բարձրացուցեալ զնա, զարձեալ միւսանգամ փոխ զանն ի ներողութի առնութեն. քանզի առնայն ուրեք զանգիտէ, զի մի թերևս ոք իբրև հրամայն ինչ համարեսցի զանդ ։ Յաղագս որոյ և ոչ առաջին յորդորակդ շատացեալ, այլ իբրև ասաց, եթէ՝ հրամայն ինչ ի նմանէ ոչ ունիմ. և թէ՝ եթէ ա մուանանայցէ կոյսն, ոչ մեղաւ, զարձեալ և աստանօր ասէ. * ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ ։

Տէր. Յայր սակս յիրաւի արդեօք երկմտեացէ ոք, և թէ զիարդ՝ որ վերագոյդ կապանաց լուծուն կոչեաց զանդ, և վասն մերոյ օգտի ասէր տալ զնորհուրդն զայն, և զի մի նեղութիւն ունիցիմք, և զի անհոգս ի ցեմք, և քանզի խնայեր ի մեզ. և ի ձեռն այսոցիկ զթեթևութե իրացդ ցուցանէր և զդիւրութե՝ նոյն ասատանօր ասէ. ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ ։ Օ՛ինչ պատ իցէ՝ զոր ասէն ։ Ոչ թէ զկուսութիւնդ

խեղդ ինչ կոչէ, ՚ի բայ տար. այլ զբռնութիւնէ և զկար-
կաւ յանձնառութեան բարւոյդ այդորիկ։ Վանդի ՃՀմար-
տուիւն այս այսպէս է. ամենայն զոր միանգամ ոք բռնի
և յակամայացեալ սրտիւ առնու յանձն, թէպէտ և կա-
րի թեթև իցէ այն, յաւէտ ինն դժուարութիւնք լինի. և
քան զառաջն սաստիկ և խեղդէ զհոգին։ Վ այն այնո-
րիկ ասէ. ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ. այս է՝
զամենայն բարիս զկուսութիւնդ ասացի և ՚ի դէմն ածի,
իսկ յետ այսորիկ ամենայնի դաբձեալ զցանկութիւն դոր-
ծոյդ ՚ի ձեզ ապաստան առնեմ. ոչ յակամայս ինչ յա-
ւաքինութիւն անդր ձգեմ զձեզ. քանզի և ոչ թէ նեղել
ինչ կամիմ զձեզ՝ զխորհուրդ զայդ ետու ձեզ, այլ
որպէս զի՝ մի պարկեշտ հպատակութիւն ՚ի կենցաղական
նայս առաքի խանգարեսցի։

Այլ դու հայեաց ինձ և աստանօր ընդ պաւղոսի
իմաստութիւն. զիարդ աղերսաբանութիւք դարձեալ զյոր-
դորական ՚ի ներքս արկանէ, և ներողութիւք զխորհուրդն
զայն։ Վանզի առելոյին, եթէ՝ ոչ բռնադատեմ, այլ
յորդորեմ. և ՚ի վերայ բերելոյին դարձեալ՝ եթէ վասն
պարկեշտութեան և հպատակութեան, սովաւ զհրաշս կու-
սութեան և զշահ օգտին ՚ի դէմն եբեր, ՚երջանի ինչ միան-
գամ բղխէ մեզ առ ՚ի նմանէ յառ ածծ քաղաքավարու-
թիւն։ Վանզի կին՝ որ ՚ի կենցաղական հոգս թարթա-
փեալ իցէ՝ և յայսկոյս յայնկոյս ցնդեալ, նմին չիք հնար
հպատակ լինել. քանզի ամենայն ջանք և պարապուն
նորա ՚ի յոգունս բաշխեալ է. յայրն ասեմ, և ՚ի գեր-
դաստանին հոգս, և յայլ ինչ ամենայն՝ զոր միանգամ
զհետ իւր ձգել սովորեցաւ ամուսնութիւն։

Հէ. Ո՞վ ինչ ապա, ասէ, եթէ և կոյսն զբաղումս
իւիք զբաղեսցի, և հոգս ինն ունիցի կենցաղականս։ —
Ո՛ն առեալ դու ՚ի բայ հան զդա ՚ի կուսանաց պարուէ։
Վանզի չամուսնանալն չէ բաւական կոյս առնել զնա.
այլ պէտք են և ողջախոհութիւնք հոգւոյն։ Լսակ ողջախո-
հութիւնք ասեմ, ոչ միայն ՚ի չար և ՚ի պիղծ ցանկութիւնն
անբաժ լինել և ՚ի պճնայարդար զարդուէն և ՚ի հե-
տաքրքիր կրեցն, այլ զի և ՚ի կենցաղական հոգոյս չը-
իցէ. իսկ եթէ այս մերձ ոչ իցէ, զինչ օգուտ իցէ առ
՚ի մարմնոյն սրբութենէ։

Վանզի որպէս չէք ինչ ամենայն քան զզօրականն զայն՝ որ յանձնէն ի բաց եդեալ զվնասն և ի կապելայս դեգերեսցի . այսպէս չէք ինչ առաւել անպարկեշտ քան զկուսանան զայնոսիկ , որ ի հոգս կենցաղականաս պա շարեսցեն զանձինս : Վանզի և հինգքն այնոքիկ՝ միան գամայն և լսելտերս ունելին և ի կուսութեն վարժեալ եին . սակայն և ոչնինչ ի սոցանէ երբեք ոչ օգնեաց նո ցա . այլ դիւօքն փակեալով մնացին նոքա արտաքոյ և կո րեան . Ղուկ . իե . 1 . 12 . քանզի կուսութիդ վասն այնո րիկ է դեղեցիկ , զի զամենայն պատճառս զաւելորդ հոգոյդ ի բաց կտրէ , և դլխովին զամենայն պարա պումն առեալ նուիրէ ածայնոյն գործոյ : Որպէս զի՝ եթէ և զայս ոչ ունիցի , դարձեալ կարի խոնարհագոյն եղիցի նա քան զամուսնուիդ . փուշք ինն խիտ առ խիտ բուսուցանելով ի հոգին , և զանարատն զայն և զերկ նաւորն հեղձուցանելով սերմն :

Տէր . * Պատ եթէ ոք ամեթ համարեսցի , ասէ , վասն կուսին իւրոյ , եթէ իցէ եւեալ ըստ չափ . և այնպէս ինչ պարտ իցէ լինել . զոր կամեսցի արասցէ , ոչ մեղանչէ , ամուսնասցի ‖ : Օ ինչ ասես . զոր կամեսցի արաս ցէ . և ոչ ուղղես ինչ զվերնակ խորհուրդդ , այլ թոյլ տաս ամուսնանալ : Վանզի հիմ ապա չասացեր դու . ապա եթէ ոք ամեթ համարեսցի վասն կուսին իւրոյ , նա հեգ է և թշուառական , որ զայնպիսի աքանչելի քանն իբրև նշաւակ համարեցաւ : Ու ինչ չետուր խորհուրդ՝ ի բաց դնել զկարծիսդ զայդ , և զդուստրն իւր հրաժարեցուցանել յամուսնուէն : Վանզի , ասէ , կարի տկար և գետնաքարշ եին հոգիք նոցա . իսկ որք միանգամ այսպիսիք ոմանք եցեն , չէ մարթ զնոսա վազ վաղակի առնուլ բերել ի ձառս կուսութեն : Վանզի որ ընդ աշխարհայինս ընդ այսոսիկ այնպէս յակձուս կայ , և ընդ կեանս ընդ այս այնպէս աքանչացեալ է , մինչ զի և յետ այնչափ յորդորակին՝ ամեթոյ արժանի համարի լինել զայն ինչ որ երկնից արժանին է և հր բեշտակայնոյն հպատոր քաղաքավարութեն , նա զիարդ հանդարտեսցէ խորհրդոյն՝ որ ի նոյն յանկուցէ զնա :

Ու զինչ զարմանք իցէ , եթէ ի նեբոզական բա նիդ յայդմիկ զայս օրինակ վարեցաւ պաւղոս , այն՝ որ

յարգելեաւն և յօրինազանցն զնոյն գարձեալ արար։ Որինակ լինի՝ խորութիւն առնել կերակրոցն, և կէս մի լնուլ և կէս մի խոտել, այս հրէականին էր տկարու թեան հանդէս. այլ սակայն էին և առ հռովմայեցիսն՝ որք զնոյն տկարութիւնն ախտանային. և նա ոչ միայն ոչ կշտամբեաց զնոսա սաստկութիւբ, այլ և զայլ իմն առաւել գործեաց քան զայդ. քանզի ի բաց թողեալ զյանցսն զուցեալսն, զայնոսիկ՝ որ միանգամ խնդրեինն արգելուլ զնոսա, յանդիմանէ ասելով. * Պատ զի դատիս զեղբայր քո ‖. հռ. ժդ. 10։ Այլ ոչ՝ և յորժամ առ կոսացիսն գրէր, զնոյն գործեաց. այլ իշխանութիբ բազմաւ՝ միանգամայն և յարձակի ի նոսա և խիստ ասելով. * Ով որ այսուհետև զձեզ դատեսցի ուտելով կամ ըմպելով ‖. և գարձեալ. * Լեթէ մեռարուբ ընդ քեզ ի տարերց աշխարհիս, զի՞ և իբրև զկենդանիս սատկն յաշխարհի կրօնաւորիբ։ Այի մերձենար, մի՛ ձայ շակեր, մի՛ հուսկ լնիսը, որ է ամենայն ինչ ի պէտս ա պականութեբ ‖. կող. բ. 16. 20։

Այդ ընդհ գործէ զայդ. քանզի զօրաւորբ էին նա քա. իսկ հռովմայեցւոցդ տակաւին բազում նեբողութե պէտբ էին. և ակնկալեալ մնայր նա՝ զի նախ հաստատ մնատ եղիցին հաւատբ ի հոգիս նոցա. զանգիտեալ՝ զի մի թերևս տարաժամ վաղագոյն քան զարժանն ձեռն արկեալ ի խլել զորոմնեան, ի միասին ընդ նոսա արմատաբի խլեսցե և զտունկս ողջախոհ վարդապետութե։ Յայտագս այսորիկ ոչ սաստկութբ ինչ ընդհ առ նոսա, և ոչ գարձեալ գլխովին անկշտամբելիս արձակեաց զնոսա. այլ յարձակի ի նոսա՝ բայց ան կարծս իմն և թաքնաբար և այլոցն յանդիմանութբ։ Քանզի յորժամ ասէ, * Ուրուք ոք կայ կամ անկանի ‖, թուի իմն այնպէս՝ եթէ կարկէ զբերան բամբասողին նորա. սակայն ձգմնարտութբ կծանէ զանձն նորա. յայտ արարեալ՝ եթէ որ միանգամ յայսպիսեաց ինչ յանձին կալեալ իցէ, նա ոչ ի հաստատանոց ոք է, և ոչ յակաստանի կացելոցն, այլ յորոց տակաւին ի սասա նութեան կան. որ զի եթէ երբեք ոչ հաստատեսցեն զոտս, ի վտանգի կան և անկանելոյ։

Ընդոյն զայն օրէնսն և աստանօր պահէ նա վասն բա զում տկարութե նոցա՝ որք ամենի անձանց համարէին

զգործն զայն . քանզի ոչինչ յայտնապէս յարձակի՛ ի նա . այլ գովուբք նորա՝ որ պահէ զկոյտն իւր , հարուած իմն ուժգնակի տայ նմա : Վանզի զի՞նչ ասէ . * Լոկ որ հաստատեալ է՛ ի սրտի իւրում ‖ . իսկ զայս ասէ , վասն անջրպետ արկանելոյ ընդ մէջ նորա՝ որ հեշտին և դիւրսւ տարուբերի , և չէ եւս գիտէ հաստատունս ընթանալ , և ոչ քաջապէս արիւնթբ կալ ինալ :

Այլ ապա յետ այսորիկ՝ քանզի գիտաց եթէ բաւական է և քանն այն խածանել զանձն նորա , տէս զիարդ դարձեալ պատրուակէ զայն , պատճառս իմն՝ ի վերայ բերելով ոչինչ կարի սակաւանաց արժանի : Վանզի իբրեւ ասաց , * իսկ որ հաստատեալ է՛ ի սրտի իւրում ‖ , ածէ՛ ի վերայ , * և վասնզ ինչ ոչ իցէ նմա , իշխանութիւն ունի ‖ : Այս այն զի՛ ի ձահ իսկ պատահէր արդեօք ասել , իսկ որ հաստատեալ է՝ նա ոչինչ ամենի համարի զգործն զայն : Սակայն այս առաւել իմն հարկանէր , վասն որոյ այլ իմն փոխան այնորիկ յաւել՛ ի վերայ՝ սիրելեաւ մատուցանելով նմա , և տալով նմա մննաւանդ զսովինն գալ պատճառաւ : Վանզի ոչ այնչափ դժնդակ է՛ ի պատճառս հարկին խափանել՛ ի գործոյ անտի , որպէս՛ ի պատճառս ամենեցուն : Վանզի առաջինդ անարի և հիգացելոյ անձին գործ է . իսկ վերջինդ խեղճութիւր անձին , և որ ոչն գիտայ զբնութիւնն իրացդ ուղղապէս դատել :

Այլ տակաւին չէր ժամանակ այսպիսեաց բանից . քանզի և ոչ՛ ի տիպել հարկին՝ օրէն է արգելուլ ըզհինն՝ որ ընտրեաց՛ ի կուսութեէ կալ . այլ պարտ է քաջաբար զդէմ ունել ամենայնին՝ որ միանգամ խոչընդոտն լինիցի գեղեցիկ ընթացից այսոցիկ . լուր զինչ քո ասէ . * Որ սիրէ զկայր կամ զմայր առաւել քան զիս , չէ ինձ արժանի ‖ . Մտ . ժ . 37 . քանզի յորժամ ինչ մի՛ ի հաձոյիցն ոմն զանձամբ առնուցուաքք , ամենայն՝ որ միանգամ յայմանէն խափանեսցէ զնոսա՛ ի թշնամիս հանդերեսի մեզ և՛ ի հակառակորդս , թէպէտ և հայր լիցէ , թէպէտ և մայր , թէպէտ և ո՛ րք միանգամ և իցէ :

Այլ պաւղոս տակաւին համբերելով լսելեացն անկատարութե , այսպիսի ինչ գրէ ասելով . * Լոկ որ հաստատեալ է , և վասնզ ինչ ոչ իցէ նմա ‖ : Այս ոչ դարձեալ մինչև ցայս վայր զգաստութեցոյց զբանն , թէպէտ և

այդ քանիդ՝ վտանգ ինչ ոչ կայցէ նմա, և իշխանութեանն ունի, ի նոյն հայիլն. այլ երկայնութեաբ ձառին և առ դուլութեաբ ներոզութեանն միթեաբ մատուցանել անկատար և կարճ մնացն. լետ այսորիկ և այլ ինն պատճառս ի վերայ բերելով, եթէ * որ ընտրեաց ի սրտի իւրում ‖. քանզի և չէ իսկ բաւական ազատ լինելոյն, և ոչ դարձեալ յայսմանէ միայն պարտական լինի. այլ յորժամ ընտրեսցէ և դատեսցէ, յայնժամ գեղեցիկս գործէ։

Իսկ ապա զի միւ թերևս ի պատճառս բազում նեբոզութեանն կարծեսցես ինչ՝ եթէ ոչինչ է խոտոր ընդ նոսա, դարձեալ միւսանգամ զանջրպետն ի մէջ արկանել. և թէպետ և զանգիտել, այլ սակայն և արկանել ասելով. * Այլ որ ամուսնացուցանէ, բարւոք առնէ. և որ ոչն ամուսնացուցանէ, լաւ ևս առնէ ‖. այլ եթէ քանիծն լաւագոյն իցէ՝ ատտանօր նա ոչինչ լաւագոյնէ վասն նորուն պատճառի. ապա եթէ կամիս ուսանել, լաւ քեզ որ ասէ. * Ոչ կանայս առնուն և ոչ արանց լինն նոքա. այլ են իբրև զհրեշտակս յերկինս ‖. Մտթ. ԻԲ. 30։ Տեսեր զկնարն, ուրանօր յանկարծակի առեալ զմնայ կանացուն բարձրացոյց կուսութեանն, եթէ միայն ձգնաբիտ իցէ կուսութիւնն։

Հե. Պանզի իբր իւիք, ասա ինձ, ընդհատ ի հրբեշտակաց էին եղիա, եղիսէ, յովհաննէս, Տարազատքն այնոքիկ կուսութենէն տարփացողք։ Ոչինչ իւիք, բայց որչափ ինչ կապեալ էին ընդ մնհկանացու բնութեաս. իսկ եթէ և զայնն բովանդակ ձգտիւս ոք ի քննութեն առցէ, նոքիմքք ոչինչ խոնարհագոյն գացէ գնոսա. և այն ևս որ խոնարհութեն կարծէր ի նոսա, մեծապէս գովութեն ի ներքս ածէ նոցա։ Պանզի եթէ ասասկն յերկրի բնակեալ և ընդ հարկաւ մնհկացու բնութեաս գբաւեալ՝ բաւական եղեն ժամանել առաքինութեանն այնմիկ, Տայեաց դու ինձ՝ եթէ քանի արիութեան էր հանդէսն, քանիօն խնամատարութեն։

Իսկ եթէ կուսութիւդ գլխովին այսպիսիս ամենս յարդարեաց զնոսա, անդուստ քաջայայտ է. զի եթէ կա նայք էին նոցա և մանկունք, ոչինչ այնպէս հեշտեաւ յանապատս օթատայիչն նոքա. և ոչ արդեօք զատմիք

և զայլովք ևս հանդերձանօք կենացս արհամարհին ինչ։ Իսկ այժմ առհասարակ ի կապմանց աստի լուծեալք, իբրու երկնաքաղաքացիք քաղաքավարեին յերկրի. ոչ որմոց ինչ պիտոյ էին նոցա, ոչ ձեղուան, ոչ անւ կողնոյ, ոչ սեղանոյ, և ոչ այլ իմիք յայսպիսեաց աստի. այլ փոխան ձեղուան ունէին զերկինս, և փոխան անւ կողնոյ զերկիրն, և փոխանակ սեղանոյ՝ զամպուրեն աւ նասպատին. և որ այլոց պատճառս սովու կարծէր լինել՝ անպտղութեն անապատին, նոյն զսուրբսն զայնոսիկ ի լուութեն հանդուցանէր. քանզի ոչ այգեաց պէտք ինչ էին նոցա, և ոչ մարդոյ, և ոչ արմտեաց, և ոչ հնձոց. այլ զմնկեղին նոցա առատ և քաղցր մատուսակէին աղբիւրք և գետք և լիճք։ Իսկ սեղան միւմ՝ի նոցանէ հրեշտակ պատրաստեաց նոր և չքնաղ և քան զմարդկան սովորութեն վեհապոյն. քանզի մի նկատնակ սակ, բաւական եղև յանսուաղութիւն աւուրց քառասնից. Ձ. Լգ. ՃԸ. 8։

Իսկ զմիւսն աքանչելագործ շնորհք հոգւոյն քաղցմ անգամ կերակրեաց. և ոչ վնա միայն, այլ և զայլս ևս ի պատճառս նորա։ Իսկ յովհաննէս առաւելն քան ըզմարգարէ՝ քան զոր ոչ ոք մեծ յարեաւ ի ծնունդս կանանց, և ոչ մարդկայնոյս ինչ կարօտացաւ կերակրոյ. քանզի ոչ ցորեան և գինի և իւղ, այլ մարախք և մեղր վայրենի պահպանէին զկեանս մսրմնոյ նորա։

Տեսեր զհրեշտակս երկրաւորս, տեսիր զզօրութիւն կուսութեն. որք յարեանէ և ի մսրմնոյ զանպէսք էին, որք առ գետնովս քերէին, որ մահացու քնութեէ հարկի ի նեղջոյ անկեալ էին, զնոսա իբրև անմարմինս, իբրև սատն երկնից ժառանգորդս, իբրև սմանահուէ հաղորդս՝ այնպէս յարդարեաց գործել զամենայնն։

Ձ. Վ՚անզի ամենայն ինչ առնոսա յաւելորդաց ծաւկի էր. ոչ միայն որ բնաւ իսկ աւելորդք են, գրգանք, և ընչաւետութեէ, և իշխանութեէ, և փառք, և բովանդակ այլ կարգ անբնոյդ այդոցիկ, այլև որք միանգամ ի կարևորացն կարծին լինել, տունք, և քաղաքք, և արուեստք։ Այս է պարկեշտութեէ և հպատակութեէ, այս է կուսութեէն առաքինութիւն։ Վ՚անզի ապաքէն ոքանչելի է և բազմոց պատկաց արժանաւոր՝ խորտա-

կել զթափ ցանկութեցն և սանձել զմոլեգին բնութիւն. այլ յայնժամ եղիցի գլխովին աբանչելի, յորժամ այսօրինակ կեանք մերձ իցեն. իսկ ինքն առանձինն տկար է և ոչինչ է բաւական փրկել զսատոյդս իւր։

Եւ վկայք մեզ աստանօր կայցեն նոքա՝ որք և արդ իսկ հրահանգեալ են ի կուսութենէն. այլ այնչափ ինչ հեռի են յեղելոյն և յեղեսն և ի յովհաննէ, որչափ և երկիր յերկնից։ Վասնզի որպէս՝ եթէ զպարկեշտութիւնն և զկատարելութենէն ի բաց զերծցես, հատեր կարեցեր դու զքրիստոս կուսութեանն, այսպէս՝ եթէ կալցես դու զդա ի միասին ընդ գեղեցիկ քաղաքավարութեան կենաց, ունիս առ քեզ զարմանն և զպատձառս բարեաց։ Վասնզի զսրօրինակ երկիր արգաւանդ և բերրի գիտեն անուանել զարմանն, այսպէս և քաջիկ քաղաքավարութիւն կենաց՝ զպատուոյս կուսութեանն. մանաւանդ թէ՝ միանգամայն և արմատ և պտուղ կուսութենէ է կեանք ի խաչ ելեալ։ Այս զքաջասիրտսն զայնոսիկ օծ առ աբանչելի ընթացսն, զամենայն զկապանսն խզեաց առ ի նոցանէ, և քաջարձակ և թեթև ոտիւք իբրև զեւս առ արձակեաց թռչել ի յերկինս։ Վասնզի ուր ոչ դարմանք են կնոջ և ոչ հոգ տղայոց, անդանօր կարի հեշտին է անընչութենին։ Իսկ անընչութենին զմեզ մերձաւորս առնէ երկնից, ոչ յերկիւղէ միայն ազատեալս և ի հոգոց և ի վտանգից, այլ և միանգամայն յամենայն անձկութենէ։

Ձա. Վասնզի որ ոչինչ ունի, իբրու այն թէ զամենայն ինչ ժառանգեալ ունիցի, այնպէս զամենայն արհամարհէ. և համարձակութեի բազում ի վար արկանէ՝ առհասարակ և առ իշխանս, և առ նախարարս, և առ թագաւորակն ինքնին գլխովին։

Որ զընչիւքն արհամարհէ, նա տակաւ տակաւ յառաջադէմ գնացեալ՝ և զմնացն հեշտեաւ արհամարհեսցէ. և վեհագոյն եղեալ այսոցիկ, այնուհետև և ընդ ամենեցուն ազատօրէն բարբառի, ոչ յումեքէ ինչ զանգիտէ, և ոչ ի մարդոյ զդողանի երբէք հարկանի։ Իսկ որ միանգամ չինչս թարթափեալ իցէ, նա ոչ միայն ընչիցն ծառայ է, այլ և փառաց և պատուոյ և ամօթ կենացս, և միանգամայն ասել՝ ամենայն կենցաղական

նացս այսոցիկ ։ Այսն այսորիկ արմատ վնաս ամենայն չարեաց կոչեաց պաւղոս ։

Ա.ՀԼ բաւական է մեզ կուսութիւն՝ զարմանալ զայդ գօսացուցանել, և այլ ինն ի մեզ՝ և գեղեցիկ հարս տեղ՝ առհասարակ բոլորից բարեաց բուսաբեր, ազա տութիւն, անվհերութիւն, արիութիւն, բորբոքեալ նախանձու, ջերմեռանդն սիրոյ երկնաւորացն, երկրաւորացս ամենայնի արհամարհութեան ։ Ա.յսօրինակ յարդարի պարկեշտութիւնն և հպատակութիւնն ։

Ձե. Ա.ՀԼ զինչ իմաստուն բարբառն բազմաց. — Ահապետն, ասէ, աբրահամ միանգամայն և կանայս ունէր և մանկունս և ինչս և հօտս և անգեայս. և ի վերայ այսր ամենայնի՝ յովհաննէս եթէ մկրտիչն, և եթէ աւետարանիչն՝ երկոքեան և կուսանք. և պաւղոս և պետրոս ի ժուժկալուէ շքեղք՝ փափագեն ի գոգն հանգչել նորա ։ — Այո՞ ոք ապա զայդ ասաց քեզ, ոմ քաջդ. որ մարգարէ, որ աւետարանիչ ։ Ինքն իսկ, ասէ, քո ։ Վանզի տեսեալ զՏարխրապետն՝ զի բազում ունէր հաւատս, ասաց, եթէ՝ * Կաղումք յարևելից և յարևմտից եկեսցեն և բազմեսցին ընդ աբրահամու և ընդ սահակայ և ընդ յակովբայ ։ Մտթ. Ը. 11. և զդա զարոս դարձեալ ընդ նմա ի գրգանս տեսանէր մեծաւ տունն ։ — Այո զինչ այդ առ պաւղոս. իսկ զինչ առ պետրոս. և զինչ առ յովհաննէս. քանզի ոչ զազարոն այն՝ պաւղոս և յովհաննէս էր. և ոչ դարձեալ բազումքդ այդ յարևելից և յարևմտից՝ էին պարք առաքելոց ։ Ուրեմն աւելորդ է ձեզ և տարապարտուց բանդ այդ ։

Ա.պա եթէ կամիս լսել զառաքելոցն մրցանակս, լուր դու նմա՝ որ հանդերձեալն է բաշխել զայնոսիկ. * Այսպէս, ասէ, յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգս իսրայէլի ։ Մտթ. ԺԹ. 28 ։ Ա.յդ աստա նօր չիք ուրեք աբրահամ, և ոչ նորա զաւակն, և ոչ նորա թոռունն, և ոչ ասպնջական նոցուն գոգն. այլ փառք ինն կարի բարձրագոյն քան զայն. քանզի ըզծնունդս նորա նատցին նոքա ի դատել ։ Այո ոչ այդ միայն է քաջայայտ խտրոց, այլ զի և բազումք վիճակեսցեն այնոցիկ՝ որոց աբրահամն վիճակեցաւ. քանզի

քաղաքն ասէ Եկեսցեն և բազմեսցին ընդ աբրահամու և ընդ սահակայ և ընդ յակովբայ. իսկ զաթոռան զայնոսիկ ոչ ոք այլ հասեալ կալցէ, բայց միայն սրբոցն այնոցիկ պարտ։

Այլ արդ ածէ դուք տակաւին յիշատակ առնէք զՀօտիսին և զանդէոցն և զամենանութեանն և զզատակայն։ Ո՞ինչ ասա, ասէ, յորժամ քաղաքն ի կուսանացս անտի կեաս քաղմադէմ քրտանցն փափաքեն գալ այդր։ — Այլ ես մեծ ևս ինչ ասացից քան զայդ. եթէ բազաքն ի կուսանացն հանդերձեալ են և ոչ գոգոցն այնոցիկ հանդիպել և ոչ խնարհագունից ինչ քան զայդ. այլ ի նոյն իսկ ի գՀեհենն առաքիլ. և զայս յուցանեն յայտնութիւք կուսանքն՝ որք արտաքոյ մնացին հարանարանին։ — Այսպա ուրեմն և գորին աղագաւ հաւատար է ամենանութիւնն ընդ կուսութիւնն, կամ թէ սա և վտանարագոյն։ Վանզի օրինակդ քո այդ վտանարագոյն ևս գործեաց զնա։ Ո՞վ թէ աբրահամ կանամբին ի հանգստեան է և ի գրգանս, իսկ կուսանքդ ի գՀեհենի, այս իմաստ ի բանիդ այսի ձերմէ ինքնին յառաջ գայ։ — Այլ սակայն չէ և չէ այդպէս բանդ. զի ոչ եթէ խնարհագոյն ինչ ոչ է կուսութիւնն քան զամենանութիւնդ, այլ և կարի պատուականագոյն է։ — Ո՞իարդ։ — Իբրև զի ոչ ամենանութիւնն զաբրահամ այնպիսի գործեաց. և ոչ դարձեալ կուսութիւնն զՀոգացեալ կուսանսն զայնոսիկ կորոյս. այլ զնահապետան զայն՝ բազմազակ առաքինութիւն հոգւոյն շքեղ յարգասբեաց, և զկուսանսն զայնոսիկ՝ բազմազակ չարութիւն կենացն ի հուրն մատնեաց։ Վանզի նա՝ և յամենանութիւնէ անդ կեցեալ, գուն գործեաց նահատակել ի բարիս կուսութիւնն, ի պարկեշտութիւնն ասեմ և ի հալատակութիւնն. իսկ սոքա՝ և զկուսութիւնն գիրկս արկեալք՝ ի ծուփս անկան կենցաղոյս և ի զբաղանս ամենանութիւնէ։ — Ո՞ինչ ասա, ասէ, արգելու և այժմ հանդէպ ամենանութիւք և մանկամբք և ընչիւք և այլոցին առնայիւք՝ պահել զՀպատակութիւնդ զայդ։ — Ոչ. զի չէ որ այժմ հանգուցնատիպ աբրահամու, նա և ոչ փոքր ի մեբձաւոր նմա։ Վանզի նա և ինչս ունէր լալ և կին՝ առաւել քան զայնոսիկ որք յանբնչութեան կրթեալ լեան՝ արհամարհեաց զինչս, և առաւել քան

զկուսանս՝ սանձեաց զհեշտութիւնն ։ Պոքա զօրհանապազ վառին ցանկութիւն. իսկ նա այնպէս խնդ շնջուցեալ էր զբոցն զայն և ամենևին ազատացեալ յամենայն տուփա նաց , մինչ զի ոչ միայն ի հարձէն հրաժարեալ էր , այլ և ի տանէն մերժէր զնա . զի զամենայն պատճառս կտրուցց և զգաստութեամբ ի միջոց բարձցէ ։ Իսկ այժմ ոչ այնպէս հեշտին ինչ է գտանել զայդ ։

Ձ. Իսկ առ այս դարձեալ, որպէս և յառաջագոյն ասէի , զնոյն և արդ ասացից , եթէ՝ ոչ զնոյն չափ ա ռաքինութեամբ պահանջիմք մեք և նոքա ։ Վասնզի արդ չիք կատարեալ լինել, եթէ ոչ զամենայնն վաճառեա ցէ , եթէ ոչ յամենայնէն հրաժարեսցէ , ոչ լրնչէցն ա սեմ միայն և ի տանէ , այլ և յանձնէ իսկ իւրմէ ։ Իսկ յայնժամ չև էր այսչափ ձգգրտութեամբ հանդէս ։

Այլ զինչ ապա , ձգգրտագոյնս ուրեմն մեք , ասէ , կեսմք այժմիկ քան զնահապետն ։ — Պարտ էր մեզ , և զայն հրամայիմք . սակայն ոչ կեսմք . և վասն այնո րիկ այնչափ ի բացեայ մնացաք յարդարոյն յայնմանէ ։ Վասնզի եթէ մեծ ևս մրցանք հանդերձեցան մեր ա ռաջի , այս քաջայայտ է ամենեցուն ։ Յաղագս այսորիկ և ընդ նոյ՝ սքանչացեալ գիրն , ոչ պարզաբար վարէ զբանն , այլ հանդերձ յաւելուածով. քանզի * Այդ , ա սէ , արդար , կատարեալ էր յազգի անդ իւրում, և հա ձոյ եղև ՚ցյ ‖ . ՟Ն . Ը . 9 . ոչ պարզաբար կատարեալ, այլ յայնժամ ի ժամանակին յայնմիկ ։

Վասնզի բազմադիմի են կատարելութիւնք յեղանակք ըստ զանազանութեան սահմանեալք ժամանակաց . և որ էր քեմն կատարեալ, ապա ի յառաջ խաղալ ժամանակին՝ լինի անկատար ։ Օրինակ ինն . էր երբեմն , զի կատա րեալ էր՝ որ միանգամ ըստ օրինացն վարէր կեանս . զի *որ արասցէ՝ ասէ, զայնոսիկ , կեցցէ ի նոսին ‖ . Ղեւ. ՟Ը. 5 . այլ քո եկեալ՝ զկատարեալն զայն անկատար յանդի մանեաց . * Օ՛ եթէ ոչ առաւել ևս լցցու , ասէ , արդարու թիւր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց , ոչ մտանիք ցեք յարքայութիւն երկնից ‖ . Մատ . Ե . 8 ։ Յայնժամ մար դասպանութեանն միայն կարծէր լինել ի գժնդակացն . իսկ այժմ և բարկութեանն և թէնամանքն միայն բաւական են ձգել վարել ի գեհեանն ։ Յայնժամ ընդունին միայն

պատուհաս ընդունէր. իսկ այժմ և յաւուրս աչօք հայել ի կին մարդ՝ ոչ հեռի ինչ է ի տանջանաց։ Յայնժամ երդմնահարութիւն միայն էր ի չարէն, իսկ այժմ և երդումն. * զի աւելին ասէ քան զայն, ի չարէն է ‖. Տոն. Ե. 37։ Աչինչ աւելի յայնժամ պահանջէր ի նմա յանէ, բայց սիրել զսիրելին. իսկ այժմ մեծդ այդ և աքանչելիդ այնչափ ինն յանկատարիչ մասին է, մինչ զի և ի կատարել մեր զայդ՝ ոչինչ աւելի ունել մեզ քան զմնաքսաւորս։

Ձե. Ուր աղագաւ ասա՝ նոցուն հանդիսից առաքինութիւնք ոչ նոյնօրինակ վարձուց փոխարկին հանդերձեցան՝ մեզ և որոց ի նախնումն. այլ մեծ ևս առաքինութիւն մեզ պարտ է ի ներքս բերել, եթէ նոցայոցն կամիցիք հանդիպել։ — Վանզի արդ բազմապատիկ է հեղեալ հոգւոյն ընորհք, և պարգևք մեծամեծք քան գալստեանն. քանզի փոխան տղայոց իբրև արս հասա կաչափս եղ զմեզ։

Նա արդ որպէս մեք ինքնին ի մանկանց մերոց՝ յորժամ յարբունս հասեալ իցեն՝ մեծ ևս առաքինութիւնք հանդէս պահանջեմք. և որք վառաջին գործս նոցա ի գովութիւն առնուաք ըստ առաջին տիոց նոցա, եթէ երթեք և յայրական հասակի կատարեսցեն զնոյն, ոչ ևս նոյնպէս աքանչանամք ընդ նոսա. այլ այլ ինչ ևս կարի բարձրագոյն հրամայեմք նոցա ցուցանել յանձինս. այսպէս և ի մարդկային քնութիւս յառաջին անդ ժամանակս ոչ մեծամեծ ինչ ուղղութիւս պահանջէր ած. իբրև զի մանկագոյն ղգածեալ էր նա կրիւք։ Իսկ իբրև լուաւ մարգարէին, առաքելոցն, ընկալաւ ըզընորհս հոգւոյն, ի վերոյ բարդեաց նմա զմեծութիւնն հանդիսին առաքինութեան, յայնժամ ասա յիւրաւի։ Վանզի և փոխարկնս ինն վարձուց մեծամեծս՝ և մրցա նակս կարի առաւել շքեղս եղ այժմ առաջի մեր. զի ոչ ևս երկիր և երկրաւորք, այլ երկինք և բարիք ինն քան զմիսս գերազանցեալք՝ աւանդեալ ինայ առաքինի նահատակացն։

Օ իարդ ասա ոչ դժպատեհ իցէ տակաւին ի տղայութեան անդ կալ ինալ այրացելոցն։ Վանզի յայնժամ մարդկային քնութիւս հերձեալ էր ընդդէմ իւրոյ ան-

ձինն, և մարտ ինն յարդարեր անողոքելի։ Աւ զսոյն պատուիրս պատմէ մեզ՝ ասելով այսպէս. * Ահայց տեսա նեմ այլ օրէնս յանդամն իմ, զինեալ հակառակ օրինացն մերոց իմոց. և գերեալ զիս օրինաքն մեղաց՝ որ են յանդամն իմ ‖. հռ. Է. 23։ Ահակ այժմ այդոքիկ չեն՝ ի միջի. * Օ՛ի որ անհնարին եր օրինացն՝ որով տկարացեալ մարմնով, ած զորդին իւր առաքեաց՝ ի նմանութիւն մարմնոյ մեղաց՝ և վասն մեղաց. և դատապարտեաց զմեղս՝ ի մարմնի անդ ‖. հռ. Է. 3։ Աւ յաշագս այսոցիկ հնարէս ունելով ասէր. * Ա՛յր մի տառապեալ եմ ես, ո՛վ ապրեցուսցէ զիս՝ ի մարմնոյ աստի մահու։ Ա՛յլ հնարէք ո՛չ՝ ի ձեռն յոի քեի ‖. հռ. Է. 24։

Ո՛ան այնորիկ և յիրաւի տանջիմք, զի ո՛չ կամիմք լուծեալքս՝ հաւասար ընթանալ ոտնակապելոցն։ Ա՛յլ թէպէտ և հաւասար եցեմք ինչ, սակայն և ո՛չ այնպէս ապրիմք՝ ի պատուհասէն. քանզի որք միանգամ՝ ի խորին խազաղուէ վայելեն՝ պարտ է նոցա կարի և փութաւոր նշանս յաղթութէ կանգնել և առաւել շքեղս, քան զվշտացեալսն՝ ի սատիկ պատերազմին։

Ա՛պա եթէ կինչս թարթափեացուք մեք և՝ ի գրգանս և՝ ի կանսյս և՝ ի զբաղանս գործոց, երբ ապա դարձցուք և եղիցուք արք. երբ կեցցուք հոգւոյն, երբ հոգացուք զինէ. թերևս յորժամ աստի՝ ի բաց չուիցեմք, այլ ո՛չ ևս է ժամանակ՝ ո՛չ քրտանց և ո՛չ մրցանաց. այլ պսակաց և տանջանաց։ Յայնժամ թէպէտ և կոյս ոք իցէ՝ ո՛չ ունելով իւղ՝ ի լապտերս, ո՛չինչ կարող իցէ յայլոց անտի առնուլ. այլ արտաքոյ մնասցէ։ Ա՛թէպէտ և հանդերձս աղտեղիս սրկեալ զանձամբ՝ մերձ կացեալ իցէ, ո՛չինչ կարասցէ ելանել արտաքս և փոխել զհանդերձն. այլ՝ ի գեհենին՝ ի հուր մատնեսցի։ Ա՛թէպէտ և զաբրահամ ինքնին աղաչեսցէ, ո՛չինչ նմա օգտեսցէ այնուհետև։

Վ՛անզի յորժամ՝ օրն տիրական առ դուրս հասեալ կայցէ, և առեանն կարգեսցի, և դատաւորն բազմեսցի, և գետ հրոյն յորդեալ ելցէ, և մեզ գործոցն քննութէ եղիցի, ո՛չ ևս այնուհետև թոյլ ինչ է մեզ ջնջել՝ ի միջոց ցանցառս մեր, այլ ընդ նոցուն պարտեացն միայն՝ ի տանջանս եթէ կամայ և թէ ակամայ՝ վարեալ ձգեսցուք մեք. և ո՛չ ոք յայնժամ բաւեսցէ միջնորդ փրկու-

թէ լինել մեզ. այլ թէպէտ և զհամարձակութիւն ունիցի ոք զմեծացն արանց և զհրաշալեաց, թէպէտ և նոյ, թէպէտ և յովբ, թէպէտ և դանիէլ ինքնին, վասն ուստերաց յողբք անկցի և վասն դստերաց, ոչինչ օգտեսցէ. այլ հարկ ՚ի վերայ կայ այնուհետև մեղաւորացն՝ անմահ տանջանք, և առաքինեացն՝ անվախձան փառք:

Այլ զի ոչ սոցայոցն վախճան լինել է, և ոչ նոցայոցն, ինքնին քո յայտնութիւն եցոյց, յորժամ հաւատարմիս կեանս իմն կոչեաց յաւիտենականս, և տանջանս յաւիտենականս. քանզի զաջեայն գովութիւն առեալ ինքն՝ և զահեկինան դատապարտեալ, ՚ի վերոյ եբեր՝ ասելով. * Այրթիցեն նոքա ՚ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն ՚ի կեանսն յաւիտենականս ‖. Մտթ. ԻԵ. 46: Այրին աղագաւ աստէն պարտ է սրտի մտաք վաստակել. որ միանգամ կին ունիցի, այնպէս կեցցէ՝ որպէս թէ չունիցի. իսկ որ զլռովին չունիցի, ընդ կուսութեն և յայլ ամենայն առաքինութիւնս միանգամայն կրթեսցէ զանձն. զի մի թերևս յորժամ աստի ՚ի բաց ելանիցեմք, զնոր տարապարտ կոծեսցուք:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԲԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

Նախադրութեն չնաշխարհիկ և գերահուչակ գրոցս քահանայութեանս առնուամբ՝ ի նմին իսկ յապաշաբանէ սկսեալ Ոսկեբերանին՝ Քանզի բազում առաջինն՝ ի բարեկամս Ոսկեբերանի, և նմին վարժապետեալ աշակերտեալ և՝ ի նոյն ուսմունս պարապեալ ընդ Ոսկեբերանի, իբրև ինդրեր մենակեաց կեանս վարել, Ոսկեբերան թարթափեալ գոլով յատենական հրահանգս աշխարհի և՝ ի գործս տեսարանաց՝ հրաժարեր՝ ի նմանէ: Ա՛յլ Բասիլիոս՝ որ մեծապէս ցանկայր կենակցութեանն ընդ նմա, հուսկ ուրեմն հաձեցոյց զնա թողուլ իւրաքանչիւր զաւուն և միասն բնակել ընդ միմեանս: Մայրն Ոսկեբերանի իրազգած եղեալ բանիս, հնարի համոզել զորդին կալ առ նմա մինչև ցմահ իւր. և լինի կամապիւտ: Իսկ իբրև գարձեալ յատաջին խորհուրդն ձեպէր զնա Բասիլիոս, լուր առին երկոքին նոքա՝ եթէ յեպիսկոպոսուէ ունին ձեռնադրել զնոսա. խոովեալք՝ ի համբաւոյ սասի՝ կրկնակի խորհուրդ կալան երկոքեանն՝ հակառակս միմեանց: Բասիլիոս բովանդակ զգործն ապաստան արար՝ ի կամս սերտ բարեկամին, թէպէտ և հրաժարել սպրտ էջէ, թէպէտ և յանձն առնուլ. իսկ Ոսկեբերան զանձն գլխովին անարժան համարեալ աստիճանին այնմիկ՝ և զբարեկամին իւր ամենևին արժանի, գեղեցիկ հնարիւք վարեցաւ առ նա, աւելով՝ եթէ առ այժմ յապահովս լեր, և ապա խորհեսցուք զկրացդ: Մինչ այս՝ մինչ այն՝ լինքն Թաքուցեալ զանձն, յանզգոյշս ետ Բասիլիոսի ձեռնադրել յեպիսկոպոսութիւնն՝ Թէպէտ և յակամայ կամս նորա: Յայսմանէ՝ ի վեր ելին ապա բազմադիմի գանգատանք Բասիլիոսի առ Ոսկեբերան, և պատասխանիք Ոսկեբերանի առ Բասիլիոս՝ բազմահնարք և ճոխմատոյց յաղագս բովանդակ մասանց պաշտաման քահանայութե. որով և իբրև տրամախօսութեն յարդարեալ են ոչխոյն վեց գիրք քահանայութե:

Ա՛յլ խնդիր է՝ ի տեղւոջս յաղագս ժամանակի պատմութե անցեալս այսոցիկ. յաղագս բասիլիոսի բարեկամին Ոսկեբերանի եթէ ո՞ք էր, և որո՞յ քաղաքի եպիսկոպոս. և յաղագս ժամանակի՝ յորում զգիրս զոյս սոսկ արձանագրեաց Ոսկեբերան: Յաղագս ժամանակի պատմութե անցելս հաւաստի է՝ որպէս և լինքն Ոսկեբերան վկայէ, եթէ պատահեցան յայնժամ՝ յորժամ տակաւին լինքն Թարթափեալ էր՝ ի հրահանգս ատենականս և՝ ի զբօսանս տեսարանաց. և եթէ այս այսպէս, ապա ժամանակ պատմութեանս է նախ քան զամն 375. յորում հրաժարեալ նա յաշխարհէ՝ ամս վեց խաւսմբերութե հանդարտեցաւ յանապատի. և յետ այնորիկ գարձեալ՝ ի հայրենիսն՝ ոչ ևս պարապեցաւ երբէք յաշխարհականս: Հաւաստի է գարձեալ ըստ նորուն վկայելոյ, եթէ՝ ի ժամանակի պատմուես այսորիկ՝ ոչքոյն հրաժարական առեալ էին երկոքեին նոքա վարժապետաց իւրեանց, որոց վերջինն եղև Դիոդորոս անտիոքացի կամ տարսոնացի, ընդ որով աշակերտեալ էին յամին

371 · ուստի և 'ի ժամանակագրութիւնս յայտ է, եթէ ժամանակ պատմութեան է 'ի միջոցի ամացս 372 և 375 ։

Յաղագս այսր Բասիլեոսի, եթէ ո՛ր էր և որպ քաղաքի էպիսկոպոս, Սոկրատ՝ որում ապա զհետս ընթացան այլք, ասէ լինել զմեծն Բասիլեոս կեսարացի · այլ ակնյայտանի կայ անտեղութիւն բանին · զի սա բազմիք երկցագոյն էր ժամանակաւ քան զՍոկրեբերան և ոչ աչս կերտակից նորա, և ոչ դարձեալ յանտիոք ձեռնադրեցաւ · զինչ ևս · քանզի յայտնդիման է յայսմիկ վերոգրեալն Սոկրատայ ։ Այլ և ոչ փոս ՀՀմարիա ինչ է, որ զայս Բասիլեոս ասէ լինել զսեբևկիացին, որ յամի 451 էր մի յեպիսկոպոսաց Ժողովոյն քաղկեդոնի, բազմաք կրասերագոյն քան զՍոկրեբերան ։ Եւ և որք կարծեն, եթէ մեքսիմոս բարեկամ Ոն կերբերանի նմին իցէ ընդ այսմ Բասիլեոսի · այլ որք զայս ասեն, ոչինչ ասեն ։ Ապա առաւել հաւանական դատիմք զկարծեան Մ՚ոնֆբօնի · եթէ սա այս Բասիլեոս է, որ 'ի մանուսար Ժողովի կոստանդնուպոլսի յամի 381, առորագրի Բասիլեոս եպիսկոպոս ռափանեայ · և ռափանիա էր 'ի սիւրիա մերձ յանտիոք · յորմէ և յաձախ մոբթի էր Ոսկերբերանի դնալ յայցելուն բարեկամին և բնակակից լինել ընդ նմա և խոսակից · ըստ որում 'ի վախճան արամախօսութեան գրոցս խնդրէ Բասիլեոս ՀՀոկերբերանէ ։

Իսկ յաղագս ժամանակի մատենագրութե գրոցս քահանայութե, որք ասեն՝ եթէ 'ի նմին իսկ 'ի ժամանակի անցից իրացս գրեալ իցէ զայս Ոսկերբեան, ոչինչ հաւանական յառաջ բերին · քանզի սկիզբն գրոցս ցուցանէ զանցանել ինչ ժամանակաց 'ի վերայ · և զի բովանդակ կարգ բանիցն զայն ինչ 'ի գէմն բերէ, եթէ ժամանակի յերկարութե և բազմագէմ մատծութե և 'ի մեծի հանգարտութեան արձանագրեալ իցեն այսոքիկ ։ Սոկրատ 'ի է · գլխս · գլ · 3 · ասէ՝ եթէ մինչ դեռ տակաւին սարկաւագ էր Ոսկերբեան, գրեաց զայս · այսինքն՝ յամի 381 ցամի 386 · յորում եղև քահանայ ։ Պալլադիոս ըստ յառաջ բերելոյ լսանին Թարգմանութե Ամբրոսիոսի կամաղդուլեցւոյ՝ 'ի միայնութե անապատի ասէ գրեալ զգիրս · այս է՝ յամէ 375 մինչև 'ի 381, յորում ժամանակի յանապատէ անտի գարձաւ Ոսկերբեան 'ի քաղաքն իւր ։ Հաւանելի էր Պալլադիոսին՝ ասէ Մ՚ոնֆբօն, եթէ և 'ի յայն օրինակն զոր 'ի սիպ արձանացոյց Եմերիկոս Պիգոտիոս՝ գոյր պատմութիւնս ։ Ուստի և մեք Ճգրտագոյն ինչ ասել ոչ ունիմք, մինչև ժամանակն յայտ նեսցէ ։ Այժմ ընտրելագոյն դատիմք զՍոկրատայ պատմեալն իրըև դրականագոյն յիշատակագրութիւն ։

Իսիդորոս պելուսացի ականատեսն յայտնիկերտս Շէյ Ոսկերբերանին, այսպէս ունի յաղագս գրոցս այսոցիկ · Թղթ · 156 · գլխս · ա · " Ձնիք և չնիք ոք, ասէ, որ միանգամ վերծանութե խելամուտ եղև տուիցս այսոցիկ, և ոչ միանգամայն ճաշակել սիրոյն խոցեցաւ 'ի սոցանէ ։ Կայ բի պատուական և գժուարաձեռնարկելի գործ յանդիմանել մեզ զքաջ հանայութեն ։ Ուսուցանէ և զանարատութե պարտեղոյն զօրինակն ։ Վասնզի ճճայնոյն դատողեաց խմաստունն այն Թարգման Յովհաննէս բիւզանդիոյ եպիսկոպոսն, նա առաւել՝ այն այն ընդհանուր եկեղեցւոյ, այնչափ նըբինս և Ճգրտագոյնս հանգերձեաց կազմեաց զիւրն

ղայն, որպէս զի և որք ըստ ձեզ կամացն, և որք գարձեալ վայրապատ պաշտեն զքահանայութեն, ակն յանդիման գտցեն աստանօր և զառա-քինութիւնս իւրեանց, և գյանդգանս ,, ։

Սուրբատա՝ գերաշխարհիկ կոչէ զգիրս զայսոսիկ, ,, Վսեմութիւք և ոճ ճով, քաղցրութիւք և գեղեցկութիւք բանիցն ,, ։

Մ՚ոմֆթօքն ։ ՚ի նախադրութե գրոցս ։ ,, Զնաշխարհիկ գործ՝ յորում յաղագս արժանաւոց և պաշտաման քահանայից այնչափ պերճ և պանծա-լի խօսի ՝ոբ վարդապետն, որպէս զի և յամենայն ժամանակի և առ ամենեսեան առհասարակ աքանչացան տառքս այսոքիկ ,, ։ (տպ ։ Մ՚ոմ-Ֆթօքնի ։ Հատ ։ ա ։ երես 362 ։ որ բազդատեալն եր ընդ սուրբ յունական պլուտարքոս օրինակաց, և ընդ երկուց ապագրեալցդ ։)

ԳԼՈՒԽՔ Ա՝ ԳՐՈՑ Ս՝

ա ։ Բասիլիոս նախադատիւ գասի զան զՅՈՒ բարեկամս Ասկեբեբանին ։

բ ։ Մ՚իաբանութիւնն Բասիլիոսի և Ասկեբեբանի, և քննութիւնն վասն ամենայնին ։

գ ։ Ընհատասարութե կշռոյն ՚ի յանձնառութե միակեցական վարուց ։

դ ։ Աղաչաբկութե յաղագս երկաքանչիւրոցն միաբան բնակութե ։

ե ։ Ողբանք մօրն ։

զ ։ Խաբանօք վարել Ասկեբեբանի ՚ի ձեռնադրութե՝ն ։

է ։ Ամբաստանութե Բասիլիոսի ամբք և պարզ ։

ը ։ Պատասխանի Ասկեբեբանին հաւանական ։

թ ։ Որ ՚ի բարեպատեհ խաբանից անտի մեծապէս չահն, դրութե և հատարակ տեղի ։

ՍՐԲՈՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Ո Ս Կ Ե Բ Ե Ր Ա Ն Ի

ՅԱՂԱԳՈՍ ՎՐԴՈՎՆԵՑՅՈՒԹԵԱՆՆ

ԳԻՐՔ ՎԵՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ա. Բարեկամք բազում եղեն անձին իմոյ՝ հարազատք և ձշմարիտք. որք և օրինաց բարեկամութեանն՝ ի վերայ հասեալք՝ և ձշդրտագոյնս պահէին զնոսա։ Իսկ՝ ի բազմաց անտի մի ոմն քան զընտրեալսն գեբազանգեալ առ մեզ բարեկամութեամբն, այնչափ ինն թևակոխեր զկնի իւր թողուլ լքանել զնոսա, որչափ ինչ նոքա՝ զորս միանգամ վեր՝ ի վերոյ յօժարեալն էին՝ ի մեզ։ Ա՛ա՝ ի նոցա սակի էր՝ որ զամենայն ժամանակին ինձ առընթեր կացին. որպէս զի և՝ ի նոյն վարժից դիւեցաք, և՝ ի նոյն վարժապետաց մնրզեցաք։ Ա՛ի էր մեզ յօժարութեն և նոյն ջանք յաղագս իմաստիցն՝ յոր վաստակեցաք. և ցանկութեն հաւասար՝ որ՝ ի նոցունն իրաց ծնանիեր։

Բ. Վ՛ասզի և ոչ միայն յորժամ առ վարժապետսն էրթևեկ լինէաք, այլև իբրև ելեալք անտի, և պէտք էին՝ ի խորհուրդ մտանել ընտրել մեզ գեղեցիկ կենաց պողոտայ, և անդամնօր դարձեալ համամիտս գտանէաք զմեզ։ Վ՛ին էին և որ զնոսին համանչնչուն պահէին մեզ անդրդռելի և հաստատուն. քանզի ոչ վասն փառաց հայրենեաց այր քան զընկերս իւր ուներ ամբառնալ. ես ոչ բազմահարուստ ինչ էի, և ոչ նա վերջին աղքատուն թէն հիւացեալ. այլև գոյիցն զուգաչափութեբ նա

խանձաւոր լինէր կրօնիցն հաւատարութիւն. զի և աղգս համապատիւ հանդիպեցաւ մեզ. և առհասարակ ամենայնին սատար լինէր մերում խորհրդոյ։

Զ. Այլ քանզի պարտ էր երանելւոյն այնմիկ՝ գիրկս արկանել միանձնական կենացն և ձգնարիտ խմաստասիրութեանն, նորին աղագաւ և կչխուն՝ ի հաւատարութենէն իւրմէ վրիպեր առ մեզ. նորա նժարն թեթեւանայր՝ ի բարձուցս՝ ի վեր, իսկ ես՝ ի ցանկութիս աշխարհի շաղեալ, ի խոնարհ ձգեալ ձնշելի զինի, զմնականի խորհուրդսն բեռն՝ ի նա կապելով։ Ստանօր դարձեալ հաստատութիւն ինայր՝ ի մեզ բարեկամութիւն իբրև զառաջինն. իսկ կցորդութիւն կենացն տէղի տայր. քանզի և էր իսկ հնար՝ որոց ոչ զնոցուն ջանիւ բուռն հարեալ էր՝ զհաւասար քաղաքավարութենէն՝ ի նեղըս բերել։ Սակ այն ինչ և ես ինքն վայրիկ մի՝ ի կենցաղոյս ալեաց ամբարձայ, նա ձգեաց կալաւ զմեզ երկոքումիք ձեռօք. սակայն և ոչ այնպէս զառաջինն հաւասարութիւն բաւեցաք պահել։ Այլ քանզի նա ժամանակաւն նա խաժամանն լինէր քան զմեզ, և զգեղեցիկ մտաւորին յանձին բերեր, դարձեալ վերաթևեաց զմեզ և բարձրացաւ՝ ի բարձրութիւն մեծ։

Է. Այլ քանզի առաքինի էր, և զմեր բարեկամութենին մեծապէս յարգէր, յայլոց ամենեցունց որշեալ զանձն՝ զամենայն ժամանակն՝ կենաց կցորդ լինէր մեզ. որպէս և յառաջագոյն ցանկացեալ իսկ էր նորա, այլ որպէս ասացի՝ խափաներ՝ ի մերմէ տարտամութէ։ Վասն զի և անհնար էր՝ որում յատեանս իրաւանց Թարթափեալ էր, (*) և զհետ բերկրանաց խաղաց զակատեալ, ատեպ կենակից լինել այնմ՝ որ զգրովքն փարեր և երբեք՝ ի հրապարակ ոչ մտաներ։ Յաղագս որոյ իբրև յառաջագոյն զատեալ՝ միաբանգամ՝ ի նոյն միաբանութի կենաց ընկալաւ զմեզ, անդէն վաղվաղակի՝ զոր՝ ի սկզբանէ անտի երկներ զցանկութենէն՝ ծնաւ յայնժամ. և ոչ զմանն դուշնաքեայ զաւուրն յանձն առնոյր հե-

(*) Ջայս Ոսկեբերան զանձնէ ասէ. որպէս և էր իսկ յայնժամ զրաղեալ յաշխարհի։ Տես՝ ի վարս նորա։

ուանալ՝ ի մինչ. Հանապազը աղաչէր յորդորէր, զի լքեալ իւրաքանչիւր զտունս մեր, զՀասարակ բնակուԹիւն կալցուք երկաքեան. և Հաւանեցոյց իսկ, և գործն ի ձեռս էր։

Է. Ա.ՀԼ Հանապազորդեան ողբանք մեր խափանեցին զիս՝ զչորՀս զայս ընծայել նմա, մինաւանդ եԹէ զպարգեւն զայն առնուլ ի նմանէ։ Վասնզի իբրև ի վերայ եՀաս նա խորհրդոյն իմոյ, կալեալ զայրոյն իմմէ՝ եմոյծ յիւր առանձին սենեակն, և մերձ առ մնՀիւն բազմեցուցեալ՝ յորում երկնեացն զմեզ, աղբիւրս բերէր արտասուաց. և քան զարտասուն ողբմելի և բարբառ արձակեալ՝ զայսօրինակ ապա յոգւոյ եՀան ընդգէմ մեր. "Աս ինքն ասէ, սրդեակ, սէ կարացէ բազում ժամանակ վայելել յառաքինուԹեան Հոր քոյ. որպէս զիարդ կամք եղեն վերնախնամ տեսչուԹեանն։ Վասնզի մահն նորա զքոյին յաջորդեալ զերկունսն, ի վերայ քո որբուԹիւն, և յիմ վերայ այրուի Հաստատեաց տարաժամ, նոյն և զվիշտս այրուԹեն, զոր միայն քաջ գիտեն՝ որոց միանգամ կրեալ իցէ։ Վասնզի սէվինչ բան բաւական է՝ ի դէմս բերել զձմեռն զայն և զմրրիկն՝ որ զկոյս պաշարէ, այն ինչ ելեալ՝ ի հայրենի տանէն և անփորձ՝ ի տնտեսուԹիս, և յեղակարծումն ժամուս յանբերելի սուգն ըմբռնեալ, ստիպի զանձամբ առնուլ Հոգս՝ որ քան զՀասակն և քան զբնուԹիւն՝ ի վեր էն։ Վասնզի պարտ և արժան է ապաքէն ծառայիցն դարմանել վատուԹիւ, և չարուԹեան քննիչ լինել. խուսել՝ ի դաւանաց ազգակցացն, վշտաց՝ որ՝ ի մանկասուրբ տարն անտի, և աներեւուԹիւ Հարկահանացն քաջուԹիւ տանել։ Իսկ եԹէ և որդի Թողուցու վախճանեալն, եԹէ դուստր իցէ, և այնպէս բազում Հոգս՝ ի նեղըս բերէ մերն, սակայն՝ ի ծախուց և յահէ ԹեԹևացեալ է նա։ Ա.ՀԼ ուստրն բիւր երկիւղիւ գիտէ զօրհնասպազ լինուլ զնա և բազմադէմ Հոգովք. քանզի Թողում ասել զընչէիցն վատնուման, զոր ստիպի յանձն առնուլ, եԹէ ազատուրէն խնդրեսցէ մնուցանել զնա։

"Ա.ՀԼ սակայն և սէ մի ինչ յայսպիսեաց աստի շարժեաց զիս՝ յերկրորդ Հարսանիսն երբեք տալ զանձն, և կամ այլ փեսայ ածել՝ ի տուն Հոր քոյ։ Ա.ՀԼ կացի

ինացի ՚ի մըրկին յայնմիկ և ՚ի խռովութենն . և յերկա-
թի հնոցին այրութենէ ոչինչ խուսափեցի , նախ վերին
ակնարկութիւն օժանդակեալ . իսկ ապա և ոչ դուշնա-
քեայ ինչ գիւրութենէ էր այն իմոյս վշտաց , զի հանա-
պազօր ՚ի քոյ դէմն հայէի , և զվախճանելոյն զանձնա-
ւոր պատկերն յիս ինքն պահէի , որ զինա ձեղ-րտեր գե-
ղեցկասէս : Յաղագս որոյ և տղայ գոլով քո , մինչդեռ
խօսել անգամ ոչ գիտէիր , որպէս քնաւորեցան մանկ-
կունք կարի բերկրեցուցանել զծնողսն , ՚ի մեծապէս
սիրելութենէ եղեր ինձ : Այլ ոչ զայն ինչ կալցես դու
երբեք ասել և ամբաստանել , եթէ թէպետ և այրու-
թենն քաջութիւն տարայ , սակայն ՚ի պատճառս կարեաց
այրուենն զՀայրենին ձոխութենին նուազեցուցի ինչ քեզ ,
որպէս զի և զբազումսն գիտեմ , որ հիգայեալ որբու-
թիւ՝ ընդ նովին գրաւեցան կրիւք . քանզի ողջ պահէին
քեզ զամենայնն . սակայն և ոչինչ խորշեցայ՝ որ կարևոր
ծախք էին ՚ի գեղեցիկ դաստիարակութիւն քո , յիմոյ
անտի բաշխել , և յընչից՝ զոր ՚ի տանէն իմմէ ածեալ
իսկ էի :

“ Այլ և մի կարծեր , եթէ յասել իմում արդ զայ-
սոսիկ՝ երախտեմ ինչ ընդդէմ քո . այլ փոխանակ ամե-
նայնին զմի զայս շնորհս խնդրեմ ես ՚ի քէն . մի պաշա-
րեր զիս կրկին այրութիւ . և մի զսուգն թմբրեալ զար-
թուցաներ ինձ միւսանգամ . այլ համբեր դու իմում
վախճանի , թերևս սակաւիկ միւս ևս և իմ փոխեալ
իցէ ՚ի կենաց աստի : Այանզի մանկագունիցն գոյ յոյս
հասանել և ՚ի ծերութենէ պարարտութենէ . իսկ մեք ծե-
րացեալքս՝ ոչինչ այլ քան եթէ մնհնուն սպասեալ
ինամք : Այրդ՝ յորժամ տայցես զիս հողոյ , և ընդ ոս-
կերս հօր քումմ խառնեսցես , յանձին կալ օտարութենիս
տարադէմն , և ձանապարհորդեա՛ ընդ անդունդս՝ ընդ
որ և կամեսցիս դու . քանզի ոչ ոք է յայնժամ՝ որ ըզ-
քեզն խափանեսցէ : Այլ յորչափ ընչեմք մեք , կալ
զընդ մեզ բնակութիւնն . և մի՛ անխորհուրդ և վայրա-
պար լինիս յիածակոյս կողմն . յորժամ և ոչ մի ինչ անի-
բաւեալ առ ՚ի մէնջ՝ յայնչափ ջարիս պաշարեսցես դու
զմեզ :

“ Այանզի եթէ ունիս ինչ բողոք բառնալ , եթէ ՚ի
հոգս կենցաղականս արկանեմ զքեզ , և վերակացու

լինել իրաց քոյ քննադատեմ, մի՛ երեսս ինչ արասցես յայնժամ ո՛չ օրինաց քննութե՛ն, ո՛չ դաստիարակութե՛ն, ո՛չ սովորութե՛ն, և ո՛չ այլ ինչ իրաց, այլ իբրև՛ ի դաւաղաց և՛ ի թշնամեաց փախիր՛ ի միջի. ապա եթէ զամենայն փոյթ՛ ի միջ առնուիք՝ բազում հանդարտութե՛ հանդերձել քեզ՛ ի քաղաքավարութե՛ կենաց. եթէ և ո՛չինչ այլ, այս մի կապանք կալցեն ապա զքեզ առ մեզ։ Օ՜ ի թէպետ և զբիւրուց ոմանց վկայեսցես սիրօղս լինել քեզ, ո՛չ ոք զայդչափ վայելս ազատութե՛ պատրաստեսցէ քեզ. քանզի և չէ իսկ ոք՝ որում այնպէս փոյթ ինչ իցէ վասն քաջալառուե՛ քոյ՝ որպէս ինձ գլխովին՛՛։

Ջ. Ոյսոսիկ և առաւել ևս քան զսոսին առ իս մեծն. զոր և իմ խօսեցեալ ընդ առաքինւոյն ընդ այնմիկ, նա ո՛չ միայն ո՛չ չարժէր՛ ի բանս յայսոսիկ, այլ և առաւել ևս պնդեալ, զնոյն՝ զոր յառաջագոյն՝ խնդրե՛ր պահանջէր։ Այ՛ ի նոյն դեգերեալ մեր. իբրև նա ետ ետ պնդեր, և ես տեղի տուեալ հրաժարեկէր, յանկարծակի լուր ինն զհամբաւի հարեալ՝ առհասարակ զմեզ ամբոխեաց. քանզի հնչեր ինն այնպէս՝ եթէ՛ ի պատիւ եպիսկոպոսութե՛ (*) հանդերձեալ իցէ ամբառնալ մեզ։ Իբրև զայն բանս լուայ ես, անդէն միանգամայն պաշարեցայ յերկիւղ և՛ ի վարանս. յերկիւղ՝ զի մի թերևս յակամայ կամն յափշտակեցայց. և՛ ի վարանս՝ քանզի ստէպ յուզէի խնդրել՝ եթէ ուստի՞ արդեօք եկն՛ ի միտս մարդկանդ զայդպիսի ինչ խորհել երբէք վասն մեր. քանզի յիս ինքն հայեցեալ, արժանիս ինչ ո՛չ գտանէի պատուոյն այնորիկ։

Իսկ առաքինին այն եկեալ առ իս առանձինն, և ըզբանն մերկացեալ ինձ իբրու անլուր եղելոյ համբաւոյն այնմիկ, աղաչէր՝ զի և աստանօր համաշունչք իցեմք՛ ի գործս և՛ ի խորհուրդս իբրև զառաջինն։ Ա՛տադիւ բազմոյս զանձն՛ ի ներքս ընծայէր զհետ երթալ մեր, յընտրել մեզ՛ ի կրկին ձանապարհացն՝ փախչել և կամ յանձն առնուլ։ Զայս յօժարութիւն նորա հայեցեալ իմ, և ընդհանուր եկեղեցւոյ շնաստակաւ զանձն իմ

(*) Գրչագիր օրինակք առաւելագոյն մասամբ, դարձեալ և կրկին տպագիրքք ունին էպիսկոպոսե՛։ Իսկ յորք գրչագիրք, և մի տպագիր՛ ի լուսանցին՝ ունին երիցուե՛ան։

վարկուցեալ, եթէ յայնպիսի առաքինի պատանւոյ՝ որ քաջավայելուչն է՝ ի բազմից վերակացութիւն, զքեզ հօտն զրկիցեմ վասն անձինս տկարութեանդ, ոչինչ՝ ի վեր հանի նմա զիտոս՝ զոր վասն դոցին իրաց երկնիլ. և այն զի յիմից խորհրդոցս չէր ինչ՝ զոր յառաջագոյն ծածկեալ էր իմ երբեք առ՝ ի նմանէ։ Այլ երբեմն զայս ինչ պատասխանի արարի՝ եթէ ոչինչ գոլով արդ սակաւ պղտկական խորհրդոյդ այդորիկ՝ յայլ ժամանակ ձգել արժան է զդա, անգէն և անդ հաւանեցուցի՝ եթէ հո դոց չէն ինչ պէտք վասն իրացդ. և յիմ վերայ վստահ արարի իբրեւ՝ ի վերայ համախորհուրդ անձին, եթէ երբեք դէպ լինի կրել յայնպիսեայ անտի։

Իբրեւ ոչ բազում ինչ ժամանակք՝ ի վերայ անցին, և որ զմեզ հանդերձեաքն էր ձեռնադրել՝ հասեալ եկն, և ես թագուցի զանձն, նա ինքն ոչինչ գիտելով զիրացն՝ ածեալ լինի իբրու յայլ ինչ պատճառս. և ըզլուծն յանձն առնու. յուսացեալ ըստ մերում առ նա խոստմանն, եթէ և մեք գլխովին զկնի գամք. մինաւանդ՝ ի մոի եդեալ՝ եթէ զմեր կնի ինքնին եկեսցէ։

Այս քանզի ոմանք՝ յորոց անդր կային, իբրեւ դժկամ մնին տեսին զնա յաղագս ըմբռնելոյն, պատրանօք ձայն արձակեցին առ նա, եթէ զիարդ դժպատեհ լցէ, եթէ նա՝ որ քան զամենեսեան երեւեր յանդգնագոյն՝ (զիս ինքն ակնարկելին բանիւն) բազում մտադիւրութիւ անսասցէ հարցն դատաստանի. իսկ որ կարի հանձաբեղն է և պարկեշտագոյն, ըմբռստասցի և մնափառեսցի, ի բաց վազեսցէ, խոյս տացէ և դիմամարտեսցի։

Իսկ նորա տեղի տուեալ բանիցս, իբրեւ լուաւ՝ եթէ փախուցեալ եմ, եկն առ իս մեծապէս տրտմութիւ, և նստաւ մերձ. կամէր ինչ մի խօսել, այլ յանձկութենէ սրտին արգելեալ՝ ոչինչ բաւէր բանիւ՝ ի դէմն ածել զբռնութենն՝ զոր կրեաց՝ ի բանալ բերանոյն՝ կասէր՝ ի բարբառոյն առ թաղծութենէն, որ միանչեւ վազեալ զսաստմբքն՝ գերլոյր զնաւսն։ Յետ այնպէս արտասուալ լից տեսեալ իմ զնա, և բազում խռովութիւ լցեալ, և պատճառին խելամուտ եղեալ, կարի լիոն հեշտացեալ զծաղռս գայի. և կալեալ զաջոյն՝ ջանացայ համբուրել. փառաւորէի զնա՝ զի ինձ հնարքն այն գերեզմիկս կալան ելս և ըստ իմոյս ախորժակաց։ Իսկ նա իբրեւ այն

պէս խնդալից եառեալ զմեզ և զուարթագինս, և այն ինչ՝ ի վերայ եհաս՝ եթէ խաբեցար՝ ի մէնջ, առաւել ևս սրտնեղ և գժուարեր։

Է. Այլ իբրև վայր մի հանդարտեցաւ նա՝ ի խոս վանեցուցանել հոգւոյն, ասէ։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Թէպէտ և զմեր կողմն անգոնեսցես դու, և ոչինչ փոյթ այսուհետև տարցես վասն մեր, ոչ գիտեմ ես զի սաղաւաւ, գոնեա վասն համբաւոյ անձինդ հոգալ արժան էր քեզ։ Իսկ դու այժմ զամենեցունն քեզ բան ցեր. և ահա առհասարակ ասեն՝ եթէ մնոտի փառացս ցանկութիւք հրաժարեալ ես քո՝ ի պաշտամանեդ յայդմանէ. և չիք ոք՝ որ սրբէ զքեզ յարատոյ աստի։ Այլ ինձ և ոչ՝ ի հրապարակ անդր ելանել արժան է. իբրև զի բազումք յոյժ պատին զմեզ, և զօրհնեալ պազ բամբասեն։ Օ՛ի և քանիցս անգամ ուրեք՝ ի քաղաքի յակն արկանեն, որ միանգամ ընտանութիւք էին առ մեզ, առեալ զիս առանձինն՝ յանցանաց մեզ սամբ առաւել ինն դատին զիս։ Վա՛, ասեն, խորհրդոյ դազդաճ գոլով խորհրդոյ նորա, իբրև զի և ոչինչ՝ ի նորայոյն ծածկեր առ՝ ի քէն, չէր պարտ կեղծաւորել, այլ մերկանալ մեզ արժան էր զքանն. և մեզ ոչինչ պակասէին հնարից ելք առ՝ ի թակարթելոյ զնա։ Իսկ ես ամաչեմ և շառագունիմ ասել առ նոսա, եթէ ոչինչ գիտեի զքէն յառաջագոյն վասն խորհրդոյդ այդորիկ. զի մի թերևս կեղծաւորութիւն զմերն համարեսցեն բարեկամութիւն։ Օ՛ի թէ այդ այդպէս է, որպէս և է իսկ ճշմարիտ, և ոչ դու ինքն կարօղ ինչ ի ցես ժխտել՝ յորմէ հետէ զայդ բանդ արարեր ընդ մեզ այժմ. ապա յարտաքնոց անտի՝ թէպէտ և զչափաւոր կարծիսն վասն մեր ունիցին, լաւ է զմերն չարիս թաւ քուցանել։ Այս քանզի ճշմարտութիւք և ըստ մերումն գիտութեաւ՝ ի վեր հանել նոցա զբանն՝ գժուարիմ, բըռնադատիմ այսուհետև լռել և ակնկոթել, և յորոց ընդառաջէնն՝ տեղի տալ և խուսել։ Այս թէպէտ և յառաջինն յանցանացն փախուցեալ զերծանիմ, սակայն հարկ՝ ի վերայ կայ ինձ այսուհետև իբրև ստախօս յանդիմանա

նիլ. քանզի և չկամին երբեք հաւատս ընծայել ինձ, եթէ ի նոցա մասին հաստատեալ իցէ քո զքաւիլիսս՝ որոյ չէ օրէն գիտել զքոյսն։

Ա. Այլ ես զսոցին իբրեւ ոչ մեծ ինչ փոյթ առնեմ, փո խանակ զի այդպէս քաղցրացան դոքա քեզ. սակայն միւսոյ անարգուհին զնաւրդ կարասցուք տանել։ Վասն զի կէսք՝ իբրև խրոխտ, և կէսք դարձեալ՝ իբրև փա ռասէր բամբասեն զքեզ. իսկ որք միանգամ դժնդակա գոյնք ոմանք են առ յանցաւորս, միանգամայն երկո քումիք այսու պատուհասեալ զմեզ, ի վերայ բարդեն և զառ ի մէնջ թշնամանս՝ առ որս պատուասիրեցիրն զմեզ. և զնոսա արժանիս ասեն այսպիսեաց կրից ի մէնջ, այլ և մեծայ ևս քան զնոսա. փոխանակ զի Թո ղեալ զայնչափ մարդիկ և զքաջս հասակաւ, զաղայս ո մանս՝ որք երկիւղ և այսօր ի կենցաղական հոգս Թար Թափեալ էին՝ իբրև սակաւ ինչ ժամանակ գոյնան ժո ղովեցին, և ի Թուխս համակեցան, և զկորանալ դի մացն կեղծաւորեցան, յանկարծակի յայնչափ ին պա տիւ ամբարձին, որչափ ինչ և ոչ յանուրջս նոքա ակն ունէին երբէք ածել զբառամբ։ Իսկ որք անդստին յա ռաջին տիոցն մինչև ի վերջին ծերուԹիւն ի վշտամբե րուԹիւն կրեցին զանձինս, ի հնազանդելոց կարգի անցեալ կան. և հրամայեն նոցա մանկունք իւրեանց, որք և ոչ օրինաց անգամ ի վերայ հասեալ են՝ որովք արժան է վարել զիշխանուԹիւնն գայն։

Օ այս և առաւել ևս քան զսոյն բարբառեալ նոքա՝ ատեպ յարձակին ի մեզ։ Իսկ ես չունիմ ինչ առ այսո սիկ տալ պատասխանի. այլ զքեզ աղաչեմ յաւել ինձ բանս։ Վասնզի և ոչ կարծեմ՝ եթէ վայրապար ինչ կամ անխորհուրդ փախեար դու զփախստեայդ գայդ, և այնչափ ԹշնամուԹիւն յանձն քո առեր ընդդէմ այնպի սի ականաւոր մարդկանդ, այլ Թէ խորհրդով և կշռու Թիւ եկիր դու ի դործդ յայդ. վասն որոյ և քանս պատ րաստս համարիմ ունել քեզ ի պատասխանիս։ Ա. Ըդ ասա՛, զինչ իրաւացի փաստս զօրեսցուք բամբասողացն ի դէմ ածել։ Վասնզի որովք անիրաւեցայ ես առ ի քէն, ոչինչ վարեմ ընդ քեզ դատ. ոչ որով խաբեցերն, և ոչ որով մատնեցերն, և ոչ դարձեալ որովք յառա ջագոյն զամենայն ժամանակն վայելեցեր դու ի մէնջ,

Վ.անզի մեք ապաքէն զմեր անձն, որպէս ի դէպ գայ ինձ ասել, առեալ՝ ի քոյ ձեռս յանձն արարաք. իսկ դու այդչափ դաւով վարեցար առ մեզ, որչափ և ի թշնամեաց ոմանց հակիւր դու անձնապահ լինել:

Այլ արդ՝ եթէ օգտակար ինչ ծանեար զխորհուրդդ զայդ, էր պարտ փախչիլ յարդեանց դորա. ապա եթէ ինքասակար, այլ և զմեզ կորզել պարտ էր ի տուժից անտի՝ զոր առ քեզ նախապատիւ քան զամենեսեան ա սէիր միշտ: Իսկ դու զամենայնն հնարեցար, զի ի նոյն ձգեսցես զմեզ. սակայն և ոչինչ պէտք է՛ն քեզ խա բանաց և կեղծաւորութե՛ն ընդդէմ այնմ՝ որ պարզ և անսեղծ բնաւորեցաւ առ քեզ ասել զամենայնն և առ նել: Վ.յլ որպէս ասացիս, ոչինչ սոքիմքք այժմ ամբաս տանեմ զքէն, և ոչ դարձեալ զամպարիս յերեսս հար կանեմ, յորում պաշարեցեր զմեզ, յորժամ և զկենաց զակցութի՛ս մեր հատեր կտրեցեր, յորոց ոչ դուշա քեայ ինչ քաղցրուն և շահ կթե՛ր մեզ բաղում անգամ: Վ.յլ զայս ամենայն թողեալ, լռութի՛ բերեմ և հեզա բար. ոչ զի դու հեզութի՛ ինչ յանցեար ի մեզ, այլ զի զայն օրէնս հաստատեցի ինձ անդսին յորէ անտի՝ յորում զբարեկամութի՛ւնն հաստեցի ընդ քեզ. որ զի՝ թէպէտ և խնգրեսցես տրտմեցուցանել զմեզ՝ մեք ոչ ինչ սաստկապահանջ լինցուք առ ի քէն՝ իրաւացուցա նել զանձն քո:

Այլ արդ՝ զի ոչ փոքր ինչ զեան ածեր ի վերայ մեր՝ գիտես և դու. եթէ միայն յուշ ածցես զբանսն, զոր յարտաքնոց անտի խօսէն վասն մեր, և զոր գարձեալ մեք ինքնին խօսեաք զմէնջ հանապազ. այն՝ եթէ քա զում ինչ շահ ի համանչութի՛ւնէ աստի մերմէ առնես ցի մեզ և զօրավիգն օգնականութի՛ւնէ յաւ միանաս քա րեկամութի՛ւն: Իսկ այլք ամենեքեան վկայէին, եթէ և բաղմից օտարաց ոչ սակաւ ինչ օգուտ ընծայեսցի ի միաբանութե՛նէս մերմէ: Վ.յլ ես, որպէս հաւանեալս էի, համարեի շահ և ոչ մի ինչ ունեք պատրաստել եր քո՛ք. բայց թէ՝ զօգուտ զայս ոչ փոքր՝ շահել մեզ, զի որք միանգամ հակառակ ընդդէմ մեր կքրեսցին, ան ըմբռնելի լինցուք առ ի նոցանէն: Այս զայսոսիկ քեզ ի յիշատակ բերել ոչինչ դադարէի, եթէ դժնդակ և ժամանակն. դարանակալք բաղմացեալ են. հարազատ

սէրն չինջեալ է, և նախանձուն ապականութիւն զտեղին փոխանակեալ. ՚ի թակարթաց միջի չորչումք. ՚ի մէջ մահարձանաց (*) քաղաքաց չորչումք. կէսք՝ գօտեպինդ կան խնդալ ՚ի չարիս մեր, եթէ երբէք պատահեսցէ. և քաղցում՝ այն են՝ որ ամենայն ուստեք պաշարեն զմեզ. չինք ոք կարեւկից, կամ թէ՝ կարի նուազունք: Տես զի մի քակեսցուք երբէք, և ծաղը ուժգին շարժեսցուք. և քան զծաղրն՝ զնաս սաստիկ. * Նզբայր յեղբօրէ օգնեալ երբեւ զքաղաք ամուր. և երբեւ զթագաւորութիւն հաստատեալ ‖. ա՛՛. ԺԹ. 19: Նա արդ ածէ մի զհարա զատութիւնս լուծցես, և մի զինիգս զայս խորտակեսցես:

Օ այսոսիկ և առաւել ևս քան զայսոսիկ ասէի քաղցում անգամ, ոչինչ խիթալով յայսպիսեաց աստի, այլև կարի իմն առողջ համարելով զքեզ առ մեզ, առաւել ևս ապաքինել խնդրելի զառողջն. անդիտացեալ, որպէս և յայտ իսկ է, եթէ խօթացելոյն մատուցանել դեղս: Այլ և ոչ այսպէս հնարացեալս շահեցայ ինչ, և ոչ օգուտ ինչ եղև ինձ՝ ի զգուշութէ աստի իմմէ յայսմանէ: Վանզի միանգամայն ՚ի քաց տարեալ քո զայս ամենայն ՚ի միտս անխորհուրդս, երբեւ նաւ մի անխիճ յանապահման անդունդս արկեր զմեզ. ոչինչ ածեր զմտաւ զվայրենի ալեացն այնոցիկ՝ յորոց հարկ ՚ի վերայ կայ մեզ տագնապիլ ՚ի նոցանէ: Օ՛ ի եթէ երբէք զիպարտութեան, կամ ծիծաղելոյ այպանաց, կամ այլ ինչ ըմպահկանաց և վշտաց դէպ լինելոյ ուստեք պաշարել զմեզ, քանզի և ստէպ հարկ է պատահել այսպիսեաց իրաց, առ ո՞ք ապաւինեսցուք մեք, կամ յո՞ թափեսցուք զանձկութիւնս մեր. և ո՞ք դարձեալ պաշտպան կացցէ իրաւանց մերոց, զտրտմեցուցիչսն կարձեսցէ, ցաւոցն մեզ վախճան կարգեսցէ, սփոփեսցէ զմեզ, և այլոցն վայրենուեց տանել՝ քաջագօտիս յարդարեսցէ: Ընդ ոք չինք ուրեք. զի անդր ուրեմն բացական մեկնեցար դու՝ ի դժնդակ մարտիս յայսմանէ, զի և զաղաղակն իմ անգամ ոչ բաւես լսել: Նթէ գիտացեր դու, քանի՛ չարիս գործեցեր քեզ: Կոնեայ արդ յետ հարուածոյն խելամուտ լեցես արդեօք, զիարդ մահաւիթ

(*) Այս է՝ ՚ի պատերազմի եմք. զի՛ ՚ի մահարձանաց կամ յաշտարակաց վնաս մարտ պատերազմի. և կամ՝ ՚ի վտանգի եմք անկանելոյ:

վերս եդիր ՚ի վերայ մեր։ Այլ ես Թողում զայդոսիկ. զի զորս եղեւնն՝ լուծանել այնուհետեւ չիք հնար. և ոչ յանկոխան գտանել երբեք ձանապարհ։ Օ՜ինչ ասացուք առ արտաքինսն, զի՛ր պատասխանի արասցուք ամբաստանութեանց նոցա։

ՈՍԿԵՔԵՐԱՆ.

Ը. (*) Հանդարտ լեր. քանզի ոչ վասն դողին և եթ պատրաստեալ է իմ տալ համարս, այլ և յորս անպարտս արձակեցեր զմեզ, և՛ի դոսա ջանասցուք տալ քեզ բանս ըստ մերում կարի. և եթէ քեզ կամք իցեն, ՚ի նոցունց իսկ արասցուք սկիզբն բանից պատասխանւոյ։ Այնպէս դժպատեհ իմն լինիւ և կարի ապաշնորհ, եթէ երբեք արտաքինսն կարծեաց փոյթ տարեալ՝ զամենայն հնարս հնարելի կարձել զնոցայն ամբաստանութեան՝ որ զմեզ. իսկ որ բարեկամութեն առաւելաւ առ ինս քան զամենեսեան, և այնչափ պատուասիրութեբ վարեցաւ առ մեզ՝ որպէս զի և ոչ որովք անիրաւեալ զանձն ասէր՝ կամեցաւ ինչ երբեք մեզ ՚ի դէմն հարկանել, այլ առ ոչինչ զիւրսն վարկուցեալ՝ յաղագս մերոցն դարձեալ հոգայը, ես ոչ բաւեի ինչ սակս մերոյ արդարութեն հաւանեցուցանել զնա. այլ քան զջանան՝ զոր նա առ մեզ ցուցանէ, առաւել և առատամութեբ վարիւի առ նա։

Այս արդ՝ ՚ի լինք երբեք անիրաւեցաք առ քեզ. քանզի յայսմանէ հանդերձիւք այժմ մտանել յանդունդս պատասխանւոյ։ Այթէ նենգեցաք ինչ քեզ, և զմեր խորհուրդն թաքուցաք ինչ արդեօք. բայց թէ վասն շահու խաբեցեալդ, և որոց միանգամ խաբանօք մատնեցաք զքեզ։ Այսակ արդ եթէ հնարիւ դիւտ միշտ ընդ բամբասանօք իցէ, և չիցէ երբեք առ լաւ ինչ վարել զդոյն, պատրաստ եմք մեք լուծանել վրէժս՝ զինչ և միանգամ կամեսցիս դու. մնաւանդ եթէ՝ քանզի ոչ երբեք յանձին կալցես դու առնուլ վրէժս ՚ի մէնջ, մեք ինքնին անձանց մերոյ ՚ի վերայ կապեսցուք զոյն ինչ՝ զոր միանգամ սովորեցան դատաւորք առ յանցաւորսն,

(*) ՚Ի բնագրի մերում պատմաբար ձևացուցեալ է բանն ասա և յընդ Թացս գրոցս, բազում ուրեք դնելով ասացի էս . . . բանիւքս ասէ. մեք ՚ի արամախօսութեան ոճ վերածելցաք՝ հատեալ զբոլոր ասացի, ասէ. ըստ որում ոճիւք և բնագիրս ՚ի աւելս ինչ։

այն ինչ պարտաւորին նոքա ի դատախազին իւրեանց։ Այլ եթէ հնարագիտուն ոչ միշտ է ճշմարտակար, այլ ի մտայ՝ որոց վարինն նովաւ՝ է զի անդոմնելի է, և է զի գեղեցիկ, ճն անդր դու ի բաց Թող զամբաստա նութեն խաբանացդ, և ցոյց եթէ չարեօք ինչ չարտա լեցաք մեք զդա. զի ցորչափ այդ մերձ ոչ էցէ, իրաւա ցի է արդեօք՝ ոչ եթէ ամբաստանուիս ինչ և խնդիրս յուզել, այլ ի գովութեն առնուլ զնաբողն, գեթ առ որս միանգամ խնդրեն ողջմիտ խորհրդով առաքինու նալ։ Վասղի խաբանք ի դէպ ժամանակի ի ներքս բերեալք և առաքինի խորհրդով՝ այնչափ ունին զշահ օգտին, մինչև բազումք բազում անգամ վրէժս եառուն՝ զի ոչ քաջացան նովաւ։

Այլ եթէ կամեսցիս ի քնին առնուլ զզօրաւորս զօ րաց՝ որք ի յաւիտենից անուանիք, դատանեա՝ զի նոցա բազում յաղթանակք խաբանօք հանդերձեցան. և նո քին դարձեալ առաւել ներքոյզեցան, քան թէ՝ որ յայտ նի մարտիւ յաղթանակեցին։ Վասղի սոքա ի ծալս բազմապատիկս ընչից և դիականց վանեն զքշնամին. մինչ զի և առաւելութեն և ոչ ի առ ի յաղթութենէն բերցի նոցա. այլ յաղթականք ոչինչ նուազ քան զյաղ թեալսն տուժեսցեն կորուստ զօրաց և դատարկութեն համբարոց։ Այս այսոսիկ և ոչ ի փառս յաղթուէն նե րեն նոցա յաղթեալքն բռնադակ վայելել. քանզի ոչ դուշնաքեայ ինչ բաժին հասանէ և անկեալցն քաղել առ ի նմանէ. իբրև զի յաղթականք գոլով՝ մարմնով միայն խոնարհագոյն գտան քան զնոսա. մինչ զի եթէ մարթ ինչ էր նոցա խոցեալք ոչ անկանիլ, և ոչ դարձեալ օրհաս մնհուն դիտապաստ ձգէր զնոսա, նոքա յարութեէ հոգւոյն կորուսանէին երբեք և ոչինչ։ Սակ որ միանգամ բաւական եղև խաբանօք յաղթել, ոչ կրկնք միայն՝ այլ և ծաղու տագնապեցոյց զքշնամին։ Վասղի ոչ որպէս անդ երկոքին կողմանքն զուգակշիռ բարձեալ բերեն զգովութիւնս քաջութեն, նոյնպէս և աստանօր՝ զհանձարոյն. այլ բոլորապտուղ յաղթակա նացն է բրաբիոնն. և որ ոչ խոնարհագոյն ինչ է քան զայսոսիկ՝ զհեշտութեէ յաղթութենէն՝ անապակ պահեն քաղաքին։ Վասղի ոչ որպէս ընչիցն մեծերք և մարդ կան բազմութեէ, այնպէս արդեօք էցէ և հոգւոյն հան

ձար. զի թէ նոքա ի յաձախել մարտից պատերազմի ծախիլ քնաւորեցան, և զստացիչս իւրեանց Թողուլ լքանել, սմա ընդաբոյս է աձել այնչափ առաւել, որ չափ և վարեսցի ոք նովաւ։ Այլ ոչ ի պատերազմունս ևեթ, այլ և ի խաղաղութեան անդ մեծ և կարևոր գոյես դու զվէտս խաբանացն. ոչ ի քաղաքականսն ևեթ, այլ և ի տան անդ առն առ կինն, և կնոջ առ այրն. հօրն առ որդին, և բարեկամին առ բարեկամն. մինաւանդ եթէ և որդւոյն առ հայրն։ Վասն զի և ի ձեռացն սաւառղայ ոչ այլ իւիք բաւական եղև ասրբեցուցանել զայր իւր դուստր նորա, քան թէ խաբեալով զհայրն։ Այլ նորուն եղբայրն դարձեալ իբրև խնդրեաց փրկել ի վտանգէ՝ զապրեալն երբեմն ի ձեռն սմուսնոյն, նովինն և նա վարեցաւ զինուս, որով և կինն. ա. Խագ. ժե. 12. ե. 28։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Այլ այդոքիկ ինձ ոչ երբէք ի դէպ գան. զի ոչ թէնամի ինչ եմ ես, և ոչ սխերիմ. և ոչ դարձեալ յոյս ինչ միանգամ ձեռնարկեն անիրաւել. այլ ընդ հակառակս գլխովին. քանզի զամենայն ինչ զիմ հանապազ քումդ յանձնեցի խորհրդոյ, և նմին հպատակ կացի՝ որպէս և զիարգ հրամայեցեր։

ՈՍԿԵՓԵՐԱՆ.

Թ. Այլ ոչ դու սքանչելի անձն և առհնալաւ. քանզի դորին աղագաւ և ես ինքն կանխեցի ասացի, եթէ ոչ ի պատերազմի միայն և առ թէնամին, այլ և ի խաղաղութեն անդ և առ բարեկամն գեղեցիկ է ի գործ արկանել զդոյն։ Այլ զի օգուտ է այդ ոչ խաբողացն միայն, այլ և խաբեցելոցն, աղէ մատիր դու առ ոք ի քժշկաց այտի և ուսիր, զիաշդ նոքա զխօթացեալսն քուժեն յախտէն. և լսես ի նոցանէ՝ զի ոչ արհեստիւն միայն քաջանան, այլ է ուրեք զի և զխաբանսն ի ձեռս առեալք, և նովաւ խառն օժանդակեալք, այնպէս յառողջութիւն անդր վերածեն զախտացեալսն։ Վասն զի յորժամ ժանտութիւն խօթացելոցն և դառնութիւն ախտին ապստամբէ է ի խորհրդոց անտի քժշկաց,

յայնժամ զգէմն խաբէութեն բռնադատին նոքա զգենուլ, զի որպէս ի ծպտանս խաղալիսց՝ զշմարտութեն վերլլցին հնարեսցին ծածկել։

Այլ եթէ քեզ հաճոյ իցէ, նենգ մի ես պատմեմ քեզ ի բազմից անտի. զոր իմ լուեալ է՝ եթէ սպաշտեցին մանկունք բժշկաց։ Այր մի տագնապեցաւ ոք ախտիւ ջերման անհնարին ծաստկութեբ, և քոյն երթայր և զսպրանայր. իսկ զայն ինչ՝ որ միանգամ բաւական էր և զհուր շիջուցանել, արհամարհէր հիւանդն։ Յանկայր նա և անձկանօք փափաքէր, և ոչք մնանէին առ նա առհասարակ պաղատեր արդահատեր, անապակ առատ մատուսակել նմա, և փութալ լնուլ զկորստական ցանկութեն. այն՝ որ ոչ միայն զհուր ջերմանն գիտեր բորբոքել, այլ և ի մնէգնութեն գլխովին արկանել զհիւծայեալն, եթէ երբէք ոք զհնարն զայն առներ նմա։ Յստանօր իբրև տեղի տայր արհեստն, և ոչ մեքենայք ինչ դարձեալ զօրեցին երբէք, այլև գըլխովին ի բաց արձակեցան, եկին ի ներքս մտին խառնեցան և յուցին մեծապէս զօրութեն, զոր արդ լսելի արասցուք քեզ։ Վանգի վաղվաղակի առեալ բժշկին կուժ մի խեցեղէն՝ այն ինչ եւեալ ի հնոցէն, և թաւ ցեալ ի գինի առատ, և անդուստ վերառեալ դատարկ և լցեալ ջրով, հրամայեր խիտ առ խիտ վարագուրօք ազօտացուցանել զսենեակն՝ ուր անկեալ գներ ի նմա հիւանդն, զի մի թերևս լոյն խայտառակեսցէ զհաղեան. և իբրու այն թէ լցեալ անապակաւ մատուցանէ յարբուսին զկուժն. իսկ նորա մինչև առեալ ի ձեռս ի սիրեելոյ հոտոյն անգէն խաբեցաւ, և անքննաբար առ զմատուցեալն. ուստի և ընդ նոյն հաւանեալ, և խառաբան պատրեալ, և ցանկութէն բերեալ, քամեաց ըզտուեալն մեծաւ յօժարութէ. և իբրև չարեցաւ՝ արագ արագ ելոյծ զհեղձամղձուկ տապն, և ապրեցաւ ի մեծաւ ուտ վտանգէն։ Նմանօ զշահ խաբանացն։ Այր եթէ ոք զանհնայն դաւանս բժշկաց կամեսցի ի համար բերել, յանսահման միջոց ձգեալ երկայնեսցի բանն։

Այր ոչ միայն որ մարմնոց բժիշկքն են, այլ և որ անձից հոգւոց խնամածուք կարգեցան, գտցես բազում անգամ՝ զի դովին վարեցան դեղով։ Ոմն օրինակ երանելին պաւղոս ձգեաց կալաւ զաղաւմ բիւրաւոր

եբրայեցւոցն (*), ՚ի սոյն խորհուրդ և զտիմոթէոս ա-
ռեալ Թլփատեաց. այն՝ որ գաղատացւոցն սպառնալիս
՚ի վերայ կապէր, եթէ ոլոց Թլփատինն՝ քո ինչ նոցա
ոչ օգնէ: Որպէս աղագաւ և ընդ օրինաքն Տպատակեաց
զանձն, այն՝ որ յետ ՚ի քո հաւատոցն՝ միաս համարէր
զարդարութիւնն՝ որ յօրինաց անտի է. փիլիպ. Ճ. 7:
Վասնզի մեծ է զօրութի խաբանացն. միայն եթէ ոչ
նենգաւոր խորհրդով կատարեսցի: Վանաւանդ եթէ
և ոչ խաբանք արժան է կոչել զգա, այլ մտեսութի
իմն և խմաստութի և արհեստ, որ եւս բազմապատիկ
յանեալն զօրանայ գատանել, և զհոգւոյն յանցանս ուղ-
ղել: Վասնզի և ոչ զիեհնեէս մարդասպան երբէք ասեմ
ես, որ ՚ի մի հարուած զերկու մարմինսն միանգամայն
գիակնացոյց: Որպէս և ոչ զհեղնաս վանն հարիւր զի-
նուորացն և նոցուն զօրավարացն, և յորդահոս ուղխից
արեանցն՝ զոր ՚ի կոտորածէ անտի նուիրելոցն գիւաց
գնացոյց: Օ ի եթէ տեղի տացուք այսմ, և զգործան
առանձինն մերկս ՚ի խորհրդոց անտի գործոցայն ընդ
քննութի արկցէ ոք, և զաբբահամ արդեօք իբրև որ
դեսպան խնդրեսցէ գատապարտել. զաւձեալ և զնո-
ւրուն Թոռն և զԹունեաց՝ ՚ի չարագործս ոմանց և
՚ի նենգաւորս կարգն հաստատել. քանզի այսպէս մին
զանդրանկութի՛ն կալաւ, և միւսն զմեծութիս եդիալ
տացւոցն յիսրայէլացւոց բանակն փոխագրեաց: Այլ
քաւ, մի լեցի այդ. ծն անդր ՚ի բաց տար զանդգնու-
թի՛դ. քանզի ոչ միայն անպարտս արձակեմք զնոսա,
այլ և զարմանամբք վանն այնորիկ. որ զի՝ և ինքն մեծ
դողին աղագաւ գովեաց զնոսա: Վասնզի խաբող նա
կոչի իրաւամբք, որ անիրաւութի՛ն գնայն ՚ի գործ արկա-
նէ, և ոչ որ առողջ խորհրդով վարեսցի նոքա: Այս է
բազում անգամ, զի պէտք են խաբանաց. զի մեծամեծք
՚ի դմին արհեստ կթեսցին շահք: Իսկ որ ընդ ու-
ղիղն գնաց, անհնարին չարիս գործեաց այսմ՝ զոր ոչն
խաբեաց:

(*) * Յայնժամ պաւղոսի առեալ զարան՝ ՚ի վուիս անդր ընդ նոսա
սրբեալ եմուտ ՚ի տաճարն, յայտ առնել զկատարումն աւուրցն սրբու-
թե՛ն, մինչև մատեաւ ՚ի վերայ իւրաքանչիւր ուրուք ՚ի նոցանէ պատա-
րագ ||. գործ. իա. 26:

* Առեալ Թլփատեաց զնա (տիմոթէոս) վասն հրէիցն՝ որ էին ՚ի
աւղիան յայնոսիկ ||. անդ. ժզ. 3:

ԳԼՈՒԽՔ Բ՝ ԳՐՈՑ։

ա. Այթէ նշան մեծ է քահանայութեն առ քո սիրոյն ։
բ. Եւ զի պաշտօն սորա գերագոյն գտանի քան զայլոցն ,
գ. Եւ զի խնդրէ նա անձն մեծ և աքանչելի ։
դ. Եւ թէ դժուարութեք և վտանգօք լի է գործս ։
ե. Եթէ ի պատճառս որ առ քո սիրոյն տեղի տուաք մեք ի գործոյ աստի ։
զ. Յայտնգիմանութեն առաքինութեն Բասիլեոսի , և նորա սաստիկ սիրոյն ։
է. Եթէ ոչ ի թշնամանել ինչ զորս ընտրեցինն զմեզ՝ խոյս տուաք ի ձեռնադրութենէն ։
ը. Եւ զի վախատեսութեն կորզեցաք զնոսա ի բամբասանաց անտի ։

ՅԱՂԸԹՍ ՎԱՏՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՈՍԿԵՓԵՐԱՆ.

Ա՛ւ արդ՝ զի է մեզ կարելի և գեղեցիկս լինի ի գործ արկանել զնաբանսն, մանաւանդ եթէ ոչ խաբանս յորջորջել զնա արժան իցէ, քան թէ աքսանս չեզի լինի տնտեսութեան, ապաքէն կարօղ էաք և բազմա գոյն կարգել բանս։ Ա՛յլ քանզի զոր միանգամ ասաս ցաքն՝ բաւականութեաբ հատուցին զցոյցս, ծանր և անբերելի է քան զչափն կարի երկայնել ձգել զբանն։ Ւսկ այսուհետև քեզ անկ է ցուցանել, եթէ արդեօք առ շահ ինչ քո վարեցաք մեք գործովդ այդուիկ։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Ւ՛ւ ո՞ր շահ օգտի ծնաւ մեզ յայդմ տնտեսութենդ, կամ յիմաստութենէդ, կամ զիմարդ և ախորժելի իցէ քեզ կոչել զդա, զի հաւանեսցուք քեզ, եթէ ոչ խաբեցաք ի քէն։

ՈՍԿԵՓԵՐԱՆ.

Ա՛ւ. Ա՛ւ զինչ քան զայդ շահ առաւել երբեք կայցէ, քան եթէ երևեսցուք մեք գործել զայն ինչ, զոր յանդիմանութեան առ քո սիրոյն վկայեաց լինել և ինքն քո. քանզի այսպէս ուրեմն առ գլխաւորն առաքելոց խօսեալով, ասէ. պետրէ, սիրէս զիս. խակ իբրև զայն խոստովան եղև նա, ի վերայ եբեր. եթէ սիրես զիս, արածեա՛ զոչխարս իմ։

Հարցանէ զաշակերտն վարդապետն, եթէ սիրեսցի՞ առ ի նմանէ, ոչ զի ինքն ուսցի. քանզի զիմարդ նա՝ որ զամենեցուն սիրտս քննէ. այլ զի զմեզ ուսուսցէ, եթէ քանիո՞ն իցէ նորա հոգն վասն վերահասցուէ խաչելոյդ այդոլիկ։ Ա՛ւ զի այդ քաջայայտ է, յայտնի է

ապա և այն՝ եթէ բազում և անձառելի հատուսցի վարձ այնմ, որ վաստակի յայն ինչ՝ զոր քո մեծապէս յարգէ։ Ո՛ի եթէ մեք՝ յորժամ տեսանեմք ՚ի մարդկանէ խնամակալուս ընտանեաց կամ խաչին մերոյ, ըզնոյն ջանան նշան համարիմք առ մեզ սիրոյն. Թէպէտ և այն ամենայն գինք էգեն արծաթոյ, ապա նա՝ որ ո՛չ արծաթով կամ այլ ինչ իրօք, այլ իւրական մնհուամբն գնեաց զքաւչդ, և վասն հօտին այնորիկ ետ զպատուական արիւնն, քանիպատիկ վարձու փոխարինեսցի հովուաց դորա. յաղագս որոյ իբրև ասաց աշակերտն, դու գիտես տէր, զի սիրեմ զքեզ, և վկայ ՚ի սէր անդր գնոյն զսիրեցեալն կոչէր, ո՛չ ցայս վայր եկայ ճշմարտիկն, այլ և գնշան սիրոյն ՚ի վերայ յաւել։ Վ՚անգի ո՛չ եթէ զչափ սիրոյն պետրոսի կամէր նա ՚ի դնմա բերել յայնժամ, այն՝ որ ՚ի բազմից անտի քաջայայտ իսկ էր մեզ. այլ թէ քանի՛ սիրեր նա զնկեղեցի իւր, և զպետրոս և զմեզ առհասարակ խնդրէր դաստիարակել, զի բազում ջանս և մեք ՚ի ներքս բերցուք վասն այսոցիկ։ Վ՚անգի առ ինչ և ՚ի միածին որդին ո՛չ խըղճացաւ ՚ած, այլ զմին զայն՝ զոր ուներ՝ մատնեաց. զի զորս թշնամութիք կային առ նա՝ հաշտեցուսցէ ընդ ինքեան, և արասցէ իւր ժողովուրդ սեպհական։ Վ՚ա ինչ և զարիւնն եհեղ. զի ստասցի զոչխարս զայսոսիկ, զոր յանձն արար պետրոսի և որոց յետ նորա։

Վ՚պա յիրաւի ասէր քո. * Ոսկ ո՛վ իցէ հաւատարիմ ծառայ և խնաստուն, զոր կացուցց տէր իւր ՚ի վերայ տան իւրոյ ‖. Մաթ. ԺԴ. 45։ Վարձեալ տարակուսելոյ են քանքն. Թէպէտ և որ զայսոսիկ բարբառէր, ո՛չ տարակուսանօք ինչ բարբառեցաւ։ Վ՚յլ որպէս անդա նօր մինչ զպետրոսն հարցանէր, եթէ սիրես, ո՛չ եթէ՝ զի կարօտ ինչ էր ուսանելոյ զնէրն, հարցանէր, այլ զի զսիրոյն իւրոյ զառաւելութիւն խնդրէր ցուցանել. նոյնպէս և այժմ՝ յորժամ ասէ, իսկ ո՛վ իցէ հաւատարիմ ծառայ և խնաստուն, ո՛չ եթէ հաւատարմին այնմիկ և խնամանոյն անձանօթ ոք զանձն ասէր, այլ զի զչքաւորութիւն իրացն կամէր յայտ առնել և զմեծութիւն իշխանութեանն այնմիկ։ Վ՚յլ դու հայեաց ինձ, եթէ քանիո՛ն իցէ յաղթանակն. ՚ի վերայ ամենայն ընչից իւրոց, ասէ, կացուսցէ զնա։

ը. Աղտ և տակաւին ի պայքար մնանեցս դու ընդ մեզ, եթէ ոչ գեղեցկապէս խաբեցաք զքեզ. յորժամ և հանդերձեալ իսկ է քո վերակացու լինել ամենայն ընչիցն այլ. և գործել զայն ինչ՝ յորս սակս զօրութիւն առ ի գործել հաստեաց ի պետրոս, և այլոց առաքելոցն գերագոյն գասեաց: Աստղի ասէ. պճղերէ սիրեն զիս առաւել քան զդոսա. արածեա զոչխարս իմ: Ովպէտ և ունէր ասել առ նա. եթէ սիրես զիս, յաձա խեա ի պահս, ի գեառնախշտուքեէ, ի հսկմունս անխանջ, պաշտպան կաց զրկելոցն, որբոցն լիր որպէս հայր, և նոցուն մեր իբրև այր: Այլ այժմ թողեալ զայս ամենայն, զինչ ասէ. արածեա զոչխարս իմ: Աստղի զորս կանխեցի եդի, և բազումք յիշխեցելոց անտի զօրեցին գիւրաբաւ կատարել, ոչ ազք միայն, այլ և կանայք գլխովին: Ասկ յորժամ եկեղեցւոյ վերակացուեցէ պէտք իցէն, և զայնչափ հոգւոց հաւատալոց գլխաման, ամենայն կանացի բնութեէ տեղի տուեալ ի բաց գնասցէ ի մեծութեէ գործոյս. նաև բազմագոյնք իսկ յարանց անտի:

Աղէ ի մէջ մատիցեն՝ որ միանգամ բազում չափով առաւելեալ են քան զամենեսեան. և որք դարձեալ հոգւոյն առաքինութեէ այնչափ ինն բարձրագոյնք են քան զայլս, որչափ ինչ քան զամենայն ազգն երբայեցւոց վիթխարութեէ մարմնոյն սուտ. մանաւանդ թէ և կարի առաւելութեէ: Աստղի աստանօր ինձ ոչ միայն ուսոյն բարձրութեէ չափն է խնդրելի, այլ որչափ ինչ խոհեր է ընդ անբանս և ընդ բանաւոր մարդիկ, դոյնչափ անջրպետութիւն է ընդ հովիւն և ընդ հովուեցեալսն. զի մի և առաւել ինչ ասացից. քանզի և ի կարի առաւելագոյնսն է վտանգն: Աստղի որ զղչխարսն կորուսանէ, կամ՝ ի գայլոցն յափշտակութեէ, կամ յաւազակացն յարձակմանէ, կամ՝ ի խաշնամոլէ խմբէ, և կամ յայլ ինչ արկածից պատահելոց, թո զուեէ ինչ թերևս հանդիպեսցի ի նոսէ հօտին. ապա եթէ և վրիժք ինչ պահանջեսցին, արծաթով չափ է պատուհասն: Ասկ որում մարդիկ հաւատացան՝ բանաւոր քոյ հօտն, նախ այն իսկ՝ զի ոչ ընդ արծաթոյ անկեալ է տուժիւք վասն կորստեան ոչխարացն, այլ ընդ

իւրոյ անձինն. և ապա՝ զի և կարի մեծ և բազմաքիրտն գոհիւ ունի առաջի։ Վասն զի նման ոչ ընդ գայլոց է մարտն, և ոչ յատազակաց անտի ակն. և ոչ դարձեալ տագնապալի ինչ՝ եթէ խաչնամանի կոտորեսցէ ի հօտն։ Այլ թէ առ այս ոմանս իցէ պատերազմն, և ընդ այց ոմանց արդեօք գօտեկռուելին, պաւղոսի լուր երթ նեղլոյն՝ որ ասէ.* Ոչէ մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիս և ընդ պետութիս, և ընդ աշխարհակալս խաւարիս յաւիտենիս այսր ըրկ, ընդ այսս չարուէ՝ որ ի նեղքոյ երկնից ‖. եփես. ՚ղ. 12։ Յեսէր զտուարուելին գնդին Թշնամեաց և գվայրենի փաղանգն. ոչ երկաթ ագուցեալ էն, այլ գընութին գլխովին, որ առ ամենայն սպառազինութի բաւական է։

Վասն և այլ զօր տեսանել ամենի և անագորոյն, որ դարանի գհետ հօտիդ այդորիկ. և զայն դարձեալ տես. յես դու ի նմին դիտանոցէ։ Վասն զի որ զնոցանէն խօսեցաւ ընդ մեզ, նոյն ինքն դարձեալ և գթշնամիս զայսոսիկ մեզ յերեւան ածէ. զիարդ արդեօք.* Յայտնի էն, ասէ, գործք մարմնոյ. այսինքն էն՝ շնուի, պոռնկութի, պղծութի, գիջողութի, կռապաշտութի, կախարդութի, թշնամուի, հեռ, նախանձ, բարկութի, հակառակութիք. գաղ. ե. 19. չարախօսութիք, քսութիք, հպարտութիք; ամբարտաւանութիք, խռովութիք ‖. է. խոր. ծէ. 20. և որ ինչ առաւել քան զսոսա. զի ոչ զամենայնն կարգեաց եդ, այլ սոքիմիք եթող ի մնաստասիրել և զայլսն։

Ի վերայ այսր՝ առ հովիւսն անքանից, որք միանգամ ապականել ինչ խնդրեն գհօտն, յորժամ զվերակացուն տեսանեն ի փախուստ դարձեալ, թողեալ զպատերազմն՝ որ ընդ նմա, շատ իսկ հաւարին գայփշատակութի խաչին. իսկ աստանօր՝ թէպէտ և գհօտն քո վանդակ առեալ տարցեն, սակայն և ոչ այնպէս թողուն լքանեն գհովիւն. այլ առաւել ևս յամառին գնդին, և առաւել ևս վայրենանան, և հանդարտին ոչ, մինչև ոչ և զնա ինքն տապատ արկցեն, կամ թէ ինքեանք անդէն անկանիցին։ Այդ այս և աիտոք խաչինն յայտնի կան, եթէ սով իցէ, եթէ խաչնամանի, եթէ խոց, կամ թէ այլ ինչ ի ցաւեցուցչաց անտի. և

այս ոչ սակաւ ինչ զօրէ յասպաքինութիւն անդր խօթացեալսն։ Եւ այլ ինչ առաւել քան զնոսն, որ գիտէ տալ զիւրաքանչիւրս լուծումն ախտին. իսկ զի՞նչ այն իցէ։ Վանդի մեծաւ իշխանութիւն բռնանան հովիւք՝ ի վերայ ոչխարացն առնուլ զչեղն, թէպէտ և ընդդէմ դարձցին և անսաստեացեն. քանզի հեշտեաւ առեալ կապեն զնոսա՝ եթէ խարանաց ինչ պէտք իցեն, և հատանեն, կամ՝ ի ներքս անդ արգելեալ պահելոյ զբազում ժամանակ՝ որչափ և պիտոյն իցէ. առաջի առնեն և այլ ձարակ փոխանակ այլոց, և՝ ի վտակացն մեհենն անջատեն. իսկ զայն ինչ՝ զոր միանգամ օգտակար դատին յառողջութիւն նոցա, բազում դիւրութիւք առաջի մատուցանեն։

Ը. Այլ մարդկան հիւանդութիւնք ոչ է մարդոյ դիւրաւ՝ ի վերայ կալ. * Օ՞ի ո՞ք՝ ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն՝ որ՝ ի նմա ‖. ա. կոր. Ը. 11։ Այդ՝ զիա՞րդ ոք ախտին դեղս մատուցանէ, որում անգէտ է հանգամանացն. նա զի բազում անգամ և ոչ՝ ի վերայ հասանել կարօղ ինչ է, եթէ հիւանդք իցէ արդեօք. ապա եթէ և ախտն նմա յայտնի եղիցի, յայնժամ և առաւել ևս տագնապ հասանէ՝ ի վերայ նորա։ Վանդի ոչ որով իշխանութիւք բուժէ հովիւն զոչխարն, նովին մարթ իցէ և զամենայն մարդիկ բժշկել. զի Թէպէտ և աստանօր կապանաց պէտք իցեն, և մեհենելոյ՝ ի ձարակին, և խարելոյ և հատանելոյ, այլ իշխանութիւն զբժշկութիւնն ընդունելոյ ոչ է՝ ի տուողէ անդր դեղոյն, այլ՝ ի ձեռս ախտացեալին է։ Վանդի՝ ի սոյն ակնարկեալ և աքանչելին այն այլ, գրեր առ կորնթացիսն. * Օ՞ի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքս, այլ գործակիցք եմք ձեր ուրախացդ ձերոյ ‖. բ. կոր. ա. 24։ Վանդի քրիստոնէիցդ առաւել իմն չէ օրէնն բռնութիւք ուղղել զանցանս մեղաւորին. իսկ որք յարտաքինոց անտի դատաւորքն են, առ չարագործն՝ որ ընդ օրինաւքն ըմբռնին՝ բազում իշխանութիւն՝ ի դէմ բերեն. և Թէպէտ և յակամայս, սանձեն զնոսա՝ ի գնացից անտի իւրեանց։ Վակ աստանօր ոչ եթէ բռնութիւք, այլ ամաքէտով արժան է զբնակիսին՝ ի լաւագոյնն փոխել։ Օ՞ի ոչ այնչափ իշխանութիւն տուաւ

մեզ յօրինաց անտի առ ՚ի սանձակոծել զմեղուցեալսն. մանաւանդ՝ եթէ և տուեալ և ես էր, ոչինչ ունէաք երբեք վարել իշխանութեանն այնուիկ. քանզի ոչ զորս բըռնաբար ՚ի բաց կան ՚ի չարութենէն՝ պսակէ ած, այլ որք կամակար մտօք որոշին յայնմանէ։ Յաղագս որոյ բազմապատիկ հնարից պէտք են, զի ախտացեալք մնադիւրագոյնս հպատակեսցեն զանձինս քահանայիցն դեղոց. և ոչ միայն այս, այլ զի և ընորհս կալցեն նոցա զբժշկութեանն։ Օ՛ի եթէ ոք կապեալ ՚ի բաց ոսեռալ զերծցի, քանզի իշխան է գործել զայդ, մինաս սաստիկ արար անձին իւրում. ապա եթէ զբանսն երբեք արհամարհեսցէ՝ որ հատու են իբրև զերկաթ, վերս այլ յայլ ելցէ յանձն յաղագս անարգանացն. և պատճառք բժշկութենէն դարձցին ՚ի նմանէ դժնդակագոյն ախտ. քանզի չիք ոք որ բուռն արասցէ, և կամ զդժկամակն ապստիլնել երբեք զօրեսցէ։

Է. Իսկ ապա զինչ ինչ գործել պարտ իցէ։ Վասն զի եթէ փափկագոյնս գնասցես ընդ նմա՝ որ մեծի հատանն պէտս ունիցի, և ոչ ՚ի խորս անդ տացես ըզվերն՝ որ այնմ կարօտն իցէ, զկնի հատեր զնոցայն, և զկնի անդէն թողեր ՚ի նմա. ապա եթէ գլխովին զկարևոր հատուածն նմա ՚ի վերայ բերես, բազում անդամ նա առ ցաւոցն յուսահատ եղեալ՝ առհասարակ զամենայնն ՚ի բաց մերժէ, և՛ զդեղն և՛ զկապանսն. և դահավիժ ձգէ զանձն՝ խորտակեալ զլուծն և խզեալ զկապանսն։

Վնասիմ ես զբազումս յուշ ածել քեզ, որք ՚ի վերջին չարիս կրթեցան յաղագս պահանջելոյ զարժանահաս պատուհաս մեղացն։ Վասնզի ոչ վարկպարապն ինչ արժան է ըստ չափուն յանցանացն և զփոխարէնն ՚ի վերայ կապել, այլ և զհանգամանս մեղուցեալցն խնդրել յուշել. զի մի թերևս յորժամ կարել զպատառեալն կամիցես, վտանգաւորագոյն ևս հերձուած ՚ի ներքս բերցես. և ՚ի ջանալ քո կանգնել զդըղրեալն, մեծ ևս կործանուած ՚ի վերայ ածցես։ Օ՛ի որ հիւանդքն են և լուծեալք, և առաւելապէս ՚ի փափկութենս աշխարհի շաղեալք, դարձեալ և որք ՚ի պատճառս ազգին և իշխանութենն բարձրամիտ խորհուրդս ստացեալ ունին,

այնպիսիք ոմանք՝ մէտ ՚ի մէտ և տակաւ տակաւ ունին աեղւն տալ՝ յորոց մեղանչեն. և թէ ոչ բովանդակ, դմնեայ ՚ի կիսոց չարեացն սպրեսցին՝ որ կալեալ ունին զնոսա. ապա եթէ ոք զամենայն կշտամբանսն միահաս մուռ թափեսցէ ՚ի նոսա, նաև ՚ի փոքրիկ ուղղութէ անտի զրկեսցէ զնոսա: Վասնզի հոգին այն լինչ միանգամ բանադատի ՚ի շառագնութէն անդը, յանցաւորութէն բերի սպա. և այնուհետև ոչ ողբանաց լինչ բանից եւ բեաս առնէ, ոչ ՚ի սպառնալեաց երբէք անկանի, և ոչ երախտեաք անգամ յանկուցանի. այլ լինի նա այնու հետև վատթարագոյն և քան զքաղաքն զայն, զոր մարգարէն բամբասելով ասէր. * Արբաք կնոջ պոռնկի եղեն քեզ, անամօթեցար առ ամենեսեան ‖. եր. գ. 3:

Յաղագս որոյ բաղում զգօնութէ պէտք են հովուին, և բիւրուց աչաց. որպէս զի ամենայն ուստեք շուրջանակի աեսցէ զհոգւոյն բնաւորութէն: Վասնզի զորօրինակ բաղումք խրոխտ ժպրհութէ ընդվզին և ՚ի յոտնատատութէն անկանին փրկութէ իւրեանց, առ ՚ի ոչ բաւելոյ քերել դառնագոյն դեղոցն. նոյնպէս՝ են և որք վասն ոչ տալոյ վրէժս արժանիս մեղաց իւրեանց, յարհամարհուն անդը փոխին. և յառաւելագոյն ևս վատթարութէն դառնան, և ՚ի մեծամեծս ևս ձգին մեղանչել: Ապա պարտ և արժան է նուիրելոյն ոչինչ անքննաբար թողուլ ՚ի սոցանէ, այլ զամենայնն հետազօտել խնամով, և վայելչապէս զպարտս իւր առաջի ընծայել. զի մի թերևս ՚ի նանիր լինչ եղելոցն նմա ջանք իւր:

Այլ ոչ յայսմ միայն, այլ և յորժամ միաւորել խնդրէ նա զպատահարեալ անդամն եկեղեցւոյ, տեսանէս զնա՝ զի ընդ բաղում քերան մնանէ: Վասնզի ոչխարացս հովիւն զհետ իւր հնազանդեալ ունի զհօտն՝ ուրանօր և ածիցէ. իսկ եթէ և անկանիցին ոմանք յուղիղ ձանապարհէն, և թողեալ զբարւոք արօտն՝ զամուէն և զառապար սահմանսն ձարակեսցեն, շատ է բարձրագոչ ձայն արձակեալ՝ նուաձել զնա կրկին, և դարձուցանել զանջատեալն ՚ի հօտն: Այլ եթէ ՚ի մարդկանէ ոք յուղղուէ անտի հաւատոյն մոլորեալ իցէ, բաղում վաստակոց պէտք են հովուին, բաղում համբերութէն և երկայնմտութէն: Վասնզի բռնութէն չիք հնար նա հանջել, և ոչ դարձեալ երկիւղիւն բռնադատել. այլ

ողբանօք պարտ է ածել վերստին առ Ձմարտութիւնն՝ յորմէ որոշեցաւն՝ ի սկզբան։

Ասպա պիտոյ են նմա արիական հոգւոյ, զի մի լուծեալ անկանիցի. և զի մի գարձեալ յուսահատ երթիցէ լինիցի՝ ի մոլորեալսն փրկութէ. և զի հանապազ զնոյն զայն յուշի կապեսցէ և ասասցէ. * Վաւերեա տացէ նոցա ածծ ապաշխարութիւն՝ ի գիտուն Ձմարտութէ. և սթափեսցին յորոգայթից սատանայի ‖ . Ե . փԷՀ . Ե . 25 ։ Զայս զպատ այսոցիկ տէրն առ աշակերտսն խօսէր և ասէր. * Ահա ած էցէ հաւատարիմ ծառայ և խմաստուն ‖ . Մ Ղ Ե . ԷԷ . 45 ։ Վասնզի որ զանձն կրթէ, յանձին իւրում միայն պարապէ զօգուտն. իսկ հովուականին շահն առ ամենայն ժողովուրդն հեղու։ Ասպաքէն և որ՝ ի կարօղ տեսլեան բաշխէ զինչս, կամ զիարդ և օրինակաւ զրկելոց ամանց պաշտպան կայ, օգնէ և սա ինչ մի ընկերին իւրում. այլ սակայն այնչափ լիմն խոնարհագոյն քան զքահանայն, որչափ ինչ խտիր է մարմնոյն առ հոգին։ Ասպա յիրաւի տէրն կնիք ասաց առ ինքն սիրոյն զնոր նամանն՝ որ վասն հօտին։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Ասկ դու ո՞չ արդեօք սիրես զքո։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

Ասւ սիրեմ, և՝ի սիրելոյ ո՛չ դադարեմ երբէք. սա կայն երկնչիմ, զի մի գրգռեցից զսիրեցեալն յինէն։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Ասւ զինչ առակ էցէ երբէք խրթնագոյն քան զայդ. Ասթէ քո սիրողին իւրում հրամայէ արածել զոչխարս իւր, իսկ դու վասն այնորիկ ասես ո՛չ արածել, քանզի սիրես զնա՝ որ զայդ պատուիրեաց։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

Ասառակ և ո՛չ մի ինչ է՝ ի բանդ. նաև կարի պարզ և մեկին է։ Վասնզի եթէ քաջագէտ ինչ էի՝ ի պաշտել զիշխանութիւնդ զայդ ըստ քոյ կամացն, և տակաւին տեղի տուեալ փախչէի, ի դէպ էր քեզ արդեօք վարանիլ՝ զոր միանգամ ապացիդ. այլ քանզի անպիտան

կացոյց զնս ախարուԹե՛ն անձինս ՚ի պաշտամանդ յայդմիկ, առ ինչ երբեք խնդիրք յուզեսցին ՚ի բանս։ Վասն զի երկնչիմ, զի մի զհօտն քո առեալ գայրն և զպարարակն, և զնոյն ապա յուլուԹե՛ք իմով ապականեալ, զնո՛ծ դրգռեցից ընդդէմ ինձ, այն՝ ոլ այնչափ սիրեաց գնա, մինչև զանձն իւր մատոյց ՚ի փրկուԹիւն նորա և ՚ի գին։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Լինդ խաղ ասես զայդոսիկ։ Օ՛ն եԹէ արդարև զջմտուԹե՛ն, էպիտե՛մ ընաւ՝ զիա՞րդ այլովք երբեք մնրԹէր զքեզ առաւել ինձ մերկանալ ցուցանել՝ եԹէ զիրաւացն ցաւն ցաւիմք մեք, քան եԹէ բանիւքդ քո այդոքիւք, որովք փուԹաս զԹաղծուԹիւն փարատեր։ Վասն զի իմ և յառաջագոյն իսկ ծանուցեալ էր, զի խաբեցեր գնա և մատնեցեր։ իսկ այժմ առաւել և՝ յորժամ զամբաստանուԹիդ ձեռն արկեր լուծանել, խելամուտ լինիմ այդմ և քաջ իսկ ՚ի վերայ հասեալ եմ, յո՛ր սահման չարեաց առեալ ձգեցեր զնա։ Օ՛ն եԹէ արդարև դորին աղագաւ զերծեր զքեզ ՚ի ներքուստ պաշտամանդ այդորիկ, զի քեռին գործոյդ անքաւական ձանաչէիր զանձն քո, առաջին զնս լինքն պարտ էր քեզ ՚ի բացդ կորզել, Թէպետ և բազում ցանկուԹե՛ն վառեալ էի առ ՚ի նոյն։ նա՛ զնս և բովանդակ զոր յաղագս այսցիկ խորհուրդ՝ ՚ի քեզ լինքն ապաստան արարի։ Այլ արդ զքոյն միայն տեսանելով, զմերովքն անտես արարեր։ այլ ո՛ տայր լինձ եԹէ և անտես առնէիր, և այդպէս սիրելի էր մեզ։ իսկ դու և հնարս խորհեցար, որով զիւրըմբռնելի լեցուք խնդրոյդ զմեզ։ Ո՛ւ այս՝ էի՛ք քո և յայն ինչ տեղի ապաւինի, եԹէ կարծիք ցամբոխին պատրեաց զքեզ, և ձգեաց կալաւ զմիտս քո՝ մեծամեծս ինչ և զարմանալիս խորհել զմէնջ։ Վասնզի ո՛չ ՚ի զարմանալեաց ոմանց եմք մեք և ո՛չ յակամաւրացս։ և ո՛չ իսկ Թէպետ և այդպէս հանդիպեր լինել, ՚ի դէպ ինչ էր՝ քան զձշմարտուԹիւնն զբազմաց կարծիսն նախատապատիւ առնել։ Վասնզի եԹէ ո՛չ երբեք զփորձ առեալ էր քո զմերոյ քաղաքավարուԹենէն, Թուէր իմն պատճառս բանական ունել քեզ, եԹէ առ ՚ի բազմաց ֆամբաւոյն հաւանեցար դու ընդ այդ։ իսկ ապա եԹէ

և ո՛չ ոք այնպէս ծանեաւ զՔրն , նա և քան զծնողն մեր և քան զդաստիարակն առաւել կացեր դու քննու-Թե՛ ի վերայ հոգւոյ մերոյ , ո՞ր քան գուցէ քո երբեք այնպէս հաւանական , մինչև բաւական լինել քեզ հան-գուցանել զունկնդիրսն , եթէ ո՛չ արկեր դու զմեզ ի վտանգդ յայդ : Ա.յլ արդ Թողեալ ի քաց զայսոսիկ , քանզի ո՛չինչ ստիպեմք զքեզ յաղագս սոցին իրաւաբա-նել , զինչ պատասխանի արասցուք առ ամբաստանսն , ա՛ղէ ասա :

ՈՍԿԵՔԵՐԱՆ .

Ա.յլ ես ո՛չ երբէք զՀանապարհ իմ կալայց առ դա-սա , մինչև ո՛չ եղծանեմ՝ որ ինչ առ քեզն հայիս , Թէ-պէտ և բիւրիցս խնդրեսցես դու անպարտս արձակել զմեզ ի յանցանաց : Վանզի ասացեր՝ եթէ տպիտուին գլխովին տայ մեզ ԹողուԹե՛ հանդիպել . և զի՝ յամե-նայն բամբասանաց ի քաց արձակեաք մեք , եթէ ո՛չինչ գիտելով զքոյոցդ՝ այնպէս յայդ սահմանն ձգեաք զքեզ . իսկ քանզի ո՛չ անտեղեակք ինչ գոլով , այլ հաւաստի քննուԹե՛ ի վերայ հասեալ քոյոցդ՝ մտանեցաք զքեզ , յաղագս որոյ և ամենայն պատճառք բանակայնք և պա-տասխանիք արժանահաւաք տեղի ետուն առ ի մէնջ :

Ա.յլ ինձ գլխովին հակառակ են կարծիք . քանզի բազում քննուԹե՛ պէտս ունին այդոքիւք : Ա.պաքէն որ զարժանաւորն հանդերձեալ է մատնել ի քահանայուէ անդը , չէ արժան բազմաց կարծեօքն ևԹե շատանալ , այլ ընդ նմին և զիւրն ունել առաւել քան զամենեցուն . և նախ քան զամենայն խնդրել քննել զնորայն (*) : Վանզի երանելին պաւղոս յորժամ ասէ , եԹէ * Ա.յլ պարտ է նմա վկայուԹե՛ բարի և յարտաքնոցն ունել ‖ . ա . տիմ . գ . 7 . ո՛չ եԹէ զՀիգրիտ և զՀաւատի քննու-Թե՛ն ի քաց բառնայ . և ո՛չ դարձեալ զնոյն իբրև կնիք գերագոյն՝ նոցուն քաջալաւուԹե՛ դնէ առաջի : Վան-զի բազում ինչ յառաջագոյն կարգեալ և եդեալ , ա-պա ի վերջէ զնոյն յաւելու . յայտ արարեալ՝ եԹէ յընտրուԹե՛ս յայսոսիկ չէ արժան անձամբ ևԹե շատա-

(*) Զնորայն , այս է՝ զՀանգամանս և զարժանիս նուիրելոյն ի քահա-նայուԹե՛ . որպէս և փոքր մի զինի նոցան ֆՋլատաւուԹե՛՝ իմա՛ նուիրելոցն :

նալ, այլ ընդ այլոյն և զսոյն ունել պարտ է։ Ոչանգիր դէպ լինի բազում անգամ՝ զի կարծիք բազմացն ի դերև ելանեն. իսկ յորժամ չիցէ բիտ քննութիւնք յառաջագոյն կանխեն ունկին, ոչինչ վտանգ այնուհետև յայնմանէ լինի խիթալն. նորին աղագաւ յետ այլոցն գնել զսոյն՝ և որ յարտաքնոց անտի. զի ոչ պարզ ասէ, պարտ է նմա վկայութիւն բարի ունել, այլ և զսոյն ի վերայ բերել, եթէ և յարտաքնոցն. յայտ արարեալ՝ եթէ քան զարտաքնոցն համբաւ նախ արժան է հաւաստի քննութիւնք քննել զնա։ Այս արդ՝ քանզի և իմ առաւել ի վերայ հասեալ էր քոյոցն քան զծնողս քո, որպէս և դու ինքնին խոստովան եղեր, վասն որոյ և արժանի իսկ եմ՝ եթէ քաւեցայց յամենայն ամբաստանութենէն։

ԹԱՍԻԼԻՈՍ.

Ոչ վասն այդորիկ զերծանիս ինչ դու, եթէ երբէք ոք կամիցի ամբաստանել զքէն։ Ոչ արդեօք յիշես դու՝ զոր ի միջոջ լուեալ է քո, և բազում անգամ և ի նոցունց իսկ յարդեանցն վարդապետեալ, եթէ անարի հոգւոյ վիճակեալ եմ ես։ Ոչ ահա դորին աղագաւ և անգուլութիւն առեալ եր քո իբրև փոքրոգի այսպանել զմեզ, եթէ և առ դուշնաքեայ քրտունս դիւրաւ անկանիմք։

ՈՍԿԵՐԵՐԱՆ.

Ցուշ ածեմ ես, զի բազում անգամ զայդոսիկ բանս լուեալ է իմ ի քէն. և ոչ դու դարձեալ յուրացաս երբէք եղիցիս։ Իսկ թէ ուրեք երբէք հեգնէի զքեզ, ընդ խաղ գործէի, և ոչ բովանդակութիւն։ Այլ սակայն վասն դոցա ոչինչ այժմ պայքարիմ ես ընդ քեզ. այլ զքեզ աղաչեմ՝ զնոյն զայն մտերմութիւն շնորհեսցես ինձ, եթէ երբէք խնդրեցից ինչ ի յիշատակ ածել ի քոյ բնակաւոր բարեաց. և թէ դու դուն գործեսցես իբրև ստախօսս ոմանս յանդիմանել զմեզ, մեք ոչինչ խնայեսցուք ի քեզ. այլ բացցուք մերկասցուք՝ եթէ առաւել զանձն ի չափու ունիս, քան եթէ ի պատճառս ինչ չհմտութենէ զդոյն բարբառիս. ոչ այլովք ինչ՝ քան եթէ քոյին բանիւք և արդեամբք՝ վարեսցուք վկայիւք ի հաւաստարմութիւն ասացելոցն։

Ե. Այլ առաջին զայս ինչ կամիմ հարցանել ՚ի քէն. զխոհեմն արդեօք՝ քանիօն իցէ զօրուն սիրոյն: Այնզի քո ՚ի բաց թողեալ զամենայն հրաշս, զոր կատարել հանդերձեալ էին առաքեալքն, *Հայամ, ասէ, ծանիցեն մարդիկ, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս ‖. յովհ. ԺԳ. 35: Լսեալ պատգոյ լուծմն օրինացն ասէ զնա լինել. և առանց նորա անօգուտ զպարգևսն. հա. ԺԳ. 10: Լուր՝ զայս բարձրագոյն բարւոյ, զկնիք գործոյ աշակերտացն, զնախանձոտ պարգևացն, տեսի ես ՚ի քումդ անձին հաստատմամբ տնկեալ՝ և պտղովք քաջաբեր:

ԲԱՍԻԼԻՈՍ.

Այլ զի ՚ի դոյն գործ մեծապէս ձգնեցայ ես, և ջանս բազմապատիկ ՚ինեքքս բերի վասն պատուիրանիդ այդորիկ, խոստովանիմ և ես. իսկ Թէ և ոչ կիսով չափ ՚ի դմանէ զբաժնէ ածի, և դու ինքնին վկայեսցես ինձ, եթէ զմոռացումն բարբառդ կարձեալ՝ ձշմարտու Թեամբ դատել ախորժես:

ՈՍԿԵՐԵՐԱՆ.

Ի չանդիմանուիս ուրեմն զարձայց ես. և զոր միանդամ սպառնացայ՝ կատարեցից ՚ի մեծոյ. բերեալ քեզ ՚ի դէմն, եթէ առաւել ինդրես դու զանձն ՚ի չափու ունել, քան եթէ ձշմարտել: Այլ պատմեցից ինչ մի նորոգ գործեալ, զի մի ոք Թերևս՝ եթէ զինացեալցն բուռն հարից, համարեսցի երբէք, եթէ ժամանակին յոլովութիւն զձշմարտումն հնարիմ ազօտացուցանել. նա զի և ոչ առ մոռացումն բարբառովքն յօգել ինչ առ ՚ի միոջ ներկ մեզ երբէք ձշմարտութիւնն:

Ը. Զանգի յորժամ մի ոմն ՚ի մերոց մոեռմայց զերպարտութիւնէ ամբաստանեցաւ ՚ի բանս Թշնամանոց և ՚ի կիրս ժպրհութեանէ, և այն ինչ ՚ի վերջինսն վտանգեցաւ, յայնժամ իրրև ոչ ոք էր՝ որ քեզ մեղայիր լինէր, և ոչ դարձեալ որ ՚ի վտանգն մտանեցաւ՝ երբէք արգահատէր, առեալ զբեզ ինքնին ձգեցեր ՚ի միջ վտանգն: Վարձն այս ինչ է,

Ա.յլ դի և 'ի բանից քոյ յանդիմանեսցուք զքեզ, և զնոյն բանսն քեզ 'ի յուշի կապեսցուք. իբրև կէսք ոչ ինչ հաձեցան ընդ դոյն քաջութեի յաժարութե քոյ, և կէսք դարձեալ 'ի դովութեի առնն և զարմացան, դու առ ամբաստանսն այսպէս խօսեցար. "Այս զի՞նչ ապա քէն գործել պարտ իցէ. քանզի ոչ այլազգ ինչ սիրել վարդապետեցայ, քան եթէ ընդ նորայն և զնոսին մնա տուցանել անձն, եթէ երբեք պէտք ինչ լինիցին ապրեցուցանել զվտանգեալ բարեկամին,, : Պէտք և ոչ նովին բանիւք՝ այլ նովին մտօք զքեզնին բարքառեցար դու. որով նա առ աշակերտսն խօսեալով՝ զկատարեալ սիրոյն սահմանն հաստատեաց. * Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, ասէ, եթէ զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց ‖ Յհ. ժե. 13: Այլ արդ՝ եթէ մեծ ևս քան զայս չէք գտանել, 'ի ծայրն ուրեմն հասեր նոքա. և որովք գործեցերն և որովք ասացերն, 'ի նոքունն գագաթն վերաթևեցեր: Այրին աղագաւ և մատնեցաք զքեզ. նորին աղագաւ և զնենգս զայս հնարեցաք մեք: Ընդեօք բաւական՞ ի՞ցեմք և հաձեցուցանել զքեզ, եթէ ոչ վրիպակ ինչ խորհրդով խնդրեաք 'ի վտանգ արկանել զքեզ. այլ զի զնոյն զայն պիտանացու տեսաք, նորին վասն և յայդ սահման ածաք զքեզ:

ԲԱՍԻԼԻՈՍ.

Մեծ է առ ուղղութե ընկերին շատ իսկ դատեալ է քո զգօրութիւն սիրոյն:

ՈՍԿԵՓԵՐԱՆ.

Այս կարի իսկ քաջ և առաւելագոյն մասամբ առ 'ի նոյն յաջողեալ է սէրն: Ապա թէ քեզ կամք իցեն, զի և զիմաստուն քոյ զցոյցս 'ի դէմն ածցուք մեք, հապա և ընդ նոյն կալցուք ձանապարհ և յանդիմանեսցուք զքեզ առաւել խորհրդական, քան եթէ գործական:

Ա.ռ այս շառագունեալ և զամթեի հարեալ, ասէ

ԲԱՍԻԼԻՈՍ.

Ա.ռ այժմ դու զերս առ մեզս հայեաց՝ անդր 'ի բաց Թողքանզի և ոչ սնդստին 'ի սկզբանէ վասն դոցին իրաց բանս պահանջեցի ես 'ի քէն: Իսկ թէ առ արտաքինսն

անդր արժանահաս ինչ ունիցիս դու ասել քանս, մնաս դիւրագոյնս արդեօք լուայց զդոսա։ Յաղագս որոյ ի քաց տարեալ քո զտուեալդ մերոց մտցուիդ, ասա զնո՛ր պատասխանի արասցուք առ օտարսն, որք զմեզ պատուասիրեցին, և որք դարձեալ նոցունն կարեկից լինին իբրև ի վերայ անարգելոց ոմանց։

ՈՍԿԵՓԵՐԱՆ։

Է. Այո՛ ես ինքն այսուհետև ի նոյն կանխեալ եմ. և քանզի զառ քեզ բանսն ետուր հատուցի, հեշտեաւ և ի դոյն կարգ պատասխանւոյ փոխեցայց այժմ։ Այո՛ արդ՝ զինչ դոցունն ամբաստանուածին իցէ, և որո՛ր արդեօք յանցաւորութեանն։ Նախ արդեաւք ասեն զանձինս առ ի մէնջ և ծանուցանս վշտացեալ, զի զպատիւն՝ զոր զմեզ պատուել խնդրեին, մեք ո՛չ ընկալաք։ Այլ ես առաջինն զայս ասեմ, եթէ մեզ յաղագս մարդկան անարգանաց փոյթ ինչ տանել չէ արժան, յորժամ ի պատճառս նոցա պատուոյն՝ բռնադատիմք այլ մեղանչել։ Այս և ո՛չ որ դժկամակն եղեալ՝ սրտմտութիւնք բերին յայսոսիկ, անվտանգս երբէք ասեմ զնոսա. այլ և ինաս բազում արկանեն զանձամբք։ Վասնզի համարիմ՝ եթէ որք միանգամ ածակողմանն նուիրեցան, և զնա միայն նկատել բնաւորեցան, այնչափ իմն պարտ է նոցա բարեպաշտութիւնն առաքինանալ, որպէս զի և ո՛չ յանաբադանոյ կարգի հաստատել զդոյն. թէպէտ և բիւր անգամ զնոյն օրինակ անպատուութիւնս կրեսցեն։ Իսկ թէ յայդպիսեացս անտի և ո՛չ ի միոս անգամ անկաւ մեր, անտի քաջայայտ է, զի եթէ ամբարհաւաճութիւնք էին և փառասիրութիւնք, որով բազում անգամ ասացեր դատել զմեզ ոմանց, եկի ես ի դոյն՝ ձշմարտելով զբանս ամբաստանողացն, մեծամեծս արդեօք անիրաւեալ էր իմ՝ յարհամարհել անդ զայնպիսիսն արս ականաւորս, աքանչելիս և բարեգործս։

Օ՞ի եթէ առ ո՛չինչ անիրաւեալսն անիրաւիլ ընդվզիմ իցէ, ապա որ յանձանց շարժեցան մեծարել զմեզ, (*) (

(*) ի յունական երկու օրինակս տպագրեալս, նաև ի Մօնֆաքօնի տիպն յոյն և լատին՝ յետ գծագրել զմեզ, դնի և այսպիսի ինչ բան, ⁘ոնիջն

սել, եթէ չինէն բարեկրեալ նոցա եթէ փոքու և եթէ մեծաւ, զիմոխարէն բարեացն կամեցան հատուցանել), քանի՞ պատժոյ չիցէ արժանի, որ հակառակօքն փոխաբինեսցէ նոցա: Իսկ թէ այդ և ո՛չ ի յուշն մեր անկաւ երբէք, այլ զի օտար խորհրդով տեղի տուաք ի ծանրութէ քեռինդ, առ ինչ նոքա որ ներել պարտէին, թէպէտ և հատանել վերջասցին, բամբասեն՝ զի խնայեցաք յանձինս մեր: Վասնզի այնչափ հեռի եմ ի նախատեղծ զարգ զայդոսիկ, մինչ զի և տեղի տալովս համարիմ շուք դնել նոցա: Ի երբէք զարմասցիս դու, եթէ անհնարինս արդեօք բարբառիմ. քանզի և զդոքա լուծուին փութով ահա մերձ դիցուք:

ը. Վասնզի յայնժամ, եթէ ո՛չ առնեսքեան, այլ սակայն որոց միանգամ քաղցը է չարախօսել, բազումն ինչ արդեօք յաղագս իմ ձեռնադրելոյս և իմոյն ընտրելեաց՝ ունելին ի միտս կասկածոտս լինել և ասել. ըստ որում՝ եթէ ի ձեռնուխս անդ յառեցին զակն. և զի՝ ընդ քաջատոհմութէն ազգին զարմացան. և զի առ ի մէնջ չնթեալք՝ ի նոյն ածին կացուցին զմեզ: Իսկ թէ և ընչիւք ամբեցան առ ի նոյն, չունիմ ասել, եթէ ոք թերևս և ընդ այն վարանէր ի միտս իւր: Այլ թէ քո զձկնորսս ոմանս և զխորանակարս և զմաքսաւորս յայդ իշխանութիւն կոչեաց, իսկ ոքա՝ որք ի քրտանց աւուրն զպարկինն պատրաստեն, զնոսա ի բաց լքաներն. իսկ եթէ ոք յարտաքնոցն Ճառս թարգմանել և անգործ կեանս վարել, ընդ նա հաւանիլն և զարմանան: Վասնզի առ ինչ ապա՝ որ բնութիւք քրտամբք վարակեցան ի պէտս եկեղեցւոյ, զնոսա անտես արասցեն. իսկ որ անփորձ էր վաստակոցս այսոցիկ, և զա-

ապա պապասել զնոսա պարտ էիցէ: Այլ գրչագիր յայն օրինակք առաւելապէս մնասմամբ, որպէս վկայէ և ինքն Մովսէսեան, չունին զայդ: Եւ թէպէտ և Մովսէսեան ընտրելի դասուցաւ զնոյն, չգիտեմ արդեօք, դուք այդր հատուածոյ յիւրում տպագրութէ, այլ սակայն այդ բազում մնասմբ՝ որպէս յայսմ է մատագրացն՝ խանգարէ զգեղեցիկ կարգ բանիցն, ուստի և լաւ ևս է անհարապատ համարել զհատուածդ: Քանզի յետ առելոյ ոչ Աակերեանին չանչանց ընծեցան, դնէ զայնորիկ զպատճառն իբրև ընդ մէջ անկեալ հատուածով եթէ՝ փանչ և ո՛չ պոյն ինչ ուռնիցի ոք և այլն. ապա և զատակի պատուհասն այնպիսի ապառումբ և անբան հատուցանողացն ըստ նմանէ կարգէ, եթէ՝ ապա փանչ պարծիցի էիցէ ևն:

մենայն հասակին ՚ի մնալաստակ աքնութիւն արտաքնոցն զրուցոյց մաշեալ, յանկարծակի զնա յայդչափ պատիւ վերառին։

Օ այս և առաւել ևս քան զայդ ունելին արդեօք առել նոքա, եթէ երբեք զայդ իշխանուն յանձն առեալ էր մեր։ Այլ ո՛չ և այժմ, քանզի ամենայն չարաբանութիւն պատճառք հատան ՚ի նոցանէ. և ո՛չինչ ունին դոքա ՚ի դէմն հարկանել մեզ, եթէ ես մարդահաճեցի երբեք, կամ թէ նոքա կաշառաբեկ լինչ եղեն. բայց թէ իցեն թերևս՝ որ զլսովին բանդագուշեն կամեցին։ Այանզի զիա՞րդ ոք՝ որ մարդահաճ և զինչս վատնէ առ ՚ի զբառամբ զպատիւն ածել, յորժամ ժառանգել զնոյն պարտ իցէ՝ նա այլոց ոմանց թողուցու զնա։ ՚Ի դէպ եկեալ բանիս՝ որպէս եթէ ոք բաղում վասատակս վասն երկրին յանձին կալեալ իցէ, զի տոհմական նոք պատաբերեսցին նմա որպէս, և գինեաւ զեղցին հնձանք. իսկ յետ բիւրուց քրտանց և վաստակելոյ մթերից ընչից, յորժամ հնձել հանդերձեալ իցէ և այդե-կութ առնել, նա յայնժամ օտարաց ոմանց լքեալ թողեն զքաջաբերութիւնն պղծոյն։

Տեսանե՞ս, զի յայնժամ թէպէտ և անքաժ ՚ի ձմեռնաւորութէ անտի իցեն բանդագուշանքն, զնո արդեօք ՚ի ձեռս առնուին յօժարեալքն նախատել զնոսա, իբրու եթէ ո՛չ քաջախորհուրդ գատաստանաւ վճարեցաւ ընտրուին։ Իսկ այժմ մեք սանձակոծեմք զնոսա ՚ի կռնչելոյ կամ զբերան երբեք բանալոյ։ Այս զոր լինչ միանգամ ՚ի սկզբան անդ խօսեին նոքա, այսպիսիք լինչ էին և առաւել քան զայսոսիկ։ Իսկ ապա ՚ի մտանել մեր ՚ի սպասաւորութէն անդր, ապաքէն ո՛չինչ բառական էաք հանապազորդ բամբասանացն պատասխանի երբեք առնել, թէպէտ և մեզ անմեղութէ վճարէր ամենայնն. Թողում ասել՝ եթէ և ՚ի պատճառս հասակին և անփորձութէն հարկ ՚ի վերայ կայր մեր բաղում լինչ յանցանել։ Այլ այդ և յայդոյ բամբասանաց ազատեցաք զդոսա. ուր յայնժամ բիւրուք նախատանօք պաշարէին արդեօք զնոսա։ Այանզի ո՞ այն ոք էր ապաքէն, որ ո՛չ խօսէր. եթէ ահա զայնպիսի մեծահրաշ և զարմանալի գոյն գործս ՚ի ձեռս ետուն տղայոց անմտաց, զոյ հօտս վատնեցին. յառակ և ՚ի ծաղր դարձան քրիստոնէիցն

քանք ։ Ա՛յլ այժմ * ամենայն անօրէնութիւն խցցէ զբե-
րան իւր ։ սղ. ճշ. 42 ։ Ա՛նզի եթէ և վասն քո՛ ի
դէմն բերցեն զայդոսիկ , դու յարդեանց անտի անդէն
մարգեսցես զդոսա , եթէ ո՛չ է պարտ զիմաստութիւնն
հասակաւն չափել , և ո՛չ դարձեալ զծերն յաղեացն դա-
տել , և ո՛չ դարձեալ զմանկագոյնն յայդպիսի պաշտա-
մանէ գլխովին ի բաց տանել , այլ զմատաղատունկն ։
քանզի ընդ սոսա երկոսեան բազում է խտիրն ։

ԳԼՈՒԽ Գ. ԴՐՈՑՍ.

ա. Այնէ որք կալծեցին զմիմեանս, թէ ամբարտաւանութիւն ինչ առնէ առաքն, նոքա զիւրեանց համբաւն ջնասեցին:

բ. Եւ թէ մեք ոչ՝ ի պատճառս անափառութեան խոյս առաքն:

գ. Եւ զի եթէ փառաց ինչ ցանկացեալ էր մեր, առաւել եւս պարտ էր ընտրել զդործն ըլայն:

դ. Եւ զի ամբարիշտն է քահանայութեան. և քան զհնոյն պաշտօն՝ նո՛ր ըլայս առաւել է ահաւոր:

ե. Եւ թէ մեծ է իշխանութեան և պատիւն քահանայից:

զ. Եւ թէ սպասաւորութեանքն՝ ի կարգէ են մեծաց պարգեւացն ըայ:

է. Եւ զի և ինքն պաւղոս զարհուրեալ ինն էր, յորժամ հայեցաւ՝ ի մեծութիւն անդր իշխանութեանն այնորիկ:

ը. Եւ զի բազում անգամ՝ որ՝ ի մէջ անդր մատչի՝ բերի՝ ի մեզանէ չէ, եթէ ոչ սասեկ ինն արիական հոգւոյ վճռակեալ էին:

թ. Եւ թէ անափառութիւն և նորուն կրիւքն թակարգի այնպիսին:

ժ. Եւ զի ոչ քահանայութիւնն է սոցուն պատճառք, այլ մերս վատութիւն:

ժա. Եւ զի պարտ է քահանային զիշխանասիրութեանն յօժարութիւն խլել՝ ի սրտէ իւրմէ:

ժբ. Եթէ քահանային պարտ է լինել խոստուն յոյժ:

ժգ. Եւ թէ բաց՝ ի գեղեցիկ ժուժկալութենէն, և այլոց երաց պէտք են անձին քահանային:

ժդ. Եւ թէ ոչինչ այնպէս զյաւակութիւն և զուշիմութեն մատոյն վատէ, իբրև զանհարգ սրտմտութիւնն:

ժե. Եւ զի այլ ինն աեսակ մարթի վտանգօք լի՝ ի գէմն բերի՝ Աակէ բերան:

ժզ. Եւ թէ որպիսի ինչ պարտ էոյէ լինել այնմ, որում այնչափ մրրկայց հասանել ախոյեան ընդդէմ յառնել:

ժէ. Եւ թէ քանիցն էոյէ երկիւղն՝ ի աեաչութենէ անդ կուսանաց.

ՅԱՂԱԳՅՈՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵՆ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՄՍԿԵՐԵՐԱՆ.

ԻԱ. ԼԱ արդ՝ յաղագս անարդանաց պատուասիրաց դացն զմեզ, և թէ ոչ ՚ի պատճառս ինչ զնոսա թէչնամանելոյ հրաժարեցաք մեք ՚ի պատուոյդ յայդմանէ, զայդոսիկ կարօղ եմք ասել, զոր միանգամ խօսեցաքն։ Իսկ թէ և ոչ ամբարտաւանութիք ինչ փքացաք, զդոյն արդ ջանացայց ըստ կարի իմում մերձ կանալ քեզ։ Օ՛ եթէ խնդիր ինն զօրավարութեան կամ արքայութեն առաջի արկեալ էր մեզ, և ՚ի դոյն միտս հաստատեալ էր իմ, իրաւամբք արդեօք կասկած ծէր ոք յայդմ. նա յայնժամ և ոչ ոք թերևս իբրև առ բարտաւան, այլ իբրև անմիտ ամենեքեան դատէին զմեզ։ Ա.յլ քանզի քահանայութեն էր առաջարկեալն, այն՝ որ այնչափ բարձրագոյն է քան զթագաւորութեն, որչափ ինչ խտիր է ընդ մարմին և ընդ հոգի, ո՞ր այնուհետև ժպրհեսցի իբրև զամբարտաւանից ունայն ամբաստանել զմեզ։ Լա զիարդ ոչ անտեղի, եթէ՝ որք զփոքունսն արհամարհեսցեն, զնոսա իբրև զնեղ լացնորս դատեսցին. իսկ որք ՚ի կարի բարձրագոյնսն զդոյն գործեսցեն, զնոսա յանմտութեն դատաստանին սրբեալ՝ ընդ ամբարտաւանութեն յանցանօքն արկանել ցեն։ Որպէս եթէ ոք, որ զանդեղով արջառոյն արհամարհեսցէ, և անգէորդ լինել յանձն ոչ առցէ, զնա ոչ իբրև ամբարտաւան, այլ իբրև խելագէտ բամբասեսցէ. իսկ որ զընդհանուր սիրեգերացս զարքայութեն և զհամաշխարհական զինուորութեցն զօրավարութեն ձգամեսցի ընդունել, փոխանակ ցնորելոյ՝ փքացեալ ա նուն կարդասցէ նմա։

Ա.յլ թաւս իսկ ամենևին չէ և չէ այդպէս. նաև ոչ առաւել զմեզ, քան եթէ զանձինս բամբասեն, որք զայդոսիկ բարբառին։ Վանգի և զմեռաւ անգամ ա

ծելն, եթէ կարօղ է մարդկային բնութիւն արհամարհել զնշանութիւնդ զայդուիկ, տարացոյց տայ ընդդէմ այդպիսի քարբառողացն, եթէ զի՞ր արդեօք կարծիս ունիցին դոքա յաղագս իրիդ այդորիկ. զի թէ ոչ վայրապար լինէ և դուշնաքեայ համարիցին զդոյն, և ոչ այդպիսի լինէ կասկած երբեք անկեալ էր ի միտս նոցա։ Վասնզի առ ի՞նչ ասա յաղագս հրեշտակային պատուոյն ոչ ոք յանդգնեցաւ զայդպիսի լինչ կասկածել երբեք, և ասել, եթէ իցէ ոք ի մարդկանէ, որ ամբարտաւանութիւն հրաժարեսցէ գալ ի պատիւ բնութեն այնորիկ. իբրև զի մեծամեծս խորհիմք յաղագս զօրութեացն այնոցիկ, որ և չներէ մեզ հաւատալ երբեք, եթէ կարասցէ մարդ բարձրագոյն քան զպատիւն զայն իմանալ լինէ։ Յաղագս որոյ և առաւելապէս իրաւամբք իբրև առ բարտաւանս ոմանս դատեսցէ ոք զնոսա, որք միանգամ ի սոյն ամբաստանեն զմէնջ. քանզի և ոչ թերևս յաղագս այլոց զդոյն կասկածէին, եթէ ոչ յառաջագոյն իբրև զոչինչ զդործն զայն համարէին նոքա։

ԸՆ. Իսկ եթէ ասասցեն՝ թէ ի փառաց սակս եկիր ես ի գործդ յայդ, յայնժամ յանդիմանին նոքա իբրև ընդ անձանց ոգորեալս և յայտնապէս ի մարտ գըրգռեալս. քանզի բնաւ իսկ չգիտեմ, զի՞ր այլ բանս էր ինդրել նոցա առաւել քան զայսոսիկ՝ եթէ երբեք կամեցեալ էր նոցա ի մնափառութէ դատաստանին աղաւել վնաս։ Օ՛ի եթէ այդպիսի ցանկութէ գերեաց զիս երբեք, առաւել յանձն առնուլ պարտ էր, քան եթէ փախչել. էր վասն. քանզի փառս մեծ ի ներքս բերէր մեզ. իբրև զի այր ոք յայսպիսումՀ հասակի՝ այն ինչ զերծեալ ի կենցաղական հոգոյն, յանկարծակի այնչափ աքանչելափառ երևեցաւ առ ամենեսեան, որպէս զի և նախասպատիւ գտաւ քան զնոսա՝ որ զամենայն ժամանակն յայնպիսի վաստակս ծախեցին, և քան զամենեսին զնոսա առաւելագունի վիձակեցաւ ընտրութէն. ոչ աղագաւ և հրաշալիս արդեօք և մեծամեծս իմն ա մենեքին խորհեին զմէնջ, և մեք ինքնին ակնառուորք ոմանք յարդարեաք և գերապայծառք։ Իսկ այժմ բաց ի սակաւուց ոմանց, բազմագոյնք յեկեղեցւոյ և ոչ անուամբ չափ ձանաչեն զմեզ. նա զի և ոչ ամենեցուն

յայտնի գոյ հրաժեշտն մեր, այլ սակաւուց. յորոց և ոչ ամենեքեան՝ որպէս կարծեմ՝ քաջութիւն ի վերայ կացին իրացն. և որպէս հաւանեալս եմ՝ բազումք ի գոյանել կամ բնաւ իսկ չհամարին զմեզ իբրև ընտրեալս, կամ յետ ընտրութեան ի բաց առաքեալս, և ոչ իբրև կամակարութեամբ հրաժարեալս։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Այլ սակայն որք ձեմարտութիւն ի վերայ կացին, զարմասցին արդեօք։

ՈՍԿԵՐԵՐԱՆ.

Ո. Այո արդ զնոցունց իսկ ասացեր, եթէ իբրև մնափառս և իբրև ամբարհաւաձն ամենս դատափետ առնեն զմեզ։ Իսկ արդ ո՞նստ ուստեք գովութիւն կոչ յուսալի. ի բազմաց անտի, և ահա ոչ հասին նոքա ձիգ րտագոյնս ի վերայ իրացն. ի սակաւուց անտի, այլ սակայն և աստանօր ընդ հակառակս եղ մեզ բանն։ Պանզի և ոչ ի պատճառս այլոյ երիք մտեր դու աստ այժմ, այլ զի ուսցիս՝ եթէ զինչ ինչ ընդդէմ այնպիսի սեացն արժանահաս պատասխանիք իցեն մեր։ Իսկ եթէ զինչ արդեօք յաղագս սոցին իրաց, ձիգ րտաբանեսցուք այժմ։

Իբրև զի, Թէսիէտ և ամենեցուն ձեմարտութիւն ի վերայ հասեալ էր բանին, սակայն և ոչ այնպէս իբրև ամբարտաւանս և իբրև փառասէրս պարտ էր դատել զմեզ։ Վայրիկ մի դու անսա, և տիրապոյնս գմին խեղամուռտ լինիս. և առ այս գարձեալ այնմ՝ եթէ ոչ ոք ոյոց միանգամ զանդգնութիւն զայդ յանդգնեցան միայն, սակայն եթէ գուցէ ոք ուրեք ի մարդկանէ, զի ոչ հեշտեաւ հաւատամ այժմ, այլ և որոց զդոյն վասն այլոցն կասկածեն, վասնզ ոչ փոքր ի վերայ կայ այն պիսեացն։

Ո. Պանզի քահանայութիւն յերկրի կատարի, այլ զգերաշխարհիկ գնդացն ունի զգաստակարգութիւն. և կարի իսկ յիրաւունս. զի ոչ մարդ, և ոչ հրեշտակ, և ոչ հրեշտակապետ, և ոչ այլ ինչ արարածական

զօրութիւն, այլ ինքն միութիւնն զոյն պաշտօն սահմանեաց, և աստէն ի մարմնի յամենեցունց կարդեաց եդ յուշն նկարել զերեշտակացն սպասաւորուն: Յաղագս որոյ պարտ է քահանայացելոյ անձինն այնպիսի ինն անարատութիւն բերել, եթէ ի նմին իսկ յերկինս խառն բնակակից եղէ զօրութեանցն այնոցիկ:

Վասնզի ահագինք էին և սարսափելիք՝ որ միանգամ կանխեցին քան զչնորհս, ըստ որում՝ զանգակքն, նըռնաձևքն, ականքն՝ որ ի լանջս, վակասն, խոյրն, ապարօշն, պճղնաւորն, ոսկի տախտակն, սրբութիւնք սըբոյն, և որ ի ներքս անդ բազում լուութիւն: Այլ սակայն եթէ ոք զչնորհացս ի քնին առեալ, դուշնաքեայս ոմանս գացեալ արդեօք զահագինսն զպնոսիկ և զսարսափելիսն. և զոր յաղագս օրինացն ասացաւ, և աստանօր ձշմարտեսցէ, եթէ * Ա՛ձ փառաւորի փառաւորեալն յայսմ մասին, վասն առաւելութեան փառացն ‖. Է. կոր. գ. 10:

Վասնզի յորժամ տեսանես զտէրն պատարագեալ և բազմեալ, և զքահանայն ի վերայ կացեալ պատարագին և աղօթաւոր, և զամենայնն կարմրացեալ պատուական արեամբն այնուիկ, կարծեցիցես թերևս եթէ տակաւին ընդ մարդկան կաս և աստէն յերկրի բնակաս. և ոչ առաւել՝ եթէ յերկինս ի վեր փոխեալ քո և զամենայն մարմնական խորհուրդս հոգւոյ ի բաց եդեալ, միով հոգւով և աք մտօք շուրջ հայիս յերկնաւորսն անդր. ով սքանչելեացս. ով այ մարդասիրութեանն: Որ ընդ հօր ի բարձունս բազմի, ի ժամուն յայնմիկ ամենեցուն ձեռք բառնան զնա. և որոց միանգամ խնդրէնն գնա՝ տայ գիրկս ածել և ընդունել. զոր և առհասարակ ամենեքեան գործեն զայդ աչօք հաւատոյ: Ա՛յնթէ քեզ արհամարհելիք ոմանք երևեսցին այնոցիկ, կամ թէ յայնպիսեացս սակի՝ որպէս զի և զօրեսցէ ոք փքանալ ընդդէմ այնոցիկ:

Վասն և յայնց հրաշից զզբութեանս զայսոցիկ տեսանել զառաւելութիւնն, այդ ինձ յանդիման նկարեա աչացս զհեղեսս, առ որով և բազմաժողով ամբոխն պատի, և զոն ի վերայ քարանցն հանգչի, առհասարակ ամենեքեան ի հանդարտութիւնէ կան և ի խորին լռութիւնէ. իսկ մարգարէն միայնակ առանձին զաղօթսն

նուիրէ. և յայնժամ ապա յանկարծակի բոց յերկնից՝ ի վերայ նուիրացն անկանի: Աքանչելի են այսոքիկ, և գլխովին ահաբեկք: Այդ փոխեաց դու անտի այսր՝ յոս այժմն կատարին. և ոչ աքանչելիս միայն տեսցես, այլ և բարձրագոյնս ևս քան զամենայն ահագինն: Այանդր կայ քահանայն՝ ոչ կշռուր բարձեալ, այլ կշռ գին՝ որ. նուիրէ մաղթանս երկայնաձիգս, ոչ զի բոց ինն՝ ի բարձանց անտի զերծեալ՝ ծախեսցէ զառաջաւորսն, այլ զի ինքեան հնորհք՝ ի վերայ պատարագին, և նուաճ վառեսցէ զամենեցուն հոգիսն, և քան զարծաթ հրափորձ պայծառագոյն ընծայեսցէ: Այս արդ՝ զայս պիսի ահագին նուիրագործութիւն ոմ՞ր ոք զօրեսցէ արժանաբհել երբէք, բայց որ՝ ի կարի անմտացն իցէ և՝ ի խելայեղից: Այթէ չդիտիցե՞ս, զի անձն մարդոյ երբէք կշռուր պատարագիս այսորիկ տանել ոչ բաւէ. այլ առհասարակ ամենեքեան բնաջինջ կորնչեաք, եթէ մեծապէս օգնականութիւն հնորհացն այդ մերձ ոչ էր:

Ե. Այանդր եթէ զմեռաւ ածել ոք, եթէ քանիցն իցէ արդեօք, զի մարդ՝ որ մարմին և արիւն զգեցեալ է, մերձ անցեալ կայ երանելի և անեղծ բնութեն այնմիկ, յայնժամ գեղեցկապէս՝ ի միտ առցէ, եթէ քանի պատուոյ արժանի արարին զքահանայս հնորհք հոգւոյն: Օ՛ի՝ նոցա ձեռն կատարին այսոքիկ՝ այլոցքն հանդերձ որք ոչնչով խոնարհագոյնք են քան զսոսա, և՝ ի մեր պատիւն և՝ ի փրկութիւն ակնարկեն: Այանդր որք յերկրի աստ քնականան և՝ ի սմին քաղաքավարին, յերկնայնոցն սպասաւորութեն կարգեցան. և իշխանութեն ինն առին ընկալան, զոր և ոչ հրեշտակացն, և ոչ հրեշտակապետացն ետ ած: Այանդր նոցա ոչ ասաց, եթէ * Օ՛որ միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս ‖. Մտթ. ԺԸ. 18: Այպաքէն և որք յերկրի տեարք են, ունին և նոքա իշխանութիւն կապելոյ, այլ զմարմինս միայն. իսկ այս կապանք մերձին՝ ի նոյն ինքն՝ ի հոգին, և զերկնիւքն՝ ի վեր անցանեն. և զոր միանգամ աստ՝ ի խոնարհ գործեն քահանայքն, նոցունն՝ ի բարձունս վճիռ հատանէ ած, և զծառայիցն զդաւտակինք տէրն ինքնին հաստատէ. քանզի զի՞նչ այլ

բայց թէ բուլանդակ զիշխանութիւն զերկնաւորացն եւ նոցա. զի * որոց թողուցուք զմեզս, թողեալ լինի, ա- սէ, եւ զորոց ունիցիք, կալեալ լինի ‖ յովհ. է. 23։ Այլ արդ զինչ քան զայս իշխանութիւն բարձրագոյն։ Օ՜ա- մենայն դատաստան եւ հայր որդւոյ. այլ ես աճեա- նեմ՝ զի զամենայնն ի ձեռս նոցա եւ որդին։ Քանզի որպէս եթէ արդէն իսկ յերկինս ի վեր փոխեցան, և զմարդկան բնութիւս զերասզանցեցին, և ի մերոյին կրնոյս արտաքս ելին, այնպէս յիշխանութիւնս յայս ի վեր ամբարձան։

Այլ այս դարձեալ, եթէ այր թագաւոր տայր ի ձեռս ուրուք յիւրոց հնազանդելոցն զպատիւն զայն, որպէս զի զոր միանգամ կամեցի՝ արկցէ ի բանտ, և դարձեալ արձակեսցէ, արդեօք նախանձելի էր այնպէս- սին և ակնառուր առ ամենեսեան. իսկ որ զայնչափ բարձրագոյն իշխանութիւնն ած յայ, որչափ պատուակա- նագոյն է երկին քան զերկիր, և հոգի քան զմարմին, թուի ոմանց՝ եթէ այնչափ դուշնաքեայ պատիւ ընկա- լաւ, մինչև և զօրել զմտաւ ածել, եթէ ոք յատուցցէ զայն՝ երբեք ունիցի արհամարհոտ լինել պարգևին այն- միկ։ ( )'ն անդր՝ ի բաց տար զյիմարութիւդ։ Քանզի յիմարութիւն է յայտնապէս՝ անտես առնել զայդչափ իշխանութիւդ, առանց որոյ ոչ զկերկութիւնն և ոչ զաւե- տարանեալ բարութիւնն է մեզ զբռամբ ածել։ Օ՜ի թէ ոչ ոք կարէ մտանել յարքայութիւնն երկնից, եթէ ոչ վերստին ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ. և որ չուտէ զմար- մին ւոն, և չըմպէ զարիւն նորա, զուրկ է ի յաւիտե- նից կենաց. և այսր ամենայնի կատարումն ոչ այլուս- տեք, բայց թէ ի քահանայիցն սրբասնեալ ձեռացն, զիարդ ոք այնուհետև բաւեսցէ առանց սոցա կամ ի հրոյ դեհենին խուսել, կամ պատրաստեալ պսակացն հասանել։ Քանզի սոքա են ահա, սոքա՝ որոց հա- ւատացան հոգևորական երկունք և ծնունդ ի ձեռն մկրտութեան։

Ը. Ի ձեռն սոցա զգեհնումք զբռ, և Թաղիմք ընդ որդւոյն ՚այ, և լինիմք անդամք երանելի գլխոյն այնո- րիկ. մինչ զի և ոչ քան զիշխանս միայն և քան զթա- գաւորս արժան է սոցա երաւամբք լինել մեզ ահաւո-

ըսպոյն, այլ և քան զՀարս առաւել պատկառելիք. զի նոքա յարենէ և 'ի կամաց մարմնոյ ծնան, իսկ սոքա առ յոյժ ծննդեանն պատճառք են մեզ, և երջանիկ վերածնութենն այնմիկ, և ձշմարիտ ազատութեանն, և ըստ ընտրհացն որդեգրութեան։

Ո՛չ մարմնոյ բորոտութենն սրբել, մանաւանդ թէ և ոչինչ իւիք սրբել, այլ զսրբեալսն քննել միայն՝ իշխանութիւն էր տրեալ քահանայիցն. և պիտակ էր՝ եթէ զիարդ էր յայնժամ մրոյումն յաղագս քահանայական պատուոյն։ Իսկ սոքա իշխանութիւն առին ոչ զսրբեալսն քննելոյ, այլ զկնովին սրբելոյ ոչ զբորոտուն մարմնոյն, այլ զՀոգւոյն աղտեղութենն. որ զի՝ սոցա անարդուքն բազմօք եղեռնաւորք էին քան զդատաստանեանն, և ծանրագոյն պատուհասի արժանաւորք։ Վասնզի նոքա թէպէտ և յինքեանս յանկուցանէին զիշխանութենն՝ որ ոչ էր նոցա անկ, այլ ստկայն և հրաշափառագոյն էին կարծիս վասն նորա ունէին, որպէս յայտ յանդիմանեցուցանէին 'ի բազում ջանիցն իւրեանց. իսկ սոքա՝ յորժամ գերատանջ զարդարեցաւ դործս, և յայնչափ բարձաւաձութիւն 'ի վեր եղ, յայնժամ ընդ հակառակս նոցա՝ և յառաւել դժնդակագոյնսն յանդգնեցան։ Ո՛վ ոչ հաւատար է արհամարհութենն, զանձն սմբառնալ յանձեռնարկելի պատիւն, և զայնչափ բարեօքն ունչս առնել. այլ այնչափ մեծ է վերջինս քան զառաջինն, որչափ ինչ խաւիր է ընդ գարշանս և ընդ հիւծումն։ Եւ արդ ո՞ք այնչափ հիւպացեալ անձն, զի զայդչափ բարեօքդ արհամարհեսցէ. եա ոչ զոք Թերևս ասեմ, քայց Թէ ոք բանսարկուին խոթանաւն վարեսցի։

Այլ ես դարձայց անդրէն, ուստի եկի։ Վասնզի ոչ 'ի պատուհասելն միայն՝ այլ և 'ի բարեգործելն մեծ եա իշխանութի ետ ածք քահանայիցն՝ քան զնական ծնողացն. և ընդ երկոսին ընդ սոսա այնչափ է խաւիր, որչափ ինչ ընդ մեջ է առաջամանակեայ ննենացս և հանդերձելոյն. զի նոքա վասն աստեացս, և սոքա վասն անդանօր կենացն ծնանին։ Նոքա ոչ զմարմնոյ մահն 'ի զաւակացն կարօղ ինչ են 'ի քաց տանել, և ոչ զեկեալ հասեալ ախտն փարատել. իսկ սոքա զկնօթացեալ հոգին և զ'ի մահ վտանգեալն քազում անգամ փրկեցին. ոմանց Թերևսպոյնս յարդարելով զպատուհասն, և

այլոց ոմանց և ոչ խուն մի Թողին անկանել. ոչ վար. դապետութիւք ևեթ և խրատու, այլ և աղօթիւ օժանդակութիւք. զի ոչ միայն վերատին ծնանին սոքա զմեզ, այլ և յետ այնորիկ զգործեալ մեղն իշխանուն ունին քաւելոյ: Վ.անզի * հիւանդանայցէ ոք ի ձէնջ, ասէ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, և արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն զնա իւղով յանուն տեառն. և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, և յա րուսցէ զնա տէր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ, Թողցի նմա ‖. յակ. ե. 14: Ի վերայ այսր՝ բնական հարք ոչինչ ունին օգնել զսակացն, եթէ երբէք յան յանիցեն նոքա յանցանս ընդդէմ իշխանաց ոմանց և կարողաց. իսկ քահանայքն ոչ զիշխանս, ոչ զարքայս ո մանս, այլ զնա ինքն զորտմոեալն ՚ի ծածկեալ բաղում անգամ հաշտեցուցին ընդ նոսա:

Վ.Թէ և այսուհետև ժալրհեսցի ոք իբրև զամբար տաւանս դատել զմեզ: Վ.անզի համարիմ, եթէ բանքս այսոքիկ այնչափ ինն բարեպաշտութիւք գրաւեցին զլսե լեացն անձինս, որպէս զի ոչ զորս փախչինն, այլ որք միանգամ յանձանց յառաջ մատչին և զայնչափ պատուին Թէկն ածեն զանձամբ առնուլ, զնոսա իբրև յանձնաւ պաստանս և յանդգունս դատեսցեն: Օ՛ի եթէ որք զքաղաքաց իշխանութիւնս յանձն առնին, եթէ ոչ հան ձարեղք ոմանք և նրբահայեացք հանդիպեցան լինել, զքաղաքս խանգարեցին և զանձինս միանգամայն կո րուսին. ապա որ զքնի հարան յանձն իւր առ ՚ի մնքրա զարդել, զիարդ Թուի քեզ՝ քանիպատիկ զօրութեամն պէտք իցեն նման յանձնիկ և ՚ի վերուստ անտի առ ՚ի չմեղանչել:

Է. Ոչ ոք առաւել քան զպատուս սիրեաց զքե. ոչ ոք մեծապէս ջանս քան զնորսն ՚ի ներքս եբեր. ոչ ոք առաւելագունի արժանացաւ ընորհի: Վ.յլ սակայն յետ այնչափ առաւելութեանցն տակաւին երկնչէր և դողայր վասն իշխանութես այսմիկ, և վասն իշխեցելոցն իւրոց: Վ.անզի * երկնչիմ, ասէ, գուցէ որպէս օձն խաբեաց զեւայ խորամանկութիւք իւրով, նոյնպէս ապականեսցին միտք ձեր ՚ի միամտութենն՝ որ ՚ի քե ‖. Բ. կոր. ժա. 3. և դարձեալ * երկիւղիւ և դողութիւք բազմաւ եղէ առ

ձեզ ‖ ՟ա. կոր. Ը. 3։ Այարդ՝ որ ՚ի յերկրորդ երկինս յափշտակեցաւ, և գաղտնեացն ՚այ հաղորդեցաւ. և այնչափ մեհծանս կրեաց, որչափ ինչ աւուրս եկաց զկնի հաւատոյն. մարդ՝ որ զքոյաձիր իշխանութիւն ՚ոչինչ կաւ մեցաւ ՚ի վար արկանել, զի մի՛ ոք ՚ի հաւատացելոցն գայթակղեսցի։ Այս արդ՝ եթէ նա որ զպատուիրանսն ՚այ ՚ի վեր անցանէր. որ ՚ոչինչ խնդրեր զիւրան, այլ զՆահապետելոցն, այնչափ զարհուրեալ էր միշտ՝ հայեցեալ ՚ի մեծուն իշխանութենն. մեք զինչ գործեսցուք, որ բազում անգամ զմերն խնդրեմք, որ զհրամանսքն քո՛ ՚ոչ միայն ՚ոչ գերազանցեմք, այլ և առաւելագոյն մնասմբ անցանեմք. * Ա՞ հիւանդանայ, ասէ, և ՚ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթակղի, և ՚ոչ ես տապանամ ‖ Ը. կոր. ԺԱ. 29։ Այսպիսի պարտ է լինել քահանային. մանաւանդ եթէ և ՚ոչ այսպիսի միայն. քանզի փոքունք են այսոքիկ և յոչինչ համարեալք առ այնուիկ՝ զոր ա սել հանդերձեալ եմ. իսկ զինչ այն իցէ. * Ալսխուք ասէ, խնդրելի ես ինքնին նզով լինել ՚ի քէ վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ ‖ հռ. Թ. 3։ Այթէ ոք բաւական իցէ զձայնս զայս արձակել, եթէ ոք այնպիսի վիճակեալ իցէ հոգւոյ, որով զինդրուածս զայս մնդրեսցէ, արժանի է արդեօք կշտամբանաց՝ եւ թէ երբէք փախիցէ։ Այպա եթէ ոք այնչափ հեռի է յէ յաւաքինութենէ աստի՝ որչափ մեք ինքնին, ՚ոչ յորժամ փախիցէ՝ այլ յորժամ յանձին կալցի, արժանի առելութեան է։

Վանզի և եթէ խնդիր իմն զօրավարական պատուոյն առաջի կայր, և հրամանատարքն պատուոյս այսմիկ զպղնձագործ ոմն ՚ի մէջ անդր կոչէին կամ զկօշկակար ոք և կամ զմի ոք յայսպիսեաց արուեստաւորաց, և նմա զղօրն ՚ի ձեռն տային, ՚ոչ արդեօք գովելին զհիգացեալն զայն՝ եթէ խոյս ՚ոչ տայր, և զամենայն հնարս հնարէր ձողոպրել զանձն ՚ի մծտալուտ չարէն։ Օ ի եթէ գլխոց վէն շատ իցէ հովիւ անուանիլ, և ըստ դիպաց գործ ինչ ՚ի ձեռն առնուլ, և վտանգ և ՚ոչ մի ինչ ՚ի վերայ կայցէ, ո՛ ոք և կամեսցի՝ յանդիմանեսցէ զմեզ իբրև զնախատաւս ոմանս. ապա եթէ բազում հանձարոյ, և քան զհանձարն բազմագիմ չնորհացն ՚այ և կարգաց ուղղութեանէ և կենաց անարատութեանէ և որ ընդ մարդկան

բարձրագոյն առաքինութեանէ պէտք էցեն այնմ՝ որ զայս հոգ յանձն առցէ, մի զլկեսցես զնս ի նեղոզութենէ՝ որ ոչն կամիմ վայրապար և յանդուգն կորուսանել զանձն։

ը. Վասնզի եթէ ոք զբիւրաքարձ (1) նաւն ի մէջ ածեալ՝ թիավարօք լի և բազմնկատոար բեռամբքն զեղուն, և զնս ինքն ի զեկին վերայ նստուցեալ՝ հրաժայեսցէ ընդ եգեան կամ ընդ տիւռենեան անդունդս հատանել անցանել, անդստին յառաջին հանգուցեալ սաբսեալ տեղի տայի. և եթէ հարցանէր ոք, թէ առ ինչ արդեօք, ասէի՝ գուցէ անդնդասոյզ զնաւն արարիչ։ Վրդ ուր ընչիցն է զեան և վտանգ մնհաբեր՝ մնրմնով չափ լեթէ, յանդիմանէ և ոչ ոք, եթէ ոք զգեղեցիկ նախատեսութենէն ի գործ արկանէ. իսկ ուբանօր նաւաբեկելոցն հասանէ անկանել ոչ ի ծովս յայս, այլ յանդունդս հրոյն, և մահ նոցա հանդերձ ձեալ մնայ՝ ոչ որ զհոգին ի մարմնոյն անջատէ, այլ որ զնոյն ինքն ընդ նմին արկանէ ի յաւիտենից տանջանս, արդ ընդ մեզ յամնոռնք և ատէք, զի ոչ յանդուգն ձգեցաք զանձինս յայնչափ չարիսն։ Մի աղաչեմ և յաղերս անկանիմ։ Ովանեայ զհոգի իմ, զի հիւանդ է նա և փոքրոգի, գիտացի և զպաշտամանս այսոբիկ զմեծութենէն (2), և զգործս զչափմադեմ դժուարութենն։

ըթ. (3) Վասնզի ալիք առաւել ամէհիք քան զհոգմոյն՝ (4) որ կոծէն զծոլին, հարկանեն զանձն քահանայիս։ Այլ առաջին քան զամենեսեան՝ ահագին այն

(1) Մսրագործ բիւրաքարձ, բիւրակիր, կոչէն յոյնք զահագնամարմին նաւս, որք բաւականք են բիւրուց ինչ իրաց։

(2) Այս բան որ յաղագս բարձրութենէ քահանայական պաշտամանն անկեալ է ի լսոյն Թարգմանութենէ Մանփօբոնի։

(3) Ի Թ. և ի Ժ. և ի ԺԱ. գլուխս յայսոսիկ, որպէս գրեթէ և յամենայն ընթացս գրոցս քահանայութենէ այնպէս խօսի Ոսկեբերան, մինչև երաւամբք կասկածել ումեք՝ եթէ զոր ընդ անձն իւր անցին բանգնուպօլիս պատմ. մի ըստ միոջէ. ուսոմն և երաւամբք համարել՝ եթէ յաբսորանս իւր գրեալ իցէ զդէպս քահանայութեան։

(4) Այս է՝ ալիք առաւել ամէհիք քան զալիսն, զորս հողմք յարուցանեն ի ծովս. ուստի և կէս օրինակք Թերևս լաւ ևս ունին, Ալիք առաւել ամէհիք քան զալիսն՝ որ կոծէն զծոլին։

ժայռ մնափառութեանէ, դժնդակ առաւել քան զհամբառնման՝ զոր առասպելարկուքն կեղծեն (*). քանզի բազումք նաւեալք առ նոքօք կարօղ եղեն անվնաս տեղի տալ. իսկ ինձ այնչափ ահագին է ժայռս, որպէս զի և ոչ արդ՝ յորժամ և ոչ մի ինչ հարկ վարէ մղէ զիս՝ ի վիհս յայս՝ բաւեմ զերծանիլ ի չարեաց աստի: Այլ եթէ և տացէ ոք յիմ ձեռս զլերակացութիւնս զայս, զոգեաս եթէ զիս ձեռս՝ ի յետս կապեալ մնանեսցէ զաղանացն բնակաց ժայռին այնորիկ՝ գիշատել զիս զօրհնասպաղ: Իսկ ոչք ոմանք զաղանքն իցեն: Ընդմտութիւնք, տրտմութիւնք, նախանձ, հերձուած, զրպարտութիւնք, բամբասանք, ստութիւնք, կեղծաւորութիւն, նենգութիւնք, բարկութիւնք ընդդէմ ոչինչ անիրաւելոցն, հեշտութիւնք ընդ պաշտօնէիցն վատթարութեան, սուգ՝ ի վերայ բարօրութեան, ցանկութիւն գողութեանց, տափուխն պատուոյ, և այս քան զամենայնն առաւել գիտէ գերել զանձն մարդոյ. վարդապետութիւնք մոլահաճոյք, չողոքորթութիւնք անաչառականք, անարդ մարդահաճութիւնք, արհամարհութիւնք աղքատաց, պաշտամունք մեծատանց, անբանաւոր պատիւք և վնասակարք, չնորհք վտանգաբերք տուողացն վնասս և առողացն, երիվիղ ծառայական և ստրկաց ոմանց յետին անարդացն և եթէ յանկարծ, վատահութիւնք բարձումն, խոնարհութիւնք կերպարան բազմադէմ, իսկ ձշմարտութիւնք ոչ բնաւ. իսկ յանդիմանութիւնք և կշտամբանք ոչ ուրեք, մինաւանդ եթէ ընդդէմ հիքացելոցն՝ և ընդ չափն անցեալ. իսկ՝ ի վերայ իշխանացն և ոչ բերան անգամ բանալ ոք չիշխէ:

Վանզի զայս ամենայն և առաւել քան զսոյն՝ ժայռն այն մնուցանէ զաղանս. որովք՝ զոր միանգամ ըմբռնէ, յայնչափ ծառայութիւն հարկաւորէ գրաւիլ, որպէս զի և՝ ի չնորհս կանանց գործել բազում ինչ բազում անգամ, զոր և ոչ իսկ ասել՝ ի դէպ է: Վանզի ամենայն օրինք զնասս՝ ի պաշտամանէ աստի՝ ի բաց առաքեաց. իսկ նոքա ձկտին զանձինս՝ ի նեղըս արկանել. և քանզի անձամբ ոչինչ կարեն, յայլոցն ձեռս գործեն զամենայնն. և այնչափ զօրութիւք պերճանան, մինչև և կե-

(*) Ըստ բանաստեղծից՝ ի ժայռս Ծովուն սիկիլեայ բնակէին համբարբարքն:

բիցանց զմր ոք և կամեսցին նոքա՝ ընդունիլն և կամ՝ ի բաց հանիլն, և զամենայնն վեր՝ ի վայր առնելն. և անդ և ապա տեսանել զառաքին բան կատարեալ, եթէ զիշխանս վարիլն իշխեցեալքն. և ո՛չ թէ ոք. նա աւանիկ և նոքա՝ որոց և ո՛չ ուսուցանել անգամ թոյլ եղև. և զինչ ասեմ ուսուցանել, և ո՛չ խօսել իսկ յեկեղեցւոջ շնորհեաց նոցա երանելին պաւղոս։ Վ.ԱՀ ես լուայ յոմեմէնէ՝ որ ասէր, եթէ այնչափ ազատութիւն շնորհեցաւ նոցա, մինչև և զառաջնորդս եկեղեցեաց կշտամբել, և յարձակիլ՝ ի նոսա զառնադային ևս քան՝ ի ծառայս իւրեանց՝ տեառք։

Ճ. Վ.ԱՀ սակայն մի ոք կարծեսցէ զինէն, եթէ և զամենեսեան՝ ի ներքոյ արկանեմ յանցանացդ ձառեցելոց. քանզի են են բազումք՝ որ՝ ի վերոյ անցեալ են ցանցիցս այսոցիկ, նաև բազմագոյնք քան զթակարթեալսն։ Վ.Ա և զբահանայութիւնն ինքնին դատափետեմ իբրև պատճառք չարեացս այսոցիկ. քաւ լինիցի՝ եթէ մինչև ցայդ վայր անմոռացայց։ Վ.անզի և ո՛չ սպառնուեցաւ արգելք ձերկաթ, և ո՛չ արբեցութիւնք զգինի, և ո՛չ թշնամանացն՝ զսրխութիւնն, և ո՛չ անխորհուրդ յանդգնութիւնն՝ զկորովութիւնն ասեն երբէք պատճառս ամենայն մոռացիք, այլ զորս միանգամ յանարժանս վերին ՚ածատուր պարգևօքն, և զնոսին պատուհասեն։ Վ.անզի և քահանայութիւնն գլխովին արգարապէս դատապարտ գտիւ, եթէ ո՛չ ուղղութ՚ վարեսցուք նովաւ. քանզի ո՛չ ինքն է մեզ պատճառք վերագրելոցդ եւ բեաց, այլ մեք զնա ինքն շաղախեմք այնչափ ինչ աղտեղութ՚ որչափ է կարողութիւն, անխտրաբար տալով զնոյն՝ ի ձեռս մարդկան. որք և ո՛չ՝ ի վերայ կացեալ յառաջադոյն իւրեանց անձանցն ուժոյ, և ո՛չ բեռին պաշտամանն խելամուտ եղեալք՝ ձոխաբար յօժարութ՚ յանձն առնուն զտուեալն. իսկ յորժամ ուրեք գան՝ ի գործել, անփորձուն՚ն իւրեանց խաւարեալք, բիւրուք չարեօք ընուն ղհաւատացեալ իւրեանց ժողովուրդս։

Վ.այս ասելոքն, այս և՝ ի մեր վերայ վայրիկ մի ևս ունէր կատարիլ, թէ ո՛չ փութասիս կորզեալ էր զմեզ ՚ի յայնչափ վտանգէն՝ խնայեալ և՛ յեկեղեցի իւր և՛ յանձինս մեր։

Կա ղի և ուստի արդեօք, ասա ինձ, համարիցիս դու յառնել այդչափ ամբոխից յեկեղեցիս։ Կաս ինքնին ոչ այլ ուստեք համարիմ զդայն, բայց թէ՝ ղի վայրապար և անխորհուրդ վճարին հաւանութիւնք և ընտրութիւնք առաջնորդաց։ Կանղի սոստիկ կորովուն պէտք են գլխոյն, որպէս ղի բաւական իցէ անօրինել զշղթան վատթարի՝ որք առաքին ի նեղբուստ անտի լուսեթեան մարմնոյն, և ըստ արժանեացն յարդարել։ Օ՛ի եթէ և նա ինքնին գլխովին տկար հանդիսեսցի լինել, ոչ ինչ ունի այնուհետեւ վնասել զիշատաքեր յարձակմունսն. իսկ ինքն առաւելագոյն ևս տկարութիւն զգածի օրըստօրէ, և զլրութիւն մարմնոյն ընդ իւր առեալ կորուսանէ։ Կաս ղի մի և այժմ եղիցի այս, յորմէ կարգի պահեաց ըզմեզ Ծածկ՝ ըստ որում և ընկալաք ունել անդստին ի սկզբանէ։

Ժա. Կանղի բազում ինչ է, ով Կասիլիոս, և քան զնաւահալդ բազմագոյնք այլ, ղորս պարտ է ունել քահանային. և մեք չունիմք։ Կաս առաջին քան զայլս, պարտ է նմա գլխովին զի պահել զանձն ի ցանկութիւնէ պատանմանս. ղի եթէ անձկանաք յօժարեալ բերի ի դոյն իշխանութի, յառնուլն զնոյն՝ քոյ իմն վաւէ սաստկագոյն. և բռնութիւնք վարեալ՝ վնաս հաստատութիւնք ունելոյ զնա, բիւրս իմն յանձն առնու ի գժդպակաց. եթէ մարդահաճել արժան իցէ, եթէ անարդ ինչ և անարժան յանձն առնուլ, եթէ մեծերս ընչից ծախել։ Կանղի զոր ոմանք ի պատճառս իշխանութեն այնորիկ ի վեզ եկեալք՝ զեկեղեցիս լցին սպանութիւնք և զբաղաքս վեր ի վայր արարին, լռեմ այժմ՝ ղի մի թերևս զանհաւատալեացս ինչ խօսել երևեցայց ոմանց։

Իսկ որպէս ասս համարիմ, այնչափ բարեպաշտութիւնք պարտ է առաքինանալ ի պաշտամանս, մինչև և հրաժարել ի ծանրութիւնք իշխանութեանն. իսկ ապա յետ ընդունելոյ զնոյն, մի ինչ ծնանել ակնունել այլոյն դատաստանի՝ եթէ երբեք դիպեսցի մեղս ինչ գործել արժանիս անկանելոյ. այլ զաւաջս առեալ՝ անձամբ անձին տեղի տալ յիշխանութիւնն. քանզի այսպէս ի գեպ ջնծայինն յինքն յանկուսցէ ողորմութիւն. ապա եթէ զդեմ կալցէ արտաքոյ արժանեաց, հեռի արասցէ զանձն

յամենայն թողուէ . և առաւել վառեսցէ զնոյ բարկու-
թիւն , իբրև զի և զերկրորդն վատթարագոյն ևս յաւե-
լու ի վերայ գյանցանս ։

Ա.ՀԼ թերևս և ո՛չ ոք առցէ յանձն . քանզի արդարև
դժնդակ է դժնդակ ի խնդիր լինել պատուոյս այս-
միկ ։ Այլայն ո՛չ եթէ ընդ հակառակս ինչ ելեալ երա-
նելոյն պաւղոսի ասեմ զայս , այլ կարի համաշունչ
գոլով բանիցն նորա ։ Օ՞ի զի՞նչ ասէ նա . * Եթէ ոք
եպիսկոպոսուէ ցանկայ , բարւոյ գործոյ ցանկայ ‖ . ա .
տիմ . գ . 1 ։ Ասէ ես ո՛չ եթէ զգործն ասեմ դժնդակ ,
այլ զտիրութիւնն ցանկութիւն և զիշխանութիւնն ։ Այս
մարիմ այնպէս , եթէ ամենայն ջանիւ պարտ է սրբել
ի հոգւոյն զցանկութիւնն զայն , և ո՛չ ի սկզբանն ան-
գամ թոյլ տալ նմա ըմբռնիլ ի նմանէ . որպէս զի յա-
ջողեսցի նմա ազատաբար գործել զամենայնն ։ Վասնզի
որ ո՛չ ցանկայ երևելի լինել յիշխանութես յայսմիկ , նա
և ո՛չ յանկանելոյն զանգիտէ . իսկ որ չզանգիտէ , ա-
զատութիւն այնուիկ՝ որ վայել և քրիստոնէից , բաւա-
կան և գործել զամենայնն ։ Իսկ որք միանգամ երկնչինն
և դողան անկանել յայնմանէ , ի նեղքոյ գրաւին խիստ
ծառայութե և որ լին է բազմապատիկ չարեաք . և մարդ-
կան և ոչ ընդդեմ յանցանել բռնագատին բազում ան-
գամ ։ Ա.ՀԼ չէ պարտ զայս օրինակ վարակել զՀոգին .
այլ զրօրինակ ի մարտս պատերազմի տեսանեմք՝ զի
զօրականք կորովիք կամակարութիք մղեն զմարտն և ա-
րիաբար անկանին , այսպէս և որոց միանգամ ի վերայ
անտեսութես այսմիկ հասեալ իցեն՝ արժան է և քա-
հանայանալ և յիշխանութենէ անտի լուծանիլ , ըստ ո-
րում վայել է քրիստոնեայ մարդկանն . գիտելով չափ՝
եթէ անկումն այսպիսի ո՛չինչ խնարհագոյն քան զնոյն
զայն զիշխանութիւնն՝ բերէ զոգսակ ։ Վանզի յորժամ ոք
ի պատճառս յանձն ո՛չ առնուցու ինչ ի յանվայելչակա-
նացն և կամ յանարժանիցն պատուոյն այնմիկ՝ կրեսցէ
յայսպիսեաց ասել , տանջանս պատրաստ անիրաւութիք
ընկեցողացն և անձին իւրում վարձս մեծամեծս ։ Վան-
զի * Երանի է ձեզ , ասէ , յորժամ նախատիցեն զձեզ
և հալածիցեն . և ասիցեն զամենայն բան չար զձենջ
սուտ վասն իմ . ցնծացէք և ուրախ լերուք , զի վարձք
ձեր բազում են յերկինս ‖ . մատ . է . 11 ։ Եւ այսոքիկ

յորժամ՝ի պաշտօնակցաց անտի, կամ առ նախանձու, կամ՝ի չնորհս այլոց, կամ առ թշնամութեան և կամ թէ այլով իւիք վրիպակ խորհրդով շարժեսցի ոք։ Իսկ յորժամ՝ի հակառակորդաց անտի դէպք լինիցէ կրել զայս, ոչինչ քանից այնուհետեւ պէտք լինիցէ՝ որպէս կարծեմ՝՝ի յայտ առնել զշահն, որչափ ինչ միանգամ չարութիւն իւրեանց ամբարեն նոքա նմա։

Արդ և զայն՝ ամենայն ուստեք պարտ է քաջատես դիտել և ճշգրիտ քննել, զի մի ուրեք կայծակին ինչ դորին ցանկութենն՝ի նեղքոյ վատեսոյն։ Վասն զի սիրելի է սրդեօք, եթէ և որք՝ի սկզբան անդ նոր գտան՝ի կրից աստի, և ապա իբրև եկեալ հասցեն յիշխանութիւնդ յայդ, կարօղ լինիցեն տեղի տալ՝ի նմանէ։ Այլ եթէ որ և յառաջ քան զհանդիպել պատուոյս այսմիկ, անուսոյկ յինքեան զդժնդակ և զանընդել գտանդ, այնուհետեւ յանհնարինն է ասել, եթէ՝ի քանի հնոց արկանէ զանձն յետ ունելոյ զդա։ Իսկ մեք՝ (այլ մի դու համարեսցիս երբէք՝ եթէ՝ի չափու ինչ ունելով մեր զանձինս կամիցեմք ստել քեզ) մեծապէս զրաւեալ եմք ընդ ցանկութիդ ընդ այդուիկ. որ և դա առաւիկ ընդ այլոցն ամենայնի ոչինչ նուազ զարհուրեցոյց զմեզ, և յայդ փախուստդ ձեռներեցոյց։ Վանդի զրօնական համանիք, յորչափ մերձ զտարփայեալսն յաջողեցոյն ունել, քանդագոյնս վարակին չարչարանօք ախտին. իսկ յորժամ հեռագոյնս մեկնին՝ի նոցանէ, ՚ի քաց թօթափեն զիմարուէն. այսպէս և որք իշխանութեամբ այսմիկ ցանկան, յորժամ մերձ իւրեանց ունիցին զնոսա, անտանելի է չարն. իսկ յորժամ յաւատայ լինին, ընդ ակնկալութեն չիջուցանեն և զցանկութեն։

ԺԲ. Արդ՝ լինի՛ ոչ դուշնաքեայ ինչ են պատճառքս. այլ թէպէտ և միայնակ առանձին էր սա, և այնպէս բաւական էր՝ի պատուոյդ յայդմանէ սանձել զմեզ։ Իսկ այժմ և այլ ոչինչ խոնարհագոյն քան զդոյն կայ մեզ՝ի վերայ։ Իսկ զի՞նչ այն իցէ։ Պարտ է երկիցս հսկող լինել և աչալուրջ և աչս բիւրս ամենայն ուստեք ստանալ. որպէս զի ոչ անձին իւրում կեցցէ միայն, այլ և այնչափ բազմութեն։ Իսկ մեք եմք վատք և խոթ թասիրաք, և առ փրկութեի անձանց մերոց հաղիւ բա-

ականք. և զայս դու ինքնին գլխովին լեզիս խաստովան, որ առաւել քան զամենեսեան ի պատճառս բա րեկամութեանն՝ զմեր չարիսն ձգնիս թաղուցանել։

Ա՛յլ մի՛ ինձ աստանօր զպահան ի դէմս բերցես, մի՛ զպքնութիւնն, և մի՛ դարձեալ զդէեանախշտութիւնն և զայլն ամենայն զմարմնոյ զՆշուն. քանզի դու ինքնին գիտես, քանիծն հեռի իցեմք յայսպիսեաց ասի։ Ա՛յլ թէպէտ և ձշդով ուղղեալ էր մեր զսոսա, և ո՛չ այնպէս մեզ՝ որ զայսչափ վատուելս սխտացեալ եմք՝ նպաստա ւոր ինչ էին այդոքիկ ի վերակացութիդ յայդ։ Ա՛ռանզ մարդ՝ որ ի խրձիթի փակեալ և զանձին իւրոյ միայն հոգւոյդ, բազմագիմ շահս արդեօք ի սոցանէ անձին ամենեցուն. իսկ որ ի մէջ այնչափ բազմութեանն հերձեալ իցէ և ընդ առն առն ի հնազանդելոցն իւրոց սեպհական ձգնութիւնն զանձամբ առեալ իցէ, զի՞նչ արժանի շահ օգտի ի դոցանէ քաղեսցէ արդեօք ի նոցուն յառաջադիմութիւն, եթէ ո՛չ քաջալինդ և արիական հոգւոյ վիճակեալ իցէ։

Ժ՚. Ա՛յլ դու մի՛ ինչ սքանչանար, եթէ ընդ այնչափ ժուժկալուն խնդրեմ և այլ ինն փորձ արիութիւն ի հոգին։ Ա՛ռանզ զկերակրովքն արհամարհել և զքամ պելեօք և զփափուկ անկողնովքն, այս բազմոց և ո՛չ աշխատութիւն ինչ հասուցանէ՝ որպէս տեսանեմք իսկ։ մանաւանդ որք միանգամ վայրագասունք բնաւորեցան, և այնպէս անդստին յառաջին տիոցն կրթեցան. դարձեալ և բազումք այլ՝ որ կազմութիւնք մարմնոյն և սովորութիւնք կակղեցին զնաստուն վաստակոցս այսոցիկ։ Ա՛յլ նախատանաց տանել և տուժի և դառն քանի և թշնաւ մանաց՝ որ ի կրսերագունից անտի արձակին եթէ տա րապարտուց և եթէ արդարուց, դարձեալ և տրտնջմանց՝ որ ի նանիր և յանխորհուրդս լինին յիշխողացն և յիշխեցելոցն, այս չէ բազմոց՝ այլ միոյ թերևս և կամ երկուց ոմանց։ Ա՛յլ և տեսանել զի որք հզօրա գեալք են յառաջինսն անդր, այնչափ ինն ամբոխին առ այսոքիւք, որպէս զի և քան զնա դժնդակագոյն գա զանս առաւել մոլին։ Ա՛յլ զայսպիսիս ոմանս պնդա գոյնս յետս սանձեմք ի փարախից քահանայութեանն։ Ա՛ռանզի ո՛չ անսուաղուքեն տանջիլ և ո՛չ բոկոտն շրջիլ

առաջնորդին, ՚ի սասեն ինչ երբեք այսոքիկ լրութեան եկեղեցւոյ. իսկ վայրենի սրտմտութիւն՝ եթէ ստացող ինն իւրում և եթէ ընկերին մեծապէս հասուցանել վիշտս։ Դարձեալ՝ և որք զառաջինսն զյիշոսիկ ոչ գործեն, ոչինչ սպառնալիք յայ ՚ի վերայ այնպիսեաց կապեցան. իսկ որք միանգամ վայրապար բրդին ՚ի բարկութիւն, նոցուն և գեհեան և գեհենոյն սպառնացաւ հուր։

Եւ արդ զորօրինակ որ զակատեալ է զՀետ մնոտի փառացս, յորժամ զիշխանութիւն բազմոյ զանձամբ առնուցու, բազմագոյն ևս նիւթ պատրաստէ հրոյն. այսպէս և որ յինքեան առանձին և կամ ՚ի զրուցաբանութիւս սակաւուց ոմանց զբարկութիւնն սանձել ոչ ունի, այլ դիւրաբեր բորբոքի. յորժամ միանգամայն ղեզմոյց վերակացուին յանձն իւր առցէ, այնուհետև իբրև զգաստն ի ամենայն ուստեք և ՚ի բիւրուց ոմանց խթեալ՝ ինքն և ընաւ իսկ երբեք յանդորրու չգիտէ բնակել, և զՀատատացեալ իւր ժողովուրդն ՚ի բիւր չարիս առեալ ձգէ։

ԺԷ. Վ Ձանզի ոչինչ այնպէս զյստակութիւն մտացն և զուշիմութիւն հանձարոյն գիտէ ամբոխել իբրու զանկարգ սրտմտութիւնն, այն՝ որ բերի բազում յարձակմամբ. քանզի * բարկութիւն, ասէ, կորուսանէ զիմաստունս ‖. ՚ա. ՚Ե. 55։ Վ Ձանզի որպէս ՚ի գիշերամարտ մարտի խաւարեալ աչք հոգւոյն ոչ բաւէ որոշել զբարեկամն ՚ի թշնամեաց և ոչ զպատուականս յանարգաց, այլ առ հասարակ ընդ ամենեսին զնոյն օրինակ վարէ. և թէպէտ և վշտամբերուն ինչ առաջի կայցէ, գիւրաբաւ տանի առնոյնսին ՚ի ընալ զՀեշտուն անձինն. քանզի արդարև հեշտութիւն ինն է բորբոքումն ոգւոյն, և քան զՀեշտութիւնն սաստկագոյն ևս բռնանայ ՚ի վերայ հոգւոյն, և զանդորրական կեանս նորա գլխովին հինն ՚ի վեր տապալէ. քանզի և ՚ի ժպրհութիւն անդր գիւրաբաւ գրգռէ, և հանապազորդ թշնամութիս ինն նիւթ տալ բաժանի, և ատելութիս անքանաւորս, և զնաոս խորատանկեալս տարապարտուց և ՚ի նանիր. և բազում ինչ այլ չայսպիսեաց ասի Հարկաւորէ ասել և առնել. և հոգին բազում դղրդմամբ ախտին տատանեալ՝ ոչինչ

ունի ուրեք ոտնակառել, զի զդեմ կալցի բուռն յարձակմանն։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Այլ ես ոչ ևս առնում յանձն, եթէ այդպէս կեղծաւորեսցիս դու. քանզի ո՞ոչ գիտէ, եթէ քանի՛ օտար իցես դու յախտիդ յայդմանէ։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

*Այո արդ զինչ, ո՛վ երանելի, կամիցիս թերևս մերձ կացուցանել զիս 'ի խարոյկ անդը, և զարթուցանել զգուզան ննջեալ։ Եթէ ո՞չ գիտես, զի այդ ո՛չ մերով ինչ առաքինութեբ յաջողեալ է մեզ, այլ 'ի սիրոյ խաղաղական կենաց. իսկ որում սիրելի է զաղն օրինակ քաղաքավարել և մենակեաց լինել և միով և կամերկուք վարիլ բարեկամբք, կարօղ է այնպիսին խոյս տալ 'ի հրդեհդ յայդմանէ. այլ ո՛չ նոյնպէս՝ եթէ յանդունդս այդչափ հոգոյդ անկանիցի նա։ Վասնզի յայնժամ ո՛չ զանձն միայն, այլ և զայլս բազումս ընդ ինքեանս առեալ ձգէ 'ի վախս կորստեան, և առ ջանս բարեպաշտութեբ դանդաղադ ոչինս գործէ։ Վասնզի մեծապէս ինն բնաւորեցաւ իշխեցեալսդն բազմութեբ իբրև 'ի նախատիպ ինն պատկեր հայել 'ի վարս իշխեցողացն, և ըստ նոցուն զանձինս կերպարանել։ Արդ՝ զիա՞րդ ոք զինջուցանել երբեք կարասցէ զնոցուն փքացումն, ինքն դոլով փքացեալ։ Կա՞ ոք 'ի բազմութեբ անտի ցանկասցի վաղվաղակի չափաւորել զանձն, յորժամ ցասմնոտ զիշխանն տեսանիցէ։

Վասնզի չէ և չէ հնար, եթէ 'ի ծածուկ ինասցեն ախտք քահանայից, այլ և դուշնաքեայք նորա վաղվաղակի յայտնի լինեն։ Այս քանզի ըմբիշ՝ յորչափ 'ի տան մնասցեալ նստիցի և ընդ ումեք 'ի կռիւ չկաքաւիցի, կարօղ է թաքուցանել զանձն՝ թէպէտ և տկարութբ ղեկծեալ ոք իցէ. իսկ յորժամ մերկ իջանէ յասպարէզ անդը, վաղվաղակի յանդիմանի։ Արդ՝ մարդիկ որ ասունձինն և անզգաղ վարեն կեանս, ունին 'ի ծածկոյթ ախտից իւրեանց զմիայնութիւնն. իսկ յորժամ 'ի մէջ անդը մատչին, իբրև զհանդերձ բռնադատին մերկանալ զմիայնութենն, և արտաքոյ շարժմանքն մերկ զան-

ձինս ընծայել ամենեցուն : Այլ սրդ՝ զօրօրինակ ուղղղութիք նոցա յօդուտ են բաղմաց , զի ՝ի նմանօրինակ նախանձ շարժեն , այսպէս և մոլութիք նոցա պղերգաց դոյնս առադրեն ՝ի գործ առաքինութե . և տան վատնել ՝ի վաստակս բարեաց : Յաղագս որոյ պարտ է գեղղս հոգւոյ նորա ամենայն ուստեք ձանձանչել . որպէս զի բաւական էիցէ զտեսողացն հոգիս զուարթացուցանել միանգամայն և լուսաւորել :

Վանդի մեղք խաժամուժ ամբոխին իբրև ՝ի խաւարի ուրեք գործեալք՝ զգործողսն ևեթ կորուսանեն . իսկ յանցանք ակնառուր և բազմաճանօթ առն՝ զհասարակ ինսան ՝ի նեղքս բերէ ամենեցուն . քանզի գլխաւորն մեղկագոյնս գործէ ՝ի քէրան բարեաց գործոց . և զորս միանգամ կամինն անձանց միտ դնել՝ յամբարտաւանուե դրդէ : Այլ առ այսոսիկ գարձեալ, յանցանք սինլիքոսին՝ Թէպէտ և ՝ի մէջ գայցէն , ոչ ումեք վերս դնեն կարեվիրս . իսկ որք միանգամ ՝ի ծագ պատուոյդ այդոբիկ անցեալ նստին , նախ այն իսկ՝ զի ամենեցուն գոն երևելիք , ՝ի վերայ այսր Թէպէտ և ՝ի կարի մանուանն զԹեսցին , փոքունքն մեծամեծք երևին պլոց : Վանզի ոչ ՝ի մեծութենե դործոյն , այլ յարժանեաց անտի մեղուցելոյն զմեղն չափեն ամենեքեան :

Այս պարտ է քահանային իբրու ազամանդեայ զինուք ոմանիք ամրակուռ լինել ամենայն ուստեք . անդուլ ինն ասեմ ջանիք և հանապազորեայ աջնուելիք ՝ի վերայ կենացն . յամենայն կողմանց դիտելով շուրջանակի , զի մի ոք Թերևս տեղի գտանելով ուրեք մերկ և անպատսպար , հարցէ զօրհասաբերը վերան : Վանդի ամենեքին շուրջ կան պատրաստեալք ՝ի վիրաւորել և ՝ի կործանել , ոչ ՝ի Թշնամեաց միայն և ՝ի հակառակաց , այլ և բաղումք ՝ի նոցանէ՝ որ զբարեկամեալքն կեղծաւորին :

Պատ զայնպիսիս ոմանս պարտ է ընտրել , որպիսի անդ ուրեմն ՝ի բաբելոնական հնոցին զմանրմինս ՝որդւոյն պոնոցիկ ընծայեցեալն չնորհքն ՝ով : Վանդի ոչ սրթ և նաւթ և վուշ են Հարակ հրոյս այսորիկ , այլ որ ևս դժնդակք են քան զսոսա . զի և ոչ ՝ի նեղքդ պրաւի նա զգալն հրոյս այսմիկ , այլ առնուազն բոցն նախանձու պատեալ պաշարէ զնա . առնային ուստեք ՝ի վեր

զիւանայ, և ձգդագ ոյնս և յարձակի և խուզէ զկնանս նոցա, քան եթէ հուրն յայժամ զմարմինս մանկանցն այնոցիկ։ Եւ զդ յորժամ հետս ինչ գտանէ դուշնաքեայ խուռուզ, վազվազակի ունի և զարատուզ զայն մասնն այրէ. իսկ զլուծէ բովանդակ շինուածոյն՝ թէպէտ և քան զարեգակնային ձառագայթս լուսաւորագոյն իցէ՝ ի ծխոյն յոյնմանէ խանձատ՝ և ժանտացուցանէ զնմին։

Զանգի յորչափ ամենայն ուստեք գեղեցկապէս յօրինին կենդանք քահանային, անըմբռնելի է՝ ի թակարդիլ. ապա եթէ և դուշնաքեայ ինչ երթիցէ յանցանել յանցանս, ըստ որում և հեշտին և՝ քանզի մարդ է, և ընդ բազմանալոյ ծովոյ կենցաղոյս այսորիկ անցանել. ո՛չինչ այսուհետև օգնեսցեն նմա այլ ուղղութիւնք կարգաց նորա առ՝ ի բաւել զերծանել՝ ի բամբասողացն բերանոց, այլ բովանդակ ամենայնին ստուերածս ածէն այն դուշնաքեայ յանցանք. և առհասարակ ամենեքին ինդրեն գատել զքահանայն՝ ո՛չ իբրև զմարմնազգեաստ ումեք և որ մարդկայնովս զգածեալ իցէ բնութիք, այլ իբրև զհրեշտակ, այլ իբրև զնմանն՝ որ գլուովին անմահն իցէ յամենայն տկարութիւնէ։

Եւ զբօրինակ բռնաւորս որ յորվայր զտերութիւնն զբռամբ ունիցի, ամենեքեան սարսեն՝ ի նմանէ և մարդահաճեն. քանզի և ո՛չ կարօղ ինչ են՝ ի մերժել զնա. իսկ յորժամ՝ ի հակառակս ինչ բերեալ տեսանիցեն զնորայն, ՝ի բաց լքեալ զկեղծաւորեալ պատիւն, որք սակաւիկ ի յառաջ բարեկամքն էին՝ յանկարծակի դառնան լինին թշնամիք և հակառակորդք. և ամենայն տկարութիւնք նորա իբրագածք եղեալ՝ ի վերայ յարձակին և յիշխանութիւնէ անտի լուծանեն զնա. նոյն օրինակ դէպք լինին և քահանային. որք փոքր ի յառաջ յորժամ նա իշխանաւէն պերձանայր՝ պատիւ և շուք գնէին նմա. իբրև դուշնաքեայ ինն պատճառանս պատանեն, հանդերձին կազմին սնդագոյնս՝ ընկենուլ զնա, ո՛չ միայն իբրև զմի՝ ի բռնաւորաց, այլև որ և վատթարագոյն քան զնա։ Եւ որպէս նա յանձնապահայն իւրոց զանդիտեաց, այսպէս և սա՝ ի մերձաւորացն իւրոց և՝ ի պաշտօնակցացն դոյզ առաւել քան յայլոց անտի։ Զանգի այլք ամենեքեան ո՛չ այնպէս ցանկան իշխանութեան նորա և առաւել քան զամենեսեան ծանօթ են

նորայոյն՝ իբրև վնասա. քանզի մեղաւորք են, և եթէ ինչ մի դիպեսցի յայսպիսեաց աստի, իբազէկ լինին յառաջ քան զամենեսեան. առ այս և բամբասողացն ուղնին նոքա հեշտեաւ լսնծայել հաւատս, և զիւրքունսն մեծայուցանելով՝ դաւաճանել զղջպարտեալն։ Վասն զի վեր ի վայր տապալեցաւ առաքելականն այն բարբառ. * Եթէ վշտանայ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա ‖. ա. կոր. ԺԲ. 26։ Այլ թէ ոք մեծապէս բարեպաշտութիւն բանական իցէ զդէմ ունել ամենայնին։

Եւ արդ յայդչափ պատերազմ արկանէս զմեզ. և ի մարտ այնչափ զանազան և բազմօրինակ բաւական հանիցիս զանձինս մեր. ուստի և յումմէ ուսեալ է քո։ Օ՜ի եթէ արդարև ածէ ինքնին յայտնեաց քեզ զայդ, ցո՛ոյց զպատգամն, և անասցից։ Վ՚պա եթէ չկարես, այլ ըստ մարդկայնոցս կարծեաց ի նեղըս արկանես զու զդատաստանդ, ի բա՛ց կաց ի խաբէութիւդ այսր։ Վասնզի առ մերայովքն մեզ առաւել արժան է հաւատալ, քան եթէ այլոց, որպէս զի և * զմարդոյն ո՛չ ոք գիտէ, եթէ ո՛չ հոգի մարդոյն՝ որ ի նմա ‖. ա. կոր. Ը. 11։ Վասնզի թէ ո՛չ յառաջագոյն, այլ սակայն այժմ բանիւքս խնդրէք այսոքիւք համարիմ հաւանել քեզ, եթէ յառնուն մեր յանձն զիշխանութիւնդ զայդ՝ միանգամայն և զմեզ ինքեանս և զընտրեալսն մեր ծիծաղելիս ոմանս ունելոք գործել, և բազում տաժիւք վերստին գառնալ գալ ի վիճակ կենացս այսոցիկ յորում եմքս այժմ։ Վասնզի ո՛չ նախանձ միայն, այլ և որ կարի բռնագոյն է քան զնախանձն՝ յանկուցիչ իշխանութեանդ այդոքիկ զազուսն քնաւորեալ է զնուռորել ընդդէմ այնմ՝ որ զիշխանութիւդ զայդ ի ձեռին ունիցի։ Եւ զղջութենակ իշխանասէրք որդիքն դժկամակ լինին ընդ ծերութիւն հարցն, այսպէս և ոմանք ի դոցանէ իբրև տեսանեն զի ընդ երկայն ժամանակ ձգեալ բերի քահանայութիւնն, և քանզի սպառանալ չէ օրէն, զան գործեն լուծանել զնա յիշխանութենէ անտի. ամենեցուն ցանկայեալ զտեղին ունել զնորա, և այր իւրաքանչիւր ակն կալեալ՝ եթէ ինքն տարցի զիշխանութիւնն զայն։

ԺԵ. Վասին և այլ ինն քեզ՝ ի դէմս բերից օրինակ մարտի, լի բիւրուք վտանգօք։ Ո՛ղջ գնա դու և՝ ի գնին կաց հրապարակական տօնիցն, յորս առաւելապէս օրէն է լինել ընտրութեանց եկեղեցական իշխանութեանց. և անդանօր տեսցես՝ զի ըստ չափու թուոյ իշխեցելոցն՝ այնչափ բամբասանօք դատափետի և քահանայն։ Որպէս զի ամենեքեան՝ որք միանգամ տեսլիք են տալոյ զվաստիւդ ըսպրդ, հերձին յայնժամ՝ ի մասունս մասունս. և անդ է տեսանել՝ զի ո՛չ առ միմեանս և ո՛չ առ որ եպիսկոպոսութենն վիճակեցաւ՝ համաշունչ երբեք գտանի երիցանցն ժողովք. այլ այր այր իւրաքանչիւր յիւր կողմն կացեալ, ոմն զայս ընտրէ և ոմն զայն։ Ո՛ղջ. քանզի զի ո՛չ՝ ի միւն յայն յառէն զակն ամենեքեան՝ յոր միայն պարտ էր հայել, յառաքինութենէ տեառ հոգւոյն. այլ են և այլ պատճառք հրաւիրակք պատուոյս այսորիկ։ Ընտիկ ինն՝ ասէ ոմն. սա ընտրեսցի, զի պայծառ է զարմիւն. իսկ այլ ոմն, զի բազմահարուստ է, և անկաւ օտ անդեան՝ ի հասիցն եկեղեցւոյ. ոմն, զի՝ ի Թըշնամեաց անտի անց առ մեզ. այլ ոմն՝ զընտանի քնակաւ կիցն, իսկ միւս ոմն՝ զազգականութենէ մերձաւորեալն. դարձեալ և միւս այլ ոմն՝ զանձին մարդահաճոյն ձգնի նախապատիւ առնել քան զայլսն. իսկ յարժանաւորն անդր ո՛չ ոք կամի զակն յառել, և ո՛չ ընտրութենի հոգւոյն՝ ի քնին առնուլ։

Այլ ես այնչափ հեռի եմ՝ ի կարծեաց ասելի՝ եթէ պատճառդ այդոքիկ բաւականք ինչ իցեն յընտրութենի քահանայից, որպէս զի և ո՛չ իսկ՝ թեպէտ և բարեպաշտութիւն բազում յանձին ընծայեցուսցէ ոք՝ որ ո՛չ սակաւ շահս մեզ գործէ յաղագս իշխանութեդ այդորիկ, իշխելի երբեք յայնմանէ վաղվաղակի ընտրել գնա, եթէ ընդ բարեպաշտութեանն չէր նա յաջողեալ և բազում խոհեմութեանն։

Որանզի ծանեայ ես զբազում՝ ի նոցանէ՝ որ զանազ նայն ժամանակին ձնչելին զանձինս և՝ ի պահս մնալին, զի յորչափ էր նոցա առանձինն քաղաքավարել և զանձանցն հոգալ, ընդունելիք ոմանք եղեն ոչ և ըստ աւուրս մասունս ո՛չ սակաւս՝ ի վերայ բարդեին իմաստասիրութենէ իւրեանց. իսկ այն ինչ՝ ի մէջ ամբոխին

երևելեան նոքա և զանուսումնութիւնն առակին ստիպեցան ուղղել, կենք և ոչ ՚ի սկզբան անդ առ այդչափ գործ գան բաւականք. իսկ կենք բռնութիւն բերելոյ կալ ինալ ՚ի պաշտամանն, ՚ի բաց լքեալք զառաջին փոյթն՝ մեծապես վնասեցին անձանց, և այլոց օգտեցին և ոչինչ։

Այլ և ոչ եթէ ոք զամենայն ժամանակն ՚ի վերջին կարգի պաշտամանս ծախեալ իցէ, և ցծերութիւն խորին հասեալ իցէ, զնա վայրապար յաղագս հասակին պատուեալ՝ անդէն ՚ի վեհագոյն իշխանութիւնդ կայդ ՚ի վեր առնուաք։ Այնպէս գիտեմ այս. եթէ նա՝ և յետ հասակին այնորիկ անյարմարաւոր կացեալ ինացեալ իցէ։ Այլ եթէ զալիսն կամիմ անպատուել, յորժամ զայդոսիկ բարբառիմ. և կամ թէ օրինադիր ինչ լինել՝ եթէ որք միանգամ ՚ի գասուէ մինոզնացն յառաջ գան, գլխո վին խափանեսցին ՚ի վերակացութենէ պարի. քանզի և զի բազումք և ՚ի գմին հօտէ յառաջ եկեալք՝ փայլեցան յիշխանութեանս յայսմիկ, այլ զգոյն զայն ձգնիմ յուցանել, եթէ և ոչ բարեպաշտութիւն միայնակ և ոչ ծերութիւն բազմաժամանակեայ բաւական երբէք գտանին արժանի ընծայեցուցանել զնուիրեալն ՚ի քահանայութիւն, թուղ թէ զդոյն բաւեսցեն գործել նախաձառեալ պատճառք։

Այն՝ և որք պատճառս լինն այլ ՚ի վերոյ յաւելուն ա ռաւել անտեղիս. քանզի ումանք՝ զի մի ՚ի թշնամեաց կարգի զանձինս հաստատեսցեն, մտանեն գասին ՚ի կարգ գղեբին. իսկ այլք ումանք՝ վասն չարութիւն, զի մի արհամարհութիւն ինչ կրեալք՝ չարիս մեծամեծս ՚ի ներքս բերցեն։ Այս արդ աղէ լնցի՞ ինչ անօրինաց գոյն քան զայս, զի մնարդիկ վատթարք և բիւր չաբեաք լցեալք, այնոցիկ աղագաւ պատիւ ընկալցին, ա րուց վասն արժանիք էին տանջանաց. և այր աղագաւ և ոչ զեկեղեցւոյ սեամն կոխել արժան էր նոցա, գորին վասն և ՚ի քահանայականն ամբարձցին պատիւ։

Այս արդ զի՞նչ ևս այլ, ասա՛ ինձ, ինդրեսցուք բարկութիւնն այ պատճառս, յորժամ զգեղեցիկ սրբութիւս զայսոսիկ և զսարսափելին ՚ի ձեռս տամք ապականել արանց չարաց և անարժանից։ Այնպէս յորժամ զվերա կացութիւն զանձամբ առնուն կենք զայնոցիկ՝ որք ոչն երբէք անկանին նոցա, և կենք գարձեալ՝ զորոց բաղ-

մաք՝ ի վեր են քան զղօրութիւն իւրեանց, այնպիսիքն ոչինչ տան այնուհետեւ տարբերիլ եկեղեցւոյ լեւրիպոսէ (*):

Ա.ՅԼ ես յառաջագոյն զարտաքին իշխանսն ձաղէի, իբրու զի՛ ի մատակարարութենէ պատուոյ՝ ոչ յառաքինութենին հայեին հոգւոյն, այլ յինչս և՛ ի յոլովութիւն ամպոյն և՛ ի պաշտպանութիւնս մարդկայինս. իսկ յորժամ լուայ զի անկարգութենիս այս ձարակեցաւ և՛ ի մերսն, ոչինչ այնուհետեւ այնպէս զժպիղի համարեցաւ գործն: Ա.անզի զինչ զարմանք իցեն, եթէ մարդիկ կենցաղասէրք և որք բազմահնչակ համառօտն տարփան, և ընչից սակս զամենայնն գործեն, յայսպիսիս անկղիտասցին. ուր՝ և որք յամենայնի այսոցիկ անձնասպահք զանձինս կարծեցուցանեն, ոչինչ ընդհատ իցեն առ՛ի նոցանէ: Ա.յլ իբրև՛ ի վեղ գան յաղագս երկնաւորացն, իբրև թէ յաղագս չափոյ գետնոյ կամ որ՛ի սոցուն սակի՝ ի խորհուրդ մտանիցեն, վայրապար զտուարաճականս ոմանս վերակացուս կարդեն այնպիսեացդ իրաց, որոց աղագաւ՝ ոչինչ խուսափեաց միածին որդին ՚ից զանձին իւրոյ ունայնացուցանել զիւսս, և մարդ լինել, և զկերպարանս առնուլ ծառայի, և թօզք յանձն առնուլ, և ապտակիլ, և զանարգաբար մահն մեռանել մարմնով:

Ա.՚ւ ոչ ցայս վայր միայն զտեղի առնուն նոքա, նա և այլ ինչ ևս՛ ի վերայ յաւելուն ևս անտեղիս: Ո՛չ ոչ զանարժանս ընտրեն միայն, այլ և զարժանաւորսն ընկճեն: Ա.անզի իբրու այն թէ պարտ իցէ երկուստեք դրդուեցուցանել զանդորրութենէ եկեղեցւոյ, և կամ իբրու եթէ առաջին պատճառքդ չիցեն բաւականք՛ ի վաւել զոյ բարկութենին, այնպէս զերկրորդն՛ ի վերայ կասեցին՝ որ ոչինչ պակաս ինասաբեր է. քանզի նոյն դունակ զժնդակ համարիմ՝ եթէ ոք զպիտանիսն խաչիանեսցէ, և եթէ ոք զանպիտանսն՛ ի ներքս մուծցէ: Նակ գործի այս, զի ոչինչ ուսանէք մարթասցի հօտն քրիստոսի գտանել և կամ ոդի երբեք առնուլ:

(*) Ե՛սրատ Եբիոն կոչեն յոյնք զնեղուցս ծովուց. և մանաւանդ ակս գիսաձարձ նեղուցն, որպիսի է ընդ կղզին Եւպէա և ընդ ատտիկ կէ: Հայտնի է նախնեացն Պոնտոսի՝ զի ընդ նեղուցս անխորհուրդ ջուր գան և դնան ջուրք:

Այլ արդ այսոքիկ ոչ բիւրուց արժանաւորք կայծառ կանց, այսոքիկ ոչ բռնապետն ևս գերհենոյն, և ոչ այնմ միայն որ մեզն սպառնացաւ։ Այլ սակայն ժուժէ և համբերէ չարեացս այսոցիկ, այն՝ որ ոչ կամի զմահ մեղսաւորին, որպէս զդառնալ նորա և զկեալ։ Այլ զիարդ ոք աբանչասցի ընդ մարդասիրութիւն նորա. զիարդ հիասցի ընդ ողորմութիւնն։ Այնեաւքն զքծինն առաքեաւ հարկանեն առաւել քան զթշնամիսն և զհակառակորդսն. իսկ նմքն բարին տակաւին մարդասիրէ և յապաշխարութիւն կոչէ։ Փառք քեզ տէր, փառք քեզ. քանիսք ե առ քեզ մարդասիրութեդ խոսք. քանի՞ հարստութիւն համբերութեդ. որք վասն անուան քո յանարգաց և յանհնազանից եղեն փառաւորք և ականաւորք, պատուովդ այդուիկ զինուորին ընդդեմ պատուասիրողիդ, և յանձեռնարկելիսն յանդգնին, և՝ ի սրբութիւն անդր ձգեն թշնամանս. զառաքինիսն մերժեն և ընկենուն՝ զի բազում խաղաղութիւք և վերջին ապերասանութիւք զամենայնն ըստ կամի իւրեանց վեր՝ ի վայր տապալեսցեն չարք։

Իսկ եթէ քեզ կամք իցեն ուսանել զպատճառս չարիս այսորիկ, գոցես զնոսին համանմանս առաջնոցն. քանզի արմատ, և կամ եթէ ոք ախորժեսցէ ասել՝ մի ունին մայր՝ զնախանձն։ Իսկ այսոքիկ ոչ միագիմիք են, այլ բազմադէմք. քանզի ոմն ասէ, իբրև զի մանուկ է՝ ընկեսցի՝ ի բաց. իսկ այլ ոմն՝ քանզի ոչ գիտէ մարդս հաձել. և այլ ոմն՝ քանզի կայն ոք գժնդակութիւք բերի. իսկ միւս այլ ոմն՝ զի մի այն ոք ցաւս կրեսցէ՝ ի տեսանելն զի ընծայեաւն իւր՝ ի բաց մերժի, և միւսն ընտրի. և այլ ոմն՝ քանզի քաղցր է և հանդարտ. և այլ ոմն դարձեալ՝ քանզի ահաւոր է առ մեղաւորս. և միւս այլ ոմն՝ յաղագս այլ ինչ նմանօրինակ պատճառի. քանզի ոչ պակասին պատճառանք, որչափ և կամեսցին. նա աւանիկ եթէ և չունիցին այլ ինչ, զհարստութիւնն գոյից պատճառեն նոքա։ Ի վերայ այսր և զայն ինչ, եթէ չէ արժան յայնչափ պատիւն անգին վաղվաղակի առնուլ ածել, այլ յաւշիկ և տակաւ տակաւ, և զայլ ինչ ևս ըստ կամի իւրեանց բաւական են նոքա հնարել պատճառս։

Այլ ես սատանօր մեռազիւրագոյնս խնդրեմ համ-

նալ։ Օ՛ինչ սպա եպիսկոպոսին պարտ իցէ գործել որ յայսքանեաց կոծի ՚ի հողմից. զիարդ այնչափ կոհակացն զդեմ ունիցի. իբր խորտակեսցէ զայս ամենայն յարձակմունս։ Օ՛ի եթէ արդարև ուղիղ խորհրդով նահատակեսցի ՚ի պաշտամանն, ամենեքեան թշնամիք և հակառակորդք նմա միանգամայն և ընտրելոցն. և յամենայնի գրգռութիւն բերին ընդ նմա, և հանապազ զորդեան հերձուածս ՚ի մէջ արկանեն. և թշնամանս բիւրս ձգեն յընտրեալն անդր. մինչև կամ զնոսա ՚ի բաց մերժեսցեն, և կամ զիւրեանցայինսն ՚ի ներքս մուծցեն։ Այլ ՚ի ձահ իսկ պատահեսցէ, որպէս եթէ ոք զեկաւար ՚իներքս ՚ի նաւուն հկնս ունիցի լրիքեան նաւակիցս, որք անդուլութիւն և ՚ի ժամ իւրաքանչիւր դաւաճանութիւնս լարեսցեն և անձին իւրում և նաւուն զինն և նաւորդացն։ Այսպա եթէ զնոցայն չնորհս նախատիս արասցէ քան զլուրն փրկուի, յանձն առեալ զայն ինչ՝ զոր ո՛չ է արժան, փոխանակ ընդ նոցա զնծծ կալցի իւր թշնամի. և քան զայս զինչ այլ դժնդակագոյն երբէք կայցէ. առ այս՝ և դժուարագոյն ևս եղիցի ընդ նոսա գործն՝ քան եթէ յառաջն. քանզի ամենեքեան միաբանց գոլով գործակիցք, առաւել ինն գտանին հզօրագեալք։ Վասզի զորօրինակ ՚ի հանգիպել միոմանց ՚ի ընկել վայրենի հողմոյն, որ զայն վայր խաղաղական անդունդքն՝ յանկարծակի մոլին և ՚ի վեր դիզանան, և զնաւորդսն կորուսանեն, այսպէս և եկեղեցւոյ հանդարտութիւնքն ընկալեալ զապականեալ մարդիկն՝ մրրկաւ և բազմադիմ նաւաբեկութեամբ տապալի։

ԺԷ. Այս արդ՝ զմտաւ ածէ, որպիսի որ արդեօք լինել այնմ պարտ իցէ, որում այնչափ մրրկացն հասանել զդեմ ունել, և զայդչափ խոչընդոտս հասարակացն օգտի դեղեցկապէս հանդերձել։ Վասզի արժան է նմա պերճ լինել և անհոգարտ. ահարկու և մարդասէր. իշխանապանծ և հասարակատիպ. անակնառու և հիւրասիրեցար. խոնարհ և անձառագական. բուռն և հեզ. որպէս զի ընդդէմ ամենայնի այսորիկ բաւական իցէ հեշտեաւ զմարտն մղել. և զարժանաւորն՝ թէպէտ և բոլորեքեան զդեմ կալցեն՝ բազմաւ իշխանութիւք յառաջ

կոչել. և զոր չէ յայնպիսեաց անաւի՝ Թէպէտ և ամենեքեան համաշունչք իցեն՝ նուիրն իշխանութիւ մի ընդունել. այլ ի միս յայն զակն յառել ի չինութիւն եկեղեցւոյ. և ոչինչ գործել առ Թշնամութե և կամ ի հնորհս։

Այլեթէ Թուիցիմք քեզ արդեօք՝ եթէ իրաւամբք տեղն տուաք ի սպասաւորութենէ գործոյդ այդորիկ. և այն զի չէ ևս զամենայնն կարդեցի եղի ես առաջի քո. քանզի ունիմ և այլ ինչ յասել։ Այլ սակայն մի դու երբեք յոգնեսցես վաստակեսցես՝ որ համբերութիւ տանես առն բարեկամի և հարազատի, որ յաղագս ամբաստանութեացն խնդրէ սրդարանալ առ քեզ. սակայն և ոչ միայն ի պատասխանիսն վասն մեր պիտանիք եղիցին քեզ այդոքիկ, այլ Թերևս և ի պաշտաման գործոյս այսորիկ ոչ սակաւ ինչ բերցեն շահս։ Վասզի հարկ է այնմ՝ որ հանդերձեալն է սկիզբն առնել Ճանապարհի կենացս այսոցիկ՝ յառաջագոյն Ճշդիւ խուզել զամենայնն, և այնպէս ձեռն արկանել ի պաշտօնն։ Այլ ինչ արդեօք։ Վասզի եթէ և ոչ այլ ինչ, գէթ յորժամ դէպք ինչ իցեն յայսպիսեաց ասել՝ մի ինչ խառնվեսցի օտարութե իրին, իբրև զի արդէն իսկ քաջապէս ի վերայ եհաս նա ամենայնին։

Այդ զիա՞րդ կամիս, ընդ այրեացն վերակացութիւն կալցուք նախ Ճանապարհ, եթէ ընդ կուսանացն տեսչութե, եթէ ընդ դատաստանական մասինն տագնապ։ Վասզի յիւրաքանչիւր ի սոսա տարբերեալ էն տառապանքն, և քան զտառապանսն գերազանցեալ է ահն։ Այս առաջինն, (զի սկիզբն անտի արասցուք որ հեշտագոյն Թուի քան զայլսն), հոգ այրեացն Թուի Թէ տառապանս իմն ծախուց ընկից ի վերայ ածէ յանձնառուզացն զնոսն. իսկ այդ այդպէս ո՞չ իցէ։ Այլ ահա և աստանօր բազում քննութե պէտք են, որով արժան իցէ ընտրել զնոսա. քանզի և վայրապար և ըստ դիպաց ի գիր անդր կարգելով զդոսա՝ բիւր չարիք յայնմանէ ի վեր բուսան։ Վասզի զընտանիսն եղծին սպականեցին, և զհարսանիսն լուծին, և ի գողութիս բազում անգամ և ի կապելիսն և յայլս այսպիսիս անասՆեալ ցեալ ըմբռնեցան։

Իսկ վայսպիսիս ի գոյիցն եկեղեցւոյ կերակրել՝ ոչ միայն տանջանս իմն Ճգնաստաւոր՝ այլ և առ մարդկան

զվերջինն ածէ դատապարտութիւն, և զսպաբերայ ոգիսն մեղկագոյնս գործէ։ Օ՛ի ո՞վ ոք երբէք յանձն առցէ, եթէ ինչք՝ զոր միանգամ հրամայն ընկալաւ տալ քեզ՝ վտանեօքն յայնպիսիս ոմանս, որ բամբասանս պատրաստեն անուանն քեզ։ Ձաղագս որոյ բազում և հաւատալի քննութեան պէտք են, զի մի միայն զորոց ա-նացաք այրէքն, այլ և որք միանգամ կարողքն են անձանց բաւական լինել, մի՛ ծախեսցեն զսեղանս տնանց կացելոցն։

Խոկ քննութիւնս այսմիկ յաջորդէն և այլ տառապանք ո՛չ փոքր. այն՝ զի իբրև յաղբերայ ոմանց յորդախաղաց հոսեսցեն կերակուրք նոցա, և մի պակասեսցին երբեք։ Վասնզի անյագուրդ չար է ակամայ աղքատութիւն, և տրանջող և անշնորհակալ։ Այլ պէտք են բազում հանձարոյ և բազմադէմ ջանից առ՛ի խնամել զբերանս նոցա՝ որ դարանին որսալ զամենայն պատճառս բամբասանաց։

Վասքէն բազումք յորժամ զոք յակն արկանեն անհաւանելի լընչիցն, անդէն և անդ իբրև քաջադէպ ոմն յաղագս դորին անտեսութիւնէ յորջորջեն զնա. այլ ինձ ո՛չ քնաւ այդ կարծիք, եթէ այդ մեծանձնութիւն միայն բաւական իցէ նմա, այլ թէ յառաջ քան զայլս պարտ է ունել զդոյն. քանզի առանց դորա ապականիչ արդեօք եղիցի նա առաւել քան եթէ վերակացու, և գայլ փոխանակ հովուի։

Հանդերձ այսու և այլ ինչ խնդրել արժան է՛ի վերակացուն անգր. և այն իսկ է պատճառք ամենայն բարեաց մարդկան՝ համբերութիւնն, որ իբրև յանքոյթ ինն նաւահանգիստ ածէ հասուցանէ զհոգին. քանզի ազգ այրեացդ եթէ՛ յաղագս աղքատութիւնէն, և եթէ՛ յ՛ի պատճառս հասակին, և եթէ՛ յաղագս քննութեանն՝ անչափաւոր ինն համարձակութիւնք քննարկեցաւ վարիլ. զի այսպէս՛ի դէպ էր ասել. Ձէան տարաժամ և պատճառեն ընդ վայր և կականին վասն որոց պարտ էր հնարս ունել, և ստգտանեն՝ զոր գովել արժան էր. և պարտ է վերակացուին քաջագէս պնդութիւնք տանել ամենայնին, և մի՛ յաղագս տարաժամ կուսոցն և անբան տրանջանացն՛ի սրտմտութիւնք գալ։

Վասնզի իրաւացի է ողբալիւ ազդել զայդմիկ յաղագս

հիքութեցն, և ոչ թէչնամանել. իսկ ոտնհար լինել նո-
ցուն տառապանացն, և ցաւոց աղքատութեն ի վերայ
յաւելուլ զթշնամանացն՝ վերջին տմարդութե եղեցի
գործ։ Յաղագս որոյ և յիմաստնոց ոմն ի վերայ հա-
սեալ շահասիրութե և ամբարտաւանութե մարդկային
բնութեես և խելամուտ եղեալ բնութե աղքատուհն,
այն՝ որ բաւական է և գկարի վերհանձնեալ հոգին նուա-
ձել՝ և ձգել ածել՝ լըբիլ յայսոսիկ բաղում անգամ. զի
մի՛ ոք թերևս ժառեալ առ ի նոցանէ՝ բարկասցի, և մի՛
դարձեալ ի յաձախել խնդրուածոցն ի սրտմտութիւն
բերդեալ՝ հակառակորդ երջիք հանդիսասցի որ պարտա-
կանն է օգնական լինել, յորդորե զնա հեզ լինել և
հեշտալուր առ կարօտեալն՝ ասելով. * Ողորմած հեցո՛
աղքատի զունկն քո առանց տրտմութե, և խօսեա՛ց ա-
ռաջի նորա հեզութի՛ ի խաղաղութե ‖. սէր. ե. 8. և
ի բաց անդր թաղեալ զըրտմտողն, քանզի զինչ ոք
արդեօք ասասցէ մեռելոյն, խօսի ընդ նմա՝ որ միան-
գամ բաւական է բառնալ զակարութիւն նորա, խրատ
տուեալ զի յառաջ քան զտուրսն քաղցրութի՛ դիմացն
և հեզութի՛ բարբառոյն կանգնեսցէ զնա։

Ապա եթէ ոք ոչինչ առցէ ի նոցայոցն, սակայն
քիւրութ նախատանաւք պաշարեսցէ զնոսա և թշնամա-
նեսցէ և ի սրտմտութե ընդդէմ նոցա բերդեսցէ, ոչ
միայն զտառապանս աղքատութեն ոչ թերևս աւգուցա-
նէ ի տուրսն, այլ և առաւել ևս դժնդակ գործէ ի
նախատինսն։ Վասնզի թէպէտ և ստիպէն նոքա կարի
իմն անամօթաբանալ ի պատճառս կարեաց որովայնին,
այլ սակայն և ցաւին ընդ բռնութե՛ն ընդ այն։ Վասն-
զի յորժամ առ ահի սովուն բռնադատին մուրանալ,
իսկ ի մուրանալն՝ լըբիլ, իսկ յաղագս լըբութե՛ն դար-
ձեալ թշնամանս կրել, բազմադէմ իմն բռնութե՛ ցա-
ւոց՝ աղջամղջին ծնող խաւարի՝ տիրե ունի զհոգիս նո-
ցա։ Եւ պարտ է վերակացուի նոցա այնչափ իմն եր-
կայնամիտ լինել, որպէս զի ոչ միայն ցասմամբ իւրով
ոչ առաւելուցու զհիքութե՛ն նոցա, այլ և մխիթար բա-
նիւքն խորտակեսցէ զբռնութե՛ն։ Վասնզի զորօրինակ
որ թշնամանին թէպէտ և բազմահարուստ ոք իցէ, ոչ
ինչ կիշէ զշահ օգտին որ կընչից անտի՝ յաղագս վիրացն
որ ի թշնամանաց անտի, այսպէս և որ զհեզութեան

բարբառն լսէ և ամեք բանիւք զտուրսն ընդունի , առաւել ինն խայտայ և բերկրի , և կրկնապատիկ նմա գործին տուրքն ի պատճառս յեղանակին : Այլ զայսոսիկ ոչ յիմանէ անտի բարբառիմ , այլ յայնմանէ՝ որ յաջագոյն խրատն տայր : Ասէր * Մրդեակ , բարեաց բամբասանս մի տար , և մի յամենայն տուրս տրտմութիւն բանիւ : Ոչ տալ տօթոյ զուարթացուցանէ յօշ . այսպէս լաւ բան ուրախ առնէ քան զտուրս . զի աւանիկ բարի է բան քան զտուրս . և երկոքին իսկ են առ քաղցրահամբոյր մարդոյ ‖ . սէր . ֆԸ . 15 :

Այս այս դարձեալ՝ ոչ միայն հեզ և համբերող պարտ է լինել վերակացուի նոցա , այլ և իմաստուն անտես նովին հաւասարութիւն . որ զի եթէ այս մերձ ոչ էիցէ , դարձեալ ընդ նովին ինասու անկանին ինչք աղքատաց : Ասէզի մեծ յառաջ քան զաւուրս զայսոսիկ մի ոմն՝ ո բուա սպասաւորուիդ այդ հաւատացաւ , մեծերս ոսկւոյ ժողովեաց , ինքն ոչ եկեր , և ոչ ի կարօտեալսն անդր բաշխեաց՝ քայ ի սակաւուց ոմանց . իսկ զառաւելագոյն մասն առեալ՝ փորեաց զերկիր և թաքոյց , մինչև ասա ի վերայ հասեալ դժնդակ ժամանակին՝ մահանեաց զնոյն ի ձեռս թշնամեաց : Այս քաղցր խնամոյ պէտք են , զի գոյք եկեղեցւոյ մի զեղծին , և մի զարձեալ նուաճ զեսցին . այլ ոչք միանգամ գանձն՝ վաղվաղակի առնոյնն բաշխեսցի ի կարօտեալսն . և գանձք եկեղեցւոյ ժողովեսցին ի պէտս իշխեցելոցն :

Իսկ ի ժողովել անդ զօտարս և ի դարմանել զհիւանդս , քանիօ՞ն՝ կարծեսցես՝ պէտք լցեն ծախուց ընչից . քանի՞ փոքունս պնդութեան և հանձարոյ վերա կացուացն : Այլ քանզի հարկ է ծախուցս այսոցիկ ոչինչ նուազ լինել քան զառաջինն , նա քաղցր անգամ և առաւելեալ քան զգոյն , պարտ է և վերակացուին աչալրջութիւն և իմաստուէ պատկառ կալ , առ ի հաւանեցուցանել զնոսան՝ պատուասիրաբար և անտրտում տալ ի գոյից իւրեանց , զի մի արգելօք յորժամ տկարացն դիւրութիւն խնամ ածէ , զբարեբարոյ հոգին վիրաւորեսցէ : Այլ աստանօր կարի առաւելութիւն պարտ է զղջալարթութիւն ի դէմն բերել և զնինամն . քանզի են են հիւանդք թախանձեցուցիչք դժկամակք ոմանք և յոյլք . և եթէ ոչ ամենայն ուստեք ի ներքս բերցես

դու բաղում փոյթ ունդուէ և զՀոգ, շատ է և փոքրիկ մի սառնագանեղն մեծամեծ չարիս հասուցանել սխատ ցելոյն։

Ժէ. Իսկ ի ինամն անդ կուսանայ այնչափ առաւել- եալ է երկիւղն, որչափ պատուականագոյն է աւանդն, և քան զայլն առաւել արքայական Հօտն։ Վասնզի և նորոգ իսկ բիւրք ունեաք ի պարս անդ սրդդ այդոցիկ՝ բիւրուք լցեալ չարեօք ի վատթարութիւն փոխեցան։ Իսկ աստանօր մեծապէս եղև լալումն. և զորօրինակ ոչ միապէս է, եթէ յանցանս յանցանիցէ օրիորդ ազատ և կամ նաժիշտն նորա, նոյնպէս և ոչ՝ եթէ ի կուսից ոք և կամ ի յայրեաց։ Վասնզի անխտիր է սոցա շաղ- փաղփել և զինմանս թշնամանել և մարդահաձել, և անամօթանալ, և ամենայն ուրեք երևիլ, և ի հրապա- րակ յառնախել։ Իսկ կոյսն ի գերագոյնն հանդիսա- գաւ, և վերնականին խնամատարութենն սնդի զհետ, և յերկրի գհրեշտակացն ուխտ յանձին բերել զքաղա- քավարութի. և հանդերձ մարմնովը այսուիկ կեաց ա- ռաջի իւր եդեալ է զանմարմնոցն զօրութեցն ուղղել զառաքինութիւնս։ Այլ էհ նմա արժան յանօգուտս և ստէպ ելանել արտաքոյ, և ոչ բանս անոտիս և վայրա- պարս յառաջ բերել. իսկ զթշնամանաց և զմարդահա- ճութեան և ոչ զանունն անգամ պարտ է դիտել նմա։ Հաղագս որոյ կարի լինի անքոյթ պահպանութե և մե- ծապէս պաշտպանութե պէտք են նմա. քանզի թշնա- մին սրբութե միշտ և առաւել զսոցա հետս խուզէ և դարանի՝ պատրաստեալ ի կլանել, եթէ երբէք գայ- թակղեսցի ոք և անկցի. առ այս՝ և բաղումք ի մարդ- կանէ թշակարթս լարեն նոցա, և ընդ այսոցիկ ամենայ- նի՝ և խեղուութե բնուութեն։ Այլ հուսկ ուրեմն մարտ ինն կրկնակի մղէ նա. մին այն՝ որ արտաքոյ ի վերոյ յարձակի, և միւսն դարձեալ՝ որ ի ներքոյ ամբոխէ. վասն այսորիկ և բաղում երկիւղ է վերակացուին՝ և բազմագոյն վտանգ, և անբերելի ցաւ, եթէ ուրեք արտաքոյ իւրոյն կամաց, որ մի լինի, պատահեսցէ ինչ երբէք։

Վասնզի եթէ * Պաւստոր հօր ի ծածուկ՝ աքնուութե է, և հոգ նորա մերժէ զքուն ‖. սէր. եբ. 9. որպէս զի

և տագնապալի՝ եթէ գուցէ ամուլ եղեալ իցէ, կամ ըստ ջուր եղանելոյ, կամ ատեղւոյ եղելոյն. զի ինչ արդեօք կիրք եղեն նմա՝ որ յայսպիսեաց աստի հոգայ և ուշանիլ, այլ որ յոյժ ի վեր են քան զայսոսիկ: Կանգուն աստանօր ուշ մարդ է արհամարհեալն, այլ ինքն քո. և ամուլքն՝ ուշ մինչև յանարգութիւն անդր, այլ մինչև ի կորուստ հոգւոյն հասանել ժամանակ չարն. քանզի * Ամենայն ծառ, առ, որ ուշ առնէցէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի Ա. Մատթ. Զ. 10: Ուստ որ ատելն է այսմ փեսային, էն նմա բաւական զթուղթն առնուլ զապահարզանին, և ի բաց արձակիլ, այլ զատելութեանն նորա լուծցէ զվրէժս՝ զյաւիտենից տանջանաց:

Եւ ապաքէն հայրն մարմնաւոր բազում ինչ ունի առ ձեռն, որ զդստերն պահպանութիւն նմա պիտոյին գործեն. քանզի և մայրն և դայեակն, և բազմութիւն ծառայիցն, և ամրութիւն տանն գործակից են ծնողին ի դստերն փրկութիւն: Կանգուն և ուշ ի հրապարակ անդր թողու նմա ելանել ատեպ, և ուշ դարձեալ յելանելն երբեք՝ հարկաւորի երևեալ ումեք յանցաւորացն. քանզի մուրճն գիշերոյ ուշինչ նուազ քան զորմն տան ծածկէ զնա՝ որ միանգամ ոչն կամիցի երևեալ լինել: Ի վերայ այսր՝ և ամենայն պատճառք հատեալ են առ ի նմանէ, որպէս զի մի ինչ ստիպեսցի երթեք գալ ի տեսութիւն արանց. քանզի ուշ կարևորացն հոգ, և ուշ հարստահարողացն լրկանք, և ուշ դարձեալ ինչ մի յայսպիսեաց աստի ուշ վարկ մղէ զնա ի հարկ կենակցութենն այնորիկ. քանզի փոխանակ ընդ ամենայնին ունի ամձին իւրում զհայրն. իսկ զմի միայն զայս հոգ յանձին բերէ, ուշինչ անարժան իւրումն գեղեցիկ համեստութենն առնել կամ ասել:

Նոկ աստանօր բազում ինչ՝ գժուարին գործէ հօրն զպահպանութին, մանաւանդ թէ և անհնարին. զի և ուշ ընդ իւր ի ներքս կարօղ ինչ է ունել զնա. քանզի ուշ քաջավայելուչ՝ և ուշ դարձեալ անվտանգ ինչ է բնակութենս այս: Ո՞ի թէպէտ և ուշինչ ջնասեացին նոքա, այլ ողջ անարատ պահեսցեն զսրբութին, սակայն ուշինչ նուազ տացեն համարս վասն նոցա՝ զորս գայթակղեցուցին, քան եթէ մեղուցեալ ինչ էին ընդ միմեանս: Նոկ եթէ այն անհնարին իցէ, և ուշ դարձեալ գիւրին

ինչ է նմա կալ քննութ՝ ի վերայ շարժմանց հոգւոյն, և զանկարգաբար բերմունս հատանել կարել, իսկ ըզբարեկարգան և զվայելչացն առաւելապէս յարդել և՝ ի լաւագոյնն փոխել. և ո՛չ դարձեալ հեշտին է զարտաքոյ եւթ նորա ձգիւ խուզել. զի եթէ աղքատ է և անխնամ, ո՛չ ունի նա ձգբիտ լըտես լինել գեղեցիկ քարեզարդութեան կուսին։

Վանզի եթէ զամենայնին ինքն անձին իւրում սպաս սաւորել բռնադատեսցի կոյսն, այնուհետեւ բազմադէմ պատձառս գոյ՛ արտաքոյ եւթէ, եթէ չկամեսցի պարկեշտանալ՝ ի կեանս։ Այլ պարտ է հրամանատարի ուժիք ծնալ միշտ՝ ի տան անդ, և զպատձառս զայսոսիկ հատանել առ՝ ի նմանէ, և զկարեւորսն բաւականութի՛ ՝ի ներքս բերել նմա։ Պէտք են նմա և աղախնոյ՝ ի սպասաւորութեն այսոցիկ։ Պարտ է և՝ ի յուղարկաւորեաց և՝ ի գիշերապաշտամանց արդելուլ զնա։ Վանզի դիտել դիտէ բազմամբեռնոյ օձն և՝ ի գործս բարութե՛ զնեբականն հեղուլ զթոյնս։ Այլ ամենայն ուսուցիք ամրուե պէտք են կուսի. և զի զամն ողջոյն ընդսակաւ նուագս ելցէ արտաքս՝ ի տանէ, յորժամ պատձառք անհրաժեշտք և կարեւորք տագնապեսցէն։

Այսպա եթէ ասասցէ ոք, եթէ մի՛ ինչ յայսպիսեաց աստի գործ եպիսկոպոսին յանձն մի՛ լինի. զայն գիտասցէ այնպիսին՝ եթէ իւրաքանչիւր գործոց հոգք և պատձառք՝ ի նա հային. մինչ զի և բազմաք օգտակարագոյն իցէ, եթէ նա ինքնին սպաս տարեալ ամենայնի այսօրիկ, զերծ կացցէ՝ ի բամբասանաց անտի, զոր վասն օտարին մեղայն հարկ է նմա յանձն իւր առնուլ, քան եթէ՝ ի բաց լքեալ զպաշտօնս զայս՝ վասն համարոյ գործոց օտարայն զղողանի հարցի։

Այս այսոսիկ դարձեալ՝ եթէ ինքն յիւր ձեռն գործէ զամենայն, բազում հեշտութի՛ յաջողի յամենայնին. իսկ որ միանգամ ստիպի գործել զայն՝ յիւրն յանկուցանելով և զամենեսեան խորհուրդս, ո՛չինչ այնչափ գուլ գտանի անձին վասն ո՛չ անձամբ ևեթ վձարելոյ զիրան, որչափ զբօսանս և խռովս որ՝ ի հակառակորդաց անտի՝ և որք միանգամ իւրումն դիմամարտ լինիցին գատաստանի։ Այլ սակայն և չեմ իսկ բաւական համարէն՝ ի թիւս արկանել զկաւանայն հոգս. այն զի՝ և յորժամ

սպարտ լեցե զնոսա ՚ի գիր անցուցանել, ո՛չ դուզնաքեայ
ինչ տագնապ ածէն ՚ի վերայ այնմ՝ որում տնտեսուիս
այս յանձն եղեալ լեցե ։

Պաշտօն դատաստանացն բիւրս ինն ՚ի վերայ ածէ
երկս , բազմադէմ աղմուկ՝ և այնչափ դժուարութիս ,
որչափ ինչ և ո՛չ նոքա քերեն՝ որք արտաքնոյն նստին
դատաւորք ։ Վասնզի և զնոյն ինքն զիրաւունսն գտա-
նել աշխատութի՛ կ , և զգտեալն դարձեալ ո՛չ թիւրել՝
դժուարին . և ո՛չ միայն զբաղումն և դժուարութիւն ,
այլ և վտանգ ո՛չ փոքր ՚ի վերայ կայ ։ Վասնզի և զար-
դիս ՚ի տկարագունից ոմանք անկեալք ՚ի տաղտապանս ,
իբրև ո՛չինչ ուստեք գտին պաշտպանութի՛ , նաւակոծե-
ցան ՚ի հաւատս ։ Օ՛ի բազումք ՚ի հարստահարելոցն ,
ո՛չինչ սպասս քան զՀարստահարողն՝ առեան զորս
միանգամ ոչն օգնեն նոցա . և ո՛չ վարանաց պաշտօ-
մնն , կամ ժամանակին դժնդակութե՛ն , կամ չափու
երիցական իշխանութեանն , և կամ դարձեալ այլ ինչ
իրաց երբեք կամին երեսս ինչ առնել , այլ դատաւորք
են անողոքելիք . զայս միայն պատճառս ՚ի բուին կա-
լեալք՝ զվերժուսն առեմ չարաց լլկողաց իւրեանց ։ Նո-
ր միանգամ ՚ի նեբքս բերել զայս ո՛չ ունի , թէպէտ և
բիւր պատճառս ասասցե , ՚ի նոցուն դատակնքոյ երբեք
նա ո՛չ զերծանիցի ։

Սակ որովհետև յիշատակեցաք զպաշտպանութիւնն ,
ծն առեալ քեզ և այլ պատճառս ՚ի դէմն բերից մեղա-
դրութե՛ ։ Վասնզի եթէ ո՛չ զօրհնապազ առաւել քան
զնոսին իսկ զատենակալսն մտոյ տանել ՚ի տուն եպիսկո-
պոսն , անձառելիք են որ յայնմանէ ՚ի ասք . զի ո՛չ խո-
թացեալքն միայն՝ այլ և քաջառողջքն խնդրեն այցե-
լութե՛ , ո՛չ զի բարեպաշտութե՛ ինչ դրդէ զնոսա առ ՚ի
նոյն , այլ բազումք առաւել ՚ի պատճառս շքոյ և պա-
տուոյ ։ Նա եթէ երբեք դէպ լինի նմա ՚ի ատիպել ինչ
պիտոյից ՚ի հասարակաց շահ եկեղեցւոյն ստիպ լայց
ելանել ումեք յընչաւէտացն և ՚ի ձոխից , վաղվաղակի
կարծիս ինն սուտակասպասի և մարդահաճոյի վասն
այնորիկ լինքն ձգէ ։

Նա զինչ ասեմ պաշտպանութե՛ և տեսչութե՛ . Ես և
յանուանակոչութեանց ևեթ այնչափ ինն բեռն կրեն
բամբասանաց , մինչև առ արտմութե՛ն բազում ան-

կալճամիով և նուագիլ։ Կ՚ասի աւանիկ և Հայեցուածոց աչաց իւրեանց ունին դատաւորս. քանզի և զպարզուբք դործեալսն ՚ի նոցանէ Ճղիւ կշռեն բազումք՝ ՚ի քնին առեալք ջափ ձայնին, պղեղանակ նայեցուածոյն, և զօրինակ ծաղուն։ Կ՚ո այն ոք ասեն՝ ուժգին ծաղը արձակեաց. և զսա ՚ի դէմն զուարթս և ՚ի ձայն բարձր ողջունեաց. իսկ զիս՝ կարի պակաս և վեր ՚ի վերոյ։ Իսկ եթէ յակումբս բազմաժողովս ՚ի խօսել անդ ոչ առնայն ուրեք յածեցուսցէ զաչսն, զայն իբրև Թշնաւ մանս ինն պատճառեն բազումք։

Կ՚երդ՝ ո՞ ոք, բայց որ կարի արհաւեալն իցէ, այսչափ դատախազիչն երբէք բաւական իցէ, կամ ոչինչ երբէք ՚ի նոցանէ ամբաստանութենէ կրեալ, և կամ յետ ամբաստանութենէն ձողոպրել զանձն։ Կ՚անզի արժան է նմա՝ ոչ զոք ունել յամբաստանող. ասա եթէ այս յանհնաւ բիոյն իցէ, արժան է զնոցունն բամբաստանն քերել յանձնէ. իսկ եթէ և այս ոչինչ հեշտին իցէ, այլ իցեն ոմանք որ ՚ի նանիր և ՚ի տարապարտ մեղադրութիւնս խնդասցեն, պարտ է այնուհետև քաջասիրտս բերել զարտունեն բամբաստանացս այսոցիկ։

Կ՚անզի որ իրաւամբք ամբաստանի, հեշտեաւ արդեօք համբերէ ամբաստանողին. քանզի որովհետև չիք ոք գառնագոյն ամբաստան քան զինիղձ մտացն, վասն այնորիկ յորժամ ՚ի գժնդակագունէն անտի բմբռնիմք զառաջինն, արտաքնոցն՝ իբրև հեզապունից ոմանց դիւրաւ տանիմք։ Իսկ որ միանգամ ոչինչ գիտէ անձին իւրում չար, յորժամ տարապարտ ամբաստանի, անդէն վազվազակի ՚ի բարկութենէ բղդի, և ՚ի տիրութենէ դիւրաւ կործանի, եթէ ոչ թերևս յառաջագոյն զանձն հրահանգեալ իցէ ՚ի տանել բազմացն մելգնութենէ, Կ՚անզի չիք և չիք հնար՝ եթէ ոք ՚ի նանիր զբազաւեսցի և դատապարտ եղիցի, ոչինչ ամբոխեսցի, և ոչինչ կրեսցէ առ այնչափ տմարդութեամբն։

Իսկ զինչ ոք ասասցէ զարտունեանցն, զորս հարկ է տարամիլ՝ յորժամ պարտ իցէ զոք ՚ի լրութենէ եկեղեցւոյն հատանել։ Կ՚ասի երանի թէ և միայն տարտունեանցն չափ եր չարն. այլ նա աւանիկ և ինքս ոչ սակաւ է. քանզի երկնչիմ, եթէ գուցէ առաւել քան զարժանն վշտացեալ այնպիսին, կրեսցէ զայն ինչ՝ զոր երանելին ասաց

պաւղոս . * զի մի յառաւել տրտմութիւն ընկղմեսցի ։ Ե . կոր . Ը . 7 ։ Այս մեծապէս խնամոց պէտք են աստա նօր , զի մի նիւթ օգտին՝ նմա առաւելագունի եղիցի պատճառք ինասու . քանզի որչափ ինչ միանգամ յան ցանս յանցանիցէ նա յետ բժշկութեան , հասարակ եղե ցի ի վերայ իւրաքանչիւր նոցա քարկութիւն . եթէ ոչ դեղեցկապէս հատցէ զվէրն բժիշկն ։

Այլ արդ՝ քանի՞ պատժոց պարտ իցէ ակն ունել , որ ժամ այր իւրաքանչիւր ոչ միայն վասն իւրոցն յանցա նոց պահանջեսցի տալ համարս , այլ և վասն օտարին մեղացն ի վերջինն անկանիցի վտանգ ։ Ո՛ի եթէ զար հուրեալ եմք տալ համարս վասն մերոց յանցանացս , իբ րու եթէ ոչ քաւիցեմք սակրիլ ի հրոյն յայնմանէ , ի՞մ իսիք նմա պարտ իցէ ակն ունել , որում վասն այնչափ քաղմութեան հասանէ պատասխանի տալ ։ Սակ եթէ այս ձշմարիտ իցէ՝ պաւղոսի լուր երանելոյն՝ որ ասէ . մա նաւանդ եթէ ոչ նմա , այլ որ ի նմանէն խօսէր քեի . * Հնազանդիր լերուք առաջնորդաց ձերոց , և հպատակ կացէք նոցա , զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց , որ պէս եթէ համարս տալոց իցեն ընդ ձեր ։ Եբր . ԺԳ . 17 ։ Արդեօք դուշնաքեայ ինչ իցէ ահ սպառնալեացդ . ասել բանիւ չիք հնար ։ Սակայն և կարի ըմբռնտացել լոյ ոմանց և ստամբակաց քաւականն են այսոքիկ ի հա ւատարմացուցանել , եթէ ոչ ամբարտաւանութիւք և ոչ անպիտանութիւք ինչ վարեալք , այլ յանձնոյ մերոց միայն զանգիտեալք , և ի ծանրուն գործոյս զակն յառեալք՝ ձեպեցաք ի փախուստդ յայդ ։

ԺԸ. Այլ եթէ ոչ միայն որք նկրտիմն գալ ի գերութիւնն, այլ և որք հարկաւորեալ մերձիմն առ ի նոյն, սատուկս պատուհասին՝ եթէ երբեք յանցանիցեն։

ԺԹ. Եթէ որք ձեռս գնեն ի վերայ անարժանիցն, նոցուն տանջանացն բաժանորդք են, թէպէտև ոչինչ գիտասցեն զձեռնադրելոցն։

Ք. Եւ թէ բազում քաջութիւն ի խօսս պէտք են քահանային։

ՔԱ. Եւ զի առ հասարակ ի պայքարս և հելլենացւոցն և հրեից և հերետիկոսաց պարտ է նմա պատրաստ լինել։

ՔԲ. Եւ թէ կարի ներկուռ սրամտութիւնն պարտ է լինել նմա։

ՔԳ. Եւ զի երանելին պաւղոս քաջութիւնն ուղղեաց զնոյն։

ՔԴ. Եւ զի ոչ ի նշանացն միայն պայծառացաւ նա, այլ և ի ճարտար բախտութենէն։

ՔԵ. Եւ զի և ի միջի խնդրէ ուղղել զնոյն։

ՔԶ. Եւ թէ յորժամ զայս մերձ ոչ ունիցի երէցն, հարկ է հնազանդել ոչ ընդ բազում գրաւիլ ինասու։

ՅԱՂԸՑԱ ՎԱՀԱՆԱՅՈՒԹԻՆԸ

ԳԻՐՔ ՁՈՐՐՈՐԴ

ԺԱ. Երբեւ զայս ամենայն լուաւ Ասիելիոս, վայրկ
ի մի զտեղի կալեալ ասէ.

ԲԱՍԻԼԻՈՍ.

Ա՛յլ եթէ քո ինքնին գլխովին գնաս գործեալ էր զբռամբ ածել զիշխանութիդ զայդ, ունէր արդեօք տեղի ի քեզ երկիւղդ այդ. քանզի որ միանգամ խոստովանեաց զանձնէն բաւական լինել ի սպասաւորուի ինչ գործոյ, և զհետ պնդեսցի առնուլ յինքն, չիք նման յետ յանձնառուին յանփորձուի անդր սպասեան լինել՝ եթէ երբեք սխալեսցի. քանզի ինքն զառաջս առեալ՝ ի գիմն ապաստանի անձամբ զանձն ի բաց արձակեաց, և զի գիմագրաւ ընծայեցաւ և զսպասաւորուին տարաւ: Այլ ո՛չ դարձեալ կարօղ ինչ է ասել, որ միանգամ հաճութիք և կամաւ եկն ի սոյն, եթէ յայն ինչ ակամայ յանցեալ, և զայն ոք ակամայ ի կորուստ մատնեցի: Վասնզի ասասցե արդեօք առ նա, որ յայնժամ գնոյն դատ հանդերձեալ իցէ դատել ընդ նմա. Այլ առ ինչ ապա՝ զայդչափ անհմտութիք գիտեալով քո զանձինդ, և չունելով քեզ միտս բաւական ի վարել անարատութիք զարհեստդ զայդ՝ ի վերայ յարձակեցար, և ի վեր քան զանկակից ոյժդ ժպրհեցար զանձամբ արկանել գործ. ո՞ ոք զքեզ հարկաւորեաց, ո՞ ոք զդիմամարտդ և զպախստականդ քոնի ձգեաց: Ասէ դու ո՛չինչ յայսպիսեաց ասեմ ո՛չ լուիցես երբեք. և ո՛չ դարձեալ յայսպիսի սիս ունիցիս ինչ դատապարտ առնել զանձն. նա՛ յայսիսկ է ամենեցուն՝ եթէ ո՛չ մեծաւ ինչ, և ո՛չ փոքուն ձգնեցար դու երբեք յաղագս պատուոյդ այդորիկ, այլ յայլոցն ձեռս գործեցաւ գործն: Այս որ ինչ միանգամ նոցա ո՛չ նեղիչ ունել թողութիւն առ ի մեզն,

դոյն այդ քեզ բաղում նիւթ ջատագովութեան տայ ի ձեռս։

Ո՛ւ այսոքիւք չարժեալ իմ զգլուխս, և սակաւիկ մի ժպտեալ, զարմացեալ ընդ պարզմտութիւն նորա, ա՛ւ սեմ ցնա։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

Յանկայի և ես ինքն՝ եթէ այդպէս իրգդ վնաբէին, որպէս և ասես, ո՛վ դու բնաւից քաջընտիր. և ո՛չ զի ես կարօղ ինչ լինէի առնուլ յանձն զայն ինչ՝ յորմէ արգ փախեայ։ Վ՛անգի թէպէտ և ո՛չինչ տանջանք ի վերայ կայնի ինձ՝ եթէ վեր ի վերոյ և անհմտաբար դարմանեալ էր իմ գհօտն քոի, սակայն ինձ սաստիկ այն էր քան զամենայն չարչարանս, եթէ որ զաւանդն առի զայնչափ մեծամեծ գործոցդ, աւանդողին այնչափ երևեցոյց անշնորհակալս։

Այլ արդ՝ առ ինչ արգեաք կամիցիմ ես, եթէ ո՛չ թիւր իցէ կարծիքդ քո այդ. իբրու այն թէ հիգայն և թշուառականացն այնոցիկ, քանզի այսպէս պարտ է կոչել զորս միանգամ ո՛չ գտանիցին գերիգկապէս վերակացու լինել գործոյս այսմիկ, թէպէտ և բիւր անգամ ի հարկէ խոհիմ վարեալ ասիցես զնոսա, և անդիտութեամբ մեղանչողս, իբրու այն թէ ասեմ՝ նոցա այնպիսեայն յաջողեսցի ապրել յանշէջանելի հրոյն յայնմանէ, և յարտաքին խաւարէն, և յանմահ որդանէն, և յընդմիջ կտրելոյ, և յընդկեղծատորս կորնչելոյ։ Վ՛այլ ովքո՞ արարիչ քեզ, և բնաւ իսկ չէն և չէն այդպէս իբրդ։ Այլ եթէ քեզ կամք իցէն՝ զառաքինն ի թաւգաւորութեէ անտի, որ ո՛չ այնչափ ինչ է առաջի նմա, որչափ քահանայութեէն ինքնին գլխովին, հաւատարմայուցիչ քեզ զբանս զայսոսիկ։ Այաւուրն այն՝ որդին կիսեայ ո՛չ իւրով ինչ հետամուտ ջանիւն եղև թագաւոր, այլ գնայր նա ի խնդիր իշոյն, և վասն նոցուն հարցաներ զմարգարէն. իսկ սա վասն թագաւորութեէն խոսէր ընդ նմին։ Վակայն և ո՛չ այնպէս ի վերայ յարձաւ կեցաւ, թէպէտ և յառնէ մարգարէէ լուաւ զայն, այլ ի բաց վազէր՝ և հրաժեշտ տայր, ասելով. ո՛վ եմ ես, և ո՛վ տուն հօր իմոյ։

Այ զի՞նչ ասա, յորժամ չարաչար վարեցաւ ձեծա-

տուր պատուոյն՝ զօրեցին ինչ երբեք բանդ այդոքիկ փրկել զնա ի բարկութենէ անտի նորա՝ որ թագաւորեցոյցն զնա։ Այլ այն ալ՝ կարօղ էր ասել առ սամուէլ՝ որ կշտամբէրն զնա. մինէ ես ինքնին ի վերայ յարձակեցայ թագաւորութեդ, մինէ ինքնին ամբարձայ ի բռնութենէդ յայդ. զկեանս ոամկին կամէի կեալ զանզգաստն և զանդորրն, իսկ դու առեալ զիս հաներ ի պատուոյդ։ Այլ մինէ յիմում խոնարհութենէն կացեալ ամաչեալ էի, դիւրաւ արդեօք ապրեալ էր իմ ի գայթագղութենէդ ասոի յայսցանէ։ Վանգի մի գոլով և ես ի բազմոց անտի և յանձնահին, և քնաւ իսկ ոչ առաքեի ի գործդ յայդ, և ոչ դարձեալ ինչ ընդդէմ ամաղեկայ պատերազմ ի ձեռս տայր ինձ. իսկ ապա յոչ տալն, և ոչ արդեօք զդոյն ես յանցանեի յանցանս։

Այլ այս ամենայն տկարանան ի ջատագովութիւն անդր. և ոչ տկարք միայն են, այլ և վտանգաբերք, և առաւել բորբոքիչք բարկութենն ոյ։ Վանգի որ ի վեր քան զարժանին պատուասիրեցաւ, նման չէ արժան ի ջատագովութենի մեղացն զնճռուն պատուոյն ի դէմ ձգել, այլ զբազմապատիկ զառ նա խնամն ոյ յարգել յառաւելագոյն ևս յառաջատութենի լուսութենէ։ Իսկ որ միանգամ վասն առաւելագունին հանգիպելոյ պատուոյ՝ իշխանութենի ինն մեղանչելոյ համարեսցի ունել յանձն իւր, այնուհետև ոչինչ այլ, քան եթէ զոյ մարդասիրութենէն պատճառս ինն ջանացաւ նա առդնել իւրոցն յանցանաց։ Օ՜ որ և ամբարիշտք արդեօք և որք վատութենէ զկեանս իւրեանց քաղաքավարեն՝ բնաւորեցան առնել միշտ։ Այլ մեզ չէ պարտ զնոյն ախտանալ, և ոչ ի նմանօրինակ նոյնն ձգիլ յանմտութենի, այլ ամենայն ուրեք ձգնիլ յանձանց ի ներքս ընծայել զայն որ ի մերում կարի է, և բարեզգեաց ունել զլեզուն և զմիտս։

Վանգի և ոչ ինքն հեղի, զի ի բաց թողեալք զզ-թագաւորութենէն ի քահանայութիւն անդր եկեսցուք այժմ՝ վասն որոյ մեզ բանքս են, գուն գործեաց յինքն յանկուցանել զիշխանութիւնն։ Այլ արդ՝ զինչ օգուտ գործեաց նմա այն՝ յորժամ մեռանի։ Այլ զինչ ասեմ յինքն յանկուցանել, նա աւանիկ և ոչ տեղի տալ կաթ ինչ, թէպէտ և կամէր՝ չաղաղակ կարդի օրինացն։

Վանգի՝ ի ցեղէն էր ղևեայ, և պարտ էր նմա ընդունել զիշխանութիւնն՝ որ անդուստ՝ ի վերուստ յայգաւոհմէն իջանէր առ նա։ Ա.ԱՀ միանգամայն և սա ոչ դուշնաքեայ պատուհաս եղեալ զմանկանցն խեռուէ։

Իսկ զինչ նա ինքն առաջին կացեալ քահանայն հրբրեից, այր աղագաւ այնչափ ինչ խօսեցաւ ՅԾ ընդ մովսէս։ Վանգի չէղև բաւական միայնակ զդէմ ունել մէկնութեանէ այնչափ բազմութեն, ոչ ահա վայրիկ մի ևս և՝ ի կորուստ մատնէր, եթէ խնամակալութեն հա բազատին չէր լուծեալ զնոյ բարկութեն։

Ա.ԱՀ քանզի զմովսէս յիշատակէցաք, գեղեցիկ է և՝ ի նորուն պատմհարացն՝ զբանիս ցուցանել զշնորոտութեն։ Վանգի սա ինքն երանելին մովսէս՝ այնչափ ինն հեռի գտաւ՝ ի յաճշտակելոց զերբայեցւոց վերակացութենն, մինչև և՝ ի տուեալոյն հրաժարէր, և՝ ի հրամայել՝ ոչ՝ անաստատէր, և զպարզևատուն ինքնին՝ ի սրամտութեի շարժէր։ Այս ոչ յայնժամ միայն, այլ և յետ այնորիկ յիշխանութեէ անդ իւրում՝ մտադիւրաբոյնս յօժարէր՝ ի մահն սակս մերկանալոյ յիշխանութէն. քանզի * Այեթէ այգպէս առնիցես ընդ իս, ասէ, սպան իսկ զիս ‖. Ես. ԺԲ. 15։ Այս զինչ ասես։ Յորժամ մեղաւ առ ջրոյն, միեթէ բաւական՝ն ինչ եղէն այնչափ անձանձիր հրաժեշտք պաշտպանել նմա, և խոնարհել հաւանեցուցանել զնա՝ ներել նմա։ Այս յինչ պատճառս այլ՝ յաւետարանեալ երկրէն վերիպեցաւ նա. ոչ վասն այլոյ իրիք՝ քան որում և գիտէք իսկ ամենեքեան, բայց վասն այնր մեղաց, յոյր սակս աքանչելին այն այր ոչինչ կարաց հանդիպել այնոցիկ՝ որոց միանգամ հանդիպեցան իշխեցեալքն։ Ա.ԱՀ յետ ժամանակաց բազմաց և տառապանաց և յետ անպատմելի թափառանացն այնորիկ և պատերազմանցն և յաղթանակացն՝ արտաքոյ երկրէն այնորիկ վախճաներ, այր աղագաւ այնչափ՝ ի քիրան եմուտ. և զանդնդոցն կրեալ զկիրս՝ ի նաւս հանգստին ոչինչ վայելեաց։

Տեսանե՞ս զի ոչ յափշտակողաց միայն, այլ և ոչ ոքոյ միանգամ յայլոցն ջանից՝ ի դոյն՝ ի վեր ելանէն՝ միայ ինչ պատասխանի վասն յանցանացն։ Օ՛ի եթէ այր՝ ի նորուն իսկ յոյ ձեռնադրուէն բազում անգամ հրաժարեցին՝ այնչափ պատուհաս կրեցին, և ոչինչ

բաւական եղև այն փրկել՝ի վտանգէ աստի, ա՛յլ զա-
հարան, ա՛յլ զՀեղի, և ա՛յլ զերջանիկն զայն այր՝ զՅոբ,
զմարդարէն, զոքանչելին, զՀեղն առաւել քան զամե-
նեսեան՝ որ՝ի վերայ երկրի, և որ իբրև բարեկամ
խօսակից էր ընդ նմա. Հաղիւ ուրեմն ասա մեզ՝ որ այն-
չափ բացական եմք յառաքինութենէ անտի, կարօղ ինչ
իցէ բաւել՝ի ջատագովութենէ գիտակցիս մեր՝ իբրու
այն եթէ ա՛յնչ անձամբ հետամուտ եղեաք իշխանու-
թեանդ այդմիկ. Նա զի և բազումք՝ի ձեռնադրութենէդ
աստի յայսցանէ, ա՛յլ յԱծեղէն հնոցէն վճարին, այլև
՝ի ջանից մարդկան։

Օյուզա ընտրեաց Ած, և՝ի պարս անդ սրբութենէ
կարգեաց զնա, և զառաքելական զպատիւն ընդ այլոցն
շնորհեաց նմա. Նաև ինչ մի աւելի քան զայլոցն ետ
նմա՝ զընչից վերակացութենէ։ Այլ զինչ ասա՝յորժամ
երկաքանչիւրումն ևս ընդ հակառակ վարեցաւ, և զոր
քարոզել յանձին կալեալ էր՝ մոռանեաց. և զոր ինչ
միանգամ՝ի ձեռս առեալ էր գեղեցիկս պաշտել՝ զայ
նոսիկ չարաչար վատնեաց. ապրեցաւ ինչ թերևս՝ի
պատուհասէն. ապաքէն զորին վասն՝ այդ ամենայն նմա
սաստկագոյն ևս պատրաստեցին դատաստանս. և կա-
րի իսկ քաջ։

Վասանզի ա՛յս յառ Ած յանցաւորութիւն պարտ է վարել
զԾածատուր պատիւս, այլ յառաւել ևս հաճոյ լինել
նմա։ Իսկ որ յետ առաւել պատուասիրութենէն՝ նորին
ազգաւ և արժանի համարեցաւ անձին՝ ապրիլ յար-
դարացի իւրոց պատուհասից, զնոյնօրինակ գործեա-
ցէք՝ որպէս եթէ ոք և յանհատաւորէն հրէից լուեալ
զքոյն բանսն, զայն եթէ՝ *Իմ եթէ չէր եկեալ և խո-
սեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ա՛յլ գոյր նոցա։ Եթէ ըզ-
գործսն չէր գործեալ՝ի նոսա, զոր ա՛յլ այլ ոք գոր-
ծեաց, մեղ ինչ ա՛յլ գոյր նոցա ‖ Յով. ժե. 22. 24.
բամբասեցէք զփրկիչն և զբարեգործն՝ ասելով. Իսկ
ընդէր քնաւ եկիր և խօսեցար. զի գործեցեր դու ըզ-
գործսն, զի սաստիկ ևս տանջեսցես զմեզ։ Այլ աս-
կայն մոլեգնութենէ են բարբառքս և յետին յիմարուե։

Վասանզի գայ բժիշկն ա՛յն՝ի դատապարտել զքեզ,
այլ մանաւանդ՝ի բուժել. ա՛յն յայպանել զվհատացեալդ,
այլ գլխովին փարատել՝ի քէն զախտդ։ Իսկ դու զանձն

քո՝ ի բաց զերծեր՝ ի ներքուստ ձեռին նորա. ապա սաստիկ ևս պատուհասին պարտական ես։ Վասնզի ըղձօրինակ եթէ հպատակ կայցես բժշկուհին, փրկեցիս և յառաջնոց անտի չարեացդ. այսպէս և խոյս տալով քո յառաջակայդ, ո՛չ ևս կարասցես դու սրբել զքեզ յառաջնոց անտի. իսկ յոչ կարելին, լուծցես և զնոցուն զպատիժն։ Այս փոխանակ զի զվայրապար ջանդ վասն դորա քոյովանին՝ ի գործ արկեր, վասն այսորիկ ո՛չ զնոյնօրինակ՝ յառաջ քան զծատուր պատիւդ և յետ պատուոյն՝ կրեսցես տանջանս, այլ զվերջինս կարի սաստկագոյն։ Վասնզի որ բարեկրութիւնն չլինի բարւոյ, նման իրաւացի է դառնագոյն ևս պատուհաս։

Այս արդ՝ քանզի տկար յանդիմանեցաւ մեզ ջատագովութիւդ այդ, և ո՛չ միայն չփրկէ զապաւինեալսն՝ ի նա, այլ և առաւել ևս մատնէ, այլ լինի ապաւէն՝ ի դէպ է խնդրել մեզ։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Իսկ զինչ այն իցէ, քանզի և ո՛չ իսկ բաւական եմ յանձին իմում հանդարտել այժմիկ. այնչափ լինի ահա բեկ և զարհուրեալ թողեր զիս բանիւդ այդոքիւք։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

Մի՝ աղաչեմ և խնդրեմ, մի այդչափ կործաներ զանձն քո, քանզի ի՛ մեզ ապաւէն տկարացս՝ զի մի երբեք անկցուք. իսկ ձեզ հզօրացդ՝ զի զոյս փրկուեդ յետ հնարհացն այդ՝ մի յայլ ինչ հաստատեսջիք, բայց եթէ՝ ի գործել յամենայնի ըստ արժանեաց պարգևին այնորիկ, և պարգևողին զնոյն այդ։ Վասնզի մեծաց սրդեաք տանջանաց եղիցին պարտականք որք միանգամ իւրեանց ջանիւն զանձամբ առնուցուն զիշխանութիւդ զայդ. և ապա կամ առ հեղգութեն, կամ առ չարութեն, և կամ դարձեալ առ անփորձուեն չարաչար վարեսցեն զգործն։ Վասնզի և ո՛չ որք ոչն քանահնար լինին առ՝ ի նոյն՝ թողուե ինչ տեղի միայ այնպիսեացն, այլ և նոքա յամենայն պատասխանւոյ վրէպ գտանին։ Վասնզի պարտ է՝ որպէս կարծեմ՝ զի թէպէտ և բիւրք ոմանք՝ ի մէջ անդր կոչեսցեն զնա և ստիպեսցեն, ո՛չ-

ինչ զակն յառնոցէ ՚ի նոսա . այլ նախ յուզեալ քննեա
ցէ զանձն իւր , և զամենայնն ձգտիւ հետաքննեալ,
այնպէս ապա տեղւոյ տացէ քառնադատելեացն ։

Պաքէն և ո՛չ ոք կանդնեցոյն խոստանալ տուն կա
ռուցանել՝ յորժամ Ճարտարապետք մերձ ո՛չ էին , և
ո՛չ ախտացեալ մարմնոյն Թեկն ածել ոք դարմանն տա
նել՝ ո՛չ գիտելով զժշկուէնն . այլ Թեպետ և քաղուածք
էին որ ստիպէին , զդեմ կալել նոցա , և ո՛չ զամենի
ինչ կրեսցէ նա զանգիտութեն ։ Ուստ ապա որ զայնչափ
հոգւոյն խնամն հանդերձեալ է յանձն իւր առնուլ,
ոչինչ արդեօք քննեսցէ նախ զանձն . այլ Թեպետ և
կարի անփորձ իցէ քան զամենեսեան՝ առցէ զանձամբ
զսպասաւորութեն , իբրու զի՝ այն ոք այնպէս հրամայէ ,
և այն ոք այնպէս բուռն առնէ , և զի մի յայն ոք ինաւ
սակար գայցէ ։ Այս զիարդ ապա ՚ի բացերևակ ջարն
հանդերձ այլովքն ո՛չ խաբդաւանեսցէ զանձն . և որում՝
պարտ էր փրկել զանձն իւր , արդ և զայլս ոմանս ընդ
ինքեան ՚ի կորուստ մատնէ ։ Ասա ուստեք դա փրը
կութեն առն կալցի երբեք . ուստի՞ արդեօք Թողութեն
հանդիսեսցի . ոչ ոմանք յայնժամ պաշտպանեսցեն
մեզ . միԹէ որք այժմ բուռն առնեն մեզ և ՚ի հարկդ
յայդ ըմբռնեն . իսկ զդոսա ինքնին ո՞ր յայնժամ
փրկեսցէ . քանզի և դոքա գլխովին այլոց աղաչաւորք
անկցին՝ զի ՚ի հրոյն միայն ապրեսցին ։

Այս արդ՝ ասեմ զայսոսիկ՝ ո՛չ յահէայուցանել ինչ ըզ
քեզ , այլ որպէս և է բնաւ իսկ ձշմարտութեն ։ Ա՛ւր
զինչ երանելին պաւղոս դրէ աշակերտին տիմոթեայ՝ հա
րատած և սիրելի որդւոյն .* Ձեռս վաղվաղակի յորուք
վերայ մի դնիցես , և մի կցորդ լինիցես մեղաց օտա
րայ ‖ . ա . պէմ . Ե . 22 ։ Ցեսցանէս , եԹէ որք միանգամ
հանդերձեալ էին զմեզ յայդ պատիւդ ՚ի վեր հանել,
՚ի քանի՞ քառնասանաց՝ նա և ՚ի պատուհասառ գլխովին
որչափ ինչ և ՚ի ձեռս մեր է՝ գողանամք զնոսա ։

ԺԲ . Ոչ զանգի զղրօքինակ որք ընտրեցան՝ էի նոցա բա
ւական յարդարութեն՝ ասէլն . ո՛չ ինքնակոչ ինչ եկի ,
ո՛չ զգործն ինչ քննեցի , և ո՛չ տեղւոյ հետս . այնպէս և
ո՛չ ձեռնադրողացն երբէք օգնեսցէ ինչ՝ եԹէ ասաս
ցեն , Թէ՝ մեք զձեռնադրելոյն գիտեաք և ո՛չինչ ։ Այլ

վան այնորիկ մեծ և ա լինին յանցանքն , զի զոր ոչն ձա-
նաչին՝ ի մէջ ընծայեցին . և որ պաշտպանութի իմն
երևի լինել , նոյն առաւելու զամբաստանն : Վանզի
գնաւոր չկայ անաեղի , եթէ որք յանաշխարհիկս զոք
գնեալ կամեսցին , բժշկաց ցուցցեն , և յերաշխաւորաց
գնոյն պահանջեսցեն , և ի մերձաւորաց անաի նորա
ատուգեսցեն . և յետ ամենայնի այսորիկ և ոչ դար-
ձեալ գլխովին վտասն եղեալք , և ժամանակ ևս բա-
զում ի վերայ խնդրեսցեն ի փորձել զնա . իսկ որք
միանգամ հանդերձեալն իցեն գրել զոք յայդչափ սպա-
սաւորութիւդ , թերևս կարծեսցէ ոք՝ եթէ անխորհուրդ
և վարկպարագի , կամ ի հնարս այլոց , կամ ի չարակ-
նութի՝ վկայութի տացեն և դատեսցեն , ոչինչ այլ ի
ներքս բերելով քննութի : Եւ ո՞ որ ապա վասն մեր
արգահատեսցէ յայնժամ , յորժամ որք պարտապան էին
վերակացու լինել , և նոքա գլխովին վերակացուաց ո-
մանց կարօտք եղիցին :

Յաղագս որոյ պարտ է նման որ ձեռնադրելն կամի-
չի , բազում քննութիւն ի մէջ առնուլ , իսկ որում
ձեռնադրելն հասանէ՝ կարի առաւելութիք քան զնոյն :
Վանզի թէպէտ և զընտրողն կյորդս ունիցի տան
ջանաց ի մէջն անդ , այլ սակայն և ոչ ինքն յաղագս
այդորիկ ապրեսցի ինչ ի պատուհասէն , նա առաւել
ևս պատժեսցի . միայն եթէ ոչ ի պատճառս մարդ-
կային ինչ խորոյ ընդգէմ քաջախորհուրդ տեսութե
իւրեանց գործեսցեն նոքա կընտրուե անդ : Օ ի եթէ
ի դոյն յանցանս ըմբռնեսցին երբեք , և դխտելով զան-
արժանն՝ զնա ի պատճառս ինչ յառաջ կոչեսցեն ,
զնոյնօրինակ տանջեսցին ընդ նոսա . այլ թերևս և ա-
ռաւել քան զնա՝ որ ոչ ի ներքս ընծայեցոյց գյարմա-
րաւորն : Վանզի որ միանգամ զիշխանուե ի ձեռս տայ
այնմ՝ որ խանգարելն կամիցի զեկեղեցի , նա ինքն է
պատճառք չարեաց գործոց նորա :

Վպա եթէ այսպիսեաց ինչ պարտական ոչ իցէ , այլ
ի կարծեաց անաի ոամկին ասասցէ զանձն խաբեալ , և
ոչ այնպէս նա անպատիժ ինչ արձակեսցի . այլ փոքր մի
նոգաց քան զձեռնադրելոյն լուծցէ զվնէժս : Իսկ ընդհ-
արդեօք : Վանզի մնրթի է ընտրողացն գալ ի դոյն՝
պատրեալք ի սուտ համբաւոյն . իսկ ընտրեալն ոչինչ

արդեօք բաւական է ասել, եթէ իբրու զօտարս ոմանս՝ այնպէս անծանօթ էի անձին իմում։ Եւ արդ զորօրինակ ստստիկ ևս տանջանաց պարտական է նա քան զհրաւիրողն անձին իւրոյ, նոյնպէս և ձշգրիտ ևս քան զնոսա պարտ է նմա խուզել քննել զանձն իւր. և թէպէտ և նոքա անգիտացեալք յառաջ կոչեսցեն զնա, նմա պարտ է յառաջ մատչել, և զպատձառան ձշդիւ՛ի դէմս բերել, որովք՛ի խաբանաց անտի լըջացուսցէ զնոսա և զանձն գլխովին անարժան ցուցեալ կարծեացն բարեբաւութեանց տեղի տացէ՛ի ծանրութէ մեծի պաշտամանն։

Վասնզի առ ինչ ապա՝ յորժամ յաղագս գինուորութե և վաձառականութեանց և երկրագործութեանց, և յաղագս այլոց կենցաղականացս իրաց բանք ինչ՛ի մէջ անկանին, ուչ երկրագործն զնաւարկուէն երբեք յանձն առնու, և ուչ գինուորն զերկրագործուէն, և ուչ դարձեալ զեկավարն զգինուորութէն, թէպէտ և մահուանս բիւրս սպառնասցի ոք նոցա։ Այլ է՝ զի իւրաքանչիւրոք՛ի նոցանէ նախատես լինի վտանգին՝ որ յանփորձութենէ անտի իւրեանց է։ Վասն արդ՝ այդպիսի ուրեմն յորժամ դուշնաքէից ոմանց են տուգանքն, այնչափ իմն նախատեսութիւն՛ի վար արկանեմք, և ուչ ստիպողացն ինչ բանութէ տեղի տամք. իսկ ուրանօր տանջանք յաւիտենականք են, անծանօթից ոմանց՛ի ձեռս տան ըզքահանայութէին. այնպէս վայրապար և անխորհուրդ յայնչափ վտանգն սրկցուք մեք զանձինս՝ պատձառելով զայլոցն բանութէ. այլ ուչ և այսոցիկ հանդարտեցէ այն՝ որ յայնժամ դատելոցն է զմեզ։ Վասն պարտ է՝ կարի առաւելութէ քան զմարմնականացս՝ զհոգևորսն զգուշութէ՛ի դէմս բերել. իսկ այժմ և ուչ զզուշաչին գատանեմք մեք՛ի մեզ։

Վ՛ղէ դու ասաս ինձ, եթէ զոք՛ի մարդկանէդ կարծեսցուք լինել՛ի հիւանդս անտի՝ որ չիցէ այնպէս, և՛ի գործ անդր կոչեսցուք զնա. իսկ նորա հետևեալ կոչմանն, և ձեռնարկեալ՛ի նմանէն որ՛ի պէտս չինուածոյն պատրաստեալք լինեն, խաթարեսցէ զփայտան, խանպարեսցէ զքարինան, և այնպէս իմն կանգնեսցէ զտունն՝ որ մերձ ընդ մերձ անկեալ հոսեսցի. արդեօք շաձա լինչ լիցի՛ի ջատագովութիւն ձանձինն, այն՝ եթէ

յայլոց անաի ստիպեալ, և ո՛չ դիմագրաւ եկն ՚ի գործ անդր. և քնաւ իսկ ամենևին ո՛չ. և կարի իսկ քաջ և արդարապէս. քանզի և ՚ի կոչ անդր օտարին՝ նմա պա՛րտ եր տեղւոյ տալ: Ա՛րդ ուրեմն որ զփայտն աղարտեաց և զքարինան՝ ո՛չինչ ապրեցաւ ՚ի պատուհասէն. իսկ որ Հոգւոյն կորստեան եղիցի պատճառք, և վեր ՚ի վերոյ կանգնեսցէ զտունն, արդեօք զայլոցն ստիպել քաւականա՞ն համարեսցի անձին իւրում ՚ի փրկութիւն ՚ի պատուհասէն: Այլ զի՞րդ ո՛չ կարի իսկ դժպատեհ իցէ բանդ:

Վանգի և ո՛չ զայն ինչ այժմ յաւելում ես ասել, եթէ որ ո՛չն կամի՝ զնա ո՛չ ոք կարէ բռնադատել: Ա՛յո տացուք մեք, եթէ բիւրուց բռնութեաց ՚ի ներքոյ գրաւեցաւ, և բազմահնար մեքենայիւ՝ առ ՚ի անկանիլ, միթէ այդ ՚ի տանջանաց անտի փրկեսցի՞ զնա: Ա՛յն ասլա չեմ, մի՛ ցայդ վայր խաբեսցուք զանձինս, և մի՛ դարձեալ կեղծաւորեսցուք յանձինս անգիտանալ զայն ինչ՝ զոր և մանկտին քաջ գիտէ: Վանգի ուր խնդիրք են համարոյ, անդանօր պատրուակ անգիտութեանն ո՛չինչ կարասցէ օգնել մեզ: Ընդհին դու ո՛չ զՀետ ինչ պնդեցար առնուլ զնշանութեդ զայդ՝ զանձինդ գիտելով զտկարութեի. քարւոք և դեղեցիկս գործեցեր զայդ: Ա՛րդ՝ պա՛րտ եր դովին առաջադրութեդ՝ և ՚ի կոչ անդր այլոցն տեղւոյ տալ: Ամենևս յորժամ ո՛չ ուրուք հրաւիրեալ եր գքեզ, տկար էիր դու և անյարմարաւոր. իսկ յորժամ գտան ոմանք՝ որ զդոյն պատիւդ չնորհեցին քեզ, յանկարծակի հզօրացար արդեօք: Ա՛յսպիսի ծաղու արժանիք, և զառանցանք, և վերջին պատուհասին արժանաւորք:

Վանգի վասն այնորիկ և տէրն խրատ տայ, մի՛ արկանել հիմն՝ որ զաշտարակն կամիցի շինել, մինչեւ ՚ի քննութեի առեալ իցէ զանձին զօրուն. զի մի՛ թերևս բիւրս իմն հանդերձեսցէ պատճառս անցաւորացն առ ՚ի ծաղը անձին իւրոյ: Ա՛յլ նմա՝ մինչև ՚ի ծաղը անդէ զեանն. իսկ աստանօր տանջանքն՝ հուրն է անշիջանելի, և որդն անմահ, և կրճտել առամանց, և խաւարն արտաքին, և ընդ միջ կտրել, և ընդ կեղծաւորսն դասել: Ա՛յլ սակայն ո՛չինչ յայսպիսեաց աստի ո՛չ կամին տեսանել մերն դատախազք, ապա թէ ո՛չ՝

դնդապետին արդեօք ՚ի բամբասելոյ զնա՝ որ ոչն կամի զայն վայրապար կորուսանել զանձն իւր։

ՀԱ. Ոչ միշ այժմ խնդիրս յաղագս անտեսութեան ցորենոյ և գարւոյ, և ոչ յաղագս ալջառոյ և հօտից, և որ ինչ յայսպիսեաց սակի. այլ յաղագս նորոն խակ մարմնոյն մեր։ Վասնզի եկեղեցի քեզ ըստ երանելւոյն պաւղոսի՝ մարմին է քո. և պարտ է նմա՝ որում հաւատացաւ այս մարմին, քաջութիւն դարմանել զկեղեցիկ քաջողջութեան նորա, և զանհամեմատ զգեղն. և ամենայն ուստեք դէտ ակն ունել՝ զի մի ուրեք աղտ, կամ խոր, և կամ այլ ինչ արատ այսպիսի վնասեսցէ զգէմն զայն և զպայծառութիւն։ Այլ զինչ այլ արդեօք, քայց եթէ՝ զի անեղծ և երանելի գլխոյն նորա արժանի գնա ընծայեսցէ ըստ մարդկան կարի։

Օ. Եթէ որք գօտեկռիւն հրահանգաց պատկառական, բժշկաց սիգաք են նոցա և մանկածուաց՝ և ողջախոհ պարկեշտութեան ՚ի կերակուրս, և անպուղ ինն կրթութեանն և բիւրուց գնացուածոց. քանզի եթէ և զդուշնաքիւք ինչ ՚ի նոսա անփոյթ արասցէ, զամենայնն խանդարէ և վերը ՚ի վայր գործէ. իսկ որք միանգամ զմարմինս զայս յանձն առին դարմանել, որում մրցիլ առաջի կայ ոչ ընդ մարմնոյ ոմանց, այլ ընդ անեւրևոյթ զօրուեցն, զիա՞րդ կարասցեն երբեք անեղծ և քաջառողջ պահել զնա, եթէ ոչ կարի ինն ՚ի վերոյ անցցեն քան զմարդկան առաքինութիւնս, և առնայն գեղեցիկ դարմանոց հոգւոյն բուժանդակ ՚ի վերայ կացցեն։

Ե. Ա՞ երեւս ոչ գիտես դու, եթէ առաւել քան զմեր մարմինս՝ ախտից և դարանակալութեանց ՚ի ներքոյ անկեալ է այս մարմին, առ այս՝ և զի փութով ապականի, և յամր ապաքինի։ Ապաքէն մարմնոցս բժշկաց բազմադէմ դեղք գտան յօժանդակ, և զանազան գործ ձեաց հանդերձանք, և կերակուրք ախտացելոց անձանցն քաջադեպք. նա և օդոյդ բնութիւն բազում անդամ միայնակ բաւական է յառողջութիւն խոթացելոյն. և դարձեալ՝ զի և քուն ՚ի դէպ ժամու ՚ի վերայ անկեալ՝ գլխովին յամենայն աշխատութենէն ազատ կացուսյն զբժիշկն։ Իսկ աստանօր չիք ինչ հնարել յայսպիս

սեաց ասաի. այլ յետ օրինակի որ ի գործոցն՝ մի միայն ևն հնազք և բժշկութենն յեղանակ, այն ինքն է վարդապետութիւն բանիցն։ Ա.յս ևն գործիքն, այս գլխովին կերակուրն, այս օդոցն բարեխառնութիւն. այս է՝ փոխանակ գեղոյն, սա այս է՝ փոխանակ հրոյն, այս է՝ փոխանակ երկաթոյն. եթէ խարել պարտ իցէ, եթէ հատանել կարել, հարկ է ղդա՛ի գործ արկանել. եթէ այս ոչինչ գօրեսցէ, այլն ամենայն ընդ վայր գնասցէ։ Ապիւն և գանկաւոն հոգի՛ի վեր առնումք, և զայտուցեալն ձնշումք, և զաւելորդն յապաւումք, և զնուազն լնումք, և բռնադակ զամենայնն հնարիւք գործեմք՝ որ ինչ միանգամ գքաջողջութիւն հոգւոյն գիտէ անօրինել։

Ա.նպէ առ գեղեցկապէս յարդարել զկեանս, օտար բին կեանք՛ի նմանօրինակ նախանձ յորդորէ. իսկ յորժամ՛ի մոլորանուն վարդապետութիւնս ախտասցի հոգին, յայնժամ առաւելապէս բանից պէտք են, ոչ յաներկեանութիւն միայն ընտանեացն, այլ և՛ ի պէտս արտաքնոցն մարթից։ Օ՛ի եթէ ոք այնպէս լինի ունելի զսուբեր հոգւոյն և զվահան հաւատոյն՝ որպէս զի և բաւական իցէ նեղդործել հրաշս, և նշանայն արուեստիւք խնուլ զբերանս լրբենեացն, ոչինչ այնուհետև պէտս ունելի առ՛ի բանիցն օգնականութե, մանաւանդ թէ և ոչ յայնժամ անպիտան լինչ եղելոյ բնութի դորա, այլ և կարի կարևոր։ Ա.նպէ և երանելին պաւղոս զնոյն՛ի վար արկ, թէպէտ և հրաշիցն կատարմամբ սքանչելի էր առ ամենեսեան։ Ա.յլ ոք դարձեալ՛ի նմին պարսս իրատ տայ քաջաբանութեա այսմիկ փոյթունել՝ ասելով. * Պատրաստ իցե՛ք տալ պատասխանի ամենայնի՝ որ խնդրիցէ զձանն, որ է վասն յուսոյն ձերոյ ‖ Ա. Պ. պէտ. Ի. 15։ Ա.յլ արդեօք ոչ յայլ ինչ պատճառս ամենեքեան ստեփանոսի յանձն արարին զայրութեացն անտեսութե, այլ զի իւքեանք պաշտամանն բանիցն պարապեսցին։

Ա.յլ սակայն և ոչ նովին չափով խնդրելոք ինչ մեք զբանն, եթէ էր առ մեզ զօրութե նշանայն։ Ա.պա եթէ և ոչ հեաք անպամ զօրութենն այնորիկ մեայ առ մեզ, նա զի և թշնամիք բազումք և անդադարելիք շուրջանակի յամենայն կողմանց պատին զմեզ, հարկ է

մեզ այնուհետև դովին պարսպել զանձինս՝ զի մի՛ ի թշնամեացն նեռից խոցիցիմք, մանաւանդ եթէ՝ զի զնոսա վիրաւորիցեմք։

Ը. Յաղագս որոյ բազմապատիկ ջանից մեզ պէտք են՝ զի բանն քո՛ բնակեսցէ՛ ի մեզ առատապէս։ Քանզի զի՛ չէ առ մի օրինակ մարտի է մեզ պատրաստութիւն, այլ բազմադիմի է պատերազմն, և՛ ի զանազան թշնամեաց մղեալ։ Քանզի և՛ չնոյն զինս՛ ի գործ արկանեն աւետեքեան, և՛ չէ՛ ի մի յեզանակ փութան ձգնին նոքա յարձակիլ՛ ի մեզ. և որ միանգամ հանդերձեալն է զմարտն մղել առհասարակ ընդդէմ բոլորիցն, պարտ է նմա քաջապէս գիտել զամենեցուն նոցա զարուեստս, և լինել նմա միանգամայն աղեղնաւոր և պարսաւոր, և սպայապետ և վաշտապետ, և զօրական և զօրավար, և հեւակ և պրուաձի, և նաւամարտիկ և ամրամարտ։

Քանզի՛ ի մարտս զինուորականս որ զինչ և գործ պայ իւրաքանչիւր՛ ի ձեռն առնու, նովիմբ վտնկ գայր-ձակեալն՛ ի վերայ. իսկ աստանօր չէ այնպէս, այլ եթէ որ յաղթելն կամեսցի՝ չգիտիցէ զամենայն յեղա-նակս մարտին, գիտէ բանասարկուն և ընդ մի միայն կողմն՝ եթէ երբեք յանհոգս գտցէ զնոսն՝ խուժել՛ ի նեբքս զասպատակաւորս իւր, և յափշտակել զՀօտն։ Քայլ՛ չէ նոյնպէս՝ եթէ ամենայն գիտութեբ խելամուտ ծանիցէ զհովիւն, և ամենայն դարանակալութեբ իւրոց քաջութեբ՛ ի վերայ հասեալ։ Վասն որոյ ամենայն ուսմունք մեզ գիտելիք լինի ամրութեբ՝ պէտք են։

Քանզի քաղաք ցորչափ յամենայն կողմանց ամրա-ծածուկ է, ծաղը առնի՝ որ զնա պաշարիցեն, և ինքն՛ ի բազում աներկևանութեբ անցեալ նստի. ապա եթէ ոք ըստ չափու միայն դրան հատցէ զպատուարն, չէ՛ինչ այնուհետև օգնեսցէ նմա իրանն շուրջանակի, թէ-պէտ և այլն ամենայն նմա յիւրում ամրութեբն կացցէ մնասցէ։ Ոչ այսր օրինակ և քաղաքն ևս՝ յորժամ զնա ամենայն ուսմունք իբրև պատուար շուրջանակի ամրա-ցուցանեն ձարտարամտութեբ հովուին և զգօնութիւնն, ամենայն մինչեւնաւոր հնարք թշնամեացն դառնան նո-ցա յառակ և՛ ի ծաղը. և որ՛ ի ներքս անդ քնակեն՝ անդրժելիք մնան։ Ապա եթէ ոք զնա՛ ի մտանէ՝ չկա-

գօրեսցէ քահել, թէպէտ և ոչ զամենայնն քանդեսցէ, ի մասնէ անտի՝ որպէս ի դէպ է ասել բանիս՝ բոլորն հինն ի վեր տապալեսցի այնուհետև։

Վասնզի զինչ օգուտ իցէ ընդ հելլենացւոցն քաջութիւն մարտ դնել, եթէ աւազ հարկանիցին զնա հրէայք. կամ եթէ վերկոսին և ի պարտութիւն մատնեսցէ, յափշտակեսցին զնա մանկիքեցիք. իսկ ապա եթէ և ի սոցա վերայ նշան յաղթութեան կանգնեսցէ, նոքա՝ որ զձակատագիրն մուծանեն՝ գան ի ներքս մակաղեալ զՀօսն կեղեքեսցեն։ Այլ զինչ պարտ իցէ զամենայն հերձուածս սատանայի մի ըստ միոջէ ի ներքս արկա նել. զրոս եթէ բովանդակ ոչ գիտէ հովիւն քաջութիւն ի բաց վանել, կարօղ է գայլն և միոյն միայնով դիշա տել զՀօսն առաւելագոյն մասամբ։

Պաքէն ի մէջ վկնաւորաց՝ որք միանգամ հաստա տուն կանգն և պատերազմին, ի նոցանէն միշտ ակն ու նել պարտ է յաղթութեն և կոտորածին. իսկ աստա նօր բազմօք տարբերեալ. քանզի բազում անդամ մարտն՝ որ առ այլն է՝ յաղթականս իմն գլխովին յարդարեաց զնոսա՝ որք և ոչ զառաջինն անդ ի ներքս խառնեցան, և ոչ աշխատութիւն երբէք յանձն առին՝ հանգուցեալք և յանդորրու բազմեալք. և որ յայսոսիկ չէ քաջապէս համոցեալ՝ իւրական սրտին խոցի, և կամ բարեկամացն և թշնամեացն միանգամայն ի ծաղր լինի։

Որինակ իմն. քանզի և օրինակօք խնդրեմ մերկա նալ քեզ զբանս. որք միանգամ վաղենտինի և մեր կիոնիի խեղաթիւրութեն զՀետ կրթեցան, և որք զնոյն ախտացան ախտ, ի կարգէ ծածկոցն մատենից ի բաց հանեն զծածուր օրէնսն մովսէսի։ Իսկ հրէայք կըլ խովին այնչափ իմն պատուասիրեն զնոյն, մինչ զի և ի խափանել ժամնակին՝ նախանձայոյզք եղեալ պահեն զամենայնն հակառակ կամացն նոյ։ Իսկ եկեղեցի նոյ յերկուցն անչափուեց խոցս տուեալ՝ զմիջինն այսոցիկ ընթանալ ձանապարհ, ոչ ընդ ձախն նորա խոնարհիլ երբեք հաւանի, և ոչ դարձեալ յանձն առնու խոտել զնա. նա և ի գովութիւն առնու զդադարեալն զայն, իբրև զի անդ ուրեմն պիտանացու եղև յիւրում ժա մանակին։

Այս արդ՝ պարտ է այժմ՝ որում ընդ երկաքանչիւ

բոյն հասանել կուռել, չափաւորութեամբ այսմիկ խնամեալ լինել։ Օ՛ի եթէ զհրեայն ինդրէ հրահանգել, իբրու այն՝ որք ՚ի դժպատեհ ժամու զհին օրինադրութիւնքն փարեսցին, և մեռեսցի այնուհետեւ դառնապէս բամբասել զօրէնսն, ո՛չ փոքր ինչ պատճառս տացէ հերետիկոսացն՝ որ միանգամ անարգելն կասիցին զնա։ Պատ եթէ զսոցա բերանան կամելով խնուլ՝ անչափութիւք լինի բարձրացուսցէ զնա, և իբրև զմի ՚ի կարևորաց ժամանակիս այսորիկ գովեսցէ զնա, զհրեիցն ընդվզեսցէ զլեզուսն։

Պարձեալ և որք զսաբելին անմտութեին մղին, և որք զարիոսինն կատաղին, երկաքանչիւրքն միանգամ մնայն անչափութիւք գնացեալք՝ յողջախոհ հաւատոյն վերպեցան. և անուն քրիստոնէի յերկաքանչիւրոցն վերայ հանգուցեալ կայ. իսկ եթէ ոք զնոցա վարդապետութեանն ՚ի քնին առցէ, ո՛չինչ լաւագոյն ինչ զգածեալ քան զհրեայն գլխովին գոցէ զկնոս ՚ի նոցանէ, բայց որչափ ինչ անուամբքն տարբերեսցին միայն. և զկնս մի դարձեալ՝ բազմօք հանգուցեալ հերձուածոյն պաղտոսի սամոստացւոյ. այլ առհասարակ զերկաքանչիւրան անբաժս ոմանս ՚ի միմեանց տեսանել։ Այս որդ՝ մեծ է որ աստանօր վտանգս, անձուկ և նեղ է ճանապարհն, աստի և անտի սպառնալիք են վախից, և երկիւղ ո՛չինչ փոքր՝ եթէ թերևս զմին կամելով վիրաւորել, ՚ի միւսմէն խոցեսցի։

Պանդխտի եթէ ոք մի ասասցէ զճշմարիտն, վաղվաղակի յիւրեր անմտութիւնն առեալ ձգեսցէ սաքիլ զձայնն. իսկ եթէ դարձեալ բաժանեսցէ, այլ ասելով զհայրն, և այլ զորդի, և այլ զհոգին սրբ, անդուստ ՚ի վերայ կայ արիոս՝ յայլևայլութիւն էուէն ձգելով զզանազանութիւն անձանցն։ Այդ՝ պարտ է և յամբարիշտ խառնակութիւնն նորա, և ՚ի մղեգին բաժանմանէ սորա տեղի տալ և փախչիլ, մի խոստովանելով զճշմարիտն հօր և որդւոյ և հոգւոյն սրբ, և երիս ՚ի վերայ բերելով անձինս. քանզի այսպէս ուրեմն բաւական լսեմք երկաքանչիւրոցն ևս զդէմ ունել յարձակմանցն։ Այս այսոսիկ քեզ և բազումն այլ ունելի ձառել ձեռնարկուիս մարտից, յորս եթէ ո՛չ քաջութիւք և խելօք մարտիցես դու, բիւրս առեալ ՚ի քեզ վիրս՝ այնպէս գնասցես ՚ի բայ։

Ե. Իսկ զընտանեացն զպայքարս ո՞ր երբէք բաւա-
կան իցէ պատմել. քանզի ոչ խոնարհապոյն ինչ են նո-
քա քան զարտաքնոցն զհուժանս, այլ և բազմապոյն
և քիրտն հաստացանեն վարդապետին։ Վասնզի են՝
որք ընդվայրաքնինք եղեալ յանպուգն և վայրապար
խնդրեն հետազօտել զայն ինչ, որ ոչ օգտակար ինչ է
ուսեալոյն, և ոչ հնարաւոր երբէք յուսանել։ Այլ են
դարձեալ՝ որք զհամարս իրաւանցն ոչ պահանջեն ՚ի
նմանէ, և զխորհն զայն զազարս՝ թէ ակոխեն չափել։
Վասնզի * իրաւունք քո, ասէ, որպէս խորք բազումք ‖.
սաղմ. ԽԶ. 7։ Իսկ յաղագս հաւատոյն և առաքինի կար-
գաց նուաղունս գտցես դու նախանձաւորս. իսկ խու-
զարկուս այսոցիկ և հետաքննիս՝ բազմապոյնս, որոց ոչ
գիւան է հնարաւոր, և որոց հետազօտութեն ՚ի բար-
կուէ գրգռէ զնոճ։ Վասնզի յորժամ զայն ինչ ձկտիմք
ուսանել՝ զոր ոչ կամեցաւ ածն գիտել մեզ, և ոչ երբէք
ապա կարասցուք գիտել զայն. քանզի զիարդ այս՝ յոր-
ժամ ոչ կամեսցի ածն, և մնասցէ մեզ վտանգ միայն՝
որ յընդվայրաքննութէ այսի իցէ։

Այլ սակայն՝ այսոցիկ այսպէս եղելոց, եթէ ոք ու-
րեք հանդերձ իշխանութէն սանձակոծեսցէ զբերանս
նոցա՝ որք զանթարգմանելիսդ զայդոսիկ հարցանիցեն,
կարծիս ինն տայ զանձնէն՝ զգուռզուռութեան և զանու-
սումնուէ։ Յաղագս որոյ և աստանօր բազում զգօնու-
թէ պէտք են վերակացուին, զի միանգամայն յանտեղ
զի խնդրոց անտի ՚ի բաց մեկնեսցէ զնոսա, և զի դար-
ձեալ ՚ի նախաձառեալդ բամբասանաց փրկեսցէ զանձն։
Իսկ առ այս ամենայն ոչինչ այլ՝ քան եթէ բանիցն օգ-
նականութէն տուաւ միայն. և եթէ ոք ՚ի զօրութէնէ
ստէպ նուազեալ իցէ, այնուհետև ոչինչ ընդհատ քան
զնաւակս ոմանս՝ որք անգուլ ՚ի մըրկէն ծփացին, յոր
զեսցին հոգիք հնազանդելոցն նմա. ասեմ զնոցանէ՝
որք տկարագոյնք իցեն, և որք առաւել ընդվայրա-
քննիք։ Վասն որոյ պարտ է քահանային զամենայն
հնարս հնարել, զի զզօրութէդ զայդ ածցէ զբառամբ։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Իսկ զիարդ ապա պաւղոս ոչինչ գոն գործեաց զզա-

բութիդ զայդ ուղղել, և ոչ դարձեալ ժամթի ինչ հա-
րաւ յաղագս աղքատութե՛ բանիցն. նա՛ աւանիկ և ակն
յայտնի խոստովան լինի զգիտութե՛ անձինն. և այն՝
յորժամ առ կորնթացիսն գրէր, որ՝ի Ձարտարախօ-
սութե՛ն սքանչելիք ոմանք էին, և դորին սակս մեծա-
մեծս պանծային։

ՈՍԿԵՓԵՐԱՆ.

Ա՛յս է ապաքէն, այս իսկ է՝ որ զբազումն՝ի կո-
րուստ մատնեաց, և առ Ձմմարիտ վարդապետութիւնն
հեղգագոյնս գործեաց։ Վա՛նզի իբրև ոչինչ հասու ե-
ղեն Ձնգրտիւ խոշգել զնորս առաքելական մտացն, և
իւեզամուտ լինել իմաստից բանիցն, զամենայն ժամա-
նակն ծախեցին՝ի քնէածութե՛ն և՝ի յօրսանջս և պա-
տուհասին զգիտութե՛ն զայն, ոչ որով տգէտ զանձն իւր
ասէր պաշտս, այլ յորմէ այնչափ իմն հեռի էր նա,
որչափ և ոչ այլոք՝ի մարդկանէ առ՝ի ներքոյ երկնից։

Ը. Ա՛յլ բանս այս մեզ այլուստ ժամանակի թողլի
է. իսկ զարդիս զայս ինչ ասացից ես։ Տացուք մեք, ե-
թէ տգէտ էր նա և դոլին մասամբ՝ զոր կամին դո-
քա. իսկ ապա զինչ այդ առ մարդիկ մերոյ ժամանա-
կիս։ Վա՛նզի առաւել ևս քան զբանիցն՝ այլ գօրութե՛
բազում էր նորա, և բազմագոյնս ևս ներգործել բա-
ւական էր. քանզի միայն զանձն երևեցուցեալ յանդի-
մանս և լռին կացեալ, ահարկու էր դիւացն։ Իսկ մար-
դիկ ժամանակիս առհասարակ՝ի մի վայր եկեալք՝ բիւ-
րուք պաղատանօք և արտասուօք ոչինչ բաւեցեն այն-
չափ ինչ գործել, որչափ զօրէին յայնժամ վարշամակքն
պաւղոսի։ Ա՛ռ այս՝ և զմեռեալս աղօթիւք յարուցա-
ներ պաւղոս, և այլ ևս այնպիսի սքանչելիս կատարեր,
որպէս զի և ՅԾ ոմն կարծել յարտաքնոց անտի. և
միթէ՛ և փոխեալ՝ի կենաց աստի, արժանի եղև յափշտա-
կել մինչև յերրորդ յերկինս, և հաղորդ լինել քանից՝
զոր ոչ է պարտ լսել քնուճ մարդկան։ Իսկ որ այժմ
կեան մարդիկ (այլ ոչ կամիմ դժկամակ ինչ խօսել՝ և
կամ ծանր. զի ոչ թէ՛նամանելով ինչ զնոսա ասեմ, այլ
հիացմամբ,) զիա՞րդ ոչ զարհուրին երբեք, յորժամ
ընդ այնպիսումն առն՝ի կշիռ ձգեն զանձինս։

Վ՚անզի՝ եթէ և՝ ի բաց անդր թողեալ զաքանչելիսն՝ մատիցուք առ կեանս երանելոյն այնորիկ, և զհրեշտակային քաղաքավարութեն նորա՝ ի քննութեի առցուք, քան՝ ի աքանչելիսն՝ առաւել յայտիկ յաղթական տեսցես դու զնահատակն քո։ Վ՚անզի ո՞ոք պատմեսցէ մեզ զնախանձն նորա, զլաւութենն, զտէպ տէպ վըտանգսն, զանդուլ գհոգսն, զանդադարելի զսուգն վսեմ եկեղեցեաց, զկարեկցութենն առ տկարս, զաւգուտ աղէտս, զնոր հալածանսն, զհանապազորեայ մահսն։ Օ՚ինչ վայր էցէ տիեզերաց, զինչ երկիր, որ ծով, որ ո՛չ գիտաց զնահատակութիւնս զարդարոյս այսորիկ։ Օ՚նա և անչէնն ծանեաւ վայր, յորժամ բաւգուտ անգամ՝ ի վտանգս նորա ժողովէր զնա։ Վ՚անզի ամենայն ազգի դաւանակալութեց տարաւ նա, և ընդ ամենայն յերկանակ յաղթութենէ անց նա, և ո՛չ՝ ի մէյնա նացն և ո՛չ՝ ի պակասն երբէք դադարեցաւ նա։

Վ՚այլ ես և քնաւ իսկ չգիտեմ՝ եթէ զիարդ բուռն հարի՝ ի թշնամանել զայրն. քանզի հանդէպ նահատակն նորա՝ ի վեր են քան զամենայն բանս, իսկ քան զիմն այնչափ՝ որչափ քան զմեզ գերազանցեն ձարտարախօսք ոմանք։ Վ՚այլ սակայն և ո՛չ այնպէս. քանզի ո՛չ կելից ի բացն՝ այլ յառաջադրութենէ անտի կամացն զատի զմեզ երանելիս. ո՛չինչ դադարեցայց, մինչև բարբառեցայց և զայն ինչ՝ որ այնչափ իմն վեհագոյն է քան զնախաձառեալսդ, որչափ նա քան զամենայն մարդիկ։

Վ՚ա զինչ ապա այն իցէ։ Յետ այնչափ հմնդխնդիսն քաջութենէ, զկնի բիւրուց պսակացն՝ ցանկացաւ մեկնել գնալ՝ ի գեհեանն, և յաւիտենականին մատնել տանջանաց, որպէս զի որք բազում անգամ քարկոծ առ բարեալ էին զնա հրէայք, և ըստ ձեռնհաս գոլոյ՝ սպառնեալ, փրկեսցին և մերձեսցին առ քե։ Ո՞ոք երբէք այնպէս սիրեաց զքե, եթէ արդեօք սէր կոչել զնա արժան իցէ, և ո՛չ այլ ինչ առաւել քան զսէր։ Վ՚ա արդ՝ դարձեալ զմեզ ինքեանս ձգեսցուք ընդ նմա՝ ի կշիռ, յետ այնչափ ընդհարացն՝ զոր՝ ի վերուստ անտի ընկալաւ, յետ այնչափ առաքինութենէն՝ զոր անձամբ անձին առաքինացաւ։ Վ՚ա զինչ ապա յանդգնագոյն ևս քան զայդ կայցէ երբէք։

Վ՚ակ եթէ և ո՛չ այնպէս՝ ի տգիտաց ոք էր նա՝ որ

պէս կարծեն զրքա, զոյն աւագիկ քուրն հարկ յայտնուք ցուցանել։ Քանզի զրքա տգէտ կոչեն՝ ոչ միայն որ ի գիւրթութիւն արտաքնոցն բանից հրահանգեալ ոչ էցէ, այլև որ ոչն գիտից պատերազմել յաղագս վարդապետութեց Հիմարտութիւնն. և գեղեցիկ են նոցայն կարծիք։ Քէզ՝ պատգոս ոչ եթէ յերկաքանչիւրումն իւրումն միայն եւ տգէտ խոստովանեցաւ զանձն, այլ ի միումն միայն յերկուց այսր։ Եւ զի հաւատարիմ արասցէ զզոյն, Հիմարտապետն խտրոյ ի մէջ արկանէր՝ աւելով,* տգէտ եմ բանիւ, այլ ոչ եթէ գիտութիւք ‖ Ե. կոր. ժա. 6։

Այլ իմ եթէ գիքաղցրութիւնն տակրատայ խնդրեալ էր, և գուշիմութիւնն դիմոսթենեայ, և գիտութիւնն պղատոնի, ի գէպ էր յայնժամ ի ներքս արկանել զայս վկայուն պաւղոսի. իսկ ես այժմ զայն ամենայն ի բաց թողում, և գհետաքնին հոտիանս գսրտաքնոցն, և ոչ դարձեալ յաղագս ոՀմն և արտասանութիւնն փոյթ ինչ է ինձ։ Այլ եղիցի այդպէս՝ եթէ աղքատ էր նա բանիւ, և նորա շարադրութիւն անուսանցն պարզ և խոնարհ. այլ քանզի գիտութիւք և Հիքրտութիւք վարդապետութիւնցն տգէտ ոչ էր, ապա և ոչ ոք յատագաստ իւրումն պղերգութիւն բաւական ինչ էցէ ի բաց կապտել յերանելւոյն յայնմանէ գլխեհատոյնն բարեաց և գծատն գովեստ Թեանց։

Է. Այլ ածէ՝ ասա դու ցիս, ի՞նչ իւիք արդեօք նա գհրէայն յամօթ առնէր զբնակեալն ի դամասկոս, քանզի չև էր նա ի հրաշս ձեռնարկեալ։ Արդ՞ իւիք դարձեալ գհելլենացին տապաստ արկանէր։ Իսկ առ ինչ արդեօք ի տարսոն առաքեցաւ. ոչ ահա ի պատճառս պերճութեան բանիցն, որով այնչափ լիճն նկուն առնէր գնոսա, մինչև առատանալ նոցա սպանանել գնա՝ իբրև ոչինչ հանդարտեին առ ի նմանէ յաղթութեանց։ Քանզի աստանօր չև և այս էր նորա սկիզբն արարեալ աքանչելագործ զօրութիւնն. և ոչ դարձեալ ոք ասել կարօղ ինչ է՝ եթէ ի պատճառս փառաց հրաշիցն՝ իբրև աքանչել գոյին բաղումք ունէին գնա. և ոչք միանգամ ընդ նմա ի պայքար մտանէին, նկուն եղեալ.ք նուաճեցան ի գեղեցիկ համբաւոյ առն։ Քանզի մին-

եւ ցայն վայր միայն քաջախօս լեզուաւն տիրանայր։

Իսկ ընդդէմ այնոցիկ որ յանտիւք զերկանալն խընդրեին, որովք իւիք արդեօք մնցեր եւ վիճակը։ Իսկ ապա եւ արիսպագացին այն՝ 'ի դիցամոլ քաղաքէ անտի, ո՛չ 'ի հրապարակախօսն լինելոյ նորա եւեթ զհետ ընթացաւ նորա հանդերձ կնաւն։ Իսկ եւտիքոսն զնաւրդապա 'ի վայր անկաւ 'ի պատուհանէ անտի։ Այսպէս է՝ քանզի մինչեւ ցխոր դիշերն պարապեալ էր 'ի լուր բանից վարդապետութեանն նորա։ Իսկ զինչ ապա 'ի եթեսաղոնիկէ եւ 'ի կորնթոս։ զինչ լեփեսոս եւ 'ի նմին իսկ 'ի հռոմ։ ո՛չ ահա ողջոյն զցայգ եւ զցերեկ ծախէր կարգաւ 'ի մեկնել զկիրս։ Օ զինչ ապա ասասցէ ոք՝ յաղագս վիճաբանութեանց նորա ընդ եպիկուրեանս եւ ընդ ստոյիկեանս. զի եթէ զամենայնն առհասարակ կամիաք 'ի համար բերել, կարի երկարապատում լինելոց մեզ բանս։

Այլ արդ՝ քանզի յայտնի է եթէ եւ յառաջ քան զընդհանուն, եւ 'ի ժամանակի անդ նշանացն բազում ձարտարախօսութիւնք վարեցաւ նա, զինարդ դարձեալ յանդգնեսցին դոքա տգէտ ասել զնա, որ վիճաբանութիւնքն եւ առեղնախօս ձառիւքն առաւել իմն աքանչացաւ առ ամենեսեան։ Վանզի առ զինչ արդեօք լիկայոնացիքն համարեցան զնա հերմէս լինել. քանզի եթէ աստուածս ոմանս կարծեցին զնոսա, այն յաղագս հրաշիցն էր. իսկ եթէ հերմէս զպաւղոս, այն ո՛չ 'ի պատճառս զինչ աքանչելեացն էր, այլ յաղագս ձարտարաբան լեզուին։

Այլ ինչ աղագաւ եւ քան զայլ առաքեալսն առաւել լսհրաշ էր երանելիս այս. եւ զինչ պատճառս արդեօք ընդ տիեզերս ամենայն բազումն իմն հռչակի գա 'ի բերանս բոլորից. եւ ընդհէր սա ո՛չ առ մեզ միայն, այլ եւ առ հրէայսն, եւ առ հեղինասիեն առաւել ևս քան զամենեսեան գոյ աքանչելի։ Զերեւս ո՛չ յաղագս զօրուն թղթոցն, որով ո՛չ միայն որոց յայնժամ հաւատացեալքն էին, այլ եւ որք 'ի ժամանակէ անտի մինչեւ ցայսօր էզեն՝ եւ որք գարձեալ հանդերձեալ են լինել մինչեւ 'ի դալուստն քրիստոսի օգուտ գործեաց եւ օգտեսցէ ևս, եւ ո՛չ գադարեսցէ՝ ցորչափ կայ մնայ ազգդ մարդկան։ Վանզի իբրեւ պատուար՝ որ յայտ առնիցէ կառուցեալ իցէ, այնպէս առնէին ուրեք զեկեղեցիս տիեզերաց՝ նորա

պարսպէն մնասեանք ։ Այլ ինքն որպէս առաքինի նա-
հատակ՝ և այժմ ՚ի մէջ անդը արձանացեալ կայ , գե-
րելով զամենայն միտս ՚ի հնազանդութիւնն քրիստ , և քա-
կելով զխորհուրդս՝ և զամենայն բարձրութիւն հպարտա-
յեալ ՚ի վերայ գիտութեն ՚ոյ ։ Այլ զայս ամենայն գոր-
ծել նա ՚ի ձեռն աքանչելի թզթոցն՝ զորս եթող մեզ ,
որ լի են ածային խմաստութեամբն ։

Այլ ո՛չ ՚ի քակտուն միայն անհարազատն վարդապե-
տութենէ , և ՚ի պահպանուի հարազատիցն՝ գիպաւորք
մեզ են նորա գիրք , այլ և ՚ի քաջողջութեի վարուց՝ ո՛չ
փոքր ինչ նպաստատոյցք ։ Վասզի զսոսին դարձեալ
և այժմ առաջնորդք եկեղեցեաց ՚ի գործ արկեալք ,
զՀարան աղջախոհ՝ զոր նա խօսեցաւ քրիստ՝ յօրինեն և
կազմեն , և ՚ի հոգևորն գեղ առեալ ածեն ։ Ոդբք և
զախտս՝ որ ՚ի նորա վերայ հասանեն՝ հալածեալք ՚ի
բաց վանեն , և զառկայացեալ քաջողջութէնն պահպա-
նեն ։ Վեղս ահա այսպիսիս տգէտս այս մեզ եթող ,
որք այնչափ զօրութեի յինքեանս բարձեալ բերեն . նո-
ցուն փորձոյ գեղեցիկս ՚ի վերայ հասանեն , որք միան-
գամ յաձախս վարեն զնոսա ։

ը. Ասկ եթէ նա ջանս բազում ՚ի ներքս եբեր ՚ի
մասինդ յայդմիկ , յայոյանէ քաջայայտ է ։ Ոյր զինչ
և աշակերտին իւրում գրէ ասելով . * Ա՛յնմ գիր ըն-
թերցուածոց , մխիթարութէ , վարդապետութեան ‖ .
ա . տիմ . գ . 13 . ապա և զպատուէն ըստ նմանէ կարգէ՝
ասելով . * Օ՛յդ եթէ առնիցես՝ և զանձն ապրեցուս-
ցես , և զայնոսիկ որ քեզ լսիցեն ‖ . անդ . 16 ։ Այլ զար-
ձեալ . * Ասացի ծառայի տեն ո՛չ է պարտ կռուել , այլ
հեզ լինել առ ամենեսին , ուսուցիչ , անտխակալ ‖ . բ .
տիմ . բ . 24 . և յառաջ ևս անցեալ՝ ասէ . * Ա՛յլ դու
հաստատուն կաց յոր ուսարդ և հաւատարիմ եղեր . գի-
տես ուստի ուսար . զի ՚ի մանկուէ զգիրս սրբս գիտես ,
որ կարօղ են խմաստուն առնել զքեզ ՚ի փրկութիւն ‖ .
գ . 14 ։ Այլ դարձեալ՝ * Ա՛մենայն գիրք ածաշունչք , ա-
սէ , և օգտակարք , ՚ի վարդապետուի են և ՚ի յանդիմա-
նութէի , և յուղղուի և ՚ի խրատ արդարութէի , զի կա-
տարեալ իցէ մնորդն ՚ոյ ‖ . գ . 16 ։ Ոյր զինչ և առ-
տիտոս գրէ խօսելով յաղագս կենաց եպիսկոպոսին .

* Պարտ է ասել՝ եպիսկոպոսին վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութեանն, զի կարօղ իցէ և զհակառակորդսն կշտամբել ‖ ՊԵՏ. Ա. 7. 9։ Յակ զիարդ ասա որ ոգեկան իցէ, որպէս ասեն դոքա, կարօղ իցէ կշտամբել զհակառակորդսն և ափիբերան առնել։ Օ՛ինչ պէտք իցէն այնուհետեւ միտ դնել ընթերցուածոց և գրոց, եթէ պարտ իցէ մեզ զտգիտութիւնդ զայդուիկ գիրկս արկանել։ Պատրուակք են դոքա և պատճառանք, և վատութեանս մերոյ և պղերգութեան բաղբաղայք։

Այլ ասես, եթէ առ եպիսկոպոսունս են պատուէրքդ. քանզի և յաղագս եպիսկոպոսաց է մեզ այժմ բանս։ Յակ եթէ և առ առաջնորդեալսն գլխովին, լուր զինչ դարձեալ և յայլումն թղթի խրատ տայ այլոցն. * Ոչանն քոյ քնահեացէ 'ի ձեզ առաւտապէս ամենայն խմսատութիւ ‖ ԴՂ. Ֆ. 16։ Այս դարձեալ՝ * Ոչանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք նոն իբրև աղիւ համեմեալ լիցի, գիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի ‖ Ք. 6։ Այս որ ասէ՝ եթէ, պատրաստ իցէք 'ի պատասխանիս, առ ամենեսեան ասէ. Ա. ՊԵՏ. Ֆ. 15։ Յակ առ Թեսաղոնիկեցիսն գրելով. * Շ՛ինեցի՛ք ասէ՝ զիրեարս, որպէս և առնէիդ իսկ ‖ Ե. 11։ Յակ յորժամ յաղագս քահանայիցն խօսի. * Որ բարւոք, ասէ, վերակացու լինին երիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ ‖ Ա. ԹԻՄ. Ե. 17։

Ոչանզի այս է առհասարակ ծագ վարդապետութէ, յորժամ արդեամբք և բանիւք առեալ ածցէ զաշակերտեալսն յերանելի կեանսն՝ զոր սահմանեաց քէ։ Ոչանզի գործն չէ բաւական առ վարդապետութէին։ Այ՛ իմ ինչ է բանս, այլ նորուն իսկ վրկչին. քանզի * Որ ա բասցէ, ասէ, և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի ‖ ՄԱՏԹ. Ե. 19։ Այս արդ՝ եթէ առնելն վարդապետութէ էր, աւելորդ ապա զերկրորդն զայն 'ի վերայ եբեր. քանզի շատ իսկ էր ասելն, եթէ որ արասցէ միայն. իսկ այժմ անյրպետ 'ի մէջ երկոցունցն արկեալ՝ յայտ արար, եթէ այլ է հանդէս գործոցն, և այլ բանիցն, և առ կա տարեալ շինուին՝ միմեանց կարօտին երկաքանչիւրքն։ Ա՛երեւս ոչ լուար, զինչ առ երիցունսն ասէ եփեսացւոց

ւոց՝ ընտրուէ անօթն քոյ։ * Կ՚ասէ այսորիկ արքայն կացէք և լիշեցէք՝ զի վերկեամ մի զցայգ և զցերեկ ո՛չ դադարեցայ արտասուօք խրատել զձի մի իբաքանչիւր ‖։ գործ։ է։ 31։ Կ՚անգղ զինչ պէտք էին արտասուաց համ բանից խրատուն՝ յորժամ այնպէս առաքելականն՝ ի նմին փայլատակէին վարք։ Կ՚այլ սակայն առ պատուիրանացն պահպանուն քաղցումն մեզ նպաստաւոր է այս։ քանզի և ո՛չ կարօղ ինչ եմ ասել՝ եթէ այն միայն յայնժամ բաւական էր զամենայնն միանդամայն ուղղել։

ԼԹ։ Կ՚ասէ յորժամ յաղագս վարդապետութեան շարժեսցին մարտք, և առհասարակ ամենեքեան՝ ի քուն՝ ի գրոց անտի առեալք մլեսցեն զպատերազմ իբաքանչիւր, զի՞ զօրուն երբեք աստանօր բաւական իցէ ցուցանել անարատութեն վարուցն։ Օ՚ի՞նչ շահ օգտի իցէ՝ ի քաղցմ քրտանցն, յորժամ յետ այնչափ վաստակոյն՝ ի պատճառս քաղցմ անհմտութենն իւրոյ՝ իցէ ոք որ՝ ի հերձուած անկեալ՝ որոշեսցի՝ ի մերմնոյ եկեղեցւոյն։ զոր ես գիտեմ՝ եթէ քաղցմբ կրեցին՝ ի կրից այսր։ Օ՚ի՞նչ օգուտ նմա՝ ի համբերութենէն։ և ո՛չինչ արդեօք։ որպէս և ո՛չ յողջամիտ հաւատոյն, եթէ կենացն քաղաքավարութեի զերծ իցէ։ Յաղագս այսորիկ պարտ է նմա, զի որ զայլոց վարդապետուէն զանձամբ առեալ իցէ, քաջապէս հմուտ լինի ամենայն մրցանացս այսոցիկ։

Կ՚անգղ թէպէտ և ինքն յանդորրու կայցէ, և ո՛չինչ՝ ի հակառակորդաց անտի վնասեսցի, այլ սակայն քաղմութեի անմեղ մարդկանդ՝ որք ընդ ձեռամբ նորա ի ցեն, այն ինչ յաին արկանիցեն զպարտուէն առաջնորդն իւրեանց, և զի ո՛չինչ ունիցի ընդդէմ բանս տալ հակառակորդացն, այնուհետև կարծիս՝ ի մտի դնիցեն նոքա՝ եթէ ո՛չ թէ տարտամութէ ինչ նորա նկուն եղև, այլ տկարութեի վարդապետութենէն։ Կ՚ո՛չ՝ ի պատճառս անհմտութեան միոյն, քաղցմ ժողովուրդք՝ ի վերջին վտանգն տապալեսցին։ Օ՚ի թէպէտ և կուսակիցք ո՛չ լինիցին հակառակորդացն, սակայն յորս միանգամ ունելին նոքա վստահ լինել՝ հարկաւորեսցին այնուհետև թերկուածանել։ և յորս միանգամ մատուցեալ էին անյողդողդ հաւատովք, ո՛չինչ կարասցեն ապա նուաղին հաս-

տատուիթը յենուլ ՚ի նոսա ։ Ա՛յլ այնչափ իմն մտքիկ մնեալ յուզեսցի ՚ի հոգիս նոցա ՚ի պարտուիթէ անտի վարդապետին իւրեանց , մինչև և ՚ի գժնդակ իմն նաւաբեկուիթի գալ ժամանել նոցա ։ Ասկ եթէ քանի՞ սատակումն , և քանի՞ հուր կուտեսցի ՚ի հիւսայեալ գըլխին նորա առ մէն մի ՚ի կորուսեալոց անտի , ոչինչ պէտք են՝ եթէ լինէին ուսցիս . քանզի ՃՀգրիտ դու լինքնին գիտես զամենայնն ։

Ա՛ւ արդ՝ այդ էցե՞ ամբարտաւանուիթիւն , այդ և մնաց փառուիթիս գլխովին , որ ոչինչ կամիցիմ ես պատճառք լինել այդչափ կորստեանդ , և խնամ անձին պատրաստել տանջանս սաստիկ ևս քան զայն՝ որ արդ անդադար դանձեալ կայ ։ Ա՛ւ ո՞ ոք ապա ասասցէ զայդ երբէք . ո՛չ ոք . բայց թէ ունիք կամք իցեն տարապարտ բամբասել և յաղէտս օտարին խմաստասիրել ։

ա. Այթէ բազմադէմ քրտանց և ջանից պէտք են հրապարակախօս ձեռնհասին։

բ. Եթէ որ միանգամ՝ի սոյն ընծայեցաւ, պարտ է այնպիսւոյն արհամարհել զգովութիւնքն, և հզօր լինել՝ի բանս։

գ. Եւ թէ չունիցի նա զերկուս զայսոսիկ, անպիտան լինիցի ժողովրդեան։

դ. Եւ թէ առաւելապէս պարտ է նմա արհամարհել զնախանձն։

ե. Եւ վի առաւելադոյն ջանից պէտք են քանագիտին, քան եթէ անուսին։

զ. Եւ վի զդատաստանաւոք անուսումն ոմանիկն ոչ գլխովին պարտ է անգոռանել, և ոչ գլխովին փոյթ ինչ առնել։

է. Եւ թէ միայն՝ի հաճոյս ոմ պարտ է ուղղել զբանն։

ը. Եւ վի որ զգովութիւնք ոչ արհամարհիցէ, բազում դժնդակաց՝ի նեղըջոյ գրաւեսցի այնպիսին։

ՅԱՂԱԳԱՒ ՎԱՍՏԱԿԱՍՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈՍԿԵՓԵՐԱՆ։

Այս արդ՝ եթէ քանի՛ հմտութիւնք պէտք էցեն վարդապետին՝ ի մրցմունս ձիմարտութեանց, բաւական կանուխք արդեօք ցուցաւ մեզ։ Այլ մեզ առ այսոսիկ և այլ ինչ առաջի կայ ասել բիւրուց վտանգաց պատճառք, մանաւանդ եթէ ո՛չ զայն ասեմ ես պատճառս, այլ զորս միանգամ ո՛չն գիտիցեն գեղեցկապէս վարիլ նոցաւ. որովհետև բազմապատիկ բարեաց և գլխովին փրկուե առիթ է քանդ այդ, յորժամ սպասաւորս իւր գտցէ յարանց քաջաց և յառաքինեաց։

Ա. Այս զինչ ապա այն էցէ. քերտն բազում ծանր խեալ՝ ի վիճաբանութենէն՝ որ՝ ի հրապարակի լինիցին առ ժողովուրդն։ Վասնզի նախ առաջին բազմադիմքն՝ ի հնաղանդելոց անտի՝ ո՛չինչ կամին իբրև առ վարդապետս ունել զայնոսիկ՝ որք խօսիցինն, այլ՝ ի վեր վազեալք քան զկարգ աշակերտութենն՝ թեկն ածեն յանձինս բերել զայն ինչ, զոր՝ ի թատերս արտաքնոցն գործեն բազմեալքն՝ ի ընկին մրցանացն։ Այս զորօրինակ անդանօր բազմունն հերձի՝ ի մտանունս մտանոնս, կէսք առ մին, և կէսք զարձեալ՝ առ միւս խանարհին ձգին. նոյնպէս և աստանօր պառակտեալք, էն՝ որք սմա, և են՝ որք նմա լինին կուսակիցք, ՝ի չնորհս կամ յատելութե՝ մտատացանելով ունկն խօսելեացն։

Այս ո՛չ այս միայն է ՝ի դժնդակացս, այլև այլ ինչ ո՛չինչ խոնարհագոյն քան զնոյն։ Վասնզի եթէ ումեք ՝ի խօսելեացն դէպ լինի մանն ինչ յայլոցն աշխատասիրութեց առնուլ և խառնել ՝ի քանս իւր, քան զգաղջ ոմանս ընչից՝ առաւել ևս եպերանօք ընդ այնպիսին։ Ապա բազում անգամ և ո՛չինչ ՝ի փոխ առեալ երբեք

յումեքի, այլ միայն կասկածաւոր եղեալ վասն այնոր ըիկ, ընդդէմ կիրս դարձեալ կրեն՝ որք միանգամ՝ ի նոյն ըմբռնեցան։ Եւ զինչ ասեմ զառ՝ ի յայլոցն աշխատասիրութեց, նմա՛ չէ օրէն և զինքնասպանդ դիւտս վարել ստեպ ստեպ. քանզի բաղումք ո՛չ սակս օգտի, այլ՝ ի պատճառս բերկրուեն քնաւորեցան ըսել. Իբրու այն՝ որք ողբերգակացն կամ քնարերգակացն նատցին դատաւորք։ Եւ նոյն ինքն քաջաբանութիւն լեզուին՝ զոր արդ իսկ ընդ վայր հարկանեք, այնպես իմն ցանկալի և աստանօր, որպես և ո՛չ առ սոփեստիս ոմանս խըն-դրեացի՝ յորժամ նոքա այր ընդ ընկերի՝ ի պայքար մտա նիցեն։

Ը։ Եւ արդ՝ արիական հոգւոյ պէտք են և աստանօր, և որ կարի առաւելեալ իցէ քան զմեր փոքրկութիս, որպես զի զանկարգն զայն և զանշահ բերկրուեն ոամկին սանձակոծեսցէ. և յառաւել օգտակարան դարձուսցէ զնոցայն ունկնդրութե՛, մինչ զի ժողովուրդն՝ նորա զՀետ գնասցէ և հպատակ կացցէ, և ո՛չ եթէ՝ ինքն՝ ի նոցուն ցանկութենէն ածեալ ձգեսցի։ Այս բնաւ իսկ և առնելին չէ՛ք հնար հաստանել այսմ, եթէ երկուք այսոքիկ մերձ ո՛չ իցեն, արհամարհութե՛ գովութեց և քաջութե՛ ի բանս։ Օ՛ի եթէ մին՝ ի սոցանէ՝ ի բացեայ իցէ, միւսն բաժանեալ յընկերէն՝ անպիտան եղիցի։

Վասզի եթէ արհամարհելով զգովութե՛ն՝ ո՛չ յառաջ բերցէ զվարդապետութե՛ն ընդարձակ և աղիւ համեմեալ, խոտան լինի առ բազումս, և շահ և ո՛չ ի՛նչ կթեսցէ՝ ի մեծանձնութէ անտի. ապա եթէ՝ ի մասինս յայսմիկ գեղեցիկս իմն յարդարեալ զանձն՝ նկուն եղիցի՝ ի փառաց անտի ունկնդրացն, դարձեալ՝ ի շնաս շրջեսցի այն անձին իւրում և ժողովրդեան. Իբրև զի և՝ ի ընդհս ունկնդրացն առաւել՝ քան եթէ յօգուտ ինչ նոցա թեւակոխ նա այնուհետև՝ ի պատճառս ցանկութե՛ գովուեցն։ Եւ զորօրինակ որ ո՛չ՝ ի գովութե՛ց ինչ կրից ըմբռնեալ իցէ, և ո՛չ քաջաբան ինչ լինել բաւական իցէ, ո՛չինչ կարօղ է այնպիսին կամ բերկրութե՛ ածել ոամկին, և կամ արժանի ինչ շահ ընծայել նոցա յաղագս անբան լեզուին. այսպէս և որ՝ ի սիրոյ

անտի գովուԹեցն ձգեալ բերիցի , միանգամ զառամած ածեալ զյաջողուԹիւն զոյն ՚ի լաւագոյնս փոխելոյ զժողովուրդն , նա փոխանակ ընդ այնորիկ առաւել բանս իմն բերկրեցուցիչս նոցա ՚ի ներքս արկանէ , իբրև զի բազում ամբոխս շահեալ կուտէ զիւրև ՚ի ծափահարուԹիւնս անդ ։

Ը. Ա՛րդ՝ յերկաքանչիւրումն եւս պարտ է զօրաւոր լինել առաքինի առաջնորդին , զի մի արդեօք միւն ՚ի միւսմէն հիմն ՚ի վեր կործանեսցի ։ Վասնզի եԹէ երբեք կանգնեալ յատենի՝ խօսեսցի ինչ յայդպիսեաց անտի , որ տագնապ ՚ի վերայ հասուսցէն վատացելոցն անձանց . իսկ ապա գԹեսցէ և կարձեսցէ զբանն , և սակս աղքատուԹեանն բանիցն բռնադատեսցի զամԹի հարկանիլ , անդէն վաղվաղակի ՚ի չիք լուծանի շահ օգտին՝ որ ՚ի բանիս անտի ։ Վասնզի որք միանգամ կշտամբեցանն , քանզի սրանեցան ընդ ասացեալսն , և զի չունին նոքա այլազգ ինչ վրէժս պահանջել ՚ի նմանեն , յաւերեալս անուսումնուԹենն հարկանեն զնա՝ կարծելով պատրուակել նովաւ զնախատինս իւրեանց ։ Այլազգս որոյ պարտ է նմին իբրև կառավար առաքինի՝ անսայԹաք գնալ ընդ մէջ կրկնակի գեղեցիկ հանգիսիցս այսոցիկ , որպէս զի և զերկաքանչիւրն գլխովին բաւական իցէ քաջագիտուԹիւնք ՚ի գործ արկանել ։

Վասնզի եԹէ նա անստգիտութ ընծայեցուսցէ զանձն առ առհասարակ , կարօղ իցէ այնուհետեւ՝ սրչափ և կամք իցեն նմա՝ իշխանուԹիւնն պատուհասել և կամ հեզուԹիւնք գնալ առ առնոյն հնազանդեալս իւր . իսկ մինչ այս մերձ ոչ իցէ , ոչինչ հեշտին իցէ արդեօք գործել զայդ ։ Այլ զՄեծանձնուն հոգւոյն ոչ միայն մինչև յարհամարհուԹի անդր գովուԹեցն պարտ է ՚ի դէմն բերել , այլ և ես յառաջագոյն գնալ , զի մի Թերևս դարձեալ անկատար մնասցէ շահն ։

Թ. Ո՞րչափ ապա՝ զայլ ինչ եւս արհամարհել պարտ իցէ ։ Ո՞մխանան և զնախանձն ։ Իսկ ՚ի դժպատեհ ամբաստանուԹեն՝ (քանզի հարկ է առաքնորդին կրել և բամբասանս անտեղիս ,) արժան է նմին ոչ անչափուԹիւն ինն զանոյ խոել և դողալ , և ոչ դարձեալ չլսովին

անփոյթ լինել զնոցանէ ։ Ա՛յլ Թէպէտ և ստայօղք ի-
ցեն , Թէպէտ և ՚ի սինկիքորայ անտի ՚ի վերայ հաս-
ցեն մեզ , արժան է գուն գործել վաղվաղակի շէջուցա-
նել զնոսա ։ Վա՛նզի ո՛չինչ այնպէս գիտէ տարածել
համաւաչ չար և կամ բարի , իբրու զանկարգ խաժա-
մուժդ . քանզի միանգամայն անքննաբար լսել և շա-
ղակրատել բնաւորեցաւ ազգդ այդ . վայրապար՝ որ
ղինչ և միանգամ ընդ առաջ լինի՝ զամենայնն բարբա-
ռի , ո՛չինչ ամենևին ակն ածելով ՀՀմարտութենն ։ Ա՛յդ-
ըհն աղագաւ չէ պարտ արհամարհել զամիկդ , այլ
վաղվաղակի անգէն ՚ի սկզբանն հնարել կարճել զկաս-
կածս չարութե՛ , խելամեծեցուցանել զամբաստանն ,
Թէպէտ և գլխովին անբանագոյնք ոմանք իցեն . և ո՛չ-
ինչ երբեք Թողուլ ՚ի բաց՝ որ բաւական իցէ քերել
յանձնէն զանբարի կարծիսն ։

Ա՛պա եԹէ մեր զամենայնն գործեալ , ո՛չինչ կամաս-
յին բամբասողքն ունկնդիր լինել , յայնժամ արհա-
մարհուե՛ մեզ պէտք են ։ Վա՛նզի եԹէ ոք ՚ի դիպուա-
ծոց աստի անկեալ լբանիցի յանձն իւր , այնպիսին ո՛չ
ինչ կարօղ իցէ այնուհետեւ յարիական ինչ գործոց՝ և
՚ի հրաշալեացն ՚ի մէջ ընծայել ։ Վա՛նզի ախտութիւն
անձին և անգաւար հոգւոյն հարեալ ընդոստնէն զզօրու-
Թի՛ հոգւոյն , և ՚ի վերջին տկարուի առեալ ձգէն զնա ։
Ա՛պա զնոյն օրինակ պարտ է երիցուն ունել զանձն առ
հնազանդեալսն , որպէս հայրն առ կարի մատաղատունկ
մանկունսն . և զորօրինակ ո՛չ ՚ի Թշնամանս նոցա , և
ո՛չ ՚ի հարուածսն , և ո՛չ դարձեալ յարտաւոնս զկծիմբ
ինչ , այլ և ո՛չ եԹէ ծիծաղեսցին և ուժգինս ծաղր ա-
րասցեն զմեզ , այնչափ ինչ փոյԹ տանիմք վասն այդո-
րիկ , սակս և ՚ի սոցա ո՛չ ՚ի գովուԹիւն երբեք փքա-
նալ արժան է , և ո՛չ դարձեալ ՚ի նախատինսն՝ լբանիլ .
քանզի տարադէպ խորհրդով գործեն գոքա զայդոսիկ ։

Վակայն դժնդակ է ո՛վ երանելի , Թէրևս որպէս
կարծեմն՝ եԹէ և անկարելի ։ Վա՛նզի ո՛չինչ խնդալ
՚ի գովուԹիս , ո՛չ գիտեմ՝ եԹէ արդեօք ուրեք երբեք
յաջողեցա՞ւ ումեք ՚ի մարդկանէ ։ Լսէ որ խնդային՝
պէտք են նմա և ցանկալ , և վայելել առ ՚ի նոյն . իսկ
որ ցանկայ վայելել , հարկ է ամենևին և ՚ի վերսկիզն
՚ի նոցանէ տիրել և վշտանալ և չարչարիլ և ցաւիլ ։

Վանգի զորօրինակ որ ի մեծութենս զուարճասցեալք լ-
ցեն, յորժամ յաղքատութենէ անկանին՝ զժկամակութիւն
բերեն. և որք ի գրգռանս փափկութենէ սովորեալք լ-
ցեն, երբեք ոչ հանդարտեն կեանս իմն վարել անա-
ւագս, այսպէս և որ սիրողքն են գովութեանց՝ ոչ միայն
յորժամ տարապարտուց նախատին, այլ և յորժամ ոչ
ընդունին յաձախ գովութիւնս, իբրու սովոյ մնչեն զհո-
գիս իւրեանց. և առաւել ևս՝ եթէ ի նոսին անեալք
իցեն, կամ եթէ ուրեք զպլտցին լսիցեն գովութիւնս:
Նակ որ միանգամ հանդերձ ցանկութեամբ այսուիկ իջցէ
յասպարէզ անդր վարդապետութեն, զինչ կարծես՝
քանի իցեն նորա տաղտապանք և քանիօն ցաւք: Ոչ
ծուլ կարէ անբաժ երբեք լինել յիւրոցն ալեաց, և ոչ
անձն նորա ի հոգոց և ի տրտմութեանց:

Ե. Վանգի թէպէտ և նա կարի առաւելեալ էր
ի քաջաբանութեան իւրում, իսկ զայդ ի նուաղունս
ոմանս թերևս գտցէ ոք, սակայն և ոչ այնպէս զերծ
լիցի նա յանդադար ջանից: Վանգի որովհետև ոչ բը-
նութեամբ, այլ կրթութեամբ է ճարտարաբանութեամբ. թէ-
պէտ և ոք ի ծայրն նորա հասեալ լիցէ, մերկ կողո-
պուտ եղիցի առ ի նմանէն, եթէ ոչ ի ջանս հանա-
պազօրեայս և ի հրահանգս պաշտեսցէ զքաջութիւնդ
զայդ. իբրև զի առաւել ևս է աշխատութեամբ իմաստնա-
գունիցն, քան եթէ անուսիցն: Վանգի և ոչ զուգա-
հաւասար են տուգանք նոցա, յորժամ երկոքին միան-
գամայն անփոյթք եղիցին. այլ ըստ չափու անջրպե-
տութեամբ գիտութենէն և տգիտութեամբ, այնչափ է և առա-
ւելութիւն միոյն:

Այս արդեօք նոցա ոչ ոք իցէ մեղադիր՝ եթէ ոչինչ
յարժանահաս բանից ի ներքս ընծայեցուսցին. իսկ
սոքա եթէ ոչ հրաշափառագոյն ևս քան զկարծիսն՝ զոր
ամենեքին ունին զնոցանէ, միշտ յառաջ բերցին բանս,
ստգիւտ բազում յամենեցունց առհասարակ ձգեսցին
յանձինս: Այդ այս գարձեալ՝ նոքա և ի պատճառս
դուշնաքեայ ձառից իւրեանց՝ մեծաց հանդիսին ներ-
քոյից. իսկ սոցայս եթէ երբեք չիցեն ի զարմանալեաց
ոմանց՝ և յառաւելահրաշիցն, ոչ միայն ի գովութենէն
վրէպ գտանին, այլ և բազում գտանեն բամբասողս:

Վանգի ունկնդիրք ի՛ւ այնչափ քանիցն ասացելոց , որ պէս համբաւոյ խօսեւեացն նստին դատաւորք : Ուստի և որ միանգամ քաջաբանութե՛ վհատոյն իցէ քնաւից , նման քան զամենեսեան առաւել և քանից վաստակոց պիտոյ են : Վանգի և ի՛ւ զայն ինչ՝ որ հասարակաց է մարդկային բնութ՛ս , ի՛ւ յաջողել յամենայնի , արժան ինչ է կրել նմա . այլ եթէ գլխովին ամենայն ձառքն մեծութե՛ համբաւոյ նորա ձայնակից ի՛ւ իցեն , այսպիսս բիւրս և բամբասանս կրեսցէ ՚ի բազմից անտի :

Այլ չի՛ք ոք՝ որ զայն ինչ երբէք խորհեսցի ՚ի սրտի , եթէ թերևս տխրութե՛ ինչ՝ նորա ՚ի վերայ հասեալ , կամ անձկութե՛ հոգւոյ , կամ վարանք հոգւոց , կամ բազում անգամ և բարկութե՛՝ խաւարեցուցց զաստակութե՛ մտաց նորա , և ի՛նչ թոյլ տայ պարզութե՛ յառաջ բերել զխմաստս նորա . և զի մարդ է գլխովին , անհնար է նմա յամենայն ժամ նոյնաբար լինել և յամենայնի յաջողակս ընթանալ . այլ դեպ լինի և ուրեք երբէք գըթել , և խոնարհագոյնս ինն քան զտնկակից զօրութե՛ իւր ՚ի դէմս բերել : Ինչ յայսպիսեացս ասի՝ որպէս ասացիս , նոքա ի՛ւ կամին զմտաւ ածել . այլ որպէս եթէ յաղագս միոյ ՚ի հրեշտակաց արասցէն դատ , այնպէս զամբաստանութե՛ն ՚ի վերայ կուտեն նորա :

Ուր այս և քնաւորեալ է մարդ՝ զուղղել վաստակս ընկերին՝ թէպէտ և բազումք իցեն , թէպէտ և մեծամեծք , անտես առնել . իսկ եթէ թերութե՛ ինչ ուրեք յանն արկանիցէ , թէպէտ և դուշնաքեայ իցէ , թէպէտ և վաղ ուրեմն պատահեալ , վաղվաղակի զգայ , անդէն ունի ըմբռնել , և հանապազ յիշատակէ . և այն փոքրն և դուշնաքեայն՝ է բազում անգամ զի զբազմաց արանց և զմեծամեծացն նուաղեցուցց զհամբաւն :

Զ. Տեսանե՞ս ի՛ւ քաջդ , եթէ որ քաջաբանութե՛ն հարստացեալն է , նման առաւելագոյն և քանից պէտք են , և ՚ի վերայ քանիցն գործեալ և համբերութե՛ան այնչափ՝ որչափ և ի՛ւ առնեցուն նոցա զորս միանգամ մնայն յառաջադոյն նշանակեցի քեզ՝ պէտք ինչ իցեն : Վանգի բազումք են՝ որ ստէպ ստէպ զուր տարապարտ ՚ի վերայ յարձակին նորա . և իբրև ամբաստանութե՛ տեղի ինչ ի՛ւ գտանեն , այլ զի բարեհամբաւ է առ ա

մինեսեան, և նորին աղագաւ առեան։ Այլ պարտ է քաջաբար բերել զնախանձ սոցա զգառնն. քանզի զա տելոմիդ զայդ նզովեալ՝ զոր տարապարտուց յղայան, ոչինչ հանդարտելով ծածկել նոցա, նախատեն և բամ բասեն և զրպարտեն ՚ի ծածուկ, և յայտնի չարանան։ Լսակ եթէ հոգին առ մեն մի ՚ի սոցանէն սկսանիցի ցա ւել և գրգռիլ, ոչինչ այնուհետև բաւական իցէ յառա ջադէմ գնալ, այլ հաշեցցի ՚ի արտմութենէն։

Վանզի և ոչ անձամբ անձին միայն վրէժս պահանջեն նոքա ՚ի նմանէ, այլ և յայլոց ձեռս զնոյն ջանահնար լինին գործել, և բազում անգամ զմի ոք յանբան մեղ կանէ անտի յառաջ կոչեալք՝ ՚ի գովուի առեալ բարձ բացուցանեն զնա, և սքանչանան ընդ նա արտաքոյ ար ժանեաց նորա. կէսք առ մոլեգնուբեն միայն, և կէսք գարձեալ առ անուսումնութենէն և առ մխանայն բե րելք ՚ի սոյն, ոչ զի զնա սքանչելի ինն ընծայեցուս ցեն՝ որ չէ այնպիսի, այլ զի զփառս սորա հարեալ ընդոստնեացեն։

Այս ոչ ընդդէմ սոցա միայն են մրցանք նահատակին այնորիկ, այլ և բազում անգամ ընդդէմ տգիտութե քողը ամբոխին։ Վանզի որովհետև անհնար է, եթէ ողջոյն Ժողովդ ՚ի բանապէտ արանց խմբեալ իցէ, այլ եկեղեցիք առաւելապէս մասամբ ՚ի տգիտաց անտի Ժողովեալ է. իսկ մնացեալքդ ՚ի նոցանէ՝ խորագիտա գոյնք են քան զնոսա. իսկ որք միանգամ բաւական լ ցեն գատաստան առնել զանիրցն ասացելոց, այնչափ նուազունք են քան զսոսա, որչափ սոքա քան զայլսն ա մենեսեան. ուստի և մի ոք միայն, և կամ երկուք ո մանք նատին անդանօր՝ որ զզօրութիդ զայդ (*) յանձինս իւրեանց բարձեալ բերիցեն։ Այս ապա հարկ է այնու հետև՝ զի որ հրաշափառագոյնս ինն Հատարաբանեա գյէ, ծափահարս նուազունս գացէ անձին իւրում. է երբեմն՝ զի և առանց ինչ գովութեանց՝ այնպէս տեղի տացէ ՚ի վայրացն։

Յաղագս որոյ պարտ է արիաբար հանդերձել կազ մել զանձն ընդդէմ անհարթութեանս այսորիկ. և որք միանգամ առ տգիտութենէ գործեն զայդ՝ խնայել ՚ի նո

(*) Ասյս է՝ զզօրութենէ գատաստան առնելոյ զբանիցն ասացելոց։

սա. իսկ որ՝ի նախանձուէն շարժին յայդոսիկ՝ արտասուել զնոսա իբրև զհեգս ոմանս և Թշուառականս. և ո՛չ՝ի պատճառս կրկին դասուցդ այդոցիկ համարել՝ եթէ նուաղեցաւ ինչ զօրութիւն բանիցն։ Վասնզի և ո՛չ ոք արդեօք՝ի ձարտար նկարչաց անտի՝ որ յարուեստիդ յայդմիկ քան զնաւս գերազանցեալ իցէ, եթէ երբէք յանհմտաց արուեստին տեսցէ այսպանեալ զպատկերն՝ զոր նա բազմահնար ձգտուքբ նկարագրեալ իցէ, պարտ ինչ իցէ նմա յաղագս այնորիկ վհատիլ յանձն իւր, և կամ երբէք առ՝ի տգիտացն դատաստանէ յանարգս դրել զնկարն. որպէս և ո՛չ՝ի պատճառս զարմանաց անարուեստ մարդկանն՝ յաքանչելեացդ ինն և՝ի վերագոյն նիւթս կարգի դնել զանարգն։ Վասնզի առաքինի արուեստագէտ՝ ինքն է և իւրոյն դատաւոր ձեռակերտաց, և զգեղեցիկսն և զխոչորսն ինքն ընտրէ, յորժամ միտք նորա՝ որ զնոսին ձարտարագործեաց՝ դատաստանս իւրն այնպիսիս՝ի ներքս բերէ. իսկ զարտաքնոցն կարծիս զվրիպակն և զանարուեստն՝ և ո՛չ ընդ միտս իւր երբէք արկանէ։

Է. Ապա ուրեմն՝ մի՛ և որ միանգամ զմիջանին վարդապետութիւնէ զանձամբ առեալ իցէ՝ երբէք միտ դիցէ արտաքնոցն բարեբանութեց, և կամ՝ի պակասել նոցա՝ վհատեսցի յանձն իւր։ Այլ զբան իւր յարդարեալ՝ի հաճոյս ոյ, քանզի այս միայն եղիցի նմա կանոն և սահման քաջարուեստ հրապարակախօսութիւնէ նորա, և մի՛ ծափահարիք և կամ բարեբանութիւնէք, եթէ երբէք և՝ի մարդկանէ գովեսցի, մի՛ ի բաց մերժեսցէ զգովուինն. ապա եթէ ո՛չինչ այսպիսի ընծայեսցեն նմա ունկնդիրքն, մի՛ երբէք խնդրեսցէ, և մի՛ յաղագս այնորիկ ցաւեսցի ինչ նմա։ Վասնզի միխթարութիւն բաւական իւրոցն քրտանց և քան զնաւան վերագոյն այն եղիցի նմա, յորժամ ինքնին բաւական իցէ վկայել անձին իւրում՝ եթէ՝ի հաճոյս ոյ յարդարեաց և ուղղեաց զվարդապետութիւնն։

Ը. Վասնզի եթէ երբէք դէպ լիցի նմա ըմբռնիլ՝ի ցանկութէ տարագէպ գովութեցդ, այնուհետեւ ո՛չինչ օգնեսցեն նմա ո՛չ բազմաքիրտն վաստակք նորա, և ո՛չ

գարձեալ Ճարտարախօսութեի լեզուի նորա։ Վասնզի հոգի՝ որ չկարէ հանդարտել անխորհուրդ բամբասա նաց բազմութեն, անդէն լքանի, և զքանս Ճարտարա բանուէն ի բաց թողու։ Յաղագս որոյ պարտ է քան յամենայն ինչ առաւել յարհամարհութի գովութեց հրահանգել զանձն։ Վասնզի չէ բաւական Ճարտարա խօսութի լեզուին ի պահպանուի մակացութեդ այդո րիկ, եթէ և այս մերձ ոչ իցէ։ Իսկ եթէ ոք Ճշգրիտ քննել կամեսցի և զայն ոք՝ որ ի զօրուէ անտի նուա զեալ իցէ, ոչինչ ընդհատ ի Ճարտարախօսէն և զա գացէ կարօտեալ արհամարհութե գովութեդ. քանզի եթէ երբէք և սա գերի եղիցի համբաւոյ ժողովրդ դեանն՝ հարկ իցէ նմա այնուհետև և բազում ինչ յան ցանել։

Վասնզի իբրև ոչինչ է բաւական հաւասարել նոցա՝ որ ի Ճարտարաբանութե մնասինդ գերահամբաւեալք իցեն, այնուհետև ոչինչ դադարէ նա զարանակալ լինել նոցա, և խանդալ ընդ նոսա, և բամբասել տարա պարտուց, և ի բազում և յայսպիսիս անկղնտանալ. այլ և գլխովին յամենայն յանգգնի, թէպէտ և գնդ գին կորուսանել պարտ իցէ, որպէս զի ի խոնարհուի իւրումն նուաստութե հնարեսցի առնուլ ինքեանէ զփառս նոցա։ Զոր այս և ի քրտանց իւրոց վաստակոց հրաժարեալ տեղի տայ, իբրու այն թէ թմբրութիւն իմն անկեալ պատեալ իցէ զհոգւով նորա։ Վասնզի բա զում վաստակել և սակաւս կթել գովուէս՝ այս բա ւական է ի լքուցանել, և ի քուն խոր ընկղմել զնա՝ որ չիցէն կարող արհամարհել զգովութեդքն։

Վասնզի և երկրագործ՝ որ յանարդասաւոր անդա վաստակեսցի, և զապառաժուտս բռնադատեսցի մշա կել, վաղվաղակի տեղի տայ յաշխատուէն, եթէ միթէ թարութեի բազում չառնուցու ի գործոց անտի, կամ եթէ ահ սոսկն ոչ տագնապեսցէ զնա։ Օ՛ի եթէ որք միանգամ մեծասիս զօրութե հարուստք են ի բանս, այնչափ ինն հրահանգաց պէտք են նոցա ի պահպանու թե գոյիցն. ապա որ ոչինչ ամենևին ժողովեալ իցէ, այլ ի ժամանակի անդ իբրում անձկութեն ստիպեսցի պէտ անձին ունել, քանիծն արդեօք կրեսցէ այնպիսին դժուարութիս, քանի՛ աղմուկ, քանի՛ խռովութե, որ

պէս զի ՚ի բազմադէմ քրտանցն խուն ինչ ժողովել բաւական իցէ ։

Իսկ եթէ յանկարծ ոք քան զնա խնամարհագոյն առ տիճանաւ և կարգաւ՝ առաւել քան զնա փայլեսցէ ՚ի մասինս յայսմիկ , աստանօր ասպա ՅԾային ինն հոգւոյ պէտք են , որպէս զի մի ըմբռնեալ գերեսցի ՚ի նախանձուէն , և մի ընդ կրիւք գրաւեսցի տրտմութեանն ։ Վասնզի բարձրագունին պատուով նկուն լինել ՚ի խոնարհագունիցն և քաջութիւք հաւքերել այսմ , այս ոչ դուշնաքէից ոմանց հանդէս , և ոչ դարձեալ մերում , այլ ագամանդեայ ինն հոգւոյ ։ Իսկ եթէ որ գերահամ բաւն եղև՝ յառաքինեաց ոք իցէ , և ՚ի կարի պարկեշտիցն , բաւական է նա տանել ամենայն կրիցն . ապա եթէ խրոխտ հանդիպեսցի և գոռոզ և փառասէր , ցանկալի է նմա մնալ զօր ամենայն . այնպէս ինն դառն յարդարէ նմա զկեանսն . լու ՚ի լոյ բարձրացուցանէ զնա , և թագնաբար ծիծաղի . բազում ինչ կարձէ յիշխանութէ անտի նորա , և զամենայնն գլխովին յինքն խնդրէ յանկուցանել ։

Իսկ այս ամենայն ունի նա և մեծապէս զօրավիգն զհամարձակութէին իւր ՚ի բանս , և զառ ինքն զջանս ժողովրդեանն , և զսէրն առհասարակ յամենայն առաջնորդելոցն ։ Վերևս ոչ գիտես դու , քանիցն իցէ այժմ իդձ ձարտարաբանութէ վաեաւել ՚ի հոգիս քրիստոնէից . և թէ՝ որք միանգամ առաւել քան զամենեսեան պաշտեն զնոյն , ՚ի պատուի են ոչ միայն առ արտաքինսն , այլ և առ ընտանիսն հաւասոյ ։ Իսկ արդ՝ զիարդ ոք բերցէ զայնչափ նշաւակութէին , զի յորժամ նա խօսեցի՝ ամենեքեան առհասարակ ՚ի լռութէ կացցեն , և կիրս ինն դժոխրմբերս զնոյն համարեսցին , և կատարածի ձառին՝ իբրու այն թէ հանգստեան ինն յաշխատութէնց իւրեանց՝ այնպէս դէտակն կալեալ ապաստեցեն . իսկ յորժամ միւսն այն թէպէտ և երկայնագոյնս ձառեսցէ՝ նմա մտադիւրութէք մատուսցեն ունկն . և իբրև հանդերձեալ իցէ դադարել ՚ի բանիցն՝ դժկամակ լինիցին , և ՚ի կամէն լռել ՚ի ցաւումն բրդեսցին ։

Վասնզի այսոքիկ թէպէտ և դուշնաքեայք կարծեցին քեզ այժմ և խոտելիք ոմանք՝ յապագս անփորձութէն , այլ կարօղ են սոքա շինուցանել զջանս յօժարու-

թէն, և զկորովուրթի հոգւոյն խորտակել. բայց եթէ ոք ՚ի քաց Ձողոպրեալ զանձն յամենայն մարդկայնոյս կրից, գուն գործեսցէ զուգահաւասար անմարմնոցն ընծայել զօրութեց, որ ո՛չ ՚ի նախանձուէ ինչ երբէք ըմբռնին նոքա, և ո՛չ ՚ի սիրոյ փառաց, և ո՛չ դարձեալ յայլ ինչ ՚ի նմանօրինակ ախտիցդ։

Ա՛րդ՝ եթէ իցէ ոք ՚ի մարդկանէ այնպիսի, որ բաւական իցէ զգաւազնս զայս տապաստ արկանել զգիւարըմբռնելի և զանվանելի և զամենի՝ զհամբաւն ասեմ զիողովրդեան, և զգլուխս նորա զբազմապատիկս հատանել կտրել, մանաւանդ եթէ և զառաջինն անդ ո՛չ թոյլ տալ ՚ի վեր երևել, կարօղ իցէ նա այնուհետև հեշտեաւ և զբազմադէմ հրոսակս զայսոսիկ ՚ի քաց վանել, և ՚ի նաւահանգստի ինն յանդորրու վայելել։ Ա՛սպա եթէ ՚ի սմանէն ազատ ո՛չ իցէ, մարտ ինն բազմաբրնակ, և խռովուրթի անդուլ և տխրուրթի հոգւոյ, և զխուժան այլոցն կրից պատրաստեսցէ անձին իւրում։ Ո՛րչափ պարտ իցէ և զայլոցն դժուարուրեց ՚ի համար բերել զկիրս, զորս ո՛չ ասել ոք բաւական է արդեօք և ո՛չ ուսանել, եթէ ո՛չ զնովին գործովքն եկեալ իցէ։

ԳԼՈՒԽ Զ. ԳՐՈՑՄ.

ա. Եթէ և յայտպա օտարին յանցանաց հատուցա ուննին տալ երե-
ցունք :

բ. Եթէ քան զվիանձանցն առաւել ևս ձչդուԹեան կրօնից պէտք էին
նոցա :

գ. Եւ Թէ առաւել հեշտին կենօք վայելէ վիանձն՝ քան զառաջնորդն
եկեղեցեաց :

դ. Եւ Թէ առաջնորդուԹիւն տիեզերաց հաւատացաւ քահանային, և
այլ ինչ սարսափելի գործք :

ե. Եւ զի պարտ է երիցու առ ամենայն ինչ քաջայարմար լինել :

զ. Եւ զի ոչ այնչափ վիանձնուԹիւն է նշանակ համբերուԹե, որչափ
գերեցիկ առաջնորդուԹիւն ժողովրդեանն :

է. Եթէ ոչ վիօրինակ են հրահանգք, որ ներանձնաւորն է, և որ ընդ
բազումս ԹարԹափեալ :

ը. Եւ Թէ որ ներանձնացեալքն են՝ առաւել հեշտեալ ուղղեն զառա-
քինուԹիւն, քան որ զբազմացն հոգան :

Թ. Եւ Թէ չէ պարտ արհամարհել զկարծիս ռամկին՝ Թէպէտ և առա-
կեան :

ժ. Եւ զի ոչ մեծ ինչ է փրկել զանձն իւր :

ժա. Եւ զի սահմանք և դիւանդակ պատուհասին ազատեալ ինան ձեռք
քահանայիցն՝ քան զառաքելականաց :

ժբ. Յօրինակաց յայտնի դիմանուԹեն ցաւոց, վիանդամանին և երկիւղ
լի՝ որ լինին ՚ի պատճառս սկնկռտուԹե քահանայուԹենն :

ժգ. Եւ զի քան զամենայն մեծ պարտ դիւանդակ ևս է փորձուԹիւն սահման
նայել :

ՅԱՂԱԳԱՍ ՎԱՀԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՍԿԵՐԻՐԱՆ.

ՆԱ. Ա՛յսպիսի ինչ են՝ որ աստանօր կիրք, որպէս և լուսար դու. իսկ որ ինչ անդանօր են՝ զիարդ արդեօք բերցուք մեք, յորժամ առ իւրսքանչիւր՝ ի նոցանէն՝ որ մեզն. հաւատացան՝ բռնադատիցիմք համարս տալ. Վանզի ո՛չ ամենայն ջափ միայն են տուգանքն, այլ և ակնկալութի՛ն է յաւիտենից տանջանաց. Վանզի ըստ՝ եթէ * Անկնդիր լերուք առաջնորդացն ձերոց, և հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր ‖ . ԵԲ . ԺԳ . 17 . Թէպէտ և յառաջագոյն և աս ասացի, այլ և ո՛չ այժմիկ լուեցից երբեք. Վանզի ահ սպառնալեացդ այդոցիկ հանապազ հարկանէ զհոգի իմ. զի եթէ որ զմի ոք միայն ի փոքրկանց անտի գայթակղեցուցանէ, լաւ է նմա՝ եթէ երկան իչցի կախեցի ընդ պարանոց նորա, և ընկղմեսցի ի ծով. և ամենեքեան՝ որ զնիզակ մնաց եղբարցն զայրացուցանեն՝ ի նոյն ինքն ի քո մեղանչեն. ապա որք ո՛չ զմի ոք միայն, կամ զերկուս կամ զերիս, այլ զայդչափ բազմութիւնդ ի կորուստ մատնիցեն, զի՞նչ արդեօք կրեսցեն, և քանիօ՞ն տացեն վրէժս.

Վանզի և չիք հնար զանփորձութիւնն պատճառել, և ո՛չ յանդիմանութիւնն ապաստան լինել, և ո՛չ դարձեալ պատրուակ առնուլ անձանց զհարկն կամ զընդունութիւնն, այլ մանաւանդ յառաջնորդելոց անտի ոք, եթէ արժան ինչ իցէ, կարօղ իցէ ի մեղս անձին իւրոյ վարել զապաստանարանդ զայդ, քան եթէ ինքնին առաջնորդք ի մեղս այլոց. Իսկ ընդհ՚ր արդեօք. Վանզի որ զայլոյն ուղղել զանգիտութի՛ն կարգեալ է, և զմնծատլուտ գաւառանայական զմարտն ազդ առնել, ո՛չինչ է կարօղ

զանգիտութիւնն առնուլ անձին պատրուակ, և կամ երբ քէք ասել, եթէ ո՛չ զնայն լուայ զիողոյն, ո՛չ յառաջա գոյն տեսի զպատերազմն։ Վասնզի դորին աղագաւ նստէր, ըստ որում ասաց եղեկիէլ՝ զի և այլոցն հարցէ փող, և զդալոց աղէտսն գուժ եսցէ. և յաղագս այնո րիկ անխուսափելի էն տանջանքն, թէպէտ և մի ոք միայն իցէ կորուսեալն։ Վասնզի եթէ՝ի գալ սրոյն ո՛չ հարցէ փող ժողովրդեանն, ասէ, և ո՛չ ազդ արասցէ դէտն, և եկեալ սրոյն ըմբռնեսցէ զանձն նորա, նա վասն անօրինութեանէ իւրում ըմբռնեցաւ, և զարիւն նո րա՝ի ձեռաց դիտին խնդրեցից. եզեկ. լգ. 3։

Նմանպ դու դադարեա՛ց քարշել զմեզ յայդչափ յան հրաժեշտ դատաստանդ, քանզի ո՛չ յաղագս զօրավա րութեանէ ինչ, և ո՛չ յաղագս թագաւորութեան են մեզ քանքս, այլ յաղագս գործոյ՝ որում հրեշտակային ա ռաքինութեանէ պիտոք են։ Վասնզի քան զարեգակնային Ճառագայթս առաւել մաքրագոյն պարտ է լինել հոգ ւոյ քահանային, զի մի ուրեք երբէք ամպի լքոյ զնա հոգին՝ որ. որպէս զի կարօղ իցի՛ ասել. * Կենդանի եմ այսուհետև, ո՛չ ես, այլ կենդանի է յիս քո՝։ գաղ. բ. 20։

ք. Ո՛վ թէ նոքա որք միանգամ յանապատս քնա կեն, և՛ի բացեայ են՝ի քաղաքէ և՛ի հրապարակէ, և յորոց անդ՝ի խռովութեցյն, և հանապազ՝ի ճաւա հանգստի վայելեն և յանդորրու, ՚ի վերայ այսր և ո՛չ ինչ կային վստահ լինել յայդ ապաւէն քաղաքավարու թէ կենցաց, այլ և քիւր այլ պահպանութիւս՝ի վերայ կարգեն, առնային ուստեք շուրջանակի ամրապահեստ առնելով զանձինս. և գուն գործեն մեծապէս Ճգնու թէ ասել և առնել զամենայնն. որպէս զի պարզերես հաւատաւակութէ և անաղտ մաքրութէ ըստ մարդկան կարի՝ բաւական իցեն մերձենալ առ Ա՛ած. զի՞նչ կար ծես՝ քանի՞ զօրութէ և քնութէ պէտք իցեն քահա նայացելոյ անձինն, որպէս զի յամենայն պղծութենէ բաւեսցէ յափշտակել զանձն իւր, և զնմանալի զգեղն անդրժելի պահել։

Վասնզի և առաւելագունի մաքրութեա՛ն պէտք են սմա, քան եթէ նոցա. և որ առաւելագունիս այսմիկ

կարօտն է, նաև բազմագոյն ևս կարեաց ի ներքոյ գրաւեալ է քան զնոսա, որ բաւական էն ի շաղախել զնա՝ եթէ ոչ զհանապազօրեայ աքնուքիւն և զբազմապատիկ ձիգն ի գործ արկեալ, անկոխ առ ինոցանէն յարդարեսցէ զհոգին։

Վանգն և երեսացն կայտառութիւն, և շարժմանցն խնդութիւն, և ձեմքն սիգաքայլ, և բեկբեկել ձայնին, և ծարիր աչացն, և անգոյր պատիցն, և հիւսիցն կապք, և ներկուածք վարսիցն, և պերճանքն հանդերձիցն, և բազմաքանդակ ոսկւոյն զարդ, և գեղ գոհարացն, և բուրմունք իւղոցն, և այլ ինչ ամենայնիւ, յոր տարփմամբ բերի ազգ կանանց, բաւական են ամբոխել զհոգին, եթէ ոչ ի բազում խոստմանէրութիւն ժուժկալութեան պարսպեսցէ զանձն իւր։ Այլ չեն ինչ զարմանք՝ եթէ յայսպիսեաց աստի ամբոխեսցի նա. իսկ թէ՝ և ի ներհակացն սոցա կարօղ եղև բանսարկուն հարկանել և խոցել զհոգիս մարդկան, այլ զլեռնէն բազում հիացմամբ լի է միանգամայն և յերկիւղ։

Վանգի արգ ոմանք՝ որ ի վարմից աստի փրկեցան, ըմբռնեցան յայնոսիկ՝ որ մեծապէս տարբերեալք են առ ի սոցանէ։ Վանգի և անգարմանն երեսք, և խըռուացեալ հերք, և հանդերձ աղտեղի, և կերպարան անյարդար, և պարզուն վարուց, և բանք անպաճոյճք, և քայլափոխք անարուեստք, և ձայն խոշոր, և աղբատութիւն պարկնից, և արհամարհութիւն, և անապաւէն կեանք, և միայնութիւն՝ զառաջինն անդ յողորմ շարժեցին զտեսօղն, և յետ այնորիկ ապա ի վերջին ճեպս։ Այս բազմաքն յառաջնոց անտի ցանցիցն զերծեալք, որ ոսկւոյն են և որ իւղոցն բուրմանց, որ հանդերձիցն, և որ այլոցն ամենայնի՝ զոր ասացի, յայսոսիկ՝ որ այն չափ տարբերեալք են առ ի նոցանէ, դիւրաւ սահեցան և կորեան։

Ը. Այս արգ՝ եթէ առհասարակ յաղքատութէ անտի և ի մեծութէ, ի զարդուցն և յանշուք կերպարանէն, ի պչրելոյ գնացիցն և յանարուեստ քաղաքավարութէն, և պարզաբար յամենայնէ յայնմանէ՝ զոր կանխեցի ճառեցի, մնրտ պատերազմի գրգռի ի սիրտ տեսո-

ղին , և ամենայն ուստեք պատին զնովաւ մինքեհաւոր թակարիք , ուստ ուստեք ապա նա կարօղ էին ի գի առնուլ , զորով այնչափ որոգայիք շուրջանակի լա րեալ կան : Օ՞ր դարան թագաւեան գացե նա երբ եք . ո՛չ ասեմ՝ զի մի՛ ի քունութենե անտի որսացեալ ըմբռնեսցի , զի այդ չէ էին այդչափ դժուարին . այլ զի և ի պիղծ խորհրդոյն անխուռվ պահեսցե զինո գի իւր :

Լ՚աղաչեմ ասել զպատուոյն՝ որ բիւրուց է պատճառք չարեաց : Վ՚անզի այն պատիւք՝ որ ի կանանց ընծային՝ ունին նոքա ի չիք լուծանիլ յերեսաց Քանից ժուժ կա լութենն . այլ բազում անգամ և տապաստ արկանեն՝ ե թէ ոք ո՛չ գիտիցե հանապազ հսկել ընդդէմ դարանաւ կալութեցս այսոցիկ : Իսկ ոչք յարանց անտի են՝ եթէ ոք հանդերձ բազում մեծանձնութեբ ո՛չ ընկալցի զայնո սիկ , ի կրկին ներհական կրից աստի ըմբռնեսցի , ի ծառայութէ ասեմ մարդահաճութենն , և յանմիտ ամ բարհաւանձուէին , յորժամ մարդահաճոյիցն իւրոց ստի պեսցի հպատակել զանձն իւր . իսկ ի պատճառս պատ ւոյն՝ զոր ի նոցանէն պատուի՝ ընդդէմ խոնարհագու նիցն փքացեալ գոռոզասցի , և ի վէրն խարդաւանեա ցի անմտութէ : Լ՚ս այսոքիկ ահա ասել ասացան առ ի մէնջ . իսկ ապա եթէ քանի՞ արդեօք վնասաբերք իցեն , ո՛չ ոք արդեօք անքաժ գոլով ի փորձոյ իրացդ , երբեք բաւական իցէ քաջութէ ի վերայ հասանել :

Վ՚անզի ո՛չ այսոցիկ միայն , այլ և որ կարի շատք և ա են քան զայդոսիկ , և առաւել վտանգաբերք , հարկ է պատահել այնմ՝ որ ընդ բազում թարթափեսցի : Իսկ որ յանապատն վայելէ , ազատ է յամենայնէ յայսոցիկ . իսկ եթէ երբէք նմա և խորհուրդ ինչ անտեղի յան դիման նկարեսցի յայսպիսեաց աստի , սակայն տկար է երևոյթն , և մարթի վազվաղակի չինջանիլ . քանզի ար տաքոյ ո՛չինչ նիւթ ի տեսութէ անտի ի վերայ բարդե ցոցոյն այնորիկ : Լ՚ս միանձն վանն անձին իւրոյ միայ նոյ երկնչէ , իսկ թէ և զայլոցն հարկաւորեսցի հոգալ , ապաքէն կարի նուազունք են դոքա . ապա եթէ և բազմագոյնք իցեն , սակայն և նուազեալք են քան զայ նոսիկ՝ որ յեկեղեցիս են , և զանձանց չհոգս կարի լինի թեթևագոյնս յարդարեն առաքինորդին իւրեանց , ո՛չ

յաղագս սակաւութեանն միայն, այլ զի և ամենեքեան առհասարակ օտարացեալք են ի կենցաղականս կալբեաց. ոչ մանկունս, ոչ կանայս, և ոչ այլ ինչ յայսպիսեաց հոգոց ունին նոքա: Իսկ այս զնոսա կարի ինն հլուս ընծայէ առաքինորդաց իւրեանց. և զի հասարակ է ընակուճ նոցա, յանցանք իւրաքանչիւր ձիգ ըիտ ի յայտ գան և ուղղին, որ ոչ սակաւ ինչ նպաստամատոյց է ի յառաջադիմութեի առաքինութեե, յորժամ և վարդապետին վերակացութեին անդուլ իցէ:

Ը. Իսկ որք միանգամ ընդ ձեռամբ քահանային հնազանդեալք են, նոքա բազմագոյն մասամբ ի կենցաղականս ընկղմին ի հոգս. և այս զնոսա ի գործս հոգևորայդ հեղգագոյնս առաջրէ: Հաստի և հարկ է վարդապետին աւուր աւուր, որպէս ի գէպ է ասել բանիս՝ արկանել զսերմն. որպէս զի անդուլ ըմբեամբք այդուիկ բաւական իցէ յունկնդրացս անտի առնուլ ժողովել զբան վարդապետուէն: Վասնզի մեծութեի բազմահարուստ, և պերճութեի իշխանութեե, և վատութեի ծնունդ գրգանաց, և այլ ինչ բազում՝ զարկեալ սերմանն ի նոսա հեղձուցանեն: Ա, բազում անգամ՝ զի և փշոցդ յաճախուի՝ և ոչ ի վերինն անդ երեսս երկրին թողու անկանել սերմանն: Ա՛ռ այս՝ և առաւելութեի աղէտիցն, և կարիք աղքատութեն, և անդադար վիշտք, և այլ ինչ այսպիսի առաջնոցն ներհականք՝ ի բաց հեռացուցանեն յոճախումն ջանից: Իսկ մեղացն և ոչ գուշնաքեայ մանն երբէք մարթի ի ծանօթութիւն գալ նոցա: Վասնզի զիարդ այս յորժամ զբազմագոյնս ի նոցանէ և ոչ երեսօք չափ ճանաչէ նա:

Ա՛րդ՝ որ ինչ նորա առ ժողովուրդն պաշտամունք՝ այսչափ գժոխմբերելիք են. իսկ եթէ որ զնորա որ ինչ միանգամ առ Ա՛ծ են՝ ի քննութիւն առցէ, իբրև յոչինչ արդեօք համարեսցին նոքա առ սոքօք. այնպէս առաւելագունի իմն և ձիգ ըիտ ջանից պէտք են սոցա: Վասնզի որ զողջոյն քաղաքին, և զի՞նչ ասեմ զքաղաքի, նա և զբոլոր տիեզերաց զվերակացուէին զանձամբ առեալ իցէ, և ի պաղատանս կանխել քաւիչ մեզայ առնելոյն յարդարել զՏ՛ծ, ոչ կենդանեաց միայն, այլ և ննջեցելոցն, որպիսի ինչ արդեօք լինել նմա պարտ ի-

յե ։ Վ[անզի ասպաքէն եա՝ և ոչ զմովսէսին , և ոչ զԵ-
ղիային զհամարձակութիւնն առ այդչափ պաղատանս քա-
ւական համարիմ երթեք . քանզի որպէս եթէ աչխարհ
ամենայն նմա հաւատացեալ էին , և որպէս եթէ ինքն
էր հայր հաստարակաց ամենեցուն , այնպէս մատու-
ցեալ մերձի առ Ած . յաղերս կանխեալ ամենայն ուրեք
չիջուցանել զպատերազմունս , ցածուցանել զխռովու-
թիւն . խնդրէ վասն խաղաղութե , վասն յաջողութե ,
և զի առանձինն , և է զի հրապարակաւ . և զի ամե-
նայն չարիքդ՝ որ իւրաքանչիւր մարդկան առ դուրս
հասեալ էին , արագ արագ վախճանեսցին ։

Այլ պարտ է նմա յամենեցուն ի նոցանէ՝ որոց վասն
աղօթս մատուցանէ՝ այնչափ ինն որոշել յամենայն իրս ,
որչափ ինչ արժան է առաջնորդին առաւելուլ քան զա-
ռաջնորդեալսն ի նմանէ ։ Իսկ ապա յորժամ և զՀո-
գին յե՛ղ կոչեսցէ նա , և զաստարափելին զայն մատուսցէ
պատարագ , և զհասարակաց ամենեցուն զտէրն յաձախ
չօշափեսցէ , ո՞րանօր արդեօք՝ ա՛ղէ ասա՛ դու ցիս՝ տա-
րեալ յայնժամ դասեսցուք գնա ։ Իսկ քանի՞ մաքրուի ,
քանի՞ բարեպաշտութե պահանջեսցուք մեք ի նմանէ ։
Ո՛ղէ ած զմտաւ , ո՞րպիսի ինչ պարտ էցէ լինել ձե-
ռայն այնոցիկ՝ որ այնպիսեացն սպաս հարկանիցեն .
ո՞րպիսի ինչ լեզուին այնորիկ՝ որ զայնպիսի բանսն յա-
ռաջ բերեալ բարբառեսցի . քան զի՞նչ ինչ ոչ մաքրա-
գոյն և առաւել՞ բո՝ հոգւոյն այնմիկ , որ զայնչափ և
զայնպիսի հոգին յինքն ընկալցի ։

Յայնժամ և հրեշտակք եկեալ առընթեր կան քա-
հանային , և բոլոր դասք երկնային զօրութեցն աղա-
ղակեն . և որ առ սեղանոյն վայր՝ ընդ ի նոցանէն ի
պատիւ բազմելոյն . և զդոյն զդոյդ մարթ է հաւատալ
և ի նոցուն իսկ յիրացդ՝ որ յայնժամ կատարին ։ Ո՛յր
ես լուայ և յումեքինէ՝ որ պատմիր , եթէ ի ծերունեաց
ոմն այր սքանչելի և ի տեսութե յայսոսիկ սովո-
րեալ՝ ասէր ցնա , եթէ ինքն գլխովին արժանի եղև
տեսութեդ այդմիկ . և ըստ ժամուն յանկարծակի յակն
արկաներ զաւազմութե հրեշտակացն , որչափ ինչ միան-
գամ մարթ էր նմա , որք պատմուճանաւս պայծառս ար-
կեալ զանձամբք՝ շուրջ բոլորեալ կային զսեղանոյնն ի
խոնարհ ունելով զդէմս , որպէս եթէ ոք զգօրականն

տեսցէ կացեալ յանդիման աղքային . որում և ես դլխոյ վին հաւանեալ եմ։

Վարձեալ և այլ ոմն պատմեաց ինձ , ո՛չ յայլոց ո մանց ուսեալ , այլ ինքնին արժանի եղեալ տեսանել և լսել , եթէ որք միանգամ հանդերձեալք են մեկնել ի կենաց աստի , եթէ երբեք մաքրութիւք խղճի մտացն հաղորդեալ լցեն խորհրդոյն , յորժամ հասանի նոցա ընչել զՀոգին՝ հրեշտակք պահ արկեալ զնոքօք ի պատ ձառս այնորիկ՝ զոր ընկալանն , այնպէս առեալ ածեն զնոսա անդր ։

Ւսկ քո չէ՞ տակաւին զահի հարեալ , որ յայնպիսի խորհուրդ սրբութիւն առեալ ի ներքս ածես զայսպիսի Հոգին . և որ հանդերձս զգեցեալ է աղտեղիս՝ դու զնա տարեալ ի վեր հանես ի պատիւ քահանայիդ . զոր և ինքնին քո ի բաց մերժեաց յակմէ բազմա կանին ։

Վանզի հանդոյն լուսոյ՝ որ զտիեզերս լուսաւորէ , պարտ է ձառագայթել Հոգւոյ քահանային ։ Ւսկ մեր Հոգիս յաղագս վատթարութե խղճի մտաց՝ այնչափ ինն խաւար ղիւրեաւ մնծեալ ունի , մինչ զի խնդրէ միշտ ղղիլ թաքչիլ , և երբէք չէ բաւական համարձակութիք ակնարկել ի տերն իւր ։ Վահանայք աղ են երկրի . իսկ զմեր անխմաստութիս և զանփորձուհս յամենայնի՝ ո՛վ ոք հեշտաբար բերցէ , բայց եթէ դուք ինքնին՝ որ անչափութիք քնաւորեցայք սիրել զմեզ ։ Վանզի ո՛չ միայն այնպիսի մաքրութիք պէտք են նմա , որպէս զի և այնպիսւոյն արժանաւորեսցի սպասաւորութիք , այլ և մեծապէս զգօնութիք և Հմտութիք բազում ինչ իրաց . և զի՝ և ամենայն կենցաղականացս խելամուտ իցէ , ո՛չինչ պակաս քան զնոսա՝ որ զնովին իսկ իրօքն ԹարԹափեացին . սակայն միանգամայն և յամենայնէն մեկուսի կացցէ՝ առաւել քան զմիայնակեացս ումանս , որք դիմեալ կալան զլերինս ։

Վանզի որովհետև հարկ է նմա կենակից լինել ա բանց՝ որք և կանայս ունին , և մանկունս անուցանեն , և ծառայս ստացեալ ունին , և բազում մեծութիք յօրա ցեալք են , և գործս գործեն արքունի , և իշխանութիք պերճացեալ են , պարտ է նմա բազմադիմի լինել ։ Ա կայն բազմադիմի ասեմ , ո՛չ խորամանկ , ո՛չ մարդասա

ձոյ, ո՛չ կեղծաւոր. այլ բազում ազատութիւք լցեալ և համարձակութիւք, որ զի և գիտասցէ առ օգուտ յարմարել զանձն, յորժամ պէտք իրացն զնոյն պահանջեսցեն. առ այս՝ և միանգամայն հեզ լինել նմա և խիստ։ Վասնզի չէ նման օրէնն զի օրինակ վարել առ ամենայն հնազանդեալս իւր. որովհետև և ո՛չ բժշկաց ի դէպ ինչ է միով օրինաւք դնալ ընդ ամենայն խօթացեալս, և ո՛չ զեկավարին զի միայն յեղանակ մարտի գիտել ընդդիմ հողմոյն. քանզի և զայս նաւ մրրիկք անդուլք խառնեն յուզեն շուրջանակի։ Այլ մրրիկք այսպիսիք ո՛չ արտաքոյ միայն ի վերայ յարձակին, այլ և ի ներքոյ անդ ծնանին. և պէտք են յայնժամ բազում զիջանելոյ և ձգբիտ փութոյ։

Ե. Եթէ այս ամենայն առ ի միմեանց զանազանք՝ ի մի վախճան անդր հայիմ ի փառս աստ ՚ոյ, և ի շինուածն եկեղեցւոյ։ Այծ է միանձանցն մրցանք, և բազում է վաստակն. այլ եթէ ոք ընդ սպասու քահանայութեան գեղեցկապէս ի կշիռ ձգեսցէ զնոցայն քրտունս, այնչափ տարբերեալս գտցէ զնոսա, որչափ ինչ ի միմեանց որոշեսցին ոսկին և թաւշաւորն։ Վասնզի անդանօր թէպէտ և բազմապատիկ է աշխատութիւն, այլ հասարակաց է մարտն հոգւոյ և մարմնոյ. նա մանաւանդ ի հրահանգաց անտի մարմնոյն կատարելն այն առաւելագոյն մասամբ. և թէպէտ և մարմինն կորովի ո՛չ իցէ, զսարթութիւնն հոգւոյն առանձինն կայ ինայ՝ իբրև զի անբաւական է ելանել ի գործ. քանզի և պահք հանապազօրեայք, և գետնախշտութիւն, և աքնութի, և մարմին անլուայ, և քիրան բազում, և այլն ևս որ ինչ միանգամ քաջայարմարք են ի մնալ զմարմինն, այս ամենայն առհասարակ տեղի տուեալ բառնայ ի միջոյ, յորժամ նա՝ որում հասանէր տանջիլ ըզտանջանս զայսոսիկ՝ անկեալ իցէ ի զօրութիւնէ իւրմէ։

Ոսկ աստանօր հոգւոյն առանձին միայն է արուեստ ձարտարութիւնն, և ո՛չ դարձեալ մարմնոյ քաջողջութիւնն ինչ պէտք են՝ առ ի նեղքս բերել զառաքինութիւն հոգւոյն։ Վասնզի զինչ մեզ օգտամատոյց իցէ արդեօք կորովութիւն մարմնոյն՝ առ ի ո՛չ լինել մեզ անձնահաճ, և ո՛չ բարկացօղ, և ո՛չ յանդուգն, այլ հեզ, և յաճ, և

պարկեշտ՝ առհասարակ այլովքն հանդերձ, որովք միանգամ երանելին պատուս զպատկեր առաքինի երիցուն Աշխրատեաց մեզ. ա. պխ. ֆ. 2։

Այլ ո՛չ և յաղագս մինոզնին առաքինութե՛ն ունիցի ոք արդեօք ասել զայս, այլ զորօրինակ ոք հրաշա կերտս ինն յօրինեն, բազմագիմ գործեաց պէտք են նոցա, և անուց և առասանաց և սուսերաց. իսկ ի մատատաէրն բովանդակ զամենայն արուեստն ի ներքս անդ ի հոգին գանձեալ ունի՝ ո՛չինչ կարօտացեալ արտաքնոցս. զոյն օրինակ է և աստանօր։ Այանգի միանձին պէտք են և քաջառողջ մարմնոյ, դարձեալ և վայրուց ոմանց՝ որ քաջագէպք իցեն առ նոյն քաղաքավարութիւն կենաց, զի մի կարի ինն բացական իցէ առ ի մարդկան կենակցութե՛ն, և զի միանգամայն զանապատ տին զանդորրութե՛ն կալցէ յանձն իւր. առ այս գարձեալ՝ զի մի և ի գեղեցիկ բարեխառնութե՛ն եղանակացն անբաժ ինասցէ. քանզի չի՛ք ինչ այնպէս դժուխըմ բեր նման՝ որ ի պահս մաշեսցէ զանձն՝ իբրու զօդոցդ անբարեխառնութիւն։

Իսկ յաղագս հանդերձիցն կազմութե՛ն և պարեհիցն պատրաստութե՛ն, որչափ ինչ միանգամ հարկաւորին նոքա վաստակել վաստակս՝ անձամբ անձին գուն գործեալք ձեռակերտել զամենայնն, ո՛չինչ խնդրեմ ես խօսել այժմիկ։

Ը. Իսկ քահանայն ո՛չ իմիք յայսպիսեաց աստի ի պէտս իւր ո՛չ կարօտանայ, այլ անխուզարկու և անխոհեր է յամենայնի՝ որ ընտասաբերք ինչ ո՛չ իցեն, իբրու այն՝ որ բովանդակ զնիւթ գիտութե՛ն ի գանձս անդ հոգւոյն ամբարեալ ունիցի։ Այպա եթէ ոք ընդ ներանձնաւորութե՛ն կենացն այնոցիկ աքանչասցի՝ որ մեկուսի ազատացեալ է առ ի մարդկան հաղորդութե՛ն, զղջայն և ես ինքնին դառանիմ՝ եթէ հանդէս է այդ համբերութե՛ն, այլ սակայն և ո՛չ բովանդակ առաքինութե՛ն հոգւոյն բաւական տարացոյց։ Այանգի որ միանգամ ի ներքս անդ ի նաւահանգստի ի ղեկացն վերայ նստեալ իցէ, այնպիսին չէ և ընծայեաց զձիգ բիւրամարուեստին. իսկ որ ի խորս անդ անդնդոցն և ի շնչել մրրկին կարօղ եղև ապրեցուցանել զմնակոյին, չի՛ք

ոք՝ որ ոչ խոստովանեսցի զնա իբրև առաքինի ղեկա-
վար։

Այսպա ուրեմն՝ և ոչ՝ ի միանձանցն ոք այնչափ ինն ա-
ռաքելութ աբանչելի եղիցի առ մեզ, եթէ՝ ի ներանձ
նաւուր կեանս իւր ոչինչ ամբոխեսցի և ոչ բաղումն և
մեծամեծս յանցանիցէ յանցանս. քանզի չունի նա յայն
պիսեաց անտի՝ որ ընդհարեալք՝ ի նա՝ զայրացուսցեն
զՀոգի նորա։

Է. Այլ եթէ ոք բաղմութիւն ամբոխին մատնեսցի
զանձն իւր, և զմեղս բազմաց ստիպեսցի բառնալ, և
այնպէս ապա անսասանելի և հաստատուն կացցէ ինա-
ցէ, ՚ի մէջ մրրկին իբրու յանդորը խաղաղութիւնէ զիւրն
ղեկավարելով Հոգի, նման իրաւացի են առհասարակ
յամենեցունց ծափահարք և զարմանք. իբրև զի զանկա-
կից առաքինութիւնն իւրոյ ՚ի դէմս ընծայեցոյց գեղե-
ցիկ ապացոյց։ Այսպա մի դու մի երբէք սքանչասցիս, ե-
թէ փախուցեալ մեր ՚ի հրապարակէ անտի և ՚ի բաղ-
մացն կենակցութէ, ոչինչ ունիցիմք մեք անձին բամ
բասող բաղումն. քանզի և ոչ՝ եթէ ՚ի քուն չէր իմ
մեղուցեալ, և կամ ոչինչ մրցեալ իմ՝ և ոչ անկեալ, և
կամ ոչինչ մարտ պատերազմի միեալ՝ և ոչ խոցեալ,
վասն այդորիկ արժան ինչ էր զարմանալ քեզ։

Վանզի ո՞ ոք արդեօք՝ ասէ՝ ոչ ասաւ, ո՞ ոք կարօղ իցէ
յայտնել և առակել զվատթարութիւնս իմ. արդեօք ա-
ռաստաղդ այդ, Թերևս և յաղթդ այդ. նա աւանիկ և
ոչ ձայն երբէք բաւական են հանել դոքա։ Այլ Թերևս
և մայրն՝ որ քան զամենեսեան առաւել ծանօթ է ի
մայոյն. նա և ոչ ընդ նմա հաղորդութիւն ինչ է իմ կե-
նաց, և ոչ ՚ի կագ ինչ ուրեք եկաք ընդ միմեանս. և
Թէպէտ և այդպիսի ինչ պատահէր երբէք, չէք ոք չէք
ուրեք մայր այնպէս անբաժ ՚ի սիրոյ և որդեսեաց, մինչ
զի և զոր երկնեացն և ծնաւ, և սնոյց, յորժամ և ոչ
մի ինչ պատճառք ստիպեսցեն զնա, և ոչ դարձեալ ոք
բռնասցի ՚ի վերայ նորա, նա չարախօս կայցէ զնմանէ,
և դատափետ արասցէ առ ամենեսեան։ Այս այն զի՝ ե-
թէ ոք զՀոգիս մեր ձշդ բարւ քննել կամեսցի, բաղումն
գտցէ ՚ի նմա ժանտուխս. և ոչ դու ինքնին անգիտանաս
զայդ, որ առաւել քան զամենեսեան քնաւորեցար գո-

վուէ մնասամբք բարձրացուցանել զմեզ առ ամենեսեան։

Այլ զի՝ ոչ եթէ ի չափու ինչ ունելով զանձն իմ խոսիմ ես զայդոսիկ այժմ, յիշեա դու, քանիցս անգամ ասէի քեզ՝ յորժամ յայսպիսեաց ինչ բանից լինէր ի մէջ մեր բազում անգամ. իբրու զի՝ եթէ ոք զիմ իղձս սրտի հարցանէր, եթէ ո՞րանօր արդեօք առաւել ինձ կամք էին փառաւոր լինել, յառաջնորդութեանն եկեղեցւոյ, եթէ ի միանձնական կեանս, իմ բիւրուք քուէիւք յանձն առեալ էր զառաջինն զայն. որպէս զի և ոչ դագարէի երբէք երանել զայնոսիկ առաջի քո՝ որք միանգամ բաւական էին գեղեցկապէս վերակացու լինել սպասաւորութեդ այդմիկ։ Իսկ արդ՝ զոր ես ինքնին երանեմ, ապաքէն և ոչ աեղի տուեալ փախչեմ յայնմանէ՝ եթէ երբէք կարելի անարատութէն պաշտել զնոյն. և զայդ ժխտե և ոչ ոք։

Այլ զի գործեցից ես. քանզի չիք ինչ այնպէս անպիտան ի վերակացութիւն եկեղեցւոյ, իբրու անգործութէն և անհոգութէն. զոր այլք աքանչելի ինն հրաշ հանգ կարծեն լինել. իսկ ես զնա իբրև առագաստ ուՆիմ իմումն վատթարութէ, և ընդ նովսա ծածկեմ բազում ինչ ի թերութէից անձին իմոյ, և չառնում յանձն խոյտառակել զնա։ Վասնզի որ միանգամ յայնչափ անզբաղութէն բնաւորեցաւ վայելել, և յայնչափ անդորրու վարել կեանս, այնպիսին թէպետ և գեղեցիկ բուսոյ բարուց վիճակեալ իցէ, յաղագս անփորձութէն իւրոյ անդէն խոտովի և տագնապի յանձն իւր, և ոչ ղգուշանաքեալ ինչ մասն զօրութեան նորա հատանէ կտրէ առ ի նմանէ անկրթութէն։ Իսկ յորժամ միանգամայն և մտաքն բուէթ և դուլ իցէ, և ի բանից աստի և ի մշտնջաց անքաժ իցէ, որպիսի ինչ է մերա գլխովին, այնուհետև ի քարանց ոչինչ ընդհատ իցէ այնպիսին, եթէ երբէք զանձամբ իւրով առցէ զսպասաւորութիս զայս։

Յաղագս որոյ և նուազունք են թուով՝ որք ի կրկնէ այտի ինքանիցեն ի մրցանս յայսոսիկ. իսկ բազմագոյնք ի դոյսանէ նշաւակէն զանձինս իւրեանց, և անկեալ վհատին, և դառնայս ինն և դժնդակս բռնադատին կրել յանձինս։ Այլ չեն ինչ զարմանք իրեղ. քանզի յորժամ ոչ առ նոցայովքն լինին մարտքն և կրթու-

թէքն, յանվարժից անտի ոչինչ ընդհատ է այնուհետեւ մարտուցեալն։

Ա. Առաջին՝ զիաւս պարտ է արհամարհել այնմ՝ որ յաստղարէզս յայս իջանէ. բարկութեն պարտ է վեհագոյն լինել, և խոհականութէ բազմաւ լի լինել։ Իսկ որ միանգամ զմիանձնական կենօքն փարեալ իցէ՝ նմին չէք ինչ առաջի կրթութէ պատճառք. քանզի ոչ բարկացուցիչս անձին ունի բազումն, որպէս զի զբռնութէն սրտմտութէն չգնեսցի սանձահարել. ոչ՝ որք երանիս կարդայցեն նմա և ծափս հարցեն, որպէս զի զհռչակ գովութէ ամբոխին դաստիարակեսցի ընդ վայր հարկանել. իսկ խոհականութէդ գլխովին՝ զոր խնդրեմք՝ ի վերակացութէ եկեղեցեայ՝ չէ ինչ այնչափ փոյթ առնոսա։ Ա. պա յորժամ՝ ի մրցանս յայնոսիկ եկեալ հասանեն՝ զորոց չառին նոքա երբէք զփորձ վտանգին, վարանին, դնորին, յանհնարս մտանեն. և այն չէ շատ՝ զի ոչ յառաջագէմ ինչ խաղան յառաքինութէն անդր, այլ և զոր միանգամ ունէլինն՝ բազումք բաղում անգամ կորուսանեն։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Ը. Ա՛ւ զինչ ասես. միթէ որք յամբոխս դեգերեալ իցեն, և ի կենցաղական հոգս թաւթափեալք, որք ի կաց և ի թշնամանս զկեանս մաշեալք իցեն, և որք բիւր իմն հնարագիտութէք լցեալ, և որք ի գրգանս սոզորեալք իցեն, զնոսա գլխովին առեալ կալցեսցուք ի վերակացութիւն եկեղեցւոյ։

ՈՍԿԵՒԵՐԱՆ.

Լսեայեա՛ զլեզու քո՝ ոչ երանելի դու։ Վ. Անզի զայդպիսիս և ոչ ի միտս անգամ պարտ է արկանել՝ յորժամ քննութէն լինի վասն քահանայից. այլ եթէ որ ի կենակցութէ և ի քաղաքավարութէ ընդ առնեցուն՝ բաւական իցէ միանգամայն և զմաքրութիւն, և զանխռովութէն, և զսրբութէն, և զհամբերութէն, և զհկզղջութէն և զայլն առնայն բարիս որք են ի միանձնեան՝ անարատ պահել և անսասանելի, առաւել քան զնոսին իսկ զմիանձնեան։ Վ. անզի որ բազումն ունի թէրու-

թէիս, և կարէ ՚ի միայնուէ իւրում թագուցանել զնոսա, և ոչ խառնելով զանձն ՚ի կենակցութէ այլոց՝ կարող է անգործ պահել զնոսա, այնպիսին եթէ երբէք ՚ի մէջ անդր եկեսցէ, ոչինչ այլ շահեսցի, բայց եթէ ծաղր. այլ և մեծասիս վտանգեսցի։ Ո՞ր փոքր միւս ևս՝ և մեր ինքնին կրեալ էր, եթէ ոչ ինամքն ոյ վաղվաղակի ՚ի բաց մերժեալ էր զՀուրն ՚ի դլխոյ մերմէ։

Վանգն որ զայս օրինակ զգածեալ իցէ, նման ծածկելոյ չէք հնար՝ յորժամ յերևան կացցէ. այլ անդինն վաղվաղակի յանդիմանի։ Նա զըօրինակ զնիւթս մատաղացն հուրն փորձէ, այսպէս և փորձ գղերին ընտրէ զհոգիս մարդկան, եթէ յաւինոտ ոք իցէ, եթէ փոքրոգի, եթէ փառասէր, եթէ խրոխտ, և եթէ այլ ինչ երբէք. զամենայնն խայտառակէ՝ և զերեսուքն իւնան վաղվաղակի մերկանայ. և ոչ միայն մերկանայ, այլ և դժնդակագոյնս և հզօրագոյնս ևս յորդոր զայնոսիկ։ Նա քանզի վերք մարմնոյն յորժամ տրօրին, դժուարաբուժելիք լինին. և կիրք հոգւոյն յորժամ դրդին և դրդուին, յայնժամ առաւել ևս բնաւորեցան զայրանալ. և որք միանգամ ըմբռնէնին ՚ի նոսա՝ պառաւել ևս քանդատուին մեղանչել։

Վանգն ՚ի ցանկութէ փառաց առեալ վերացուցանէն զնա՝ որ ոչ զգուշանայ անձին իւրում, և ՚ի ստամբաւ կութէ և ՚ի զօշաքաղութէ. ձգէն և ՚ի գրգռանս փափկութէ և ՚ի դատարկաստուն կեանս և ՚ի պղերգութէ. և առ սակաւ սակաւ յառաջ ևս առեալ տանին զնոսա ՚ի չարիսն՝ որ ծնունդք են սոցա։ Վանգն բազում ինչ են ՚ի միջի որ բաւական է զաքնութէն հոգւոյն լուծաւ նել, և զառ ՚ի ձընթացան հատանել կարել, և նախ քան զսմենայնն՝ խօսել ընդ կանանց։

Վանգն չէ իսկ հնար առաքինորդին՝ որ զբոլոր հօտին զհոգն զանձամբ առեալ իցէ, միայն զարանցն հոգալ, և զկանանցն անտես առնել. յորում և առաւելագունի նման պէտք են գեղեցիկ զգուշութէք, քանզի դիւրահաւանէ բնութիս մեր առ ՚ի մեղս։ Վ.ՀԼ պարտ է այնմ՝ որ եպիսկոպոսութէդ այդմիկ վիճակեցաւ, նաև ՚ի դարմանս քաջողջութէք սոցա՝ թէ ոչ զառաւելագոյնն՝ սակաւ քաջ գհաւասարն ՚ի նեբքս բերել ջանաս։ Վանգն Տարկ ՚ի վերայ կայ յայց ելանել նոցա՝ յորժամ խօթա-

ցեալք լիցեն, և մխիթարել՝ յորժամ՝ ի սուգ լիցեն, և կշտամբել՝ ի հեղգութեան նոցա, և օգնել՝ ի վաստակս նոցա։

Ասէ յորժամ այս ամենայն գործին, բազումն արդեօք յայնժամ գոցէ ամենաչարն մուտս առ՝ ի ներքս սպրդելոյ, եթէ ոք ոչ անխոնջ պահարկութիւք պարսպեսցէ զանձն։ Վասնզի ոչ միայն կնոջ ցանկասիրի, այլ և ողջախոհին աչք խոցեն և խռովեցուցանեն զհոգին, և շողոմութիւնք մեղկացուցանեն, և պատիւք՝ ի ծառայութիւն գերեն. և սէր բորբոքեալ՝ այն որ պատճառք է ամենայն բարեաց, բիւրուց լինի պատճառք չարեաց՝ ոչ ոյց ուղղապէս վարեսցին նովաւ։

Ա՛ուրեք զի և հոգք անդուլք բթացուցանեն զսրութիւն մտացն, և քան զկապար առաւել ծանրագանդաղ գործեն զսրաթռիչն։ Ասէ և սրտմտութիւն՝ ի վերայ յարձակեալ հոգւոյն, առհասարակ զամենայն զներքինսն ունի ըմբռնել իբրև զծուխ։ Ասէ ո՞վ ոք ապա ասասցէ և զայլոցն տուգանաց, զերկնամանացն, զղբպարտութեանցն, զտրամաբանացն՝ որ՝ ի վերհաղունիցն և որ՝ ի խոնարհադունիցն անտի, որ՝ ի խոհականացն և որ յանխոհեմիցն։

Թ. Վասնզի առաւել այն ազգ մարդկան՝ որք վրիպեալք են յուղիղ դատաստանէ՝ տրտնջողք են, և երբեք հեշտեաւ ոչ հանդարտեն պատասխանելոյ։ Ասէ առաքինի առաջնորդին պարտ է և ոչ զսոսա արհամարհել. այլ առ ամենեսեան առհասարակ սրբել զանձն յամենայն ամբաստանութենէն՝ մեծապէս պարկեշտութիւք և հեզութիւք, ներելով մանաւանդ անիրաւ բամբասանոց նոցա, քան եթէ դժկամակն լինելով և սրտմտելով։ Ո՛ի եթէ երանելին պաւղոս երկեաւ՝ զի մի՝ ի կասկածանս գողութեանն զմանկիցն զմանուկ աշակերտքն, և վասն այնորիկ և զայլս ոմանս ընդ իւր առ՝ ի սպասաւորութիւն ընչից. * Ահա գուցէ ասէ՝ արատ ոք լինէ դնիցէ՝ ի հաստատութեանս յայսմիկ՝ որ պաշտեցաւս՝ ի մէնջ ‖ Ա. Կոր. Ը. 20. զիարդ ապա մեզ ոչ պարտ լիցէ զանմեղսն հնարս հնարել, զի զկասկածս չարուն բարձցուք՝ ի միջոյ, թէպէտ և սուտք, թէպէտ և անբանաւորք լինչ լիցեն, թէպէտ և՝ ի մերմէ համբաւոյ կարի օտարք։

Վանզի չիք ինչ մեղք՝ յորմէ այնչափ հեռի իցեմք մեք, որչափ ի գողութէ պաւղոս. այլ սակայն և այնչափ ի բացեայ կալով նորա ի վատթար գործոյ անտի, և ոչ այնպէս անփոյթ ինչ արար նա զկասկածանացս բազմայն, թէպէտ և կարի անբանաւոր էր և անմիտ։ Վանզի անմտութի էր այնպիսի ինչ կասկածիլ յաղագս երանելի և աքանչելի գլխոյն այնորիկ. սակայն ի վերայ այսր նա ոչինչ նուազ և զկասկածանացս այսորիկ՝ որ այնչափ անբանաւորն էր և միայն այր խեղկատակ ուներ կասկածել, կանուխ զպատճառան հատ կորեաց, և ոչ զանմտութէն բազմայն ընդվայր ինչ եհար, և ոչ սասց երբեք. իսկ ո՞ւմ ումեք ի մարդկանէ ի միտս անիայնի չայդպիսեաց ինչ կասկածել վասն մեր, յորժամ առհասարակ ամենեքեան պատուէն զմեզ, և աքանչեան նան ընդ մեզ ի պատճառս նշանաց արուեստիցն և ի վարուցն պարկեշտութէ։ Վասլ նա գլխովին ընդ հակառակն և զանգիտեաց և խիթացաւ ի կասկածանացս աստի չարուե, և արմատաքի խլեաց զնա, մինաւանդ եթէ և ոչինչ թողացոյց այնմ առնել ի վեր։ Ընդէր։ * Վանզի խորհիմք, ասէ, զքարիս՝ ոչ միայն առաջի ձեր, այլ և առաջի մարդկան ‖. Ա. Կոր. Դ. 21։

Վչափ ջանից, մինաւանդ եթէ և առաւելագոյն նին և պէտք են. զի ոչ միայն զհամբաւս հնչեալս անբարիս խլեսցուք ի բաց և սանձեսցուք, այլ և անդուստ ի վերուստ նախահայեաց լինցուք՝ եթէ ուստի արդեօք առնուցուն նոքա զսկիզբն իւրեանց, և զպատճառան հատցուք՝ յորոց ծնանին նոքա. և ոչ միասցուք երբեք՝ զի զհամբաւի հարցին առհասարակ և ի բերանս յածեսցին խաժամուժ ամբոխին։ Վանզի չայնժամ ոչ հեշտին ինչ ե սրբել զայնոսիկ, այլ և կարի դժուարին է, թերևս և անկարելի. և ոչ դարձեալ անշնաս ինչ, քանզի մարթի այդմ ի տուգանս լինել բազմից։

Վայլ մինչև ցերբ ոչ կասեցայց բուռն հարեալ զանհասանելեացն։ Վանզի և բովանդակ իսկ ի համար բերել՝ զոր անդանօր զդժուարութինդ, ոչ այլ ինչ է, քան եթէ զանդունդս չափել։ Վանզի թէպէտ և յաճմինայն կրից ախտից գլխովին ոչ մնքուր իցէ՝ որ չանհնարին է, սակայն առ ի ուղղել զայլոցն սխալանս՝ բիւրա

ինն հարկաւորի կրել՝ի դժնդակացն։ Իսկ եթէ և դանձ ձիւնն ախտս՝ի վերայ բարդեսցես, տես դու ինձ յայն ժամ անդուռնդս ինն քրտանց և հոգոց, և որչափ ինչ միանգամ հարկ իցէ կրել՝ի յաղթել ախտիցն իւրոց և օտարին։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Ճ. Իսկ այժմիկ չիցէ՞ քո երբեք վաստակ ինչ քրքտանց, և ոչ դարձեալ հոգք իցեն քո, յորժամ՝ի միանձնութեան կեաս։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

Այն իմ արդեօք և այժմիկ հոգք։ Վասնզի զիաշդհնար իցէ՝ եթէ ոք մարդ իցէ և զբազմավիշտ կեանս զայս վարեսցէ, և քնաւ իսկ ազատ իցէ՝ի հոգոց վաթանաց և յանձկութեց։ Այլ սակայն ոչ հաւասար ինչ է՝ յանդուդս անհուսս անկանել, և ընդ գետ անցանել. քանզի այսչափ է խոչը ընդ հոգս երկաքանչիւր։ Այս ապաքէն եթէ քաւական ինչ էի և այլոցն լինել պիտանացու, զդոյն և ես ինքնին կամէի, և բազում ուխտիւք սիրելի էր ինձ բանդ. ապա եթէ չեմ քաւական օգնել օտարին, գէթ դովին շատացայց ես, եթէ երբեք յաջողեցայց փրկել զանձն իմ, և յաւէտ ասել ապրեցուցանել։

ԲԱՍԻԼԻՈՍ.

Այս միթէ մեծ ինչ կարծեսցես զայդ, և գլխովին համարեսցի՞ս դու փրկել զանձն, եթէ ոչինչ պիտանացու եղիցիս ումեք յօտարաց անտի։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

Վաղ իսկ և գեղեցիկս բարբառեցար, քանզի և ոչ ես ինքնին քաւեմ հաւատալ, եթէ հնար իցէ փրկիլ այնմ՝ որ ոչինչ վաստակեսցի՝ի փրկութիւն ընկերին։ Վասնզի և ոչ հիւծացելոյն այնմիկ օգնեաց ինչ այն՝ զի զքանքարն ոչ նուազեցոյց. մանաւանդ եթէ և կորոյս գնա՝ զի ոչ յարգեաց, և ոչ կրկնապատիկ դարձոյց գնա։ Այլ սակայն այնպէս համարիմ, եթէ առաւել թե-

Թևաբեռն եղիցին ինձ տանջանքս՝ յամբաստանիլս ի մէնջ՝ եթէ ընդդէմ և այլոցն փրկութեան չեզեր զու պատճառաք, քան եթէ յորժամ միանգամայն և զայլս և զանձն իմ՝ ի կորուստ մատնիցեմ, յայժ վատթարագոյն եղեալ այնչափ պատուոյն։ Վասնզի արդ այնչափ ինչ տանջանս ակն ունիմ առնուլ յանձն իմ, որչափ ինչ միանգամ մեղացս իմոց խնդրել մեծութեի. իսկ յետ ընդունելութեե իշխանութեես այսորիկ, ո՛չ կրկին միայն և երեքկին, այլ և բազմապատիկ, ՚ի պատճառս գայթակղութեե բազմագոյն մարդկան. և զի յետ ընդունելութեե գերագունին պատուոյ՝ թէնամանս եդի ընդդեմ պատուասիրողին զիս Աստուծոյ։

ԺՀ. Յաղագս որոյ և զիսրայէլացւոցն սաստկագոյնս ամբաստանելով, վասն այնորիկ և առաւելագոյնն զնոսա յանդիմանէ լինել արժանի պատուհասի. իբրև զի յետ պատուասիրութեե նոցա առ՚ի նմանէ՝ մեզան նոքա. և ուրեք՝ զի ասէ. * Կայծ զձեզ ընտրեցի յամենայն ազգաց երկրի. վասն այնորիկ ՚ի ձէնջ խնդրեցից զվրէժ ամենայն չարեաց ձերոց ‖. ամովս. Գ. 2. և ե դարձեալ, եթէ. * Կռիւ յորդւոց ձերոց ՚ի մարգարէս, և յերիտասարդաց ձերոց յուխտաւորս ‖. Բ. 11։

Կայ նախ քան զմարդաբնն՝ ՚ի հրամանս անդ զոհիցն կամեցեալ զայն ինչ ՚ի դէմն բերել, եթէ մեզք՝ որ ՚ի քահանայիցն գործին՝ առաւել ևս սաստիկ ընդունին զպատուհասն, քան յորժամ ՚ի սոսկականաց անտի, պատուիրեաց՝ զի այնչափ ինչ զոհ մատուսցի վասն քահանայիցն, որչափ վասն ամենայն ժողովրդեանն. ղեւս. Բ. 3. 14։ Կայ այս ո՛չինչ այլ, բայց եթէ զայս ինչ յայտնութ ցուցանէ, եթէ քահանայիցն վերք առաւելագունի կարօտանան օգնականուե. և այնչափ՝ որչափ ինչ միանգամ պէտք են առհասարակ ամենայն ժողովրդեանն. իսկ արդ՝ առաւելագունին էին արդեօք կարօտացեալք, եթէ ո՛չ գժնդակագոյնք էին։ Կայ գժնդակագոյնք են ո՛չ բնութեէն, այլ ՚ի պատճառս պատուոյ քահանայիցն՝ որ յանդգնեցաւ ՚ի գժնդակն յայնոսիկ։

Կայ զի՞նչ ասեմ զարանց՝ որ զդոյն պաշտօն զանձամբ առեալ էցեն, քանզի և դատերք քահանայիցն, որոց ո՛չ ինչ բան է ընդ քահանայութեէն, սակայն ՚ի պատճառս

հայրենի պատուոյն՝ կարի դառնագոյն վրէժս լուծա-
նեն զմեզայս իւրեանց . ղԼա . ԻԳ . 9 : Իսկ արդ մեղքն
նոյն է նոցա և դատերացն սուկասնաց , քանզի պոռնը-
կութիւն է երկաքանչիւրն . սակայն սոցա պատուհասն
դառնագոյն և աս է :

Տեսանեմ , եթէ քանի՛ առաւելութիւն եցոյց քեզ Ած , և-
թէ քան յիշեցելոցն՝ առաւել յիշեանաց անտի խնդրէ
նա վրէժս ևս մեծամեծս : Վասնզի և ո՛չ արդեօք՝ որ
զդուստր քահանային՝ ի պատճառս հօրն առաւել ևս
տանջէ քան զայլսն , իսկ որ միանգամ՝ ի վերայ նորա
յաւելուցու և այլ պատճառս տանջանաց , զնա զուգա-
հաւասար տանջանօքն պատուհասեցէ ընդ այլոց բազ-
մաց , այլ առաւել ևս սաստիկս : Այլ կարի իսկ քաջ :
Վասնզի ո՛չ ի նմին միայնոյ կան մնան տուգանքն , այլ և
զտկարացն հոգիս՝ որք ի նա հայեսցին՝ հարեալ կոր-
ծանէ : Օ՜ սոյն զայս և եզեկիէլ կամեցեալ՝ ի դէմն ա-
ծել , որշէ առ ի միւսանց զդատաստան խոյտն և զոչ-
խարացն . եզէկ . ԼԴ . 17 :

ԺԸ . Արդեօք կարծեսցո՞ւք քեզ , եթէ իրաւամբք
ըմբռնեցաք մեք յերկիւղդ յայդ : Վասնզի բաց ի նախա-
ձառելոցդ բանից , թէպէտ և այժմիկ բազում քրտանց
վաստակոց պէտք են ինձ , զի մի խոպառ անկեալ պար-
սեցայց ի կրից հոգւոյն . այլ սակայն յանձն առնում
զվաստակն , և ո՛չ ի բաց փախչիմ ի մրցանացն : Վասն-
զի և զարդիս ըմբռնիմ ես ի մնափառութէ . սակայն
ատեպ սթափիմ , և դառնամ խելամուտ լինիմ՝ եթէ
ըմբռնեցայ . է զի և կշտամբանս ի վերայ կասկեմ ծա-
ռայացելոյ հոգւոյն :

Այսև յանկուճիք անտեղիք և այժմիկ յարձակին ի
վերայ իմ , սակայն մեղմագոյն վառեն զբոյն . քանզի
չունին աչք յարտաքնոց անտի առնուլ պատրաստել
հրոյն նիւթս : Իսկ ի խօսելոյ քանս չարս և զազիրս ,
և ի լոյ խօսելեացն՝ գլխովին ազատացեալ եմ . իբրև
զի և չունիմ առ խս խօսակիցս . քանզի և ո՛չ որմունքդ
այդոքիկ զօրեն հանել ձայն :

Այլ ո՛չ նոյնպէս և ի բարկութենէ կարօղ ինչ եմ
ապրիլ , թէպէտ և դառնացուցիչ ոք մերձ ո՛չ իցէ . քան-
զի բազում անգամ յիշատակ արանց անիրաւաց և նո-

ցուն գործոցն անկեալ՝ ի միտս, զայրացուցանէ զսիրտ իմ յիս, սակայն և ոչ մինչ խոպառ. քանզի անդէն վաղվաղակի նուաձեալ սանձեմք զբորբոքեալն զայն և համզեմք՝ ի հանդարտութեի, ասելով մեր ընդ մեզ. եթէ կարի անտեղի և վերջին հիգութեի է, թողեալ զմերն ջարիս՝ ընկերին լինել խուզարկու: Ա.յլ ոչ եթէ և՝ ի մէջ ամբոխից բազմաց եկեալ հասից և՝ ի բիւր աղմուկս թաթաւեցայց, քաւական ինչ եղէց՝ ի դոյն խմաստս վայելել, և կամ զխորհուրդս զայդոսիկ դաստիարակիչ անձին իմոյ գտանել:

Ա.յլ զորօրինակ ոք՝ ի վախից ինչ կամ՝ ի հեղեղաց, և կամ յայլոց ինչ ածեալք վարեսցին, թէպէտ և զկռուտան զիւրեանց մտաւորս քաջ իսկ տեսանէն, սակայն օգնականութեե ձեռն ոչինչ ունիցին ուստեք հնարել նիւթել անձանց իւրեանց. զնոյն օրինակ և ես՝ եթէ երբեք անկանիցիմ՝ ի բազմադէմ ամբոխս կրից, տեսանեմ անշուշտ՝ զի տանջանք իմ աճեն ինձ օրըստօրէ. սակայն ժողովիլ լինել ընդ անձին իմում՝ որպէս և այժմ, և ամենայն ուստեք սանձել կոծել զվայրենի կիրսն, ոչ նոյնպէս հեշտաւաչողեսցի ինձ՝ որպէս և յառաջն: Վ.անզի տակաւ է ինձ հոգիս իմ և փոքրոգի, և դիւրըմբռնելի՝ ոչ միայն՝ ի կրից աստի յայսցանէ, այլ և որ գառնագոյն ևս է քան զամենայնն՝ ի նահանջել. և ոչ դարձեալ զթշնամանս, և ոչ դարձեալ զպատիւս գիտաց դա երբեք բերել չափաւորութե. այլ վերջինքդ առաւելագոյնս փքացուցանեն զնա, և առաջինքդ կարի լքուցանեն զնա:

Ա.պա որպէս գաղանք դժնդակք՝ յորժամ քաջամարտինք են և յօրսոյեալք՝ յաղթեն որոց՝ ի կռիւ կաքաւեն ընդ նոսա. և մանաւանդ՝ եթէ տակաւք ոմանք հանդիպ պեսցին նոքա և անփորձք. իսկ եթէ ոք զնոսա սովով մնշեսցէ, զկատաղութեին ընդարմացուցանէ՝ ի նոսա, և զկորովութեին առաւելագոյն մնասամբն շինուցանէ, որպէս զի և որ ոչ կարի հզօրն իցէ՝ պատրաստեսցի մրցել ընդ նոսա և պատերազմել: Ա.յսպէս են և հոգւոյն կիրք. որ միանգամ տակաւս գործէ զնոսա, նա ընդ ուղղաւաւս քանիւն հնազանդէ զնոսա. ապա եթէ ոք իմամբ բուծանէ, մարտ իմն դժնդակագոյն անձին իւրում պատրաստէ ընդդէմ նոցա, և այսպէս իմն զնոսա

ահարկուս անձին յարդարէ, մինչև զբովանդակ ժամանակն ի ծառայութեան նոցուն և յերկիւղի վարել զնա։

Որ ապա իցէ կերակուր գազանացս այսոցիկ, անապատութեն՝ պատիւք և գովութիք. իսկ ամբարտաւանութեն՝ իշխանութի և մեծութի տերութե. իսկ մանկանացն՝ գեղեցիկ համբաւն ընկերին. արծաթասիրութեն՝ պատուասիրութիք բաշխողացն. պագշոտութեն՝ զրգանք փափկութե և յաձախ կենակցութիք կանանց. և այսպէս ապա և այլք՝ այլոց։

Իսկ այս ամենայն գաղանիք բուռն յարձակեսցին յիս՝ եթէ ի մէջ անդը մատեայց, և առեալ կեղեքեսցեն զհոգի իմ, և արհաւիրս իմն արկցեն զինև, և դառնասգոն մարտ պատերազմի յարդարեսցեն ինձ ընդդէմ սուցա. իսկ յորժամ աստէն նստեալ կամ, հնազանդեցից ես զնոսա՝ թէպէտ և բռնութե բազմաւ։ Իսկ սակայն հնազանդեսցին ինձ ընորհօքն ՅՍ, և քան զհաչէել իւրեանց ոչինչ ունիցին առաւել։ Յաղագս այսորիկ և ընդերդովս ընդ այսուիկ պատասպարեալ կամ, և անել եմ ի տանէ, և ոչ կենակիցք և ոչ բնակակիցք եմ մարդկան. և բիւրուց ես այսպիսեաց բամբասանաց հանդարտեմ ի լսելս, յորժամ դիւրաւ բաւեմ սրբել զնոսա. իսկ յորժամ անբաւական գտանիմ, վասն այսորիկ վշտանամ և ցաւիմ։

Վասպղ և ոչ հեշտին ինչ է ինձ՝ կենցաղակից լինել մարդկան, և միանգամայն կալ ինալ յաներկևանութես իմում յայսմիկ. վասն որոյ և աղաչեմ զքեզ՝ զի որ այդչափ գժուարութիքդ պաշարեալը եմ, առաւել ողորմեացիս դու ինձ՝ քան եթէ դատափետ արասցես։ Իսկ սակայն չև ես կարացի զայդ հաւանեցուցանել քեզ։

Այսպա ուրեմն՝ ժամ է ինձ այսուհետև, զի և զմի զայն գաղտնիս՝ զոր ունիմ առ իս՝ հեղից առ քեզ. որ և բաղմաց թերևս անհաւատալի կարծեսցի քան. սակայն ես և ոչ այնպէս սաստիկ ինչ համարեցայց ի դէմս բերել զայդ։ Վասպղ Թէպէտ և զոր հանդերձեալս եմ ասել՝ վտանգաւոր խղճի մատց և բիւրուց մեղանաց յանդիմանուն իցէ, այլ քանզի՝ որ զմեզ հանդերձեալ է դատել ՅԾ՝ Ձնգրիտ գիտէ զանմեղայն, զինչ ես մեզ այնուհետև օգուտ իցէ յանգիտութէ մարդկան։

Իսկ զինչ ասա գաղտնիքդ այդ իցեն։ Յօրէ անտի յայնմանէ, յորում զկասկածդ զայդ ետուր ինձ, բա զում անգամ տագնապ եհաս ՚ի վերայ իմ՝ թողուլ լու- ծանիլ կինէն ողջոյն մնալնոյս իմոյ. այնչափ ահ երկիւ- դի, և այնչափ տրտմութիւն պատեալ պաշարեաց զհոգի իմ։ Քանզի զմտաւ ածելով իմ զքոյն հարսնիցն զփառան, զսրբութիւնն, զդէղն հոգևոր, զզգօնութիւն, զբարեզարդ դուխիւնն. և զիմն խոկալով զբարս, ո՛չինչ դադարէի զնա յողբալոյ, և զիս ինքն յաւաղելոյ. և անդուլ յոգ- ւոց հանելով և ՚ի վարանս վարանելով՝ զայս ինչ խօ- սէի ընդ անձին իմում։ Քո՛վ ոք արդեօք առաջնորդ ե- ղիցէ խորհրդոյդ այդմիկ. զինչ այնչափ մեղաւ եկեղե- ցին Քո. զինչ այն էր երկիւղ՝ որ այնչափ դառնացոյց զտէրդ դորա, զի ինձ ՚ի ձեռս տացի այդ՝ որ անարգաս դոյն և եմ քան զամենայն մարդ, և զայդչափ ամօթ անարգութեան կրեսցէ դա։

Օ՜ այսոսիկ բազում անգամ խորհելով ես ընդ անձին իմում, և իբրև ո՛չինչ զօրեի հանդուրժել խորհրդոյ այդչափ դժպատեհ բանիդ, այնուհետև իբրև զասէ շեալս ոմանս անչքնչունչ ընդարմացեալ մնայի, ո՛չ տեսա նել ինչ կարող էի՝ և ո՛չ լսել։ Իսկ իբրև վայր մի թո- ւլանայի յայդչափ նուաղմանէ հոգւոյն. քանզի էր երբ- եմն՝ զի տեղի տուեալ դադարէր, զկնի յաջորդէին արտասուք և ախրութիւն. իսկ յորժամ արտասուացն յա- գուրդ լինէր, դարձեալ զտեղին փոխանակէր արհա- ւիրք երկիւղին՝ որ զմիտս իմ առհասարակ ամբոխէր ինձ և խռովէր, և սասանեցուցանէր։

Յայսչափ ծփանս կեցի զանցեալ ժամանակդ. իսկ դու զայսցանէ ո՛չինչ գիտէիր, և յանդորրու կարծէիր վարել ինձ կեանս։ Ո՛չ արդ Թէ ակոխեցից ես զհոգ- ւոյս իմոյ զմերկանալ քեզ. Թերևս և վասն այսորիկ ՚ի բաց անդր Թողեալ քո զամբաստանուհիդ՝ Թողութիւն շնորհեսցես ինձ։

Իսկ արդ զիա՞րդ արդեօք, զիա՞րդ բացից քեզ զայդ։ Ո՛Թէ արդեօք քեզ լուսաւորագոյնս տեսանել կամք ի- ցեն, այլազգ չէք հնար, բայց Թէ զսիրտ իմ պարզեցից առաջի քո։ Ո՛չ քանզի յանհնարինն է բանդ, ապա ընդ աղօտ պատկերաւ ոմանմբ՝ իմովսանն գուն գործե- ցից առաջին զտրտմութիւնս իմոյ ծուխ նկարել յանդէ-

ման քո։ Իսկ դու՝ ի պատկերեդ այսի միայն ղարտմա-
Թ[illegible]ն ժողովեսցես՝ ի միտս քո։

Վիցուք մեք՝ եթէ հարսն ունի ոք զդուստր արքայի,
որ տէր իցէ ամենայնի՝ որ ընդ արեգակամբն. և այդ
օրիորդ զգեղ պատկերին ունիցի անթարգմանելի, որ-
պէս զի և զմարդկայնովս գերազանցեալ իցէ բնութ[illegible],
և վասն այնորիկ բազում անկըղետութ[illegible] գեր ի վերոյ
անցեալ ամենայն ազգի կանանցդ. առ այս՝ և առաքի-
նութ[illegible] հոգւոյ այնչափ իցէ նորա, մինչև և զազգդ ա-
րանց առհասարակ զեղելոցդ և զհանդերձելոցդ՝ բա-
զում չափով զինի իւր առեալ Թողուցու. և բարեզար-
դութ[illegible] քաղաքավարութ[illegible] կենացն՝ անդր անցեալ իցէ
ըստ ամենայն սահմանս խմաստասիրութ[illegible]. և զամենայն
տեսիլ գեղոյ մարմնոյն աղօտացուսցէ վայելչութ[illegible] դի-
մաց պատկերին։ Իսկ սեղեխ նորա ո՛չ ի պատճառս
այսոցիկ միայն քորքոքեալ ի կոյս անդր, այլ բաց ի
սոցանէ և այլ կիրս ինն այնպիսի կրեսցէ առ նա ի
սրտի իւրում, որպէս զի և կարի յոյժ մոլեգին տար-
փածուաց նորա՝ եթէ իցէն երբէք՝ յոյժ վհատացոյն հան-
դիպեսցի նա. իսկ ապա յետ այսորիկ որ այդչափ տրա-
փանօքն վառեալ իցէ՝ լուր ինն լուիցես ուստեք, եթէ
զհրաշալին զայն զտարփացեալն իւր՝ այր ոմն ի վերջին
անարգացն և ի սինլիքորաց, այր վատատոհմիկ և խեղ
անդամովք՝ և վատթարագոյն առաւել քան զամենայն
մարդ, հանդերձեալ է կին ածել զնա։ Արդեօք քեզ
իուն ի միտն ցուցաք մեք զգաւոց մերոց. և շա՛տ իցէ
Թերևս ցայդ վայր արձանացուցանել ի մէջ զպատ-
կերն. վասն մերոյ տրտմութ[illegible]եանս չատ է այդ՝ որպէս
կարծեմ. քանզի և ի պատճառս այդորիկ միայն զգոյն
պատկեր ի ներքս ընծայեցուցաք մեք։

Այլ զի քեզ և զերկիւղն իմն և զարհաւրայն ի
դէմն ածից զչափն, յայլ նկարագիրս դարձեալ փոխե-
ցայց։ Երևեսցի հանդէպ մեր քանակ զօրու իմբեալ
յարանց հետևակաց և ի հեծելազօրաց և ի նաւա-
մարտից, և զծով ողջոյն ծածկեսցէ գումարտակ ե-
րեքթիւոցն. դարձեալ և զղխրս դաշտաց և զկատարս
լերանց պատեսցեն փաղանգք հետևակացն և այրու-
ձիոյն, և ի նշուլից արփւոյն փայլատակեսցին պղինձք
զինուց. և անդուստ ի շառաւիղացն հատելոյ՝ սաղա-

ւարտացն և առպարացն ցոլասցին ՃառՃանչք. իսկ շկա-
հիւն նիզակաց, և վըրնջիւն երիվարաց մինչև յերկինս
՚ի վեր հասանիցեն. ոչ ծով անդանօր երևեսցի ուրեք՝
և ոչ ցամաք, այլ պղինձ և երկաթ առհասարակ ամե-
նայն ուրեք: Այլ ընդդէմ դարձեալ Ճակատեսցի նոցա
Ճակատամարտ թշնամեաց, արք ոմանք վայրագասունք
և ամենից:

Այլ այն ինչ եկեալ հասեալ իցէ ժամանակ մղելոյ
մարտին, անդուստ այր ոմն՝ յանկարծակի զպատանեակ
մի ՚ի մէջ անդր ընծայեսցէ ՚ի տեղի Ճակատուն, պա-
տանեակ՝ որ քան զՀովուական քնարն և քան զցուցան
ոչինչ աւելի գիտաց ամենևին. և առեալ զնա սպառա-
զինեսցէ ՚ի զրահս պղնձիս, և ածեալ յածեցուսցէ առ-
հասարակ ընդ զօրն. և յանդիման ցուցցէ նմա վաշտս
և վաշտապետս, աղեղնաւորս, պարսաւորս, դասա-
պետս, զօրավարս, սպառազէնս, հեծելազօրս, հե-
տոզս, եռաթիս, եռաթիավարս, և որք անդանօր ամ-
րածածուկ զօրականս, և զնաւականացն մինչևնոյին
հոյլս: Ապա՚ձեալ և զթշնամեացն բովանդակ ցուցցէ
զՃակատամարտ, դէմն ինն պատկերաց նոցա սոսկալիս,
և պէսպէս հանդերձանս զինուց, և բազմութիւն անհուն,
և ձորս ինն, և վախս խորս, և դժուարս լերանց: Այ-
սպա նշանակեսցէ նմա առ թշնամիս անդր և հեծելա-
զօրս ինն թռուցեալս արուեստիւք ոմանօք դիւթից, և
սպառազէնս օդապարիկս, և ողջոյն զամենայն այժ, և
զկերպարան դիւթուածեանն: Ապա վերայ այսր՝ ՚ի թիւ
արկցէ նմա և զպատերազմին աղէտս, զսլաքացն ամպ,
զնետիցն տարափս, զմեռանօրէնն զսյն զմեծ, զմահն,
զաղջամղջին գիշերն, զոր ՚ի վերայ պատեսցեն աղե-
նաւորացն տեղատարափք հոծ և խիտ՝ զի և զարեգակ
նայինսն յետս ընդդէմ փարատեսցեն Ճառագայթս,
զփոշին զսյն ոչինչ պակաս քան զիաւար՝ աչացն ըստ
ուերաձիգ, զարեանցն առուս, զանկեալսյն ձիչիւնս, ըզ-
կացեալսյն գոչիւնս, զդիտապատառ անկեալսյն կոյտս, ա-
րիւնեղեանդ անիւս, երիվարս հանդերձ վերելակօքն
Թաւագլոր վարեալս ՚ի բազմութիւ դիականցն անկելոց.
զերկիրն՝ որ խառնիխուռն զամենայնն ՚ի վերայ իւր
բարձեալ բերիցէ, արիւն և աղեղունս և նետս, ամբակս
երիվարաց ՚ի միասին ընդ կառափունս մարդկան. և բա-

զուկս և պարանոց և սրունս և լանջս հատեալս, ուղեդա մխեալ ի սուսերս, սպրս նետի թեքեալ, և աչս իմն ունելով կինքեան օղարկեալ։

Ի դէմն ածել նմա և զնաւականին մարտի կիրս, յերեքթոցն կէս մի ի ջուրն ծփեալ, և կէս դարձեալ սպառազինաքն հանդերձ ջրասոյզ եղեալ, զդոչիւն ալեացն, զաղմուկ նաւաշացն, զալաղակ զօրացն, կոհակաք և արեամբք խառնեալ զիրիսուրն, և այնպէս միանգամայն յամենայն ի նաւն միջամուխ եղեալ, զգիակունսն ի վերայ տախտակամածացն, ե որ անդնդաս սոյզ էին, և ե որ զերեսաք ջուրցն լողասցի, կէս մի ի ծփանացն ընդ ծովափունսն վարեալ, և կէս դարձեալ ի մէջ ալեացն թաղեալ՝ որք զնաւացն խոյեալ կուրացուսցեն ձանապարհ։ Այս ձգիրեալ բովանդակ ի դէմն քերեալ նմա զամենայն ողբերգուԹիս պատերազմին, ի վերայ բարդեսցէ նորա՝ և զվիշտս գերուԹեանն, և զծառայուԹիւն՝ որ գժնդակագոյն ևս էին քան զամենայն մահ։ Այս ասելով զայս ամենայն՝ հրամայեսցէ նմա անդէն յերիվար աշտանակել, և շարժել վարել զեռվանդակ զօրն զայն։ Որդեաք համարեսցին դու՝ եԹէ ի լուր միայն պատմուԹեանդ այդմիկ բաւական իցէ քեզ պատանեակդ այդ, և ոչ առաւել անդստին յառաջին տեսուԹենէն անկեալ նուաղեսցի ի սրտի իւրում։

Այլ մի երբեք կարծեսցես, եԹէ ի ձառս լինչ բանից առեալ աձեցուցանեմ ես զերազ։ և մի դարձեալ՝ եԹէ ի մարմնի աստ իբրև ի կապարանի ուրեք արգելեալք՝ ոչինչ յանեւուԹիւնն կարող էցեմք տեսանել, վասն այսորիկ և մեծ լինչ համարեսցիս զաւազեալսս։

ԺԳ. Պանդղ մարտ իմն առաւել մեծ քան զդայն և ահեղ՝ տեսանիցիր դու արդեօք, եԹէ երբեք մարթ էր քեզ աչօքդ այդոքիւք նկատել զմիապատառ ձակատն սատանայի, և զմնլեգինն մարտ պատերազմին։ Պանդղ անդ ոչ պղինձ է և երկաԹ, ոչ երիվարք և կառք և սնիւք, ոչ հուր և նետք, և ոչինչ յերևելեաց աստի, այլ այլ իմն մեքենայք կարի ևս ահաբեկք քան զայդոսիկ։ Այնմանացդ այդոցիկ՝ ոչ զրահիւ պէտք լինչ են, և ոչ ասպարաց, ոչ սուսերաց, և ոչ տիգաց. այլ տեսիլն միայն շատ ի նեղուԹեալ ձակատուն այնորիկ լուծա-

նել զՀոգին, եթէ ոչ կարի ինն քաջազօր հանդիպեա-
ցի, և վասն արուեստիճ անձինն՝ ի բազմադէմ խնամս
ոչ վայելեսցէ դա։

Այլ՝ եթէ մարթ ինչ էր՝ մերկացեալ ի մարմնոյ
աստի, կամ եթէ և հանդերձ մարմնովք այդուիկ քաւա-
կան էիր յատակ և աներկիւղ բովանդակ զՀակատն նո-
րա՝ և զառ մեզ մարտ պատերազմին ակնյայտնի տեսա-
նել, տեսանէիր դու արդեօք ոչ ուղիս արեանց, և ոչ
մարմինս դիակնացեալս, այլ մահուընս հոգւոյ այնչափ,
և վէրս դժնդակս այնպիսի, մինչև ողջոյն գնկարագրու-
թիդ զայդ պատերազմի՝ զոր արդ իսկ ի դէմս ընծայե-
ցուցի քեզ, զբօսանս իմս համարեսցիս տղայոց ոմանց,
և խաղ առաւել՝ քան եթէ պատերազմ։ այնչափ բազ-
մաթիւք են վիրաւորք օրըստօրէ։

Այսպէս ոչ գնոյնօրինակ գործեն մահ։ այլ որչափ
ինչ ընդ մէջ և հոգւոյ և մարմնոյ, այնչափ և խոիրն
ընդ նա և ընդ սա։ Վասնզի յորժամ զվէրն առնու հո-
գին և տապալի, ոչ անզգայ անկեալ կայ իբրու զմար-
մինն. այլ աստէն իսկ տանջեալ ի չար խղճէ մտացն
մաշի. իսկ յորժամ յաստեացս վճարեսցի, ի դատաս-
տանին ժամանակի տանջանացն անմահից մատնեսցի։
Այսպէս եթէ ոք անցաւուեթիք կացցէ ի վէրսն՝ որ ի սա
տանայէ է, մեծ և տոյժ յանցաւուեթէ անտի առնեսցի նմա. քանզի զոր միանգամ առաջինն վէրն ոչնչնչ խա-
ծանէ, այնպիսին դիւրաւ և վերկրորդն, և յետ այնո-
րիկ և վերրորդն ընկալցի վէր։ Վասնզի մինչև ցշունչն
վերջին ոչ դադարէ չարն ի խոցելոյ, յորժամ յորսայս
անկեալ գտանէ զՀոգին և առաջնոցն արհամարհոտ
վիրաց։

Այսպէս եթէ և զեղանակ մարտի պատերազմին կամիս
ցիս քննել, կարի սաստիկ և գոցես զայս, և առաւել
խորամանկ։ Վասնզի չէք ոք՝ որ այնչափ ազգս դաւա-
նաց և նենգուեթէ գիտասցէ երբէք՝ որպէս չարդ այդ-
որով և մեծապէս զօրուեթիւն ստացեալ ունի. և ոչ ոք
դարձեալ այնչափ անհաշտ թշնամուեթէ ունել երբէք
կարօղ է առ կարի ոխերիմն իւր, իբրու ամենաչարդ
այդ դև առ քնուեթիւնս մարդկան։

Այսպա եթէ ոք և զձիգն ոգւոյն ի քնին առցէ՝ որով
զմարտն մղէ դա, արդեօք և ծաղրական ինչ իցէ ընդ

մարդկան ի կշիռ ձգել զնա ի մասինս յայսմիկ։ Իսկ եթէ ոք ի գաղանաց զասատիկ բարկացայտն և զամենահին ընտրեալ և որոշեալ՝ կամեսցի համեմատել ընդ մնջեղութեանէ դորա, կարի իմն հեզ և հանդարտ գտցէ զնոսա առ նորա համեմատութեան. այնչափ իմն գոռալի փորատէ դա՝ յորժամ ի վերայ վազէ հոգւոց մերոց։

Որ այս՝ և ժամանակ պատերազմիս՝ որ աստանօր է՝ կարձեալ է. և ի կարձութենէ անդ իւրում ունի և բազում գործ և դադար. քանզի և գիշերն ի վերայ հասեալ, և աշխատութենէ կոտորածին, և պահ կերակրոյն, և այլ ինչ բազում, զնաւորեցան հանգիստ տալ զօրսն կանխեն. որպէս զի և զպատահելնէութենէ իւր յանձնէն ի բաց մերկացեալ վայրիկ մի ոգի առնուցու, և կերակրով և ըմպելեաւ կազդուրեսցէ զնա՛ն, և այլովք բազմօք միաւանգամ ստասցի զոյժն առաջին։ Իսկ ի մարմի չարիս այսորիկ՝ չէ արժան երբէք զղէնսն ի բաց թողուլ, և ոչ դարձեալ քուն մի քունել արժան է այնմ՝ որ կամիցի միշտ անխոց մնալ։ Վասզի հարկ է զմին ընտրել առնուլ յերկուց աստի, կամ անկանել և կորնչել՝ ի մերկանալ զղէնսն, և կամ հանապազ սպառազինութեամբ կալ առ ետեղ և հսկել։ Վասզի նա զօրհանապազ արձանացեալ կայ հանդերձ իւրով ձակատուն, դիտելով զվտանգիս մեր, և առաւել քանահնար լինի ի կորուստ մեր, քան եթէ մեք ինքեանք ի փրկութենէ անձանց մերոց։ Իսկ քանզի ոչ տեսանի նա ի մէնջ և յեղակարծումն ժամու ի վերայ յարձակի, մեծապէս գողով բիւրուց պատճառք չարեաց, այս առաւել կեղակարծելի քան զպատերազմն զայն՝ զմարտս զայս երևեցուցանէ նոցա՝ որք ոչն հակիրճն հանապազ։

Որդ՝ աստանօր կամիլը դու զօրավար լինել մեզ զօրուն քոյ. սակայն այդ աստանայկն էր զօրավարութենէ. քանզի յորժամ որ զայսն պարտական է կարդել ձակատել և հանդերձել, ինքն քան զամենեսեան առաւել անհմուտ իցէ և տկարացեալ, անհմտութենէն առեալ մնանէ զհաւատացեալ իւր զօրն. և այնպէս յաւէտ իմն սատանայի զօրավարութենէ առնէ՝ քան եթէ քոյ։

Որ լո՞ դու յոգւոց հանես. զի՞ է քեզ արտասուելդ այդ. քանզի արգ իմքս ոչ եթէ ողբոց ինչ արժանիք ևն, այլ ցնծութենէ և ուրախութենէ։

ԲԱՍՍԻԼԻՈՍ.

Ա.յլ ո՛չ այնպէս են և իմքս, այլ բիւրուց կոծոց ար-
ժանաւորք։ Վ.անդի արդ հաղիւ ուրեմն կարացի գի-
տել՝ եթէ 'ի քանի՛ չարիս առեալ ձգեցեր զիս։ Ա.յս զի
ես վասն այնորիկ հասեալ եկի առ քեզ, որպէս զի օ-
սանիցիմ՝ եթէ զինչ երբեք բամբասողացդ քոց տաց
պատասխանի. իսկ դու այժմ արձակես զիս՝ հոգ իմն
այլ փոխանակ ընդ այլոց կարգելով յիմ վերայ։ Վ.ասն
զի արդ ո՛չ ևս փոյթ ինչ է ինձ՝ զինչ ինչ արդեօք վասն
քո, այլ եթէ զինչ վասն անձին իմոյ և իմոց չարեաց
տաց պատասխանի՞։ Սակայն զքեզ աղաչեմ և 'ի
քէն խնդրեմ ես, եթէ վասն իմոցս փոյթ ինչ իցէ
քեզ, եթէ միսիթարուե՛ ինչ իցէ 'ի քո, եթէ սիրտու-
թե՛ սիրոյ, եթէ գթուե՛ և ողորմութե՛, և քանզի դի-
տես իսկ եթէ առաւել քան զամենեսեան դու ինքն
յայդ վտանգդ արկեր զիս, կարկառեա՛ յիս զաջ քո՝ ա-
սելով և գործելով զայն ինչ՝ որ միանգամ բաւական ի-
ցէ՛ն յուղղութե՛ մեր։ Ա.յս մի՛ դարձեալ հանդարտեսցիս՝
և առ սուզ մի ժամանակ թողուլ քանե՛լ զմեզ. այլ և
այժմիկ առաւել քան զառաջինն հասարակաց եղիցի
քաղաքավարութե՛ս կենաց մերոց։

ՈՍԿԵԲԵՐԱՆ.

Իսկ ես առ այսոսիկ ժպտեալ՝ ասեմ.

Ա.յս զինչ արդեօք բաւական ինչ եղեց օգտել քեզ 'ի
բեւեռդ այդչափ գործոց։ Ա.յլ քանզի սիրելի է քեզ
այդ, քաջալերեա՛ց դու ո՛վ սիրեցեալդ գլուխ. քանզի
'ի ժամանակին՝ յորում յաջղեսցի քեզ ոգի առնուլ 'ի
հոգւոց այտի, մտից առ քեզ և միսիթարեցից զքեզ, և
իմովքանն ո՛չինչ պակաս արարից։

Ա.ռ այսոսիկ նա առաւել ևս արտասուեալ՝ յոտն է-
կաց։ Իսկ ես գիրկս արկեալ նմա և համբուրեալ զգ-
գլուխն, յուղարկեի զնա, և յորդոր տայի քաջաբար բե-
րել պատահելոցն՝ ասելով. Չաւատամ 'ի քո որ կա-
չեացն զքեզ, և հօտին իւրում վերակացու կարգեաց.
զի այնչափ իմն համարձակութե՛ս առցես դու 'ի սպասա-
ւորութե՛նդ այտի, որ և զմեզ ինքնին զվտանգեալս
յաւուրն յայնմիկ 'ի յաւիտենական խորհանն ժողովեա
ցես ընդ քեզ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՍ

Այս գիրք ընդարձակատարը և բազմահմուտ և Ճարտարաբան, որպէս երևի, չեղև հրապարակախօսեալ Յովսէբեանէ առ ժողովուրդն։ զի և ո՞ր համարեսցի երբէք՝ եթէ ՚ի մուտ նուագի վճռաբեալ ելոյծ նորա զայս։ և զի և ոչ ՚ի փառս ամենաշէն երրորդութեանն առարալ գիրս ըստ հրապարակախօս բանից տէրյս։ նա՛ զի և յընթացս առբա ուրեք ասէ, եթէ գէ՛ն ես զայսոսիկ։ Իսկ թէ բազում ուրեք ասասցէ նոր իբրև ընդ առաջակայս ոմանս խօսի ինքն, այն հաւատոյական արուեստին է սիպ, որով Ճոխանան բովանդակ այս տառք Յովսէբեանի։ և կամ թէ Թերևս յառաձգին ժողովս և առաջի բարեկամացն խօսեցեալ զայս։

Պատճառք գրոցս է Ճոխագոյն և պերճ նկարագրութիւք վկայասանութեանն Բաբելոյ հրապարակագրիւ նշաւակութիւն հելլենացւոցն և ամբարիշտ գնացից յուլիանոսի, և բարձր ՚ի գլուխ պանծացուցանել զքրիստոս հաւատոյ Ճշմարիտ յանդիմանութիւք։

Յաւելու Յովսէբեան յայս գիրս և զպատմութիւն արքայի ուրուհի։ Զոյն արքայ քրիստոնեայ համարելով Մօնֆօքօն, վայրապար՝ որպէս կարծեմ՝ յերկուանայ ընդ պատմութեին՝ իբրու այն որ ըստ համաւաղ ոճոյին յառաջ բերեալ ևցէ Յովսէբեանէ։ Ալ սակայն ուրեք երբեք քրիստոնեայ չասէ զնա Յովսէբեան։ Քանզի ՚ի ինդրելոյ արքային այնորիկ մտանել ՚ի տաճարն ոյ՝ յետ գործելոյ զեղեռն մանկապանութեանն և յընդդէմ գառնալ նմա որպէս Բաբելոյ, ոչինչ զհետ գայ քրիստոնէութեանն արքային, ապա թէ ոչ՝ և զանտիոքոս արդեօք պարտ էր երթայելի համարել, որ ինդրեր մտանել ՚ի տաճարն երուսաղէմ։ Ապա ըստ վկայաբանիցն՝ ինքն նուէրերիանոս կայսրն էր արքային, որուհի ոչ թողացոյց Բաբելոս մտանել յեկեղեցի ոյ։ յորմէ և նահատակեցաւն խակ։

Մասամբ ինչ գրոցս զինի Յովսէբեան քաշապէս եղծանել զմեներ գութեին լիբանոսի սուփեատէսին անտիոքայ՝ իբրուն երբեմն վարգապետ ՚ի հաւատոյութեէ, այն ինքն է՝ ուրէն նորա արձանական յաճախասաց հրկիզութիւն ապողնի։ Ժամանակ գրոցս է ամ տեառն իբրև 382։

(Տիպ Մօնֆօքօնի Հատ. ը. Թղթ. 536. որ բաղդատեալ է ընդ հինդ Յեռապիլս Յունականս)։

ՍՐԲՈՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՈՍԿԵՐԲԱՆԻ

ԳԻՐՔ

ՅԵՐԱՆԵԼԻՆ ԲԱՐԵԼԱՍ

ԵԻ ԸՆԴԴԵՄ ՅՈՒԼԻԱՆՈՍԻ ԵԻ ՀԵՂԵՆԱՑԻՈՑՆ

Յորժամ հանդերձեալ էր տէրն մեր յա՛քո ընդ-հուպ գալ՝ի յարչարանս, և զկենդանարարն մեռանել զմահ, ՚ի վերջնում՝ անդ գիշերին կոչեաց առանձինն զիւր զաշակերտան, բազումն իմն խօսեցաւ ընդ նոսա և խրատեաց, և հանդերձ այլովքն և այսպիսի ինչ ուրեք ասաց ցնոսա. * Ա՚մէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն ինս, զգործն՝ զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ. և մեծամեծս ևս քան զնոյնս գործեսցէ ‖. յովհ. ժդ. 12։ Ապայց արդ բազումք և այլք կացին վարդապետք և կալան զաշակերտս և յուցին աքանչելիս, ըստ որում մեծաբանս պանծան մանկունքդ հելլենացւոց. այլ սակայն և ո՛չ ոք ուրեք ՚ի նոցանէ երբեք այսպիսի ինչ ո՛չ ընդ միտս իւր անգամ ածէ և ո՛չ յանդգնեցաւ ասել երբէք։ Ա՚յլ և ո՛չ ոք ՚ի հելլենացւոց այտի, թէպէտ և կարի իսկ լրբեսցի, երբէք բաւական իցէ՝ նախաձայնուլթի կամ ինչ մի յայսպիսեացդ բանից ՚ի ներքս արկանել անձին զօրուք, այլ ուրուա կանս իմն վախճանելոց և մեռելոց ոմանց ստուերս՝ աւետն բազումք ՚ի դոցանէ՝ եթէ բազումք յուցանեն ՚ի հրաշագործս իւրեանց. ասել ասեն և ձայնս իմն ՚ի գերեզմանաց անտի հնչեալ առ ոմանս. իսկ թէ երբեք ոք ՚ի կենդանի մարդկանէդ և ՚ի հրաշալեացն առ դոսա, կամ զորս դոքա յետ վախճանին համարեցան աստուածս լինել, ասացեալ լինչ իցէ յայսպիսեացդ աստի

առ աշակերտս իւր, զայն ոչ ոք ի նոցանէ երբեք հաս
տատմնոյցանել ոչ ունի։

Իսկ զպատճառսն, եթէ ձեզ կամք իցեն, մերկացայց
յանդիման, առ ինչ արդեօք՝ որք զայն ամենայն ան
պատկառաբար և մերկ գլխով ստայօդեցին, ոչինչ այս
պիսի երբեք յանդգնեցան հնարել։ Վասն զի ոչ վայրա
պար և կամ անխորհուրդս ինչ հրաժարեցան ի հնարից
աստի. այլ զայն ինչ խորամանկութեք ծանեան ժամտա
քերքդ այդոքիկ, եթէ որում միանգամ խաբել կամք ի
ցեն, պէտք են այնպիսւոյն հաւանականս ինն յօգել
բանս և լի բազում ձարտարութեք, և որք դարձեալ ոչ
ինչ այնպէս հեշտընկալք իցեն ի խայտառակել։ Այլ
քանզի առ դժուարորսալիսն ի ձկանց և ի թռչնոց ստ
վերութիւն է ոչ մերկ առաջի ընծայել զկարթն, այլ
շուրջանակի ամենայն ուստեք խայծիւն ծածկել զնոսա
զդուշութեք, և այնպէս ապա յաջողիլ յորս երկաքան
չիւրոցն. ապա եթէ մերկապարանոց իցեն նոցա որո
գայթք որոշդացն, ոչ ձկունք երբեք և ոչ թռչունք
ցանցեացին ի վարս նոցա, մանաւանդ եթէ և ոչ առ
անգամ մի մերձեացին ի նոսա, այլ և առհասարակ եր
կաքանչիւր որսորդք ծովայինն և ցամաքայինն ունայնա
ձեռն դարձցին ի տունս իւրեանց։

Այս արդ՝ քանզի և սոցա ի մտի եդեալ էր Թակար
Թել զմարդիկ, ոչ մերկ ի ծով կենցաղոյս արկին զնա
քանսն, այլ յարմարեալ և յօգեալ զայն ինչ՝ որ բաւա
կան էր որսալ զանբանագոյնսն, ոչինչ Թոյլ եաուն
ստուԹէն անդր ևս յառաջադէմ խաղալ՝ զանգիտելոք
յառաւելազանցն կրից, և երկուցեալք՝ ղի մի Թերևս
անչափութեք վերջնոցդ և զառաջինսն գլխովին խանգա
րեացեն։ Օ ի եթէ երբեք ասացեալ էր նոցա, եթէ և
ի նոցայոցն ոք խոստացաւ ուրեք այնպիսի ինչ, զոր
փրկիչն մեր ասաց առ իւր աշակերտսն, նաև խաբեալքն
ի նոցանէ ծիծաղելին զնոքօք, իբրու զայնպիսեաք ո
մանիք՝ որք և ոչ հաւանականս ինչ երբեք բաւական ի
ցեն ստայօդել. քանզի այդպիսեացդ նախաձայնուԹի
և չչմարտուԹեք կատարումն՝ գործ է միայն երանելի
զօրուԹեանն այնմիկ։

Այլ պա եթէ և գնդդ զօրեցին երբեք ցնորս ինչ ե
րևեւցուցանել պատրելոցն առ ի նոցանէ, այլ այդ չայն

ժամ՝ յորժամ չև էր աղբիւրն լուսոյ ՚ի ծանօթութիւն
եկեալ բազմաց ։ Այլև յայնժամ նշուլակեցաւ զանն
յայլոց անտի խաբանացն, միանգամայն և ՚ի նոցուն իսկ
՚ի գլխիցն, եթէ արդարև դիւաց գործք էին եղեալքն ։
Վանգի հրամայել՝ զի արեամբք մարդկան թաթաւեա-
լին սեղանք իւրեանց, և պատուիրել՝ զի ՚ի նոցունց
իսկ ՚ի ծնողացն ընծայեսցին նուիրքդ այդոքիկ, այս
ըմբիմիք տառապանացուածք մուրհակունք չկոյ երբեք
վճռագոյն ։ Վանգի որք երբեք ոչ յագին յադէտս վշտաց
մերոց, և ծագ ինչ և սահման քնաւ չդիտեն մարտին
ընդդէմ մեր, այլ անմահական ինն գազանութիւք ցանգ
կատաղեալ են. իբրու այն թէ ոչինչ շատ իցէ ընուլ
զցանկուն նոցա զենուին կանանց և որդւոց ՚ի սեղանս
նոցա փոխան խաչին և արջառոյ, անլուր անիրաւութիւն
հնարեցան մարդասպանութիւք, և նորանշան աղէտից օ-
րինակ ՚ի ներքս արկին ։ Վանգի որոց պարտ էր ար-
տասուս հեղուլ յաղագս կոտորածի սպանեալցն, նոցունն
իսկ հաւանեցուցին ՚ի թշուառական յայն սպանդ պըղ-
ծութիւնն նուիրել զնոսա. և զի մի միայն ՚ի մարդկանէ
տուեալ օրինքդ պղծեսցին, նոքա և զընուէն սահմանսն
հինն ՚ի վեր տապալեցին. զնոյն ինքն զընութիւնն ընդ-
դէմ իւր զպրագինս յարդարեցին. և սպանդ իմն եղեռ-
նաւոր առաւել քան զամենայնն բերին մուծին ՚ի կեանս
մարդկան ։ Վանգի ոչ ոք այնուհետև ՚ի թշնամեաց
իւրոց այնպէս երկնչէր, որպէս ՚ի ծնողացն. և յորս ա-
ռաւել քան յամենեսեան վստահել պարտ էր, քան յա-
մենեցունց՝ ՚ի նոցանէ առաւել կասկածէին որդիքն և
՚ի բաց փախչէին ։ Վանգի անպզորոյնքդ այդոքիկ
գևք, յորոց ձեռն ածեալ էր զնոսա ՚ած ՚ի վայելս աշ-
խարհիս այսորիկ, ՚ի նոցուն ձեռն հնարէին կարձել
զնոսա ՚ի պարգևաց աստի. յորժամ որք միջնորդքն էին
կենաց, զնոսա գլխովին և մահու պատճառս յարդա-
րէին. իբրու այն թէ կամեցեալք իմն զայն ինչ ՚ի դէմն
ածել, եթէ ոչ առաւել ինչ նոքա ընկալեալ իցեն ՚ի
բարութենէն ՚ած. իբրև զի և ոչ օտարաց դահճաց պէտք
ինչ էին նոցա, այլ նոցունն իսկ ծնողացն ։

Այսոցիկ թէպէտ և ինչ մի ՚ի մեծաց աքանչելեաց
զհետ եկեալ էր, զի մի ասացից՝ եթէ և արդէն իսկ
քաջայայտ է՝ զի ՚ի դուզնաքէից ինչ է այն և յանար-

գայ և լի բաղում խաբէութիւք , այլ թէպէտ և մեծամեծք ինչ էին եղեալքն , ի վերայ այսը և բաւական էին քանզի իմ յայտնութիւք ցուցանել նոցա՝ որք ոչ կարի լինն ապշեալք իցեն ի մտաց իւրեանց , եթէ այք ոմանք իցեն արդեօք՝ որք զայդպիսիսդ գործեացեն . զնայրդ սիղձք և ամենապիղծք , և որք զամենայն հնարս մեքենայեն յերկնաւին կենաց և վիճակիս մերոյ :

ՃԻ . Այլ ոչ և տերն մեր յիս յայսպիսեացդ ինչ երբեք պատուիրեաց մեզ . այլ սքանչելի եղեալ ի ձեռն հրաշից , ի ձեռն վարդապետութեանն ոչնինչ պակաս քան զՀրաշան գլխովին , իրաւապէս արդեօք յամենեցունց երկրպադեսցի և հաւատասցի գոլ Աստ : Այանգի զգոյն անօրէնութիւն ինքն գալստեամբն իւրով երկայծ . և որ սքանչելին ևս է , զի ի վայրենի և յանագորոյն բնաւորութենէ անտի ոչ զմեզ միայն՝ որ նման երկիր պագանեմք՝ փրկեալ ազատեաց , այլ և զնոսա գլխովին՝ որք հայհոյենն զնա . քանզի և ոչ որ ի հելլենացւոց անտի այնուհետև հարկաւորեցաւ նուէրս այդպիսիս ձօնել դիւաց իւրեանց . զայդչափ մարդասիրութիւն միշտ ի վար արկ առ ազգս մեր . և քան զչարիսն՝ զոր գնքդ այդոքիկ ցուցին առ բարեկամս իւրեանց , մեծ ևս բարիս արար Աստ իւրոց թշնամեացն : Այանգի նոքա զորս պաշտէին զնոսա և պատուէին , զնոսին և բռնադատեցեն խողխողիչս լինել իւրեանց զաւակաց . իսկ քա զհակառակորդս իւր զերծ կացոյց ի պատուիրանաց աստի յայսցանէ . և զգաղանականիս այսորիկ ազատութիւն պաշտամանն և զքանչելիս զայս խաղաղութիւն ոչ ընտանեացն իւրոց միայն ետ , այլ և օտարացն պարգևեաց . յայտ արարեալ՝ եթէ բռնաւորք ոմանք են նոքա և ազգիս մերոյ թշնամիք և մահաւիճք . վասն որոյ և որք միանգամ մերձեցեալ ընտանիք լինէին նոցա ,նոքա զնոսա իբրև զօտարս ոմանս ի գործ վարէին . քանզի և էին իսկ արդարև օտարք : Իսկ Թագաւոր և արարչագործ և փրկիչ ամենայն ազգի մարդկան նա էր . ուստի և յօտարսն անդր իբրև յւրսն խնայեաց : Այանգի և իւր սեպհական գործ էր ամենայն բնութիւն մարդկան , ըստ որում և աշակերտն նորա ասէ . * Իւրսն եկն , և իւրքն զնա ոչ ընկալան ‖ . յովհ . ա . 11 :

Ա՛յլ զամենայն զնորա մարդասիրութիւնն գլխովին ՚ի համար բերել չէ այժմու ժամանակիս . նա թէպէտ և ընդ ամենայն յաւիտեանս պատմեսցէ ոք զնմանէ , թէպէտ և այնչափ ինչ զօրութիւն յանձին իւրում բարձեալ բերիցէ , որչափ ինչ ՚ի ձահ է անմարմնոցդ զօրութեանց , սակայն և ո՛չ այնպէս արժանապէս երբէք մերձեսցի ՚ի նա : Ա՛նգղ ինքն միայն գիտէ , եթէ քանիսո՛ն բարի է ցէ . որպէս զի և ինքն միայն է այնպէս բարի : Այլ արդ հայեաց դու , զի՛նչ բանս ասէ առ աշակերտս իւր . * Ա՛մէն ամէն ասեմ ձեզ , թէ որ հաւատայ ինձ , զգործսն՝ զոր ես գործեմ , և նա գործեսցէ . և մեծամեծս ևս քան զնոսա գործեսցէ ‖ . յով . ժդ . 12 : Ա՛նգղն և ո՛չ այն չափ պատուոյն արդեօք հաղորդս առնէր զնոսա , եթէ չէր նա կարի յոյժ և անսահման բարի :

Ա՛պա եթէ յերկուասցի ոք ընդ մեզ , եթէ ուրանօ՛ր առ զկատարումն պատգամդ այդ , ՚ի ձեռս իւր առցէ այնպիսին զգիրսն զայն , որ գործք կոչի առաքելոց . և ունկն գիրքդ այդ ո՛չ զամենայնն միանգամայն , այլ և ո՛չ զամենեցունն նոցա , այլ զմիոյ կամ զերկուցն՝ և այն չափաւոր , և տեսցէ ապա զխօթայեալսն՝ որք ՚ի մա հինձն իւրեանց անկեալ դնիցեն , և ստուերք միայն երանելեսցդ այդոցիկ շարժեալք ՚ի վերայ նոցա՝ և անդէն ՚ի քաջողջութիւն անդր հաստատեսցեն զնոսա . բազմաց և յայսահարաց անտի ո՛չինչ այլ իմիք պէտք էին՝ բայց հանդերձիցն պաւղոսի ՚ի հալածել զդևն՝ որ լևկերն զնոսա :

Ա՛պա եթէ ոք մեծաբանս իմն անոտեաց ասասցէ լինել զայդոսիկ , և մոռացածին նորանշանս անհաւատալիս , բաւական են այնոքիկ՝ որք և այժմ երևին՝ խնուլ զհայհոյիչ բերանն և յամօթ առնել , և զապերասան զլեզուն սանձակոծել : Ա՛նգղն չէք վայր ՚ի տիեզերս մեր , և ո՛չ ազգ , և ո՛չ քաղաք , ուր ո՛չ համքաւեսցին այս արուեստք հրաշից . որ և արդեօք չէին ինչ զարմանալիք , եթէ երբէք մոռացածինք էին . և զվկայուածն բանիս այսորիկ դուք ինքնին բաւական եք տալ մեզ : Ա՛նգղն և ո՛չ յայլոց անտի պէտք ինչ իցեն այնու հետև հաւատարմութեան բանիդ մերոց , յորժամ դուք ինքնին թշնամիք մեր ընծայեսջիք մեզ զդոյն :

Ա՛նգղն առ ի՞նչ ապա , ասա՛ դու ցիս , զգրադաշտն

զայն և զղամիլքսիս (*) և ոչ յանուանէ անգամ ծա-
նեան բազումք. մանաւանդ եթէ և նուազունք ոմանք
գիտային զդոսա: Վասնզի ոչ զի մնացածին էին ամե-
նայնքն՝ որ պատմին զնոցանէ, թէպէտ և առհասարակ
նուքա՝ և սուքա որ զայդոսիկ յօդեցին, մեծամեծք ոմանք
պատմին լինել, նուքա՝ ի գիւտս և չարարս կախարդու-
թե, և սուքա՝ յառաջաստել զտուութին ի պաճուճանս
բանից: Սակայն ամենայնն ի զուր է և ի նանիր, յոր-
ժամ ինքնին հիմն բանիցն խարխուլ իցէ և սուտ. ըստ
որում և յորժամ զօրաւոր է և ճշմարիտ, դարձեալ ի
զուր և ի նանիր է ամենայնն, զոր միանգամ մեկնե-
նայեն թշնամիք ի տապալել զնա. քանզի ոչնչ իմիք
օժանդակութե պէտք են ճշմարտութեն զօրութե. այլ
թէպէտ և բիւրք ոմանք իցեն՝ որ շինօղ ոչիցեն զնա,
ոչ միայն չքանայ ոչ, այլ և զուարթագոյն ևս փայլէ
և բարձրագոյնս ի ձեռն ձգանց թշնամեացն իւրոց,
նա և ծիծաղի ևս զնոքօք՝ իբրու զնաւաստակ մոլե-
լովքն:

Վասնզի զմերայինն զայնոսիկ՝ զորս մնացածինս ա-
սէք լինել, առհասարակ և բնաւորք և թագաւորք և
սոփեստ՝ սք անպարտելիք ի բանս, դարձեալ և փիլի-
սոփոսք և կախարդք և մոգք և գիւք ինքնին ձգնեցան
տապալել, * և տկարացան ի նոսա լեզուք նոցա (ըստ
մարգարէական բանին,) և նետք տղայոց եղեն վէրք նո-
ցա ‖ . աղ . կԶ . 8 : Վասնզի թագաւորք ի դարանաց ան-
տի իւրեանց՝ զոր ընդդէմ լարեցին՝ զայն ինչ ևեթ շա-
հեցան, զի գազանականին վիճակեալք հոգւոյ կարծե-
ցան նուքա յամենեցունց. քանզի առ սրամտութե իւր-
եանց ընդդէմ վկայիչն, ի հասարակաց մեր բնութիս
վայրենացան անողորմ, և անխորհուրդ տեսութե ընդ
բիւրսւք թշնամանօք արկին զանձինս իւրեանց: Նոյնպէս
փիլիսոփոսք և հռետորք քաջք, որք զգեղեցիկ համ
բաւն ունէին առ բազումս՝ կէսք զհամեստութեան կե-
նացն, և կէսք դարձեալ՝ զձարտարախօսութե, յետ
մեռելոց ընդդէմ մեր մարտին՝ ծիծաղելիք ոմանք երևե-
ցան, և գլխովին ոչնչ աւելի համարեցան լինել քան

(*) Զրադաշտ՝ մոգական արուեստին գտօղ, որ ի նմին իսկ աւուր՝ յորում ծնաւ՝ ասի թէ ծիծաղեցաւ: Զամբլքսիս՝ աշակերտ պիւթա-
գորայ, որ հռոմոս համարեցաւ ի թրակացւոցն:

զմանկունս չուզակրաստ : Ա՛նդրէ յայնչափ ազգայ և ժողովրդոց ո՛չ զնմաստուն ոք և ո՛չ զանխմաստ , ո՛չ զպայր և ո՛չ զկին , նաև ո՛չ զմի ոք ի մանրիկ մանկաւարն ո՛չ զբերելն երբէք նոքա զԹեսալոնեցի . այլ այնչափ է ծաղրն՝ որ զնոցունն գրոյն է , որպէս զի և ի վարդնջուց իսկ հեաեղ բնաջինջ եղեն բազում մնաեանք նոցա , և բազումք ևս երևեալք ի մէջ՝ ի նոյն և անհետացան : Ա՛պա եԹէ ուրեք և ինչ ի ի նոցանէն գտանիցի ասրեալ , առ քրիստոնեայս գոյէ ոք պահեալ զայդ . նա աւանիկ և ո՛չ յաղագս տուժի ինչ անձանց կասկածեմք մեք երբէք ի դարանաց անտի նոցա . այնպէս իմն կատակելով ծիւ ծաղիմք ընդ բազմահնար մեքենայս նոցա :

Ա՛նդրէ և ո՛չ եԹէ մեր ագամանդեայ էին մարմինքն և անապականք , երբէք էր մեզ զանդիտել ի կարձաց և յօձից և ի սնդեղոց գՀուր ի ձեռս մեր . նա առաւել և պատուասիրեաք ցուցանել զնոյն . ապա և ո՛չ զԹշնամեացն առ մեզ ունելով մեր զԹոյնան՝ զանդիտես ցուք մեք ինչ . քանզի հոգիս իմն այնպիսի և հաւատս զնոյն օրինակ հանդերձեաց մեզ քո : Օ՛ի եԹէ ի վերայ օձից հրամայեցաւ մեզ գնալ և ի կարձաց՝ և ի վերայ առիծայն բռնութԹէ սատանայիկն , քանիօն ապա առաւել ի վերայ որդանց և ճճեաց . քանզի այնչափ է խտիրն ընդ տոյժն նոցա և ընդ դարանակալութԹէ չար արուեստ դիւին այնորիկ :

Ե՛ . Վերջս ահա այսպիսի ինչ են . իսկ ընդ ձերսն ո՛չ ոք ուրեք մարտ եդեալ կռուեցաւ երբէք : Ա՛նդրէ և չէ իսկ օրէն քրիստոնէից ի հարկէ և բռնութԹէ տալ պատերազմելոցն . այլ համոզակեր քանիւ և բանիւ և հեզութԹէ յարդարել զիերկութԹէ մարդկան : Ասաի և ո՛չ ոք ի Թագաւորաց՝ որ քեզին հպատակ կացին վարդապետութԹէ , այնպիսի ինչ երբէք օրինադրեաց ընդդէմ ձեր , որպէս ընդդէմ մեր հնաբերեան նոքա՝ որք զգիւտն պաշտէին : Ա՛յլ սակայն և յայնչափ յանդորրու վայելեալ հեղինակացոդ նորակերտն մոլորութԹէ , և ո՛չ յումեքէ երբէք խռովեալ , անձամբ անձին շիջաւ և ինքն յիւր վերայ հոսեցաւ . հանդոյն մարմնոյն՝ որք բազմաժամանակեայ մաշարայականին ախտիւ ջեռնուցան , և ո՛չ ուրուք մեղուցեալ նոցա երբէք՝ նոքա ինք-

նին յապականութիւն դարձցին, և տակաւ տակաւ լու ծեալք գլխովին քարձցին Ի միջոյ։

Արդ Թէպէտ և ոչ իսպառ սատանայականդ այդ ծաղր ընդհատեալ լերկրէ. սակայն արդէն իսկ կատարեալդ՝ քաւական էն և յաղագս հանդերձելոցն հաւատարմա ցուցանել ձեզ։ Ո՛ի եթէ առաւելագոյն մնանդ յայդ չափ սուղ ժամանակի Ի վայր հոսեցաւ, յաղագս միա ցելոցն ոչ ոք Թերևս այսուհետև Ի պայքար մնանիցէ երբէք։ Վանզի և ոչ յորժամ առեալ իցէ քաղաքն, և տապալեալ պատուարքն և դիւանքն և տեսարանքն, և հրկիզեալ Ձեմարանքն, և ամենայն մարդ հասակաչափ կոտորեալ, և տեսանիցէ ոք սրահս իմն կիսայրեացս և սակաւուց տանց մնասունս սպրեալս հանդերձ պառա ւամբք ոմամբք և մանկտեաւն, յերկուասցի երբէք Ի միտս իւր Ի վերայ յաղթականին՝ որ առաւելագոյն մա սամբ զերան վՁարեալ իցէ, եթէ գուցէ տկարասցի և զինացեալսն գլխովին Ի գլուխ տանել։

Այլ ոչ այսպէս են և ձկնորսացդ (*) իրք, այլ օր ըստօրէ գնալով գնան և ծաղկին. և այն՝ ոչ յանդո րուռ երբէք վայելեալ և Ի խաղաղութեՁ՝ եկին հասին մինչև յամն կենաց մերոց, այլ Ի վիշտս տագնապեալք և Ի պատերազմունս և Ի մարտս։ Վանզի հեԹանո սութենէն իբրև ամենայն ուրեք ձգեցաւ ընդ տիեզերս և դիմեալ կալաւ զՀոգիս ամենայն մարդկան, սակայն և այնպէս Ի վերջոյ ուրեմն յետ այնչափ կորովութենն և զարգանալոյ՝ անկեալ լուծաւ Ի գօրութենէն քո՛ի. իսկ քարոզուԹիս մեր ոչ յորժամ ամենայն ուրեք տարածեալ հաստատութեՁ կայր յականտանի՝ յայնժամ սկսաւ նա ունել զՁնամին, այլ մինչչև քևեռեալ և մինչչև ար մատացեալ Ի հոգիս ունկնդրացն՝ անդստին Ի նախա դրանց իւրոց ստիպեր Ձակատ յարդարել ընդդէմ ամե նայն տիեզերաց, * ընդ իշխանութիս և ընդ պետութիս և ընդ աշխարհակալս խաւարի յաւիտենիս այսորիկ, ընդ այսս չարութեան ‖. եփ. ՚Ձ. 12. քանզի չև էր քաջ վառեալ կայծակն հաւատոյ, և գետք և անդունդք հորդան տային յամենայն կողմանց։ Իսկ և դուք ինքնին գիտէք՝ եթէ ոչ նման Ի խլել զտունկն զայն՝ որ Ի հա

(*) Ա. յսինքն առաքելոցն։

ըռւստ ամաց արմատացեալ էին, դարձեալ և զայն՝ որ այն ինչ յերկրի մնկեալ էին։

Ա՛յլ այսոցիկ այսպէս եղելոց, զկայծակին զայն բարեպաշտուԹԻՆ՝ որպէս ասացի՝ մինչդեռ տակաւին դուզնա քեսպ էր, հակառակորդացն ողողեցին անդունդք. սա կայն և նա ո՛չ միայն չիջանէր ո՛չ, այլ և առատանայր ևս և զուարԹանայր առաւել, և ընԹանայր ունէր վաղվաղակի զամենայն զվայրս. զԹնամեացն քանդէր աւերէր և հեշտեաւ ծախէր. իսկ զիւրսն կանգնէր հաստատէր և յանպատմելին բարձրուի առեալ՝ ի վեր հանէր. ԹԷպէտ և արք էին տառապեալք և անշնանք՝ որք պաշտէինն զնա։ Ա՛նգղի չէին իսկ իրքդ ձկնորսացդ այդոցիկ, և ո՛չ քանից նոցա, և ո՛չ դարձեալ սքան չելեացն, այլ որ ՚ի նոսա ներգործէր՝ զօրուԹեանն քեզի։

Ա՛նգղի ՚ի նոցանէ՝ որ զայդ գործէին՝ ոմն խորհնական էր, որպէս պատմէս. և ոմն՝ ձկնորս, ըստ որում պետրոս. իսկ այնչափ տառապելոցն արանց և խոնարհ հայ երբեք ՚ի միտս չանկանէր հնարել յօդել յայդպիսի սեաց ինչ։ բայց ԹԷ մոլեգնեալս և խելայեղս ասասցէ ոք լինել զնոսա։ Իսկ զի չէին ինչ նոքա մոլեգնեալք, այն յայտ իսկ է յայնցանէ՝ զոր ասացին և կատարեցին. դարձեալ և ՚ի նոցանէ՝ որք և մինչև ցայժմ հալատակեն նոցա։ Ա՛պա ո՛չ այնպիսի ինչ ստայօդեցին նոքա, և ո՛չ դարձեալ վայրապար փառս որսացան անձանց իւրեանց. քանզի որպէս ՚ի սկզբան անդ ասէի, եԹԷ՝ որ միանգամ խաբէբն կամիցի, ապաքէն և ստեսցէ. սակայն և ո՛չ այնպէս ստէ, զի և առ ամենեսեան խայտառակեալ նշաւակեսցի։

Օ՛ի եԹԷ յետ այնորիկ՝ յորժամ իրքդ այդ պատահեցին, և այնչափ բազում վկայք կացին յաղագս կատարմանն իրացն, եԹԷ՝ որք միանգամ հաւատացինն առ այնու ժամանակաք, և եԹԷ՝ դարձեալ՝ որք ասպա ընդ ամենայն տեղիս համբաւեցին զայսոսիկ՝ ո՛չ առ մեզ միայն, այլ և առ բարբարոսս և առ որս քան զնոսա առաւել գազանայինք, ՚ի վերայ այսր իցեն և ոմանք՝ որք յետ այնչափ նշանացն, և որպէս բանիս կարդ է ասել՝ յետ վըկայուԹԵ առհասարակ ամենայն տիեզերաց՝ անհաւատք լինիցին եղելոցն, և բազումք ևս այնպէս առանց հե-

տագոտելոյ և անքննաբար, ո՞ոք ապա արդեօք անդ ի սկզբանն՝ եթէ ոչ գործս ինչ տեսանէր լեալ և ոչ վըկայութիւն իմն արժանահաւատ ունէր զայդոցիկ, երբեք զդոյն հաւատս ընդունէր ի միտս իւր։

Իսկ զինչ ապա գլխովին և ած ձգեաց զնոսա յօդել և հնարել այդպիսի ինչ։ Վասնզի ոչ զօրաւորք ինչ էին ի բանս, այն յայտ իսկ է, զի մինդ յերկուց այտի և ոչ դարուներ երբեք գիտեր ամենևին։ Այլ ոչ դարձեալ ի հարստութիւնս ինչ գոյից վստահացեալք էին. քանզի հազիւ ուրեմն և զկարկառոր պարէնն պատրաստէին անձանց, և յարհեստ ձեռաց իւրեանց կէին երկաքան չիւր դաքա. նաև ոչ ի պայծառութիւն տոհմին մարթ ինչ էր ձոխանալ նոցա. քանզի զմիոյն և ոչ զկայրն գիտեմք՝ եթէ ում ոք էր. այնպէս յանշանից ոք էր նա և յանծանօթից. իսկ պետրոսին յայտնի է մեզ հայրն. ո րով և այսչափ ինչ միայն աւելի ունի սա քան զմիւսն զայն, զի գյորջորջուն հօրն միայն ծանօթ մեզ գործեցին զիրք. և զայն՝ ի պատճառս որդւոյն։ Այսպա եթէ ոք և զգաւառն կամիցի քննել և զաղգն, զմին գտցէ կիւլիկեցի, իսկ զմիսն՝ աննշան քաղաքի քաղաքացի. մանաւանդ եթէ և ոչ քաղաքի, այլ յեփին գեղջ. քանզի ի բեթսայիդայ՝ որ չէն է գալիլեայ այսպէս յորջորջեալ, անտի էր երանելին այն։ Իսկ եթէ ոք և զարհեստն նոցա լսիցէ, տեսցէ՝ զի ոչ մեծ ինչ էին այդոքիկ և ոչ փառաւորք. քանզի թէ քան զձկնորսն պատուականն ի ցէ արդեօք խորանակարն, սակայն անարգ է քան զայլ արուեստաւորսն։

Այսպա ուստի՞, ասա դու ցիս, ոՀաստ ուստեք արդեօք յանդգնեցան դոքա զայդչափ գործդ կեղծաւորել. յինչ՞ չայս քաջալերեցան. յինչ արդեօք վստահք եղեն. թերևս յեղիգնն և ի կաթն, եթէ ի կտրոցն և ի շաղափն։ Ոչ ահա ի մեկնել ձեր աստի դուք ինքնին հեղձուցանիցէք զանձինս ձեր և կամ գահավիժ ձգիցէք, որք զայդչափ անմտութիւդ մոլիք։

Ճ. Այլ դիցուք մեք, եթէ ձեզ կամք իցեն, եթէ անհնարինդ այդ ըստ ձեզ հնարաւոր լեալ իցէ, և այլ մի ի ծուխակէ անտի ի վեր ելեալ՝ բարբառեսցի ուրեմն, եթէ ստուեր մարմնոյ իմոյ մեռեալս յարոյց. իսկ

անդուստ և միւս ոմն ՚ի դուրս ելեալ ՚ի կրպակէ անտի մաշկեղինացն խորանակարութեանէ, ՚ի դոյն իսկ յայդոսիկ անձնասպարծ եղելոյն վասն իւրոցն հանդերձից. ո՞ զի այնպէս խելագարեալ էիր յունկնդրացդ անտի, որպէս զի և մերկ քանիցդ այդոցիկ անդէն հաւատս ընծայեցեր յաղագս այդպիսի գործոց։ Իսկ ընդէր ապա և ո՛չ զի այր յարուեստագիտաց անտի՝ որ զայնու էին ժամանակաւ՝ երբէք յայդպիսեաց լինէր ո՛չ ասաց վասն անձին իւրոյ, և կամ այլ զի վասն նորա։

Ա՛ա եթէ մնացածին լինէր էին մերքն, ՚ի դէպ էր արդեօք որոց լետ նոցա էին, հեշտեաւ և ստայօդել յայդպիսեաց լինէր։ Վասնզի որ առաջինքն էին՝ ո՛չինչ ունէին յայլոց անտի յառաջնոյ բերեալ յայսպիսիս՝ յոյս ունել ՚ի գլուխ տանել զստուերն. իսկ վերջինքդ հայեցեալ ՚ի նոսա՝ առաւել և ևս խոստիւր միէին արդեօք ՚ի բանս մնացածինս. քանզի առաջնոցն օրինակ քաջալերէր զվերջինսն վստահ լինել. որպէս այն թէ չիցէ զի ՚ի վերոյ երկրի՝ որ միտս ունիցի, այլ առհասարակ ամենեքեան ասպետալք էիցեն և ՚ի մոլուտին դարձեալք. և միանգամայն ամենեցուն օրէն էիցէ, որ զինչ և միանգամ կամեսցին՝ ասել վասն անձանց իւրեանց, և ձգել հաւանեցուցանել զայլս։ Ը աղիաղփուտիք արդարև այդոքիկ և ծաղր, և հելլենականին մերոսութիւն բանք։

Վասնզի զորօրինակ եթէ զի թեկն ածիցէ ընդդէմ երկնից քարշել զաղեղն, որպէս եթէ հարկանել զնա նետիւք իւրովք, և կամ հանել ջուր յովկիանոսէ՝ իբրու այն թէ դատարկել զնա ձեռօք իւրովք, ո՛չ զի թերևս իցէ ՚ի զգաստից անտի՝ որ ո՛չ ծիծաղեսցի զնովաւ. իսկ որք կատարելագոյնքն իցեն՝ նոքա և արտասուօք բազմօք արտասուեսցեն զնա. զնոյն օրինակ ապա և յորժամ հակառակ մեզ ամբառնան հելլենասիրքդ, լաւ է ծիծաղել զնոքօք, այլ և արտասուել ևս. իբրև զի և զառաւել դժուարաքիրան բանէ բուռն հարկանեն զոքա քան զնոս՝ որ զերկինս յուսոյ խոցել և կամ զանդունդս ցամաքեցուցանել։ Վասնզի և ո՛չ արդեօք լայտ խաւար եղելոյ երբէք, ցորքան լոյս իցէ. և ո՛չ դարձեալ որ ՚ի մեզն ձշմարտութիւն գործոյ ազարաեսցի երբէք, քանզի ձշմարտութիւն է. իսկ քան զձշմարտութիւնն չիք ինչ զօրաւորագոյն։

Ա՛պա զայն ինչ մեզ խոստովան լինիցի ամենայն անձն ողջամիտ և զգաստ, եթէ առաջինքդ այդոքիկ՝ զոր ՚ի լոյս գիտեմք մեք, մեզ ո՛չինչ պակաս հաւատալիք են քան զայժմուդ և քան զտեսեալդ. այլ որպէս զի և լիաձեռն ևս տարցուք մեք զյաղթութիւդ, կամիմ և նոքանշան ինչ ասել՝ որ առ մերովս կատարեցաւ ժամանակաւ։ Սակայն և մի՛ ինչ խոովեսջիք դուք, եթէ խոստացեալ իմ պատմել զայն ինչ՝ որ առ մեօք եղև, դարձեալ միւսանգամ՚ի վաղեմի պատմութիւէ սկիզբն առից ցուցանել զպատմութիւս. քանզի ո՛չ ՚ի նոսա միայն զտեղի կալայց. և ո՛չ դարձեալ ՚ի հնոցն օտարս ինչ պատմեցից այժմու առաջադրուես. քանզի երկաքանչիւրքն կապեալ են ընդ իրեարս, և չէ արժան քակել զկարգառուածն դոցա. որպէս և դուք ինքնին՝ յորժամ լսօղ լինիջիք իրացն՝ քաջութիւք ՚ի վերայ կայցեք։

Ե. Ա՛ր այր Թագաւոր (*) առ մերովքն նախնեօք. իսկ զայն ամենայն՝ եթէ ո՛րպիսի ինչ էր այս Թագաւոր, ասել ո՛չ ունիմ. սակայն լուեալ ձեր զեղեռն՝ յոր յանդգնեցաւ դա, գիտասջիք դուք և զամենայնի բռվանդակ բարուց դորա։ Իսկ զինչ ապա եղեռն իցէ. Հաձոյ Թուեցաւ ազգին այնմիկ՝ որ մարտ պատերազմի յարդարեր ընդդէմ արքային այսորիկ, լուծանել զպատերազմն, և մի՛ զմիմեանս կոտորել, և մի՛ ևս այնուհետև այր ընդ ընկերի իւրում ընդհարկանել. այլ ՚ի բաց կալ ՚ի գործոց այսի և ՚ի վտանգացն և յահէ երկիւղին. շատանալ յիւրաքանչիւր կալուածս, և մի՛ աւելի ինչ քան զգոյն խնդրել. իբրև զի լաւ ևս իցէ անահ վայելել ՚ի չափաւորսն, քան եթէ յառաւելս գոյնսն բերանաբաց լինել և զանգիտել և գողալ հանապազ. և զի՝ որք չարիս հասուցանեն այլոց, անշուշտ և յայլոց անտի գտանեն զնոյն։

Ա՛պա իբրև սահմանեցին դադարեցուցանել զմարտն, և կեանս իւն վարել անդորրականս, հաձոյ Թուեցաւ նոցա հաստատուն ուխտիւ և աներկեւան սահմանօք պնդել զնաղաղութիւնն զայն։ Ա՛ւ կուեալք գաշինս, և

(*) ՚Ի միում յոյն ձեռագրի հանդիպ բառիս Թագաւոր, նշանակի ՚ի քաւանայս՝ նոմոփիռոս։

առեալք զերդումն և տուեալք, ի վերայ այնր և գումն զարծեն հաւանեցուցանել արքային իւրեանց՝ զի զորդին իւր մանկիկ փոքրիկ վասն հաստատութեանն խաղաղանե տուեալ ի պատանդ նոցա՝ որ յառաջն թշնամիքն էին իւրեանց, վասն զի արասցէ զնոսա՝ միանգամայն և վկայութեանն ի ներքս ընծայեցուսցէ իւրոյ խորհրդոյն, եթէ առանց խաբանայ խաղաղութեանն արար ընդ նոսա։

Նա նոցա զայսոսիկ խօսեցեալ, հաւանեցուցան զնա. և տայ ապա արքայն զորդեակն իւր, որպէս [illegible] կարծէր, ի ձեռս բարեկամացն և նիզակակցաց [illegible] կայն որպէս ելք իրացն ի դէմս բերին, եւ զնա ի ձեռս գազանի՝ որ անագորոյն էս իցէ քան զբնաւս։ Վասնզի իբրև ըստ օրինաց բարեկամութեանն և գաշանացն առ ընկալաւ նա յինքն զմանուկն զայն արքունի, յայնժամ զամենայնն միանգամայն առաքեաւ հար և տապալեաց, զերդմունսն, զդաշինսն, զառ միմեանս զամենեցն, զառ Աստ զբարեպաշտութեանն, զդուէթ հաստակին։ Այլ մատաղութեանն սիրոյն զգազանն զայն նուաճեաց, և ոչ վրէժխնդրութեանն սպառնացեալ այսպիսեաց եղելոցն՝ երբէք զվերագն զայն ահացոյց. և ոչ դարձեալ բանք հօրն՝ որ զմանուկն իւր աւանդեաց՝ ի միտս ինչ անկան նորա, զոր նա յորժամ ի ձեռս գնէր նորա՝ արգահատեր արգելօք և աղաչէր, զի առատապէս խնամով խնամեսցէ զնա, հայր զնա ինքն յորջորջելով իբրում զաւակի. և որպէս այն թէ՝ ի նմանէ խակ ծնեալ իցէ, այնպէս յաղերս անկանէր նմա մտուցանել զնա և դաստիարակել, և նախնեացն իւրոց աղնուականութեանն արժանի յարդարել զնա։ Նա յետ այսոցիկ ապա քաշնից՝ զաջ մանկանն իւրոյ առեալ սկսեաց յաջ մարդա խոչոչ վերագին, և ապա ուրեմն արտասուալից դնաց մեհենեցաւ։

Այնինչ յայսպիսեաց աստի եղեռնաւորն այն ոչ ած ընդ միտս իւր. այլ զամենայնն համամտամայն ի բաց վանեալ ի հոգւոյ իւրմէ, միսի ի սպանութենն յայն՝ որ անագորոյն էս է քան զամենայն սպանութիւն։ Վասնզի այս եղեռն գժնդակագոյն էս է քան զորդեսպանութիւնն գէլեովին. և վկայս զձեզ ինքնին կոչեմ բանիս. որ զի՝ եթէ արժան ինչ իցէ յիմոյս կրից չափել և գձերն, ոչ այնչափ ցաւէր ձեզ, եթէ միանգամ լուեալ էր ձեր՝

Թէ նա զիւրականն խողխողեաց որդի. քանզի յայնժամ ընդ հասարակաց օրինացն՝ և քնուէն սահմանք երևէին հինն ի վեր տապալեալ. իսկ աստանօր բազում ինչ միանգամայն զուգահեռք եղեն, որք և քան զնոսկան հարիդ զօրաւորագոյն և իցեն առ բազմութեն իւրեանց։

Վ՚անգի յորժամ զմտաւ ածեմ զաղայն զայն՝ որ ո՛չ ինչ էր անիրաւեալ, աւանդեալ ի ծնողին, տարագիր յարքունեաց իւրոցն նախնեաց, և զընտանի զգրգանան և զխառան և զսատիւն փոխեալ ընդ օտարութեանն անդեան, որպէս զի մարթասցի վստահ լինել ընդ ելեւմտուրն ընդ այն վասն դաշանցն կռելոց. իսկ յետ այնորիկ ի նմանէ Թողեալ լքեալ զնա, որ ի պատճառս նորա տարաշխարհիկ լեալ էր ի հայրենի ձոխութէն, և ի վերջ ուրեմն խողխողեալ և ի նմանէ, կիրս ինն կրեմ ես ներհականս. հաշիմ մնշիմ ի հոգի իմ՝ միանգամայն և վառիմ բորբոքիմ. մին բարկութէ գործէ, և միւսն տխրութիւն։

Օ՚ի իբրև զմտաւ ածեմ զժանտաժուռն զայն զինու վառեալ, և զսուրն ձգեալ, և զպարանոցէ մանկանն կալեալ, և զաջն զայն՝ յորում զաւանդ զայդ ընկալաւ՝ զնոյն ի պարանոց անդր տղայոյն միեալ հանդերձ սրովն, պայթիմ և ի սրտմտութէս հեղձնում։ Իսկ յորժամ դարձեալ տեսանեմ զպատանեակն զայն երկուցեալ և զդողանի հարեալ, և մեծակական վայիւք ձիչ բարձեալ, որ զՀայրն յօգնութէն կոչեսցէ, և այսոցիկ պատճառք զնա ինքն ասասցէ լինել. և զսպանդն ո՛չ նմա համարեսցի՝ որ զսուրն ի փող անդր նորա միեսցէ, այլ ծնողն իւրում. դարձեալ և զնա՝ որ ո՛չ խուսել ուրեք բանական իցէ և ո՛չ վրէժխնդիր լինել վասն անձին իւրոյ, այլ ի նանիր այնուհետև ծնողին իւրում մեզադիր լիցի. և առեալ զվերն, և տապալեալ դողդոջասցի, և ի կիցս ոտին զգետինն դոփեսցէ, և յառուս արեան երկիրն գունեսցի, գելոյն յիս ազիք, և խաւարին խորհուրդք, և մառախուղ տրտմութէ իջեալ շուրջ մնծնու զարտևանամբք իմովք։ Վ՚յլ ո՛չ և գազանն այն կրեաց ինչ յայսպիսեաց ասաւ. այլ որպէս եթէ գառն ի հանդերձեալ էր ինքն զենուլ կամ որթ մի, այնպէս հայեր նա ի սպանդն անօրինութեան։

Վ՚րդ մանուկն առեալ զհարուածն՝ մնհոս տարա-

ձեալ կայր. իսկ մարդախոշոյն պաշտպան կայր իւրում ապիրատութեն, և վերջնովքն զառաջինսդ գուն գորձէր առագաստել։ Գուցէ կարծեսցէ ոք այսպէս՝ եթէ ինչ ի յաղագս Թագմանն հանդերձիմ ես խօսել. նա աւանիկ չէտ խոպխոպելոյն և ոչ չափ ի հողոյ էտ սպառնելոյն այսմիկ։ Ա.յլ ես այլ ինչ ասացից ձեզ, որ յանդգնագոյն և իցէ քան զդոյն. քանզի յորժամ ա րեամբդ այդուիկ պղծեաց զանօրէնն զձեռան, և եղեր երգումն իւն նորանշան ի մէջ ընծայեցոյց, որպէս այն եթէ ոչինչ աւելնէին յանդգնեալ իցէ անպատկառն և խոտագոյնն քան զվէմ, եւ յեկեղեցի՞ այ։

Այս թերևս իցեն ոմանք՝ որ զարմասցին, եթէ զիարդ որ յայսոսիկ յանդգնեցաւ՝ ոչ հարաւ երկնասաստ հարուածոյն, կամ զիարդ ամ ի վերուստ անտի ոչ խաղաղ գոյց շանթ մի ի վերայ նորա, և մինչև մեռեալ նորա՝ ոչ բոցակիզեաց կայծակամբ զանպատկառ զդէմն նորա։ Իսկ ես զորս միանգամայն զդոյն խորհուրդ յղացայն ի միտս ի բերանց, գովեմ զնոսա և սքանչանամ ընդ բոլ բոքումն գոյա. սակայն և այնպէս համարիմ՝ եթէ ոչ դուշաքեայ ինչ պակաս է նոցա ի փառաց անտի և ի գովութեանց նոցա։ Վասնզի արդեօք զարժանահաս զղջմունութեն սրտմտեցան գոքա առհասարակ ի պատճառս անպարտական սպանումն մանկանն, միանգամայն և յաղագս օրինացն այ՝ զոր այդչափ անպատկառաբար պղծեաց դա. այլ սակայն վառեալք ի սրտմտութեն, ոչինչ գիտացին՝ որչափ արժան էր գիտել. քանզի արդարոյն այնորիկ այլ ինն օրէնք կարի բարձրագոյն քնաւ կէ յերկինս։

Որ ապա իցէն այդ օրէնք։ Վերացելոյն ոչ անգէն առ նմին զպատուհասն ի վերայ ածէ, այլ տայ յանդգնագոյնն ժամանակս և դադար, զի սրբեսցէ զյանցանսն և ի ձեռն ապաշխարութեն հաւասարեսցի ընդ այնսիկ՝ որ ոչինչ գործեցին չար. զոր և յայնժամ եցոյց ած ի վերայ ապիրատիդ այդորիկ. բայց շահ եղև և ոչինչ, այլ եկաց ինաց ի միտս անուղղայս։ Իսկ մարդասէրն և զայն ինչ տեսանելով, և ոչ այնպէս անտես արար գնացուածն, և ոչ դարձեալ պակասեցաւ ինչ առնել զիւրն, այլ և ինքնին յայց եղ ախտացելոյն և դարման տարաւ բժշկութեն։ Ա.յլ նա ոչինչ կամեցաւ առնուլ զդեղն,

այլ և զբժիշկն գլխովին կառափեաց՝ որ ՚ի դոյն սատ
ձառս առաքեալ էր։ Իսկ դեղն և բժշկութեանն յեղա
նակ այսպիսի ինչ էր։

Ի. Ոյնոյ ժամանակաւ՝ յորում գործդ այդ կա
տարէր անագորոյն և ողորմելի, դէպ եղև առն միոյ մե
ծի և պատուելոյ, սակայն եթէ այր գնա կոչել պարտ
էիցէ, կալ հովուութիւն ՚ի վերայ հօտիս այսորիկ, և ա
նուն էր նորա բաբելաս։ Լսեդ սա զեկեղեցիս զայս քոյ՝
յանձն իւր առեալ ՚ի ընորհաց հոգւոյն, քան զՀեղիսա
և քան զնորուն նախանձաւորն յովհաննէս՝ ոչ ասեմ և
թէ գերազանցեալ գտաւ, զի մի թերևս և կարի ինն
գժոխըմիջեբս ասացից լսելեաց, այլ այնչափ իմն հպա
տոր գտաւ նոցա, մինչ զի և ոչ խուն մի պակասեաց
նմա յազատութենէ անտի սրտի քաջափառիցդ այդոցիկ
արանց։

Վանզի ոչ զբորրոդապետ սակաւուց քաղաքաց և
ոչ զԹագաւորը միոյ ազգի, այլ զնա ինքն գլխովին՝ որ
զտիեզերս ամենայն առաւելապէս մնասամբն ՚ի բուն
կալեալ ունէր, զդոյն ինքն ասեմ զմարդախոշոչն, որ
ազգս բազումն և քաղաքս բազումն և գօրս անթիւ ժա
ռանգեալ ունէր, և ահարկու էր յամենայն կողմանց,
յորքայութենէն մեծուէ, ՚ի բարուցն գազանութէ, սա
իբրև արծաթագին նեռըքևեալ և անարդ ամենևին՝ այն
պէս գնա մերժեաց յեկեղեցւոյ անտի, այնչափ իմն քա
ջութէ և անահ սրտիւ, որչափ ոք ՚ի հովուաց գբոսոտ
ոչխարն և գհիւանդացեալն ՚ի բաց վարեսցէ ՚ի հօտէն,
արգելեալ՝ զի մի թերևս ախտ խոթացելոյն ձարակեսցէ
զինացեալսն։ Եւ զայս գործեաց նա, յարդեանց
անտի զիրկչէն հաստատեալով բան, եթէ ծառայ նա
միայն է՝ որ զմեզս առնէ, թէպէտ և պատկս բիւրս ու
նիցի ՚ի վերայ գլխոյն, թէպէտ առհասարակ ամենայն
մարդկանդ ՚ի վերայ երկրի իշխան լեալ իցէ։ Իսկ որ
ոչինչ գիտասցէ անձին իւրում չար, թէպէտ և ՚ի հնա
զանդելոցն կարգ անցեալ իցէ, նա արքայատանջ ևս է
քան զամենայն թագաւորս։

Լսեդ անդէն ՚ի տեղւոջն՝ իշխանին հրամայեաց իջ
խեցեալն, և զամենեցուն զտէրն գատեաց հնազան
դեալն, և զգատապարտութենէ զլճինն ՚ի նեղքս բերէր։

Յոկ դու յորժամ զայսոսիկ լսես, մի՛ վայրապար անցա-
ներ զբանիւքդ։ Վանդի և այդ միայն պատմեալդ ա-
ռանձինն, եթէ զայր Թագաւոր մի ունի՛ ի հնազանդե-
լոց անտի իւրոց՝ ի բաց մերժեաց՝ ի նախադրանց ան-
տի եկեղեցւոյն, բաւական է շարժել և հիացուցանել
զոգիս ունկնդրացն։

Այլ եթէ քեզ կամք իցեն և ամենայն աքանչելեացն
բովանդակ՝ ի վերայ կալ, մի՛ ի լոկ բանդ միայն հայեա-
ցիս, այլ՝ ի քեզ ինքն նկարագրեա դու զանձնապահն,
զասպարազինն, զզօրավարսն, զնախարարսն, զարքու-
նեաց զորեարն, զպետս քաղաքացն, զշուք կարապե-
տացն, զՀետեւակացն բազմութիւն և զՀոգդողացն ուշ-
ւոյն, և զայլն ամենայն սպասաՀարկութիւն։ Այս կէտ
այնորիկ և զնա ինքն զարքայն՝ ի միջոյն անդ ամբար-
ձեալ ամբարտաւանութիւն բազմաւ, շքեղ և փառաւոր
՝ի հանդերձիցն, ՝ի ծիրանեացն, յականցն պատուակա-
նաց առհասարակ սիրելոց յառաջն, ՝ի խառնուածս
քղամդին, և ՝ի քարանց պսակին՝ որ ՝ի գլխոյ անտի
ձնձանչեացեն։

Այլ մի և ցայդվայր միայն զաչեղի կալցես ՝ի քում
պատկերին, այլ առ տէր զդա և ՝ի վերայ ծառային նո՛յ
երանելւոյն բաբելայ, և խոնարհ կերպարանին նորա և
դուխնաքեայ ձորձոյն նորա և ցաւած հոգւոյն և գե-
ղեցիկ յանդգնութեանն՝ որ հեռւի էր յամբարտաւանու-
թենէ։ Այս այսպէս զերկաքանչիւրն միանգամայն նկարագրեալ
՝ի քեզ և ՝ի կշիռ ձգեալ ընդ միմեանս, այնուհետև ա-
պա քաջութիւն՝ ի վերայ կացցես հրաշիցն, մանաւանդ
եթէ և ոչ այնպէս խելամուտ լինիս ձշդապատուե իրացդ.
քանզի զհամաբձակութիւն զայն լերուին ոչնչի բան և
ոչինչ կերպարան ՝ի դէմն բերել երբեք ոչ ունի. այլ
փորձն միայն, և արդիւնք իրացն։ Այս զանվկանդ հաս-
տատութեն արիական հոգւոյն այնորիկ՝ նա միայն բաւա-
կան է գիտել ձշդիւ, որ միանգամ բաւական իցէ ՝ի
դէմն յայդ գագաթն գեղեցիկ յանդգնութենէ ելանել
առ նա։

Վանդի զիարդ մնա գնաց մերձեցաւ ծերունիդ.
զիարդ նա յայսկոյս յայնկոյս փարատեաց զթիկնապահն.
զիարդ երաց զբերանն. զիարդ արձակեաց զաարբառն.
զիարդ կշտամբեաց. զիարդ զաչն իւր առեալ ձգեաց

ընդդէմ լանջացն այնորիկ՝ որ դեռևս ջեռնայր բարկու-
թ՚ենն և բորբոքեր սպանուածն, զնաՀրդ՚ի բաց վանեաց
մերժեաց զմարդախոշորն։ Այլինչ յերկնից անտի գնա ած
զարհուրեցոյց, և ած՚ի խորհրդոյն իւրոց կասեցոյց։
Այվ անզարհուրելի հոգի և միաք վեհագոյն. բաքե
երկնաւոր խորհրդոյն և հրեշտակային պնդութեանն։
Վասնզի իբրու այն թէ յորմ ինչ նկարեալ տեսանէր
առհասարակ զամենայն զշուք փառացն այնոցիկ, այն-
պէս անխոով զամենայնն՚ի գլուխ տարաւ առաքինի
նահատակն։

Վասնզի դաստիարակեալ էր յածախոյն պատգամաց,
եթէ սուտերք և երազք են գլխովին ամենայն կենցա-
ղականքս, նաև քան զպղտոսիկ առաւել ոչէք։ Յաղագս
որոյ և ած՚ինչ յայնպիսեաց գնա զարհուրեցոյց երբէք,
այլ և առաւել ևս քաջալերեցաւ յանձն իւր. քանզի
տեսուն երևելեացդ այդոցիկ զմիտս նորա առեալ փո-
խէր առ վերին արքայն՝ որ նստի՚ի քերովբէս և հայի
յանդունդս, առ գահն այն գերափառ և բարձրացեալ,
առ երկնային գինուորութ՚ենն, ՚ի բիւրաւորս հրեշտա-
կաց, ՚ի հազարաւորս հրեշտակապետաց, ՚ի բեմն ահա-
ւոր, յաստեան անապատ դատաստանին, ՚ի գետն հրե-
ղէն, առ նա ինքն դատաւորն։

Ո՛ ամն որոյ և բռնադակ փոխադրեալ զանձն յերկրէ
՚ի յերկինս, որպէս այն եթէ մերձ կացեալ դատաւորին
այնմիկ և լուեալ զհրամայել նորա, զի զեղեռնաւորն
զայն և զապիրատն՚ի բաց հանցէ՚ի գաւթէ անտի սըր-
բութ՚ենէ, այնպէս արտաքս մերժեաց և որոշեաց յայլոցն
ոչխարաց. և ած՚ինչ յայնմանէ յակն արկեալ երբէք՝ որք
ահագինքն կարծէին տեսանելեացն, այլ մեծապէս ա-
րութ՚ենէ և քաջասիրտս արտաքս վարեալ գնա, օրինացն
ոչ յարատահարելոց կանգնեցաւ ջատագով։

Եւ արդ քանիցն արդեօք համարձակութ՚են առ այլս
՚ի մարդկանէ նմա՚ի դէպ էր՚ի գործ արկանել։ Վասն-
զի որ աշխարհակալիդ այդոցիկ այնչափ էշխանութ՚ք՚ի
վերոյ յարձակեցաւ, նա յումմէ՞ այլ զարհուրեցոյց երբ-
էք։ Եւս այնպէս կարծեմ, եթէ այրդ այդ, մանաւանդ
եթէ ած կարծեմ, այլ հաւատամ, եթէ ած՚ի ջնորհս և
ած առ առելութ՚ե ուրեք երբէք գործեաց զա ինչ մի
և կամ ասաց. այլ ընդդէմ երկիւղին՝ և որ հզօրագոյն

և ես քան զնա՝ ընդդէմ մարդասպանութեան, և ընդդէմ այլոցն՝ որ ի սոցուն սակի բազում ինչ են առ մարդկան, եկաց նա քաջութեամբ և արիաբար, և ոչ վայր մի խանգարեաց զուղիղ դատաստանն։ Օ՛ի եթէ հանդերձ մարդոյ և ծաղը առամանց և քայլ ոտից պատմեն զնմանե, առաւել և ապա այդչափ նահատակութեիդ բաւական իցէ մեզ ի դէմ ածել զամենայն առաքինութե՛ն բովանդակ կենաց նորա։ Օ՛ի ոչ վասն անվեհեր ոգւոյն միայն պարտ է սքանչանալ ընդ նա, այլ զի և մինչև ցայդ վայր էած ձգեաց զհամարձակութիդ զայդ, և զի դարձեալ և ոչնչ առաւելագանց յաւել քարդեաց ի վերայ այդորիկ։

Է. Վ՛անզի այսպիսի ինչ է խմաստութե՛ն քրի, ոչ թոյլ տայ մտցել՝ ոչ պակաս ինչ և ոչ առաւելագանց, այլ ամենայն ուրեք պահէ զչափաւորութե՛ն։ Վ՛այ առաւնիկ մարթ էր նմա՝ եթէ կամեցեալ ինչ էր, և յառաջ ևս խաղալ անցանել։ Վ՛անզի որում և ոչ փոյթ ինչ էր այնուհետև զկենաց իւրոց, իբրև զի չէր նորա արդեօք ի սկզբան անդ յառաջ ձգեալ զանձն իւր, եթէ ոչ դովին խորհրդով զինաւառեալ էր զհոգին, նա բաւական էր իչխանութե՛ն գործել զամենայն, և թէհնամանօք միանգամայն ընդ զթագաւորն, և զթագն ի վայր քարշել ի գլխոյն, և վէրս ի վերայ դնել երեսաց նորա՝ յորժամ զայն իւր միեաց ի լանջս նորա։ Վ՛ակայն ոչնչ արար յայսպիսեաց ասի, քանզի հոգևորական տղուն հաւանեալ ունէր զհոգին. վասն այնորիկ և ոչ ինչ գործեաց վայրապար և անխորհուրդ, այլ զամենայնն ուղղակի դատաստանաւ քանին և ողջախոհ կարգաւ. ոչ որպէս խմաստունքդ հելլենացւոց, որք չափաւորութե՛ն ոչ երբէք, այլ ամենայն ուրեք՝ եթէ ասել ի դէպ իցէ՝ կամ առաւել և կամ նուազ քան զարժանն համարձակուել ի դէմն ընծայեն. մինչդեռ և ոչ զարիութե՛ն ինչ երբէք՝ այլ զանգան կրիցն զկարծիս յարդարեն գոքա ամենայն ուրեք վասն անձանց իւրեանց. յորս միանգամ նուազեն՝ իբրև անարի վատասիրտք, իսկ յորս առաւելուն՝ իբրև խրոխտք ոմանք և փառասէրք յանդիմանին յամենեցունց։

Վ՛այլ ոչ այնպէս և երանելին այն. քանզի ոչ վայրա-

պար՝ որ ինչ և միանգամ ՚ի միտս անկանիցի գործիդ, այլ զամենայնին քննեալ ձշգրտիւ, և ընդ ամենայնի օրհնաց զիւրականն յարմարեալ խորհուրդս, այնպէս ՚ի գործ հանիդ զնոսա։ Այսու այնորիկ և զհատուածն ոչ միանգամ յվերջին երեսան ետ, զի մի թերևս առաւելագոյն մտանն ախտացելոյն ՚ի տեղւոջ իւրում կացցէ. և ոչ ՚ի խորս անդ առաւել քան զարժանն, զի մի դարձեալ առաւելագանց վիրաքն խանգարեսցէ զառողջութիւնն, այլ ընդ ախտին վայելուչս չափեալ զվէրն, այնպէս զգեղեցիկ բժշկութիւնն առնիցաց նմա։ Յաղագս այնորիկ և համարձակաձայն համբաւեմ զնա իբրև մեքուբ ՚ի սրտմտութենէ և ՚ի վատասրտութենէ, յամբարհաւաճութենէ և ՚ի փառամոլութենէ, յատելութենէ և յերկիւղէ և ՚ի մարդահաճութենէ։

Այսպա եթէ և նորանշան ինչ ասել պարտ իցէ, ոչ այնպէս սքանչանամ ընդ երանելին ընդ այն՝ զի ընդ մոլեգնութիւնն ընդհարաւ աշխարհակալին այնորիկ, որպէս՝ զի գիտաց քաջ եթէ ցո՛ր վայր զդայն գործել պարտ իցէ, և ոչինչ առաւելագանց՝ ոչ գործեաց և ոչ ասաց։ Այլ զի այս սքանչելի ևս է քան զայն, բազումս արդեաք գտցէ ոք՝ որք զայն վճարեալ իցեն, և յայսմանէ վերկենալք։ Այնպէս համարձակութիւնդ առանձինն՝ է բազում անգամ և առհասարակ մարդկանդ. իսկ զայդ ըստ արժանւոյն և ՚ի քաջագէտ ժամուն և հանդերձ վայելուչ չափոյն և խոհականութեան ՚ի գործ արկանել, մեծի յոյժ և սքանչելի հոգւոյ պէտք են։

Այնպէս և զերանելին դաւիթ մեծաւ իշխանութեամբ Հնամանեաց սեմքի և այր արեանց կոչեաց. սակայն ոչ եթէ համարձակութիւն ինչ ասեմ ես զայդ, այլ ապերասանութեան լեզուի և լրբութեան հոգւոյ, և ստամբակութեան և ամբարհաւաճութեան, և առնային ինչ առաւել՝ քան եթէ համարձակութիւն։

Այնպէս պարտ և արժան է, որպէս կարծեմն, այնմ՝ որ ՚ի յանդիմանութիւն միոյ հանդերձեալ իցէ, զի ՚ի ժպրհութենէ առաւել և յամբարհաւաճութենէ հեռացուսցէ զՀոգին, և զկորովութիւնն միայն ՚ի քնութենէ անդ բանիցն և ՚ի գործոցն ՚ի դէմն իւր ընծայեցուսցէ։

Այնպէս և մանկունք բժշկացդ, յորժամ զիուտ անդամն կտրել պէտք իցեն, կամ զպայրացեալն նուա-

ՀՁԼ, ո՛չ ԵԹԷ յառաջադոյն բարկութիւն ընդն զանձինս և այնպէս ուրեմն գան ՚ի բժշկութիւնն, այլ յայնժամ առաւելապէս ՚ի զեղեցիկ ջոփու ջանան պահել զիրս, զի մի թերևս խռովութիւն նորա ապականիչ ինչ լինիցի արհեստին։

Իսկ արդ ԵԹԷ որում զմարմինն հասանէ ապաքինել, այնչափ հանդարտութիւն հոգւոյն պէտք են նմա, զոր վասն հոգւոց բժշկին զի՞նչ արդեօք, ասա՛ ինձ, սահմանեսցուք միք, և քանի՛ խնամատարութիւն պահանջեսցուք առ ՚ի նմանել. այն յայտ իսկ է՝ ԵԹԷ կարի առաւելութիւն. և այնչափ ինչ, որչափ միանգամ յանձին իւրում ընծայեցոյց առաքինի մարտիրոսդ։ Վասն զի իբրև սահմանս ինն և կանոնս օրինադրեալ միք, զի ՚ի նոցունց անտի առցուք միք չափս համեմատութիւն և յայլ ինչ գործս, այնպէս զիշուառականն զայն արտաքս վարեաց ՚ի սեմից անտի սրբութեան։

Այլ կարծի ինն այնպէս, ԵԹԷ մի միայն հանդէս առաքինութեան էր գործն. սակայն ԵԹԷ ոք խուզեսցէ զայդ և յամենայն կողմանց պարզեալ գտանիցէ ձգիբաիս, և զերկրորդն միանգամայն և զերրորդ բարին գտցէ նմին անկակից և հարստագոյն գանձ օգտի։ Վասն զի որ արտաքս վարեցաւ յայնժամ, մի միայն էր. իսկ որք ՚ի նմանէն օգտեցան՝ բազումք. քանզի յարբայութեան բռնաւորին այնորիկ՝ որ զմեծ մանեն տիեզերացս կալեալ ունէր, որչափ ինչ միանգամ էին յանհաւատից անտի, առհասարակ հիացեալք աքանչացան՝ իբրև ՚ի վերայ հասին՝ ԵԹԷ քանի՛ համարձակութիւն առանդեալ էր քո իւրոյն ծառայից. ծիծաղեցան զծառայական կրիւքն իւրեանց և զանազատական և զնկուն. տեսին քաջ՝ եԹԷ քանիճն է խորհն ընդ աշխուատականութիւնն քրիստոնէից և ընդ անարգութիւնն հեղձնոցաց։

Վասն զի որք միանգամ առ նոսա զարբազանիցն խնամն յանձն առեալ իցեն, քան տերանց և քան կռոց իւրեանց՝ առաւել թագաւորացն պաշտօն հարկանեն և առաւել նոցա զդրօշելովքն իւրեանց պար առեալ նստին. մինչդի և այսքա այդոքիկ չարութեան՝ թագաւորացն արդեօք կալցեն չնորհս ՚ի պատճառս պատուոյն՝ զոր պատուեն զնոսա։ Օ՛ի ԹԷ յանկարծ դէպ լինի ումեք նստիլ ՚ի գահ սրբայութեն՝ որ ո՛չինչ կամիցի խորհել

զպաշտամանց դոցա, եթէ ոք յայնժամ մոցէ՝ ի մեհեանս կռոցդ, ամենայն ուրեք սարդխոստայնս իմն տեսցէ ձգեալ առհասարակ ընդ որմունս մեհենին, և այնչափ իմն փոշի մածեալ շուրջանակի զդրօշելոյն, մինչև և ոչ ունչք և ոչ աչք և ոչ դարձեալ այլ ինչ մասն դիմաց երեսացն երևեսցին՝ ի նմա. իսկ բագնեացն բեկորքն միայն մնացեալ, և առաւելագոյն մասնն փշրեալ. այլ այնպէս իմն խիտ առ խիտ քուսեալ խոտոր պատեհս յամենայն կողմանց, մինչզի և որ ոչինչ գիտասցէ ըզբագնեացն, չեղջ իմն աղբևաց կարծեսցէ լինել զբևաւն։

Իսկ պատճառք իրացդ այն ինչ է, զի կանխաւ՝ ի դէպ էր նոցա գողանալ զոր ինչ միանգամ և կամիցին. և՝ի պատճառս պաշտամանն դրօշելոյն որովայնապարար լինել. իսկ այժմ յոչինչ պատճառս նոքա աշխատ արասցեն զանձինս իւրեանց։ Վասնզի պահ կապեալ զնոքօք և յոգնեալք, ինչ ի վարձուց՝ ի նոցանէ ակն ոչ ունին, քանզի փայտք են և քարինք. իսկ որ ածէր ձգէր զնոսա՝ ի կեղծաւորել զպաշտօնն ղայն, պատիւն էր՝ որ՝ ի կայսերեայց անտի է. սակայն և այդ բարձեալ է՝ ի միջոց, յորժամ ղգօնացան թագաւորք և երկրպագուք լինին որդւոյն ՚ոյ։

Ը. Վասն ոչ այսպիսի ինչ են և մերքն, այլ գլխովին հակառակք։ Վասնզի յորժամ ոք դաւանակից մեզ յՈծմային հաւատս յարքայականն անցեալ բազմացի՝ ի գահ, հեղգ ապրիս լինին յայնժամ իրք քրիստոնէից. այսպէս ուրեմն՝ ի մարդկայնոցս իշխանութեանց ուղղիլ նոքա երբէք ոչ ունին. իսկ յորժամ յամպարշտաց ոք կալցի զարքայութենն՝ որ մեզ գլխովին ոխերիմ թշնամի իցէ և բիւրուք չարեօք վարակեսցէ զմեզ, յայնժամ գերահմտաբարն և շքեղ ևս յարդարին մերքս, յայնժամ մըցանակաց է ժամանակն և բրաբիոնաց, յայնժամ պսակայն և բարեբանութեց և առնայն քաջարութեանց պատճառք։

Ա. պա թէ ոք ասասցէ, եթէ էն և այժմիկ քաղաքք, որք զնոյն դիցապաշտուն՝ ի դէմս իւրեանց բերեն առ կռոցն մնալոն, առաջինն՝ սակաւս գոցէ այնպիսին քաղաքս և նուազուցնս թուով. բայց սակայն և ոչ այնպէս

մերումն ՝ինչ բանի · քանզի կայ ինչ նոյն ա-
ռաջադրութիւն բանիս , և առ ահի Թագաւորին քնա-
կիւք քաղաքին զնոյն պատիւ ընծայեն նոցա : Եւ պաշ-
տամնդ այդորիկ պատճառք են չուայտութիք և խրախ-
ճանութիք տունջենայինք և գիշերականք , տաւիղք և
Թմբուկք , և մեծապէս անպատկառութիք խօսել զա-
զիրս և գործել զազրագոյնս , պայթիլ յորովայնապա-
րարն կրեայ , քանդագուշել գինեհարութիւն , և անկա-
նիլ ՚ի մոլեգնութիւն գաբշութեան :

Եւ՚այս ծախք պղծութիք տակաւին պահեն և տածեն
գկործանեալ մոլորութիդ : Վասնզի որ առաւել ընչա-
ւէտքն են , զնոսա՝ որք առ վատութիքն սովալլուկ լեալ
իցեն՝ առեալք ՚ի կարգ դասեն իւրեանց պատառաքա-
ծից , և իբրև չունս չուրջանակի կացուցեալ զսեղա-
նովքն՝ քուծանեն զնոսա , ՚ի նշխարաց անօրէն խորտ
կացն պարարեալով զանասնոյն որովայնն , և ապա ըստ
հաճոյից կամաց իւրեանց ՚ի գործ վարեն զնոսա :

Իսկ մեք՝ որ զձեր անբանութիդ ատեամք և զանօրէ-
նութիդ , զնոսա՝ որք առ վատութիք իւրեանց տանջին ՚ի
սովոյ՝ երբեք ոչ քուծանեմք , այլ խրատեմք և հաւա-
նեցուցանեմք գործել և բաւական լինել անձանց և ըն-
կերացն : Իսկ որք միանգամ հաշմ իցեն անգամովք ,
ներեմք նոցա՝ զի ՚ի կարևոր պարէնսն միայն վայելեա-
ցեն ՚ի գոյատրոյց անտի : Իսկ խրախճանութիք և գի-
նարբուք և այլ ամենայն մոլութիք և զազրութիք տեղի
տուեալ են առ ՚ի մէնք . և փոխանակ ընդ այնոցիկ ՚ի
ներքս մտեալ էն՝ որ ինչ միանգամ պարկեշտ էն , որ
ինչ ողջախոհ , որ ինչ արդար , որ ինչ բարեհաճակ՝ և
թէ առաքինութիք ինչ իցէ և թէ գովութիք :

Իսկ նոցա այլն ամենայն՝ զոր մեծաբանութք պանձան
՚ի վերայ իւրեանց իմաստասիրացն , մնափառութիք և
յանդգնութիք և գործս իմն մանկական հանճարոյ , ՚ի
դէմս ընծայեն : Վասնզի ոչ ոք առ մեզ առեալ զկա-
բասն (*) ՚ի նման փակեաց զանձն , և ոչ դարձեալ զպա-
տառատուն ցնցոտին զանձամբ արկեալ՝ այնպէս շրջե-
ցաւ ՚ի հրապարակին : Վասնզի այսոքիկ թէպէտ և զար-
մանալիք ինչ կարծեսցին լինել , և աշխատութ բազում

(*) Որպէս գեղինէան կիւնիկեան :

բարձեալ քերիչն և աղէտս իմն Թշուառութիւն, այլ սակայն ի գովութենէ դէմսոլին անբաժան են։ Այս ջարարուեստ հնարք են սատանային՝ զի զպաշտօնեայս իւր այսպիսեայ մտանէ աշխատութիւն, և զորս միանգամ խաբէսայն՝ գնոսա այնպէս խոշտանգէ և քան զամենեսեան առաւել ծիծաղելիս ամենս գործէ։ Վասնզի աշխատութիւն՝ որ անմահն իցէ յամենայն օգտէ, նա անմահ է և յամենայն գովութենէ։

Այս քանզի են են տակաւին և այժմ մարդք ապակաշնաւք և բիւրաւք լցեալք չարութիւք, որք մեծամեծս ևս քան զիմաստասէրդ առաջի ընծայեն. քանզի կէսք բևեռս իմն սայրասուրս առեալ ուտեն. իսկ կէսք կօշիկս ծամեն և կլանեն. և կէսք դարձեալ խորհրդակից եղեալ՝ յայլ ինչ վատթարագոյն ևս քան զայդոսիկ անկղնտանան։ Այլոյ արդ այդոքիկ առաւել զարմանալիք են արդեօք քան զկարապետ և քան զցնցոտիսէդ, սակայն ոչ զայսոսիկ և ոչ դարձեալ զայնոսիկ գովեմք մեք երբէք. այլ առհասարակ ընդ իմաստասիրին ընդ այնմիկ և զսոսա և զամենեսեան որ միանգամ զնմանօրինակ նորանշանն գործեն վայրապար՝ եպերեմք և արտասուեմք։

Այլ նա՝ և համարձակութիւն բազում, ասես, եցոյց առ արքայն։ — Այս արդ տեսցուք վայր ի և զգեղեցիկ համարձակութենէն զայն. Թերևս և զայն գատարկագոյն ևս գտցուք քան զՀրաչս կարասին այնորիկ։ Ո՞րինչ ապա էր համարձակութիւն։ Յորժամ՝ի պարսս դիմեալ գնայր մակեդոնացին այն, և եկեալ եկաց՝ի վերայ նորա և խնդրէր՝ի նմանէ ասել՝ եթէ ի՞մ իմիք նման պիտոյ իցէն։ Այլևինչ իմիք, ասէ, բայց զի մի ստուեր զինեա արկցէ Թագաւորդ. քանզի յայնժամ յարեգուշ նման ջերմոյդ իմաստասէրն։

Վերևս ոչ զամենի հարկանիք դուք, արդեօք ոչ առագաստեալ ծածկէք զձեզ, ոչ ևս խուսէք դուք՝ի վայրաց աստի և գնացեալ զշիք ընդ հողով, որ մեծամտեալդ էք յայն ինչ՝ յորս ամաչել պարտ էր։ Վասնզի քանի՞ լաւ ևս էր, եթէ որ զԹանձր վերարկուն արկեալ զիւրեաւ՝ այնպէս նստէր անդորձ, ինչ մի՝ի պիտանեաց իմդրէր յայնժամ՝ի Թագաւորէն, քան եթէ զցնցոտին զայն զգեցեալ նստիլ և արեգջեր լինել՝ հան-

պոյն մանրիկ և կաթնաճուճ մանկտւոյն, զորս լըսա ցեալ և օծեալ դպրեկաց նոցա՝ առեալ նստուցանեն անդէն յայն ինչ՝ յոյր սակս յայնժամ նստեալ իմաստա սէրդ այդ՝ հնորհս իմն խնդրեր զհիքացելոյ պառաւու։ Արդեօք սքանչելի՞ ինչ իցէ համարձակուԹիդ այդ. նա և չի՞ք ինչ քան զայդ առաւել հրեշ նորանշան։ Վասն զի առն առաքինւոյ պարտ է՝ի հասարակաց օգուտ գործել զամենայնն և զայլոց զկենցաղն միանգամայն ուղղել. իսկ խնդրելդ այդ՝ զի մի առուեր արկցէ զնուաճ Թագաւորն, զո՞ր քաղաք, զո՞ր տուն, զո՞ք յարանց, զո՞ք՝ի կանանց փրկեաց անդորրացոյց երբեք։ Սա դու զշահ օգտին՝ որ՝ի համարձակուԹիդ այսմ. քանզի ահա զմարտիրոսինն մեք յայտնուք ձեզ՝ի դէմն բերաք. իսկ յառաջ անցեալ յայտագոյն և զդոյն ցուցցուք ձեզ։

ԹԻ. Արդ յայնժամ նա զանօրէնն զայն պատուհաս սակաւ ածար, և որչափ ինչ պատժել օրէն էր առն քաջ հանապայ, զիշխանացն սանձեաց զամբարտաւանուԹեան խորհուրդս, Թշնամանաց օբինացն՝ այ եկաց ախոյեան. զանպարտական մահու մանկանն խնդրեաց զվրէժն, որ քան զամենայն վրէժս դժնդակագոյն և է առ այնս սիկ՝ որ միանգամ միտս ունիցին։

Վասն իսկ յիշեք դուք, զի յորժամ յաղագս սպանուածին այնորիկ ձառ արկեալ խօսեաք, զիարդ այր այր իւրաքանչիւր ջեռնայր բորբոքեր յումենդրայ աստի. և զնա ինքնին զԹագաւորն խնդրեր զբառամբ իւրով ածել և անձամբ անձին վրէժ խնդիր լինել սպանուԹեն այնորիկ։ Արդ զդոյն զայդ երանելիդ կատարեաց յայնժամ, և զպատշաճ պատուհասն՝ի վերայ կապեաց նորա, այն՝ որ շատ իսկ էր ուղղել զնա՝ եԹէ ոչ կարի իմն հեզգաւ սիրտ լեալ էր նորա. ոչ զայն ինչ խնդրելով՝ զի յարևէ անտի որ զնա ջեռուցանէր՝ ի կողմն մի կացցէ ատուեր բաձիգ արքայն, այլ որ անպատկառաբար՝ի վարախս սրբուԹե՛ դիմեալ գայր՝ և որ զամենայնն վեր՝ի վայր առնէր, զնա իբրև շուն մի և իբրև ծառայ մի վատ Թար՝ այնպէս՝ի գաւԹացն տէրունի՝ի բաց հալածելով։ Տեսանե՞ս, զիարդ ոչ մեծաբանս ինչ բարբառի, եԹէ գործս իմն մանկական հանձարոյ ևցոյց նա զհրաշս ձերոյ խմաստասիրացն։

Ա՛յլ սակայն և պարկեշտացաւ ասէն սինոպէացին այն, և՝ ի ժուժկալութե՛ վարեաց զկեանս իւր, և ո՛չ յօրինաւոր ամուսնուէն անգամ մերձեցաւ երբեք։ — Ա՛յլ ա՛ղէ յաւէլ դու ինձ և զայն, եթէ զիարդ և որո՛վ օրինակաւ։ Ա՛սյց երբեք չյաւելուս դու զայդ, այլև մնաս դիւր և՝ վրէպ կացուցանես զնա՝ ի դովութեանց պարկեշտութե՛ն, քան թէ ասես ինչ մի չաղագս չեղանակի պարկեշտութե՛դ այդորիկ. այնպէս ուրեմն պիղծ եր և լի բազում ամօթով։

Սակայն եկից ես և չայլոցն շաղակրատանս և՝ ի մաս վաստակ տքնութե՛ն և՝ ի զազրութե՛ն։ Վ՛անգի ո՞ր ուրեք, ասա՛ ինձ, պիտանացու ինչ եղև երբեք ձաշակել՝ ի սերմանէ մարդոյ, ըստ որում առնէր ստացիրացին այն։ Ասկ զինչ շահ օգտի եր խառնակել ընդ մարս և ընդ քորս, ըստ որում օրինադրեաց իմաստասէրն այն առաջնորդ ստոյիոյ (*)։ Ա՛ր այս և զիշխանն ակադեմեայ և զնորոն վարժապետ, դարձեալ և զայլսն՝ որ և այս զարմանալիք են քան զայնոսիկ, իբրև պիղծս ոմանս առաւել քան զսոսա՝ նշաւակել արդեօք. նաև զմանկամտութե՛ն՝ զոր իբրև ինչ մի՝ ի պարկեշտից և մանր իմն իմաստասիրուէ սահմանեն լինել. և վերացուցեալ զպատրուակն ողջոյն խայտառակել զամենայն այլաբանութե՛ն, եթէ ո՛չ կարի երկայնաձիգ լիներ մեզ բանս՝ և չայլ մնասուս ձառի ձեռնեցուցաներ զմեզ. և եթէ ո՛չ և՝ ի ձեռն միոյն զամենեսին առհասարակ իբրև ծիծաղելիս ոմանս բաւականութե՛ն չանդիմանեալ եր։

Օ՛ի եթէ որ չաւաչագելին եր՝ ի նոսա, (**) և կար ձեալ իմն այնպէս եր՝ եթէ զհետ ընթանայ անխաբ մասին իմաստասիրութեան՝ ի պատճառս իւրոյ ազատ անձնեայ պերճութե՛ն՝ միանգամայն և ժուժկալութե՛ն, այնպէս զազիր և անկարգ և տգեղ չանդիմանեցաս, իբրև զի ասեր՝ եթէ " և զմարմին մարդկան մանրթ է ուտել անխտրաբար ,, . մեզ զինչ բանից պէտք իցեն այնուհետև ընդդէմ այլոց ոմանց. յորժամ որ՝ ի ծայրն

(*) Տուա է սրահ, յորում ուսուցանէր զինոն, յորմէ և կոչեցան ա՛ղեթարքն ստոյիկեանք, այսինքն սրահեանք։ Իսկ ակադեմեայ իշխան չայսմնի է ամենեցուն պղատոն լինել, որպես և զոր նախ եդ ստացիրացի՝ արիստոտէլ։

(**) Դարձեալ ընդդէմ պղատոնի։

անցեալ վարժից՝ գերափայլեր քան զայլսն, այնպէս ձի-
ծաղելի և մանկամիտ և անմիտ երևեցաւ առաջի ամե-
նեցուն. վասն որոյ և դարձցուք անդրէն՝ ուստի ելաք
մեք ասել զայսոսիկ։

Արդ զանհաւատսն այսպէս սանձահարեաց երանե-
լին. իսկ զհաւատացեալսն բարեպաշտադոյն ևս յարդա-
րեաց. ոչ զսոսկականս միայն, այլ և զղօրականս և զզո-
բաւարս և զնախարարս. յայտ արարեալ՝ եթէ առ քրիս-
տոնեայս՝ այր թագաւոր և վերջինն յամենեսեան՝ լոկ
անուանք են. և որ պատկառ պաշնեաւն է՝ ոչինչ պան-
ծագոյն է քան զներքևեալսն, յորժամ պատուհասի և
կշտամբանաց պէտք իցեն։

Ա՛ռ այսոսիկ և զանամօթսն զայնոսիկ ափիբերան ա-
բար, որ բամբասէին զհերան՝ եթէ լոկ անուտիապատ-
ուստ շառաչիւնք էն ձայնի. յարդեանց անտի՛ ի դէմն
ընծայելով զառաքելոցն ազատականութէն. միանգամայն
և ուսուցանելով՝ եթէ և անդ՛ի նախնումն պէտք էին
այսպիսեաց արանց, յորժամ և հրաշիցն պարծանք՝ իշ-
խանութէն իմն վեհագոյն բերէր նոցա։

Ա՛յ դարձեալ և երրորդ հանդէս քաջութեան ոչինչ
դուշնաբեայ. քանզի առհասարակ և զկնի եկելոցն
զքահանայից և զաբքայից զկորհուրդսն հրահանգեաց.
նկուն արար զսոցայն և բարձրացոյց զնոցայսն. յայտ
արարեալ՝ եթէ այր քահանայ տիրապոյն ևս կուսակալ
է երկրի և որոց գործին յերկրի՝ քան զաբքայ ծիրա-
նատգեաց. և թէ՝ պարտ է ոչինչ նուաղեցուցանել ըզ-
մեծութիւն իշխանութեանս այսորիկ, այլ առաւել՛ ի
բաց դնել մերկանալ պարտ է զկոգին՝ քան եթէ զիշ-
խանութէն զայն, զոր՛ ի վերուստ անտի պարգեւեաց
հոգւոյն ձեզ։

Վ՛ասնզի որ զայսօրինակ մահ յանձին կալցի, նա և
յետ վախճանին բաւական է օգնել ամենեցուն. իսկ որ
միանգամ՛ ի բաց ելիք եթող զկարգս զայս, ոչ միայն
յետ մահուանն օգտեցոյց և ոչ զոք, այլ և զկնովին
առ կենդանութէն զբազումս ի հնազանդելոց խրոց
մեղկապոյնս գործեաց. և առաջի արտաքնոցն այպանե-
լի եղև և ծիծաղելի. առ այս՝ և՛ ի չուել իւրում՛ ի կե-
նաց աստի՝ բազում անարդութէք և ակնկորուք կացցէ
յանդիման բեմին քոի. և անտի դարձեալ՛ ի հնոց անդր

վարեալ ձգեսցեն զնա զօրութիւնքն՝ որք կարգեալք են ի սպասաւորութիւն այսպիսեաց իրաց։ Յաղագս որոյ և իմաստուն ոմն խրատէ ասելով. * մի՝ ահն առնուր անձին քումմ ‖ . ՍԻՐ . Ը . 26։ Իսկ արդ եթէ ընդ թշնամանս մարդոյ չէ ինչ անքոյթ կեղծաւորելն, ապա եթէ ոք ընդ թշնամանել ՅԾծայնոցն օրինաց լռեսցէ և անտես արասցէ, իմ իմիք տանջանաց չիցէ արժանի։

Իսկ հանդերձ այսոքիւք և այլ ինչ գեղեցիկ ասէինչ խոնարհագոյն քան զայսոսիկ՝ ուսոյց մեզ, եթէ իւրաքանչիւր ունիք պարտ և արժան է գործել զիւրն, թէպէտ և շահ և ոչ ի ինչ կիցեսցէ՝ ի գործոց իւրոց. քանզի և ոչ նա ինքն դարձեալ յայնժամ՝ ի համարձակուիլ անտի իւրմէ օգտեցոյց ինչ զձագաւորն. այլ սակայն զիւրն զանհնայն եւ ի բաց ի վերայ անտի վանելով դնէին։ Վասնզի որպէս այն թէ շատ էր յամբարշտութեն մարդախոշոշն լինել և անպատկառաբար ի տա՛ Ձորն յարձակիլ ՅՈՅ, սպանութեն ի վերայ բարդեաց սպանութեի այլ. և որպէս եթէ թևակոխեր միանգամն վերջնովքն յաղթել առաջնոցն, և զկերս կանխաւ գործեցելոցն սուտ բարւոյացանել առաւելապանծութիւն յետնոցն. քանզի այսպիսի ինչ է մոլեգնութի բանսարկուէն, զի զհակառակն միանգամայն ի միասին կազմէ. այնպէս զերկաբանչիւր ևս սպանումին ծայրագոյն գործեաց, զի ընդ միմեանս միաբանութեի կալցին. քանզի առաջինն այն սպանութեի մանկանն ողորմելի ևս էր քան զերկրորդն. իսկ երկրորդս այս երանելւոյն բաբեալ առաւել ևս եղեռնաւոր էր քան զառաջինն։

Վասնզի Հոգի՝ որ միանգամ Ձաշակէ՝ ի մեղացն և յանցաւորութենէ կայ, նիւթ բաղում՝ ի վերայ բարդել ախտին։ Այլ զորօրինակ շանթ հրոյ անկեալ՝ ի նիւթ ինչ բաւ՝ զոր միանգամ գտանէ՝ վաղվաղակի կիզուս. սակայն և ոչ յայնվայր միայն զտեղի առնուս, այլ և զինացեալն բոլոր ծախէ, և որչափ ինչ առաւել ընթացեալ Ձարաչկի բոցոին, այնչափ սաստիկ ևս բռնանայ՝ ի վատնումն ինացորդացն. և բազմակոյտ փայտիցն հրդեհելոց՝ միաւսակաը լինի այնոցիկ որ հանդերձեալն իցեն ըմբռնիլ

'ի բոցոյ անտի, իբրև զի բոցավառ եղեալքն ցանգ զի-
նավառի բոցն ընդդէմ անկեղ պահելոցն. այսպէս է և
մեղայդ բնութի. յորժամ միանգամ զմի ինչ 'ի խորհրդոց
հոգւոյն լինքն առեալ ըմբռնէ, և չիք ոք՝ որ ջարդն
զայն շիջուցանիցէ, յայնժամ յառաջադէմ և անցեալ
դժնդակագոյն և լինի և անսանձելի. և վասն այնորիկ
վերջին մեղք բազում անգամ հզօրագոյն և եղեն քան
զառաջինսն. քանզի և հոգին միշտ յաւելուածով վերջ-
նոցն առաւել և գնայ 'ի լրբութի և յարհամարհուի,
և 'ի ձեռն նոցա զտնկակիցն իւր կորուսանէ հարեալ
վատթարել, իսկ զմեղայն առաւել և մնուցանէ։

Այսպէս բազումք յամենայն աղգս մեղաց գահավիժ
անկան, իբրև զի զոյն արծարծեալ՝ անգէն ո՛չ շիջու-
ցին։ Այսպէս և չուառականն այն, քան զառաջինսն
առաւել ևս գժնդակս 'ի վերայ բարդեաց զվերջինսն։
Վանզի յորժամ զպատանեական զայն խորհուրդսդ, ան-
գէն 'ի սպանուլիդ անտի վազեաց 'ի թշնամանս ետձառ
բին. և ապա դարձեալ յայսմանէ յառաջ և ձանապարհ
արարեալ, հանդերձեցաւ կազմեցաւ 'ի ժպրհուլիւն
ընդդէմ քահանայութե. և զբան զայն կատեալ յեր-
կաթս և արկեալ 'ի բանտ, այնպէս ուրեմն պատուհաս
սեաց զնա՝ խնդրելով 'ի նմանէ զվրէժ բարերարուէն.
և յոյր սակս սքանչանալ ընդ նա պարտ էր նմա, և
պսակս նմին բոլորել, և քան զծնողս իւր առաւել պատ-
ուել, ետ նմա կապիլ զկապանս չարագործաց, և լսկիլ
չաղետս կապանացն այնոցիկ։

Ձ. Ոչ այսր օրինակ ապա, որպէս և ասացիս, մեղք՝
որ միանգամ սկիզբն առեալ իցեն, և չիցէ ոք որ 'ի յա-
ռաջադէմն ընթացից խափանեսցէ զնոսա, աննուաձելի
լինին և ապերասան, հանգոյն մկեդին երիվարացն,
որ իբրև զանձն 'ի բերանոյ անտի 'ի բաց ոստուսցեն
և զվերբելակն սասանեցուսցեն 'ի թիկանց իւրեանց,
այնուհետև անսասան լինին ընդ առաջ պատահելոյն, և
իբրև ո՛չ ոք իցէ՝ որ զնոսա սանձակոծեսցէ, այնպէս
վազս առեալ յանդգունս՝ գահավիժ ձգեն զանձինս
'ի վիհն։

Այսն այնորիկ և զայնպիսի հոգիսն 'ի մկեդնուլիդ
ձգէ Թշնամին փրկուլիդ մերոյ, որպէս զի զնոսա ամայի

լքեալ խնամածուացն՝ յինքն յափշտակեալ կորուսցէ , և բիւրուք չարեօք պաշարեսցէ : Այլ քանզի որք միանգամ մարմնով խօթացեալքն էցեն , ցորչափ Թոյլ տան քժշկացն մերձենալ առ նոսա , զոյ նոցա մեծապէս չոյս առողջութե : Ասէ յորժամ յախտ մտախաբ անկեալք՝ կիցս արձակեն և խածանեն զնոսա՝ որք ի խօթութէ անտի կամիցին փրկել զնոսա , չայնժամ զանգուժելիսն ախտանան նոքա . ո՛չ ի պատճառս ինչ բնութե ախտին , այլ զի ամոյի լքան ի նոցանէ՝ որք կարօղն էին քուժել զնոսա ի մոլեգնութէն . յոր և դա ինքն առեալ ձգեաց զանձն իւր : Այանզի գտեալ զքժիշկն՝ որ զվէրս նորա նստեալ հատանէր , վաղվաղակի ի բաց մերժեաց զնա . և յոյժ տարագէմ ի տանէն իւրմէ վտարեաց զնա :

Այս էր անդ զվերովդէի հանդէսն ո՛չ միայն լսել ա կանջօք , այլ և առաւել և աս վայրենի լրբութէ չանդիմանն տեսանել աչօք . յորժամ զնոյն զայն հանդէս առաւել և աս պանծանօք և հանդերձանօք միաւանգամ առեալ ի ներքս եմոյծ բանսարկուն ի թատրոն աշխարհիս . փո խան չորրորդապետին՝ կայսր ինն չանդիմանն արձանաս ցուցանելով , և փոխանակ միոյ խնդրոյն՝ կրկնակի ա ռաջադրութէիս գործոյ ծառչէն ընծայելով , կարի գար շելի և սիրջ քան զառաջինն զայն . մինչև ո՛չ Թուոյին միայն գերազանցեալ , այլ և իրացն իսկ քնութէք հրա շափառագոյն և ս էր եղերերգութէիս այս : Այանզի աս տանօր ո՛չ հարսանեացն միայն էր պղծութիւնն՝ որպէս անդ . և ո՛չ դարձեալ չանօրէն խառնակութէն , այլ ի պղծութէ անտի մեծեղեռն մանկասպանութէն և չանա գորոյն բռնաւորութէն , և չանօրէնութէ ո՛չ ընդդէմ ինչ արամբեայն , այլ ընդդէմ նմին իսկ սրբութէն , ա ռեալ ամենայնէսն հիւսեաց զպատմութէդ զայդ :

Այդ ի բանս արկեալ երանելին՝ խնդայր ի վերայ կասկանացն , այլ յաւէր ընդ կորուստ կալողին . քանզի և ո՛չ ոք ի հարց և ո՛չ ոք դարձեալ ի վարժապետաց , յորժամ էրկոքին նոքա ի պատճառս վատթարութէ և աղետից իւրեանց զաւակացն կամ աշակերտաց գերա փառք հանդիսանան , երբէք զանտրտում հեշտութէին կթէն ի փառաց անտի իւրեանց : Այան որոյ և երա նելին պաւղոս գրէր առ կորնթացիան . * Այլ խնդրեմք չյ՞ , զի մի ինչ արասցէ ձեզ չար . ո՛չ զի մեք ընտիրք

երևեսցուք, այլ զի դուք զբարիս գործիցէք, և մեք անպիտանք իցեմք ‖ Ա· Կոր· ծԳ· 7։ Զդրդ զայսօրինակ յայնժամ և երանելւոյն այնմիկ քան զանտէն վարձս առաւել ցանկալի էր փրկութէն աշակերտին. առաւել ցանկալի էր նմա զդաստանալ նորա և վերիպեցուցանել զինքն ի գովութեց անտի, մանաւանդ եթէ՝ ցանկալի էր նմա՝ և ոչինչ երբէք ի խեղութենդ յայդ անկանել նորա։

Վանգէլ և չկամին իսկ ոչք՝ զի յաղետից օտարին պակաք բոլորեսցին նոցա. և եթէ յօտարացն այսպէս, քանիծն և առաւել առ ի չարեաց ընտանեացն։ Զորին աղագաւ և երանելին դաւիթ յետ մրցանակացն և յետ յաղթութեանն ողբս առնոյր և արտասուէր, զի լծորդք գտան այնոքիկ ընդ աղետից զաւակին։ Զա և ելելոց զօրավարացն պատուէր յոյժ ի վերայ կապէր վասն բռնաւորին այնորիկ, և ոչք խնդրելինն ապանաւնել զնա՝ խափանէր զնոսա ասելով. * Խնայեսջիք ի պատանեակն աբեսաղոմ ‖ Բ· Թագ· ծԸ· 5. և յորժամ դիտապատ անկանէր՝ սուգ առեալ աշխարհն, և զընչաւմին զայն ձայն բարձեալ կարդային հեծութէբ և դառն նապաս արտասուօք։

Իսկ արդ եթէ բնական հայրդ այդչափ գորովագութէ, քանի՞ և առաւել հոգևորն։ Իսկ եթէ հոգևորդդ առաւել գրգան ի վերայ զաւակին՝ քան զմնրմնաւոր ծնողն, զայն դու ի պաշտոսկ լուր՝ որ ասէ. * Ո՞վ հէ անդամանայ, և ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթակղի, և ոչ ես տապանամ ‖ Բ· Կորնթ· ծա· 29։ Զայլ այդ թերևս և հաւասարուն ինչ ընդ նոսա ի նեբքս ածէ մեզ. թէպէտ և հազիւ երբէք զնոյն ձայն արձակեսցեն արդեօք հարք. այլ սակայն և ընորհեսցուք մեք՝ եթէ և ցայդ վայր առաքինասցին դոքա. վասն որոյ և մեզ ժամ է այսուհետև գհրաշափառագոյնն ի դէմս բերել։

Իսկ ուստի՞ արդեօք ցուցցուք զայդ. դարձեալ և ի նմին իսկ յաղետից գորովոյն, և ի բանից անտի օրէնադրին։ Իսկ զինչ ասիցէ նա. * Եթէ թողուս զմեղս իւրեանց՝ թող, ապա թէ ոչ ջնջեա և զիս ի գպրուէ քումմէ՝ յոր գրեցեր ‖ Ել· լԲ· 32։ Գնարձեալ առ այս՝ և ոչ ոք ի հարց՝ որուժ առաջի կայր վայելել ի բիւր բարիս, ընտրեաց երբէք տանջիլ ի միասին ընդ զաւա-

կայն. իսկ առաքեալն իբրու այն՝ որ ի հնորհս անդ քա-
զաքավարեալ էր, զսաստկութենէ գթոյս այսորիկ յանձն
իւր ընծայեցուցանէ վասն քոյ։ Վասղի ո՛չ ի միասին
ընդ նոսա կամէր տանջիլ իբրև զնա, այլ զի այլոցն
փրկուէ պատրաստեսցէ՝ ինքն իւրում անձինն ուխտիւք
կորուստ խնդրելոյ, ասելով. * ուխտիւք խնդրեի ես իսկ
ինքնին նզովվ լինել ի քոյ, վասն եղբարցդ և ազգակա-
նաց իմոց ըստ մարմնոյ ‖. հռ. ը. 3։ Ա յսչափ ե առ
սիրոյն անձինս գուարթ և գործով։

Ասսի և բաբելայ սաստկապէս գելուին աղիքն, յոր-
ժամ տեսանէր՝ զի կորուստ արքային ևս քան զևս յա-
ռաջացեալ սաստկանայր։ Վասղի ո՛չ ի պատճառս տա-
ձարին միայն կրեալ ցաւս՝ գործելոյ զոր գործէրն, այլև
ի գթոյ անտի խանդաղատեալ զոր ունէր առ թա-
գաւորն։ Վասղի որ զիմաստին պաշտօնն ընդունիմանէ,
գնա ո՛չնչ ինասկ երբեք. սակայն զանձն իւր ի բիւր
թաւալէ չարիս։

ԺԵ. Յաղագս որոյ և որդեսիր հայրն տեսեալ զգ-
թիմանադիրն զայն՝ զի սրտմտութիւ վարեալ գահա-
վիժ խարդաւանէր, զանբանապէս զթափն գուն գոր-
ծէր խորտակել, և իբրու զերիվար սանձակոտոր ձգնէր
կշտամբանօքն ընդ կրունկն սանձել գնա։ Ա յլ ո՛չ հան-
դարտեաց հեգ և թշուառական անձն. այլ զսանձն խա-
ծեալ և ի բաց ընդ վզեալ, և փոխանակ ողջախոհ մնա-
ծութենէ, սրտմտութիւ տուեալ զինքն և մոլեգնութիւ,
ի վիհ անդր վերջին կորստեան առեալ ձգեաց զանձն
իւր. և զբան ի բանտէն արտաքս հանեալ՝ հրամայեաց
կապանօք ի մահ վարել։

Այս էին անդ առհասարակ տեսեալքդ ներհակակիրք
եղելոցն։ Որ ի կապանս կապեալն էր, միանգամայն
լուծեալ էր յամենայն կապանաց՝ որ երկաթի և որ
դարձեալ ևս գժնդակագոյն, ի վարանաց ասեմ հոգւոյ
և ի քրտանց վաստակոց, և յայլմէ ամենայնէն՝ որ ի
դիւրաթառամ կենցաղս շուրջ պատեալ կան զմեզ։
Այսկ որ յուծեալն երևէր առհասարակ և յերկաթոյ և
յադամանդէ, յայլոց գժնդակագոյն ևս կապանաց պա-
տեալ պնդեալ էր, ի շղթայս կաշկանդեալ մեղաց։

Այդ իբրև մեռանել հանդերձեալ էր երանելին,

պատուիրեաց պլ ընդ երկաթոյն ընդ այնմիկ թաղեսցին զմարմինն. յայտ արարեալ՝ եթէ որք միանգամ ամենա-
լի կարծին, յորժամ վասն քոյ լինին, շքեղք են և փա-
ռաւորք. և որ կրկին գնոսա՝ ոչ միայն ամաչել չպարտի,
այլ և պարտ է նմա փառս որսալ ՚ի նոցանէ։ Այս եղև
նա այնուհետեւ ՚ի մասինդ յայդմիկ հանդուներորիպ ե-
րանելոյն պաւղոսի, որ ՚ի վեր և ՚ի խոնարհ յածեալ
դեգերեր ՚ի սպիս, ՚ի կապանս, ՚ի շղթայս. և պան-
ծայր և խիզախեր յոյն ինչ յոր ժամէի հարկանէին
պլք։

Իսկ թէ արդարև ամաչելին պլք, ինքն իսկ յայտ ա-
րար մեզ ՚ի ձեռն պատասխանւոյն՝ զոր ասաց առ ագրիպ-
պաս։ Կամպլ յասել նորա, եթէ * փոքուս ինն հաւա-
նեցուցանես զիս լինել քրիստոնեայ ||, պաւղոս ասէ.
* ինդրելի յոյ և փոքուս և մեծաւ ոչ միայն զքեզ, այլ
զամենեսեան որ լսեն ինձ այսօր՝ լինել այսպիսի, որ
պէս և եմս եմ, բաց ՚ի կապանաց սոսի ||. գործ. իզ.
28։ Այս արդեօք ոչինչ յաւելոյր զվերջինդ զոյդ, եթէ
ոչ ամենալի բաղմոց երևեր քանդ։ Կամպլ սիրասէր
գոլով սքոյն, բազում զուարթութիւն յանձն առնուին
զջարջարանսն՝ որ վասն նոն, և նոքօք առաւել ևս քերկ-
րեին. վասն որոյ և սա ասէր. * ուրախ եմ ՚ի չարչա-
րանս իմ ||. կող. ա. 24։ Իսկ զուկաս առհասարակ յա-
ղագս պարու առաքելոյն գնոյն զպյն բարբառի. քանզի
յետ բազում գանիցն՝ գնային ասէ խնդալով, զի վասն
անուանն քոյ արժանի եղեն անարգելոյ. գործ. ե. 41։

Այս արդ զի մի ոք թերևս յանհաւատիցս անտի ՚ի հար-
կէ և ամենալի ինչ կարծեսցէ գնահատակութիւնս մար-
տին, գնոյն ինքն գնշանակս մրցանացն հրամայեաց ՚ի
միասին թաղել ընդ մարմնոյն, յայտ արարեալ՝ եթէ
կարի յոյժ հաճեալ էր ընդ նոսա և սիրէր. քանզի և
գլխովին իսկ կախեալ էին զսիրոյն քոյ։ Այս այժմ հան-
գուցեալ կան ընդ մխրոյն և ոտնակապքն ՚ի խրատ ա-
մենայն առաջնորդաց եկեղեցեաց, եթէ թէպետ և կա-
պանօք կապիլ պարտ իցէ, թէպետ և ՚ի սպանդ վարիլ,
թէպետ և զամենայն ինչ կրել, պարտ է զուարթութիւն
սրտի և բազում հեշտութիւն յանձն առնուլ զամենայնն,
մինչ զի և ոչ դուշնաքեայ ինչ մնասցէ՝ աւանդելոյ մեզ
աջատուրեն մնան լինել և կամ անարգու։

Ա՛յլ արդ երանելին այն այսպիսեաւ փառաք վախ
ճանեաց զկեանսն ։ Իսկ Թերևս կարծեսցէ ոք , եթէ
և մեք ինքնին աստանօր վախճանելոց ինչ իցեմք ըզ-
բանս . իբրև զի յետ կատարածի կենացն չիք ինչ այնու
հետև հանդիսից առաքինութեանց պատճառք և քաջարու-
թեանց , ըստ որում և ոչ նահատակաց ասպարիզին ՚ի դէպ
ինչ է բոլորել պսակս յետ արձակելոյ մրցանացն ։

Ա՛յլ հելլենացիքդ արժանապէս արդեօք կարծեսցեն
զայդ , իբրու այն որ միայն աստի կենօքս չափ սահմա-
նեցին նոքա զայս իւրեանց ։ Իսկ մեք՝ որոց աստանօր
կատարածդ սկիզբն է այլում հրաշափառագոյն ևս կե-
նացն , գլխովին օտար եմք ՚ի կարծեաց այսի և ՚ի
խորհրդոց . իսկ Թէ այդ յիրաւի իցէ , լուսաւորագոյն
ևս ցուցցուք և յայլում ձառի ։ Իսկ առ տեղեաւս և
այնոքիկ դարձեալ՝ որ յետ վախճանին կատարեցան հան-
դէսք քաջնափայլք ՚ի փառաւորեալն բաբելայ , բաւա-
կան են մեծապէս հաւատարիմ գործել զբանս ։

Վ՛անգի որովհետև մինչև ցմահ մրցեցաւ վասն ճըշ-
մարտութեանն , և արեամբն չափ հակառակ եկաց պատե-
րազմաւալ ընդդէմ մեղացն . և առ ՚ի ոչ Թողուլ զկարգն՝
յոր կարգեաց զնա մեծ Թագաւորն , արձակեաց զոգին ,
և հրաշափառագոյն ևս քան զամենայն առաքինի նահա-
տակ վախճանեաց զկեանս , այնուհետև երկինք ընկա-
յան զնա . իսկ զմարմինն՝ որով զնոյն նահատակութիւնն
նահատակեցաւ առ կալաւ երկիր . և այնպէս ապա քա-
ժանեցին արարածք յիւրեանս զնահատակն ։

Ա՛յս արդեօք մարթ էր նմա և փոխիլ իբրև զէնովք ,
և յափշտակիլ իբրև զԵղիա , որոց և նախանձաւորն էր .
այլ քանզի մարդասէր է Աստ , և բիւրս մեզ ընձեռէ
փրկութեանն պատճառս , հանդերձ այլովքն և զսոյն Ձա-
նապարհ եբաց մեզ , որ բաւական է յառաքինութիւն անդր
հռաւիրել զմեզ , Թողուլ այժմ առ մեզ զնոքա նչխարս ։
Վ՛անգի յետ գօրութեանցին՝ զերկրորդ գահ ունին
շիտիմ Թզոյն ՚ի զարԹուցանել առ ՚ի նոյն նախանձ զՀո-
գիս տէսողացն զնոսա ։ Ա՛յս յորժամ ոք մերձ կայ այս-
պիսում տապանի , անդէն գեղեցիկս առնու զձայնակ
զագաթութեանն զանորիկ ։ Վ՛անգի տէսութեանն տապանին
յինքն կաւեալ գՀոգին , յափշտակէ զնա և զարԹուցա-
նէ . և այնպէս լինի հիացուցանէ , որպէս եթէ ինքն իսկ

որ ՚ի նմա հանգուցեալ կայ՝ ՚ի միասին աղօթս առնէ, և մերձ կայ և երևի։ Այլ այսպէս ապա բազում զուարթութիւնք լցեալ նա՝ որ զայս օրինակ զգածեալն է, և այլ յայլմէ եղեալ՝ այնպէս մեկնի ՚ի տեղւոյն։

Այլ ապաքէն քաջութիւք ոք ՚ի վերայ կայցէ բանիս, զիարդ կերպարան վախճանելոցն ՚ի նոցունն իսկ ՚ի վայրացն շարժի ՚ի հոգիս կենդանեացն, եթէ երբէք զմտաւ ածցէ զգաւառ մարդիկն՝ որք անդէն իբրև մերձենան ՚ի շիրիմն վախճանելոցն այնոցիկ, իբրու այն թէ փոխանակ ընդ տապանին՝ զնոսին իսկ յակն արկանիցեն՝ որ հանգուցեալ կան ՚ի տապանակի անդ՝ այնպէս անդրստին ՚ի սեմից անտի բողոք բառնան առ նոսա։

Խոկ բազումք որք ՚ի դժոխոմքեր կիրս ըմբռնեալքն իցեն, մերձ առ գերեզմանս վախճանելոցն տուն քնար կուքեան իւրեանց շինեցին զամենայն ժամանակն. և արդեօք ո՛չ գործեին զայդ, եթէ մխիթարութիւն ինչ ջառնուին նոքա ՚ի տեսութենէ վայրացն այնոցիկ։ Այլ զի՞նչ ասեմ զտեղւոյն և զշիրմացն. քանզի և հանդերձ միայն բազում անգամ յակն արկեալ վախճանելոցն այնոցիկ, և բան մի անկեալ ՚ի միտս՝ զարթոյց զհոգին և յարոյց զանկեալ յիշատակն։ Այսան այսորիկ ընդ նշխարս եթող մեզ ած։

ԺԲ. Խոկ եթէ ո՛չ վայրապար ինչ պանծանօք խօսիմ զայդոսիկ այժմ, այլ գլխովին ՚ի մեր օգուտ կարգեմ, բաւական իսկ են հաւատարիմ գործել զբանս նշանք արուեստիցն՝ որ զօրհնապազ կատարին ՚ի մարտիրոս սաց անտի, այլ և այդչափ խուռնընթաց բազմութիւն մարդկանդ, ՚ի վերայ այսր և ո՛չինչ պակաս քան զայդ սիկ՝ երանելոցս այսորիկ քաջափառ հանդէսք՝ որ յետ վախճանին։

Զիանգի յորժամ թագեցաւ սա, ըստ որում և պատուիրեացն, և ժամանակք ձիգք ՚ի վերայ անցին թագմանն նորա, մինչգի և ոսկերք միայն և փոշի մնացին ՚ի դամբանի նորա, հաճոյ թուեցաւ յարքայից անտի ուղիղ՝ որ յետ այնորիկ թագաւորեցին, զի յարուցանիցեն յայս ՚ի դափնին փոխադրեսցէ զտապանն. և այսպէս կամք եղեն նմա, քանզի ած ինքնին շարժեաց ՚ի դոյն գիտաս արքային։ Այսան գի իբրև եառս զվայրն զայն ՚ի

խենեշութիւն պատանեացն բռնաբարեալ, և վտանգ եւս
ի վերայ կայր՝ եթէ և զլխովին անապատասցի վայրն
ի պարկեշտից անտի և ի բարեկեցիկ մարդկանէ, ի
գուռն շարժեցաւ ի վերայ անիրաւուեաս այսորիկ Թա-
գաւորն, ողորմեցաւ և առաքեաց զսա վերնժխնդիր լի-
նել Թշնամանաց տեղւոյն։

Վասն զի յայժ գեղեցիկ տնկեաց Տէր զվայրն զայն և
փարեաւ, առհասարակ և վտակացն յորդութիւն և գե-
զանի պատկերաւն, և բնութիւն երկրին և եղանակացն
բարեխառնութիւն. ոչ զի վայրապար զբօսեսցուք ի նմա,
այլ զի ի վերայ այսորիկ և զգեղեցիկ Ճարտարապետն
փառաւորեսցուք։ Իսկ Թշնամին փրկութեան մերոյ, որ
միշտ ընդ հակառակս զեղծանի պարգեւաքն ոյ, ամե-
նից ոմանց ապականեալ պատանեաց և բնակարանաց
դիւաց ի Ձեռս դրաւեաց զվայրն զայն, այլ և պիղծ ա-
ռասպելաւ ոմամբ խանգարեաց զպատիւ տեղւոյն, որ-
պէս զի և ի Ձեռն առասպելին այնորիկ՝ այսոյն չարն
նուիրեալ լինիցին այնուհետեւ արուարձանքն չնորհք։

Իսկ առասպելն այսպիսի ինչ էր։ Օ գաւխնին օրիորդ
ասեն, և դուստր գետոյն լադունայ. քանզի զգետս իբ-
րև ծնողս իմն ի ներքս արկանել, և զծնունդս նոցա
յանզգայս ոմանս փոխարկել, և բազում ինչ այսպիսի
նորանշան հրէշս յօդել, այս միշտ սովորութիւն եղև մն-
լորելոցն այնոցիկ։ Ասէր՝ զօրիորդս զայս կարի չքնաղ՝
ասեն տեսանել երբեմն ապուղնի, և տեսուչն տափիղ
ի նա. և իբրև տափանօքն գՀետ եմնատ նորա՝ զի
ըմբռնեսցի, փախեաւ օրիորդն և եկեալ եկաց յարուաբ-
ձանիդ յայդմիկ։ Յայնժամ մայրն վերնժխնդիր եղև
Թշնամանաց դստերն. քանզի պարզեաց վաղվաղակի
զգիրկն և ընկալաւ զկոյսն, և փոխանակ աղջկանն
տունկ իմն երևեցոյց անդէն Հմմնուն օրիորդին։ Իսկ
անժուժկալ տափոտն ըմբռնեալ ի տարփանացն՝ գիրկս
արկանէ զծառոյն, և կինքն սեպհականեալ միանգամայն
զտունկն և զվայրն, և նստի այնուհետեւ ի տեղւոյն
յայնմիկ, և նախապատիւ դասէ զայն և սիրէ քան զա-
մենայն երկիր։ Ասեն այս դարձեալ ասեն եւս՝ եթէ որ
Թագաւորն էր ի ժամանակին յայնմիկ, հրամայէ տա-
Ճար կանգնել նմա և բագին, զի ի Ձեռն տեղւոյն վնաս
Թար մատուսցէ զևն իւրումն մոլութիւն։

Ա՛րդ առասպելն այս ինչ է. իսկ տուգանքդ տուժ ձեալք յառասպելէդ յայդմանէ, ո՛չ և էր առասպել։ Վա՛նգի յորժամ պագշոտք ոմանք յերիտասարդաց կանխեալք՝ որպէս ասացիս՝ թէնամանեցին զդեղգուլթէ արուարձանիդ՝ ի խրախճանութէս և յարբեցութիւնս քաղաքավարելով անդէն, կամեցեալ բանսարկուն առնել յուցանել զչարն, առասպել իմն յօդեալ ի վէր եհան և դէմ մի առեալ բնակեցոյց անդ, որպէս զի զպագշոտութէն դոցա և զամբարշտութէն սաստիկ ևս հրդեհեսցէ պատմութիւնդ այդ։

Այլ արդ ի լուծումն այդչափ չարեաց՝ զդոյն հնարս ամենարուեստ եգիտ Թագաւորն, զի զնոքն զայն փոխագրեսցէ անդր, և զժիշկն առաքեսցէ առ ախտս ցեալսն։ Օ՛ի թէ երբէք հրամանաւ և իշխանութէ արքունի՝ հատանէր բնակչաց քաղաքիդ զձանապարհ մնից յարուարձանդ, կարծէր իմն այնպէս բանդ՝ բբռնաւորութէ մանաւանդ եթէ և բազում անագորոյն և վայրենի կրից գործ. ապա եթէ օրէնս ի վերայ կալցէր՝ զի լաւ մարդիկն և պարկեշտք միայն ելցեն անդր, իսկ պագշոտքն և անժուժկալք խափանեսցին անտի, ապաքէն յոյժ դժուարաբերան լինէր դատակնիքդ, և կապ և կռիւ լինել պարտ էր զօր ամենայն, յորժամ առն առն իւրաքանչիւր ի քննութէն մտանէին քաղաքավարութէ կենաց։ Ա՛պա միայն ելք քաջադէպք այսքանեաց չարեաց համարեցաւ նա զմերձաւորութիւն երանելոյն այնորիկ. քանզի բաւական դիտէր զմարտիրոսն ի լուծումն բռնութէն դիւին, և յուղղութիւն երիտասարդացն յոփութէան. և ո՛չինչ արդեօք վերկեցաւ ի յուսոյն իւրմէ։

Վա՛նգի իբրև հասեալ ժամանակ ոք ի գալոիդ յայդ, և անդէն ի նախագրանց անտի արուարձանին տեսանէ զվկայարանն զայն, այնպէս իմն ի չափս ունի զանձն, որպէս եթէ ոք ի պատանեաց ի խրախճանի տեսանելով զդաստիարակն զի առընթեր կայ, և ակնարկի առբարեալ պատուիրէ նմա՝ զի քաջավայելուչ օրինօք արքցէ և կերիցէ և խօսեսցի և ծիծաղեսցի, և ամենևին պատկառ կայցէ՝ զի մի քնաւ ըստ չափն ելցեալ աղարտեսցէ զհամբաւ անձինն։ Այլ ի տեսութէ անտի յայնմանէ բարեպաշտագոյն ևս յարդարեալ և զերանելին

զայն ՚ի խորհուրդս իւր նկարեալ, վաղվաղակի մնալ ՚ի տապանն, և հասեալ անդր՝ մեծ ևս ակիւ ըմբռնի յանձն իւր, և ասպա զամենայն վատութիւն բովանդակ յանձնէն ՚ի բաց թօթափեալ և իբրև թռչուն թեթևացեալ, այնպէս մեկնի ՚ի բաց։ Այս զրոս միանգամ ՚ի քաղաքն անտի ելեալ՝ ընդ առաջեալ գտանէ ՚ի ճանապարհին, նովին պարկեշտութիւք յղէ զնոսա երթալ զբոնանալ ՚ի գաւիթն, ո՛չ զայն բարբառ միայն արձակելով առնոսա, եթէ * ցնծացէ՛ք առաքի՛ն տէն դողութիւ՛ն ։ ՈՂՄ. Է. 11. այլ և զառաքելականն զայն ՚ի վերայ բերելով. * եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ զինչ և առնիցէք, զամենայն ՚ի փառս ՅՕ արասջիք ։ Ա. ԿՈՐ. Ժ. 31։

Իսկ զնոսա՝ որք յետ փափկանալոյ անդէն իջանիցեն ՚ի քաղաքն, եթէ երբէք գտցէ՝ զի սանձակոտորք եղեալք հեղգ ազդոյնս վարեալ լցեն կեանս, և ՚ի գինեբուս և յանտեղի գրգանս գրգեալ, զարբեալսն զայնոսիկ լիբականն ժողովեալ վանս, ո՛չինչ թողու զի զաւդանան արբեցութիւ՛ն առեալք յանձինս՝ այնպէս դարձցին ՚ի տունս իւրեանց. այլ ահիւ երկիւղին զգօնացուցեալ զնոսա՝ ՚ի նոյն զգաստութիւն առեալ ածէ, զոր մինչև ընկղմեալ յարբեցութիւնն՝ ունէին նոքա։ Օ՜ի իբրու սիւգ իմն անօսր յամենայն կողմանց ընդ ՚ի նոսա՝ որք միանգամ գտան ՚ի վկայարանի անդ. սիւգ՝ ո՛չ ասեմ զգալի, և ո՛չ որ զմնարմինսն բարգաւաճ գործեացե՛, այլ որ բաւական է և ՚ի նոյն ինքն ՚ի հոգին թափանցել, և զնա վայելուչս յարդարել յամենայն կողմանց, և զամենայն ծանրութի՛ն երկրաքարշ կտրել հատանել, և զծանրաբեռնն և զանկեալն նորատեղծել և թեթևագոյնս յարդարել։

ԺԳ. Այս ապաքէն գեղեցկուի գաւիթոյն և զՀեղդագոյնն ՚ի մարդկանէ լինքն հրաւիրեալ յանկուցանե։ Իսկ մնարիրոն իբրու յորսորդուե իմիք նստեալ անգանօր, և թակարթեալ զորս մտանեն անդր՝ փութապես կալեալ ըմբռնէն զնոսա, և ՚ի զգօնուի ածեալ նախ՝ այնպէս ապա արձակէ զնոսա. որպէս զի մի անառակութի՛ն վարեսցին այնուհետև ՚ի տարփալիսն իբրեանց, այլ պարկեշտութի՛ն։ Այանզի որովհետև կեաք ՚ի

մարդկանէդ վատուքն ըմբռնեալք, և կէսք դարձեալ կենցաղականս հոգովք՝ ոչինչ ախորժէն մերձենալ ի դիրս հանգստեան մարտիրոսացն, վասն այնորիկ և հոգայաւ ՚ած՝ զի օրինակ զայս ցանկեսցին նոքա, և վայելեսցեն ի դարմանս հոգւոց իւրեանց. ի դէպ եկեալ բանիս ՚ձգ բարւ օրինակին այնմ՝ որպէս եթէ ոք ախտացեալ ումեք՝ որ դժկամակն լինիցի ի ձաշակումն դեղոյն օգտակարութեաւ՝ խաբանօք մատուսցէ զդեղն պատեալ ի համեմունս անուշոնս։

Այլ այսպէս տակաւ տակաւ առեալք զդարմանս բժշկութեն, չայն լինչ հասանէն ժամանեն, զի ոչ միայն զդգանք փափկութեն՝ այլ և ցանկութիւն զգոյն եղելոյն բազմոց պատճառաք եղիցէ յարուարձանդ չայդ. մինաւանդ եթէ որք համեստագոյնքն իցեն ի նոսա, միայն ի պատճառս այսորիկ գնան անդր. իսկ որք խնամարկացոյնք իցեն քան զնոսա, միանգամայն ի պատճառս երկաբանչիւրոցն. իսկ որք և քան զսոսա անկատարագոյնքն իցեն՝ ի պատճառս միայն զգդանաց փափկութեաւ եւանեն ի վայրն։ Իսկ իբրև եկեալ ժամանեն ի տեղին չայն, առ ինքն կոչեալ զնոսա մարտիրոսն, և ի սեղանոյն իւրմէ կերակրեալ զնոսա, և քաջալերս սպառազինեալ, ոչինչ նեղել նոցա կրել լինչ ի դժնդակացն։

Այլ է զարմանս իմն՝ որ անդ կատարին գործք. զի անձն գիրգ և վատ՝ պարկեշտանայ անգէն, և իբրու ի մոլեգնութէ անդ իւրում սթափեալ՝ զգօնանայ. ի դէպ եկեալ բանին՝ որպէս եթէ ոք ի հնոց անկեալ՝ ոչինչ կրեսցէ ի հրոյն չայնմանէ։ Իսկ ի ժամուն՝ չորում առհասարակ մանկութեն և ապերասան չանդգնութեն և գինին և չղփութեն սաստկագոյն ևս քան զոյց ընթացեալ ըմբռնեն զկորհուրդս, ցօղ իմն չերանելոյն չայնմանէ ի ձեռն տեսանելեացն տեղացեալ ի հոգիս հայեցողացն ի նա, ընդարմացուցանէ զոյն, շինօրացնէ զհրդեհն, և բարեպաշտութեն բազում առեալ արկանէ ի միտս։

Այլ արդ զբռնութեն զանժուժութեն՝ զայս օրինակ եղեալ երանելին այն։ Իսկ զիարդ ապա և զգօրութեն շինօղացդ զդիւին։ Այլ առաջին՝ չորժամ միանգամայն և զաթոռ Հանգստեան նոցա և զտուգանս տուժից առաքելն այնորիկ անգործ անպիտան կայցէ. և ապա՝ և

զղեան ինքնին գլխովին մերժեաց ի վայրացն։ Այսպէս մինչեւ ասացեալ մեր զեղանակ արտասահմանութե՛ն նոր բա, աղաչեմ զայն ինչ յուշի կապել ձեզ, եթէ նա ոչ անդէն վաղվաղակի իբրեւ եկն ի տեղիդ՝ արտաքս վռնեաց զղեդ. այլ զառկայացեալն ի նմա գլխովին անգործ կացոյց և զբերանն եխից, և քան զքարինս ոմանս առաւել իմն անկռինչ եթող զնա. սակայն և քան զմերժեալն զնա ոչինչ խոնարհագոյն էր յաղթական լինել առկայացելոյն այնմիկ։

Այլ յայնժամ ապա որ յառաջն զամինեսեան պատրէր ամենայն ուրեք, նա և ոչ՝ի փոշին անգամ համարձակէր դառնալ հայիլ երանելւոյն բաբելայ։ Այսչափ է զբուն սրբոցն, որոց՝ի կեանս իւրեանց և ոչ հովանւոյն նոցա հանդարտեն նոքա և կամ հանդերձիցն. իսկ՝ի մահու նոցա՝ և՝ի տապանացն զդողանի հարկանին։ Որպէս զի և եթէ ոք անհաւատ իցէ առաքելոցն գործոց, զայսոսիկ յայն արկեալ դադարեսցէ ուրեմն՝ի լրբութենէ իւրմէ։

Վանզի որ հելլենացւոցն ամենայնին յաղթեաց՝ի նախնւոյն, այժմ իբրու՝ի ձեռն իւրմէ յանդիմանութե՛ կշտամբեալ՝ի մարտիրոսէն, դադարեաց՝ի հայհոյել և ոչինչ խօսեր այնուհետեւ։ Այլ արդեօք զառաջինն կարծեալ իմն այնպէս էր, եթէ՝ի պատճառս անհաղորդ ինալոյ՝ի զոհիցն և յայլոց ևս սպասհարկութեանցն, առնէր զայն։ Վանզի այսպիսի ինչ է բնութի դիւացդ. յորժամ՝ի հոտս ձենձերոյն և՝ի ծուխ և յարիւնս պաշտեն զնոսա, նոքա իբրեւ զշունս արեհապանձս և որկրեցայս մերձ կան՝ի լիզուլ. իսկ յորժամ ոչ ոք տայ նոցա յայսպիսեացս աստի, իբրու եթէ՝ի սովոյ խմիմեն ևս պականեալ սատակին։

Յորժամ զոհքն կատարին և խորհուրդքն պղծուե՛, քանզի և ոչ այլ ինչ են արդեօք խորհուրդք նոցա, քան եթէ չամչուշ ուռփանք, և անառակութի՛ք տղայոց և պղծութի՛ք ամուսնուե՛ց և քանդմունք տանց. Թողում այժմ ասել զձախողակ սպանութե՛ցն զսովորոյթս, և զընթրիսն՝ որ անօրինագոյն ևս են քան զսպանութիւնն։ Այլ յորժամ այդոքիկ կատարին՝ նոքա մերձ գան և բերկրին. Թէպէտ և չարարուեստք, Թէպէտ և դիւթք, Թէպէտ և ժանտախտք ոմանք իցեն՝ որ զխորհուրդսն

զայն կատարեսցեն. մանաւանդ եթէ և ոչ այլք ոմանք են որք այսոցիկ մնատակարարք լինին։

Վասնզի այր իմաստուն և առաքինի և պարկեշտ՝ խրախճանութիւնս և գինեհարութիւնս երբեք չանձն ոչ առնու, և քան զպէտ ոչ ինքն հանէ ՚ի բերանոյն, և ոչ դարձեալ եթէ այլ ոք լըսեսցի յայսոսիկ՝ հանդուրժէ լսել։ Վ.յլ արդ պարտ էր նմա, եթէ խնամակալ ինչ էր նա առաքինութեանն մարդոյ, և վայրիկ մի հայթհայթեր զբարեկենդանութիւն զիւրոց պաշտանեիցն, ոչնչեւ առաւել խնդրել քան զկենաս առաքինիս և քան զուղղութիւն վարուց, և զամենայն զգարշ խորտիկսն զայն թողուլ ըզքանել։ Վ.յլ քանզի չէք ինչ նախապատիւ առնոսա քան զկորուստ մարդկանդ, նոքիմիք և պարարիլ աւելն նոքա և պատուիլ, որ զմեր կեանս բնաւորեցան հինն ՚ի վեր տապալել, և զամենայն գեղեցիկս մեր որ մնատաքի խլել։

ԺԴ. Վ.արդ զառաջինն կարծել ինն էր այնպէս, եթէ և գեղ այդ ՚ի պատճառս այդորիկ լռեալ կայ. այլ ապա խայտառակեցաւ քանն՝ զի ՚ի բռնութենէ հարկին հաշկանդեալ կայր. քանզի տադնապ ահին ՚ի վերայ անկեալ նորա՝ իբրև սանձ կոծեալ ընդտաներ զնա մի և այ բնաւորական խաբանօքն վարել առ մարդիկ։ Վ.ւ ուստի այս յայտ էր։ Վ.յլ մի գուք խռովեսջիք երբեք. քանզի ժամ է ինձ յայտյայտ իմանութիւն ՚ի դէմն բերել ձեզ զայդ. և ապա յետ այնորիկ ոչինչ ՚ի դեպ յաջողեսցի նոցա՝ որք զլըբելն խնդրեսցեն յայսոսիկ՝ գործել զայդ, ոչ ՚ի վերայ առաջնոցն այնոցիկ, ոչ ՚ի վերայ զօրութիւն մարտիրոսիս, և ոչ ՚ի վերայ տկարութեան դիւիդ այդորիկ։

Վանզի ոչ ՚ի կարծ ինչ քանից և ոչ դարձեալ հաւա նականաց ինչ ինձ պէտք էն ՚ի յայտյայտիմանութիւն իրացդ, այլ զնորուն իսկ դիւին զվկայութիւն յանդիման ընծայեցից ձեզ։ Վանզի դա ինքն զօրհասական ըզվերդ ետ ձեզ, և գլխովին զամենայն զհամարձակուիդ հատ կտրեաց ՚ի ձէնջ։ Վակայն գուք մի ինչ երբեք յանուցուք ընդ դա. քանզի ոչ եթէ կամաւ ինչ զիւրոն գետնաքարշ արար, այլ ՚ի բռնադոյն և զօրութէ հարկաւորեալ գործեաց զայդ։

Իսկ զիաՐդ արգելօք գործեցաւ բանդ, և զինչ էր չեզանակն։ Իբրև Թագաւորն այն վախճանեցաւ Ի կենաց աստի՝ որ զմարտիրոսն փոխադրեալ էր, զեղբայր նորա առնուլ զիշխանութիւնն Ի Ձեռ մատոյց նա՝ որ և յառաջագոյն նմա զնոյն պատիւ տուեալ էր. և առնու սա (1) զարքայուէին առանց Թագի. քանզի զուգաչափ էր և վախճանելոյ եղբօրն իշխանութիւն։ Այլ քանզի խարդաւանող էր սա և ապիրատ, զառաջինն կեղծաւորեցաւ խորհել զքէնին Ի ընդհս այնմ՝ որ զիշխանութիւնն ետ նմա։

Իսկ իբրև և սա փոխեցաւ յաշխարհէ, Ի վեր առ այնուհետև զպատերազմն (2), և մերկ գլխով զոր Ի վաղնջուց իսկ ունէր ծածկեալ՝ զդիցապաշտութիւնն Ի ներքս սրկանէր և առհասարակ ամենեցունն յայտնի առնէր. ապա և հրովարտակս ամենայն ուրեք ընդ տիեզերս գրեր տայր, զի նորոգեսցին մեհեանք կուռց, կանգնեսցին բագինք, նախնի պատիւք հատուսցին դիւաց, Ի տեղեաց տեղեաց խուզընդնթացք աղաչաւորաց մերձենսցին առ նոսա։

Յաղագս այսորիկ ապա մոգք և դիւթք և կիւսաւ հմայք և հաւահարցք և ամենաժողովք (3). և յամենայն կողմանց տիեզերաց ամենայն գործարանք կախարդուե խուզն ընթանային. և էր այնուհետև տեսանել զարքունիսն լցեալ նշաւակ և փախստական մնրդկամբ։ Վանգի որք միանգամ երբեմն Ի սովոյն նուաղեալ կորնչէին, որք Ի դեղատուութիւնս և Ի չարարուեստ հնարս ըմբռնեալքն էին, որք միանգամ Ի կապարանս արգելեալ նստէին, և որք Ի մետաղս տքնէին. իսկ այլք դարձեալ՝ որ յարհեստից զաղբուքն հազիւ պատրեհին իւրեանց քաւական լեալ էին, յանկարծակի քահանայք ոմանք երևեալք և սրբութեց պաշտօնեայք՝ այնպէս Ի մեծի պատուի քննակէին։

Իսկ Թագաւորն ինքնին զօրավարս և իշխանս առեալ արձակէր, և յումեքէ երբեք չամաչէր. իսկ զարս պագ-

(1) Հայրն յուլիանոսի ուրացողին յուլիոս կոստաս եղբայր մեծին կոստանդիանոսի։

(2) Յուլիանոս, որ եղև կեսար յամի 355. և Թագաւորեաց յամի 361։

(3) Յունարէն μαγαγύρτης. էին նոքա՝ որք յիւրաքանչիւր ամիս ժողովէին ողորմելի մնրն ասատւածոց. և այս պաշտօն էր քրմացն ռեպ։

չոտս և ՚ի բոզանոցացն կանայս հանեալ արտաքս ՚ի քնակարանացն՝ յորս նստէինն, ընդ իւր առեալ շրջեցուցանէը ընդ ամենայն քաղաքն և ընդ չէնս։ Այլ եբիվարն արքունի և ամենայն անձնասպահքն ՚ի Թիկանց կուսէ ՚ի բացեայ գՀետ ընթանային. իսկ բոզարած արք և կանայք ՚ի մծոց՝ քերէին. և ամենայն սարք հոմանեաց գթագաւորաւն շուրջանակի բոլորեալ՝ ունէին գնա ՚ի միջոցին, և այնպէս ընթանային ընդ հրապարակն, և բարբառեալ խօսէին այնպիսիս, և ուժգին ծաղը արձակէին այնպէս, ըստ որում ՚ի դէպ էր այնպիսի ազգի մարդկանդ։

Ակայն և գիտեմք իսկ քաջ, եթէ գկնի մեր եկեղց մարդկան անհաւատալի բանքս կարծեսցին յաղագս առաւելազանցութեանն անկարգութեանս. իբրև զի և ՚ես՝ ՚ի սոսկականաց ոք արդեօք՝ այր զանարգութեանէ և զպղծութեանս կեանս վարեալ էցէ, երբէք ընտրեսցէ հրապարակաւ գայժ անկղնտանալ յայսոսիկ։ Այլ առ այնոսիկ որք տակաւին արդ կենդանիք էցեն՝ բանից էնչ չէն էնձ պէտք. քանզի որք առաջակայք եղեն իրացս և ականատեսք, նոքին և զբանս զայսոսիկ լուիցեն այժմ։ Վանզի վասն այնորիկ և առ կենդանութեանէ վկայից գրեմ զայսոսիկ, զի մի՛ որ թերևս՝ եթէ գկնոյն պատմեցից էնչ ՚ի մէջ անգետ եղելոցն՝ իբրև սպատաբերան ստասաց համարեսցի զիս։ Վանզի ՚ի նոցանէ՝ որք ականատեսք եղեն այսոցիկ, տակաւին կենդանի կան առհասարակ և ծերքն և մանկունք, զորս և աղաչեմ միանգամայն զամենեսեան, զի եթէ էնչ մի յանձնէ խմիդ յաւելեալ էցէ իմ ՚ի բանս, յառաջ մատիցեն և գիս էնքնին կշտամբեսցեն. սակայն յաղագս յաւելելոյ էնչ՝ ոչինչ ապաքէն ունիցին դոքա յանդիմանել զիս. այլ միայն վասն պակաս թողլոյ։ Վանզի և չիք իսկ հնար բովանդակ բանիս ՚ի դէմն ածել զամենայն գնորա զառաւելութիւն վատթարութեանն։

Իսկ առ մարդիկն՝ որ գկնի մեր եկեալ՝ անհաւատք երբէք եղիցին այսոցիկ, զայս ունիմ ասել. եթէ դեռ այդ առ ձեզ՝ զոր ափրոդիտէ (*) կոչէք, ոչինչ ամաչէ

(*) Ափրոդիտէ ըստ յունական դիցաբանութեանն էր չածուհի սիրոյ գանկութեան, և ամենայն այդպիսի անառականութեանց։

այսպիսի ունել պաշտօնեայս ։ Պատ ոչինչ են զարմանք, եթէ և հիւպատեաքն այն՝ որ միանգամ մատնեալ էր զանձն դիւացն ծաղուս, ոչինչ զամենի հարցի յայն ինչ իրս՝ յորս պերճանային պաշտեալքն առ ի նմանէ առ տուածք ։

Օ ինչ ոք արդեօք սասոցի, և զհեռելահմայուեցեն և զմանկակատոր սպանդիցն ։ Պանգի ի ղոհս յայսոսիկ՝ յոր նախ քան զգալուստն քրի ժպրհեցան մարդիկ, և յետ երեմանն նորա խոսիանեցան, միւսանգամ յանդգնեցաւ սա. սակայն յայտնի ոչ ևս. զի թէպէտ և արքայ էր և իշխանութիւ գործէր զանհնային, այլ սակայն առաւելազանցութիւն ամբարշտութիւն գործոցն՝ կէր ի վերոյ անցանէր քան զհեծութիւն իշխանութիւնն. սակայն և յանդգնեցան առ ի նոյն ։

ԺԵ. Արդ այս թագաւոր յաձախ եղեալ ի գաւխի անդր բազում ձօնիւք և բազմապատիկ զոհիւք և ուզխիւք արեանց ի սպանդիցն խաշանց, ի վերայ կացեալ՝ սաստկապէս ժտէր ի դիւէն և խնդրէր պատգամ, և յողոք անկանէր պատասխանի առնել ըստ խորհրդոց մտաց իւրոց ։ Յոկ քաջն այն՝

» Որ զաւազդն ըզքիւ գիտէր,
Եւ զանդնդոց ըզչափն ունէր,
Եւ խուլ մարդկանն խեղամուտ էր,
Եւ ըզհամերջ ձայնըն լըսէր »

որպէս ինքն խոկ ասաց, զայն ինչ հրաժարեցաւ յայտնի և լուսաւորագոյնս ասել, եթէ ի պատճառս երկն բաբելայ և մերձ եղելոյ առ նա զօրութեանն՝ խցաւ քեբան նորա և ոչ կարէր բարբառել. զանգիտեալ՝ զի մի Թերևս ի վերայ անձին ծաղը շարժեսցէ ի պաշտօնեայս իւր ։ Յոկ կամեցեալ առաջաստել զպարտութիւն իւր, պատճառս ինն մերկացաւ իւրում լուծինն. նա առանիկ և առաւել ևս ծիծաղելի առակեաց զանձն քան զլուծինն գլխովին. քանզի լուծք միայն զտկաբուն անձինն երևեցուցաներ. իսկ այժմ միանգամայն և զտկարութիւն և զվատթարութիւն և զանպատկառութիւն ի դէմս էած, յորժամ և զանթաքչելիսն անգամ գուն գործէր նա թաքուցանել ։

Յոկ զինչ Թերևս պատճառքն էին. « Պատմիդ

այդ , ասէ , վայր է լցեալ մեռելովք . և այդ խափանէ զպատգամէ ,, : Ա՛յլ քանիսն ևս լաւագոյն էր , հիգ և թշուառական դու , խոստովան լինել զմարտիրոսին զօրութիւն , քան եթէ այդպէս անպատկառաբար պատճառել : Ա՛րդ դևն զայսոսիկ . իսկ անմիտ ալքայն իբրև ի թատրոնի խաղացեալ՝ հանդէս իմն առասպելի ի մէջն կերպարանեալ , վաղվաղակի մերձեցաւ առ երանելին բաբելաս :

Ա՛յլ՝ վ դուք պիղծք և ամենապիղծք , եթէ ոչ դուք կամաւ զմիաբանս խաբէք , և չայլոցն կորուստ միանգամայն կեղծաւորիք , զի՞ դու երբէք անսնուն և անսահմանաբար խօսիս զմեռելոցն . իսկ դու իբրու չականէ չանուանէ և սահմանաբար լսեալ , թողեալ զայլն՝ զերն զայն միայն շարժես : Վանզի պարտ էր ըստ վճռոյ դիւիդ այդորիկ առհասարակ զամենայն չիրիմն պեղել որ ի գաւիթն անդր , և զիարտուիղդ զայդ խուճապիչ՝ չայժ ի բացեայ կացուցանել առ ի յաստուածոյն տեսանելոյ :

Ա՛յլ ոչ վասն ամենայն մեռելոցն ասաց , ասես : — Ա՛ւ ինչ ապա զդոյն չայտնապէս չխոստովանեցաւ : Ա՛պա քաջ իսկ զդոյն առակ օրինակի եթող նա քեզ՝ որ զառասպելդ զայդ մոլորութեան կերպարանիդիր : Վանզի ես , ասէ , զմեռեալսն ասեմ , զի մի թերևս զիմ պարտութիւն հրապարակագոյժ արարից , առ այս և երկնչիմ և չականէ չանուանել զերն ասել . իսկ դու իմա ինձ զասացեալն , և փոխան ամենեցուն զմարտիրոսն շարժեա միայն . քանզի դա համբարոյց զմեզ : Վ՛իտիր նա զմեծ ապշութիւն զիւրոցն պաշտօնէից , մինչ զի և ոչ զայնչափ չայտնի մեղմեխանն՝ ի միտ առնուլ բաւական ինչ եղեն . զի թէպէտ և առհասարակ չափշուի կրթեալ էր ամենեցուն , թէպէտ և խօթամիտ լեալ էր , սակայն և ոչ այնպէս արդեօք կարէին ինչ քօղարկել զդիտութիւն պարտութեն նորա . այնպէս չայտնի և մերկապարանոց էր առհասարակ ամենեցուն :

Օ՛ի եթէ արդարև պիղծ և գարշելի ինչ են , որպէս ասես , դիակունք մարդկանդ . քանի՞ ևս ապա առաւել իցեն անքան կենդանեացդ . չայտ է թէ այնչափ՝ որչափ ինչ աղդ այդ անարգ ևս է քան զազգն զայն : Վանզի և թաղմանց շանց և կապկաց և իշոց ոսկերք

թաղեալ էին առընթեր մեհենիդ այդմիկ, և առաւել դժուար պարտ էր պեղել՝ի վայրաց իւրեանց. եթէ ոչ թերևս քան զկապիկան առաւել անարդ համարեացիս դու զմարդիկ։

Այլ արդ ուրանօր արդեօք իցեն, որք զգեղեցիկ հրաշակերտն ոչ զարփին՝ որ ի մեր արքանեկութէն հաստեցաւ, թէ հնամանեն և դիւին ընծայէն զաստղդ զայդ, և զնա ինքն աստն արփին լինել գլխովին (*)։ Վասնզի ա րեգակնդ՝ յորժամ և դիակունք բիւրք անկեալ կայցեն ընդ երկրաւս, ինքն ծաւալեալ սփռի ողջոյն ընդ տիեզերս, և երբեք՝ի պատճառս ինչ պղծուե՛ ոչ զձառագայթիցն ամիծուիկ, և ոչ զազդեցութէն ձառագայթիցն իւրոց։ Այսպէս ձեր աստուածդ՝ի գործ կենցաղ և՝ի գիւթութէ և՝ի սպանուէ երբեք ոչ գարշի և ոչ ատեայ, այլ և տարփայ և փարի և սիրե. իսկ՝ի մերոց մարմնոցն՝ի բաց փախչի. թէպետ և չարութէն տեսակ՝ և առ նոսա և՝ս գարձեալ բիւրուց ամբաստանութէն արժանի լինել կարծեսցի՝ որ զնոցն գործիցեն, սակայն մարմին մեռեալ և անշարժ՝ և ոչ միւմ երբեք բամբասանաց և յանցանաց բաժանորդ ոչ է։ Այլ այդ իսկ է յեղանակ կենաց դիւացդ ձերոց. գարշիլ՝ որք չեն գարշելիք. իսկ պատուել և ընդունիլ՝ որ գլխովին իսկ ատելութէն արժանիք են և գարշանաց։ Այլ արդեօք այր առաքինի ոչ յողջախոհ մտածութէնն և ոչ՝ի կենցաղօգուտ արդեանցն երբեք խափանեսցի՝ի պատճառս մարմնոյ մեռելոյ. այլ եթէ հոգւով առողջ իցէ, թէպետ և առ գերեզմանօքն բնակուի կալցի, միանգամայն և՛ զժուժկալութէն և՛ զարդարութէն և զաստնային առաքինութէն ցուցցէ յանձն իւր։

Վարձեալ առ այս՝ և արուեստաւոր իւրաքանչիւր անարգել զաստնայն որ իւրում արուեստին է՝ յառաջ ընծայէ. և զանձն առաջի մատուցանէ խնդրողաց իւրոց, ոչ միայն մերձ առ դիակունսն նստելով, այլ թէպետ և զնոյն իսկ զգերեզմանս վախճանելոցս շինել պարտ իցէ, և՛ նկարագիր և՛ քարահատ և՛ հիւսն և՛ դարբին պղնձոյ և առհասարակ ամենեքեան զգործս իւր-

(*) Վանզի առ հեթանոսս ասէղն բազում անգամ զարեգակն նշանակէր։

եանց ՚ի միասին պսակեն. իսկ միայն յամենեցունց ա-
պողմնդ ՚ի դիականց անտի ասէ զանձն խափանիլ առ
՚ի չհանդերձեալսն նկատելոյ։

Ասայց արդ և առ մեզ կայցեն արք մեծամեծք և սքան-
չելիք, և յառաջ քան զհազար և զբոլորեքհարիւր ամն
նախապատուիք եղիցին հանդերձելոցն, և ՚ի մարգարէու-
թէ անդ իւրեանց ոչինչ խնդրեցին յայսոսիսեայ աստի,
ոչ արտնջեցին, ոչ զվախճանելոցն շնորհս հրամայեցին
քանդել, և ոչ զդիակունսն քարշել, և ոչ օտար և ան-
պատկառ օրէնս հնարեցան գերեզմանակրկիտ մոլեգնու-
թէ։ Ասէ կէսք ՚ի նոցանէ բնակեալ ՚ի մէջ անտի և
պիղծ ազգաց. իսկ կէսք դարձեալ ՚ի մէջ գոլով խու-
ժադուժ մարդկան, ուր ամենայնքն գլխովին ապակա-
նութէ էին և գարշանք, ձշմարտութէ նախաքարող լի-
նէին ամենայնին, և օտարին պղծուէ ոչինչ խափանէր
զնախաձայն բարբառս նոցա։ Ընդէր արդեօք։ Վասն-
զի յիծայինն զօրութէնն ազդեալք խօսէին նոքա զոր միան-
գամ խօսէինն. իսկ գեղ թափուր գոլով և ամայի ՚ի
զօրութէնն յայնմանէ, ոչինչ ունէր նախաքարող լինել։
և զի մի թերևս երևեսցի ինքն ՚ի վարանս տապնա-
պիլ, հաւանականս ինն և ծիծաղականս գլխովին բըռ-
նադատէր յօդել։

Վասնզի առ ինչ ապա, ասա դու ցիս, յառաջին ժա-
մանակս ոչինչ ասաց յայսոսիսեայ աստի և ոչ բաղձա-
ղեաց։ Երբև զի յայնժամ ունել ունէր իբրև պատրուակ
պատճառել զայն ինչ՝ եթէ ոչ պաշտօն հարկանէն նմա.
իսկ զարդիս ՚ի բաց կապտեալ նորա ՚ի պատասխանւոյ
աստի, գնացեալ առ մեռեալսն ապաւինեցաւ, տագնա-
պեալ զի մի ինչ կրեսցէ չար. քանզի ոչինչ կամէր յան-
վայելս ինչ անկղնտանալ. այլ սակայն դուք ինքնին բըռ-
նադատեցէք զնա, որք բազմադէմ սոսասահարկութէդ
ձերով զպատճառսն հատեալ առ ՚ի նմանէ, ոչ թողէք
զմա երթալ ապաստան լինել ՚ի կարօտութէն զոհիցն։

ԺԷ. Ասէր զայսոսիկ լուեալ դերասանդ այդ՝ հրա-
մայեաց բառնալ ՚ի տեղւոյն զատպանն. որպէս զի ա-
մենեցուն առհասարակ յայտնի և երևելի կայցէ պար-
տութէն դիւիդ։ Վասնզի եթէ երբեք ասացեալ էր նո-
րա, եթէ ՚ի ծերն պատճառս ոչինչ կարեմ բարբառ ար-

ձակել, սակայն և մի ինչ շարժէք զդա, մի և այս յարուցանէք ամբոխ, իբրայոցն և եթէ յայտնի լինէր գործն. քանզի և ամաչէին իսկ նոքա՝ զի մի և յայլս ոմանս տարածեսցի բանն։ Իսկ այժմիկ որպէս այն թէ մնասն խնդրեր լինել իբրեւ տկարութենէն, այնպէս բռնադատեցաւ գործել զամենայնն. մինչ զի և ոչ՝ թէպէտ և կամէր ոք՝ յայդոցէր նմա քօղարկել զեղեալն. քանզի այսուհետև չիք ինչ հնար անարատ պահել զկեղծաւորութենէն. իբրև զի ոչ ոք այլ՝ի մեռելոցն, այլ մարտիրոսն միայն փոխեցաւ անտի. և ոչ բնակիչք քաղաքին միայն և արուարձանիդ և հանդուանացդ, այլ և բոլոնակք կարի բացական վայրացդ՝ որք զտապանդ զայդ ոչ տեսանէին հանգուցեալ՝ի տեղւոջն, եկեալ խնդրէին զսպատնաւան. և անդէն՝ի վերայ հասանէին բանին, եթէ զնմարդ յորժամ զդեգ զայդ ողոքէր Թագաւորն՝ զի գուշակութենէս ինն՝ի վեր բերցէ, առ պատասխանի՝ եթէ ոչինչ կարեմ գործել զայդ, մինչև ոք զերանելին բարելաս ոչ հեռացուսցէ՝ի վայրաց աստի։

Այլ արդ ով դու ծաղոս նշաւակ, մարթ էր քեզ և յայլ ինչ պատճառս երթալ ապաստան լինել, քան ո՞ր ես բազում անգամ գործեալ է քո, բիւրս ինն արուեստակելով՝ի բանս կեղակարծս։ Այլ արդեօք առ լուդացին այն (*) պատգամ տալով քո, եթէ "Այնգեալ ընդ ալիս գետ, քակեսցէ զնչխանութենէ մեծ,,. և զնա ինքն՝ առեալ լնծայեցուցեր՝ի վերայ խարուկին։

Իսկ դարձեալ և՝ի սաղամինա գովին վարեցար արուեստակութեբ, և ծիծաղելի ինն զհետ այնորիկ բերելով բան։ Վանզի ասէզդ այդ, եթէ՝

"Հասանէ քեզ զորդիս կանանց՝ի մահ վարել" նմանաօրինակ էր այնմ՝ զոր առ լուդացին այն բարբառեցար. իսկ զհետ բերելդ այդորիկ, եթէ՝

"Կամ տարածեալ ըզգեմատրէ կամ ամիռոփեալ" լի էր բազում ծաղոս, և հանդուգնատիպ լեզուի խաբուսիկ մարդկանդ՝ որք յերեքբուղինն կացեալ բանդատ դուշեսցեն. այլ սակայն զայս դու ոչ կամեցար։ Վարթ էր քեզ և անյայտիւք առագաստել զբանն. քանզի այդ քումդ է հանապազ արուեստի գործ. այլ սակայն միա-

(*) Առ կրեսոս լուդացւոց Թագաւոր։

քան ամենեքեան ՚ի վերայ կացեալ քո, և ոչինչ խեղա-
մեալ եղեալք բանին՝ դարձեալ և զուարճանայ զայնորիկ
խնդրելին ՚ի քէն։

Այր քեզ կարելի և յաստեղս անդր գնալ ապաստան
լինել. քանզի և զդոյն բազում անգամ արարեալ ես քո,
և ոչ պատկառես դու և ոչ զամենի երբեք հարկանես։
Վասնզի ոչ եթէ առ մնացեալ մարդիկն բանք ինչ են քո,
այլ առ խաչինս և առ որս անբանագոյնք ևս իցեն քան
զնաշինս։ Ահաբեւս չիցէ՞ն անբանդ այդ իմանատնագոյն
ևս քան զՀելլենացիան՝ որ զայդոսիկ լուան, և ոչինչ ՚ի
խաբանաց այսոքի ՚ի բաց կացին։

Ասէ ՚ի վերայ հասանէին, ասէս, ատուէն։ — Այս
ուրեմն պարտ էր քրմիդ միայն Թաքնաբար ասել զՀնմար-
տուԹիին, և նա ապա լաւ ևս քան զքեզ գիտեր առա-
գաստել զպարտուԹիդ։ Իսկ այժմ, դու Թշուառացեալ
ոգի, ոՀ զքեզ աճ ձգեաց յայդչափ ահներև անպատ-
կառուԹիւնդ արկանել զանձն։

Ասէ Թերևս դու մեղար և ոչինչ. իսկ Թագաւորն
գԼիսովին անարուեստ դերասան ձևացաւ ՚ի Հանդիսին.
քանզի անսահմանաբար լուեալ զմեռելոցն, միայն առ
նզդ այդ մատեաւ նա։ Վա ուրեմն ինքնին յանդիմա-
նեաց զքեզ, և զա զվաթանան մերկացաւ զքո. սակայն
և ոչ նա դարձեալ կամնկարուԹեամբ սրտի։ Վասնզի
չէր Հնար, եԹէ նոյն այլ այնչափ ձճնիւք պատուեացն
գնա, և նոյն դարձեալ ապա Թշնամանեացն գնա։ Այլ
անդ առՀասարակ զամենեսին իբրև միզով պատեաց
մարտիրոսին զօրուԹիւն, և չեԹող նոցա միանգամայն
տեսանել զեզեալսն. սակայն զամենայնն գործէին նոքա
անդէն իբրև Հակառակ քրիստոնէից. իսկ ծաղր ձաղա-
նայն դառնայր անկանէր ոչ ՚ի կրէլիսն, այլ յառնելիսն։

Օ սոյնօրինակ և մելեդինքն կարծեն միշտ, եԹէ ՚ի
մերձաւորացն իւրեանց վրէժս պահանջեացեն, յորժամ
ընդ որմունսն Հարեալ կիցս արձակեն, և կիշոցս ինն
անձառելիս ՚ի յանդիմանակացս իւրեանց Թափեն։ Այս
կայն որովք գործեն՝ ոչ զնոսա յամենի առնեն, այլ
զանձինս. որ և յայժմ առնոքօք կատարեցաւ։ Վաս-
նզի քարշէր տապանն ընդ ամենայն ձանապարհս, իսկ
մարտիրոսն իբրև ըմբիշ առաքինի գարձ առնէր յիւրա-
քան քաղաքն՝ զերկրորդն յինքեան բերելով պսակ, յո-

բում և զառաջինն պսակեցաւ նա : Այլ ինչ ըլլի եթէ ոք տակաւին անհատատ կայցէ յարութենէն՝ յետ տեսանելոյ զքաջափառ հանգէստս մարտիրոսին զինւոյ վախճանին, նա զամենի հարցի այնուհետև :

Վանդի իբրև կորովի նահատակ՝ մրցանակացն ի վերայ բարդեաց նա մրցանակս, մեծացն՝ զևս մեծամեծսն, և զարմանալեացն՝ զառաւել զարմանալիսն : Վանդի յայնժամ ընդ Թագաւորի միայն մարտնչէր, իսկ այժմ միանգամ այն ընդ առն Թագաւորի և ընդ դիւի. և յայնժամ ի փարախիցն սրբութենէ մերժեաց զտիեզերաւկալն, իսկ զարդիս բովանդակ ի վայրաց դափնւոյն հալածեաց զապականիչն. ոչ ձեռն ի վար արկեալ իբրև զառաջինն, այլ աներևոյթ զօրութեբն վանեալ զանեբևոյթն : Լաւ սորա՝ մինչ կենդանին էր՝ ոչ տարաւ համբարձակութենէն մարգախոշոն. իսկ ի մահուն ոչ հանդարտեաց փուշոյն ոչ Թագաւորն և ոչ գեղ՝ որ զայսպսիկ գործել սադրէր արքային :

Իսկ եթէ սաստիկ ևս ահիւ խուճապեցոյց զերկոսին զվերջինսդ քան զառաջինն, յայտ անտի է, քանզի նա առեալ զսա և ի կապանս կապեաց և ի մահ վարեաց. իսկ դոքա միայն ի տեղւոյն փոխեցին : Վանդի առ ինչ ապա անդնդասոյզ առնել զտապանին ոչ նա պատուիրեաց, և ոչ սա կամեցաւ. ընդդէմ ոչ խորտակեաց փշրեաց և ի հուր դատեցաւ. հիմ ոչ հրամայեաց յանապատ և յանչէն վայրս վարել վտարել զնա : Օ ի եթէ անսուրբ էր և պիղծ, և ի պատճառս գարշանացն՝ և ոչ առաւել արհաւրաց երկիւղին՝ շարժեաց զնա ի տեղւոյն, ապաքէն ոչ եթէ ի քաղաք անդր պարտ էր մտնել զանսուրբն, այլ ի լերինս տարագրել և յանտառամոլս :

Ժէ. Բայց սակայն և հիգացեալն այն ոչինչ պսակաս քան զապողինն ի վերայ հասեալ էր մարտիրոսին զօրութենէ և առ Յծ համարձակութենն. և զանգիտեաց՝ եթէ արդեօք ի դոյն ժպրհեացի, չանթ ու և կամ ախտ ու այլ ի վերայ անձին իւրոյ հրաւիրեսցէ : Վանդի բազում ունէր առ իւր նշանս քան զնորուենն, որք հրաշագործեցան ի վերայ առաջնոյն քան զինքն Թագաւորաց, և որք դարձեալ ի միասին ընդ նմա յայնժամ կա-

ռավարք էին տերութեն։ Վանդն 'ի նախնի թագաւոր
բացն՝ որք միանգամ յայսպիսիս յանդգնեցան, կետ բազ-
մագէմ և գժոխամիբերն աղետից, անարգաբար և թըշ-
ուառաբար լուծան 'ի կենաց աստի, որպէս զի և միոյ
'ի նոցանէ առ իւրով կենդանութեամբն ինքնին բիրք
աչացն ոստեան 'ի բաց. և էր սա ինքն մանքսիմինոս.
իսկ այլոք հարեալ մոլեգնութեբ, և այլ ոք գարձեալ
'ի նմանօրինակ աղէտս տանջեալ, այնպէս վճռեցան
'ի կենաց իւրեանց։

Իսկ 'ի նոցանէ՝ որք ընդ նմա էին յայնժամ, հօրեղ-
բայր նորա՝ որ առաւել յանդգնագոյնս մոլեցաւ ընդ-
դէմ մեր, և յանօթս սրբութեան ժպրհեցաւ մերձիլ
պղծութեբ ձեռաքն, և ո՛չ այսչափ ինչ բաւականացաւ՝
այլ յառաջ և անցեալ խաղաց թշնամանաքն. քանզի
շրջեալ զնոսա և եդեալ պարզեալ 'ի գետնի՝ այնպէս
նստաւ 'ի վերայ նոցա. յանկարծակի յերակարծումն և-
լոյծ զվրէժ անօրէնն բազմականին այնորիկ. քանզի ա-
պականեալ երանք նորա՝ որդունս եռացուցանէին. և
զի յայտնի կացցէ՝ եթէ ոճծառաք էր ախան, հաւս գերբս
և օտարականս զենեալ բժշկաց և մերձ եդեալ առ ա-
պականեալ անդամն, 'ի նոսին հրաւիրէին զորդունան.
սակայն նոքա ո՛չինչ թուլացան՝ այլ խածեալ ատա-
մամբքն ուռեին զփտեալ անդամն. և այնպէս ապա
ընդ բազում աւուրս ձորակեալ ծախեալ զնա՝ չարաչ
կորուսին։ Իսկ այլ ոմն պահապան կացեալ արքու-
նի գանձարանին, մինչև անցեալ ընդ սեամն արքու-
նեացն, յանկարծակի պայթեցաւ ընդ ոչՋ. և ինքն
զնոյնգունակ իմն անօրինութեբ ելոյծ զվրէժս։

Օ այսոսիկ և առաւել ևս քան զսոսա, քանզի չէ
այժմ ժամանակս 'ի համար բերել զամենայնն, զմնաւ
իւրով ածեալ անօրէնն՝ զանգիտեաց յառաջադէմ ևս
ձգել զյանդգնութն։ Այլ զի ո՛չ յիմնէ ինչ ասեմ այժմ
զպղտոսիկ, 'ի նոցունն իսկ գործոցն զոր կետ այնորիկ
գործեաց դա՝ յայտ յանդիմման եղիցի մեզ բանդ. իսկ
'ի ժամուս՝ գարձեալ զեղելոցդ յաջորդութեբն առ-
ցուք պատմութեամբ, եթէ զինչ և կետ այսոցիկ պա-
տահեցաւ։

Վանդն արդեօք աքանչելի է բանս՝ որ ո՛չ զզօրութն
նոյ միայն, այլ և զանձաւելի մարդասիրութեբ նորա 'ի

դէմն ածէ։ Վանդի մարտիրոսն ըզ՝ եր ի մէջ գաւ-
թացն սրբուէ, ուր և յառաջագոյն հանգուցեալ կայր՝
մինչև ի գափնիդ յայդ եկեալ եր նորա. իսկ ամենա-
չար գևդ վաղվաղակի խելամուտ եղև, եթէ ի մտոտիս
մեքենայեցան նման խաբանքն. և թէ իւր ոչ ընդ մե-
ռելոյ ումեք էին մըցանքն, այլ ընդ կենդանւոյ և ընդ
կորովի նահատակի. որ ոչ քան զինքն միայն, այլ և
միանդամայն քան զամենայն դևսն զօրաւորագոյն էր։

Վանդի աղաչեալ զԱստ՝ հուր արձակել ի մեհեանն,
զամենայն զառաստաղն նորա բռնկանդակ բոցակիզեաց.
և զարձան դրօշելոյն մինչև ցծայրս Թաթիկ ոտիցն
գլխովին ի հուր մաշեալ և ի մխիկ լուծեալ և ի փո-
շի, առհասարակ զորմն միայն եթող կանգուն։ Այս ե-
թէ ոք այժմ ջանիցէ զայդ գնացեալ տեսցէ, ոչ եթէ
գործ հրոյ ասասցէ զեղեալգ. քանզի և ոչ անկարգ ինչ
և ոչ դարձեալ իբրև յանանձնաւոր լինն նևւթոյ գոր-
ծեալ է հրդեհդ. այլ որպէս եթէ ոք ձեռամբն շուրջ
քանակի յածեցուցեալ գհուրդ և նշանակեալ զվայրսն՝
յորս խնայել պարտ էիցէ և զորս ծախել արժան էիցէ,
այնպէս քաջագիտաց և արուեստակուբ հոլանեալ խոյ-
տառակեցաւ մեհեանն. և չէ այն նման հրդեհելոց ո-
մանց տաճարաց, այլ որոց ողջ անարատ էիցեն շրջա-
պատքն, և միայն յարկաց ծածկուելիք ունիցին պետս։
Վանդի այլն ամենայն և սիւնքն առհասարակ որք զա-
ռաստաղն ի վեր ունէին և որք գարձեալ զվայրապա-
տեմն, կանգուն կան ամենեքեան, բաց ի միոյն որ եր
ի յետկոյս կողմն տանն. և այն՝ գարձեալ ոչ վայրա-
պար լինչ բեկաւ յայնժամ, այլ վանն պատճառին՝ զոր
ի վերջէ ասասցուք։

Ասկ իբրև այս այսպէս պատահեցաւ, վաղվաղակի
խուճապեալ յաւիշտակի յատեանն անդր քուրմն դիւին,
և զհրդեհին պատճառս բռնադատի ասել։ Այլ իբրև
նա ոչինչ ունէր ասել, կալան զմիջոց նորա, և վերս
բաղուման եդին ի վերայ նորա. ապա ի կախաղան վե-
րացուցեալ զնա՝ քերեցին զկողս նորա, սակայն և ոչ-
ինչ աւելի ուսան ի նմանէ. այլ զնոյն օրինակ կատա-
րեցաւ աստանօր, ըստ որում և առ քոնի յարութիւնն։
Վանդի յայնժամ կարգեցան զինուորք ի պահպանուել
քաղաքին, զի մի թերևս յաջողեցայ սակ աշակերտ

ասացն խորամանկել զգողուէին : Սակայն յայն ինչ յան-
գեցաւ բանն , զի մի և անպատկառ մարդկանն պատ-
ճառք ինչ թողցին երբեք՝ եթէ արդեօք ինդրեսցեն
ինչ խորամանկել զՀաւատս յարուԹենն : Վարշէր ձգէր
աստանօր և քուրմն , զի մի ճաճանչն լինել բարկուԹե
գործ՝ վկայեսցէ զեղելոցն , այլ մարդոյ ուրուք չարաբ-
ուեստ մեքենայից : Սակայն լռկեալ տանջեալ և քերա-
նօք քերեալ , և իբրև ոչ ումեք կարէր մատն և գուշակ
լինել , վկայեաց՝ եԹէ ճաճառաք էր հուրն . որպէս զի
և ոչ որոց միանգամ լըթիլն կամեսցին՝ քան ինչ մնասցէ
այնուհետև :

Վասն ես զոր վայրկ մի յառաջ այլումն տեղոյ Թողն
ասել , զնոյն արդ ՚ի գեպ ժամուս ասացից : Նա զինչ
այն էր : Իբրև զի այնպէս ահիւ տագնապեցոյց զՀոգի
նորա մարտիրոսն , մինչ զի և ոչ յառաջ ևս ձգեցաւ
յանդգնուԹեամբն : Վանդի և ոչ արդեօք , յորժամ
ղբուրծն զոյն՝ զոր յառաջագոյն յայնչափ պատուի ու-
նէր , և ապա այնչափ կարեօք պաշարեաց ՚ի պատճառս
հրդեհելոց առաստաղին , և անագորոյն ևս քան զգա-
զան արիւնախանձ կեղեքէր , և Թերևս ոչինչ արդեօք
հեռանայր ՚ի մարմնոյ նորա՝ եԹէ ոչ առհասարակ ա-
մենեցուն եղեռնասուր երևեր գործդ այդ , ջնջն զայն
որ զբերան երկից զդիւին՝ դարձեալ ՚ի քաղաքն ածէր ,
զի առաւել ևս ՚ի պատուի կայցէ . քանզի Թէ և ոչ յա-
ռաջն՝ յորժամ զպարտուԹէն իւր խոստովանեցաւ դէն ,
այլ սակայն յետ հրդեհին այնմիկ՝ ապաքէն վեր ՚ի վայր
առնէր զամենայնն և ՚ի միջոյ ՚ի բաց ջնջէր , և առհա-
սարակ ՚ի հուր այրեր զտապանն և զկրկին վկայարանն՝
որ ՚ի դափնին և որ դարձեալ ՚ի քաղաքի անգ էր , և
Թէ ոչ քան զպրտմուԹէնն բռնագոյն ևս էր ահն , և
տրտմուԹենն յաղԹեր երկիւղն :

Վանզի և բազումք ՚ի մարդկանէ քնաւորեցան զայս ,
զի յորժամ ՚ի բարկուէ ըմբռնեալ իցէն և ՚ի տրտմու-
Թէ , եԹէ զառաջնորդս կրիցն այնոցիկ ունել ոչ զօ-
բեսցեն , յընդառաջ ելեալսն իւրեանց և ՚ի կասկածա-
ւորն միանգամայն Թափէն զբարկուԹէնն . այլ արդ ոչ
հեռի էր ՚ի կասկածանաց աստի մարտիրոսն :

Վանզի անգէն իբրև ՚ի քաղաքն եհաս նա , և հուր
անդէն իջեալ տեղւոյ ՚ի մեհեան անդր : Սակայն որ-

պէս ասացի, մարտ եղեալ կռուէին կիրք կիրս, և երկիւղն յաղթէր քարկուծեան։ Այնպէս ա՛ղէ դու ա՛ծ ինձ զմտաւ, յորոց արդեօք յառաքինեաց լեալ նա, որ յարուարձանդ յայդ էլեալ՝ տեսցէ զվկայարանն զայն՝ զի կանգուն կայ, և զմեհեանն՝ զի հրդեհեալ է. ըզկուռնս ջնջեալ, զձոնսն ծախեալ, և զաղատաձեռնուԹեն իւրոյ և զատանայական շքոյն բովանդակ զսիշատակն բարձեալ. զի Թէպէտ և ո՛չ սրտմուԹիւն և ո՛չ տրտմուԹիւն զնա՝ որ զայդոսիկ յակն արկանէր, սակայն անշուշտ ո՛չինչ հանդարտէր ամԹԹոյն և քաղցր ծաղուն այնորիկ, այլ ձգեալ ամբառնայր զանօրէնն զձեռանն՝ ի վկայարան երանելւոյն, Եթէ այն՝ զոր ասացիս՝ չէր՝ ի գործոյ անտի արդելեալ զնա։ Այանզի ո՛չ դուզնաքեայ ինչ էր եղեալն, այլ բովանդակ զամենայն համարձակուԹե՛ զՀելլենացւոյդ հատ կտրեալ, և զամենայն զուարԹուԹե՛ նոցա չնջոյց. և այնչափ իմն մեզ արտմուԹե՛ զնոքօք իջեալ մածաւ, որպէս այն Թէ ամենայն մե՛հեանք նոցա միանգամայն քակեալ լէին։

Ժը. Այս զի ո՛չ պանծանօք ինչ մեծաբանեմ զայդ, զնոսին իսկ՝ ի մէջ առից զղջոյն զբանս և զմեհերդուԹե՛ն, զոր այսր քաղաքի սոփեստիս (*) նուագեաց յայնժամ՝ ի գեղ յայդ։ Այս ունի ողջոյն սկիզբն օրինակ զայս. “ Այ՛րք, զոյոց արտեւանամիջն իջեալ մնծաւ մեզ, ըստ որում և զլսմովքն գլխովին, մի՛ ևս մեք գեղանի, մի՛ ևս մեծ կռնեսցուք մեք զդոյն զայդ քաղաք ,,։ Այպա յետ այնորիկ ինչ ինչ ասացեալ և ձառ արկեալ յաղագս առասպելին դափնւոյ, քանզի ո՛չ զամենայն զբանն միահաղոյն հիւսել աստանօր հանդարտե՛ այժմ ժամանակս, զի մի Թերևս յառաւելազանցն ձգեալ երկայնեսցուք, ասէ. “ Պարսից արքայն առեալ ուրեմն զքաղաքս, խնայեաց՝ ի տաճարն ,,։ Այսկ քանքն ունէին օրինակ զայս. “ Այր՝ ի մեր վերայ, ասէ, զջօրն շարժեաց միաբան, լաւ համարեցաւ նա զմերս ապրեցուցանել մեհեան, և գեղ վայելչուԹե՛ արձանին՝ բարբարոսին յաղԹեաց քարկուծե՛։ Այսկ այժմ, դու արփին և

(*) Ի լուսանցս հանդէպ բառիս սոփեստիս՝ մի ձեռագիր յոյն՝ ունի Լիբանոս. քանզի սոփեստէն անուղղայ էր Լիբանոս երևելին՝ երբեմն վարժապետ Յակոբեանի։

երկիր, ո՞վ և կամ ուստի՞ սա այս մարտադիր, որ ո՛չ սպառազինաց ինչ ունելով պետս և ո՛չ ձիաւորաց և ո՛չ թեթևազէն զինուորաց, փոքու կայծակամբն զամենայնն բովանդակ ծախեաց ,, : Իսկ ապա իբրև զայն ինչ՝ ի գէմն բերէ, եթէ չայնժամ չաղթեաց նմա ե. բանելին՝ յորժամ մեծապէս ծաղկէին իրդ հելլենաց ւոց զոհիւք և ձօնիւք, ասէ. “ Իւ ապա մեզ զտաճարդ զայդ սաստիկն այն ջրհեղեղ ո՛չ փլոյզ, այլ՝ի պարզն և յորժամ անցեալ մեկնեցաւ ամբն, քանզեցաւ ,, : Իսկ ամբ և ջրհեղեղ զժամանակն կոչէ զառաջինն թագաւորին : Իւ դարձեալ սակաւ մի յառաջ ևս անցեալ, ըզնայն զայն ևս դառնապէս ողբովք արտասուէ, ասելով. “ Յետ այնորիկ ապա իբրև քո սեղանք պասքէին ա բեան, ինայիր դու ո՛վ ապողն լքեալ ամայի՝ խնամոտ դափնւոյն պահապան. էր երբեմն զի և թշնամանս կրեալ քո՝ և չարտաքին զարդուէն կողոպտեալ՝ տարար համբերութ : Իսկ այժմ՝ի հօտս խաշանց և՝ի ջոկս անդկոց զնուիրական արքայնն բերան՝ի քումդ ընկալեալ յոտին, տեսեալ զնա՝ զորմդ նախաձայն լինելիր, ահն արկեալ՝ի նա՝ զորմդ բերան քո պատմէր, ՝ի բաց զերծեալ յանքարն մերձաւորութէն մեռելոյ ուրուն՝ որ քեզ վիշտ հասուցանէր, դու՝ի միջոյ պաշտամանէն՝ի բաց վազեցեր : Ա՝ՀԵ ուստի՞ այլ պանծասցուք երբէք առաջի արանց՝ որ քումդ յիշատակող լեցին սրբութէց և քոց արձանաց ,, :

Օ՛ինչ ասես ո՛վ ողբերգակդ. այդպէ՞ս ուրեմն ա նարգեալ և թշնամանեալ մնաց անքոյթ պահապան դափնւոյն. իսկ յորժամ պատիւ ընդունէր նա և պաշտօն, և ո՛չ զմեհեանն իւր անգամ մարթացաւ պահել. նա՛ զի և տեսանէր քաջ, եթէ՝ի քանդել դորա՝ մեծ ևս անարգութէ քան զառաջինն հասանէր նմա : Իսկ ո՞վ ոք արդեօք և մեռեալդ այդ, ո՛վ սոփեստիս, որ քոյին աստուածոյն հասուցանէր վիշտս : Իւ զի՞նչ դարձեալ մերձաւորութէդ այդ անքարի. քանզի աստանօր՝ի ձեռս մնանեալ կորովի բազկին երանելւոյն բաբելայ, և ո՛չինչ կարելով հանդարտել անարգութէ ամենայն, առագաստեալ այնպէս վեր՝ի վերոյ անցանէր զբանիսն. և ասացեալ զայն ինչ՝ եթէ վիշտս և ազէտս նմին կրեաց դևն՝ի մարտիրոսին, և ո՛չինչ այլ՝ի նոյն

յաւելեալ՝ եթէ զիարդ յորժամ զպարտութիւն իւր պատրաւակել ջանայր դևն, յայնժամ առաւել ևս առաւ կեաց, պարզաբար ասէ. ՚ի բաց զերծեալ յանբարի մերձաւորութենէն։ Ընդ մի՞ ասես դու ա՛վ շաղակրատդ ի մասսնոց, եթէ ա՛ն այն ոք էր մեռեալն, և առ ինչ միայնակ քումդ աստուածոյ հասուցանէր վիշաս. և ընդ դէմ միայնակ մերժեաց վտարեաց։

Ա՛յլ ա՛ղէ դու էր աղագաւ և զմերձաւորութիւդ զայդ կոչես անբարի. Թերևս զի զդիւին խաբեաննն խայտառակէր։ ՚Կա՛՝ ա՛յ անբարի է նչ մերձաւորութե՛ գործ էր քանզ. ըստ որումն և ա՛յ ուրուք մեռելոյ, այլ կենդանւոյ և նեղգործողի և առաքինւոյ և վերակացուի և խնամակալուի, և որ զամենայնին բովանդակ ՚ի պատճառս ձերոյին փրկութե՛ ՚ի ներքս բերէր, եթէ միայն կամեցեալ էր ձեր։ ՚Կա՛ զի և չէր իսկ արժան ձեզ անձամբ անձին այլ ևս խաբել զձեզ և ասել, եթէ թե՛ ևս բարկացեալ դեդ, և վասն զոհիցն բողոք կալեալ և ՚ի պատճառս այլոց սպասաւորութե՛ցն ՚ի տրտունջ լուծեալ՝ այնպէս գնաց մեկնեցաւ ՚ի բաց. վասն այնորիկ զնա մարտիրոսն ՚ի վայրաց անտի զլսովին արտաքս վարեաց, այն՝ որ սիրելին էր նմա քան զամենայն վայր, և առ նմա այնչափ նախասպատիւ էր տեղին քան զայլսն, մինչ զի և անարգութիւն կրեալ անդէն՝ օթագայեր ՚ի նմա։ ՚Կանգի զդոյն և դու լինքնին կանխեցեր սասյեր, եթէ և ՚ի նմին իսկ ՚ի ժամանակին՝ յորում հօտս խաշանց և դասս անդէոց զենոյր նմա թագաւորն։ Արպէս զի և յամենայն կողմանց վերասյին պատրուակք, եթէ նա ՚ի նեղ արկեալ և ՚ի բռնագոյն զօրութենէն վարեալ՝ այնպէս եթող գնաց զգաւխնին։

Արթ էր մարտիրոսին և ՚ի կալ ինալ անդ դրօշելոյն՝ հալածել զնա. այլ դուք ա՛յնչ արդեօք ընծայէիք հաւատս, ըստ որում և ա՛յ կանխաւն՝ յորժամ ՚ի նմա նէն կասեցաւ. այլ ՚ի պաշտամունսդ ձեր յաւերժա նայիք։ Յաղագս որոյ և յառաջագոյն Թոյլ տուեալ ինալ դրօշելոյն, յորժամ առաւել ՚ի վեր վազէր քոյն ամբարշտութե՛ն՝ յայնժամ աւարեաց զնա. յայտ արարեալ՝ եթէ յաղթականին պարտ է ՚ի վերոյ անցանել յաղթութե՛ն ա՛յ հնքացելոց թշնամեացն, այլ ամբարձելոյն և փառաւորացն։

Վանդի առ ինչ ապա յորժամ զնա ի գաւիթն անդր փոխադրեր Թագաւորն՝ ոչ հրամայեաց նմա, զի զնո՛ւ հեանդ զայդ քակեսցէ, և զդրօշեալդ փոխեսցէ, որպէս զնուբական փոխեր զտապանն։ Վանդի ոչինչ ընաւեր վկայն առ ի նմանէ, և ոչ մարմնականին ինչ նմա պէտք էին մարտակցութե։ այլ առհասարակ և յայնժամ և այժմ առանց ձեռին մարդոյ կործանեաց զնա։ Եւ զառաջինն զայն յաղթութի՛ն իւր՝ նա ոչ յայտնեաց մեզ, այլ կամեալ միայն զնեղուս նորա՝ հանդարտեաց։ Վանդի այսպիսի ինչ են գործք, կամին միայն ի գլուխ տանել՝ զոր միանգամ՛ի դէպ են փրկութեան մարդկան. բայց ոչ ևս կամին յուցանել բազմից՝ եթէ նոցա են հանդէսք քաջութե՛ն, բայց եթէ պէտք ինչ ստիպեսցեն. իսկ պետս կոչեմ գարձեալ զփրկելոցն խնամս. որ և յայնժամ կատարեցաւ։

Վանդի որովհետև յառաջագէմ ձարակելն չարիք խաբանայն, յայնժամ ուրեմն յայտնի լինի մեզ յաղթութի՛ն. ոչ ի յաղթողէն, այլ ի յաղթելոյն։ Վանդի այսպէս և ոչ առ նոսին իսկ թշնամին կեղակարծելի ինչ լինէր վկայութի՛ւդ, յորժամ՝զդ այդ և ի ստիպել անդ հարկին հրաժարեր խօսել զանձինն։ Այլ քանզի և ոչ այնպէս տեղի երբեք տայր մոլորութիւնն, այլ սնդեալ միանգամայն անզգայագոյնքն քան զվէմն յողք մնաչէին այսոյն պարտելոյ, և առ մերկասպարանոյ ձշմարտութի՛ն կուրութի՛ն յանձինս բերէին, յայնժամ ապա հարկ եղև հուր տեղալ ի վերայ դրօշելոյն այնորիկ, որպէս զի ի ձեռն հրդեհիդ այդորիկ զմիւսն զայն հրդեհ ջնջուացէ վկայասպառութեանն։

ԺԵ. Ո՞ր ապա դու զվէդ զայդ բամբասես ասելով, եթէ դու ի միջոյ պաշտամանէն ի բաց վազեցեր։ Ոչ կամաւ ի բաց վազեաց, այլ ակամայ և ի հարկէ մերժեցաւ և վարեցաւ արտաքս, յորժամ առաւել խնդրեր նա ինալ անդէն վասն հոտոյն ձենձերոյ և ի պատճառս զոհիցն։ Վանդի որպէս այն թէ՝ դորին վասն թագաւորէդ՝ որ յայնժամ տիեզերականն այն, զի զնաչջն և զարջառ ծախեսցէ զբոլոր տիեզերացս, այնպէս լիաձեռն փաղաւեր ի վերայ բագնեացն ոչխարս և եզինս. յայնչափ մոլեգնութի՛ւն ըմբռնեալ, մինչ զի և

բազումք որ առ դոսա երևին և այժմ խմաստասիրել, խոհակեր և պանդոկապետ մոյ և այլ ինչ այսպիսի կոչէին զնա։ Պա ուչինչ արդեօք յայսպիսի մեծահաց սեղանոյ և ի հոտոյն ձենձերոյ և ի ծխոյն և յուղիսից արեան կամաւ տեղի տայր դևդ. որ և առանց դոցա, որպէս դուն ասէիր, միայր անդ ի պատճառս տուփանաց օրհորդին։

Վակայն աստանօր դադարեցուցեալ զոր ի միջնբան, լուիցուք դարձեալ ստիեստէսին ողբոց. քանզի թողեալ նա այժմ զապողոն՝ բողոքէ առ արամազդ ասելով այսպէս. "Օ՜ր անդորը զվաստակաբեկ ոչ-ւոյն կորուսաք մեք ուլ արամազդ. իբրև զի վայր էր մաքրեալ յամբոխից՝ դաւինիդ, քանի՞ մաքրագոյն և աս տաձարդ. իբրու նաւահանգիստ՝ ի նաւահանգստի դոլ-ծեաց՝ ի նմա բնուԹին. երկաքանչիւրն և աս անալէկոծ էր, և երկաքանչիւրն դարձեալ առաւել հանդարտուն՝ ի ներքս բերէր։ Ո՞ր անդանօր երթէք յախտէն ուչ ԹեԹևացաւ, իսկ ո՞ր երթէք ուչ յահէն երկիւղէ, ո՞ր երթէք ուչ՝ ի սգոյն իւրմէ, իսկ ո՞ր դարձեալ երա-նելեացն կղզեաց երթէք ցանկացաւ"։

Օ՜ր անդորը կորուսաք մեք, ուլ անմաքուրդ. իսկ զինաՐդ մաքրագոյն և յամբոխից տաձարդ, և նաւա-հանգիստ անալէկոծ. ուր տաւիղք և Թմբուկք և շուայ-տուԹիք և խրախձանուԹիք և արբեցուԹիք։ Ո՛ր անդանօր երթէք յախտէն ուչ ԹեԹևացաւ, ասէ։ Ո՞անա-ւանդ եԹէ ո՛ր արդեօք անդանօր՝ ի քոց պաշտողաց ախտ յանձն իւր երթէք ուչ ձգեաց, Թէպէտ և յաուելա-գոյն՝ ի քաջողջուԹե էր վայելեալ. և ախտ՝ որ դժնդա-կագոյն և ս է քան զամենայն ախտս։ Վանզի որ այսոյն երկրպագուԹի մատուցանէ և զդաւինւոյն զլէգիոն լսէ, և զայնչափ մոլեգնուԹիւն զաստուծոյն տեսանէ, որ մինչև և՝ ի սիրուհւոյն վրիպեալ՝ տակաւին անցեալ նստէր առ տեղեաւն և առ տնկոցն, քանի՞ դոց մոլեգ-նուԹե յայտնանէ ուչ վաւեսցի՝ ի նմա, քանի՞ մրրիկ, քանի՞ ամբոխ, քանի՞ ախտ, քանիօն կիրք։ Օ՜այդ ապա կոչես դու անդորը հոգւոյն և նաւահանգիստ անալէ-կոծ. զայդ փարատուցն ախտից։ Այլ զինչ զարմանք իցեն, եԹէ զնեբհականան նեբհականացն մերձ դնես։ Վանզի և որ մոլեգնեալքն են, և ուչ զմի ինչ իրաց՝

որպէս պարտն է՝ առնուէն զընուէն Ձաշակ, այլ Հակառակ ինն Ձմարտութեանէ իրաց քուէս յառաջ ձգեն։

« Ողիմպիա արդեօք ո՛չ կարի՛ ի բացեայ ,, · քանզի յողջն անդր եկիր ես միւսանգամ, ի դէմն ածել զայն ինչ՝ եթէ քանի՛ ինչ վերս ընկալան հելլենացիք որ յայսմ ժամ ընակիչք քաղաքին . և թէ զիարդ ո՛չ արդեօք հեզաբար հանդարտեր այնմ թագաւորն , այլ բովանդակ խոկ զամենայն սրտմտութենին Թափիր ի տապան անդր մարտիրոսին , եթէ ո՛չ բռնագոյն ահ երկիւղին սանձաւ կոծիր զնա ։ Այս արդ զի՞նչ արդեօք ասէ . « Ողիմպիա ասէ , արդեօք չէ կարի՛ ի բացեայ . ամենաժողով տօնն միահամուռ կոչեսցէ զքաղաքս . և ելցեն նոքա ածել զանգեայս պատարագ ապողինի ։ Օ՛ ինչ ապա գործես զայդ մեք . ո՞ւր երթեալ զողեսցուք մեք . ո՞ որ յաստուածոցն պատուեսցէ մեզ՝ զերկիրդ բացցէ . ո՞ր քարող, ո՞ր փող ո՛չ զչերարտասրն ի դէմն ածցէ . ո՞ որ յողիմպիա ալիա՝ տօն քարոզեսցէ . քանզի անկումիդ միրձաւոր՝ սուգ ած ի վերայ ։ * Տո՛ւր լինձ , ասէ ողբերգուէնն , աղեղունս և (1) կապիճ ։ Ապա ես սակաւ մի և գուշակութենէ աստէն խօսեցայց . որպէս զի գովաբ ըմբռնեցից և գովաբ նեռաձիգ եղից ես ի նա՝ որ զգործդ զայդ գործեաց ։ Ո՛ ամբարիշտ յանդգնութեան . ո՛ հոգի անմաքուր . ո՛ ձեռն ժպերհ ։ Ա՛յլ ոմն տիտիւոս (2) է գա . և կամ իդաս՝ (3) հարազատ լինդեայ . ո՛չ մեծ իբրև նա , ո՛չ աղեղնաւոր որպէս սա , այլ զմի զայն ուսեալ է գա՝ մոլել ընդդէմ աստուածոց ։ Օ՛ ալոէվսոսին (4) զաւակս՝ որ դարանս նիտային ընդդէմ աստուածոց՝ մանչու հան-

(1) Յերբիպիդեայ ողբերգակին է բանս , յովբստեանցն տող 268 ։ Ձեւագիր մի յայն և սակաւիկան տիպն ի լուսանցս ունին Δὸς τόξα μοι χερσὶν λαβεῖν . φεῦ ἐμὴ ἀμέλειαν ἐκτέτοιχθε . այս է՝ կազմեալս յեղյեղակ . և այս իսկ է ընթերցուած բնագրին եւրիպիդեայ ։ Գուցէ χερσὶν λαβεῖν վրիպակաւ գրչաց եղեալ իցէ καὶ χοίνικα , և ընդ այսմ է՝ կամ թէ յայլ ևս ուրուք ողբերգակի բանս ակնարկիցէ լիբանոս , որ չերևին առ մեզ ։

(2) Տիտիւոս էր հսկայ վիթխարի ըստ առասպելին . որոյ կամեցեալ անկանիլ ընդ վերուայ տարածուն արամազդայ , դատապարտեցաւ ի գիժոխս ի կրծուծին լերգին յանդեղայ , ի վրէժ յանդգնութենէն ։

(3) Իդաս եղբայր լինդեայ յազգականութենէ ասին յասուիլի մի յարդոնաւորգայ , էր որարդ քաջ ի կալիդոն . մարտուցեալ երբեմն ընդ ապողոնի վասն կնոջ միոյ պատմին զնմանէ ։

(4) Ալոէվսոսին զաւակք էին նղինպես սկայք անուանիք օթոս և եփիալթէս . որոց յանդգնեալ յաթեռոյ հանել զարամազդ , սատակեցան ։ Ասա լիբանոս ապողոնի ասյ զմահ նոցա , այլք այլազգ ասեն ։

դարտեցեր զմ ապողն. իսկ սմա որ զՀուր քերդը ի բացական վայրաց՝ նետ Թռուցեալ ի սիրտն նորա ոչ պատահեցաւ։ Ո՛չ մնէգին, ա Հուր անիրաւ. ուրա նօր երբեք զառաջինն արդեօք նա անկաւ. զինչ այն նախասակիզըն չարեաց։ արդեօք յառաստաղաց անտի առեալ սկիզըն՝ առ այլն ամենայն յառաջեալ խաղաց, առ գլուխն այն, առ երեսն, առ դաշնուրանն, առ խայրն, առ պճղնաւոր պատմուճանն փառաց։ Հեփես տոս Հրոյ շահմարանապետ՝ ոչ սպառնացաւ Ձարակիչ Հրոյն, որ առաջնապարգև նշանին պարտապան էր շնորհաց աստուծոյն։ Ո՛չ և ոչ արամազդ տեղատու բոփ իշխան անձրևաց՝ առեալ ջուր անգին բոցոյն ի վերայ Թափեաց, որ զխարոյկն երբեմն շիջոյց զվառն գելոց յայսոսիկ ազքային լուգաց։ Զինչ արդեօք առ նա զառաջինն ասեր, նա՝ որ զմնարան զայն մղեր. ուստի՞ երբեք ի դմա՝ այդ վստահութիւն. իսկ զիարդ պահեաց՝ դա գյարձակուսն. իսկ ընդեր ապա չէլոյծ զդաւակինքն՝ յաստուծոյն ակն ածեալ գեղգին ։։

Յերբ է այդ քեզ, ով Հեգ և Թշուառական անձն, ոչ առնուլ ի միա, որ զայդոսիկ մարդկայնոցս ձեռաց ասես վնաել գործ. և իբրև զդիւագինս ոմանս դու ինքն ընդդիմաբանեալ ընդ քումդ անձին ոգորիս։ Վասն զի եթէ զայրասից արքայն՝ որ այնչափ զօրս շարժեաց ած, և զքաղաքդ կալաւ, և բովանդակ զամենայն զմեհեանսն Հրոյ առնէր, և զամբար ի ձեռին այն ինչ կամէր մերձեցուցանել զայն ի դէն յայդ մեհեան, փոխեաց գնա գևդ յիւրոց խորհրդոց. քանզի և զայդ ի սկիզբն մեներգութեն՝ երգիւր ողբովք, ասելով այսպէս. ‘‘ Պարսից արքայն նախահայրն սորա՝ որ այժմիկ մնայր մեզ ընդդէմ մեր, յորժամ մնասութեամբ առեալ զքաղաքդ և ի Հուր դատէր, և ընթանայր վազեր նա ի դահին անդր՝ առ ի զնոյն գործ և անդ կատարել, փոխեաց գնա առաուած, և ի բաց ձգեալ զզամբարն՝ սպողնի երկրպագութեն առնէր. այնպէս ուրեմն դարձոյց Հեզացոյց գնա ի տեսիլ իւրոց երեսաց ։։ Այդ արդ նա որ բարբարոսին սրտմտութեանն չաղթեաց և այնչափ զօրաց, որպէս ասէիրն, և բաւական եղև յայն ժամ տեղի տալ յայնչափ վտանգէն, և որպէս յաւելեր դու ի բանս, նաև զալոմէոսին գաւակս՝ որ դարանս

նիտային ընդդէմ աստուածոց՝ մանուկ հանդարտեաց, այլ դու՝ զիարդ ապա որ այնչափ ինչ զօրեաց դա, ոչ-ինչ յայնպիսեաց անտի գործեաց այժմ։

Այս թէ և ոչ այլ ինչ, գէթ քրմին այնմիկ՝ որ յանկարաւ կոչկռձեցաւ՝ ողորմել պարտ էր, յայտնելով զդաւաճանն մեհենին։ Ի թէպէտ և յայնժամ ի հրկիզումէ անտի ապրեցաւ այրն, սակայն յորժամ ի կառքն հազանին հիքացեալն այնորիկ պատառէին կողք, և հարցեալ նա՝ ոչինչ ունէր ասել զառաքնորդ գործոյն, պարտ էր յայնժամ առաջի առնել և ի ձեռս տալ ըզդաւաճանն. և կամ գոնեայ յայտ առնել, եթէ չէր կարող ի ձեռս մատնել։ Սակ այժմ անտես արար ապաշնորհն և ապերախան զիւրական պաշտօնեայն տա բապարտ կեղեքեալ. անտես արար և զթագաւորն զրկխովին, որ այնչափ զոհիւքն ծիծաղելի գործէր զանձն։ Վասնզի իբրև զկատակ և զդիւագին ամենեքեան ծաղր առնէին զնա, յորժամ ի հիքացեալն յայն թափէր ըզբարկութիւնն։

Սակ զիարդ ապա՝ որ զգալուստ արքային նախամատնէր՝ մինչ տակաւին ի բացեայ էր, քանզի յառաջ քան զայսոսիկ և զայդ ողբաձայնեալ ասէիր, զնա՝ որ մերձ առընթեր կայր և այրէր զինքն՝ ոչ ետես։ Ա՛վ պէտ և զնա ևս գուշակ ասէք գալ լինել, և այլոց ևս աստուածոց ձերոց՝ իբրև մարդկան բազմագիմ արուեստս բաշխէք։ Այս զգուշակութիւն ընծայեցէք արուեստ, սակայն և ոչ ապաւէս զնա հաղորդ գլխոյ առնել իւրում արուեստի։ Ո՞րդ զիարդ ոչ զիւրականն ծանեաւ նա ապէտս. զոր և ոչ ի մարդկանէ աք անգիտանայ երբեք։ Ա՛ի արդեօք ի քուն էր նա, յորժամ բորբոքէր հուրդ այդ։ Ո՞վ սակայն և ոչ այնպէս յանզգայացեալ աք է դա, զի և ի մերձենալ առ նա քոցոյդ ոչ զարթիցէ վաղվաղակի և բմբռնեսցէ զհրթիկն։* Ո՞րդարև միշտ մանկունք հելլենք, իսկ հելլեն ձեր ոչ ուրեք ‖։ (*)

(*) Ջսոյն հոչակաւոր բանս բերէ և եւսեբի ի քրոնիկոնին ի յառաջաբանի։ ,, (Հղինք) ասէ, ընդ երկար ժամանակս մինչև ցկաղմայ ազգն, ամենեին գրով ինչ ոչ վաբեին. քանզի կագմես ասեն նախ երեք նոցա գիր ի փիւնիկեացոց աշխարհէն։ Եւ յետուն իսկ ի պղտոնկի գիրն անգոնէ եգիպտացին զտուզն. ով տղաք, ասէ, յղինք միշտ մանկտի էք. քանզի ձեր յոյն այր երբեք ոչ գտանի. և չիք առ ի ձէնջ ուսանել ուսումն գնին ժամանակին։ Իսկ եգիպտացւոց բազում ինչ առանցին

Վ[անզի պարտ էր զանմտութեի զանձանց յողը առնուլ, զի յորժամ նոքին իսկ արդիւնքն ձայն բարձեալ գոչեն զղիւսայդ խաբանս, դուք և ոչ այնպէս զուարթացեալ սթափիք, այլ անձամբ անձին զձեզ 'ի կորուստ անդր յուշարկեալ և մատն եղեալք ձերում փրկութեան, ածեալ վարիք իբրև զխաշինս, ուրանօր և միանգամ դաքա հրամայեսցեն տանել զձեզ, որ նստեալ ողբայք զղրօշելոյդ կորուստ։

Լ[ակ դու և աղեղունս իմն ժամս, և ոչինչ աւելի ես քան զնա՝ որ զայդ յողբերգութե անդ իւրում նուաղեր։ Վ[անզի զնարդ այդ մնել գնութե իմն քաջայայտ և մերկասլարանոց ոչ իցէ՝ ակն ունել շահել ինչ յայն պիսի զինուց, որք և ոչ ստացողին իւրում (*) օգտեցին ինչ։ Լակ եթէ առաւել քան զդեզ զայդ ասես դու ունել քեզ արուեստ և համոզութիւն, չէր պարտ ասլա պատուել զնա՝ իբրու զմի ոք յանհմտագունիցն և 'ի տկարագունիցն նաև յայն ինչ իրս՝ յորս գերազանցեալ քան զընաւս ասէք զնա։ Լ[ալա եթէ զնախագահութիդ նման ընդհես, միանգամայն և զողեղնաւորութեն և զգուշակութեն, զնարդ ասլա դու մանաւանդ ունելով զարհեստդ՝ յուսացար դործել զայն ինչ՝ զոր միանգամ տկարացաւ նա, որ ողջոյն զարհեստն ունէր բովանդակ։

Է. Ընդհատելիք արդարև քանք և շաղփաղփուկք. քանզի ոչ գուշակութե ինչ ունէր դա արուեստ, և ոչ՝ թէպէտ և ունէր, կարօղ ինչ էր 'ի գործ արկանել։ Վ[անզի և բնաւ իսկ մարդ չէր, չէր մարդ որ զայդպիսի գործեաց, այլ ածային իմն զօրութե. իսկ զպատճառան 'ի վերջ այսոցիկ ասացից։

Լ[այլ աստանօր արժան է 'ի վերայ կալ դիտութե, եթէ էր աղագաւ իբրև ապաշնորհ ստգտանէ զՀեփեստոս զոր բանիւդդ, եթէ "Հեփեստոս հրոյ շահեմարանաւ պետ ոչ սպառնացաւ Ձարակիչ հրոյն, որ առաջնապարդև նշանին պարտապան էր ընորհաց աստուածոյն"։ Լ-

Ձառք պատմին. նոյնպէս և քաղդէացւոցն. զի նոքա 'ի քառասուն և չետ աւելի բիւրս ամաց համարին զդրեալ իւրեանց ժամանակս։ Տես 'ի բազմահմուտ տպագրութե Վ. Հ. Մկրտիչ վարդապետին Մերոյ Ա[գեբեան. յերես ի 'ի քառածաղն։

(*) Ա[յս է՝ նմին իսկ տպողնի, որ բաց 'ի գուշակութի՝ էր և քաջաղեղն ըստ հեթանոսաց, և իշխան քերթողութե, երգոց և քնարաց։

սա. զինչ էր ընորհն, զինչ առաքինապարգև նշանն. առ ինչ թագուցանես դու զշրաշակերտ գործս քոյին առաուաճոց։ Վասզի եթէ զընորհն զայն մերկանայիր մեզ, առաւել ինն ապաշնորհ յանդիմանիր արդեօք զՀեփեստոս։ Ի.ՍՀ ամթի և շառագնութի ծածկէ ըզքեզ. ճն մեք եկայք համարձակաձայն մերկասցուք ըզքոյն։

Այս արդ զինչ արդեօք էր ընորհն։ Տարփացեալ աստեն էրբեմն զարէս յափրոդիտէ, և զանգիտեալ ի հեփեստեայ, քանզի այր էր նորա. գտեալ զնա բացական, եմուտ առ կինն։ Իսկ ապողոն տեսեալ զկառնակել նոցա, գնացեալ առ Հեփեստոս զեկոյց նմա զչնութին։ Այս եկեալ Հեփեստոս գտանէ զերկոսեանն յանկողնի անդ, և որպէս գտանն՝ այնպէս առեալ կաշկանդէ զնոսա ի կապանս, և կոչեալ Հրաւիրէ զաստուածս ի զնին տեսարանին պղծութենէ. և զայս օրինակ ապա վրէժս առնու ի նոցանէ զչնութենէն։ Այս արդ ընորհիս այսմիկ պարտապան գոլով Հեփեստոս, ի պահանջել ժամուն՝ ապաշնորհ ասէ զնա լինել առ արիտուրն։

Օ զինչ ապա և արամազդ, ոմ քաջդ, քանզի և զդա իբրև տմարգի բամբասես. “Ի.ՍՀ և ոչ արամազդ, ա սելով, տեղատարափ իշխան անձրևաց, առեալ ջուր անգէն բոցոյն ի վերայ թափեաց. որ զկարգին էրբեմն չիջոյց զվառնգելոյ յայսոսիկ արքայիկ լիւդաց,,։ Ի.ՍՀ քանզի գեղեցիկս մեզ ի յիշատակ ածէր և զլիւդացին զայն (1). քանզի պիղծդ այդ դև և զսա խաբեաց՝ անառի փքացուցեալ յոսով, և առ ձգեաց զնա յայիւս ակներևս։ Այս եթէ ոչ մարդասէր ոք էր կիւրոս, ոչինչ արդեօք օգնեալ էր նմա արամազդ։ Վ ասն որոյ տարապարտ բամբասես դու զարամազդ, եթէ քան զորդին (2) նախապատիւ պատուեաց զլիւդացին. քանզի և ի քաղաքին յայնմիկ՝ յորում առաւել պատիւ ընդունէր քան յամենայն քաղաքս, զքաղաքն ասէմ զՀռոմուլոսին, յորժամ ինքն չանթահար լինէր, և ոչ իւրում անձինն օգնեաց ինչ (3)։

(1) Ջկրեսոս արքայ լիւդացւոց։
(2) Ապողոն ըստ առասպելին որդի է արամազդայ։
(3) Հմմի հռովմայ 669. որ է նախ քան զքն 83. հրկիզ եղև կապիտոլիան հղյակապ տաճարն արամազդայ ի հռովմ. և զի անասղդ ինաց պատճառ հրայրեցութենն՝ ոսկեբերան փայլատականց ընծայէ։

Ա՛յլ լուեցուք և այլոցն բանից ողջոյն այդորիկ . քանզի այսպէս քաջիկ և խելամուտ եղիցուք աղէտից սպոյն՝ որ պաշարեաց զոգիս դոցա ։ « Ա՛րք , իմ քաղքն , ասէ , ոդիք ի տեսիլ աստուածոյն . և ինձ յանդիման աչաց նկարեաց խորհուրդն զտիպն նորա , զՀեզուէթի դիմաց պատկերին , զփափկուն մարթոյն և այն ի քարի անդ , զկամարն՝ որ զանձնջքն շուրջանակի առեալ ամփոփէր զոսկեհուռ պարեգօտն , էր որ ի նմա զիջագոյն էր , և էր որ բարձրագոյն ։ Ասէ ողջոյն կերպարանն զոր ուրուք զվառեալ սրտմտութենն ոչ չիջուցանէր ։ Ա՛նզի նման էր մեղեդեայ նուագողի . մանաւանդ եթէ և լուաւ ոք , որպէս ասեն , զի ի հասարակ աւուր հնչէր քնար ։ Ասէ երջանիկ ականջայն ։ Ասկ նուագ երգոյն Թերևս դրուատիք էր երկրին , որում և մատուռւսակել Թուի ինձ յոսկեղէն բաժակէն , զի ծածկեաց զօրիորդն քացեալ զբերան իւր և անդրէն խցեալ ,, ։

Ձետ այսորիկ ապա փոքր մի աշխարեալ սակս հրկիզումենն , ասէ . « Զայն բարձեալ գոչէր ուղևորն ի հատանել փայլատականց , խառվեալ ամբոխէր ի ձօնեալ անտառին դասիւսոյ՝ անդանօր քնակաւոր քահանայն աստուծոյ ։ Ասկ բաղխմունք կրծոց և ձիչք սաստիկ ընդ անկախիտ վայրն ընթացեալ , ինքն անկանի ի քաղաք անդր ձեպընթաց և զարհուրեալ ։ Օ արտեւանամբք իշխանին այն ինչ անկեալ էր նինջ , և ի դառն Համ բաւոյն յարեաւ յանկողնոյն . նա մոլեգնիս զայրագնեալ Թևս իմն խնդրէր ի հերմեսէ , ինքնին ի խնդիր ձեպեալ չարեաց արմատոյն , ոչինչ պակաս քան զառաջնոն և ինքն ի ներքուստ բոցակիզեր ։ Վերանք անկանէին ի խոնարհ բերելով զհուր , և նուաւ զմերձաւորս իւրեանց ծախէին . կանուխ զառաջինն այրէին զապողն՝ որ վայրիկ մի հեռի կայր յաչաստաղէն . իսկ ապա և զղարգս այլ գյաւերժահարսանցն քնակաւորաց զպատկերս , զականջն ձաձանչս , զսեռանցն գեղեցկութիւն ։ Ա՛մբոխին համագումար պարառեալ արձակէր աշխար , ի թիկունս չունէր հասանել . որպէս պատահէ՝ որոց ի ցամաքէն զնաւաբեկութենէն յակն արկանիցեն , որոց օգնութենէ այն է՝ արտասուել զերեսան ։ Ա՛րդեօք մեծականան գուժագին ձիչ՝ յաղերսոյն ի դուրս վազեալ յաւերժահարսունք . մեծականն և արամազդ՝ որ մնա

առընթեր բազմէր, իբրև զի և ՚ի դէպ էր ՚ի վերայ կործանեալ պատուոյ զուարկէն. մեծակական և բիւրուց քաջաց հոյլք օթագայելոց ՚ի ձճնեալ մնային. ոչինչ պակաս և ՚ի միջոյ անտի քաղաքին գուժեալ կալ լիոպէ ձայն աշխարելի. յորժամ ՚ի հուր կիզեալ քակեցաւ պարերգութիւն յաւերժահարսանց ,, :

Իսկ ապա ՚ի վախճանի անդ այսպէս ասէ. ,, Ո՞ր դու ինձ և այժմ ով ասողըն, որպէս զքեզն նկարագրեաց իրիւսէս՝ յորժամ աքայացւոյն յաղերս անկանէր, սրա մնութիւնք լի և հանգուցատիպ դիչերոյ (*): Որպէս զի և յորժամ պատմուճանաս քեզ պատրաստէաք, և որչափ ինչ միանգամ բարձեալ ՚ի քէն՝ քեզ հատուցանէաք, կանուխ յաիշատակեցաւ պաշտեցեալն, իբրու եթէ ոք ՚ի փեսայիչ՝ ՚ի բաղդել անդ պսակացն՝ ՚ի բաց խուսեաց ,, :

Այս ինչ էր ողբն, մանաւանդ եթէ և մասունք դուշնաքեաք ողբոյն այնորիկ: Իսկ իմ զարմացեալ են միաք, եթէ գիարդ որ ինչ միանգամ յամենի պարտ էր ծածկել զնոսա՝ նա ՚ի նոսա սերձանալ կարծէ զանձն. ոչինչ լաւագոյն քան զանժուժկալն զայն և ըզպագշոտ պատանին, որ ՚ի հասարակ աւուր զնա քնաբահար առադրէ, և նուագացն նիւթ ասելով լինել զսիրուհին, և երջանիկ յորջորջելով զականջն զայնոսիկ՝ որ ունկնդիրն լինիցին երգոյն այնմիկ պղծութիւն: Իսկ ասելով, եթէ ումանք ՚ի բնակաւորացն գաւինոյ, և որ շուրջ զնոքօք՝ արտասուս հեղուին. և թէ բորբոքեալ էր իշխան քաղաքին, ոչինչ աւելի գործէ՝ քան եթէ ողբս. և չեն ինչ զարմանք: Իսկ զոր ասէ, եթէ և նոքին իսկ աստուածքն նոյնգունակ յանհնարս իմն մնեալ էին, և արտասուէին միայն յանձինս իւրեանց. և ոչ արամազդ և ոչ կալլիոպէ և ոչ գարձեալ բազմահանդէս քաջայն հոյլք, նաև ոչ նոքին իսկ յաւերժա

(*) ՚Ի խաղալ յունաց մարթիւ պատերազմաւ ՚ի վերայ արուարձայ, գերեալ էին ընդ այլս և զդուստր իրիւսեայ քրմին ապոլոնի: Էին սա բազում փրկանօք և ողոք ազերսանօք ՚ի բանակ նոցա՝ գերեգարձ առնել սիրելի գաւեառն: ՚Ի չհաւանել ագամեմնոնի իշխանի զօրուն, յորս սահատակեալ իրիւսէս՝ կարգաց զսաղմոսն ՚ի վեհմիդրուեն. որպ և կեալ հասեալ սրամտութիւնք հանգոյն գիչերոյ բան նորին ինքեան հոմ. բանի, մահ արձակեաց ՚ի յունական զօրն: Իշ լիբանոս այժմ ՚ի սոյն հրաւիրէ զսաղմոսն: Հոմեր. գիրք ա. 12. 53:

հարսունք բաւական ինչ էին ընդդէմ հրդեհին այնմիկ, այլ առհասարակ ամենեքեան ձիչ և կական միայն բարձեալ էին. այդ լի է բազում ծաղուս։

Եւ արդ եթէ վերս կարեվերս ընկալան դոքա, բաւականութիւ ցուցին մեզ բանքս։ Վասնզի և ի մէջն անդ մեներգութենն յայտ յանդիմանութիւ խոստովանի՝ եթէ զօրհասական վերն վիրաւորեցան նոքա։ Ապա ուրեմն ոչինչ արդեօք հեղաբար հանդարտեր այնմ թագաւորն, եթէ ոչ բռնադոյն երկիւղ և դողումն հաբեալ կոտորէր զնա։

Այլ արդ մնայ մեզ և զպատճառան ի դէմս բերել, այր աղագաւ ոչ ի թագաւորն հեղ զբարկութիւն իւր ահռ, այլ ի գեհն. և թէ առ ինչ արդեօք ոչ զմեհեանն ողջոյն ծախեաց հուր, այլ առաստաղն ի մխիր լոծեալ՝ միանգամայն և զկուռսն քարշեալ տապալեաց։ Վասնզի ոչ վայրապար և անպատճառ ինչ եղեն այդքիկ. այլ ի մարգասիրութիւն այ որ առ մեզ եալն՝ գործեցաւ ամենայնն։ Վասնզի որ զամենայնն գիտէ՝ մինչչև եղեալ, այլովքն հանդերձ և զայն ևս գիտեր քաջ. իբրև զի եթէ ի թագաւորն դիմեալ յարձակեր շանթն, որք միանգամ մերձն կային և տեսանէին զհարուածն՝ ահաբեկ լինէին արդեօք ի ժամուն յայնմիկ. իսկ ապա ի հոլովել երկուց և երից ամաց, զնջեր յիշատակ գործոյն, և բազումք հանդերձեալ էին անհաւատ լինել հրաշիցն։ Ապա եթէ մեհեանգ ձգեր յինքն զբոցն զայն, քան զամենայն քարոզս առաւել նա յայտնաբարբառ ազդեր զնոյ բարկութիւն՝ ոչ միայն որ յայնժամ մարդկանն, այլ և առհասարակ զկնի եկեղոցն. մինչ զի և որք միանգամ կամեսցին լըբիլ այնու հետև և թաքուցանել զեղեալն, ամենայն պատճառք միանգամայն հատցին ի նոցանէ։ Վասնզի այր իւրաքանչիւր հասեալ ի վայրդ, այնպէս իմն կիրս կրէ ի հոգի իւր, որպէս այն եթէ այն ինչ պատահեալ իցէ հրդեհդ այդ. այլ և արհաւիրք իմն եկեալ անկանիցն զնովաւ, և ի վեր յերկինս ակնարկեալ՝ անդէն փառաւորէ զզօրութիւն նորա՝ որ զայդոսիկ հրաշագործեաց։

Վասնզի զորօրինակ եթէ ոք զաւազակապետի ուրուք խորտակեալ զանձաւն և զորջն ի բարձանց անտի՝ ըզնոյն ինքն զընակեալն ի նմա պրկեալ արտաքս հանցէ,

և զգոյն նորա զամենայն առեալ՝ թողուցու զվայրն թափուր յապաւէն գազանաց և անծեղաց. իսկ յետ այնորիկ ապա՝ որ միանգամ եկեալ հասցէ ՚ի վայրն ան ձաւէն այնորիկ, անդէն իբրև հայի ՚ի տեղին յայն, միանգամայն նկարեալ յանդիման առնէ մնացն և զաս պատակն և զգողնան և զտիպ կերպարանի նորա՝ որ յառաջն որջացեալ էր ՚ի նմա. զնոյնօրինակ և աստա նօր կատարեցաւ։

Վ.անզի որ ոք միանգամ ՚ի հեռաստանէ տեսանէ զսիւնան, և ապա մերձ եկեալ ընդ սեամն ՚ի նեղքս մնանէ, նկարէ առաջի խորհրդոց իւրոց զգարշութիւն դիւիդ, զխաբանան, զդաբանան. և հիացեալ ընդ բար կութիւն ՚ոյ և ընդ զօրուն, այնպէս մեկնի ՚ի վայրացն. և այնպէս՝ որ յառաջն բնակարան էր մոլորութեան և հայհոյութե՛, այժմ փառաբանութե՛ լինի պատճառք։

Վ.այսպէս բազմահնար է ՚ած մեր. և զնորանշանս զայսոսիկ ո՛չ այժմ ինչ զառաջինն, այլ և անդուստ ՚ի վե՛ր ուստ յառաջնոց անտի ազգացն առհասարակ աքանչե՛լագործե՛։ Վ.ասլ զամենայնն միանգամայն ՚ի թիւս արկա նել չէ այժմու ժամանակիս. սակայն զայն ինչ ՚ի յիշատակ ածից՝ որ հանգուցեալ է այսմ։

Վ.անզի էր երբեմն զի ՚ի գրգռել մարտի պատերազմի ՚ի պաղեստին հրեից ընդ այլազգ եացն, յաղթական գտեալ թշնամեացն, և առեալք զտապանակն ՚ոյ իբրև կողոպուտ լինի և երեխայրիք աւարին ընծայեցին միւսմ ՚ի գաւառականացն կռոց, և էր անուն նորա դագոն։ Վ.ասլ իբրև մուծաւ անդր տապանակն, անկաւ դրօշեալն, և կայր այնպէս կործանեալ։ Իսկ իբրև ՚ի դիպուածոյ աստի յայսմանէ ո՛չ ՚ի միտ առին նոքա զոյժ զօրութի՛ն ՚ոյ, այլ ՚ի վե՛ր առեալ զնա միւսանգամ կացուցին ՚ի վերայ խարսխին իւրոյ, ՚ի վաղիւ անդր յառաւօտուն պահու մնեալք առ նա, ո՛չ միայն կործանեալ տեսին զնա, այլ և գլխովին փշրեալ։ Վ.անզի դաստակք ձեռացն քակեալ յուսոյն՝ անկեալ էին զսեմովքն մեհենին հանդերձ թաթիւք ոտից. իսկ այլ նշխարք դրօշեալն յայլում վայրի ցանեալ ցրուեցան. ա. Թագ. ե։

Դարձեալ և սոդոմացւոցն գաւառ, զի զփոքրն ընդ մեծին ՚ի կշիռ ձգեացուք, վասն այնորիկ ընդ բնակչացն առհասարակ հրդեհեալ կորեաւ և եղև անպտուղ, որ-

պէս զի մի միայն մարդիկ ժամանակին այնորիկ, այլ և ամենայն զկնի եկեալքն ի վայրաց անտի զգօնասցին։ Ո՛չ եթէ մարդկան միայն ի վերայ հասանէր պատուհասն, անհատատալիք արդեօք յապայս լինելին եղեալքն։ Այսոքիկ տեղին ինքնին ընկալաւ զհարուածն, որում մարթի և ինալ ժամանակս ձիգս և ազգաց իւրաքանչիւր ազգ առնել, եթէ այս օրինաք են կնքեալք՝ զի որք միանգամ գործեն զայդպիսիսդ, կրեն յայդպիսեաց. Թէպէտ և ո՛չ անդէն առ նմին լուծցեն զպատուհասն. ըստ որում և ի վերայ մեհենիդ այդորիկ կատարեցաւ։

Վասնզի ահա քանեւերորդ ամ է ի ժամանակէ անտի յայնմանէ և այսր, և ո՛չ նշխար մի կորեաւ ի շինուածոյ անտի՝ որ ապրեցաւ ի հրոյն յայնմանէ. այլ մնաւնք զերծեալք ի հրդեհէն՝ անսասանելի և հաստատուն կան ինքեան. և այնչափ ամրապինդք են, որպէս զի և ընդ ամն հարիւր և կրկին ևս քան զնոսին՝ դարձեալ և քան զայդ կարի երկարաձիգ ժամանակս բաւական են կալ։ Այլ զինչ զարմանք իցեն, եթէ և ո՛չ միւս ի սեանց անտի քակեալ յրնկերէն իւրմէ՝ կործան անկեալ իցէ ի գետինն։ Վասնզի միւս միայն յայնժամ ի սեանցն որք ի յետին կողմն էին մեհենին՝ քեկուսաւ, սակայն և ո՛չ այն անկաւ յերկիր. այլ լուծեալ ի խարսխէն, և անկեալ զորմնիցն՝ այնպէս մնաց. և նորա մնան ի ներքնախարսխի անտի մինչ ցբեւկորն առ ի շեղ յեցեալ կայ յորմն։ Իսկ ի բեկորէն մինչև ի խոյակն՝ կայ մնայ վերամբարձ պատուականեալ ի ներքին կուսէ։ Վնասպետ և հոգմունք ուժգինք հնչեցին ի վայրն բազում անգամ, և եղեն գետնաշարժք և սասանեցաւ երկիրն, նշխարք բոցոյն այնորիկ ո՛չ բարձան ի միջոյ. այլ կայցին մնացին հաստատուածք ի կայի իւրեանց՝ գոգեաս ձայն իմն այնպիսի բարձեալք առհասարակ, եթէ ի պատ ձառս զգօնութեանէ զկնի եկելոցն պահեցան նոքա։

Լ՛ը. Այս արդ՝ զի ո՛չ հինն ի վեր քանդեցաւ մեհեանն ի հրոյն յայնմանէ, զդոյն պատճառս արդեօք ասասցէ ոք։ Իսկ զի ո՛չ ի Թագաւորն հարաւ կայծակն, նաև զայլ ինչ պատճառս ի խուզել իւրում գտցէ ոք՝ բզկեալ ի նմին իսկ յաղերսէ քաղցրութեանէ և մարդասիրութենէն քոյ։ Վասնզի վասն այնորիկ ի գլխոյ անտի արքային

գործոյց գՀուրն, և արկ զառաստաղաւն զայնուիկ, որպէս զի յօտարին աղէտից դաստիարակեալ և փոփոխեալ և վերծեալ ի մոլորութենէն, ապրեսցի ի պատուհասէն՝ որ գանձեալ կայր նմա։

Վասնզի ոչ զայս միայն և ոչ դարձեալ զառաջինն ինչան զևրոյ զօրութեն ետ նմա քո, այլ և այլ ինչ բաւզում հանդերձ նոքօք, ոչնչ խոնարհագոյն քան զայդ։ Վասնզի և հօրեղբայր նորա և գանձապետն, այսպէս երկոքին միանգամայն լուծան ի կենաց աստի. առ այսոսիկ և սոքա որ միանգամայն ընդ նմա անկաւ ի քաղաք անդր. և կարօտուի ջրոյն՝ որ միւնչև զոհեալ նորա զզոհան ի վերայ աղբերցն՝ չէր պատահեալ երբեք. և հանդերձ սոքօք և այլ ինչ բազում որ միանգամ դէպք դիպան ի զօրուն և որ ի քաղաքս՝ բաւական կան էին և զքարեղէնն խորտակել սիրտ, ոչ բազմութիւն միայն և ոչ դարձեալ զի ամենայնին միանգամայն առ նմին կատարէին հրաշքն՝ որպէս երբեմն ի վերայ արքային եգիպտացւոց, այլ զի և ըստ ինքեան այնպիսի իմն աքանչելիք հրաշագործէին առ տեղեաւն, մինչ զի և ոչ մին միւսումն կարօտէր ինչ ի դարձ տեսողացն, այլ մէն մի յայնցանէ շատ էր և առանձինն ի յաջողել զայդ։

Վասնզի ի բաց զայլսն թողեալ, զո՞ր արդեօք և ի կարի անզգայացեալցն ոչ յապշութիւն երբէք կրթէր՝ որ ինչ ի վերայ հիմանց հնոյ տաճարին երուսաղէմի կատարեցաւ նշան։ Իսկ զի՞նչ այն իցէ։ Երբև հատ բռնաւորն՝ (*) զի ընդ ամենայն իշխանութիւն տերութենէ իւրոյ առհասարակ քրտնկան յորդեալ ծաւալեալ էր հաւատք, և արդէն իսկ մինչև ի պարսս հասեալ էր, և յայլ ևս խուժադուժ ազինս հեռաւորս, դարձեալ և զնոքօք անդրադարձ ևս յատաջացեալ ընթանայր, և որպէս քանիս ի դէպ է ասել՝ հասեալ կալաւ զամենայն ընդ արեգակամբս, տառապեր յանձն իւր և ցաւեր, և ընդդէմ եկեղեցեաց մարտ պատերազմի հանդերձեր։ Օ այն ինչ ոչ գիտեր չուառականն՝ եթէ ընդդէմ խթանի աքացէ։ Այսպա նախ զառաջինն՝ զտաճարն զայն զերուսաղէմացւոց՝ զոր հիմնայատակ քակեաց զօրուն

(*) Յուլիանոս ուրացող։

քըն՝ գուն գործեաց կանգնել. և այք հելլենացի երթեալ պաշտօն հարկանէր հրեականին, և կամէր ինն նովին վտանգել զօրուէն քրի. կոչեաց զոմանս ի հրէից անտի և հրամայեաց նոցա մատուցանել զոհս. քանզի զնոյն օրինակ պաշտօն պաշտէին ասէր՝ նախնիքն նոցա։ Իբրև նոքա յայն ապաւէն ապաստան եղեն, եթէ նոցա չէ օրէն ի քանդել տաճարին արտաքոյ հնոյ մայրաքաղաքին կատարել զայդ, հրամայեաց նոցա բառնալ ինչս ի գանձուցն արքունի, և այլ ինչ ևս զամենայնն՝ որ միանգամ կարևորքն իցեն ի շինուածին անդր, և չուառնել գնալ և կանգնել զտաճարն, և զնախնի սովորութիւն զոհից վերստին հաստատել։

Իսկ անմիաքն այնոքիկ, մոլորեալք անգստին յարգանդ, և մինչև ցծերութիւն՝ դաստիարակուեն կարօտեալքն՝ չուեցին գնացին իբրև գործակիցք առն թագաւորի. և այն ինչ իբրև զՀողն սկսան պեղել, և հուր ի հիմանց անտի ի վեր վազեալ զամենեսեան զնոսա առհասարակ ծախեաց։

Իսկ իբրև աղգ արարին զայս թագաւորին, ոչինչ հանձակեցաւ այնուհետև յառաջ ևս ձգել զյանդգնութիւն, քանզի արգելաւ յերկիւղէն. սակայն և ոչ այնպէս ի դուացն մոլորութէ կամեցաւ [illegible] կալ, որոց գլխովին գերի եղեալ էր. բայց առժամն հանդարտեաց փոքր ի. Իսկ յանդգնեալ սուղ ինչ ժամանակի, դարձեալ զնաւաստակ աքնութէն բուռն էհար, ոչ եթէ կրկին յանդգնելով ի շինուի տաճարին, այլ իբրև նախամարտիկ նահատակ խաղալով ընդդէմ մեր. քանզի ցայնվայր յայնոսիկս մնրտ պատերազմի յապաղեր յարդարել. ի և առաջին պատճառք այն էր՝ զի և քաջ իսկ հաւանեալ էր ի միտս իւր՝ եթէ զանհնարինն թեկն ածէ. իսկ երկրորդ՝ զի ի մէջ պատճառս ինչ թերևս տացէ պսակելոց զպսակն մարտիրոսութէ։ Վասն զի այս դժոխամիքեր էր նմա և քան զամենայն աղէտս վշտաց դժնդակ, եթէ ոք ի մէջ անդր մատուցեալ՝ մինչև խոպատ տոկասցէ տանջանացն ի պատճառս ձըշմարտութեանն. այսպէս ուրեմն ի սրտի ընդդէմ մեր զթշնամութէն՝ ի դէմն իւր ընծայեցուցանէր։

Վասն զի գիտէր իսկ, գիտէր քաջ, զի եթէ յայն ինչ յանդգնեսցի երթիք, այնուհետև ամենեքեան առհա-

սարակ պատրաստ էին մատնել զանձինս վտան քրի։ Ա.յլ քանզի չարարուեստ էր և խորամանկ, զսյնոսիկ՝ որք միանգամ ՚ի պատճառս յանցանաց ինչ պատուհասակոծ լեալ էին յիշխանացն եկեղեցւոյ և յիշխանութէ իւրեանց մերժեալք էին, զամենեսեան զնոսա ամենայն ուրեք արձակ թողոյր. և զայս օրինակ ապա վատթարացն իշխանութէն ՚ի ձեռս տայր, և զեկեղեցւոյ սահմանսն հին ՚ի վեր առնէր, և զամենեսեան խռովուբք արկանէր ընդ միմեանս. քանզի յուսայր ինն այսպէս՝ եթէ դիւրակատարելիք էցեն այսուհետև՝ յորժամ նոքա ընդդէմ միմեանց մտրտիւն անկցին ՚ի զօրութէն։

Ա.ւ այս և զայր ոմն, որ ՚ի պատճառս խեղաթիւր վարդապետութէն և վարուցն վատթարութէ ՚ի բաց մերժեալ էր յեկեղեցական իշխանութէն՝ անուն սահմանս, հրամայեաց միւսանգամ զվարդապետութէն ունել զաթոռ. իսկ զեղբօրն անուն իւրովանն գուն գործէր շինջուցանել, գալիլեացիս ոմանս փոխանակ քրիստոնէից կոչելով զմեզ ինքնին ՚ի հրովարտակս իւր, նոյն և զիշխանսն յորդորէր զնոյն առնել։ Ա.ւկ ՚ի մէջ այնչափ նշանաց հրաշագործելոց՝ որպէս ասացի՝ որ ըստ սովուն և որ ըստ երաշտութէն, նա կայր մեայր տակաւին յիւրում անամօթութէն և ՚ի խստութէն։

Ա.ւ յորժամ հանգերձեալ էր յարձակել դիմել ՚ի պարսս, այնչափ ինն փքոցուածոյց լինէր՝ որպէս այն եթէ առհասարակ զամենայն խռովագոյժ ազինս յատակ կանուխ կարգել. բիւրս ինն մէջ սպառնալիս ՚ի վերոյ կապէր ասելով, եթէ յետ դարձին իւրոյ ՚ի կողմանց անտի՝ զամենեսեան զմեզ բնաջինջ կորուսանել։ Ա.նքանչի այս պատերազմ գժնդակագոյն և ևս երևեր նմա քան զսպարսկականն. ուստի և պարտ անձին վարկանէր նախ զփոքրն զայն ՚ի գլուխ տանել, և յայնժամ ապա ՚ի մեծն ձեռնամուխ լինել։

Ա.ւ զայսոսիկ մեզ ազդ առնէին որք միանգամ բաժանորդք լեալ էին խորհրդոյն նորա։ Ա.կայն ընդդէմ մեր վառեալ սրտմտութէն, և օրըստօրէ առաւելագոյն ևս հարեալ մեղեգնուբք, երբեք ոչ եկաց ինաց ՚ի նմին խորհրդի. այլ ՚ի բաց եդեալ զառաջինն խորհուրդն, միւսանգամ հալածուին սպառնայր մեզ։ Ա.յ երբև կաւ մեցաւ ՚ած սանձակոծել զնա, և զբորբոքեալն զայն

նկուն առնել, դարձեալ ի վերջէ ուրեմն ի վերայ ածզնչանն՝ հուր ի գալնէի անդր ազձակելով ի վերայ մեհենին։

ԻԳ. Իսկ նա և ոչ այնպէս ի բաց եթող զսրտմտու-թիս, այլ քանզի վառէր բորբոքեր ցանկուքն յաղարտ վարել զմեզ, և ոչ ժամանակին այնմիկ հանդարտեաց՝ զոր մեզ էր սպառնացեալ. այլ յորժամ հանգերձեալ էր անցանել ընդ եւփրատ, հանդէս առնէր զօրակա-նին, և շղթաբորթուքեք հաձեալ զնուազունս ոմանս, ոչ եթող արձակեաց զհակառակորդս զինուորուքենն, զանգիտեալ ղի մի թերևս եթէ հերձեալ բաժանեա-ցէ, տկարագոյնս գործեսցէ զզօրն ընդդէմ պարսից։

ՈՂ. Զի ոք մեզ այսուհետև ի դէմս բերցէ բանիւ՝ որ ինչ միանգամ զհետ եկին այսորիկ. որ կարի ահաբեկք էն քան զայնսոսիկ՝ որ յանապատին գործեցան, և որ ի Ծովուն, և որ յեգիպտոս, յորժամ խստասիրտն այն տանջեր փարաւոն և առհասարակ ամենեքեան անդնդա-ոյզ լինէին։ Վանզի զորօրինակ յայնժամ, իբրև ոչ-ինչ յաղէտից անտի տեղի տուեալ խոնարհէր և զգօ-նանայր եգիպտացին այն, հուսկ ուրեմն հանդերձ զօ-բականաւն կորոյս զնա ՚ի ծ. այսպէս և այժմ, իբրև առ-աւելեայն սքանչելիսն ՚ի անպատկառաբար ըմբռոստա-ցաւ սա, և օգուտ և ոչ մի ինչ օգտեցաւ առ ՚ի նոցա-նէ, այլ ՚ի նց ՚ի կիրս անուղղայս, այնուհետև ՚ի վեր-ջին աղէտս չարեաց թակարդեալ փակեաց զնա. որպէս զի որ օտարին չարեաքն ոչ կամեցաւ ՚ի զգաստուէ գալ, նորուն իսկ աղետիւքն ՚ի լաւագոյնս փոխեսցին օտարք։

Վանզի որ այնչափ բիւրաւորս զօրաց ընդ իւր խա-զացոյց, որչափ ինչ ոչ ոք ՚ի թագաւորաց անտի երբէք, և որ ոգւոյն իսկ զպարսս աշշաւանօքն և անվաստակ ակն ունէր զբռամբ ածել, այնպէս հիքուքեք և տարա-բախտիկ վէմարեաց զգործն, որպէս այն եթէ զօրս ինն կանանց և զմանկտուց ունէր ընդ իւր առաւել, քան ե-թէ զարանց։

Վանզի նախ անխորհուրդ իւրով առաջնորդուքեն յայնչափ հարկ ածեալ կացոյց զնոսա, մինչև զմիս ձիոցն կերակրելն նոքա. և կէսք ՚ի սովոյն և կէսք դարձեալ ՚ի ծարաւոյն վատնեալք կորնչէին։ Վանզի երբոր այն

թէ պատարագ պարսկացն ածեալ բերէր զղօրն, և ինդրէր ոչ գնոսա ունել կապել, այլ զիւրան մատնել նոցա, այնպէս գումարեալ փակեաց գնոսա ի վայրս անձուկս, և միայն ոչ կապեալ էտ ի ձեռս թշնամւոյն։

Այլ գլխովին զամենայն ազէտս՝ որ անդէն դիպան, և ոչ ի նոցանէ ոք գարձեալ՝ որ ականատես եղեն իրացն և անձամբ յանձինս զփորձ առին՝ բաւական իցէ երբեք ի թիւս արկանել. այնպէս առաւելեալք ի վեր էն քան զամենայն օրինակս։ Սակայն զի ծայրաքաղ ասացից, յանկանել նորա և ի մեռանել անարգաբար և թշուառութիւն, քանզի կէսք ասեն՝ եթէ մի ոմն ի փայտակրաց անտի զօրուն սպանեալ ընդ առաջնիակայ իրն՝ էհար զնա և սպան անդէն, իսկ կէսք գարձեալ ասեն՝ ոչ գիտեալ զսպանողն նորա, այլ թէ միայն ընկալաւ րզվէրն, և աղաչեաց զի ի կիւլիկեցւոց երկրին թադեացեն զնա. և անդանօր նա այժմ թաղեալ կայ։ Այրդ յանկանել նորա այնպէս անարգութիւն, տեսեալ զօրաւ կանխն զանձինս իւրեանց ի վտանգս վերջինս, առաջի մատչին ազատչաւորք թշնամեացն, և կռեալք գերդմանս ի բաց մեկնիլ չուեալ յամրէ անտի՝ որ անխոսք և ի քան զամենայն ամուրս, և որ մերում կողմանս իբրու պատուար իմն էր անկուելի. և մարդասէր գտեալ զբարբարոսն՝ այնպէս ապա ապրեցան և գարձան նուաղունք ի բազմաց անտի. և այն գարձեալ կոչնձեալք մարմնով, և զամենի հարեալք վասն գաշանցն կռելոց. սակայն ի պատճառս երդմանցն սահիպեան տեղի տալ ի հայրենականացն իւրեանց դպիոց։

Ոչ անգ էր տեսանել քան զամենայն գերութիւն աւաւել և ողորմելի տեսարան. քանզի բնակիչք քաղաքին այնսրիկ՝ յորոց հնորհս իմն ակն ունէին առնուլ, իբրու զի որպէս զդեակ զամենեսեան՝ որ միանգամ ի ներքս անդ բնակէին՝ իբրև ի նաւահանգստի ուրեմն ածեալ կացուցեալ էին՝ փոխան ամենեցուն անձամբ զանձինս հանապազ առաջի արկեալք ամենայն վտանգս, ի նոցանէ իսկ զթշնամեացն կրեցին կիրս. յօտար երկիր տարադէմ եղեալք, և թողեալք զտունս և զաշխարհս և յամենայն հայրենի սահմանացն մերկացեալք. և զայսոսիկ յրնտանեաց անտի կրեցին նոքա։

Զայսոսիկ կթեցաք մեք վայելս զպանծալի արքային։

Ա.յլ սակայն ոչինչ վայրապար ասացան այսոքիկ. այլ որպէս զի դիւբեսցուք մեք անձկութեամբ նոցա՝ որք հեռաքինիք եղեալ հարցանեն, եթէ ընդէր արդեօք անդստին ի սկզբանէն ոչ պատուհասեաց ածծ զԹագաւորն։ Վ.անզի բազում անգամ կամեցաւ զմէլեգինն զայն սանձել ի յառաջադէմ բերմանէն, և օտարին չարեօք յուղղութեամբ ածել զնա. այլ քանզի նա զդէմ կալաւ, վասն այնորիկ ի վերջին աղետս չարեաց առեալ մատնեաց զնա. սակայն զձիգրիտ տրիտուրն մեղաց նորա գանձեալ պահեաց ի մեծի աւուրն. իսկ ի ձեռն առաջակայ պատուհասին զանկեալսն յորսայս ի վեր կանգնեաց և զգօնագոյնս յարդարեաց։

– Վ.անզի այսպիսի ինչ է այլ երկայնմտութիւնն, որք միանգամ ըստ արժանի ոչ վտրին նովաւ՝ նոցա դառնագոյն և ի վախճանի ածէ ի վերայ զպատուհասն. և զրօրինակ շահեկան է նա ապաշխարողացն, նոյնպէս և ստամբակացն և խստասրտացն առաւելագունի լինի պատճառ տանջանաց։

Ա.պա եթէ ասասցէ ոք. և զինչ ապա, միթէ ոչ նա խաւես ինչ էր ածծ՝ եթէ յուղղութեան անդր երթիք չուն նէր գալ բնաւորն այն։ Ա.սեմք՝ եթէ արդարև նա խաւես էր. այլ նա ոչինչ դադարէ գործել զիւրսն ի պատճառս նախագիտուէ չարութեանն մերոյ։ Ա.յլ թէպէտ և զնրատն չընկալցուք մեք, նա զիւրն յուցանէ մարդասիրութեամբ. ապա եթէ և ի մեծամեծ ևս չարիս դրդեալ ձգեսցուք զանձինս, այս ոչ նմա մեղ ինչ է, որ ոչ վասն այնորիկ երկայնամիտ լինի առ մեզ՝ զի կորիցուք, այլ զի փրկեսցուք, այլ մեզ գլխովին՝ որ արհամարհեցաք զնորա անձառելի անյիշաչարութիւնն։

Ա.յս այսպէս ապա մարդասիրութեանն նորա անչափութեամբ ի դէմն բերի։ Վ.անզի յորժամ մեք ինքնին ոչինչ կամիմք վայելել ի վայելս բազում երկայնմտութեանն նորա, նա յայնժամ ի շահ օգտի այլոց դարձուցանէ ըզնոսն. ամենայն ուրեք յայտնի առնելով միանգամայն և զմարդասիրութիւնն և զջազմահնար իմաստութիւնն, ըստ որում և յայնժամ կատարեցաւ։

Ա.րդ քննաւորն զսոյն օրինակ զրաւեցաւ ի կենացն. այլ առհասարակ նորա մոլեգնութեանն և երանելոյն բաթելայ զօրութեանն արձանագիրք կան մնան. մեհեանն

և մարտիրոսութեանն. նա անապատ գոլով ամայի, իսկ սա գնոյն զայն ունելով զօրութեամբ՝ ըստ որում յառաջն։

Այլոց տապանն ոչ ևս միւսանգամ շաւիղ ի տեղւոջէն. և այս դարձեալ ոյ նախախնամութեն. որպէս զի որոց միանգամ եկեալ հասանիցեն յայն տեղի՝ յայտնագոյն ևս առցեն ծանօթութեամբ զհանդիսից քաջութեան նոցին։ Վանգի իւրաքանչիւր ոք լեկաց օտարացն իբրև հասանէ ի տեղին, և խնդրեալ հարցանէ զմարտիրոսն. և ապա իբրև անդ ոչ տեսանէ զնա, վաղվաղակի խնդրէ խմանալ զպատճառսն. և այնպէս բովանդակ ի վերայ հասեալ պատմութեանն՝ չուէ ի բաց, առաւել ևս օգտեալ յանձն իւր՝ քան եթէ յառաջն. այսպէս և ի դափնին ժամանեալ և մեկնեալ անտի՝ դարձեալ և մեծամեծս շահեսցի։

Այսչափ է մարտիրոսացն զօրութիւն՝ առհասարակ որք կենդանիքն իցեն և որք վախճանեալք, որք ի դիրս հանգստեան իւրեանց կացցեն ինասցեն, և որք դարձեալ ի նոցանէն տեղափոխեսցին։ Վանգի անդստին ի սկզբանէ մինչև ի կատարածն՝ նորա անդուլ նահատակութիւնք հանդիսին չղթայաշար կապեցան, եթէ խելամուտ միայն լինիցիս։ Վանգի զօրինացն ոյ անարգելոցն զվրէժն պահանջեաց, վասն սպանելոցն այնօրիկ պատուհաս ի վերայ կապեաց, քանիօն խոիր կայցէ ընդ քահանայութեի և ընդ թագաւորութեն՝ յայտնութեի ի դէմ էած. զամբարտաւանութիւն զամենայն ելոյծ զաշխարհիս, զկենցաղականս զշուք առ ոտն կոխեաց, զթագաւորս դատիարակեաց՝ զի մի անդր քան զծառուր զսուր ձգեսցեն զիշխանութիւնն, զքահանայսն վարժեաց՝ եթէ զիարդ իշխանութեես այսմիկ վերակացու լինել պարտ իցէ։

Այլ զայսոսիկ և առաւել ևս քան զայսոսիկ՝ յորժամ տակաւին աստէն ի մարմնի էր. իսկ իբրև փոխեցաւ և աստի ի բաց չուեաց, ելոյծ զզօրութեն սատանայի, յանդիմանեաց զիաբանսն հելլենացւոց, խայտառակեաց զշաղփաղփութեի գուշակութեե, պատառեաց ըզպատրուականն, մերկ նշաւակեաց զամենայն զկեղծաւորութիւնն, և զնա ինքն որ ի դմին արհեստի կարծէր վհատգոյն՝ կացոյց պապանձեալ, և սաստկապէս բռնութեն նկուն արար։ Այլ զարդիս կան ինան արձանա-

ցեալ պատուարք մեհենին, անարգութե՛ դիւին քանդեալ առ ամենեսեան, ծաղրալից այպանացն և տկարութեան, իսկ մարտիւրոսին՝ պսակացն, յաղթութե՛ն և զօրութե՛ն։ Ա՛յսչափ ե՛ք քաջութե՛ն ոգւոյ. ահա այսչափ անկուածելի և ահարկու՝ առհասարակ արքայից և այսոցն լսարաց, և նմին իսկ իշխանին դիւաց։

Վ Ա Խ Տ Ա Ն Գ

ԱՌԱՔԵԼԻՆ ՀԱՅՈՑ